

ՎԵՌ ՊՍԿՎՆՅՎՆ

# հասկացման անխոռափելիությունը

դրվագներ փիլիսոփայական  
հերմենևիկայի և  
կազմայանդման  
դատմությունից


ԷԼՎԵՐՍՎԱՆԵՐ

ԴԻԼԹՎՅ

ԳՎԵՐԵԳԵՐ

ԳՎՐՎՍԵՐ

ԴԵՐԻԴՎ



ՀՏԴ 1/16(091)

գՄԴ 87.3

Ո 440

**Գիրքը հրատարակվում է ԵՊՀ  
փիլիսոփայության և հոգեբանության  
ֆակուլտետի գիտխորհրդի  
որոշմամբ:**

### **ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ**

Ո 440 ՀԱՍԿԱՑՄԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ/Դրվագներ փիլիսոփայական հերմենևտիկայի և կազմաքանդման պատմությունից/ -Եր., ԵՊՀ հրատ., 2015, 398 էջ:

Մենագրությունն ընդգրկում է հասկացման մասին փիլիսոփայական ուսմունքի՝ հերմենևտիկայի օարգացման հիմնական փուլերը՝ շարադրված դրանց հիմնադիր ներկայացուցիչների՝ Ֆրիդրիխ Շլյերմախերի, Վիլհելմ Դիլթայի, Մարտին Յայնբերի և Յանս-Գեորգ Գաղամերի գաղափարների վերլուծության հիման վրա: Հասկացման մասին հետարդիական պատկերացումները ներկայացված են ժակ Ղերիդայի հղացքով, որը ծագումնաբանորեն աղերսված լինելով հուսեռլ-հայդեգերյան բներևութաբանությանը, համեստ է գալիս որպես վերջինիս հակոտնյան: Հետազոտությունը լրացված է Վիլհելմ Դիլթայի «Հերմենևտիկայի ծագումը» հոդվածի հայերեն թարգմանությամբ, ինչպես նաև օգտագործված հերմենևտիկական եզրերի հակիրճ բացատրական բառարանով:

ՀՏԴ 1/16(091)

գՄԴ 87.3

ISBN 978-5-8084-1971-1

© ԵՊՀ հրատ., 2015

© Ա. Ոսկանյան, 2015

## Բովանդակություն

<b>Առաջարան</b> .....	5
<b>Մաս Ա. Ֆրիդրիխ Շլայերմախեր</b>	
Ֆրիդրիխ Շլայերմախերը և ունիվերսալ հերմենուսիկան .....	11
<b>Մաս Բ. Վիլհելմ Դիլբայ</b>	
Պատմական քանականության քննադատությունից դեպի հերմենուսիկա .....	83
Վիլհելմ Դիլբայ. «Հերմենուսիկայի ծագումը» .....	112
<b>Մաս Գ. Մարտին Հայդեգեր</b>	
Հայդեգերի ներկայությունը .....	135
«Գոյության» և «Անդ-կայության» միջև.....	137
Գիրք ճանապարհի .....	184
Աքցանում .....	226
Եվ չկա վերջը .....	249
<b>Մաս Դ. Հանս-Գեորգ Գաղամեր</b>	
Ազանդության արդիականությունը.....	261
<b>Մաս Ե. Ժակ Շերիդան</b>	
«Հավերժ հետաձգումը» հետարդիական իրողությունների համատեքստում .....	299
Կերպարանի փոխարեն. Հասկացման անխուսափելիությունը .....	331
Բառարան հիշատակվող հերմենուսիկական եզրերի .....	337
Մեջբերված և հիշատակված գրականություն .....	365
<b>Անվորում</b>	
Неизбежность понимания.....	385
Unausweichlichkeit des Verstehens .....	388
The Inevitability of Understanding .....	391



## ԱՌԱՋԱԲԱՆ

Ըստերցողին ներկայացվող սույն մենագրությունն ընդգրկում է հասկացման մասին փիլիսոփայական ուսմունքի՝ հերմենևտիկայի զարգացման հիմնական փուլերը՝ շարադրված դրանց հիմնադիր ներկայացուցիչների՝ Ֆրիդրիխ Շլայերմախերի, Վիլհելմ Դիլբայի, Մարտին Հայդեգերի և Հանս-Գեորգ Գաղամերի գաղափարների վերլուծության հիման վրա:

Շլայերմախերը մշակել է ունիվերսալ հերմենևտիկայի հղացքը, Դիլբայը՝ վերահիմաստավորել այն որպես հումանիտար հետազոտության ընդհանրական մեթոդ, Հայդեգերն իր տիտանական ինտելեկտուալ ճիգով արմատապես կերպափոխել, գոյարանականացրել է հասկացման հասկացությունը, հերմենևտիկան վերածելով գոյության մասին ուսմունքի, իսկ Գաղամերը դասական հումանիստի ջանասիրությամբ ի ցույց է դրել գոյարանական հերմենևտիկայի կիրառական ներուժը:

Ժակ Դերիդան ներկայացվող հեղինակներից միակն է, որ չի պատկանում հերմենևտիկական հարացույցին: Բայց նրա հղացքի ձևավորումը դժվար կլիներ պատկերացնել առանց հուսեռլ-հայդեգերյան բներևութաբանության հետ ունեցած առնչությունների, իսկ Դերիդայի հոչակավոր «կազմաքանդումը» անմիջականորեն ծագում է հայդեգերյան «կազմազերծումից» և ցույց է տալիս վերջինիս զարգացման այլընտրանքային ճանապարհներից մեկը:

Վիլհելմ Դիլբայի «Դերմենևտիկայի ծագումը» հոդվածի հայերեն թարգմանության ներգրավումը երկու խնդիր է լուծում՝ լայն պատմական հեռանկարի հիման վրա ծանոթացնում է հերմենևտիկական զարգափարների զարգացման պատմությանը և, որ պակաս կարևոր չէ, ցույց է տալիս Դիլբայի՝ այդ պատմությանը մոտենալու յուրահատուկ կերպը:

Երկասիրությունը երկար տարիների աշխատանքի արդյունք է, որը սակայն պարբերաբար ընդհատվել է հեղինակի կենսագրության կեռ-

մանների պատճառով կամ զիջել է իր տեղը այլ գիտական հետաքրքրությունների:

Ծլայերմախերի և Դիլբայի տեքստերի ուսումնասիրությունը հեղինակը սկսել է 1986-ին՝ Լայպշիցի համալսարանում վերապատրաստման նպատակով անցկացրած սեմեստրի ժամանակ: Առաջինի հղացքին նվիրված հետազոտությունը հիմնականում գրված էր 1987-1988 թվերին, առանձին հատվածներ հրատարակվել են Ծլայերմախերյան ընկերության երկու միջազգային համաժողովների նյութերի ժողովածուներում<sup>1</sup> (հեղինակը Ծլայերմախերյան ընկերության ամդամ է 1999-ից):

Դիլբային նվիրված գրությունն ամբողջությամբ լույս է տեսել 2005 թվականին<sup>2</sup>: Նույն թվին է հրապարակվել նաև Դիլբայի «Յերմենստիկայի ծագումը» դասական հոդվածի թարգմանությունը<sup>3</sup>:

Ամենամեծ՝ Յայրեգերին նվիրված բաժնի առանձին մասեր հրատարակվել են 2006 և 2007 թվերին՝ որպես հոդված և «կոլեկտիվ մահվան» խնդրին նվիրված էսսեի հատված<sup>4</sup>: Եվս մեկ հոդված լույս է տեսել սույն մենագրությունը հրատարակման պատրաստելու ընթացքում<sup>5</sup>: Նույն ընթացքում հրատարակվել է նաև Գաղամերին նվիրված բաժինը<sup>6</sup>:

<sup>1</sup> A. Voskanian, “Warum Schleiermacher kein Romantiker ist”, in: 200 Jahre “Reden über die Religion”. Akten des Internationalen Kongresses der Schleiermacher-Gesellschaft Halle, 14.-17. März 1999, Walter de Gruyter, Berlin – New York, 2000, S.574-582 և A. Voskanian, “Der Begriff der Individualität bei S. Kierkegaard und F. Schleiermacher im Lichte der geistigen Situation der Postmoderne”, in: Schleiermacher und Kierkegaard. Subjektivität und Wahrheit. Akten des Schleiermacher-Kierkegaard Kongresses in Kopenhagen, Oktober 2003, Walter de Gruyter, Berlin - New York, 2006, S. 503-518:

<sup>2</sup> Ա. Ուկանյան, «Վիլհելմ Դիլբայ, պատմական բանականության քննադասությունից դեպի հերմենուկայա», «Գիտական աշխատություններ՝ Յասարակական գիտություններ», պր. 3, Լինզգա (ԵՊՀ), Եր., 2005, էջ 123-150:

<sup>3</sup> Վ. Դիլբայ, “Յերմենստիկայի ծագումը”, «Ուրիշներ», թիվ 1(8), Եր., 2005, էջ 9-21: Յանդեսն նույն համարում լույս է տեսել նաև հեղինակի «Վիլհելմ Դիլբայ» հոդվածը:

<sup>4</sup> Ա. Ուկանյան, ««Գյոյլության» և «Ներկայության» միջև. Սարսփին Յայրեգերի փիլիսոփայական հղացքի ծևավորումը», «Գիտական աշխատություններ՝ Յասարակական գիտություններ», պր. 5, Լինզգա (ԵՊՀ), 2007, էջ 65-103 և նույնի, «Ուստի միաբանությունը. կամ կոլեկտիվ ներկայության պարապրուները», «Ուրիշներ», թիվ 2 (10), 2006, էջ 22-51: Վերջինիս գերմաներեն տարերակը, որն ավելի վաղ ծագում ունի, հրապարակվել է 2007-ին A. Voskanian, “Paradoxien des kollektiven Daseins. Zur Phänomenologie des armenischen Geistes”, in: Wissen um Werte. Perspektiven der Religion. – Strukturen der Wirklichkeit. Schriftenreihe der DUA und der Akademie St. Paul, Bd. 3, Via Verbis Verlag, 2007, S. 35-68:

<sup>5</sup> Ա. Ուկանյան, «Ենք՞ չ չափաշատեց Յայրեգերը», «ՎԵՍ. համահայկական հանդես», Զ (ԺԲ) տարի, թիվ 2 (46), ապրիլ-հունիս, Եր., 2014:

<sup>6</sup> Ա. Ուկանյան, «Ավանդության արդիականությունը. Յանս-Գերոգ Գաղամերի «ունիվերսալ հերմենուկայա» հղացքի ծանրակետերը», «ՎԵՍ. համահայկական հանդես», Զ (ԺԲ) տարի, թիվ 3 (47), հուլիս-սեպտեմբեր, 2014:

Դերիդայի հղացքի հետ կապված որոշ հարցադրումներ արտացոլված են 2006 թվականին լույս տեսած հոդվածում<sup>7</sup> և Ըլայերմախերյան ընկերության՝ ժողովածուի վերը հիշատակված տեքստում<sup>8</sup>:

Գիրքն ամբողջացնելու ժամանակ արմատապես վերանայվել և խմբագրվել է Ըլայերմախերի բաժինը, բովանդակային ճշգրտումներ են կատարվել Դիլբայի հոդվածի թարգմանության մեջ, որը լրացվել է տեքստում հիշատակվող անձանց և որոշ հազվագյուտ օգտագործվող եզրերին վերաբերվող տեղեկություններով: Յայդեգերին, Գաղամերին և Դերիդային նվիրված բաժիններում նոր մասեր են ավելացվել և էական հավելումներ են կատարվել:

Դրա հետ մեկտեղ հեղինակը ստիպված է արձանագրել, որ տարիներ առաջ ուրվագծված և մտովի բազմիցս ի մի բերված ամբողջից ամեն ինչ չէ, որ իրականություն է դարձել: Երկասիրությունն ընդունելի ժամկետներում ընթերցողին հասցնելու հրամայականը ստիպել է հրաժարվել մի քանի կարևոր հեղինակների գործերին կատարվելիք անդրադարձից, իսկ հայդեգերյան հղացքի տեխնիկական մանրանասների վերլուծությունը սահմանափակել նրա՝ մինչ «շրջադարձը» գրված տեքստերով: Իհարկե, շուտասելուկը, որին հանգել է Յայդեգերին նվիրված վերջին հատվածը («Եվ չկա վերջը...»), չի կարող անբավարարության զգացողություն չառաջացնել հեղինակի մոտ: Սակայն միակ ելքը այստեղ դրա վերաբերյալ ափսոսանք հայտնելն է, քանի որ այլընտրանքը Յայդեգերին նվիրված ևս ութսուն էջ գրելն էր լինելու – խնդիր, որ ներկայումս ոչ միայն լուծելի չէ գուտ արտաքին՝ գործնական և ժամանակային պատճառներով, այլև հրատապ էլ չէ առանձնապես, քանի որ ժամանակը, որում ապրում ենք, չի տրամադրում ինտելեկտուալ ուլունքախաղի, որին երբեմն ննանվում են ուշ Յայդեգերի գրվածքները:

Եվ այնուամենայնիվ, հայդեգերյան մեղիտացիաները «հեռացած աստվածների» մասին, ինչպես նաև վերջին բաժնում («Յայդեգերը որպես հնարավորություն») նախատեսված, բայց այդպես էլ չգրված

<sup>7</sup> Ա. Ոսկանյան, «Ժակ Դերիդայի “հավերժ հետաձգումը” հետարդիական իրողությունների համատեքստում», «Գիտական աշխատություններ: Յասարակական գիտություններ», պր. 4, Լինզա (ԵՊՀ), 2006, էջ 5-17:

<sup>8</sup> A. Voskanian, “Der Begriff der Individualität bei S. Kierkegaard und F. Schleiermacher im Lichte der geistigen Situation der Postmoderne”, in: Schleiermacher und Kierkegaard. Subjektivität und Wahrheit. Akten des Schleiermacher-Kierkegaard Kongresses in Kopenhagen, Oktober 2003.

## **ԴԱՍԿԱՑՄԱՆ ԱԽՈՐԽԱՎՈԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**


Կտորները, որ նվիրված էին լինելու հայդեգերյան «Dasein»-ը «մարդկային, չափազանց մարդկային» դարձրած ժան-Պոլ Սարտրին, մետաֆիզիկայի հետ «իր վլուզման պահին» հաշտվել փորձող Թեոդոր Ադորնոյին և Հայդեգերին զուգահեռ ողջ կյանքը «պարզության» որոնումներին նվիրած Լյուդվիգ Վիտգենշտայնին – առնվազն նրանց – շարունակում են անհանգստացնել՝ «ծանրանալ սրտիս ինչպես ժամանակին չվճարված պարտամուրիակ»...

Գուցե երեւէ... Բայց առայժմ՝ այն, ինչ գրվել է:

*12.10.2014*

*Երևան*





ԱՐԻ

**Ֆրիդրիխ Դանիել Էռնս  
Շլազերսոներ**

1768 - 1834

## ՖՐԻԴՐԻԽ ՇԼԱՅԵՐՄԱԽԵՐԾ ԵՎ ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ

Բոլոր նրանք, որ թեզ փնտրում են,  
թեզ փորձության են ենթարկում:  
Աղաք ս գտնողը թեզ բանտում է  
դիմաշարժում ու պատկերում:

Իսկ ես ուզում եմ ըմբռնել թեզ,  
իմշախ որ հողմ է հասկ քրնում,  
իոգոս թերթի հասունացամբ  
Արքայությունի է հասմում:

...  
Ոչ մի հրաշք չեմ խնդրում ես:  
Օրենքին եմ ապավիճում,  
որ սերնեն սերում կարծեն  
ավելի է հստակամում:

Ռ. Մ. Ռիլկե<sup>1</sup>

Ֆրիդրիխ Գամիել Էռնստ Շլայերմախերի փիլիսոփայական աշխարհընկալման յուրահատկությունը պայմանավորված է եղել երկու զորեղ ազդակներով: Դրանք են՝ անմիջական առնչությունը բողոքական եկեղեցու գործունեությանը և ոռմանտիկական շարժման հետ ու նեցած աղերսները:

Որքան էլ նշանակալից է Շլայերմախերի ավանդը փիլիսոփայության բնագավառում, նա նախ և առաջ աստվածաբան էր, որ կրոնական մտքի պատմության մեջ մնացել է որպես նորորդոքականության հիմնադիր և եկեղեցու 19-րդ դարի նշանավոր հայրերից մեկը<sup>2</sup>: Այստե-

<sup>1</sup> Alle, welche dich suchen, versuchen dich, / Und die, so dich finden, binden dich / an Bild und Gebärde, / Ich aber will dich begreifen / wie dich die Erde begreift; / mit meinem Reisen / reift dein Reich. / ... / Tu mir kein Wunder zulieb. / Gieb Deinen Gesetzen recht, / die von Geschlecht zu Geschlecht / sichtbarer sind. R. M. Rilke. (Ռիլկեի բանասեղծություններից քաղված այս և մյուս հատվածների թարգմանությունը տողերին հեղինակին է):

<sup>2</sup> «Աստվածաբանական առօւմով 19-րդ դարը Ֆրիդրիխ Գամիել Էռնստ Շլայերմախերի աստղի մերքը է գտնվում», - գրում է Կ. Նովակը: St u K. Nowak, "Einleitung", in: F. D.

ոից՝ նրա անընդհատ ձգտումը դեպի հոգևոր-ունիվերսալը կամ, ինչպես ինքն էր արտահայտվում, Անվերջը (Unendliche): Մյուս կողմից, ռոմանատիկների Յենայի խմբակի հետ Շլայերմախների կապերը և նրա մասնակցությունը Շլեզել եղբայրների հրատարակած «Աթենեում» հանդեսին պայմանավորեցին նրա խոր հետաքրքրությունը մարդու մեջ անհատական անկրկնելիի նկատմամբ<sup>3</sup>:

Այս երկու միտումների առկայությունը Շլայերմախների մոտ պատահական չէր. այն ուղղակիորեն բխում էր բողոքականության կրոնարանական հարացույցից, որքանով որ վերջինս ձգտում էր աստվածայինի և մարդկայինի միջև անմիջական, հոգական-անհատական կապի հաստատմանը: «Ունիորմացիայի մեծագործությունն այն էր,- գրում է Լյուդվիգ Ֆոյերբախը,- որ այն... ճարդկայնացրեց և իրական դարձրեց աստվածային սերը...»<sup>4</sup>: Այն, ինչ սկսել էր Մարտին Լյութերը, ավարտին հասցրին Շլայերմախները և ռոմանտիկները՝ աստվածակենտրոն աստվածաբանությունից շրջադարձ կատարվեց դեպի մարդակենտրոն աստվածաբանությունը<sup>5</sup>:

Մտածողի ողջ ստեղծագործական ժառանգությունը, այսպիսով, ներկայանում է որպես անվերջ բազմազանության և նրա հիմքում ընկած նույնության համադրական կապը հիմնավորելու տպավորիչ մի փորձ: Սա է այն վճռորոշ հանգամանքը, որը զանց առնելու դեպքում հնարավոր չէ հասկանալ ոչ Շլայերմախների աշխարհայացքն ընդհանուրապես, ոչ էլ նաև անավորապես նրա մեկնարկեստի տեսությունը՝ ուսմունք, որը մեկնակետ է ծառայել յուրահատուկ, լիովին աշխարհիկ ավանդույթի՝ հերմենատիկական փիլիսոփայության զարգացման համար:

E. Schleiermacher, *Theologische Schriften*, B., 1983, էջ 17, ինչպես նաև՝ Ch. Lüllmann, *Schleiermacher, der Kirchenfater des 19. Jahrhunderts*, Tübingen, 1907:

<sup>3</sup> Տե՛ս *Athenaeum. Eine Zeitschrift von August Wilhelm Schlegel und Friedrich Schlegel*, Auswahl (hrsg. von G. Heinrich), L., 1984, ինչպես նաև՝ Պ. Պ. Գայդենկո, *Философия Фихте и современность*, Мысль, М., 1975, էջ 159-165:

<sup>4</sup> Լ. Փեյերբախ, “Օ սպիրիտուալիզմ և մատերիալիզմ”, *Избранные философские произведения*, տ. 1, Политиздат, М., 1955, ս. 508.

<sup>5</sup> Տե՛ս K. Bart, *Die protestantische Theologie im 19. Jahrhundert*, Zurich, 1960, էջ 411-412, հիշատակվում է բառ՝ Պ. Պ. Գայդենկո, նշվ. աշխ., էջ 168: Ռոմանատիկմի և բողոքականության փոխառնչությունների մասին խոսելիս նկատի ունեն վաղ ռոմանտիկներին, քանի որ իր զարգացման երկրորդ փուլում ռոմանտիկական շարժումը հակվեց դեպի կարողիցիզմ:

## Զգայականը որպես համընդիամուր միջնորդ

Գորովալից ծմբաղրեցեք ինձ հետ միասիմ սուրբ,  
թշվառ Սպիրողայի ստվերի առջն...

Ֆ. Շլայերմախներ

Փիլիսոփայության երկնակամարում Կանտի աստղի փայլատակելուց ի վեր հայտնի է եղել՝ փիլիսոփայության մեջ կարելի է լինել Կանտին կողմ կամ դեմ, սակայն չի կարելի լինել «առանց Կանտի»: Շլայերմախներն, իհարկե, չի խուսափել այդ ընդհանուր օրինաչափությունից, իր ուրույն վերաբերմունքը մշակելով Կանտի «կոպերնիկյան հեղաշրջման» նկատմամբ: Ժամանակին, հարց դնելով միասնական տրանսցենդենտալ սուբյեկտ՝ որպես ամեն մի իմացության հնարավորությունն ապահովող պայմանի մասին, Կանտը ստիպված էր եղել միմյանց հակադրելու չափ սահմանազատել բնության և ազատության, զգայականության և գուտ մտածողության ոլորտները: Նետևելով տրանսցենդենտալ սուբյեկտ՝ միասնության վերաբերյալ թեզին, Շլայերմախներն, այնուամենայնիվ, չիրաժարվեց վերջինիս զգայական-հուզական որակները հաշվի առնելուց: Նրա համար՝ որպես աստվածաբանի, աստծոն գոյությունը հուզականորեն աճմխստելի փաստ էր, որը պետք է համադրվեր բնության հետ մեկ ընդհանրական համակարգի մեջ: Այս խնդրի լուծնան ընթացքում կանույան կրիտիզմի մոտ խոր կերպափոխություն է ապրում, հող ստեղծելով նորագոյն փիլիսոփայության տեսակետից խիստ նշանակալից մի շարք հարցադրումների համար<sup>6</sup>:

<sup>6</sup> Կանույան փիլիսոփայության նշանաբանական կերպափոխության մասին առաջինը խստել է Կարլ-Օտոն Ապելը Չարլզ Պիրս ուսմունքի կապակցությամբ: Տե՛ս՝ K.-O. Apel, “Von Kant zum Pirs: Die semiotische Transformation der Transzendentalen Logik”, in: ders., *Transformation der Philosophie*, B. 2, Das A Priori der Kommunikationsgemeinschaft, Suhrkamp, Ffm., 1973: Նետևելով Ապելի օրինակին, Սանֆրեդ Ֆրանկը բնորոշում է Շլայերմախների փիլիսոփայական նախածենությունը որպես «քանականության բնադատության կերպափոխություն իմաստի բնադատության» (Transformation der Vernunftkritik in eine Sinnkritik), տե՛ս M. Frank, “Einleitung des Herausgebers”, in: F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, Suhrkamp, Ffm., 1977, էջ 10: Ֆրանկի այս զնահատական, ըստ իս, արդարացի է, սակայն անհարկիորեն անվերապահ: Շլայերմախներ նույր և ծկուն մտածողությունը չի տեղափոխվում այս կամ այն միանշանակ մեկնաբանության պրոկրուստյան մահճում՝ անկախ վերջինիս ծավալությունից: Լիմի այն նշանաբանական-կառուցվածքաբանական (Կ.-Օ. Ապել, Ս. Ֆրանկ), թե հոգեբանական-մենտալիստական-քննիլությանական (Դայն Քիմերիե, Դանս-Գեորգ Գալդամեր): Բնեների փոխանցման (զարկերանման, առկայժման - Oszillation) սկզբունքը, որի վառ Շլայերմախները հաճախ հենցելի է նաև նրա ուսմունքի բնութափության համար: Ստորև են կաշխատեն ցույց տալ, որ կանույան ավանդությը Շլայերմախների երկերում կերպափոխությունների մի ամբողջ շարք է ապրել, յուրաքան-

Տրանսցենդենտալ փիլիսոփայության հիմնադրույթների այդ այլակերպումն այնքան անսպասելիորեն արդիական է թվում, որ անհնար է այն լիովին ընթանել և ընդունել՝ առանց Ըլայերմախերի փիլիսոփայական զարգացման ուղին մեկ անգամ ևս նրա հետ միասին անցնելու, դրա ներքին տրամաբանությունը վերստեղծելու:

1. Աշխարհի խաթարված երկու բնեօների՝ ամերաժեշտ բնության և ազատ աստծո երկրային հանգունակ՝ ազատ ճարդու միասնությունը վերականգնելու ձգտումը Ըլայերմախերին ստիպում է «...բնական պատճառականության և ինքնավարության ապորիայի փոխարեն ազատությունը բնական պատճառականության հիմնա վրա մտաժել»<sup>7</sup>: Ուղղափառ կանոնականության տեսակետից այս նպատակը պետք է Ըլայերմախերին անհետստղականության մներ, քանի որ «քննադասական դիրքորոշումը» բացառում է դրական աստվածաբանության հնարավորությունը գիտական փիլիսոփայության շրջանակներում: Զարմանալի չէ, ուրեմն, որ Ըլայերմախերը մտածողության և կեցության, ազատության և անհրաժեշտության կորուսալ միասնությունը վերագտնելու փորձն անում է, դիմելով Կանտի հակոտնյայի՝ ոտքից գլուխ «դոգմատիկ» Բենեդիկտ Սպինոզայի ուսմունքին, որում ազատության հնարավորությունը մակարերվում էր ամենախիստ ծնով ընթանված պատճառականության համակարգից: Երրայական հինավորց իմաստնությամբ մկրտված այդ ռացիոնալիստի երկերը, ի դեպ, անմատչելի էին այն ժամանակի Գերմանիայում, և Ըլայերմախերը նախապես ծանրթացել է նրա գաղափարներին Ֆրիդրիխ Շայնրիխ Յանրիխ Յակոբիի աշխատությունների միջոցով՝ մտածող, որին Յեգելը մտածողության և կեցության միասնության սկզբունքի հեղինակ է համարել<sup>8</sup>: Նշյալ սկզբունքը, որ խիստ կարևոր էր յուրաքանչյուր աստվածաբանի համար, իր վաղ դրսուրումն էր գտել Սպինոզայի պանթեիզմում, նախորդելով Ծելինգի և Յեգելի մտահայեցողական մշակումներին: Իզուր չէ, որ Լուլվիգ Ֆոյերբախը Սպինոզային «ժամանակակից սպեկուլյատիվ փիլիսոփայության իսկական հիմնադիր» էր համարում<sup>9</sup>: Պատճառականության և ազա-

յուր փուլում վերաված ծնով պահպանելով նախկին տեսամելյունների ողջ հարստությունը:

<sup>7</sup> J. Rachold, “Einleitung”, in: F. D. E. Schleiermacher, *Philosophische Schriften*, Union Verlag, B., 1983, S. 17.

<sup>8</sup> Տէ և Գ. Բ. Փ. Գետը, *Лекции по истории философии*, հն. 3, եց же, *Соч.*, տ. XI, Մ.-Լ., 1935, էջ 486:

<sup>9</sup> Л. Фейербах, “Предварительные тезисы к реформе философии (1842)”, *Избранные философские произведения*, տ. 1, Политиздат, М., 1955, с. 114.

տության միացման սպինոզան փորձը չէր կարող գրավիչ չլինել Ըլայերմախերի համար, սակայն վերջինս չէր կարող նաև չնկատել այդ միացման ունիվերսալ-անդեմ բնույթը, որքանով որ այն իրականացվում էր կարծես թե «մարդու գլխի վրայով»: Անհատը, առանձինը, անկրկնելին տեղ չունեին Սպինոզայի համակարգում: Սպինոզայի պատկերացումը բոլոր եզակիները պարփակող անվերջ սուրստանցի մասին փաստորեն վերառում էր անհատի ինքնուրույնությունը (ուրեմն և ազատությունը), հանգեցնելով այն սուրստանցի անհրաժեշտ էության ճանաչման խնդրին, աֆեկտների հաղթահարմանն ուղղված սպինոզան էթիկան նույնանում էր ինացարանության և գոյաբանության հետ և ինքն իր պատճառը հանդիսացող սուրստանցն ընդունում էր անհատի ստորևայան ինքնահրաժարականը՝ որպես հուշ պահպանելով իրական սուրյեկտի հուզական մնացորդը միայն՝ ինացական սերն առ աստված<sup>10</sup>: Այս բարձրագույն աֆեկտն արդեն դուրս էր բերում անհատականության իր սահմաներից, նրա ազատությունն ապահովելով սուրստանցի հետ մերձեցման միջոցով:

Պատահական չէր, ուրեմն, որ Ըլայերմախերը չի ընդունել Սպինոզայի պանթեզմն անվերապահորեն: 1827-ին Բոննի համալսարանի պրոֆեսոր Յ. Ֆ. Նելբրյուկին ուղղված մի նամակում Ըլայերմախերը գրում է. «Սպինոզայով, առաջին անգամ նրան կարդալուց ի վեր, ես անկեղծորեն հիանում եմ և սիրում եմ նրան, սակայն նրա հետևորդը չեմ եղել և ոչ մի ակնթարթ... հետևաբար, ես ոչ մի կերպ չեմ հասկանում, թե ինչ նկատի ունեք Դուք ձեր նամակում, նշելով՝ իբր սպինոզամի իմ ժխտումը չի համապատասխանում նրան, ինչը Դուք իմ հավատաբանության (Glaubenslehre) հիմքն եք համարում»<sup>11</sup>:

Իսկապես այդպես էր: Սպինոզայի համակարգը չէր կարող բավարարել Ըլայերմախերին արդեն իսկ այն պատճառով, որ մարտնչող օրյեկտիվիզմի դիրքերից բացառելով ինքնագիտակցող սուրյեկտի ինքնուրույնությունը, այն հակասության մեջ էր մտնում կանույան տրանսցենդենտալ հարացույցից սերող ցանկացած մտածողի ինարավոր դիրքորոշման հետ: Ըլայերմախերի հարցադրումը նախ և առաջ բողոքական աստվածաբանի հարցադրում էր, որը ցանկանում էր գտնել աստծուն, չկորցնելով իր անհատականությունը: Նման մոտեցումը, հասկանալի է,

<sup>10</sup> Տե՛ս Բ. Սպինոզա, *Եթիկա*, մաս 5, թերեմ 32:

<sup>11</sup> Schleiermacher an Delbrück (02.01.1827), in: F. D. E. Schleiermacher, *Philosophische Schriften*, B., 1984, S. 400.

պետք է որ շեշտված բարոյագիտական երանգ ծեռքը բերեր: Ուրեմն այս հարցում Շլայերմախերը, որքանով որ կանտական էր և բողոքական, ոչ թե Սպիտակայի, այլ Ֆիլիստեի և Շելինգի հետ էր լինելու:

Սակայն, ի՞նչն էր ստիպում Շլայերմախերին, որն իր փիլիսոփայական զարգացման շատ կողմերով պարտական էր Ֆիլիստեին, վաղուց յուրացրել և որոշ կետերում ընդունել էր կեցության և գիտակցության նույնության սկզբունքի շելինգյան տրանսցենդենտալ-իդեալիստական տարրերակը, արդեն 1827-ին՝ իր սեփական աշխարհայացքի վերջնական ձևավորումից հետո, նորից ու նորից առանձնահատուկ ակնածանք դրսնորել մի մտածողի հանդեպ, որի «*Natura sive Dei*» արտահայտության մեջ արձանագրված բնության և աստծո համընկնումը և դրանից մակարերվող ամիրաժեշտության ու ազատության նույնացումը կորողային, բայց և պարզունակ-միամիտ պետք է թվային տրանսցենդենտալիզմի փայլուն կառուցների կողքին:

Ուրեմն այստեղ կար մեկ այլ պահանջ, որին Ֆիլիստեի և վաղ Շելինգի փիլիսոփայությունը բավարարել չէին կարողանում, և որի պատասխանը Շլայերմախերը հենց սկզբից, ռոմանտիկների հետ միասին, ստիպված էր փնտորել Սպիտակայի մոտ: Խոսքը վերը հիշատակված «իմացական սիրո» մասին է: Քենց այդ յուրահատուկ երևույթը նկատի ուներ Ֆրիդրիխ Շեֆելը Շլայերմախերին գրած մի նամակում. «...Օրերս կարդացի Շելինգի նոր համակարգը և սարսափեցի՝ այն այդպիսին գտնելով: Երբեք դեռևս ոչ-ճշմարիտը այդպիսի պարզությամբ և հստակությամբ չէր արտահայտվել, ոյս իսկական սպիտակիզմ է, բայց առանց սիրո, առանց այն միակ բանի, որ ես գնահատում եմ Սպիտակայի մոտ: Դա հենց այն է, ինչի մասին այդքան երկար խոսում էին և ինչին ծգոտում էին՝ զուտ բանականության համակարգ, ուր խոսք չի կարող լինել երևակայության, սիրո, Աստծո, բնության, արվեստի, կարծ ասած, այն ամենի մասին, որի մասին հենց միայն ինաստ ունի խոսել»<sup>12</sup>:

Չասցեատերը պետք է որ համաձայն լիներ այդ գնահատականին: Վերն արդեն նշվել է, որ Շլայերմախերի կարծառն, բայց հագեցած առնչությունները ռոմանտիկների հետ, աշխատակցությունը «Աթենեում»-ին (որոշ ժամանակ նա նույնիսկ հանդեսի խմբագրի պաշտոնն է վարել)<sup>13</sup>, սերտ բարեկամությունը Ֆրիդրիխ Շեֆելի հետ, անշուշտ,

<sup>12</sup> Φ. Ռալեգել Փ. Ռալեյերմախեր (12.04.1802), в кн.: Ф. Шлегель, Эстетика. Философия. Критика, т. 2, Искусство, М., 1983, с. 410-411.

<sup>13</sup>Տես J. Rachold, նշվ. աշխ., էջ 19:

իրենց խորը կնիքն էին դրել Շլայերմախերի աշխարհայացքի վրա: Ունանատիկական հարացուցից են սերուն նրա մտածելակերպին բնորոշ լայրմոտիվներից մի քանիսը՝ շեշտված հետաքրքրությունն անհատի հուզական կյանքի նկատմամբ, անհատի և հասարակության հարաբերության, մասնավորապես անհատական ազատության և հասարակական-ընդհանրական օրինաչափության ներդաշնակ համադրության հարցը և այլն: Այնպես որ ինացական գործունեությունը հուզական լարումով օժտելու, կենսականացնելու սպիտական հակումը չէր կարող անտեսվել Շլայերմախերի կողմից: Սպիտակայի պանթեիզմում Շլայերմախերը տեսնում է նախ և առաջ ձգտումը դեպի «անվերջը», խորը և գորովակից մի զգացմունք ունիվերսումի նկատմամբ, առանձնացնելով այն, ինչ Սպիտական անվանում էր «*amor Dei intellectualis*»: Ասովածային անվերջի հուզական ապրումն է (Ֆր. Շեգելն այն «Երկնային կարոտ» էր անվանում)՝, որ գրավում էր Շլայերմախերին նախ և առաջ, և պատահական չէ, որ նա փնտրում է այն Սպիտակայի մոտ, բայց ոչ սպիտակամուլս<sup>14</sup>:

Զգալի չափով ազդված լինելով ինչպես Սպիտակայից, այնպես էլ ֆիխտեից և Շելինգից, Շլայերմախերն, այնուամենայնիվ, չբավարպվեց նրանց զարգացրած զաղափարներով և փորձեց ուրույն ծնուզ հաստատել անհատի, հասարակության և ունիվերսումի կապը: Այդ նպատակը նրանից պահանջում էր եզակիի և ընդհանուրի փոխհարաբերության պրոբլեմի նորովի լուծում՝ մի խնդիր, որին Շլայերմախերը ծեռնամուխ եղավ վաղ շրջանի իր երկու ամենանշանակալից աշխատություններում: Դրանք էին Կրոմի մասին. ծառեր, ուղղված այն արհամարիող կրթյալ ներին և Մենախոսություններ երկերը՝ գրված հանապատասխանաբար 1799-ին և 1800-ին:

<sup>14</sup> «...խորը ներքին կարոտ (*Sehnsucht*) որպես բարձրագույն սիրո և հավերժական հույսի նախազգացում...», տես Փ. Ռլեգել, «*Философия языка и слова*», եղայ ժե, *Эстетика. Философия. Критика*, տ. 2, с. 368-369:

<sup>15</sup> Նույնիկ այս ամենը հաշվի արնելով, մարդ հանկարծակիի է զայիս բրիստոնեական աստվածաբն՝ աննկուն այլախոնին նվիրված հետևյալ տողերը կարդախ։ «Գրովալից ծնրադրեցեք ինձ հետ միասին սուլր, թշվար Սպիտակայի սովերի առջև։ Նրան բափանցում էր բարձր համաշխարհային ոգին, անվերջ նրա սկիզբն ու ավարտն էր, տիեզերու՝ նրա միակ և հավերժական սերը սրբազն անմեղությամբ և խորին խոնարհումով արտացոլվում էր նա հավերժի աշխարհում, և ինըն է նրա արժանի հայելին էր։ նա բովանդակ կրոն էր և սուլր ոգի։ այդ պատճառով է, որ նա կանգնած է միայնակ և անխանանելի, որպես իր արքանի վարպետ, վեր խոյանալով, սակայն, անհաղորդ արեստավորների համայնքից, առանց աշակերտների և առանց քաղաքացիության իրավունքի»: Փ. Ռլեյերմախեր, «*Речи о религии к образованым людям, ее презиранию*», եղայ ժե, *Речи о религии. Монологи*, Ռուսская мысль, Մ., 1911, с. 41.

Ինչպես նշում է Յան Ռախոլդը<sup>16</sup>, Շլայերմախերն իր Կրոնի մասին գրության մեջ նպատակադրվել էր վերականգնել կրոնի՝ անհատին ողջ հասարակության հետ սերտորեն առնչելու, հաճայնքի մասնիկը դարձնելու այն գործառույթը, որը կորսվել էր 1790-ից ի վեր՝ հեղափոխական Ֆրանսիայում հավատն անհատի մասնավոր գործը հրչակելուց հետո: Դնարավորություն ձեռք բերելով մարդկային ողջ հաճայնքի կյանքը յուրաքանչյուր անհատի մեջ բացահայտելու, Շլայերմախերը կկարողանար իիմնավորել անհատի և հասարակության նույնությունը, որն իր հերթին պետք է ճանապարհ բացեր սուբյեկտի և օբյեկտի նույնությունը հաստատելու, ոգու և բնության հակադրությունը վերառելու համար<sup>17</sup>:

Թեև այս խնդրի առաջադրումով Շլայերմախերը զգալիորեն մոտենում է շելինգյան դիրքորոշմանը, միջոցները, որոնք նա կիրառում է պրոբլեմի լուծման հանար, հավաստում են նրա մտածողության յուրահատկությունը: Եզակիի և ընդհանուրի, սուբյեկտի և օբյեկտի, անհատի և հասարակության առնչությունների հանգուցակետը Շլայերմախերը փնտրում է անհատականության ներաշխարհում, մատնանշելով, որ այդ հակադրությունների անմիջական միասնությունը տրված է սուբյեկտի հուզական կյանքում: Այսպիսով՝ հուզական ինտուիցիան համընդհանուր միջնորդի դեր է ստանձնում: Շլայերմախերը զարգացնում է զուտ ներքինով պայմանավորված մի կրոն (eine Religion der reinen Innerlichkeit), որի կենտրոնաձիգ միջուկը ոչ թե տրանսցենդենտալ էւլիունն էր լինելու, այլ «ցեղի հանդեպ՝ հույզով միջնորդավորված հարաբերությունը»<sup>18</sup>:

Հուզականությանը հատկացված նշանակալից դերը կարևորում է Շլայերմախերի առնչությունները ռոմանտիզմի հետ, կարծես թե մերձեցնելով նրանց տեսակետները: Այս հանգամանքը ժամանակին առիթ է տվել Յեգելին ռոմանտիզմների նկատմամբ իր ընդհանուր հակակրանքը տարածելու նաև Շլայերմախերի վրա, վերջինիս մեղադրելով զգայական-հուզական սուբյեկտիվիզմի մեջ<sup>19</sup>:

Սակայն Շլայերմախերի պարագան այլ էր. Ելնելով ռոմանտիկների արած հարցադրումներից, նա պատասխաններն այլ տեղ էր փնտրում: Զգայականության (հուզականության) բներևույթը նրա մոտ դուրս է գա-

<sup>16</sup> Տե՛ս J. Rachold, նշվ. աշխ., էջ 22-23:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 23:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 24:

<sup>19</sup> Տե՛ս Գ. Բ. Փ. Գեղել, նշվ. աշխ., էջ 482:

լիս հույզի գուտ անհատական (հոգեբանական) մեկնաբանության սահմաններից, ծեռք բերելով ինչպես ինացարանական, այնպես էլ ընդհանուր փիլիսոփայական սուբստանցիոնալ նշանակություն: Անշուշտ իրավացի է Սեմյոն Ֆրանկը, պնդելով, որ Շլայերմախերի մտքին ուշադրությամբ Վերաբերելու դեպքում հնարավոր չէր լինի նրան պարզունակ էսթետիկական սուբյեկտիվիզմ Վերագրել<sup>20</sup>: «Հույզ» եզրը լիովին նույնակերպ չէ Շլայերմախերի մտքին,- գրում է հեղինակը: Դրա տակ նա հասկանում է ոչ թե հոգեկան կյանքի անջատ, առանձին մի բնագավառ, այլ ամեն մի գիտակցության խորագույն արմատն ընդհանրապես. այդ արմատից հետագայում առանձնանում են ինացարական և պրակտիկ ոլորտները, այնպես որ նրանց հետ մեկտեղ այն իրակապես ներկայանում է որպես առանձնահատուկ մի սկզբունք, իրականում լինելով միայն դիֆերենցված, գիտակցության մեջ պահպանված «իբր» մնացորդ կամ ընդհանրապես գիտակցության նախնական միասնական միասնությունից մնացած ժառանգություն»<sup>21</sup>:

Իսկապես, Շլայերմախերի մոտեցման սուբստանցիոնալությունը կասկած չի հարուցում: Մտածողն այստեղ իր յուրահատուկ պատասխանն է տալիս Կանտի հրչակավոր հարցին – մեր ինացության երկու հիմնական ծյուլերի՝ զգայականության և դատողականության ընդհանուր անհայտ արմատի բնույթի Վերաբերյալ<sup>22</sup>: Անհատական հույզը (Gefühl առd Gemüt) ամենալայն ձևով ընթանված զգայականի մեջ վերառելով և այդպիսով հարստացված այդ ունակությանը գոյաբանական, ինացարանական, հասարակական հակադրությունները միավորող-համադրող կարգելով, Շլայերմախերն իրականացնում է կանոյան փիլիսոփայության իր առաջին կերպակիշությունը, փորձելով հիմք ստեղծել անհրաժեշտության և ազատության տարանջատված ոլորտների միավորման համար: Դեկարտի և Ֆիխտեի անհատական ինքնագիտակցության փոխարեն Շլայերմախերը, Սպինոզայի հետ միասին, անվերջության ին-

<sup>20</sup> Տե՛ս Ս. Փրանք, “Личность и мировоззрение Фр. Шлейермакера”, Ф. Д. Шлейермакер, *Речи о религии. Монологи*, էջ XXVII:

<sup>21</sup> Նոյն տեղում, էջ XXVIII:

<sup>22</sup> Տե՛ս Ի. Կանտ, *Զուտ բանականության քննադատություն*, Սարգիս Խաչենց. Փրիմթին-Ֆն, Եր., 2006, էջ 57: Եվ նորից իրավացի է Ս. Ֆրանկը, նշելով, որ «հույզ» հասկացությունն այստեղ մոտակիրական նոյն դերն ունի, որը հասկացված է «կյանքին» Ա. Շնպենհաուերի մոտ, և որ, եթևարար, Շլայերմախերի ներկայացված «նոցիոնալիզմը պետք է դիտվի որպես հավասարազոր ուղղություն ինտելեկտուալիզմի և վոլյունտալիզմի կողմին»: Տե՛ս Ս. Փրանք, նշվ. աշխ., էջ XXVIII:

տուիցիան դիտում է որպես ամեն մի գիտակցության անմիջական սկիզբ և ելակետ:

Միամտություն կլիներ ենթադրել, թե Յեգելն այդքանը չէր հասկանում: Սակայն այդպիսի մոտեցումը նրան ավելի քան անընդունելի պետք է թվար: Յայեցողության նկատմամբ Յեգելը միշտ էլ անվատահություն է տածել, եթե նույնիսկ վերջինս որպես մտահայեցողություն է ներկայացել<sup>23</sup>: Ուրեմն նա առավել ևս պետք է մերժեր հուզականորեն երանգավորված այն հայեցողությունը, որի ջատագովն էր Շլայերնախերը: «Բացարձակի մասին գիտելիքը սրտի գործ է դաշնում,- ոդգոհում է Յեգելը,- մեր առջև բազմաթիվ աստղով ոգեշնչվածներ են ելույթ ունենում... նրանց արտահայտությունները հաճախ ծեծված են, եթե վերցնեն դրանք այնպես, ինչպես որ ասվել են: Միայն զգացնունքը, ծեռքի շարժումը, բերներերան լցված սիրտն է, որ նրանց պետք է ուժ ու կշիռ հաղորդեն՝ ինքնին վերցրած դրանք մեզ ոչինչ չեն ասում»<sup>24</sup>:

Յեգելի հարցադրումը պարզ է. հուզականության միջոցով ծեռք բերված կենսական շարժումը թվացող է միայն, այն կարող է լոկ սուբստանցիոնալության պատրանք ստեղծել, քանի որ սուբյեկտիվ է մնում, ոդքանով որ հայեցողական է և ոչ կառուցողական, ուրեմն և տծն է, ներքինից չտարբերակված, հետևաբար՝ անասելի, անարտահայտելի, անմտածելի, այսինքն՝ անընդունելի:

<sup>23</sup> Ծելինգի կողմից առաջադրված մտահայեցողության սկզբունքի մասին Յեգելը գրել է. «Դա ամենահարմար միջոցն է համարությունը իմանելու գլխին փչածի վրա», տե՛ս Գ. Վ. Փ. Գերել, *Лекции по истории философии*, հի. 3, *Соч.*, թ. XI, Соцэгиз, М.-Լ., с. 492.

<sup>24</sup> Գ. Վ. Փ. Գերել, նշվ. աշխ., էջ 483-484: Ուշագրավ է այն բառախաղը, որով բնութագրել է երիտասարդ Յեգելը շայերմախերյան դիրքորոշման «անբովանակությունը»: «...Ունիվերսումի այդպիսի հայեցողություն իմանին սուբյեկտիվություն է առաջ բերում՝ ըստ որում այն... նույնիսկ կարոտ էլ չէ, այլ միայն կարոտի փնտրություն (nicht einmal ein Sehnen, sondern nur das Suchen eines Sehnens):» Մեջբերվում է ըստ՝ G. Lukacs, *Der junge Hegel und die Probleme der kapitalistischen Gesellschaft*, B.u.W., 1986, էջ 348: Մեխմա այստեղ այն է, գերմաներեն «Sehnen» բառն այնպիսի ձգութ, կարոտ է նշանակում, որը որոշակի մի առարկայի է ոլլված (ձգել ինչ-որ բանի, կարոտել որևէ նեկին): Երբ Յեգելը խոսում է «կարոտ փնտրելու» մասին (*Suchen einen Sehnens*), նա ի ցույց է դնում այդ բառակապահության «շրջված տարբերակը»՝ ոռմանտիկական աշխարհայացքի համար հիմնորոշ «Sehnsucht» բառը, որը նույնպես կարոտ է նշանակում, սակայն անորոշ և անառարկայական կարոտ: Ուստերենում այն, բավական հարող, բարձմանում են որպես «րոմանտիկական տօմլենիւ»: ոչ հուզական երանդվ, սակայն ձգումամ առարկայի ամրոցությամբ այդ բառը աղերսներ ունի ոռուսական «Տօսկա»-ին: Յայերենում «Sehnsucht»-ի հուզականացույցին ամենամտն է կանգնած «կարոտի» տերյանական վերապրումը: Յմնտ. վախի (Furcht) և ահի (Angst) տարբերակումը գերմանական երգիստենցիալիզմում:

Սակայն ի՞նչ է, վերջին հաշվով, իենց իր՝ Յեգելի սպեկուլյատիվ փիլիսոփայությունը, եթե ոչ մտածողության ընթացքի, նրա շարժման մեջ դրսորվող հակասությունների նույնության անմիջական հայեցողություն։ Յեգելի մտքի զարգացմանը քաջ ծանոթ Ֆոյերբախը գրում է. «Յեգելի՝ որպես մտածողի համար բացարձակ իդեան բացարձակ ակնհայտություն էր, իսկ Յեգելի՝ որպես գրողի համար այն ծևականորեն ակնհայտ չէր։ Կա տարբերություն արդեն բավարարված, շարադրանքը հաղթահարած մտածողի, որի գործն արդեն ավարտված է, և դեռ չբավարարված, աստիճանաբար շարադրող գրողի միջև, որը ծևականորեն ոչ ակնհայտ է համարում այն, ինչ որ մտածողի համար ակնհայտ է. այդ հակասությունը օքեկտիվացվելով գործնթացն է կազմում բացարձակ իդեայի, որը ենթադրում է գոյությունն ու էլերյունը, բայց այնպես, որ իրականում նրանք են ենթադրում իդեան»<sup>25</sup>: Իսկապես, հայեցողությանը ներկայացվող հեգելյան պահանջը նախ և առաջ միջնորդավորվածության պահանջ է: Յեգելը նշում է, որ բանական հայեցողության ժամանակ «իմացությունը... բացարձակապես նույնական է իմացության առարկայի հետ»<sup>26</sup>: Բայց այդ բացարձակ համընկնումը, որը հասու է դաշնում այս կամ այն անհատին, հատուկ տաղանդ կամ հոգեվիճակ է պահանջում, որը կարող է երջանիկ պատահականություն լինել միայն, եթե ոչ ուղղակիորեն պատրանք<sup>27</sup>: Իսկական գիտելիքը, ըստ Յեգելի, միջնորդավորված է լինելու և ներքինից տարբերակված<sup>28</sup>:

Յենց այստեղ է, սակայն, որ ամենայն խորությամբ դրսևորվել է Ֆրիդրիխ Շլայերմախերի՝ որպես մտածողի ինքնուրուցնությունը: Իր գործունեության հասուն շրջանում նա մշակեց հուզական-զգայական ոլորտի մերժին որդարկման և հետագա միջնորդավորման սկզբունքուն նոր եղանակներ, որոնք նրան հնարավորություն տվեցին իրակա-

<sup>25</sup> Л. Фейербах, “К критике философии Гегеля”, *Избранные философские произведения*, т. 1, с. 77.

<sup>26</sup> Г. В. Ф. Гегель, *Лекции по истории философии*, кн. 3, Соч., т. XI, с. 492.

<sup>27</sup> Տե՛ս նոյն տեղում:

<sup>28</sup> Պայտնի է, որ հեգելյան ավանդություն Սպինոզայի փիլիսոփայությունը միշտ գնահատվել է որպես ամենրամ, անշարժ, սիւծմատիկ: Նոյնիսկ հուզերին արտակարգ նշանակություն տվող Ֆոյերբախը բնութագրել է Սպինոզայի սուբստանցը որպես «մեռյալ, ընդարձացած», մի առարկա, որին նույնության փիլիսոփայությունը «ոգեշնչել է իդեալիզմի շնչով»: Տե՛ս և Л. Фейербах, “Предварительные тезисы к реформе философии (1842)”, *Избранные философские произведения*, т. 1, с. 115: Յասկանալի է, որ գերմանական ռոմանտիզմերի և դասական իդեալիզմի միջև դիրքորոշումների սկզբնաբային տարբերություն կա: Եթե առաջինների համար կենդանի լինել նշանակում է զմղդմվել հուզակամի ոլորտ, ապա վերջինս կենդանությունը նախ և առաջ տեսնում է հասկացությունների միջոցով արտահայտված շարժման մեջ:

նացնելու կանոյան փիլիսոփայության հաջորդ կերպափոխությունները, հասնելով մարդկային գոյության այնպիսի ծածուկ ծալքերի, որոնց մեջ չխորացավ Յեգելը<sup>29</sup>:

### Անհատը, հասարակությունը, ունիվերսումը

Միայն ինըն իրեն վաճառելով է մարդ ստրկանում, և միայն նրամ է ծակատագիրը զնել համարձակվում, ով ինըն է իր զինը նշանակում և իրեն վաճառքի համում:

Ֆ. Ծլայերմախեր

Երկրորդ կերպափոխության հիմքը դրվեց արդեն Մենախոսություններում, որոնց առանցքը անհատականության պրոբլեմի հետագա մշակումն էր: Անհատականության վերաբերյալ Ըլայերմախերի ուսումնասիրությունները նպատակ ունեին նույնության սկզբունքի հետևողական ծավալումը և յուրահատուկ հիմնավորումը: «Վրոյո՞ք աշխարհն իր ամբողջության մեջ այլ բան է, քան նույնականի անհատականացումը», - գրում է նա Բրինկմանին<sup>30</sup>:

Միանույն ժամանակ Ըլայերմախերի երկը բազմաթիվ աղերսներով կապված էր Ֆիխտեի և ռոմանտիկների նմանօրինակ ուսմունքների հետ, կապված այն աստիճան, որ նրա հայացքները հաճախ նույնացվել են և շարունակում են նույնացվել թե՝ մեկի, թե՝ մյուսների տեսակետների հետ: Որոշ հետազոտողներ, գրկելով Ըլայերմախերին փիլիսոփայական ինքնուրույնությունից, նրան ուղղակի Ֆիխտեի կամ Ծելինգի հետևորդ են հայտարարել: Յեգելի կարծիքը Ըլայերմախերի ուսմունքի և ռոմանտիզմի կապի մասին մեզ արդեն հայտնի է: Նոյնիսկ հարցի այնպիսի նուրբ և շրջահայաց գիտակ, որպիսին է Պիամա Գայդենկոն, մանրակրկիտ և հետաքրքրական վերլուծության ենթարկելով անհատականության պրոբլեմի ընթանան յուրահատկությունները Ֆիխտեի և ռոմանտիկների ուսմունքներում, գործնականում հավասարության նշան է դրել ռոմանտիկների և Ըլայերմախերի միջև<sup>31</sup>:

<sup>29</sup> Անշուշտ իրավացի է Պ. Գայդենկոն, շնչտելով, որ հեգեյան փիլիսոփայությանը չի հաջողվել «վերաբեն» եվրոպական փիլիսոփայության ողջ հարստությունը: Տե՛ս «Говорят советские философы – участники конгресса (П. П. Гайденко)», «Вопросы философии», М., 1989, № 2, էջ 83:

<sup>30</sup> Ստցըրվում է ըստ J. Rachold, նշվ. աշխ., էջ 26:

<sup>31</sup> Տե՛ս և Պ. Պ. Գայդենկո, *Философия Фихте и современность*, գլ. I, § 1, Мысль, М., 1975:

Ստորև ես կաշխատեմ ցույց տալ, որ Շլայերնախերը, տեսական հիմք ընդունելով սուբյեկտի և օբյեկտի նույնության գաղափարը, մշակել է այնպիսի մի համադրական տեսակետ, որում որպես ընեղենը վերառված են Ֆիխտեի և ռոմանտիկմերի պատկերացումները անհատականության վերաբերյալ: Բայց մինչ այդ մի քանի խոսք ասենք Ֆիխտեի և ռոմանտիկմերի դիրքորոշումների մասին՝ հենվելով նույն Գայդենկոյի խորաթափանց վերլուծության վրա:

Յուհան Գոտլիբ Ֆիխտեն, որքան էլ որ դա անսպասելի թվա, որոշ հարցերում ավելի մոտ էր կանգնած Սպինոզային, քան իր անմիջական ուսուցչին՝ Կանտին<sup>32</sup>: Ինչպես Սպինոզան, այնպես էլ Ֆիխտեն ցանկանում էին իրենց ողջ համակարգը դուրս բերել մեկ սկզբունքից: Եթե Սպինոզայի համար իմացականորեն առաջնայինը օրյենտիվ անվերջության ինտուիցիան էր, ապա Ֆիխտեի համար ելակետայինը ես-ի սկզբունքն էր, որն անմիջական հավաստիության առունով նույնքան ինքնարավ էր և ակնհայտ, որքան և սահմոզան սուբստանցը: Դասկանալի է, որ Ֆիխտեն մեղադրում է Սպինոզային դոգմատիզմի մեջ (որքանով որ նրա փիլիսոփայությունը արտաքին աշխարհով է պայմանավորված և ոչ թե իր անկախությունը գիտակցող ես-ով), սակայն նա նաև ընդունում է, որ դոգմատիզմը և իդեալիզմը անկախ դիրքորոշումներ են, որոնց տեսական հերքումն անհնար է: Իդեալիզմի առավելությունը Ֆիխտեն, այդուհանդերձ, տեսնում է նրանում, որ միայն վերջինն կարող է ապահովել սուբյեկտի ազատությունը: Եվ այս վճռորոշ հարցում Ֆիխտեն Կանտից հեռու է գնում: Եթե Կանտը ստիպված էր սուբյեկտի ազատությունը սահմանափակել պրակտիկ (քարոյական) ոլորտով, իսկ պատճառահետևանքային անհրաժեշտ կապերի վրա հենված բնությունը դիտարկել որպես ֆենոմեն, տարրերակելով այն ինքնին իրի նոումնենալ աշխարհից, ապա Ֆիխտեն, փորձելով ծերբազատվել սուբյեկտի վրա դրված այդ սահմանափակություններից, սուբյեկտին օժտում է անվերջությամբ և իր ինքնագործունեության մեջ ոչ-ես-ը, այսինքն՝ աշխարհը, ստեղծելով կարողությամբ: Բացարձակ ես-ը, հանդես գալով որպես ունիվերսալ սկզբունք, իր անմիջական անգիտակցական ստեղծագործության ընթացքում ձևավորված աշխարհն օժտում էր համընդիանությամբ և անհրաժեշտությամբ:

Ֆիխտեի և ռոմանտիկմերի դիրքերի տարրերությունն այս հարցում հստակորեն ներկայացնելու համար հարկ է հիշել, որ գերմանական իդեալիզմի դասականը, ես ասելով անհատը չէ, որ նկատի ունի, այլ հավաքական մտածողության մի խորհրդանիշ, ունիվերսալ մի սուբյեկտ, որը հանդես է գալիս որպես կանույան «տրանսենդենտալ ապերցեպցիայի» ան-

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 26:

միջական ժառանգորդ և, վերջին հաշվով, հարում է «միաձույլ» սուբյեկտի կարտեզիական հարացույցին: Դեկարտի «*sunt cogitans*»-ը (մտածող գոյությունը) մարմնավորում է հեղինակի ես-ը, որը վերածում է մարդկության հավաքական ես-ի: Եթե նոր ժամանակի ռացիոնալիզմի հիմնադիրը այդ երկու մակարդակները դեռևս հստակորեն չեր տարբերակում, և նրանց միջև անցումներ էին հնարավոր, ապա Կանտի հարցադրումն արդեն միանշանակ է՝ «տրանսցենդենտալ ապերցեպցիան» Ծերկայանում է որպես հավաքական և միայն հավաքական գիտակցություն: Սակայն Ֆիխտեն, «տրանսցենդենտալ սուբյեկտը» ելակետ ընդունելով հանդերձ, նորից զրկում է այս «միաձուլությունից»: Բացարձակ ես-ի և առանձին անհատների հարաբերության հարցը նա գիտակցում և առաջադրում է որպես ինքնուրույն փիլիսոփայական խնդիր, որը հստակ լուծում է պահանջում:

Քննարկելով այդ խնդիրը իր իրավունքի փիլիսոփայության շրջանակներում, Ֆիխտեն պարզել է, որ անհատը չի կարող նույնացվել հանայնական ես-ի հետ արդեն իսկ այն պատճառով, որ յուրաքանչյուր անհատ եւ որոշարկում է միայն այլ ես-երի հետ ունեցած իր հարաբերության մեջ: Իսկ ու նշանակում է, որ «մարդ» հասկացությունը մտածելի է ոչ թե որպես նշանակի, այլ որպես սերի հասկացությունը<sup>33</sup>: Ֆիխտեն ուղղակի ստիպված է դիտել բացարձակ ես-ը որպես անհատ ես-երի փոխարժունելության արդյունք: Եվ սակայն, անվերապահորեն տարբերակելով անհատ և բացարձակ ես-ը, Ֆիխտեն ամենայն վճռականությամբ շեշտում է վերջինիս բարոյագիտական նշանակությունը, դիտելով այն որպես անհատ ես-երի գործունելությունը կարգավորող ընդհանուր սկզբունք: Նրա կարծիքով յուրաքանչյուր մարդ, իր անկրկնելի անհատականությամբ հանդերձ, ենթարկվում է բարոյական պիտոյության օրենքին, որի շնորհիվ առանձին մարդկանց բնորոշման գործընթացում կարևորվում է ոչ թե նրանց տարբերությունը, այլ ընդհանրությունը: Ընդունելով մարդկանց միմյանցից տարբեր լինելու հանգամանքը, Ֆիխտեն այն դիտում է որպես պարտադիր փաստական իրողություն, որից թեև անկրելի է խուսափել, որը, սակայն, չի կարելի նաև ինքնանպատակ դարձնել: Մարդկության վերջնական (միասնական) նպատակը տրոհվում է բազմաթիվ առանձին խնդիրների: յուրաքանչյուրն իր խնդիրն ունի, որը միայն ինքը կարող է իրականացնել: Եվ այնուամենայնիվ, գտնում է Ֆիխտեն, անհատականությունը տրվածություն է և չպետք է մարդու գիտակցական ինքնանպատակը դառնա<sup>34</sup>:

Այլ էին ռոմանտիկմերը: Ֆիխտեի օրինակով հօչակելով սուբյեկտի ինքնավարությունը, նրանք ավելի հեռուն գնացին, վերջինիս օժտելով նաև հանճարեղ կամայականությամբ (*Willkür*)՝ մի հանգամանք, որը հանգեցրեց անհատականության պաշտամունքի: Անկրկնելի անձնավորությու-

<sup>33</sup> Տե՛ս Պ. Պ. Գայդենկո, նշվ. աշխ., էջ 123:

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 169:

նը ռոմանտիզմում բացարձակ արժեք ծեղթ բերեց և դիտվեց որպես գերագույն նպատակ, որին պետք է ծգտի մարդը:

Ամհատական յուրահատկության նպատակավալաց օարգացման անհրաժեշտության մասին թեզը նաև Շլայերմախերի թեզն էր: Թվում է, որ վճռականորեն շեշտելով անհատականության ինքնարավ արժեքը, Շլայերմախերն այստեղ ուղղակիորեն հետևել է ռոմանտիկներին: Հենց այդ պարագան էլ պայմանավորել է Պ. Գայդենկոյի քննադատության ուղղվածությունը: Քննադատը մատնանշում է այն վտանգները, որոնց կարող է ենթակալինել ցանկացած մարդ սեփական անկրկնելիության նվաճումը ինքնանպատակ դարձնելու դեպքում: Այս կապակցությամբ Գայդենկոն վկայակոչում է Յ. Բ. Չեսթերթընի սրամիտ դիտողությունը մարդկային բնավորության որոշ գծերի վերաբերյալ՝ հատկություններ, որոնք իրենց կրողի կողմից գիտակցվելու դեպքում ինքնարացանան են ենթարկվում: Այսպես, նկատել է Չեսթերթընը, ինարավոր չէ հապատանալ համեստությամբ: Նույն ձևով, եզրակացնում է Գայդենկոն, չի կարելի հատուկ և գիտակցարար զարգացնել սեփական յուրահատկությունը, քանի որ ինքնատիպության հասնելու նպատակադրված ծիգերը այլասերում են այն՝ ոճը վերածվում է ոճավիրման, ձնը՝ նորածնության և այլն<sup>35</sup>:

Փորձառու հետազոտողն այս հարցում անշուշտ իրավացի է: Ոռմանտիկների եսթերիկական մտածելակերպն իսկապես ենթակա է եղել այդ վտանգին, որն ի դեպ գիտակցվել է ռոմանտիկական շարժման ինքնաանդրադարձման լնթացքում: Դրա վկայությունն է, օրինակ, Շայնրիխ ֆոն Ֆլայստի Խամաճիկների քատրոնի մասին դասական էսսեն՝ ռոմանտիզմի զարգացման ավելի ուշ շրջանին պատկանող մի գործ, որ գրվել է Ֆիխտեի և Շլայերմախերի բանավեճից մի քանի տարի անց (1810-ին): Ֆլայստը պնդում է, որ շարժուձևի բացարձակ անկաշկանդությունը հատուկ է միայն խամաճիկներին և աստվածներին, քանի որ առաջինները բացարձակապես զուրկ են գիտակցությունից, իսկ վերջիններն օժտված են անվերջ գիտակցությամբ: Այնինչ մարդկային եռթյանը հատուկ վերջավոր գիտակցությունը, կենտրոնանալով այս կամ այն տեղայնացված գործողության վրա, կաշկանդում է մարդուն և սահմանափակում նրա շարժումների անգիտակցական նրբագեղությունը<sup>36</sup>: Ուրեմն կան բնագավառներ, ուր գիտակցական գործողությունները դատապարտված են անհաջողության:

<sup>35</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 172:

<sup>36</sup> Տե՛ս Գ. ֆ. Կլեյստ, “О театре марионеток”, *Избранные. Драмы, новеллы, статьи*, Худож. литература, М., 1977, էջ 515-518:

Սակայն Շլայերնախերի ուշադրությունն այլ ոլորտների էր սեեռված: Անհատականության վերաբերյալ բանավեճում Ֆիխտեի և ոռմանտիկների գրաված դիրքորոշումները հավասարապես անընդունելի էին նրա համար: Եթե Ֆիխտեի մոտ անհատներն իրենց վերջնական նպատակը գտնում էին բացարձակ Ես-ի միջոցով առաջադրված բարոյագիտական նորմում (եզակին, վերջին հաշվով, հանգեցվում էր ընդհանուրին), ապա ոռմանտիկների անհատ Ես-երը, ստեղծագործ հանձարեղությամբ օժտվելով և իրենց սեփական աշխարհը ստեղծելու իրավունք ծեռք բերելով, ուրծանում էին բացարձակ Ես-ի աստիճան, գրավելով վերջինիս տեղը (ընդհանուրը հանգեցվում էր եզակիին): Երկու դեպքերում էլ խախտվում էր հավասարակշռությունը եզակիի ու ընդհանուրի միջև, որի հետևանքով ինչպես Ֆիխտեի, այնպես էլ ոռմանտիկների որդեգրած սուրյեկտները հորի հաճախեռություն (հաճահարթվածություն) էին ծեռք բերում: Ֆիխտեի վարդապետության առանցքը կազմող համընդհանուր-համասեռ Ես-ը դուրս էր մղում անհատական առանձնահատկությունները մասնավոր կյանքի ոլորտը՝ զրկելով դրանց համաճարդկային նշանակությունից և ինքնուրույն փիլիսոփայական ինչեղությունից: (Յետագայում այդ մոտեցումն իր տրամաբանական ավարտին կհասցնի Յեգելը)<sup>37</sup>:

Ոոմանտիկների եզակի-համասեռ ինքնիշխան Ես-ը, իր կամայականությունն իր համար օրենք կարգելով, անտեսում էր այն հանգամանքը, որ այլ «հանճարեղ» Ես-երի երկընտրական (ալտերնատիվ) աշխարհների raison d'être-ը նվազ հիմնավոր չէ, քան իր սեփականը: Ֆիշտ է, «աստվածակերպ» ոռմանտիկը, հեզնական հեռավորություն պահպանելով մարդկային ոգու ցանկացած կառույցի հանդեպ, լիակատար անվորդվությամբ կարող էր անցումներ կատարել երևակայական մեկ աշխարհից մյուսը (հերթականությամբ ստանձնելով, ասենք, Սոկրատնի, Կալիգորիայի կամ Քրիստոսի դերերը), սակայն աշխարհների երկխոսությունն այստեղ տեղի չէր ունենում. Նրանք փոխարինում էին միմյանց, բայց չին համադրվում: Անթիվ մենախոսությունները երկխոսության չին վերածվում: Սա էր պատճառը, որ «հանճարեղ անհատների» միմյանց հասկանալու պրոբլեմը (ավելի ֆիշտ՝ չհասկանալու իրո-

<sup>37</sup> Յեգելին որպես ֆիխտեյան այդ միտումի շարունակողը և ժառանգորդը դիտելով, չի կարելի մոռանալ, որ ինքը՝ Յեգելը, այդ հարցում Ֆիխտեի քննադասներից է եղել (տե՛ս G. Lukacs, Եշվ. աշխ., էջ 332-349): Եվ այնուամենայնիվ, Յեգելին նույնպես չի հաջողվել լիովին հաղթահարել ընդհանուր սկզբունքի այն վերացականությունը, որը հասուլ էր կանտ-ֆիխտեյան ավանդության:

դությունը) ողբերգական երանգ ստացավ ռոմանտիզմում և անլուծելի էր թվում: Ել ինչ հասկացում, եթե յուրաքանչյուր ես իր անկրկնելի աշխարհի միակ ինքնիշխանն է և միակ օրենսդիրը: Զարմանալի չէ, ուրեմն, որ ուշ ռոմանտիզմն արդեն ոչ միայն զրկեց օրյեկտը որևէ կայունությունից, այլև շատ շուտով հաճացեց էսքետիզմի այնպիսի մի տարբերակի, որը սպառնում էր հարաբերականացնել և քայլայել բարոյագիտական ամեն մի դիրքորոշում<sup>38</sup>: (Այդ միտումի *non plus ultra*-ն նից շեի վարդապետությունն էր դառնալու):

Ըստիանուրի և եզակիի ուռացացած բնենուրով ուրվագծված հենց այդ կախարդական շրջանից է, որ փորձում էր խույս տալ Շլայերնախերը՝ անհատականացված, հուզականացված, բայց և պաշտոնական եկեղեցու համակարգող հովանու ներքո գոյատևող շիտակ և հավասարակշռված հավատի այդ ջատագովը:

Անհատականության բուն շլայերնախերյան ընթացումը նույնակերպ մեկնելու համար անհրաժեշտ է շնչտել դրա էքզիստենցիալ բնույթը: Նպատակ ունենալով մարդու մեջ անկրկնելի անհատականությունը զարգացնելու պահանջից տեսականորեն բխող հետևանքների քննությունը, չի կարելի մոռանալ, որ ինքն իրեն նպատակալաց ձևավորող անհատականության իրական հանգունակը, հարացուցն ու նախակաղապարը ժամանակակիցներն ունեցել են հենց հանձինս իրեմ՝ ֆրիդրիխ Շանիել Էռնստ Շլայերնախերի:

Խվազես, ավելի քան տեսական ուսումնասիրություններով, այդ արտասովոր մարդն իր բարեկամներին և գործընկերներին անձնական բարեմասնություններով է զարմացրել: «Շլայերնախերը մի մարդ է, որում զարգացած է մարդը», - գրում է Ֆրիդրիխ Շլեգելը<sup>39</sup>: «Ես չգիտեմ՝ արդյո՞ք նա իր ժամանակի մեծագույն այրը է (Mann), բայց անկասկած է, որ նա մեծագույն մարդն է (Mensch)», - բացականչում է Բեթհեմն ֆոն Արնիմը<sup>40</sup>: Ինչու էլ գրալվելս լինելու Շլայերնախերը, նրան խորապես հատուկ է եղել սոկրատյան այն առաքինությունը, որը խոսքի և գործի, մտքի և կյանքի միասնությունն է կոչվում: «Միայն ինքն իրեն վաճառելով է մարդ ստրկանում, և միայն նրան է ծակատագիրը գնել համարձակվում, ով ինքն է իր գինը նշանակում և իրեն վաճառքի հանում»<sup>41</sup>:

<sup>38</sup>Տե՛ս Պ. Պ. Գայդենկո, *Трагедия эстетизма*, Искусство, М., 1970, էջ 130-153:

<sup>39</sup>Փ. Ռլեգել – Ա. Վ. Ռլեգելո (28.11.1977), Աշվ. աշխ., հ. 2, ս. 407.

<sup>40</sup>Սեցերվում է ըստ՝ Ս. Ֆրանկ, Աշխ., էջ XX:

<sup>41</sup>F. Schleiermacher, “Monologen”, in: ders., *Philosophische Schriften*, Union Verlag, B., S. 108.

Ծլայերմախերի ողջ կյանքը կարելի է տեղափորել իր բանաձևած փայլուն այս ասույթում: Արժե, ուրեմն, նշել, որ նույնիսկ վաղ շրջանի Ծլայերմախերին ռոնանտիկների հետ նույնացնելը նույնպիսի սխալ կլիներ, ինչպիսին Սոկրատեսին սովեստներից չտարրերելը:

Մտածողի անհատականության եքզիստենցիալ ուղղվածությունն ինքնին հավաստում է, որ «անձնական ներքին ինքնազարգացման և ինքնակրթման»<sup>42</sup> զգուումը թեև «ամբողջից կտրվելու և ներփակ անձնական կեցությամբ անթույլատրելիորեն, եսասիրաբար բավարարվելու»<sup>43</sup> վտանգ է պարունակում, այնուամենայնիվ, ի գորու է հաղթահարել բարոյական այդ դժվարությունը և նվաճել ավելի նշանակալից մտավոր մի տարածք, քան դա հաջողվել էր ռոնանտիկներին: Բնական է, որ Ծլայերմախեր-մարդու այդ կենսարարությը նաև հստակ տեսական արտահայտություն պետք է ստանար: Անհատականության պրոբլեմը անքակտելի կապի մեջ դնելով մի կողմից՝ հասարակության, մյուսից՝ անվերջության, ունիվերսումի գաղափարի հետ, Ծլայերմախերը դրան ինչպես հասարակական, այնպես էլ ընդհանուր մետաֆիզիկական բնույթ է վերագրում: Մարդկային հոգուն, ըստ նրա, երկու հակադիր միտում է հաստուկ՝ ինքն իրեն իր առանձնահատկության մեջ հաստատելը և «...ամբողջից միայնակ կտրվածության սահմանկեցուցիչ վախը»<sup>44</sup>:

Եզակիի և ընդհանուրի փոխվանման և փոխգողության երկինաստայի հարաբերությունը հաջողությամբ լուսաբանվում է Մենախոսություն-ների հետևյալ, արդեն հոչակավոր դարձած հատվածի օգնությամբ. «...ինձ համար պարզ դարձավ, որ յուրաքանչյուր մարդ պետք է յուրուվի ներկայացնի մարդկությունը նրա տարրերի յուրահատուկ միախառնման միջոցով. դրանով իսկ բոլոր եղանակներով կրացահայտվի և անվերջության լրիվության մեջ կիրականացվի այն ամենը, որ կարող է հորդալ նրա ընդերքից»<sup>45</sup>:

<sup>42</sup> Տե՛ս Ը. Փրանք, նշվ. աշխ., էջ XIV: Ավելորդ չէ նշել, որ «ինքնակրթություն» բառը այստեղ ոռուերեն «սամոօսպիտանե» բարի փոխարեն է օգտագործված: Նման պարագայում «ինքնադաստիհարակության» տարրերակը, ըստ իս, անընդունելի է, քանի որ պրտարին և չափազանց դատողական բնույթ ունի: Միևնույն ժամանակ հասկանալի է, որ խորը սոսկ մշակութային կրթության մասին չէ, այլ ինքնամշակման (հնմտ. կրթն. – մշակել – colo – cultus), նոյնիսկ ինքնակառուցման, որ գերմաներեն լավագույնս կարտահայտվեր «Selbstverständigung» հասկացությամբ (հնն. սոյն մենագրության մաս Դի «Կրթության գաղափարը» հաստվածի հետ, էջ 264-266):

<sup>43</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ XLVI:

<sup>44</sup> Փ. Շլեյերմախ, «Речи о религии», его же, *Речи о религии. Монологи*, с. 4.

<sup>45</sup> F. D. E. Schleiermacher, “Monologen. Eine Neuübersetzung”, in: ders., *Philosophische Schriften*, S. 80. Ոռուերեն թարգմանության մեջ («Речи о религии. Монологи», с.

Վերը մենք առիթ ենք ունեցել համոզվելու, որ այդ միտքը արտաք-նայես համատեղելի է նաև ֆիխտեի ուսմունքի հետ, որքանով որ վեր-ջինս ընդունում է էմպիրիկ Ես-Երի անխուսափելի ինքնատիպությունը և առանձին մարդկանց խնդիրների (բարոյական առաջադրանքների) տարրերությունը։ Երկու մտածողների միջև եղած հակամարտությունը ցցուն ծնով դրսակրվում է ներկայացված մեջերմանն անմիջապես նա-խորդող մի պարբերության մեջ, որով Շլայերմախերը մարդկային բազ-մազանության ոչ միայն փաստական տրվածությունը, այլև իրական անհրաժեշտությունն ու անխուսափելիությունն է շեշտում։ «Ինձ չէր բավարարում,- գրում է նա,- որ մարդկությունը դիտվում էր որպես տծն, անմշակ մի զանգված, ներքինից լիովին նույնական, որը միայն ար-տաքնապես, շիման և փոխհայման շնորհիվ, անցողիկ, թռուցիկ բներնույթներ է կազմում»<sup>46</sup>։

«Բազմապիսի և տարասեռ մարդկության գոյության էմպիրիկ փաս-տը ֆիխտեի ուսմունքում ներքին իհմնավորում չի ստացել», - գրում է Շլայերմախերը։ Ասենք, Ֆիխտեն այդպիսի իհմնավորման կարիք էլ չուներ, քանի որ, ինչպես իրավացիորեն նշել է Պ. Գայդենկոն, միայն բարոյականն էր մարդու մեջ բնորոշում որպես «ներքին», հետևաբար և եական, իսկ ամեն բնականը՝ արտաքին, ուրեմն և պատահական էր համարում»<sup>47</sup>։

Այս՝ մասնավոր թվացող տարածայնությունը ընդիանուր-փիլիխո-փայական խոր արմատներ ունի։ Տարակույս չկա, որ Ֆ. Շլայերմախե-րին և Յ. Գ. Ֆիխտեին հենց սկզբից միավորել է մի կարևոր միտում՝ եր-կուսն էլ յուրովի փորձել են հաղթահարել բարոյական ազատությունը բնական անհրաժեշտությունից տարանջատող այն սահմանագիծը, ո-րի առկայությունն արձանագրել և անխուսափելիությունը ազդարարել է Ի. Կանտը։ Բայց այս ճանապարհով ընթանալիս Շլայերմախերը մեկ վճռական քայլ ավել է կատարել։

Ֆիխտեն, տրանսցենդենտալ իդեալիզմի իր մոնիխստական համա-կարգը ստեղծելիս, ինքնին իրի և բներնույթի միջև եղած անդունդը վե-

334) «անվերջություն» (Unendlichkeit) բառը անհասկանալի պատճառով փոխարին-ված է «տարածություն և ժամանակ» արտահայտությամբ, որը զգալի ինաստային շեղ-նան է հանգեցնում, քանի որ «անվերջությունը» կարելի է մեկնաբանել ինչպես կրոնա-կամ, այնպես էլ տիեզերաբանակամ իմաստով, այնինչ «տարածությունը և ժամանակը» միանշանակորեն տիեզերաբանական ըմբռնում են պարտադրում։

<sup>46</sup> Նոյն տեղում։

<sup>47</sup> Տե ս Պ. Պ. Գայդենկո, *Философия Фихте и современность*, с. 166:

րառելով հանդերձ, այնուամենայնիվ, ոչ միայն պահպանել, այլև կարուրել և հնարավորին չափ ցցուն է դարձրել կանուխան ուսմունքի հատկանշական գերից մեկը՝ մարդու մեջ բնականի (գոյականի - Seiende) և բարոյականի (պիտոյականի - Sollende) հակադրությունը:

Ծայերմախերը, ուրիշ շատ հարցերում հետևելով Ֆիխտեին, այդ դրույթը կասկածի տակ է դրել հենց սկզբից ի վեր: Իր անհամաձայնությունն առաջին անգամ նա արտահայտել է 1800-ին «Աքենեում»-ում գետեղված ոչ մեծ մի գրախոսականում<sup>48</sup>, որտեղ, մասնավորապես, իր տարակուսանքն էր հայտնում այն «չափազանց մեծ պատրաստականության վերաբերյալ», որով Ֆիխտեի Մարդու կոչման առաջին գրքում «անհրաժեշտության համակարգը ձերբագատվում է արտաքին առարկաների ներգործությունից»<sup>49</sup>: Ավելի ուշ բարոյականի օբյեկտիվության և բնականության մասին իր պատկերացումները Ծայերմախերը ճշգրտել է 1825-ին ներկայացրած ակադեմիական ճառում, որը «Բնական և բարոյական օրենքների տարբերության մասին» վերնագրով հրապարակվել է «Պրուսական Արքայական ակադեմիայի տեղեկագրում»<sup>50</sup>:

Վերնագրում հիշատակված օրենքների գործողության ոլորտների՝ «բնության» և «բարքերի» (Sitten) տարածեառությունը հաղթահարելու նպատակով Ծայերմախերը հնարավոր է համարում «բարոյական օրենքը» փոխարինել «բնական օրենք» արտահայտությանք, վերջինիս տակ նկատի ունենալով պրակտիկ բանականության օրենքները և դրանք տարբերակելով բանականության տրամաբանական և այլ տեսական օրենքներից (logische oder anderwertig theoretische Vernunftgesetze): Այդպիսի մոտեցումը հնարավորություն է տալիս ելակետային արտահայտությունների հարաբերությունը հանգեցնել բնության և բանականության հակադրությանը, որն, ըստ մտածողի, բավականաշափ գործածական է և լրացուցիչ հիմնավորում չի պահանջում:

Ծայերմախերը հիշեցնում է, որ կանտ-ֆիխտեական բարոյաբանության հարացույցի շրջանակներում բնական և բարոյական օրենքները տարբեր կերպ են մեկնաբանվում՝ բնական օրենքը պետք է համ-

<sup>48</sup> Sté u Schleiermacher F., „Über Fichtes Bestimmung des Menschen.- Aus: Notizen (3 Band. 2 Stuck”, S. 283-336), in: *Athenaeum. Auswahl*, էջ 360-369:

<sup>49</sup> Նոյն տեղում, էջ 366:

<sup>50</sup> Sté u F. Schleiermacher, „Über den Unterschied zwischen Naturgesetz und Sittengesetz. Gelesen am 6. Januar 1825”, in: ders., *Philosophische Schriften*, էջ 302-319:

ընդհանուր պնդում պարունակի բնության մեջ և նրա միջոցով իրականում տեղի ունեցածի մասին, այն դեպքում, եթե բարոյական օրենքը պնդում է այն մասին, ինչը բանականության բնագավառում և նրա միջոցով պետք է (պիտոյ է) որ իրականանա: «Այնպես որ մի դեպքում օրենքը պնդում պետք է լինի գոյության (Sein) մասին՝ առանց այն բառիս բուն իմաստով պիտոյության (Sollen) հետ առնչելու, մյուսում՝ պնդում պիտոյության մասին՝ առանց այն գոյության հետ անմիջական համապատասխանության մեջ դնելու»<sup>51</sup>: Արձանագրելով, որ բնական և բարոյական օրենքները բոլորովին տարբեր իմաստներով են օրենք համարվում, Ըլայերնախերը, սակայն, գտնում է, որ ընդհանրությունը դրանց միջև ավելին է, քան սովորաբար կարծում են:

Կանտի և Ֆիխտեի պարզաբանումների համաձայն, հիշեցնում է մտածողը, «բարոյական օրենքի բացարձակ արժեքը (Gültigkeit) կայանում է նրանում, որ այն միշտ վավեր է, նույնիսկ եթե երբեք տեղի չի ունենում այն, ինչ որ օրենքը պահանջում է»<sup>52</sup>: Սակայն, շարունակում է Ըլայերնախերը, եթե ոչ մեկը ջանք չգործադրի օրենքին հետամուտ լինելու ուղղությամբ և խսպառ բացակայի այն, ինչ Կանտն անվանում էր «հարգանք առ օրենքը», ապա «բարոյական օրենքը ոչ թե օրենք կլինի, այլ միայն տեսական դրույթ, որի մասին կարելի է ասել, որ այն կարող էր օրենք լինել, եթե ընդունվեր»<sup>53</sup>: Օրենքի նկատմամբ այդ հարգանքն է, որ կազմավորում է օրենքը որպես այդախին և հանդես է գալիս որպես օրենքի իրականություն (Wirklichkeit des Gesetzes)<sup>54</sup>: Զաեւտք է ենթադրել՝ իբր բարոյական օրենքն ի սկզբանէ գոյություն ունի որպես միտք, որից հետո միայն բանականությունը նրա նկատմամբ հարգանք է դրսելում. դա միևնույն տրանսցենդենտալ ակտն է, որում բանականությունը պրակտիկ է դաշնում, դրսնորվելով որպես մղում, որի շնորհիվ էլ հենց գոյություն ունի օրենքը: «Օրենքն, այսպիսով, այնքանով է օրենք, որքանով որ այն նաև գոյություն է պահանջում, ոչ միայն պիտոյություն»<sup>55</sup>:

Նույնը, փոքր-ինչ այլ իմաստով, հաստատվում է նաև բնության օրենքների վերաբերյալ: Նաև կամալի է, որ բնության շրջանակներում

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 305:

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 310-311:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 311:

<sup>54</sup> Տե՛ս և նույն տեղում:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 312:

խոսք չի կարող լինել պիտոյության՝ որպես այս կամ այն օրինաչափության կատարման գիտակցական պահանջի մասին, քանի որ բնությունն ինքնին գուրկ է կամքից: Բայց այնքանով, որքանով որ այդ օրինաչափությունը պետք է իրականանա (մենք սպասում ենք նրա իրականացմանը), այստեղ նույնպես կապը գոյության և պիտոյության (պարտադրողականության) միջև ակնհայտ է:

Այսպիսով՝ գոյությունը և պիտոյությունն անբաժանելի են ցանկացած օրենքում. բնության և բանականության օրենքները իրարից սուկ այնքանով են տարբերվում, որքանով որ ընդհանրապես տարբերվում են միմյանցից բնությունը և բանականությունը, եզրակացնում է Շլայերմախերը<sup>56</sup>:

Այստեղ հակադրությունը Ֆիխտեին ոչ միայն բարոյագիտական, այլև ընդհանուր աշխարհայացքային բնույթ է ձեռք բերում: Սակայն, թեև Շլայերմախերը վիճարկում է կանտ-ֆիխտեյան բարոյագիտության միասմական հարացույցը (որքանով վերջինս պիտոյության և գոյության խստիվ տարբերակման վրա է խարսխված), նույնը չի կարելի ասել Կանտի նկատմամբ նրա վերաբերմունքի մասին: Շլայերմախերի այս դիրքորոշումը կանտյան դրամական յուրահատուկ մի վերիուշ է նշանավորում, քանի որ դրա շնորհիվ զգայական բազմազանության ոլորտը վերականգնում է իր գոյաբանական ինքնուրույնությունը մտածողության հանդեպ: Ռոմանտիզմի դպրոցն անցած մտածողը ոչ միայն չեղյալ է հայտարարում զգայականության ֆիխտեյան վերառումը, այլև ընդլայնում է զգայականի ազդեցության ոլորտը, տարածելով այն բարոյականության վրա. մի քանի, որ չէր արել Կանտը: Շլայերմախերը նշում է, որ ազատության կանտյան ընթրնումը կիրառելի է միայն տրանսցենդենտալ սուբյեկտի, այսինքն՝ որպես ամբողջություն դիտարկվող մարդկային ցեղի վերաբերյալ: Նենց այդքանով էլ այն բացարձակ է: Ինչ վերաբերում է առանձին անհատականությունների ազատությանը, ապա այն պայմանավորված է կանխադրված պատմական պարագաներով, որոնք հանդես են զալիս որպես նախկին սերունդների գործունեության արդյունքը<sup>57</sup>:

Այսպիսով՝ բարոյագիտությունը Շլայերմախերի ուսմունքում կրկնակի հիմնավորում է ստանում, հիշողության մեջ արթնացնելով Կանտի (իհար-

<sup>56</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 313:

<sup>57</sup> Տե՛ս J. Rachhold, նշվ. աշխ., էջ 17:

կե այլ առնչությանք օգտագործված) հռչակավոր ասույթը. «Մտքերն առանց բովանդակության դատարկ են, հայեցողություններն առանց հասկացությունների՝ կույր»<sup>58</sup>:

Զգայական բազմազանությանն իրեն հասանելիք կարգավիճակը վերադարձնելով՝ Շլայերնախերը կարծես թե ավելի է ընդգծում ռոման-տիզմի հետ ունեցած իր առնչությունների կասկածելիությունը: Եթե ծիշտ է հանրահայտ այն պնդումը, որն արևատյան ողջ փիլիսոփայությունը Պլատոնի ուսմունքի ծանոթագրություն է հայտարարում, ապա անհիմաստ չեն այն միտքը, որ նորագույն փիլիսոփայությունն իր զգալի չափով ոչ այլ ինչ է, քան ծանոթագրություններ Կանտի առաջին Քննադասության այն հռչակավոր պարագրաֆի, որին հեղինակը «Զուտ դատողական հասկացությունների սխեմատիզմի ճասին» վերնագիրն է տվել: Զգայական բազմազանության (եզակիի) և տեսական միասնության (ընդհանուրի) համադրության մեխանիզմի այս կամ այն մեկնարանության ընդունումն է, փաստորեն, որ պայմանավորել է հետկանության փիլիսոփայական ուսմունքների տարամիտումը տրանսցենդենտալականի շրջանակներում: Մերժելով զգայականը մտածողության մեջ տարրալու միտումը (ուղի, որով ֆիխտեի նախաձեռնությունից ի վեր շատերն են ընթացել կանույան ուսմունքի «անհետևողականությունը» հադրահարելու նպատակով)<sup>59</sup>, Շլայերնախերը, ստիպված, նորից զալիս կանգնում է քյոնիզուբերօգան իմաստունի կողմից կյանքի կոչված այդ սֆինքսի գաղտնիքի առջև: Եթե մենք չենք ցանկանում շարժվել միասնությունից դեպի բազմազանություն, ապա պետք է գնանք բազմազանությունից դեպի միասնություն. և հեմոց այստեղ է, որ իրեն զգացնել է տալիս ռոմանտիկական հարացույցը քայլայող Հսքետիզմի վտանգը:

Անշուշտ իրավացի է Պ. Գայդենկոն, նկատելով, որ ոչ սուբյեկտիվության տեսակետը, ոչ էլ իրոնիայի սկզբունքն ինքնին ռոմանտիկական մտայնության ջիղը չեն ներկայացնում: Էսքետիզմն էր այն յուրահատուկ բներկույթը, որի հետ միանալով՝ «...տրանսցենդենտալիզմը և

<sup>58</sup> Ի. Կանտ, Զուտ բանականության քննադասություն, էջ 93:

<sup>59</sup> Այդ մոտեցման ցայտուն օրինակներ են Գ. Վ. Ֆ. Շեգելի ողջ համակարգը և նորկանտականության մարդուրդյան դպրոցի զաղափարները: Այսպես, օրինակ, Պաուլ Նասորը պը գրել է. «...հայեցողությունն իմացության մեջ այլս չի մնում մտածողությանը հակադիր և հակառակ գործնին դերում. այն հենց մտածողություն է, քայլ ոչ թե սուկ օրենքի մտածողություն, այլ առարկայի լրիվ մտածողություն». Պ. Խարոր, «Կանտ և Մարքուրցկայ աշկոլ», *Խօսել սկզբանական գործառնություններ*, № 5, ԸՆԸ, 1913, ս. 108.

նրա միջոցով ըմբռնված իրոնիայի սկզբունքը ստեղծեցին աշխարհի այն յուրահատուկ ըմբռնումը և նրա նկատմամբ այն վերաբերմունքը, որը ռոմանտիկականի անվանումն է ստացել»<sup>60</sup>: Սակայն ի՞նչ է ներկայացնում իրենից էսթետիզմը, և ինչպես այն պետք է մեկնաբանվի այս կամ այն դեպքում:

Կանտյան փիլիսոփայության հետ փոքրիշատե առնված ամեն ոք նախապես գիտե, որ գիտելիքի այն բնագավառը, որը Կանտը «էսթետիկա» էր անվանում, քիչ կապ ունի բառիս ժամանակակից իմաստով ըմբռնված էսթետիկայի (գեղագիտության) հետ, իսկ այն, ինչն իսկապես կապ ունի, ոչ թե էսթետիկա է կոչվում, այլ «Դատողունակության քննադատություն»: Սակայն խորանուխ լինելով նյութի մեջ՝ ուշադիր հետազոտողը կարող է նկատել, որ Կանտը գեղարվեստական մտածողության պրոբլեմը չի սահմանափակել երրորդ քննադատության ներ շրջանակներով, այլ ընդհակառակը՝ որպես ստեղծագործական երևակայության պյուրլեմ՝ այն ուղղակիորեն դրել է իր վարդապետության հիմքում: Էսթետիկայի՝ որպես գգայական իմացության մասին գիտության բառումգարտենյան ըմբռնումը<sup>61</sup>, որը երևույթների մի լայն ոլորտ է ընդգրկում՝ գգայություններից մինչև գեղեցիկի գգացողություն, թեև հիմնովին սասանվել է Կանտի կողմից, սակայն չի վերացվել իսպառ և, դիալեկտիկորեն վերառված ձևով, շարունակում է իր գոյությունը տրանսցենդենտալ փիլիսոփայության ծածուկ շերտերում: Կանտյան ուսմունքի այդ քողարկված տեսանկյունը պայմանավորված է այն մեծ դերով, որ խաղում են նրանում սիսեմայի, երևակայության, տրանսցենդենտալ ապերցեպցիայի և նման այլ հասկացությունները: Եվ սակայն հատկանշական է, որ Կանտը այս պրոբլեմները քննարկելիս երբեք դրանք ուղղակիորեն չի կապել գեղագիտության հետ և, դրանով իսկ, խուսափել է իմացարանությունը գեղարվեստական մտածողությունից կախման մեջ դնելուց և «գեղեցիկը» «ծշմարիտի» համար չափանիշ դարձնելուց<sup>62</sup>: Նրա ուսմունքում օբյեկտիվորեն պարունակվող այդ հնարավորության իրականացնողը ռոմանտիկներն են եղել: Իզուր չէր ֆրիդրիխ Շլեգելը 1795-ի իր երկերից մեկում «էսթետիկական հեղափո-

<sup>60</sup> Պ. Պ. Գայդենկո, *Трагедия эстетизма*, с. 83.

<sup>61</sup> Տե՛ս Ա. Գ. Բայմգրեն, «Эстетика», *История эстетики. Памятники мировой эстетической мысли*, т. 2, Искусство, М., 1964, էջ 452:

<sup>62</sup> Պ. Պ. Գայդենկո, *Трагедия эстетизма*, с. 85-101: Ինքնին խոսում է նշված բաժնի վերնագիրը՝ «Кантовский эстетизм на цепочке».

խության» կոչ անում<sup>63</sup>: Վերջավոր-անկրկնելի մարդու՝ անսահման ու-նիվերսումին մերձենալու հիմնական ճանապարհը, ըստ ռոմանտիկների, երևակայությունն էր՝ ֆանտազիան: Վերջինս մեկնաբանվում էր որ-պես գեղարվեստական-գեղագիտական բներևույթ: Խորհրդապաշտականը և քանաստեղծականը հոմանիշներ էին դարձել<sup>64</sup>: Զարմանալի չէ, որ գեղարվեստական սկզբունքները ռոմանտիզմում, կտրելով-անցնելով բուն գեղարվեստի սահմանները, շատ ավելի լայն կիրառություն են ստանում, թափանցելով բնափիլխոփայության (Նովալիս), քաղաքականության (ուշ ֆ. Շլեգել) և այլ ոլորտներ:

Եզակիի և ընդհանուրի համադրման ընթացքում զգայական քազ-մազանությունը ելակետ դարձնելով՝ ռոմանտիկները նշակեցին նաև համապատասխան արտահայտչանիցոց՝ առանձին հատվածներից, պատահիկներից բաղկացած ազատ շարադրանք, ուր ամբողջականությունը հաստատվում է ոչ թե բացորոշ մշակված ավարտուն կառուցվածքի, այլ փոխկապակցվող, միմյանց լրացնող, հաճախ նաև հակառակող կտորների ներքին, անմիջականորեն ներկայացվող միասնության միջոցով: Այդպիսի ոճի դասական նմուշներ են Նովալիսի *Ծաղկափոշին*, Շլեգել եղբայրների, Նովալիսի, Շլայերմախերի *Պատարիկները*<sup>65</sup> և այլ ստեղծագործություններ: Իսկ այն մասին, որ այդ գրելաձևը սուկ «անձնական զարգացման և անձնական ընդունակությունների յուրահատկությանը»<sup>66</sup> չէ, որ պայմանավորված է, այլ գիտակցական դիրքորոշում է արտահայտում, վկայում է, օրինակ, Է. Թ. Ա. Շոֆմանի *Սուլո կատվի՝ կյանքի վերաբերյալ ունեցած հայացքները...* հայտնի վեպը<sup>67</sup>, որը լավագույն ցուցադրում է, թե ինչպես պատարհիկների համադրման հնարյ կարող է խստորեն կիրառվող մեթոդի մակարդակի բարձրացվել: Մտքերի միավորման նմանօրինակ ձևը կանոն անվանել է *modus aestheticus*՝ նշելով, որ վերջինս չունի ոչ մի այլ չափանիշ՝ քա-

<sup>63</sup> Տե՛ս Günzel K., *Romantikerschicksale*, Verlag der Nation, B., 1987, էջ 17:

<sup>64</sup> Տե՛ս Պ. Մ. Գանտովա, *Փիլոսոփիա հեմեցկո րոմանտիզմա*, Հայկա, Մ., 1987, էջ 269:

<sup>65</sup> Տե՛ս Athenaëum, B. I, I St., էջ 70-106 և B. I, II St., S. 179-322 կամ Athenaëum. Auswahl, էջ 9-33, 58-154:

<sup>66</sup> P. M. Գանտովա, *Փիլոսոփիա հեմեցկո րոմանտիզմա*, ս. 276.

<sup>67</sup> Ամբողջական վերնախրին է՝ *Սուլո կատվի կյանքի վերաբերյալ ունեցած հայացքները՝ կապելայստեր Ցոհաննեն Կրայսերի պատահական մակուլատուրային թերթիների վրա գրված հատվածական կենսագրության հետ մեկտեղ*. E. T. A. Hoffman, *Lebensansichten des Katers Murr nebst fragmentarischer Biographie des Kapellmeisters Johannes Kreisler in zufälligen Makulaturblättern*, Aufbau, B. u. W., 1985.

ցի «շարադրանքում միասնության զգացողությունից», և հատկանշական է արվեստի համար՝<sup>68</sup>:

Պատառիկների ազատ գործառման ընթացքում գեղեցիկի զգացողությունն իր միակ չափանիշը կարգած էսթետիզմը ոչ միայն մտածելակերպ և մերոդ, այլև կենսակերպ դարձավ ռոմանտիկների համար՝<sup>69</sup>, նրանց իրենց երկերի հակասություններից և «աններդաշնակությունից» առաջնորդելով դեպի սեփական ճակատագրերի աններդաշնակություն, ցուցումներ ու փլուզում՝<sup>70</sup>: Պատճառը պարզ էր: Եթե Ֆիլստեն, զգայական բազմազանությունն անտեսելով, յուրաքանչյուր մարդու էռթերունը հանգեցնում էր ընդհանուր սկզբունքին, ապա ռոմանտիկները ընդհանուրի, ունիվերսալի, Անվերջի իրենց կարուտը փորձում էին փարատել գեղարվեստական մտածողության մեջ ծևավորվող հատված-պատառիկների անընդհատ հերթափոխի միջոցով, և նրանց բացարձակ երևակայությունը իր ազատ ճախրանքների ընթացքում բազմաթիվ աշխարհ-պատառիկներ էր ստեղծում, չնույնացնելով՝ իրեն դրանցից և ոչ մեկի հետ: Արդյունքում ռոմանտիկի ես-ը՝ այդ աշխարհների միակ տերն ու տիրակալը, ինքն իր մեջ դատարկ էր մնում և անբովանդակ: Էսթետիզմը, անվերջ հնարավորություններ ընձեռող խաղը գերադասելով, հրաժարվում է վերջնական և վճռական ընտրությունից, որն ըստ էռթյան արդեն ոչ թե էսթետիկական, այլ էթիկական գործողություն էր լինելու:

Դեմք այստեղ էլ պարզորոշվում է վճռական տարրերությունը ռոմանտիկների և Ծլայերմախների միջև, որի դիրքորոշումը, իր բոլոր էսթետիկական երանգներով հանդերձ, էապես բարոյագիտական էր. «Միակ և ազատ որոշումն է մարդուն մարդ դարձնում,- գրում է մտածողը,- ով մեկ անգամ կարողացավ, ընդմիշտ մարդ կմնա, ով դադարում է այդպիսին լինելուց, երբեք չի էլ եղել»<sup>71</sup>: Դասկանալի է, որ անհատա-

<sup>68</sup> Տես Ի. Կանտ, *Критика способности суждения*, Соч., т. 5, Мысли, М., 1966, էջ 336:

<sup>69</sup> Այդ կապակցությամբ ուշադրություն է գուազում Կ. Գյունցելի՝ Նովայիսի ճակատագրի բնորոշմանը նվիրված ծևակերպումը. «Պատառիկ որպես ռոմանտիկական կենսածն» (Das Fragment als romantische Lebensform), տես և Günzel K., *Romantikerschicksale*, էջ 107:

<sup>70</sup> Տես և Պ. Պ. Գայդենկո, *Трагедия эстетизма*, էջ 130-153:

<sup>71</sup> F. Schleiermacher, “Monologen”, in: ders., *Philosophische Schriften*, S. 79. Այս մուտքամա ակունքները նույսաեն կամտի ուսմներում են ի հայտ զայն. «Մարդը, որն իր մտածելակերպը որպես բնավորություն է գիտակցում,- գրում է քյոնիզուրեզյան ինաստունը, բնությունից չէ, որ ունի այդ բնավորությունը, այլ յուրաքանչյուր անգամ պետք է այն ծեռքբերովի ունենա: Կարելի է նոյնիսկ ենթադրել, որ բնավորության հաստա-

կանության ինքնազարգացման այսպիսի ըմբռնունը չպետք է հանգեցնի ոճավորնան, ծևամոլության և, վերջին հաշվով, սուբյեկտիվիզմի, այլ ընդհակառակը, պետք է անձնավորությանը հնարավորություն տա գտնելու այն միակ ուղին, որը դեայի իր իսկական ես-ն է առաջնորդում, թույլ է տալիս «ինքն իրեն հասնել» (zu sich selbst kommen):

Վերջին արտահայտությունը պատկանում է Յերման Յեսսեին, որն ավելի քան հարյուր տարվա ժամանակային հեռավորությունից, այլ հոգևոր իրադրության պայմաններում, յուրովի շարունակել է ռոմանտիզմի բողոքական մեկնաբանությունից սերող այն ավանդույթը, որի սկզբնավորողն էր Շլայերմախերը: «Այստեղ միմյանց օգնել հնարավոր չե:- ասում է գրողի հերոսներից մեկը:- Դու պետք է ինք քեզ զննես և հետո անես այն, ինչ որ իսկապես բխում է քո եռթյունից: Ոչ մի այլ բան գոյություն չունի»<sup>72</sup>: Խոսքն, ուրեմն, ուրիշներից ինչ զնով ասես տարբերվելու մարմաշի մասին չէ, այլ սեփական անկրկնելի էությանը հետամուտ լինելու, սեփական ճանապարհով ընթանալու: «Զկա՝ չկա՝, չկա՝ այլ պարտը արթնացած մարդու համար, քան այս միակը՝ ինքն իրեն փնտրել, ինքն իրենում հաստատվել, սեփական ուղին քայլ առ քայլ շոշափել-գտնել, ուր էլ որ այն առաջնորդելիս լինի»<sup>73</sup>:

Այս անսպասելի շեղունը մեր քննության անմիջական նյութից օգնում է մի չափազանց կարևոր եզրակացության հանգել՝ անկրկնելիությունը միայն հարաբերական կամ համեմատական բներևութ չէ. մարդու անկրկնելի է ոչ թե ուրիշներին չնմանվելու, այլ իր ինքնությունը պահպանելու և զարգացմելու շնորհիկ: Այս դրույթը հաստատվում է նորագույն փիլիսոփայության այնպիսի հայտնի ներկայացուցիչ կողմից, որպիսին է Յուրգեն Շաբերմասը: Շաբերմասն առաջարկել է «անհատականություն» եզրի իմաստը բացատրել սուբյեկտի ինքնության

տունը, յուրահատուկ մի վերածնողի հանգույն, մասն է կազմում ինքն իրեն տրպած հանդիսավոր մի ուխտի և աննոռանալի է դարձնում նրա համար այդ իրադարձությունը և այն ակնթարթը. Եթո որ, կարծեն մի նոր դարաշրջան ենթադրելով, նրանում իրականացնել է այդ փոփոխությունը», տես ս. Կահ, *Coy.*, թ. 6, էջ 543:

<sup>72</sup> H. Hesse, *Demian*, Suhrkamp, Ffm., 1974, S. 116.

<sup>73</sup> Նույն տեղում, էջ 126: Խոսքն ուրեմն ոչ թե հնարելու, երևակայելու մասին է, այլ պեղելու: Յատկանշական է, ի դեպ, որ Շլայերմախերը, ի տարբերություն Կամտի և Ֆիլստեի, ցանկանում է ոչ թե պոստուլավորել կամ կառուցել (*konstruiieren*), այլ նկարագրել իր բարյագախությունը: Տե՛ս ս. J. Rachold, Նշվ. աշխ., էջ 29: Այժ մասին ստորև ապելի մանրամասն է խոսվելու, հսկ առայժմ այդ դրույթը լուսաբանենք Յեսսեի հետևյալ մտքի միջոցով. «Մենք կարող ենք մինյանց հասկանալ (verstehen), սակայն մեկնել (deuten) կարող է միայն յուրաքանչյուրն ինքն իրեն» (H. Hesse, *Demian*, S. 8):

հղացքին դիմելու միջոցով, որում սուբյեկտը ներկայանում և, վերջին հաշվով, ինքնահաստատվում է ուրիշների հանդեպ՝ որպես անկասկած և անփոխարինելի անձնավորություն: «Անձնավորության ինքնությունակերտ ինքնընթառության ընդհանրապես չունի մկարագրական ինաստ՝ այն երաշխիքի հմաստ ունի. և դրա նշանակությունը հասցեատերը լիովին հասկանում է, իենց որ տեղեկանում է, որ մյուսը երաշխավորում է իր-ինքը-լինելու-ունակությունը»<sup>74</sup>:

Անհատականության անկրկնելիության ներքին, «բացարձակ» բնույթի արձանագրությունը ոչ մի դեպքում չի նշանակում, որ մարդու ինքնությունը կարող է որոշարկվել այլ մարդկանց հետ ունեցած հարաբերություններից, այդ թվում նաև՝ հմանմատություններից դուրս, «հասարակությունից անկախ»: Կասկած չի հարուցում, որ «ինքնությունն այդպիսի պրակտիկ ինքնահարաբերնան մեջ հենվում է նույնականության իր հավակնությունների ինտերսությեկտիվ ճանաչման վրա»<sup>75</sup>:

Ժամանակին Ֆիլստեն, ընթանելով այդ ճշմարտությունը, ստիպված էր տրանսցենդենտալ սուբյեկտի կողքին ընդունել նաև ենպիրիկ սուբյեկտների բազմությունը, փորձելով «օտար ես-ի» պրոբլեմը լուծել իրավունքի փիլիսոփայության շրջանակներում: Սակայն ինտերսությեկտիվության ընդունումը Ֆիլստեի ուսմունքում որոշակի նեգատիվ երանգ ուներ, քանի որ այլ սուբյեկտների առկայությունը դիտվում էր նախ և առաջ որպես սուբյեկտի սեփական ազատությունը սահմանափակող գործոն՝, որը ստիպում է վերջինիս որոշարկել իր ես-ը վերջավոր ոլորտի շրջանակներում: Ազատ և բանական սուբյեկտների փոխգործունեությունը Ֆիլստեն նակարերում էր բացարձակ տրանսցենդենտալ սուբյեկտից նրա հավերժության և անվերջության սահմանափակման միջոցով: Անհատականությունն ինքնին սահմանափակում է նշանակում. այն բնորոշվում է տարրերության միջոցով՝ «ուրիշ անհատականությունն այն է, ինչը որ իմ անհատականությունը չէ»<sup>76</sup>: Ծլայերմաները ոչ միայն չեր ժխտում այդպիսի սահմանափակման անհրաժեշ-

<sup>74</sup> J. Habermas, “Individuierung durch Vergesellschaftung. Zu Georg Herbert Meads Theorie der Subjektivität”, in: ders.: *Nachmetaphysisches Denken*, Suhrkamp, Ffm., 1988, S. 208.

<sup>75</sup> Ио. Хабермас, “Понятие индивидуальности”, “Вопросы философии”, № 2, М., 1989, с. 39.

<sup>76</sup> Ст. и И. Гихте, *Назначение человека*, СПб, 1906, с. 81:

<sup>77</sup> Ст. и П. П. Гайденко, *Философия Фихте и современность*, кг 134:

տությունը, այլև կարծես թե հաստատում էր այն<sup>78</sup>: Բայց նա նաև նշում էր, որ յուրաքանչյուր մարդու համար ինքնասահմանափակման չափն ու սահմանը անհայտ են մնում, քանի որ ոչ ոք ի վիճակի չէ նախապես պեղել իր եռթյան ողջ բովանդակությունը և մարգարեաբար գնահատել իր ծածկյալ հնարավորությունների գագարնակետը<sup>79</sup>: «Յուրաքանչյուրի կյանքում կա մի ակնթարթ,- գրում է նա «Կրոնի մասին ճառերում», - երբ... մարդ կարծես թե վեր է խոյանում ինքն իրենից և բարձրացվում գերազույն գագարն այն ամենի, ինչ ի վիճակի է երբէ լիմելու: Այս ակնթարթի համար էր նա ստեղծված, նրանում նա հասավ իր կոչմանը, և դրանից հետո սպառված կենսական ուժը նորից անկում է ապրում»<sup>80</sup>:

Խոսքն, ուրեմն, այդ գագարն առաջնորդող ուղու մասին էր լինելու, ընդ որում այնպիսի մի ուղու, որը հնարավորություն տար խուսափել մի կողմից՝ մերկապարանոց ունիվերսալիզմի Սրիլեհց, մյուսից՝ ռելատիվիստական էսթետիզմի Քարիբրեհց: Այսինքն՝ «սիսեմատիկ սինթեզի» կանուխան պրոբլեմը պետք է լուծվեր գգայականության սկզբունքորեն նոր մեկնարանության միջոցով:

Մենք իիշում ենք, որ գգայականը Ըլայերմախների համար չէր սահմանափակվում ոչ էմպիրիկ-բնականի, ոչ էլ հուզական-անհատականի ոլորտով: Այն չէր սահմանափակվում նաև գեղագիտական-գեղարվեստականով, քանի որ անվերջի հայեցողությունը նրա հղացքում պահպանում էր գգայական երանգավորումը, իսկ «խսկական կրոնը» սահմանվում էր որպես «անվերջի գգացողություն և ծաշակ»<sup>81</sup>: Յամահավաք-աստվածային ունիվերսումի և անկրկնելի մարդկային անհատականության փոխաբանացման հուզական վերապրումը Ըլայերմախերաստվածաբանի վարդապետության առանցքն է կազմում: Որպես այդ հարաբերության բանաստեղծական հանգունակ՝ մերկայանում են Ռայներ Մարիա Ռիլեկի հետևյալ տողերը.

*Դու Ամենայնն ես, ես՝ Միայնը,  
մեկ՝ հնազանդ, մեկ՝ ընդպատ:*

<sup>78</sup> Ավելին նա խորաբափանցորեն նշում է, որ անհատի ազատությունը, ի տարբերություն հավաքական սուբյեկտի ազատության, պայմանավորված է նախորդող մարդկանց գրունելության արդյունքներով:

<sup>79</sup> Տե՛ս Schleiermacher F., “Monologen”, in: ders., *Philosophische Schriften*, էջ 81:

<sup>80</sup> Φ. Ռլեյներմախեր, “Речи о религии”, его же, *Речи о религии. Монологи*, с. 81.

<sup>81</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 39:

Ես չե՞մ, արդյոք, այն Ընդհամայնը,  
այն Ամենայնը, որի ծայնը  
ողբահառաչ – Մինդ ես լսում<sup>82</sup>:

Մարդու և անվերջության անմիջական կապը Ըլայերմախերը խիստ յուրահատուկ է ըմբռնում: Նա հասկանում է, որ քանի մարդու հայացքը լոկ ընդհանուրին է ուղղված, նրա ինքնատիպությունը միայն բացաման մեջ կարող է դրսկորվել: Ընդհանուրը որպես այդպիսին գննելը անարդյունավետ և անորոշ զբաղմունք է. իր սեփական ուղղությունը որոշելու համար մարդ պետք է հազարավոր հոգևոր ուղղություններ քննի<sup>83</sup>: Բայց այդ քննության իրականացումը Ըլայերմախերն, ի տարբերություն ռոմանտիկմերի, ոչ թե անհատական գեղագիտական ֆանտազիայի ազատ թոշքներում, այլ մարդկանց փոխադարձ շիման մեջ է տեսնում: Դա բնական է նրա համար, քանի որ այդ շիմումն, ըստ Ըլայերմախերի, բխում է ոչ միայն մարդու, այլև կրոնի բնույթից<sup>84</sup>: Տիեզերքի ունիվերսալ ազրեցությունը մարդու մեջ ուրիշմերի հետ հաղորդակցվելու մղում է առաջացնում, քանի որ նարդ հստակորեն գիտակցում է, որ ի վիճակի չէ ճանաչելու տիեզերական անբողջը՝ միայն ինքն իրենից ելնելով<sup>85</sup>: «Այդպես կազմակերպվում է փոխադարձ շիմում՝ խոսելը և ուրիշի խոսքը լսելը հավասարապես անհրաժեշտ են յուրաքանչյուրին»<sup>86</sup>: «Իրեն մյուս բոլոր մարդկանց հետ միացնող հանրությունը (Gemeinschaft) մարդ իր կյանքի յուրաքանչյուր ակնթարթում ընկալուն է որպես սեփական ուժի լրացում»<sup>87</sup>:

Գեղարվեստական պատարիկների փոխսպործունեությունից Ըլայերմախերը անցնում է անկրկնելի անձնավորությունների իրական փոխգործունեությանը, որը նրան հանգեցնում է սուրբեկտի սկզբունքորեն նոր մեկնաբանության: Եթե կանոյան տրանսցենդենտալ սուրբեկտը

<sup>82</sup> Bist du denn Alles, - ich der Eine / der sich ergiebt und sich empört? / Bin ich denn nicht das Allgemeine, / Bin ich nicht Alles, wenn ich weine, / Und du der Eine, der es hört. Տիեզերական, աստվածային միամնությունը նշանակող «der Eine» արտահայտությունը, որը մեզանում դեռ չի գտել իր փիլիսոփայական համարժեքը (թեև դրա անհրաժշտությունը զգացվում է, օրինակ, «Պարմենիդեսի տեքստերին անդրադառնալիս», հնարավոր են համարել թարգմանել «Մին» բառով, նկատի ունենալով թունանյանի քայլակներով ստեղծված բանաստեղծական ավանդույթը):

<sup>83</sup> Տե՛ս F. Schleiermacher, “Monologen”, in: ders., *Philosophische Schriften*, էջ 81:

<sup>84</sup> Տե՛ս Փ. Ռլեյերմախեր, “Речи о религии”, его же, Речи о религии. Монологи, էջ 139:

<sup>85</sup> Տե՛ս Անույն տեղում, էջ 140:

<sup>86</sup> Անույն տեղում, էջ 141:

<sup>87</sup> Տե՛ս F. Schleiermacher, “Monologen”, in: ders., *Philosophische Schriften*, էջ 92:

հանդես էր գալիս որպես համայնական մտածողությունը ներկայացնող միջինացված և համասեռ մի կազմավորում, իսկ Ֆիխտեն, առաջին անգամ տեսականորեն ընդունելով բացարձակ սուբյեկտի ներքին տարրերակման անխուսափելիությունը և նույնիսկ հարց դնելով առանձին անհատական ես-երի փոխագործունեության սկզբունքների մասին, խնդիրն, այնուամենայնիվ, ծայրամասային համարեց, ապա Ըլայերմախերը կարողացավ ցույց տալ, որ տրասցենդենտալ սուբյեկտը ոչինչ այլ բան չէ, քան հաղորդակցվող անկրկնելի անհատականությունների ամրողական համակարգ: Ենոց այդ արդյունքն էլ պետք է զնահատել որպես կանույան ուսմունքի Ըլայերմախերի կողմից իրականացված երկրորդ կերպափոխություն, որը զգայականի՝ որպես մետաֆիզիկական սկզբունքի ներքին տարրորոշման և միջնորդավորվածության մի նոր մակարդակ է ապահովում:

### **Եթիկական կառուցավորումը և հասկացումը**

Դասկանալ նշանակում է մտածել և խոսել:

Ֆ. Ըլայերմախեր

Վերը ներկայացված շրջադարձի զուգահեռ կարելի է գտնել Ֆոյերբախից դեպի Մարքս, զգայական մարդուց դեպի հասարակական պրակտիկա տանող ճանապարհին<sup>88</sup>: Թեև Ըլայերմախերի մեկնակետն ուրիշ էր և բոլորովին այլ հոգևոր տարածքներ էր առաջնորդում, նրա և Մարքսի ուսմունքների միջև կարելի է արդյունավետ զուգահեռներ անցկացնել: Դրանցից մենք այդ երկու՝ խիստ տարրեր մտածողների մտքի հակասապեկույատիվ բնույթն է: Եթե պրակտիկայի փիլիսոփայության իիմնադրի առնչությամբ այդ բնորոշումը պետք է որ բնական թվա, ապա եկեղեցու նշանավոր այլերից մեկի, աստվածաբան-իդեալիստի նկատմամբ կիրապելու դեպքում այն կարող է տարակուսանք առաջացնել: Այնինչ դա մի հրողություն է, որ շլայերմախերյան մտածելակերպի առանցքն է կազմում:

<sup>88</sup> «Զգայականի» ֆոյերբախյան ըմբռնման և Մարքսի մշակած «պրակտիկայի» հասկացության որոշ առնչությունների մասին տես ս. А. В. Восканян, “Практически-духовная природа философского знания и аргументация в философии”, в кн.: Г. А. Брутян, И. С. Нарский (отв. ред.), *Философские проблемы аргументации*, Изд. АН Арм. ССР, Еր., 1986, с. 124-128:

Ընդունելով, որ ունիվերսումին հասնելու միակ ուղին՝ սեփական անձնավորության անսահման զարգացումը, ինարավոր չէ առանց մյուս մարդկանց հետ շփնան և փոխգործունեության, Շլայերմախսերը դրանով իսկ զերծ է մնում ես-ի դերի ուռճացումից: Նա չի օժտում այն ոգետեսության խորհրդավոր կարողությամբ կամ աստվածային «աշխարհաստեղծ» գործառույթներով, այլ ցույց է տալիս, թե ինչպես անհատը, հյուսելով իր ծայնը համայնական բազմածայնությանը, վերընթաց է կատարում դեպի ունիվերսումի ծանաչողությունը. Նման պարագայում աստված ինքը ներկայանում է որպես անկրկնելի անհատների փոխշփումների հայելում արտացոլվող հոգևոր բովանդակություն, ուրեմն և, որոշակի հնաստով, որպես մարդու ստեղծագործություն: Բայց ոչ այն տարածված փոխարերական իմաստով, որով ենթադրվում է, որ մարդը բարոյական կամ այլնայլ նպատակներով հորինել է աստծուն, գիտակցարար կամ անգիտակցարար օտարելով իր սեփական էլությունը և նրան ինքնուրույն գոյություն վերագրելով, այլ այն ուղղակի իմաստով, որ աստված չի կարող տրված լինել մարդուն այլ կերպ, քան համայնական հոգևոր կյանքի միջոցով<sup>89</sup>: Աստված, ըստ Շլայերմախսերի, այդ կյանքի ծնունդը չէ իհարկե. ընդհակառակը, վերջինս է օրյեկտիվ ոգու դրսնորումը: Սակայն անկրկնելի անձնավորությունների հոգևոր փոխգործունեության հիման վրա ծավալվող համայնական կյանքից դուրս աստծո մասին խոսելը ինքնին ավելորդ է: Այդպիսի խոսակցությունը վերածվում է նտացածին վերացականության, որը դատարկ է և անբովանդակ: Ուրեմն, ոչ միայն ես-ն է զարգանում աստվածանաշողության ընթացքում, այլև աստծո հոգևոր բովանդակությունն է բազմապատկիւմ ես-ի ներքին ածի շնորհիվ: Այսպես և միայն այսպես կարելի է իմաստավորել սույն բաժնի բնաբանը դարձած ռիլկեյան խտացումը.

...հոգուս բերքի հասունացմամբ

Արքայությունն է հասնում:

Շլայերմախսերը տեսական մտքի շատ բնագավառներում է նշանակալից հաջողությունների հասել: Սակայն ամենաէականը նրա վարդապետությունը զնահատելու համար այն զարմանալի ներդաշնակությունն է, որով նա քննում է անհատի, հասարակության և ունիվերսումի փոխհարաբերությունը, չուռճացնելով և միևնույն ժամանակ չկորցնե-

<sup>89</sup> Քիշեցնեմ, որ հայերեն «եկեղեցի» բառը ծագում է հունարեն «έκκλησία»-ից, որ «ժողով» է նշանակում: Դմնտ. ոռւսերեն «սօδօր»-ի հետ:

լով այդ բաղկացուցիչներից և ոչ մեկը: Նրա մտածելակերպն, այս առումով, եզակի է իր ժամանակի համար: Պատահական չէ, ուրեմն, որ կրոնաբանական հարացույցը Շլայերմախերը կերպափոխում է հասարակագիտականի, իսկ վերջինիս զարգացմանը շեշտված բարոյագիտական լիցը է հաղորդում:


Առաջազն 1804-ից՝ Շալեում դասախոսական գործունեությունն սկսելուց ի վեր, Շլայերմախերը հանդես է գալիս որպես օբյեկտիվ իդեալիստ: Ռոմանտիկական մտածողության վերառող հաղթարման ընթացքում հակվելով ռոմանտիզմի ընբօստ ոգու փայլուն տեսարան և սրափի համակարգիչ Ֆրիդրիխ Շելինգի ուսմունքին (*Մենախոսությունների* հեղինակն արդեն կարող է շելինգական համարվել), մտածողը կանգ չի առնում այդտեղ և ձեռնամուխ է լինում սեփական համակարգի մշակմանը: Իր պաշտելի Սայմոնզային հետևելով, Շլայերմախերն այդ համակարգը «Էթիկա» է անվանում և դրան ավելի քան լայն մեկնաբանություն է տալիս<sup>90</sup>: Իր մշակած ընդհանուր սկզբունքների առաջին իսկ ամբողջական շարադրանքում՝ Էթիկայի ուրվագիծում, Շլայերմախերը բնորոշում է էթիկան որպես գիտություն պատմության մասին, որը, ինչպես իմքն է անմիջապես պարզաբանում, ոչ այլ ինչ է, քան «մտածողությունը որպես երևույթ» (Intelligenz als Erscheinung)<sup>91</sup>:

Intelligenz ասելով, Շլայերմախերը նկատի ունի անանձնական, ունիվերսալ մտածողությունը, իդեալ: Պատմությունը սրա դրսևորման ծնն է: Այս դիրքորոշումն ընդհանուր է օբյեկտիվ իդեալիզմի բոլոր ներկայացուցիչների համար և սկզբունքորեն չի տարբերվում Շելինգի կամ Շեգելի տեսակետներից: Հետևելով Արմին Դիմերի սիսմային, այն ամենաընդիհանուր ծնով կարող է ներկայացվել հետևյալ կերպ<sup>92</sup>.

<sup>90</sup> Նշեմ, որ միայն երկարատև տատանումներից հետո որոշեցի հրաժարվել ձեռագրում նախապես օգտագործված «բարյոյագիտություն» եղից և մերադառնալ օտար «Էթիկային»: Պատճառն այն է, որ Վերջինն զուրկ է հայերենի «տեսաբանող» երանցից և բարքերին վերաբերվող ուսունքի տպավորություն չի բռնում, որն անբույյասրեկ կիենք, քանի որ Շլայերմախերի խոսքը շատ ավելի համապարփակ և, որ կարևոր է, «օբյեկտիվ» կազմավորման մասին է, որի կազմորոշ բաղադրիչը կրկնակի հաղորդվածությունն է կազմ աստվածայինի հետ և հաղորդակցությունը մարդկանց միջև:

<sup>91</sup> F. Schleiermacher, “Brouillon zur Ethik”, in: ders., *Philosophische Schriften*, S. 127. Այստեղ պետք է նկատի ունեմալ գերմաներեն «Erscheinung»-ի յուրահատկությունը՝ խոսքը ոչ թե «ինչ-որ երևույթի», «Փենոմենի» մասին է, այլ «երևացողի», «երևան եկողի»:

<sup>92</sup> Տե՛ս A. Diemer, Elementarkurs Philosophie: Hermeneutik, էջ 52:



Սակայն խնդիրն այն է, թե ինչպես է Ծայերմախերը պատկերացնում ունիվերսալ մտածողության և կոնկրետ պատճական իրադարձությունների փոխհարաբերման մեխանիզմը։ Այստեղ էլ պետք է փնտրել նրա աշխարհայացքի յուրահատկությունը։

Ծայերմախեր-հոգևորականը իդեայի համար բնութագրական է համարում նախ և առաջ ամբողջականությունը և եթիկական երանգավորումը։ Մյուս առանձնահատկությունը, որը ոչ բացորոշ ծնով առկա է մտածողի ուսմունքուն, հոգևորի պմևմատիկական ընթացումն է, որի ակունքներն, ըստ երևույթին, խորհրդապաշտական պանթեիզմը և ռոմանտիկական էսթետիզմն են։ Վերջինս, բացարձակ մտածողության էսթետիկական երանգ հաղորդելով, մերձեցնում է Ծայերմախերին կյանքի փիլիսոփայության հիմնադիրների հետ<sup>93</sup>։ Այս առումով պատահական չէ կյանքի հայեցղությունը եւնելու նրա կոչը<sup>94</sup>։

Բարձրագույն բարիբն, ըստ Ծայերմախերի իդեայի ամբողջականության (Totalität) հաստատումն է, որն իրականացվում է լիակատար հոգևորման (vollständige Beseeelung) միջոցով։ Կյանքն ամենուր դրսնորվում է տարբեր գործառույթներով, որոնք թեև հակադիր են, սակայն նրանցից ոչ մեկը հասկանալի չէ ինքնին, այլ միայն փոխադարձաբար։ Որքան բարձր է զարգացման աստիճանը, այնքան ամրողական է գոյը (Dasein), և ազատ է ընդհանրությունը (Gemeinschaft)։ Ավարտում ընդհանրության մեջ բոլոր բնական ուժերը միավորվում են մեկ կենտրոնի շուրջը։ Ընդհանրությունը հանդես է գալիս որպես «ներառելու» (In-sich-Aufnehmen) և «արտաքինություն» (Aus-sich-Hervorbringen) երկակի գործընթաց<sup>95</sup>։ Ցածրագույն աստիճաններում առաջինը միայն օրգանական միավորում է, երկրորդը՝ անօրգանական մնացուկ, նաև վածք։ Ավելի բարձր աստիճաններում առաջինը վերաբում է «ընկալման», երկրորդը՝ «սերելուն» (Erzeugung)։ Բանական կյանքում ներառելը իմացությունն է, «ըմբռնումը» (Einsehen), արտաքինությունը՝ «պատկերումը», ներկայացումը (Darstellen)։ Ընդունման և պատկերման այս փոխադարձ անցումը հանդես է գալիս որպես կյանքի «զար-

<sup>93</sup> Քննու. W. Dilthey, “Die Jugendgeschichte Hegels”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. IV, Vandenhoeck & Ruprecht, Leipzig und Berlin, 1921 և տես ծանոթագրություն 86-ը Վ. Դիլային նվիրված բանում, էջ 106։

<sup>94</sup> Տես ս Schleiermacher F., “Brouillon zur Ethik”, in: *Philosophische Schriften*, էջ 134.

<sup>95</sup> Տես ս նույն տեղում։ Այստեղ և հաջորդ մի քանի հատվածներում ուշագրավ են Ծայերմախերի լեզվական կառույցների արհեստականությունը և բազմիմաստությունը, որոնցով հեղինակը փորձում է կիրառվող եզրերն հնարավորինս լայն ընդգրկում հաղորդել։

կերակում» (բարախյուն, առկայթում - *Oszillation*)<sup>96</sup>: Կյանքի բանական մակարդակում անհատ մարդու գուգորդումն ունիվերսումին ուղեկցվում է ամբողջ աստվածակերպության զգացողությամբ, որը և էրիկայի հիմք է կազմում:

Եթե Շլայերմախերը սահմանափակվեր այսքանով, նա դուրս չէր գա իր իրականացրած առաջին փոխակերպության շրջանակներից և հասկանալի չէր լինի, այնուամենայնիվ, թե ինչու է էրիկայի ոլորտը նրա ուսմունքում այնքան ընդլայնվում, որ հաճընկում է մարդկային պատմության հետ ընդհանրապես: Սակայն մտածողը չի բավարարվում անհատի և ունիվերսումի հուզական կապի փաստի արձանագրությամբ, մանրակրկիտ ներկայացնելով այդ կապի դիմացիկական պատկերը:

Աշխարհը շլայերմախերյան էրիկայի շրջանակներում հանդես է գալիս կամ որպես օրյեկտ իմացության համար, կամ մասնակերման՝ պատկերման, կամ է օրգան՝ այդ երկուսի համար: Այլ հարաբերություն լինել չի կարող: Այս երեք ոլորտները միմյանցից ոչ թե նյութով, այլ գործառույթներով են զանազանվում: Առաջինը և երրորդը հակառիր են, սակայն դրանց հակառակությունը վերաճում է նույնության, որքանով որ օրյեկտների ոլորտը սկիզբ է առնում ծայրանասից և ավարտվում է կենտրոնում, այն դեպքում, երբ օրգաններինը, սկսվելով կենտրոնից, ավարտին է հասնում ծայրանասում: Խորհրդանշման ոլորտը միջնորդի դեր է կատարում այս երկուսի միջև<sup>97</sup>:

Պետք է, ըստ երևույթին, համաձայնել այն կարծիքին, որ խորհրդանշումը (Bezeichnung) Շլայերմախերը նույնացնում է իմացության հետ ընդհանրապես: Այդ տեսակետը ժամանակին պաշտպանել է, օրինակ, Քիշշման՝ մտածողի *Փիլիսոփայական բարձրաբանության* ուղեկցող մեկնաբանություններում<sup>98</sup>: Գիտության մեթոդաբանության մասնագետ Ալեք-

<sup>96</sup> Տե՛ս նույն տեղում: Անընդհատ զարկերակման, փոխադարձ անցումների գաղափարն ընդհանրապես հատկանշական է նույնության փիլիսոփայության համար: Պետք է, սակայն, նշել, որ ընկալականության (Rezeptivität)<sup>99</sup> մերակուու, և իմբռագրունտեռության (Spontaneität)<sup>100</sup> արտաքերելու, այս փոխներադրումը և փոխանցումը (Oszillation) իրենց նախատիպան ունեն կանոնացնենատալ էրեսիկայում, ուր զգայականությունը մի կողմից՝ բնորոշվում է որպես արտաքին տպավորություններ սասանուու ունակություն (ընկալականություն), մյուսից՝ ի դեմք տարածության և ժամանակի օժնություն է հայեցողության (Anschabung) ապրիլորի համակարգի ձևերով, այսինքն՝ ինքնագրունտեռությամբ: Այդ մերքին հակասականությունը հետազայում վերաբարդվում է կանույան առաջին քննադատության ավելի բարձր մակարդակներում, նաև ավելացնում է կանույան առաջին բարձրակարգ հայեցողությունից անցնել արտադրողական երևակայության ունակությանը՝ հասկացնելուն, որ վճռական դեր խաղաց գերմանական դասական հիմքավայրում:

<sup>97</sup> Նույն տեղում, էջ 135: Նշեմ, որ էրիկայի ուրվագիծի բնագիրն այնպիսի խոռությամբ է շարադրված, որ վերը ներկայացված մի քամի ոչ մեծ հատվածներում ստիպված են ենթականացնալու համարյա բառացի կրկնել հեղինակային տեսքություն (էջ 134-135):

<sup>98</sup> Տե՛ս F. Schleiermacher, *Philosophische Sittenlehre*, (Hrsg. und erl. J.H.V. Kierschmann), B., 1870: Ներկայացվում է ըստ A. I. Պակոտի, “Օպыт реконструкции кон-

սանդղ Ռակիտովը, վկայակոչելով Քիրշմանի այդ միտքը, նշել է, որ Շլայերմախերը վճռորոշ տարբերություն չի դնում բնագիտության և հասարակագիտության կառուցման սկզբունքների միջև և զարգացման է մեկ ընդհանրական պատկերացում գիտականության մասին: Ուշադրություն հրավիրելով Շլայերմախերի հետևյալ տողերի վրա՝ «Եթե մենք մտածում ենք այն, ինչ միասնական է դարձել, մենք խորհրդանշի ենք մտածում, իսկ եթե մենք օրգան ենք մտածում, մենք մտածում ենք այն, ինչը պետք է միասնական դառնա»<sup>99</sup>, Ռակիտովը եզրակացրել է, որ «խորհրդանշը», ի հակադրություն «օրգանի», որը բնության և բազմազանության ծևով է ներկայանում, միասնականի կրողոն է: Այսպիսով՝ «Ինքը՝ էթիկան, - ամփոփել է Ռակիտովը, - Շլայերմախերի համաձայն, իրենից ներկայացնում է բնականը կամ օրգանականը իրեն ենթարկեցնող բանական սկզբի իրականացնան համակարգ»<sup>100</sup>: Այսինքն՝ իմացությունը պետք է գերազանցապես ներկայացի բազմազանությունից դեպի միասնություն կատարվող վերընթացի ծևով:

Նշան պնդումներ, ամենաընդհանուր ծևով, իսկապես առկա են Շլայերմախերի ուսմունքում: Սակայն սցիենտիֆիտական դիրքորոշմանը հարող Ա. Ռակիտովի մեկնարանությանը այդ դրույթները միակողմանի երանգավորում են ստանում: Գիտականության ընդհանուր ակունքները փնտրվում են բնագիտության մեթոդաբանության շրջանակներում, իսկ գիտելիքի միասնությունը, համապատասխանաբար, ներկայանում է որպես վերացականորեն բանաձևաված (լավագույն դեպքում՝ հայված)՝<sup>101</sup> սկզբունքների ամբողջություն: Այդ երկու թեզերի համադրության շնորհիվ էական տարբերությունները Շլայերմախերի յուրահատուկ մտածելակերպի և ժամանակակից վերլուծական փիլիսոփայության հարացույցի միջև սղվում են, և Շլայերմախերը – մի փոքր «ձգելու» դեպքում – հանդես է գալիս գիտության վերլուծական մեթոդաբանության նախակարապետի դերում: Դիրք, որը նրան ակնհայտորեն չի համապատասխանում:

«Բնական և բարոյական օրենքների տարբերության մասին» վերը քննված ակադեմիական հոդվածում Շլայերմախերն իսկապես նշել է, մենք դա հիշում ենք, որ բնության և բանականության օրենքներն իրարից սուս այնքանով են տարբերվում, որքանով որ ընդհանրապես միմյանցից տարբերվում են բնությունը և բանականությունը»<sup>102</sup>: Զականալի է, որ նույնության սկզբունքի դիրքերից այդ երկուսն իրենց արմատում նույնական պետք է հանարվելու: Արմատում՝ այս: Իսկ բնությունը՝ ի՞նչ իմաստով են դրանք նույնը և ի՞նչ իմաստով են տարբեր՝ այս է խնդիրը:

լեռնա պոնմանիա Փ. Շլեյերմախեր», *Историко-философский сборник* – 88, М., 1988, էջ 154:

<sup>99</sup> Նույն տեղում, էջ 153-154 (F. Schleiermacher, *Philosophische Sittenlehre*, S. 156):

<sup>100</sup> Նույն տեղում, էջ 153:

<sup>101</sup> Այստեղ Ա. Ռակիտովը զուգահեռ է անցկացնում Բ. Բոլցանոյի գաղափարների հետ: Տե՛ս նույն տեղում, էջ 152:

<sup>102</sup> Հիշեցմենք, որ խորը այստեղ պրակտիկ բանականության, այսինքն՝ բարոյականության ոլորտի մասին է:

Շլայերմախերի աներկրա տեսակետն այս հարցում ես արդեն շարադրել եմ: Սակայն իմաստ ունի այն բացորշել: Բնության և բանականության նույնությունն, ըստ Շլայերմախերի, բովանդակային է, իսկ տարրերությունները՝ գործառությաին: Բնությունը հանդես է զալիս որպես օբյեկտների բազմություն: Բանական մարդու գործունեության ընթացքում օբյեկտը վերածվում է օրգանի, օրգանը գործառվում է որպես խորհրդանիշ, այսինքն՝ օբյեկտների մեկ այլ դասի ներկայացուցիչ: Փոխադարձ խորհրդանշումը բնական օբյեկտները կապում է իրենց իսկ բանական (օրինաչափ) էռության հետ: Ըստ Շլայերմախերի՝ ոչ թե օրգանները և խորհրդանշներն են հակադիր բնեօններ կազմում, այլ օրգանները և օբյեկտները, որոնք հանդես են զալիս որպես միևնույթ բազմազանության գործառությաին առումով հակադրված ենթաբազմություններ: Որքանով որ խորհրդանշն այս երկու ոլորտները հաճադրող գործոնի դեր է կատարում, այն – այս – ներկայանում է որպես միասնության կրող: Սակայն դա չի նշանակում, որ եթիկայի նպատակը, որքանով այն հանդես է զալիս որպես ոգու պատճական դրսենորումների իմացություն, լոկ բազմազանությունից միասնությանն անցնելը: Այդպես կարծել նշանակում է մոռանալ, որ կեցության և գիտակցության նույնության սկզբունքը ոչ միայն բազմազանության նույնություն, այլև նույնության բազմազանություն է ենթադրում: Ինքը՝ Շլայերմախերը, այդ բանը երբեք չի մոռանում<sup>103</sup>, և դրա լավագույն վկայությունը զարկերակման գաղափարն է, որը երկու բազմությունների՝ օբյեկտների և օրգանների անընդհատ փոխխորհրդանշում է ենթադրում՝ ընթացք, որում «ներառելը» և «արտաքրելը» միավորված են անհրաժեշտարար, այնպես որ եթիկական կյանքը ինչպես իմացության, այնպես էլ պատկերման կարիք ունի:

Կարելի է ենթադրել, որ Ա. Ռակիտովին այստեղ թյուրիմացության մեջ է գցել «օրգանական» եզրը, որը նա բացահայտողեն նույնացնում է «ընական-բանական» գույգային հակադրության մեջ իմաստավորվող առաջին բնեօնի հետ<sup>104</sup>: Այնինչ «օրգանական» բնորոշումը Շլայերմախերը մակարերում է «օրգան» հասկացությունից, որն ունի նախ և առաջ մարդկային գործունեության օժանդակ միջոցի՝ իմաստ, կերպավորելով այն, ինչը Մարքսը հետագայում «քաղաքակրթության առարկայական մարմին» էր անվանելու: Այստեղ Շլայերմախերի խոսքն հսկապես խիստ արդիական է հնչում: «Կյանքի գործառություններն են՝ բնությունն օրգանի վերածելը և օրգանը բանականության գործառնան համար օգտագործելը»<sup>105</sup>: Ընդ որում՝

<sup>103</sup> «...ոչ անհատական ընդհանուրը Շլայերմախերը դիտում է որպես սցիենտիստական ուսուափական»,- գրում է Մանֆրեդ Ֆրանկը (M. Frank, “Einleitung des Herausgebers”, in: Schleiermacher F., *Hermeneutik und Kritik*, (hrsg. von M. Frank), Suhrkamp, Ffm., 1977, S. 31):

<sup>104</sup> Տե՛ս Ա. Ի. Պակոտը, Եղվ. աշխ., էջ 153: Յարկ է խոսավորնել, սակայն, որ այդ խառնաշփորթ օբյեկտիվ հիմքեր էլ ունի, քանի որ «օրգանական» եզրը Շլայերմախերը նաև նաև իմաստով է օգտագործում (տե՛ս ս. օդինակ, “Brouillon zur Ethik”, էջ 134):

<sup>105</sup> F. Schleiermacher, “Brouillon zur Ethik”, in: ders., *Philosophische Schriften*, S. 135.

«...օրգաններն այլ կերպ չեն կարող ծևավորվել, քան միայն օգտագործման ընթացքում. գոյություն ունի միայն ինքնաձևավորում...»<sup>106</sup>: Փայլուն հաստատում այն բանի, որ էթիկան, ըստ Շլայերմախերի, գործ ունի ոչ այնքան առանձին բարոյական գործողությունների, որքան մարդու կողմից ստեղծված (արտադրած, մշակած) միջոցների, այսինքն՝ մշակույթի և պատմության հետ: Սարդկային մշակույթը և պատմությունը դիտվում են որպես դիմամիկական գործնթաց, որում միավորվում են արտադրությունը և խորհրդանշումը<sup>107</sup>:

Վերացական միասնությունը երբեք Շլայերմախերի գերխմնդիրը չի եղել: 1822 թվականի «Ընդհանուր սիենաստիզմի և լեզվի մասին» իր դասախոսության մեջ նա ուղղակիորեն գրել է. «Եթե մենք կարողանայինք լիովին վերացարկվել զգայական գործնից, ապա ի վիճակի չենք լինի պատկերացնել, թե ինչպես է աշխարհն իրականանալու իրական գիտակցության մեջ»<sup>108</sup>: *Աշխարհի գաղափարը* (Idee der Welt) սկզբունքորեն չի կարող արձանագրվել առանձին առարկայի տեսքով, իրականում այն տրվում է բազմազանության միջոցով, և նրա հմացությունը նույնպես բազմազանության ծավալում է ենթադրում:

Ավանդաբար ընդունված է եղել բնությունն առնչել բազմազանության հետ, իսկ բանականությունը՝ միասնության: Սակայն, եթք բնությունը և բանականությունը դիտվում են որպես ուսումնասիրության օբյեկտ – իսկ տվյալ պարագայում նրանք որպես այդպիսին են դիտվում – պետք է հաշվի առնել, որ տարրերի նույնակերպությունը, հետևաբար՝ այդ իմաստով նաև միասնությունը, բնությանը հատուկ է նույնիսկ առավելապես, քան բանականության կրողին՝ մարդուն: «Կյանքի ստորին աստիճաններն ունեն միայն տեսակի յուրահատկություն, գրում է Շլայերմախերը: Մարդու ունի անձի յուրահատկություն»<sup>109</sup>: Բանականությամբ հոգմորված անհատականությունների ամբողջությունը չի կարող ընդգրկվել համապարփակ մի բանաձևի շրջանակներում: Եվ գույց պատահական չէ, որ գաղափարի պատկերման գործառույթը Շլայերմախերն արվեստին է հատկացնում<sup>110</sup>:

*Էթիկայի ուրվագործում* կարդում ենք. «...ինչպես բնագիտությունից պետք է բխեն բոլոր գիտությունները, նոյն ծնով էլ էթիկայից՝ բոլոր արվեստարնույթ ուսմունքները (Kunstlehren)»<sup>111</sup>: «Արվեստն այն է, ին-

<sup>106</sup> Նոյն տեղում, էջ 136:

<sup>107</sup> Հնմտ. Կ. Մարկս, Փ. Էնգելը, *Соч.*, տ. 46, վ. 1, ԻՊՀ, Մ., ս. 103:

<sup>108</sup> F. Schleiermacher, “Dialektik.- Vorlesung von 1822: Über den allgemeinen Schematismus und die Sprache”, in: ders., *Hermeneutik und Kritik*, S. 447.

<sup>109</sup> F. Schleiermacher, “Brouillon zur Ethik”, in: ders., *Philosophische Schriften*, S. 135.

<sup>110</sup> Տե՛ս և նոյն տեղում, էջ 134:

<sup>111</sup> Նոյն տեղում, էջ 127: Գերաններն «*Kunstlehre*»-ն հայերեն «արվեստարնույթ ուսմունք» բարգանանելով, ես հաշվի եմ տակիս իմ, որ այդ արտահայտությունն արհեստական է և ոչ այնքան բարեհում: Սակայն իմ խնդիրն է ցույց տալ, որ խոսքը ոչ թե ար-

չի ենթարկեցումը օրենքներին ամենաքիչն է հավանական, սակայն այն գոյության իրավունք չէր ունենա, եթե ենթակա չլիներ էթիկական կառուցավորման (wenn sie nicht konnte ethisch konstruiert werden): Արվեստը նաև եզակին չէ, այլ ամենայն մնացյալի էթիկական ամբողջացումը: Որքան էլ մարդ ընդլայնի էթիկայի ընդգրկումը, նա երբեք դուրս չի գա յուրահատուկ բացատրության, այն է՝ մարդկային գործունեության օրենքների նկարագրության շրջանակներից»<sup>112</sup>:

«Էթիկայի հատուկ ծեր, այսպիսով, պարզ պատմելն է (die schlichte Erzähllung), այդ օրենքների (սրանք առանց որևէ հակասության կարող են նաև որպես բնական օրենքներ ներկայացվել) ի բաց դնելը պատմության մեջ: Վերջինս իր բնույթով կարող է <պետք է> բազմակողմանի լինի և պետք է նաև ընտելացնի հայեցողության: Իհարկե, դա չի վերաբերում ամեն մի եզակիի, այլ միայն էթիկական ձևով կառուցավորված եզակիի: Եթե որևէ առարկայում այն չի գտնվում, ուրեմն իմացությունը նրանում ինքնուրույն չէ...»<sup>113</sup>:

Այսպիսով՝ էթիկան չի հրաժարվում օրենքի իմացությունից, սակայն օրենքի պատկերման մեկ այլ ձև է ենթադրում, որը Շլայերմախերը «էթիկական կառուցավորման» (ethische Konstruierung) է անվանում, որա տակ նկատի ունենալով մարդկային գործունեության օրենքների նկարագրությունը:

Սակայն, եթե խոսքը էթիկական կառուցավորման նասին է, ապա ինչո՞ւ են էթիկան կազմավորող հասարակագիտական ուսմունքներն արվեստաբնույթ կոչվում: Արդյո՞ք դրանով Շլայերմախերը իհնք չի ստեղծում էթիկականի և էսթետիկականի այն վտանգավոր մերձեցման համար, որ հատուկ էր ռոմանտիկներին:

Շլայերմախերի համար տարբերությունը հստակ է: Էթիկան գործ ունի օրենքների հետ, հետևաբար իմացությանն է պատկանում: Նրա օրյեկտը ընդհանուրն է, միասնականը: Բայց խնդիրն այն է, որ ընդհանուրը (կամ նույնությունը Identität) կարող է իրականանալ երկու որակապես տարբեր, թեև իրավահավասար և ներքնապես միավորված ծներով.

- որպես բոլորին պատկանող ընդհանրական բովանդակություն  
և

վեստարանության մասին է, այլ բոլոր այն ինացական բնագավառների, որոնց կառուցման համար արվեստի սկզբունքները որպես հանգունակ են հանդես գալիս:

<sup>112</sup> Նույն տեղում, էջ 127-128:

<sup>113</sup> Նույն տեղում, էջ 128:

- որպես մեկ անհատականությունից դուրս եկող և մեկ ուրիշի սեփականությունը դարձող իրական շարժում:

Առաջինը, որն իմացությանը հանրանշանակություն և հավասարագոր բովանդակություն է վերագրում, մտածողությունն է, երկրորդը, որն անհատականությունից է բխում և արտաքին դրսնորում է ստանում, խոսքը՝<sup>114</sup>:

Դանրահայտ է, որ խոսքը երաժշտական հնչյունների, դիմախսաղի և այլ նմանօրինակ միջոցների կողքին լայնորեն օգտագործվում է գեղարվեստում: Սակայն Շլայերնախերը նշում է, որ խոսքն ինքնին չի կարող նույնանալ արվեստի հետ, այլ միայն տրամադրում է այն տարրերը, որոնց ազատ խմբավորումը երևակայության միջոցով ձևավորում է գեղարվեստական ստեղծագործությունը որպես այդպիսին: Վերջինիս մեջ պարունակվող գաղափարը, հուզական բաղկացուցիչը շնորհիկ, միշտ իրացիոնալ է հասկացման, այսինքն՝ մտածողության և խոսքի համար՝<sup>115</sup>: Դա չի նշանակում, սակայն, որ հուզերի ոլորտը անարտահայտելի է: Այն իր դրսնորումն է գտնում պատկերման մեջ: Սարդկային հոգնոր կյանքը ներկայանում է որպես իմացության և պատկերման զարկերակում՝<sup>116</sup>.

Վերը շարադրվածը վերջնականապես հաստատում է, որ խոսելով երիկայից մակարերվող արվեստաբնույթ ուսմունքների մասին, հեղինակը գեղարվեստը չէ, որ նկատի ունի: Վերջինս միայն անհատականի պատկերման վրա հենված իմացության մակարդակն է ներկայացնում: Սեփական փիլիսոփայական հաճակարգի իրականացման ընթացքում Շլայերնախերն, արդեն որերորդ անգամ, բախվում է «սխենատիզմի» կանույան պրոբլեմի հետ և նորից ոչ սովորական լուծումներ է փնտորում: Եթե մտածողի վաղ շրջանի աշխատություններում զգայականը՝ որպես բազմազանության կարգավիճակն ապահովող գործոն, գերազանցապես հուզական վերապրումի նշանակություն ուներ՝<sup>117</sup>, և այդ դեպքում միջնորդն իսկապես կարող էր արվեստը լինել, ապա հասուն Շլայերնախերի ուսմունքում զգայականն այլ կերպ է մեկնաբանվում. բազմա-

<sup>114</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 142:

<sup>115</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 128:

<sup>116</sup> Տե՛ս F. Schleiermacher, “Brouillon zur Ethik”, in: ders., *Philosophische Schriften*, էջ 134:

<sup>117</sup> Այն հաճամանքը, որ հուզական վերապրման օբյեկտ երենն կարող է դառնալ Ունիվերսումը որպես ամբողջություն (անվերջության ինտուիցիա) սկզբումքորեն ոչինչ չփոխում:

զանությունը հաստատող գործոնի դերը ստանձնում է խոսքը, որը մտածողության հետ մեկտեղ հնարավոր է դարձնում անհատականությունների փոխշփման հիմքում ընկած անհրաժեշտ պայմանը՝ հասկացումը (Verstehen):

«Յասկացման» կատեգորիան, «էթիկական կառուցավորման» հետ մեկտեղ, առանցքային դիրք է գրավում ուշ Ըլայերմախերի վարդապետության մեջ, քանի որ հենց այդ երկու հասկացությունների հետ են կապված հիմնական պրոբլեմի հերթական կերպափոխությունը և վերջնական ծնակերպումը: Բնականաբար, դրանք արժանի են մանրամասն քննության:

Ուշագրավ է այն պարզությունը, որով հասկացումը բնորոշվում է հիշատակվող տեքստում: Բնագրում ուղղակի ասված է. «Յասկացման, այսինքն... մտածողության և խոսքի»<sup>118</sup>: Բայց չէ՞ որ մտածողությունը և խոսքը, առանձին-առանձին վերցրած, տրամաբանորեն հստակված ծնուզ մերկայացնում են ընդհանուրի այն երկու ըմբռնումները, որոնց մասին խոսվեց վերը: Եսկ այստեղ մենք գրանց արդեն միավորված ենք գտնում մեկ ընդհանուր հոգնոր գործողության՝ հասկացման շրջանակներում:

Այսպիսի «սահմանումը» խորիելու տեղիք է տալիս: Մի կողմից, չպետք է մոռանալ, որ մենք այս հասկացության հետ բախվել ենք էթիկայի յուրահատկությանը հետամուտ լինելու ընթացքում: Մյուսից, պետք է նաև հաշվի առնել, որ մտածողությունը և խոսքը, իրենց ունի-վերսալիզմի շնորհիվ, չեն կարող չվերաբերել մարդկային իմացության բոլոր բնագավառներին առանց բացառության: Եվ եթե միտքն ու խոսքը այդպես միավորվելու էին, ի՞նչ կարիք կար խոսելու միասնականի երկու դրսնորումների մասին: Անխուսափելիորեն հարց է առաջանում հասկացման՝ որպես յուրահատուկ իմացական կարողության ընդգրկման սահմանների վերաբերյալ. հակառո՞ւմ է արդյոք Ըլայերմախերը հասկացումը նույն մակարդակի վրա գործող այլ ունակություններին, թե՞ դիտում է որպես համադրական մի հմտություն, որը կիրառելի է միասնականի իմացության բոլոր դեպքերի համար: Եվ, վերջապես, որքանո՞վ է վերջնական միասնականի իմացությունն ապահովող հասկացման հակադրությունը եզակիի յուրահատկությունը պատկերող արվեստին:

<sup>118</sup> F. Schleiermacher, “Brouillon zur Ethik”, in: ders., *Philosophische Schriften*, S. 143.

Այս կնճռոտ խնդիրները պարզաբանելու համար անհրաժեշտ է տեսնել, թե ինչ է հասկանում Շլայերմախերը մտածողության և խոսքի տակ, և թե ինչպես է նա պատկերացնում այդ երկու հիմնորոշ ունակությունների փոխհարաբերությունը:

*Մտածողությունը*, ըստ Շլայերմախերի, ոչ միայն չի հակադրվում հայեցողությանը (Anschauung), այլև հենց ինքը ինտելեկտուալ հայեցողությունն է<sup>119</sup>: Այն հանդես է գալիս որպես իր մեջ միասնական իմացություն. այս իմաստով էլ անմիջական է, ոչ թե շարադիր: Խոսքն, ուրեմն, ոչ թե բանաձևնան, այլ անմիջական հայեցողության մասին է: Ինչպես հույզի կատարյալ իրականացումը և ներհատուկ ոլորտը կրոնն է, այդպես էլ ամեն մի մտածողության իրականացումն ու գործողության ոլորտը գիտությունն է, մտահայեցողությունը (Spekulation), փիլիսոփայությունը<sup>120</sup>: Այն ոչ թե բանաձևնում է պահանջում, այլ հոգևորի անմիջական հայեցողություն:

*Մտածողության ներքին տարրորոշումը* ապահովվում է շնորհիվ խոսքի, որն օրգանական միջնորդի ներ է կատարում: Ընդհանուր առնամբ մտածողությունը և խոսքը նույնական են, քանի որ ամեն մի մտածողություն ներկայանում է որպես ներքին խոսք, իսկ ամեն մի ներքին խոսք արտաբերվելու միտում ունի<sup>121</sup>:

Ընթացքը հետևյալն է: Յուրաքանչյուր իմացական ակտում մենք, հանրանշանակության պահանջը նկատի ունենալով, սեփական «ես»-ին նաև որոշակի «ոդու» ենք առնչում, որով և հնարավորություն ենք ստանում սուբյեկտիվը դիտելու որպես անվերջում առանձնահատկացված կազմավորում: Արտաբերման միտումի շնորհիվ իրականանում է անցումը մեկ անձնավորությունից մեկ այլ անձնավորության: Յանրանշանակ նույնությունը «ինքնին բանականության» (Vernunft an sich) արդյունք է: Եզակիների գործողության մեջ իրականանալու համար այն ինքն իրենում կերպավորվելու կարիք ունի: Անձնավորությունների միջև իրականացվող յուրաքանչյուր անցում պատկերում է ենթադրում: Վերջինս ոչ այլ ինչ է, քան նշանակում (Bezeichnung): Գիտելիքի նշանակման համակարգը լեզուն է: Առանց լեզվի չկա գիտելիք, առանց գիտելիքի՝ լեզու<sup>122</sup>:

<sup>119</sup> Ste' ս նույն տեղում, էջ 142:

<sup>120</sup> Ste' ս նույն տեղում, էջ 145:

<sup>121</sup> Ste' ս նույն տեղում, էջ 144:

<sup>122</sup> Ste' ս նույն տեղում, էջ 196-197:

Եթե գիտելիքը չի հենվում ներքին խոսքի վրա, այս կորցնում է իր օբյեկտիվ բնույթը և անցնում է հուզականի ոլորտը: Նույն տրամաբանությամբ, լեզուն, որին չի նախորդում գիտելիքը, վերածվում է մեխանիզմի, և նրա տարրերը կորցնում են նշանակության ինտենսիվությունը: Լեզվի առօրյա հանրային օգտագործումը ծևական կաղապարներ (Formelwesen) է առաջ բերում<sup>123</sup>:

Այս տեսակետով Շլայերմախերը տարածում է նաև գիտության վրա, վերջինիս համար վտանգավոր համարելով որոշարկված եզրերի օգտագործումը: Եթե յուրաքանչյուր բառ չի ուղեկցվում հայեցողությամբ, լեզուն գրկվում է իրական կենսականությունից: Մի պահ թվում է, որ Շլայերմախերը՝ լեզվի բովանդակային ծկունության այս ջատագով, պետք է որ դատապարտեր լեզուն որպես մաթեմատիկական հաշիվ գործառելու ամեն մի փորձ: Սակայն մտածողը հատուկ տարբերություն է դնում այդ գործառման տարրեր տիպերի միջև: Լեզվի հանգեցումը նշանների ծևայնացված համակարգի Շլայերմախերն ուղղակի անմտություն է հանարում: Սակայն նա գտնում է, որ երկրաչափության և հանրահաշվի շրջանակներում նշանների գործառումը բոլորովին այլ բովանդակություն ունի: Երկրաչափական նշանները, ըստ Շլայերմախերի, ինքնին բովանդակալից են, քանի որ հանդես են զալիս որպես հայեցողության անմիջական առարկաներ: Ինչ վերաբերում է թվարանական նշաններին, ապա վերջիններս ներկայանում են որպես արդեն իրականացված գործառությունների հակիրճ բանաձևեր, իսկ նշանային գործառությունն այս ոլորտում նույնպես անմիջական առարկայական բնույթ ունի: Այս, ինչ նշված պարագայում հանգեցում է թվում, իրականում ոչ այլ ինչ է, քան առանձին մեծությունների միջև եղած հարաբերությունների համեմատությունը դրանց՝ միասնական ամբողջի հետ հարաբերության հետ<sup>124</sup>:

Վերը շարադրածը կասկած չի թողնում, որ գիտականության ըմբռնումը Շլայերմախերի մոտ միասնական չափանիշի է ենթարկվում: Սակայն այդ միասնության հիմքը ոչ թե բնագիտական բանաձևումը, այլ հոգևոր հայեցողությունն է ապահովում: Բնագիտությունն այստեղ մեկնաբանվում է շելինգյան բնափիլիսոփայության ոգով և անքնազբոսիկ կերպով անցնում է փիլիսոփայական հայեցողությանը՝ որպես իր բարձրագույն ծևի: Շլայերմախերը որպես հիմանիշներ է օգտագործում

<sup>123</sup> Ste' ս նույն տեղում, էջ 200:

<sup>124</sup> Ste' ս նույն տեղում:

«գիտություն», «մտահայեցողություն» (Spekulation) և «փիլիսոփայություն» եզրերը:

Բնագիտության մեջ նշանների գործառումը ներկայանում է որպես լեզվական գործունեության այնպիսի միտում, որում լեզվական համակարգը հնարավորին չափ նպատակառուղղված է միասնականության արտահայտությանը: Լեզուն դիտվում է որպես ունիվերսալ համակարգ, սակայն ունիֆիկացման բարձր աստիճանն այստեղ, ինչպես տեսանք, սկզբունքորեն սահմանափակվում է բովանդակային հայեցողության անպայման առկայությամբ: Կերծինից ծերբազատվելու դեպքում ֆորմալիզմը դուրս է գալիս գիտության շրջանակներից. այն հատուկ է նիայն առօրյա հաղորդակցման իմաստագուրկ կարծրատիպերին: Տվյալ դեպքում լեզվի և մտածողության ներդաշնակությունը խախտվում է ի վեհական մտածողության, որի հետևանքով խաթարվում է նաև ինքը՝ լեզուն:

Հակառակ բևեռ հոգևոր բովանդակության գերակշռություն է ենթարդում՝ ի վեհական խոսքի: Ներքին խոսքով չձևավորված գիտելիքի վերաբերյալ սուբյեկտիվ համոզմունքը մեզ առաջնորդում է հոգականի ոլորտը, որն ինչպես գիտենք, Շլայերմախերը կապում է գեղարվեստական պատկերման հետ: Պատկերի միջոցով դրսևորված հույզն իր բարոյական նշանակության առումով հավասարագոր է խոսքի միջոցով արտաբերված մտածողությանը: Պատճառը պարզ է: Մարդն, ըստ Շլայերմախերի, չի կարող լիովին հաղորդվել էթիկական կյանքին, եթե իրեն չընկալի որպես վերին բանականության ընդհանուր հոգևորման արդյունք, այսինքն չգիտակցի իր նույնությունը բացարձակի հետ: Բացարձակի հետ այդ կապն անմիջական դրսևորում է գտնում կրոնում: Իսկ բանի որ կրոնական կյանքը Շլայերմախերն առնչում է հոգական ինտուիցիայի հետ, ապա բնական է, որ կրոնը և արվեստը փոխբափանցում են: «Արվեստի ծննարիտ իրականացումը կրոնական է,- գրում է Շլայերմախերը:- Այն ամենը, ինչը չի պարունակում այդ հարաբերությունն իր մեջ և, այնուամենայնիվ, արվեստ լինելու հավակնություն ունի, մեկ այլ բանի տարր է միայն»<sup>125</sup>: Այստեղ մենք հանդիպում ենք զարկերակման մի նոր, չափազանց կարևոր փուլի: Որքանով որ անփոխադրելի հույզը արտաբերվելով հանրային բնույթ է ստանում, նույնքանով էլ հանրանշանակ մտածողությունը անհատականացվում է: Այդ խոհընթացի անխուսափելի պայմանը լեզվի անհատականացումն է:

<sup>125</sup> Տես նույն տեղում, էջ 144:

Վերջինս չի սահմանափակվում յուրաքանչյուր անհատ մարդու համար բնական ոճական և գործածական առանձնահատկություններով:

Լեզվի իրական անհատականացումը բովանդակային է: Նրա համար վճռական նշանակություն ունի ամեն մի լեզվական հարստության անկրկնելիության իրողությունը, այսինքն՝ այն հանգամանքը, որ ամեն մի ազգային լեզու, ամբողջությամբ վերցրած, անփոխադրելի է մեկ այլ լեզվի, որի բառապաշարը, քերականական կառուցվածքը, ինքնազարգացման ներքին հնարավորությունները առաջինից տարբեր, սակայն նույնքան անփոխադրելի մի ամբողջություն են կազմում:

Այստեղից կարևոր հետևություններ են բխում:

Եթե մտածողության գերագույն ծնոր փիլիսոփայությունն է, մտածողությունն առանց լեզվի հնարավոր չէ, իսկ լեզուն էլ անպայմանորեն անհատականացված է որոշակի ազգային-մշակութային շրջանակներում, ապա մոլորություն կլիներ հուսալ, որ հնարավոր է ձգտել մեկ համընդհանուր փիլիսոփայության, եթե նույնիսկ վերջինս որպես անհասանելի իդեալ կամ սահմանային գաղափար մեկնաբանվեր: Չե՞ որ, ըստ Շլայերնախերի, ամեն մի փիլիսոփայություն ոչ այլ ինչ է, քան լեզվի գարգառում, իսկ լեզուն ոչինչ այլ բան չէ, քան յուրահատուկ փիլիսոփայության պատկերում (Darstellung)<sup>126</sup>:

Մրանից պետք է որ հետևեր, և Շլայերնախերն անում է այդ եզրակացությունը, որ յուրաքանչյուր առանձին վերցրած լեզվով ծնակերպված փիլիսոփայությունների բազմազանությունը թվացողություն է միայն, իրականում պետք է միանշանակ համապատասխանություն լինի տվյալ որոշակի լեզվի և փիլիսոփայության միջև: Բայց պատմականորեն առկա պատկերն այդպիսին չէ: Այս հակասությունը Շլայերնախերը բացատրում է նրանով, որ ոչ բոլոր փիլիսոփայող անհատների հայեցակետերն են համընկնում ազգային-մշակութային այն անկրկնելի կազմավորման կենտրոնի հետ, որից իրենք սերում են և որին պատկանում են: Սակայն փաստը մնում է փաստ: Շլայերնախերը չի կարող ժխտել միևնույն լեզվով արտահայտված տարբեր փիլիսոփայությունների առկայությունը: Այդ դեպքում հասկանալի չէ, այնուամենայնիվ, թե ինչ մակարդակով գոյություն ունի տվյալ լեզվին ծշտորոշ համապատասխանող միակ փիլիսոփայությունը: Զանդե՞ս է գալիս այն որպես որոշակի փաստ, թե՞ իրենից մտային մի կառույց է ներկայացնում, որը միայն հոգևոր-կարգավորիչ նշանակություն ունի:

<sup>126</sup> Տես նոյն տեղում, էջ 145:

Եվ հենց այստեղ է, որ Ծլայերմախերը, կարծես թե իմիջիալոց, մի բնորոշում է օգտագործում, որը շրջում է ընթերցողի բոլոր պատկերացումները այս, թվում է զուտ տեսական, բնագավառի վերաբերյալ: Նա հայտարարում է, որ մտածական և լեզվական այն տարրերը, որոնք համատեղ մեկ միասնական փիլիսոփայություն և լեզու են կերտում, ոչ այլ ինչ են, քան... կաճառ (Akademie)<sup>127</sup>:

Շրջադարձն իրոք անսպասելի է: Գիտելիքի միասնության հիմքը դուրս է բերվում ոչ միայն շարադիր բանաձևերով՝ արձանագրված ընդհանուր սկզբունքների, այլև անհատական ու ընկերային հուզակացության շրջանակներից: Այն հանդես է գալիս որպես հասարակական հիմնարկություն՝ իրական մարդկանց իրական շփման, պրակտիկ-հոգևոր հաղորդակցման արգասիք<sup>128</sup>.

Դասկանալի է, որ Սպինոզայի և Ծելինգի հետևորդը, ազգային-մշակութային անկրկնելիությունն ընդունելով հանդերձ, չէր կարող սահմանափակվել ընդհանրության այդ անկատար աստիճանով: Նա նշում է, որ կաճառները՝ մտածողության և խոսքի այդ ներփակ ամբողջությունները, իրենց հերթին համընդհանրության և նույնության են ծգում: Այդպիսով ծավորվում է կաճառների հանրությունը (Gemeinschaft der Akademien)<sup>129</sup>, որը վեր է ածվում երկու հակադիր բներների՝ համընդհանուրի և առանձնահատուկի բարձրագույն միասնության<sup>130</sup>:

Մոտավորապես նույն գործընթացը տեղի է ունենում նաև հույզերի անփոխադրելի ոլորտում: Չնայած հաղորդակցումն այստեղ անհատականացված է, արտաքերման օրգանական պայմանների նույնության շնորհիվ հույզերը կարող են միավորվել և ստեղծել «հասկանալիության շրջանակ» (Kreis der Verständlichkeit): Անհատական հույզերի միասնությունը և պատկերումը հանդես են գալիս Եկեղեցու գաղափառի (Idee einer Kirche) ծևու: Մերացքը շարունակվելու է Եկեղեցիների փոխընդունման և փոխլրացման միջոցով և իր ավարտին է հասնելու բոլոր Եկեղեցիների ազատ հանրության (freie Gemeinschaft aller Kirchen) շրջանակներում<sup>131</sup>:

<sup>127</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>128</sup> Այս ընթացումն ընկած է Ծլայերմախերի զարգացրած համալսարանական կրթության հղացքի հիմքում՝ հնմտ. սույն երկասիրության մաս Դ, էջ 285:

<sup>129</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 146:

<sup>130</sup> Նույն տեղում:

<sup>131</sup> Նույն տեղում:

Փաստորեն, կաճառների և եկեղեցիների ազատ հանրության վերաբերյալ գաղափարը արդյունք է Շլայերմախերի՝ սուբյեկտի մասին ունեցած պատկերացումների հետագա զարգացման և կոնկրետացման: Տրանսցենդենտալ սուբյեկտի կանույան ընթանան իր երկրորդ կերպափոխության շնորհիվ Շլայերմախերն արդեն ցույց էր տվել, որ աշխարհի հոգևոր յուրացման իրական սուբյեկտը համասեռ չէ. այն հանդես է գալիս որպես անկրկնելի անհատականությունների անընդհատ հաղորդակցման ամբողջական մի համակարգ: Կաճառը և եկեղեցին այդ հաղորդակցման իրական իիմքն են կազմում:

Ինացական և հոլոգական կյանքը մարդկանց իրական պատմական փոխսպունեության վրա իիմնելու շնորհիվ Շլայերմախերի համակարգում խիստ կարևորվում է մշակույթի հասկացությունը: Վերջինս հենվում է բանականության կազմավորող, օրգանաստեղծ (organisierende) ունակության վրա: «Բանականությունը յուրացնում է բնությունը որպես իմացության և իդեայի պատկերման օրգան: ...Ամեն ինչ բանականության մեջ պետք է իր օրգանն ունենա: ...Անձնավորության ծևավորումը (Ausbildung) պայմանավորում է բնության պատկերումը (Anbildung) և հակառակը»<sup>132</sup>: Այս երկու գործնմթացների հերթական զարկերակումը, ամբողջության մեջ վերցրած, արտահայտվում է մշակույթի գաղափարի միջոցով:

Շլայերմախերը վճռականորեն ժխտում է մշակույթը երիկային հակադրելու՝ ռունանտիկական էսթետիզմի համար բնորոշ ամեն մի փորձ: Ավելին՝ նա գտնում է, որ առանց օրգանաստեղծման, որ փաստորեն ոչ այլ ինչ է, քան մշակութային գործունեություն, բանականության երիկական կյանքն ընդհանրապես հնարավոր չէ<sup>133</sup>: Այսպիսով՝ երիկան, որպես հասարակական մարդու պատմական գործունեության օրինաչափությունների նկարագրություն, համընդհանուր նշանակություն է ծեռք բերում, իր մեջ ներառելով ինչպես իմացական, այնպես էլ հոլոգական և գործնական բնագավառները: Քանի որ ընդհանուրը և առանձնահատուկը վերջին հաշվով միասնական են, հետևաբար հանրությունը և ինքնությունը, փիլիսոփայությունը և կրոնը, արվեստը և լեզուն անընդհատ փոխանցման մեջ են գտնվում, կազմավորելով մարդու պատմական-մշակութային կյանքը, այն է՝ երիկականի ոլորտը<sup>134</sup>:

<sup>132</sup> Տես նույն տեղում, էջ 147, 149, 150:

<sup>133</sup> Տես նույն տեղում, էջ 150:

<sup>134</sup> Տես նույն տեղում, էջ 147:

Շարադրվածի լույսի ներքո պարզ է դառնում, թե ինչ նկատի ուներ Շլայերմախերը, խոսելով «Եթիկական կառուցավորման» մասին: Դուզական ոչ մի ապրում, գեղարվեստական ոչ մի պատաժիկ, իմացական ոչ մի գործողություն չեն կարող ավարտուն համարվել, եթե չեն իմաստավորվում եթիկական, ասել կուզի՝ պատմամշակութային հարացուցի դիրքերից: Քիշենք՝ առանց եթիկական կառուցավորման իմացություն «ինքնուրույն չե», այնտեղ չկա ոչինչ, որ գոյություն ունենա «ինքնին»<sup>135</sup>:

Որպեսզի այն թյուր տպավորությունը չստեղծվի, իբր Շլայերմախերն արդի պատմամշակութային ուսմունքների անմիջական նախորդն է եղել, իիշեցնեմ, որ անհատ մարդկանց փոխգործունեության ընթացքում ծևավորվող պատմական օրինաչափությունների նկարագրությունը էթիկա չէր կոչվի, եթե՝ ա) խարսխված չլիներ յուրաքանչյուր անհատի և ունիվերսումի անմիջական-հուզական կապի վրա և բ) մշակույթի գերիմնիրը չհամարեր անհատների հոգևոր ունակությունների համարման միջոցով գերազույն (աստվածային) միասնության իրականացումը: Նշված հանգամանքները իիշեցնում են, որ Շլայերմախերը նախ և առաջ հոգևորական էր և հենց որպես այդպիսին էլ ձգոտում էր լուծել իր առջև ծառացող փիլիսոփայական խնդիրները: Պատահական չէ հասկացման նրա բնորոշումը որպես «մտածող ոգու ինքնագտնում» (sich-selbst-finden des denkenden Geistes)<sup>136</sup>: Սակայն Շլայերմախերի աստվածաբանությունը հակասպեկուլյատիվ էր այնքանով, որքանով որ նա չէր ընդունում հոգևոր ունիվերսումի, այսինքն՝ Աստծո անմիջական մտահայեցողական տրվածությունը:

Վերն արդեն նշել եմ, որ Շլայերմախերի մտքի հակասպեկուլյատիվ ուղղվածությունը նրան մերձեցնում է Մարքսի հետ: Զուգահեռները դրանով չեն ավարտվում: Առանձնապես տպավորիչ է հետևյալ հատվածը, որը կարող էր դիտվել որպես փոխառություն Մարքսից, եթե գրված չլիներ 1805-ին: «Ապրանքի (Produkt) առավելագույն հնարավոր անշատելիությունը,- գրում է Շլայերմախերը,- ներկայացվում է փողի միջոցով, և հենց որանում է նրա նշանակությունը բարքերի ոլորտում (sittliche Bedeutung): Ուրիշի նպատակների առավելագույն հնարավոր ճանաչելիությունը տրվում է լեզվի միջոցով, որը տվյալ հա-

<sup>135</sup> Հնմտ. սույն մենագր., էջ 51:

<sup>136</sup> Stein A. Diemer, Աշկ. աշխ., էջ 52:

րաբերության մեջ ներկայանում է որպես համայնական բնույթ ունեցող պատկերաստեղծ գործունեության արդյունք (Produkt)»<sup>137</sup>:

Խոսքը, ինչպես տեսնում ենք, մարդկային գործունեության երկու հիմնական բնագավառների՝ արտադրության և հաղորդակցման մասին է: Յարկ կա՞, արդյոք, հիշեցնելու, որ նույն այդ հիմնարար հասկացությունների վրա է խարսխված *Գերմանական զաղափարախոսության* ողջ կառույցը<sup>138</sup>: Մարդսիզմի զարգացման հետագա ընթացքում այդ գործառույթները՝ աշխատանքը (Arbeit) և շփումը (Verkehr), միանշանակորեն շեշտված պատճառահետևանքային կապի մեջ դրվեցին, և տրամարանական առաջնությունը տրվեց աշխատանքին:

Շլայերմախերի մոտեցումը տրամագծորեն հակառակ է: Նրա ելակետը մարդկանց հոգևոր շփումն է. նյութական (անօրգանական կամ օրգանական) արտադրությունը կարող է միայն պատմական, բայց ոչ տրամարանական (առավել ևս՝ միանշանակ պատճառահետևանքային) առաջնություն ունենալ: Շլայերմախերի վարդապետության մեջ մարդկանց հոգևոր հաղորդակցությունը նշանավորում է զարգացման բարձրագույն աստիճանը: Բնական է, ուրեմն, որ այն ապահովող հիմնական ունակությունը՝ *հասկացումը*, այնպիսի նշանակություն է ստանում մտածողի համար, որ *հասկացման հնարավորության պայմաններն ուսումնասիրող առանձին մի բնագավառի՝ հերմենևստիկայի ստեղծման հիմք* է հանդիսանում:

Քանի որ հասկացումը, ըստ Շլայերմախերի, հիմնականում միասնականին է վերաբերում, ապա հասկացման տեսությունը լրացվում է բանասիրական քննադատությամբ, որը կոչված է նույն գործառույթն իրականացնել անփոխադրելի բնագավառում՝ վերհանելով *առանձին մարդկանց* անհատականացված *լեզվագործածության* ոճն ու իմաստային նորերանգները: Քննադատության խնդիրն անհատականի տեղմ օրյեկտիվում գտնելուն է (das Individuelle in Objektives aufzulösen): Ընդհանուրի արդարացման համար չի կարելի անհատականը որպես պատահական դիտարկել: Ամենաաննշմար անհատականությունը պետք է առնչվի մեծի հետ, և յուլաքանչյուր մեծ դիտվի որպես փոքրերից կազմված մի ամբողջություն<sup>139</sup>: Հերմենևստիկան և քննադատությունը ենթա-

<sup>137</sup> F. Schleiermacher, “Brouillon zur Ethik”, in: ders., *Philosophische Schriften*, S. 156.

<sup>138</sup> Տես Կ. Սարս, ֆ. Էնգելս, *Գերմանական զաղափարախոսություն*, Երևան, հ. 3, Յայաստան, Եր., 1987:

<sup>139</sup> Տես F. Schleiermacher, “Brouillon zur Ethik”, in: ders., *Philosophische Schriften*, էջ 203:

դրում են միմյանց և, իրենց կիրառության օբյեկտների համաձայն, անընդհատ փոխադարձ զարկերակման մեջ են գտնվում:

Ներմեննատիկական ուսմունքի ստեղծմամբ Ըլայերնախերը վերջնականապես իրականացնում է կանույան կրիտիցիզմի երրորդ և վերջին կերպափոխությունը։ Եթե առաջին փուլում բազմազանության և նիսանության, ազատության և անհրաժեշտության ապորիաների հաղթահարումը Ըլայերնախերը փնտորում է ամենալայն ծևով մեկնարանված զգայականի մեջ, իսկ երկրորդում հասնում է իմացության սուբյեկտի կառուցվածքի որակապես նոր ըմբռնման, ապա այստեղ նա իիմք է դնում իմացարանության մեջ կատարվելիք (միայն մեր օրերում իրականություն դարձած) վճռական շրջադարձի համար, ցույց տալով այն ուղին, որով հնարավոր էր սուբյեկտի տեսությունից անցում կատարել հաղորդակցման տեսությանը։

Մենք իշխում ենք, որ Ըլայերնախերի հերմեննատիկայի գիտակ Մանֆրեդ Ֆրանկը, ելմելով Կարլ-Օտտո Ապելի առաջադրած գաղափարից, այդ կերպափոխությունը նկարագրում է որպես անցում քանակամության քննադատությունից իմաստի քննադատությանը։ Նա նաև շեշտում է, որ իմաստային չափանիշն ընդգրկում է նախադատությունների բանական լինելու չափանիշը և իիմք է ծառայում վերջինիս համար<sup>140</sup>։ Այս բնորոշումը հաջողությամբ լրացվում է նույն հեղինակի՝ նույն տեղում արած մեկ այլ դիպուկ դիտողությամբ։ «Ոչ միայն մետաֆիզիկայի ազատորեն ճախրող գիտակցությունն է սահմանափակվում իմացության (կանույան իմաստով) պահանջներով, այդ իմացության ապրիորի հորջործվող պայմաններն իրենք են իիմնավորվում պատմության մեջ»<sup>141</sup>։

Ըլայերնախերը, իր վերջին՝ հերմեննատիկական կերպափոխությունն իրականացնելով, չի իրաժարվում անցած ծանապարիի և ոչ մի փուլից։ Դատկանշական է, որ մտածողը բանականության կանույան քննադատության այլսայլ թեական կողմերին անդրադառնալիս մշտապես հետապնդում է ոչ այնքան մեթոդաբանական, որքան աշխարհայացքային նպատակներ։ Որքանով որ իմացությունն իրականանում է մարդկանց հոգևոր շիման շնորհիվ, խոսքը և նրա վրա հենված հասկացումը անխուսափելիորեն առաջին պլան են մղվում, իսկ քանի որ իմացության գերագույն նպատակը աստվածային ունիվերսումին հա-

<sup>140</sup> Steu M. Frank, “Einleitung des Herausgebers”, in: Schleiermacher F., *Hermeneutik und Kritik*, էջ 10:

<sup>141</sup> Նույն տեղում։

ղորդակից լինելն է, ապա հասկացման տեսությունը՝ հերմենստիկան, հանդես է զալիս որպես էթիկայի պսակը: Այսպիսով՝ հասուն Շլայերմախերի այս վերջին կերպափոխությունը ոչ այնքան շրջադարձ է, որքան ընտրություն մի նոր հայեցակետի, որից ելնելով հնարավոր է դառնում ի մի բերել և ամբողջացնել մարդու և ունիվերսումի անքակտելի կապի մասին պատկերացումների ողջ լուսապնակը:

### **Ունիվերսալ հերմենստիկայի հղացքը**

Սեկոնդությունն արվեստ է:

ֆ. Շլայերմախեր

Ունիվերսալ հերմենստիկայի ստեղծումը Շլայերմախերի մեծագույն ծառայություններից է: Այդ նվաճումը մտածողին հնարավորություն տվեց ընդլայնել տրանսցենդենտալիզմի սկզբունքի կիրառության սահմանները, ներառելով նշանայինի բնագավառը:

Շլայերմախերի ծեռագրերում հերմենստիկայի վերաբերյալ նշումներ կարելի է գտնել 1805-ից սկսած: Այդ ժամանակից ի վեր՝ մինչ իր կյանքի վերջը, Շլայերմախերը լրջորեն գրադպել է հերմենստիկական խնդիրներով, սակայն այդպես էլ չի թողել նման վերնագիր կրող ավարտուն մի գործ: Նրա՝ հերմենստիկային և քննադատությանը նվիրված հարուստ ծեռագիր ժառանգությունը (հավաքածուներ, հոդվածներ, պատարիկներ և այլն) ի մի է բերել և 1838-ին (մտածողի մահից երկու տարի անց) հրապարակել Շլայերմախերի մերձավոր աշակերտներից մեկը՝ Ֆրիդրիխ Լյուբեն<sup>142</sup>:

Շլայերմախերի հոգևոր ժառանգության վերաբերյալ հետաքրքրության նոր ալիքը շատ բանով է պայմանավորված մեկնության տեսության արդիական հնչեղությամբ: Պատահական չէ, որ վերջին տասնամյակներին Շլայերմախերին նվիրված հետազոտությունների զգալի նաև նվիրված է նրա հերմենստիկայի վերլուծությանը<sup>143</sup>:

<sup>142</sup> Sieu Hermeneutik und Kritik mit besonderer Beziehung auf das Neue Testament von Dr. Friedrich Schleiermacher. Aus Schleiermachers handschriftlichen Nachklasse und nachgeschriebenen Vorlesungen herausgegeben von Dr. Fredrich Lucke, bei W. Reiter, Berlin, 1838: Այս ժողովածուին հաջորդել է երկու լրացված քննադատական հրատարակություն՝ Հայոց Քիմերիկ խմբագրությամբ 1959-ին և Մանքեն Ֆրանկի խմբագրությամբ 1977-ին: Սույն հետազոտության ընթացքում ես հիմնականում հենվել եմ Մանքեն Ֆրանկի հրատարակության վրա:

<sup>143</sup> Վերջին ուշագրավ միջոցառումներից էր 2013 թ. հոկտեմբերին Վիտենբերգում տեղի ունեցած շայերմախերյան հերմենստիկային նվիրված գիտաժողովը՝ կազմակերպված Շլայերմախերյան ընկերության կողմէց:

Չցանկանալով հերթական անգամ վերապատճել ասպարեզում եղած նյութը, ես չեմ անդրադառնա շլայերմախերյան հերմենևտիկայի ծնավորման պատմությանը: Յիմք ընդումելով 1819 թվականի հավաքածու շարադրանքը, ես կներկայացնեմ Շլայերմախերի ունիվերսալ հերմենևտիկայի հանգուցակետերը հեղինակի բնագրային բանաձևումների տեսքով և կփորձեմ, փիլիսոփայական գիտելիքի այսօրվա նակարդակը նկատի ունեցող մեկնաբանությունների միջոցով պարզաբանել դրանց իմաստը: Այսպիսի մոտեցումը պետք է որ հարազատ լինի «մեկնության արվեստին». չէ՞ որ «մեկնելը» (auslegen) «ի ցույց դնել» է նշանակում, այսինքն՝ փոքր, ասելով «նայիր, սա՛ է»<sup>144</sup>:

Խոսքը տանը Շլայերմախերին.

1. Քերմենևտիկան որպես հասկացման արվեստ դեռևս գոյություն չունի ընդիհանուր ծևով. կամ միայն բազմաթիվ հատուկ հերմենևտիկաներ՝<sup>145</sup>:

«Զատուկ հերմենևտիկաներ» ասելով՝ Շլայերմախերը նկատի ունի հումանիտար հետազոտությունների այն կոնկրետ ոլորտները, որոնցում ավանդաբար կիրառվել է մեկնության մեթոդը: Դրանք են՝ նախ և առաջ դասական բանասիրությունը, որը սկիզբ է առել Վերածննդի ժամանակաշրջանում, նպատակ ունենալով հույն և լատին հեղինակների դասական տեքստերի ուսումնասիրությունը և հասկացումը, արևելագիտական և ռոմանտիկական հերմենևտիկան, իրավաբանական մեկնությունների պրակտիկան, որի ակունքները հասնում են հռոմեական իրավունքի դասական շրջան, իսկ տեսական աղերսները հայտնաբերվում են Արիստոտելի Յանոնորության մեջ և Տոպիկաում և, իհարկե, կրոնական-աստվածաբանական մեկնությունների ավանդույթը, որը, հասկանալի պատճառներով, պետք է որ առավել մոտ լիներ Շլայերմախերին: Պատահական չէր, որ նրա հերմենևտիկայի հետմահու հրատարակությունը կոչվեց Քերմենևտիկա և քննադատություն «Նոր կտակարանի» նկատմամբ առանձնահատուկ կիրառությամբ:

Սուրբ Գրոց մեկնությունների հիմավորց ավանդույթը նորոգվեց գերմանական բողոքականության մեջ Մարտին Լյութերի՝ Ավետարանի

<sup>144</sup> Նշենք, որ գերմաներեն «auslegen»-ն իր հերթին թարգմանություն է լատիներեն «exegese»-ից կամ «expositio»-ից:

<sup>145</sup> F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 75.

թարգմանությամբ: Լութերի թարգմանական գործունեությունը հենվում էր երկու հիմնարար սկզբունքի վրա. ընթերցողի հերմենստիկական ունակության ընդունման (sola-fides-Prinzip), ըստ որի յուրաքանչյուր քիսութունյա ունակ է Սուրբ Գիրքն ինքնուրույն կարդալու, և Սուրբ Գրի հերմենստիկական ինքնավարության ընդունման (sola-scriputra-Prinzip), ըստ որի՝ Սուրբ Գրքի իմաստը չի վերագրվում նրան, այլ արտածվում է նրանից, այն միակն է<sup>146</sup>: Այս զարդարաները հետագայում զարգացրեցին Լութերի աշակերտները՝ Մելանխոնը և Մատթեոս Ֆլացիուսը: Նույն գիծը յուրովի շարունակում է նաև Շլայերմախերը:

Մյուս կողմից, սերտ առնչությունները ռոճանստիկմերի շրջանակի հետ Շլայերմախերի առջև բացեցին նաև բանասիրական հերմենստիկայի անծանությունը աշխարհը, հաղորդակից դարձրին նրա հնայքին:

Այդ ամենով հանդերձ՝ առաջին կետը ցույց է տալիս, որ Շլայերմախերի խնդիրն ուրիշ է. նա հարց է դնում ոչ թե այս կամ այն տեքստի մեկնարանության, այլ նախ և առաջ ամեն մի մեկնարանության կազմորոշ սկզբունքների մասին:

Դիլբայն այդ կապակցությամբ պարզաբանում է, որ մտածողի խոսքը նաև առանձին հերմենստիկական կանոնների համակարգի մասին չէ: Շլայերմախերն այդ կանոններից այն կողմ է անցնում՝ դեպի հասկացման նպատակասլաց գործողության վերլուծությունը, որից և նաև կարերում է հանրաշանակ մեկնության հնարավորությունը<sup>147</sup>:

Սրանով Շլայերմախերն ընդլայնում է կանույան կրիտիզմակի ուլորտները, անցում կատարելով գիտական գիտելիքի հնարավորության պայմանների ուսումնասիրություններից նշանի և նշանակության կիրառության և հասկացման համընդիմանուր պայմանների ուսումնասիրությանը: Այս հավակնությունը Կանույան ավելի հեռու է գնում, քանի որ բանականության քննադատության համար անհրաժեշտ է նախադատությունը բանական իմաստի չափանիշներ ունենալ: Այսպես Շլայերմախերը գալիս է ընդհանուր՝ ումիվերապէ հերմենստիկայի զարդարանին:

<sup>146</sup> Sie A. Diemer, *Elementarkurs Philosophie: Hermeneutik*, S. 47: Մերժելով կաթոլիկ եկեղեցու հիմնարար թեզն այն մասին, որ եկեղեցին՝ որպես քրիստոնեական ավանդության պահապան, անհրաժեշտ միջնորդ է Սուրբ Գրքը և այն հասկանալ ցանկացող հավատացալի միջն, և ազդարարելով յուրաքանչյուր հավատացյալի Աստվածաշունչն ինքնուրույն կարղապու և հասկանալու ունակությունը, բողոքականությունը պարտադրված էր առանձնահատուկ ուշադրություն դարձնել հասկացման արվեստի հերմենստիկայի զարգացման վրա:

<sup>147</sup> Ղնմտ. Վ. Դիլբայ, «Քերմենստիկայի ծագումը», սույն գրքի էջ 112:

Ունիվերսալ հերմենևստիկայի շրջանակները նախանշելու նպատակով Շլյերմախերը մի քանի նախնական բնորոշում է ուրվագծում, հերմենևստիկան սահմանելով որպես՝ ա) մտքերը ճիշտ ներկայացնելու արվեստ, բ) որևէ մեկի խոսքը մյուսին ճիշտ հաղորդելու արվեստ և զ) մեկ այլ մարդու խոսքը ճիշտ հասկանալու արվեստ։ Յերմենևստիկայի գիտական հասկացությունը Շլյերմախերը կապում է երրորդ սահմանման հետ, որն ըստ նրա, միավորում է առաջին երկուսը<sup>148</sup>:

2. Դժվար է ընդհանուր հերմենևստիկային մատնանշել իր տեղը<sup>149</sup>։

Դժվարությունը պայմանավորված է նրանով, որ հերմենևստիկայում գործ ունենք նոր ի հայտ եկած իմացական կարողության՝ հասկացման հետ։ Խնդիրը մյուս կարողությունների հետ նրա առնչությունների ճշգրտումն է։ Երկու հիմնական ոլորտները, որոնց հետ հարաբերության մեջ բնորոշվում է հասկացումը, խոսելը և մտածելը են։

3. Քանի որ խոսելու և հասկանալու արվեստները (փոխադարձարար) համադրված են, բայց խոսքը մտածողության արտաքին կողմն է միայն, հետևաբար հերմենևստիկան փոխադարձ կապի մեջ է մտածելու արվեստի հետ և այսպիսով փիլիսոփայական լ<sup>150</sup>։

Դաստավորում է հերմենևստիկայի փիլիսոփայական բնույթը։ Միևնույն ժամանակ ակնարկվում է մտածողության տրամաբանական առաջնայնությունը լեզվի համեմատ։

4. Խոսքը միջոց է մտածողությունը հասարակայնացնելու համար, և այստեղից բացատրվում են հռետորության և հերմենևստիկայի փոխառությունը և նրանց ընդհանուր աղերսները դիալեկտիկայի հետ<sup>151</sup>։

Այս որույրն առանձին մեկնության կարիք չունի, սակայն ավելորդ չէ նշել, որ դիալեկտիկայի շլայշերմախերյան ըմբռնումը միավորում է ինչպես հին հունական, այնպես էլ գերմանական դասական իդեալիզմի շրջանակներում մշակված պատկերացումները։ Յետազայում Շլյերմախերը դիալեկտիկան սահմանելու է որպես «զուտ մտածողության

<sup>148</sup> Տե՛ս F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, էջ 75։

<sup>149</sup> Նույն տեղում։

<sup>150</sup> Նույն տեղում, էջ 76։

<sup>151</sup> Նույն տեղում։

բնագավառում կանոնավոր երկխոսություն իրականացնելու համար անհրաժեշտ հիմնադրությունը է՝ շարադրանք»<sup>152</sup>:

5. Ինչպես յուրաքանչյուր խոսք երկակի հարաբերություն ունի լեզվի ամրողության և հեղինակի ողջ մտածողության հետ, այնպես է ամեն մի հասկացում երկու մոմենտից է բաղկացած՝ խոսքը հասկանալու պահից դուրս բերված և այն հասկանալու պահին մտածողի մեջ իրականացող փաստ<sup>153</sup>:

Այս դրույթը կարևոր տեղ է գրավում Շլայերնախերի հերմենևոտիկական համակարգում, քանի որ հստակություն է մտցնում անհատ մարդու և լեզվի՝ որպես հասարակական երևույթի փոխհարաբերության մեջ:

Յուրաքանչյուր անհատի մտածողություն, ըստ Շլայերնախերի, պայմանավորված է նրա օգտագործած լեզվով: Դնարավոր չէ մտածել այն, ինչի համար լեզվում բացակայում են համապատասխան նշաններ և նշանակություններ: Քանի որ լեզուն հանդես է գալիս որպես բազմաթիվ կապերից և հարաբերություններից բաղկացած, հարաբերականորեն իմքնուրույն, ամբողջական համակարգ, այն գերազանցում է անհատ մարդու անմիջականորեն առկա լեզվական հմտությունները և, հետևաբար, լրացուցիչ հնարավորություններ է ընձեռնում վերջինիս՝ ներքին խոսքի, ուրեմն և մտածողության հետագա զարգացման համար: Այս առումով, լեզուն «շատ է» մարդուց. «...յուրաքանչյուր անհատ միայն տեղ է (ein Ort ist), որում երևակվում է լեզուն...»<sup>154</sup>:

Խոսքը, իր հերթին, հանդես է գալիս որպես խոսողի կյանքի մոնմենտներից մեկը միայն և կարող է հասկացվել անհատի ողջ կյանքի հետ հարաբերման միջոցով: Սրանով կարևորություն են ստանում նաև խոսողի ազգությունը և նրա ապրած դարաշրջանը:

6. Հասկացումը այս երկու (քերականական և հոգերանական) մոմենտների միմյանց մեջ գոյությունն է (Ineinandersein) միայն<sup>155</sup>:

<sup>152</sup> Նույն տեղում, էջ 412: Սահմանումը տրված է Շլայերնախերի կյանքի վերջին տարիներին (1831-ից հետո):

<sup>153</sup> Նույն տեղում, էջ 77:

<sup>154</sup> Նույն տեղում, էջ 78: Կետագայում այս գաղափարը հիմնորոշ կղանա Մարտին Շայների համար:

<sup>155</sup> Նույն տեղում, էջ 79:

7. Երկուսմ էլ հավասար են կանգնած, և սխալ կլիներ քերականական մեկնարամությունը ստորին և հոգեբանականը՝ վերին համարել<sup>156</sup>:

8. Խնդրի բացարձակ լուծումն այն է, որ յուրաքանչյուր կողմ իմքնին այնպես գործառվի, որ մյուսի գործառումը արդյունքի փոփոխություն չառաջացնի, կամ, որպեսզի յուրաքանչյուր կողմ՝ իմքնին գործառված, լիովին փոխարինի մյուսին, որը սակայն պետք է գործառվի իմքնին՝ նույնպես և նույն ձևով<sup>157</sup>:

Քերականական և հոգեբանական մեկնությունների իմքնիշխան հավասարության վերաբերյալ այս թեօքերն այնքան հստակ են և միանշանակ, որ թվում է՝ տվյալ հարցում Ըլայերմախերի դիրքորոշման վերաբերյալ ոչ մի կասկած լինել չի կարող: Մանավանդ որ բացատրությունը, որ հետևում է յոթերորդ կետի բնորոշմանը, նույնքան հանողիչ է և սպառիչ: «Որքանով որ լեզուն միջոց է դիտվում անհատի մտքերը արտահայտելու համար, հոգեբանականն է բարձր, որքանով որ լեզուն ընդհանուր է առանձին մտածողությունների համար և բացահայտում է իրեն դրանց միջոցով, քերականականն է վերին»<sup>158</sup>:

Այնուամենայնիվ, թեօք կասկածի տակ է դրվել: Այսպես՝ Դերմեննատիկաի երկրորդ հրատարակության հեղինակ Յայնց Քիմերլիի վերլուծական և խնբագրական աշխատանքի հիմնական դրդապատճառներից մեկը եղել է հենց այն, որ ցույց տրվի, թե Ըլայերմախերը ժամանակի ընթացքում փոխել է շեշտադրությունները և, ավելի հստակ տարբերություն դնելով մտածողության և խոսքի միջև, ծանրության կենտրոնը տեղափոխել է քերականականից հոգեբանական մեկնարանության վրա: Աշխատանքը կատարվել է Յանս-Գեորգ Գադամերի խորիրոդով<sup>159</sup>, որը և շլայերմախերյան հերմենատիկայի հոգեբանական մեկնարանության ամենացերծ և հեղինակավոր պաշտպաններից էր:

Յոգեբանական բաղկացուցչի գերազանցությունը Գադամերը բացատրում էր այն կենտրոնական տեղով, որը մտածողի աշխարհայացքում գրավում էր ազատ ստեղծագործող անհատի մասին պատկերա-

<sup>156</sup> Նույն տեղում:

<sup>157</sup> Նույն տեղում, էջ 80:

<sup>158</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>159</sup> Sieu H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, J.C.B. Mohr (Paul Siebeck), Tübingen, 1972, էջ 174-175, Anm. 2:

ցումը<sup>160</sup>: Փաստարկն այն էր, որ քերականական կառուցվածքները միշտ հենվում են ինտերսուրյեկտիվ օրինաչափությունների վրա, որոնց սխեմատիզմը գրկում է հասկացվող տեքստն իրական անկրկնելիությունից և եզակիությունից: Քերականական կանոնների ընդհանուրությունն անխուսափելիորեն բերում է նաև մեկնաբանության ընդհանուրության: Դա է պատճառը, կարծում էր Գաղամերը, որ Շլայերմախերն այդքան ուշադրություն է դարձնում *ոգեշնչման* հոգեբանական մեթոդին, որի շնորհիվ միայն մեկնաբանողը կարող է թափանցել հանձարեղ հեղինակի ներաշխարհը և իսկապես հասկանալ նրան<sup>161</sup>: Անհատականությունը միշտ խորհուրդ ունի իր մեջ, և միայն «*հոլյզը*, այսինքն անմիջական համակիր և համահանճար հասկացումը (ein unmittelbares sympathetisches und kongeniales Verstehen)»<sup>162</sup> հնարավորություն ունի հաղթահարելու այս արգելքը: Մրանով հերմենուսիկան բարձրացվում է արվեստի մակարդակի:

Շլայերմախերի հաջորդ ծրագրային թեզը, կարծես, ամրապնդում է այդ կարծիքը.

### 9. Մեկնությունը արվեստ է<sup>163</sup>:

Ուշագրավ է, սակայն, որ Շլայերմախերը նաև այս կետում հավասար ուշադրություն է դարձնում լեզվական և հոգեբանական տեսանկյուններին. «Յուրաքանչյուր կողմ իմքնին է: Քանի որ ամենուր անվերջ անորոշից կազմված վերջավոր որոշակի կառույցներ են (ընդգծումը իմն է - Ա. Ո.): Լեզուն անվերջ է, քանի որ յուրաքանչյուր տարր յուրահատուկ կերպով բնորոշվում է մյուսների միջոցով: Նույն է, սա-

<sup>160</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 176: Նկատենք, որ անդրադարձ Շլայերմախերին տրված գաղամերյան գնահատականներին չի բացառում բնադրատական մոտեցում դրանց նկատմամբ: Այսպես՝ Ֆրանկը գտնում է, որ Շլայերմախերի հղաքի գաղամերյան պատկերը թեև եւական ազդեցություն է ունեցել նորագույն հերմենուսիկայի ողջ պատմագրության վրա, «հորինվածքի դիմագիծ է ցուցաբերում», տե՛ս M. Frank, “Einleitung des Herausgebers”, in: Schleiermacher F., *Hermeneutik und Kritik*, S. 60:

<sup>161</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 177: «Ոգեշնչումը»-ը, որի համար Շլայերմախերն օգտագործում է «դիմուացիա» բառը, անմիջականորեն աղեսված է պատմական ավանդույթին: Մի կողմից, այն շեշտում է հերմենուսիկական վերստեղծման ոչ ծևական, «արվեստակերպ» բնույթը, խոհընթացը կապելով ստեղծագործական հնտուիցիայի գործունեության հետ: Սյուսից, մեկ անգամ ևս մատուամշում է շլայերմախերյան հերմենուսիկայի կապն աստվածաբանության հետ, քանի որ «divinatorisches Nachkonstruiere» աստվածաբանությունը աստվածային ոգեշնչման վրա հիմնված վերստեղծում է ենթադրում:

<sup>162</sup> Նույն տեղում, էջ 179:

<sup>163</sup> F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 80.

կայն, նաև հոգեբանական կողմը: Քանի որ անհատի ամեն մի հայեցողություն անվերջ է: ...Նմանօրինակ կառուցքը չի կարող այնպիսի կանոնների միջոցով տրված լինել, որոնք իրենց կիրառության ապահովությունը իրենց մեջ կրելիս լինեն»<sup>164</sup>:

Ինչպես տեսնում ենք, հերմենուստիկական գործունեությունն արվեստի բնույթ ունի ոչ միայն հոգեբանական միջուկի պատճառով, այլ նաև «քանի որ կանոնների հետ մեկտեղ տրված չէ նաև նրանց կիրառությունը, այսինքն՝ այն չի կարող մեխանիկական դարձվել»<sup>165</sup>: Դաջորդ կետը վերահաստատում է մեկնաբանության երկու ծների հավասարագորությունը.

**10. (Այս) արվեստին երջանիկ տիրապեսումը հեճվում է լեզվի նկատմամբ տաղանդի և առանձին մարդկանց ճամաչելու տաղանդի վրա**<sup>166</sup>:

**11. Ամեն խոսք չէ, որ հավասարապես մեկմարվեստի առարկա է: Որոշ խոսքեր որա համար գրոյական արժեք ունեն, մյուսները՝ բացարձակ:** մեծամասնությունն այս երկու կետերի միջև է գտնվում<sup>167</sup>:

Թվում է, որ տասնմեկերորդ թեզն ընդհատում է քերականականի և հոգեբանականի փոխառնչությունների քննարկումը և անդրադառնում է մեկնության առարկային: Սակայն սրան հաջորդող բացատրությունը ցույց է տալիս, որ խոսքը նույն երկուսի մասին է: Յուրաքանչյուր կողմ իր բարձրակետն ունի, բացատրում է Ըլայերմախերը,- քերականականը՝ դասականը, հոգեբանականը՝ ինքնակերպ (Originelle): Բացարձակը, սակայն, երկուսի նույնությունն է՝ հանճարեղը կամ լեզվական նախապատկերը (Urbildliche) մտքերի ընթացքում<sup>168</sup>:

Դասականը և ինքնատիպը միավորող հանճարեղ նախապատկերի տակ Ըլայերմախերը, իհարկե, նկատի ունի Աստվածաշունչը: Յենվելով «հանճարի» ռոմանտիկական հիացքի վրա, մտածողը բավական հեշտ անցում է կատարում ստեղծագործող հանճարեղ անհատից դեպի միակ իրական ստեղծագործ հանճարը՝ «բացարձակ ունիվերսումը», որի դրսու-

<sup>164</sup> Նույն տեղում, էջ 80-81:

<sup>165</sup> Նույն տեղում, էջ 81: Այն, որ հերմենուստիկական գործունեությունն «արվեստի բնույթ ունի» (Charakter der Kunst), զգուշացնում է Ըլայերմախերը, չի նշանակում, որ հասկացնամ արդյունքը արվեստի երկը պետք է լինի: Նույն տեղում:

<sup>166</sup> F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 81.

<sup>167</sup> Նույն տեղում, էջ 82:

<sup>168</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 83:

րումը համայն աշխարհն է և որի ներշնչած Սուրբ Գիրքը նախակաղապարն է ամենայն գորո<sup>169</sup>: Այդ անցման շնորհիվ միասնության և բազմազանության հիմնահարցը ևս մեկ կերպափոխություն է ապրում, և մենք նորից երկրներանքի առջև ենք հայտնվում. պէ՞տք է, արդյոք, համարել, որ Աստվածաշունչն այն միակ գիրքն է, որն իրոք արժանի է մեկնության. եթե ոչ (ակնհայտ է, որ Շլայերմախերը այդպես չի մտածում), ապա հ՞նչ հարգերության մեջ են մյուս տեքստերը Սուրբ Գրքի հետ:

Այս հարցադրումից զգվող աղերսները նույնպես դեպի ռոմանտիկական աշխարհայեցողություն են առաջնորդում: Դեռևս 1798-ին Նովալիսն իր Ծաղկափոխում նշել է. «Երբ ոգին սուրբ է, յուրաքանչյուր իսկական գիրք Աստվածաշունչն է»<sup>170</sup>: Նույն թվականի դեկտեմբերի երկուսի իր նամակում Ֆրիդրիխ Շլեզելը արձագանքում է Նովալիսին. «Ես համաձայն եմ քեզ հետ, որ Աստվածաշունչը կենտրոնական գրական ձևն է և, հետևաբար, ամեն մի գրքի իդեալը: Սակայն, որոշակի պայմանով և տարրերությամբ: Ամսագիրը, վեպը, հավաքածուն, նամակը, դրաման և այլ նույնպես պետք է որոշակի իմաստով Աստվածաշունչ լինեն, մնալով հենց այն, ինչ թելադրում են նրանց անվանումը և ոգին: Սակայն այստեղ ես նկատի ունեմ Աստվածաշունչը, որը ոչ թե որոշակի իմաստով է Աստվածաշունչ լինելու, ոչ թե իրը, այլ հենց բառացիորեն և բոլոր իմաստներով արվեստի նման տիպի ստեղծագործություններից առաջնին...»<sup>171</sup>:

Ռոմանտիկների այս երկխոսության մեջ դրսուրվում է այն հակասությունը, որն անխոսափելի էր նաև այնպիսի ազատական աստվածաբանի համար, որպիսին Շլայերմախերն էր: Որպես ազատական՝ Շլայերմախերը հիզնորին հետամուտ է լինում մշակույթի աշխարհիկ ձևերի ողջ հարստությունը պեղելու միջոցով, և այս տեսակետից, ամեն մի իսկական գիրք նրա համար ինչ-որ իմաստով Աստվածաշունչ է: Սակայն, որպես աստվածաբան, Շլայերմախերը չի կարող չընդունել, որ հավատն անհնարին է առանց անդրանցման (տրանսցենզուիսի), որի դեպքում միակ բացարձակ գիրքը մնում է բուն Աստվածաշունչը՝ վերցրած ամենաուղղակի և ոչ թե փոխարերական իմաստով: Փրկությունն այստեղ դարձյալ զարկերակման սկզբունքը կարող էր լինել, որ հնարավորություն պետք է տար Շլայերմախերին Աստվածաշունչը դիտել, մի կողմից, որպես իրականում գոյություն

<sup>169</sup> Տե՛ս H.-G. Gadamer, Եղվ. աշխ., էջ 184:

<sup>170</sup> Novalis, “Blutenstaub”, in: Athenaeum. Auswahl, S. 30.

<sup>171</sup> “Փ. Շլեգել – Նովալիս, 2.12.1798”, Յ. Շլեգել, Էստետիկա. Փիլոսոփիա. Կրիտիկա, թ. 2, ս. 409-410. «Աքենեում»-ի երրորդ գրքի առաջին պահելում Ֆ. Շլեզելը զարգացնում է այդ միտքը. «Չէ՞ որ այն, ինչ մենք բուն Աստվածաշունչ ենք անվանում, գրքերի համակարգ է: Վերջապես դա կամայական բառօգտագործում չէ: Թէ՞ անվերջ գրքի զարաֆարը սովորականներից զատելու համար կա մեկ այլ բառ, բան Աստվածաշունչը՝ կատարյալ գիրքը, բացարձակ գիրքը», տե՛ս F. Schlegel, “Ideen”, in: Athenaeum, Auswahl, էջ 233: Եվ նորից Նովալիսը. «Ո՞վ ասաց, որ Աստվածաշունչը դեռևս լրացվում է»: Մեջբերվում է ըստ Փ. Շլեգել, Էստետիկա. Փիլոսոփիա. Կրիտիկա, էջ 432:

ունեցող նախակաղապար և կատարյալ նմուշ, որից պետք է ելնել, և որին պետք է ծգտել բոլոր այլ տեքստերի արտադրության և մեկնության ընթացքում, մյուսից, որպես բացարձակ մի Գիրք, որի արժեքը մեկնողի համար անհամենատելի է մյուս բոլոր տեքստերի արժեքի հետ:

Սա նկատի ունենալով՝ Գաղամները գրում են. «Որբան էլ համընդհանուր լիներ Ծայերմախերի հերմենստիկան, այդ համընդհանրությունն, այնուամենայիկ, շոշափելի սահման ուներ: Նրա հերմենստիկան իրականում ենթադրում էր տեքստեր, որոնց հեղինակությունը հաստատված էր»<sup>172</sup>: Քանի որ Ծայերմախերի միտումը ոչ թե պատմաբանի, այլ աստվածաբանի միտում էր: «Նա ցանկանում էր սովորեցնել՝ ինչպես հասկանալ խոսքն ու գրավոր ավանդությունը, սակայն միակ՝ հավատաբանությունից ծագող, աստվածաշնչային ավանդությանն էր հանգում»<sup>173</sup>:

**12. Եթե (մեկնության քերականական և հոգերանական) երկու կողմերը կիրառվելու են ամենուր, ապա միշտ տարբեր հարաբերության մեջ**<sup>174</sup>:

**13. Մեկնության մեթոդում չկա այլ բազմազանություն, քան վերոհիշյալը (12)**<sup>175</sup>:

**14. Մեկնության մեջ արվեստաբնույթի (Kunsttmässige) և անարվեստի (Kunstlose) միջև տարբերությունը չի հեճանում ոչ հայրենի և օտարի, ոչ էլ խոսքի և գրի վրա, այլ միշտ կախված է նրանից, որ ինչ-որ քան ցանկանում են ճշգրիտ հասկանալ, մեկ այլ քան` ոչ**<sup>176</sup>:

Վճռականությունը, որով Ծայերմախերը պահանջում է մեկնության ընթացքում գերծ մնալ ամեն մի կամայականությունից (բաց տեքստով հիշեցնելով, որ ինչ-որ քան ճշգրիտ հասկանալու համար նախ պետք է ցանկանալ հասկանալ այն), թույլ է տալիս այս դրույթն անվանել «մեկնության ուսկե օրենք»: Մյուս կողմից, սակայն, այստեղ նորից դրսւորվում է Ծայերմախերի համոզմունքը միակ, ճշգրիտ մեկնությունը գտնելու հնարավորության վերաբերյալ՝ հանգանանք, որ հակասության մեջ

<sup>172</sup> H.-G. Gadamer, նշվ. աշխ., էջ 185:

<sup>173</sup> Նույն տեղում:

<sup>174</sup> F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 83.

<sup>175</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>176</sup> Նույն տեղում, էջ 91:

է մտնում ժամանակակից հերմենևստիկայի զարգացման հիմնական գծի հետ:

Յաջորդ երկու թեզերը շարունակում և խորացնում են նախորդ դրույթը, մեկ անգամ ևս շեշտելով, որ մեկնարվեստը, ինտուիտիվ ոգեշնչան վրա հենվելով հանդերձ, չպետք է իրականացվի որպես անգիտակցական խոհընթաց: Մեկնությունը բացորոշ և գիտակցական մոտեցում է պահանջում: Դրա համար էլ ավելի ճիշտ է հերմենևստիկան դասել ոչ թե արվեստների, այլ արվեստաբնույթ ուսմունքների (*Kunstlehre*) շարքին: Թեզերը հետևյալն են.

15. (Այս) արվեստի աղքատիկ փորձը ելնում է մրանից, որ հասկացումը առաջանում է իմքնին և նպատակն արտահայտում է բացասական ծնով՝ պետք է խուսափել չհասկանալուց<sup>177</sup>:

16. Յարուսակ փորձը ելնում է մրանից, որ չհասկանալն է իմքնին առաջանում, և որ յուրաքանչյուր կետում պետք է ձգտել հասկացման և փնտուել այն<sup>178</sup>.

Կարելի է տեսնել, որ հերմենևստիկական այդ հակադրությունն իր նմանակն ունի բնագիտության արդի մեթոդաբանության համար դասական դարձած վերիֆիկացման և ֆալսիֆիկացման սկզբունքների տարրերակման մեջ: Ֆալսիֆիկացման սկզբունքն ավելի «ուժեղ է», քանի որ հենվում է ծշմարտության և կեղծության ոչ համաչափ հարաբերության վրա՝ բազմաթիվ առանձին դեպքերի հաստատումը կարող է վկայել ընդհանուր դրույթի հավանականությունը, բայց ոչ հավատիությունը: Այնինչ այդ դրույթին հակասող գոմե մեկ դեպքի մատնանշումը ապացուցում է նրա կեղծ լինելը: Սեզ հետաքրքրող դեպքում հարաբերությունը շրջված է. եթե բնագիտության մեթոդաբանության մեջ նպատակը կեղծության բացահայտումն է (ընդհանուր դրույթին հակասող գոմե մեկ փաստ գտնելը), ապա մեկնարվեստում՝ տեքստի միակ ծշմարիտ իմաստը հասկանալն է, որը հետազոտողից հատուկ ջանքեր է պահանջում: Այնպես որ վերը շարադրված փոխլրացնող

<sup>177</sup> Նույն տեղում, էջ 92:

<sup>178</sup> Նույն տեղում:

դրույթներում արտահայտված գաղափարը, չնայած իր ողջ պարզությանը, տրիվիալ է:

17. Այն, ինչից պետք է խուսափել, երկակի է՝ բովանդակության որակական չհասկանալը և երանգի չհասկանալը, այսինքն՝ քանակականը<sup>179</sup>.

18. Արվեստն իր կամոնները կարող է միայն դրական բանաձևից գարգացնել, և դա «տվյալ խոսքի պատմական և ոգեշունչ (մարգարեական), օրյենկուիվ և սուրյենկուիվ վերստեղծումն է»<sup>180</sup>:

Տասնութերորդ կետն ամենահոչակավորներից է շլայերմախերյան հերմենևատիկայում և արժանի է մանրանասն քննության:

Նախ պետք է նշել, որ «դրական բանաձև» արտահայտությունը Շլայերմախերն օգտագործում է ի հակառորդություն հերմենևատիկայի աղքատիկ փորձից ելնող «բացասական սահմանման», որում շեշտը դրվում է ոչ թե հասկացման գործնական ընթացակարգերի, այլ «չհասկանալուց խուսափելու» վրա (կետ 15): Դետնաբար առաջարկված քայակ բանաձևը կարող է դիտվել որպես տասնվեցերորդ կետի հետագա բացորոշում:

Պարզաբանում է պահանջում առաջադրված չորս հասկացություններից երկրորդի կրկնակի անվանումը՝ «ոգեշունչ» (divinatorisch) և մարգարեական (profetisch): Լրացուցիչ իմաստը գալիս է Յին կտակարանից՝ մարգարեն նա է, ով իր կամքից անկախ, դարձել է աստծոն խոսքն ու կամքը մարդկանց հասցնելու միջոց՝ աստծով անգիտակցարար ոգեշնչված քարոզիչ: Սակայն մարգարեն ոչ միայն քարոզիչ է, այլև ապագան տեսնող: Այս երանգի շնորհիվ ոգեշունչ (մարգարեական) մոտեցումը գույգային հակադրություն է կազմում պատմականի (նկարագրականի) հետ և ուղղվում է ապագային, այսինքն՝ առկա վիճակի զարգացմանը.

Սրան գուգահեռ կազմավորվում է մյուս գույգային հակադրությունը՝ «օրյենկուիվ» – «սուրյենկուիվ», որտեղ առաջինը կապվում է քերականական (լեզվական) մեկնության հետ, իսկ երկրորդը՝ հոգեբանական:

<sup>179</sup> Նույն տեղում:

<sup>180</sup> Նույն տեղում, էջ 93:

Այսպիսով՝ Շլայերմախիերը ստանում է չորս հենակետային հասկացություն, որոնց զուգորդման միջոցով հերմենևտիկական վերստեղծման չորս հնարավոր տարրերակ է կազմում: Այս դրամը.

1. *Օրեեկտիվ-պատմական*, ուր խսուքը լեզվի ամբողջության մեջ հանդես է գալիս որպես լեզվի առկա վիճակի օգտագործման արդյունք,

2. *Օրյեկտիվ-ոգեշումն*, ուր խսքը հանդես է գալիս որպես լեզվի ցարգացման նոր ելակետ,

3. *Սուրբեկտիվ-պատմական՝ խոսքը դիտվում է որպես մերժին զազողության (Gemütt) փաստ,*

4. *Սուրբեկութիվ-ոգեշունչ՝ խոսքում պարունակվող մտքերը խոսողի նույնագույնականության մասին:*

Վերստեղծման առաջադրված բոլոր եղանակների համարական նիրառության ընթացքում

«Խնդիրն արտահայտվում է նաև այսպես՝ խոսքը սկզբից նույնամբ լավ, իսկ հետո ավելի լավ հասկանայ, քան ինքը՝ հեղինակը»<sup>182</sup>:

Այս առաջադրանքը նույնաբան անվերջ է, նշում է նտածողը, որքան անվերջ են անցյալն ու ապագան: Թե որքան հեռու է պետք գնալ այդ ժամապարհով, պետք է որոշվի գործնականորեն: Դա ոչ թե ընդիանուր, այլ հատուկ հերմենաստիկակի խնդիրն է<sup>183</sup>:

Այստեղ մենք հանդիպում ենք իերմեննեստիկական մտածելակերպի երկու առանցքային սկզբունքների: Առաջինը հաստատում է *իեղինակին գերազանցելու* հնարավորությունը, երկրորդը՝ ընդունում է *մեկնության անվերտությունը*:

Միանգամից պետք է ճշել, որ «խոսքը հեղինակից լավ հասկանալու» պահանջը տեքստի բովանդակության զարգացումը չէ, որ նկատի ունի: Վերջինս զիտական, բայց ոչ հերմենուստիկական ընթացք կլիմեր, հիշեցնում է Գաղամերը<sup>184</sup>: Գիտական դիրքերից է Ելել, օրինակ, Ֆիլստեն, երբ հայտարարել է, որ Կանտին ավելի լավ է հասկացել, քան վերջինս՝ ինըն իրեն: Բայց նա ենթադրում էր, որ տրամարանական ա-

<sup>181</sup> St. u. նույն տեղում, էջ 94:

<sup>182</sup> Նույն առողջության մեջ է: Այս միտոք պատկանել է Ֆրիդրիխ Շլեգելին: Շլայերմանի ժամանակաշրջանում այն է, մի քանի տարբերակներով կրկնել բազմից: Այդ մասին տես P. M. Габитова, «Универсальная герменевтика Фридриха Шлеерманахера», *Герменевтика: история и современность*, с. 76-77:

<sup>183</sup> F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 94.

<sup>184</sup> Stéphane H. G. Gadamer, *Logique et phénoménologie de l'art*, 180-184.

վարտին է հասցրել Կանտի ստեղծած փիլիսոփայական հասկացությունների համակարգը: Ծայերմախերն այլ բան է նկատի ունեցել: Ելնելով ռոմանտիկաների «համարի եսթետիկայից», նա մեկնության ենթակա տեքստի հեղինակին օժտել է անգիտակից ստեղծագործական կարողությամբ: Վերջինս ենթադրում է լեզվական կանոնների և ինտելեկտուալ կարողությունների ինտուիտիվ կիրառություն: Դերմեննետիկի խնդիրը ոչ թե բովանդակության հետագա զարգացումն է, այլ հանձարի՝ հճռաբերաբար և անգիտակցաբար կիրառած կանոնների բացորշումը: Այս իմաստով է միայն, որ մեկնիչը հեղինակին կարող է ավելի լավ հասկանալ, քան հեղինակն է իրեն հասկացել:

Ի՞նչ միջոցներով է հնարավոր բացորշել այդ հճռաբերաբար կիրառված կանոնները: Այդ մասին է հաջորդ թեզը:

19. Արվեստի կիրառության մեջ առաջընթաց ունենալու համար անհրաժեշտ է օրյենկութիվ և սուրյենկութիվ կողմերով նույնանալ հեղինակի հետ<sup>185</sup>:

Թե ինչ է նշանակում օբյեկտիվ կողմերով նույնանալ հեղինակի հետ, կարծես թե պարզ է. պետք է հաշվի առնել դարաշրջանը և անհատ հեղինակին՝ բոլոր լեզվական, պատճական, կենսագրական յուրահատկություններով հանդերձ: Սա աշխատատար գործընթաց է, բայց սկզբունքորեն իրականացնելի:

Ավելի բարդ է հեղինակի սուրյենկութիվ, հոգեբանական վիճակի հետ նույնանալու խնդիրը: Այստեղ էլ ընդհանուր առնամբ հասկանալի է, որ հոգեբանությունը պետք է հասկացվի հեղինակի կյանքի ամբողջականության հետ կապված ընդհանրական համակարգից – դա կը ուզի սուրյենկութիվ պատճական մեկնություն: Բայց խնդիրն այն է, որ Ծայերմախերը, շարժվելով դասական իդեալիզմի ծիրում, ժամանակի հետ ավելի է շեշտել «գուտ մտածողության» դերը և ընդունել մտածողության մեջ այնպիսի «ներքին մղման» առկայությունը, որն անմիջականորեն կապված չէ ներքին խոսքի հետ: Այդ խորքային բաղկացուցիչին հասնելու համար անշուշտ ոգեշնչում է պահանջվում:

Ոգեշնչումը սովորաբար դիտվում է որպես համահանճար նույնացման ակտ, որի ընթացքում մեկնիչը հաղթահարում է իր և հեղինակի

<sup>185</sup> F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 94.

միջև առկա անդունդը, ցատկ կատարում նրա հոգու խորքը, ցուցաբերելով հեղինակի հետ նույնանալու, «նրա կաշվի մեջ մտնելու» ունակություն: Այդ ժամապարհով են գնացել կյանքի փիլիսոփայության ներկայացուցիչները Դիլքայի գլխավորությամբ<sup>186</sup>:

Բայց խնդրին կարելի է նաև այլ կերպ մոտենալ: Հեղինակի ներքին մղումը կարող է հասկացվել նրա արտահայտած մտքի կոնկրետ համատեքստից – այդ դեպքում գործ ենք ունենում *սուրյեկտիվ ոգեշունչ մեկնության հետ*: Այստեղ է որ, ինչպես նշում է Մանֆրեդ Ֆրանկը, միմյանցից բաժանվում են ներ ինաստով *հոգեբանական* և *տեխնիկական* մեկնաբանությունները<sup>187</sup>: Վերջինիս վրա շլայերմախերյան հերմենուսիկայի երրորդ հրատարակիչը հասուկ ուշադրություն է դարձնում:

Տեխնիկական մեկնության յուրահատկությունն այն է, որ նրանում փաստորեն համադրված-սինթեզված են հոգեբանականը և լեզվականը: Խոսքն այնպիսի դեպքերի մասին է, երբ հեղինակն անկրկնելի բովանդակություն հաղորդելու համար լեզվական միջոցների պակաս է զգում: Քերականությունն իր բոլոր նրբերանգներով բավարար չի թվում ասելիքն արտահայտելու համար: Նման պարագաներում հեղինակը ստիպված է լինում ճկելով, զարգացնելով լեզուն, ստեղծել նոր արտահայտչամիջոցներ, որոնք թեև լեզվական են, բայց քերականական չեն<sup>188</sup>:

Դրա շնորհիվ ձևավորվում է գրողի անկրկնելի *ոճը*: Անկրկնելիությունը նրանում չէ, որ գրողի իրականացրած լեզվական կերպափոխունը չի ենթարկվում կանոնների: Պարզապես ինքնարուիս ստեղծագործական ակտի ընթացքում նոր կանոններ են բյուրեղանում: Հետազայում դրանք նկարագրվում են և հարստացնում արդեն հայտնի լեզվական միջոցների շտեմարանը: Դա հնարավորություն է տալիս խոսելու առանձին գրողների կամ նշանակալից գրական ուղղությունների (ասենք՝ կլասիցիզմի կամ ռոմանտիզմի) *ոճի* մասին: Սակայն քանի դեռ

<sup>186</sup> M. Frank, “Einleitung des Herausgebers”, in: F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 47.

<sup>187</sup> Քերականականին հակադիր մեկնության ձևը Շլայերմախերի մոտ իմաստավորման երեք փուլ է անցել սկզբից այն կոչվել է *տեխնիկական*, հետո (1819-ից սկսած)՝ *հոգեբանական*, իսկ վերջին դասախոսություններում մակարդակների ներքին, տարրերակում է մտցվել՝ այն բաժանվել է գուտ *հոգեբանականի* և *տեխնիկականի*: Տես ու P. M. Габидотова, “Универсальная герменевтика Фридриха Шлейермакхера”, в кн.: *Герменевтика: история и современность*, էջ 81:

<sup>188</sup> Նման դեպքերում ժամանակակից նշանաբանությունը սովորաբար խոսում է «երկրորդ կարգի մոդելավորող համակարգի» մասին:

կոնկրետ համատեքստում օգտագործված արտահայտչամիջոցները վերհանված և արձանագրված չեն, դրանք մնում են եզակի: Ասված է՝ ոճը մարդն է: Սա, ի միջի այլոց, նաև նշանակում է, որ լեզվի ամենագործ ներկայությունը ոչ միայն չի վերացնում սուբյեկտի ինքնավարությունը, այլև նրա դրսնորման իրական միջոցներ է ապահովում:

Եթե հեղինակի ոճն արտահայտող լեզվական կառույցն անկրկնելի է, մեկնիչն էլ ստիպված է մոտենալ նրան որպես արվեստագետ (դա է, որ նկատի է ունեցել Շլայերնախերն իր՝ մեկնությունն արվեստ հայտարարող իններորդ թեզում):

Բանն այն չէ, որ կանոններ չկան,- պարզաբանում է Ֆրանկը,- այլ այն, որ «...բացակայում են մետականոնները, որոնք իրենց մեջ պարունակելիս լինեին այդ հերմենուսիկական կանոնների կիրառությունը տվյալ խոսքի՝ որպես առանձին դեպքի վերաբերյալ: Եվ այդ տեսակետից մեկնարվեստին հատուկ է նույն այն վիճակը, որ բնորոշ է Կանտի կողմից գործառվող անդրադարձ դասողունակությանը (reflektierende Urteilskraft)»<sup>189</sup>:

Սրանից բնական հետևություն է արվում. «Խորհրդանշանները կազմակերպող ապարատը ոչ թե սերող, այլ մեկնարվանող համակարգ է»<sup>190</sup>:

Դիշեցնեմ՝ համակարգը կիամարվեր «սերող» (գեներատիվ), եթե այն պարունակեր սահմանափակ թվով կանոններ, որոնցից հնարավոր է մակարերել անսահման քանակությամբ նախադասություններ<sup>191</sup>: Բայց Ֆրանկն անհնարին է համարում անհատականացված լեզվական տեքստի հանգեցումն ընդհանուր սկզբունքներին: Նա հիշեցնում է, որ Շլայերնախերն անցում է կատարել բանականության ընդունված պատկերացումից դեպի եզակիի և ընդհանուրի դիալեկտիկական ընթրոնումը, որով «արգելվել է անհատական իմաստի հանգեցումն ընդհանուր բանականությանը»<sup>192</sup>: Եվ դա ոչ թե հրաժարում է ընդհանուրից, այլ գիտակցումն այն իրողության, որ ընդհանուրն իրեն ցուցադրում է անկրկնելի անհատականության մեջ: Այդպես ընթրնված դիալեկտիկական միասնությունը Ֆրանկն անվանում է «անհատական ընդհանուր» (individuelle

<sup>189</sup> M. Frank, *Das individuelle Allgemeine*, Suhrkamp, Ffm., 1977, S. 384.

<sup>190</sup> Նոյն տեղում, էջ 276:

<sup>191</sup> Նման համակարգ կառուցելու ամենահայտնի փորձը Ն. Խոնսկու «գեներատիվ-տրանսֆորմացիոն թերականությունն» է (*Syntactic Structures*, 1957), որը ենթադրում է, որ բոլոր մարդկային լեզվներին հատուկ են որոշ ընդհանուր, բացորոշ մկարագրելի հատկանիշներ:

<sup>192</sup> M. Frank, “Einleitung des Herausgebers”, in: F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 23.

Allgemeine)<sup>193</sup>, իսկ դրա մեկնությունը Ըլայերմախերի հետ միասին դիտում է որպես բովանդակության անընդհատ բացորդշման «անվերջ երթ» (unendliche Fahrt)<sup>194</sup>:

Մեկնաբանության անվերջության թեզի ընդունումը չի հակասում այն պարզ իրողությանը, որ յուրաքանչյուր մեկնություն, գործնական առումով, պետք է ավարտ ունենա: Դարցն այստեղ այն է, թե եթ կարող է մեկնության առանձին գործընթացն ամբողջացած համարվել: Դիշում ենք, իհարկե, որ Ըլայերմախերն այդ վճիռը վերապահում էր մասնավոր հերմենևատիկային: Բայց, նույնիսկ այդ դեպքում, անհրաժեշտ է իմանալ, թե որն է երաշչիքը, որ կոնկրետ գրության մեկնության ընթացքում հարաբերական լրիկություն է նվաճված:

Ըլայերմախերն այդ կապակցությամբ տախի է հետևյալ բացատրությունը. «Երբեք հնարավոր չէ հասնել առանձնահատուկի լրիվությանը, ուրեմն խնդիրն անվերջ է: Ինչո՞ւ կ կարող է լրիվությունը փոխարիմվել, և եթե այն նույնիսկ առկա լինի, որն է լինելու երաշխիքը, որ ներքին միասնության ըմբռնումը ճիշտ է: Երաշխիքը չի կարող մերողական կանոն լինել, այլ միայն զգացողություն. և հենց այդ զգացողությունն է, որը պետք է փոխարինի լրիվությունը»<sup>195</sup>:

Դայնց Քիմերեն հաճույքով մեջբերում է այս տողերը, քանի որ, նրա կարծիքով, զգացողության մասին խոսքն ամրապնդում է հոգեբանական գործոնի առաջնայնության նրա թեզը<sup>196</sup>: Բայց Մամֆրեդ Ֆրանկը նույնական համաձայն է Ըլայերմախերի այս ասույթի հետ: Երկու հրատարակչներն էլ հասկանում են, որ զգայական-հոլովական հայցողությունը հնարավոր չէ սպառել նրբին լեզվական և իմաստային վերլուծության միջոցով: Երկուսն էլ դիտարկում են տեխնիկական մեկնաբանությունը որպես սահմանային տարածք, որում հաշտեցվում են լեզվականը և հոգեբանականը: Բայց Քիմերեն վկայակոչում է անհատական մտածողությունը, որը միշտ ընկած է լեզվական արտահայտության հիմքում<sup>197</sup> և կարող է ճանաչվել միայն ոգեշունչ մեկնության

<sup>193</sup> Մամֆրեդ Ֆրանկի արդեն հիշատակված ուսումնասիրության վերմագիրն է:

<sup>194</sup> Բավական է հիշել ընդհանուրի շլայերմախերյան ըմբռնումը՝ որպես մեկ անհատականությունից դուրս եկող և մեկ ուրիշ սեփականությունը դարձող իրական շարժում, համոզվելու համար՝ որքան հոգեհարազատ է ֆրանկի այս մեկնությունը Ըլայերմախերի տեսակետին:

<sup>195</sup> Տե՛ս F. Schleiermacher, *Hermeneutik* (Nach d. Handschr. neu hrsg. u eingel. von H. Kümmerle), C. Winter, Heidelberg, 1959, էջ 17:

<sup>196</sup> Նույն տեղում:

<sup>197</sup> Նույն տեղում, էջ 6:

միջոցով, այնինչ Ֆրանկը արմատապես վերահմաստավորում է ողբերաշնչան հասկացությունը<sup>198</sup>: Ոգեշնչումը նրա մոտ կորցնում է անմիջական կապն օբյեկտիվ իմացության հետ (որը նույնիսկ որպես հավատի ակտ հնարավոր չէ) և վերածվում է «ոգեշնչուն սուբյեկտիվության», փաստորեն՝ ինտուիցիայի, որի խնդիրն է որոշել, թե *ինչ մեկնարանական միջոցներով է իրականացվելու կոնկրետ տեքստի հասկացումը*:

Դիրքերի միջև սահմաններն, այնուամենայնիվ, անանցանելի չեն: Պատահական չեն, որ Քիմերի ուշ աշխատանքներում գնալով ուժեղ է դառնում հետաքրքրությունը ժակ Դերիխայի «նշանային» մտածելակերպի նկատմամբ, իսկ Ֆրանկն իր *Ինքնազգացում* վերնագրված մենագրության մեջ ստիպված է լինում արձանագրել տարրական գիտակցության՝ զգացումի և նրան հետևող ռեֆլեքսիայի միջև կապի խորհրդավոր, անբացատրելի բնույթը<sup>199</sup>:

20. Ենդիմակի ժամանակաշրջամի լեզվական հայսուությունը և պատմությունը հանդես են զալիս որպես ամրող, որից նրա գրվածքները պետք է հասկացվեն որպես եզակի, և սա, իր հերթին, նրանցից<sup>200</sup>:

Այստեղ երևան է զալիս «հերմենուստիկական շրջանի» հոչակավոր գաղափարը, որը փաստորեն ներկայանում է որպես բնեօնների զարկերակման ընդհանուր սկզբունքի դրսուրում ունիվերսալ հերմենուստիկայի տիրություն: «Շրջանը» հերմենուստիկական մտածելակերպին բնորոշ ամենակայուն և տարածված փոխաբերություն-խորհրդանշներից է: Թվում է՝ այն ներքին հակասություն է պարունակում, քանի որ պահանջում է մասն ամբողջից հասկանալ, իսկ ամբողջը՝ մասից: Սակայն արդեն ինքը՝ Շլայերմախերն է գրում, որ այդ շրջանը «թվացյալ է»<sup>201</sup>: Ետապայում Ա. Դիմերը կնշի, որ գերադասելի է խոսել «հերմենուստիկական պարույրի» մասին, քանի որ բնեօններն այդ խոհընթացում ոչ միայն փոխադարձաբար ենթադրում, այլև զարգացնում են միմյանց<sup>202</sup>:

<sup>198</sup> M. Frank, “Einleitung des Herausgebers”, in: F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 47ff.

<sup>199</sup> «Այստեղ զաղտնիք է մնում. ...այնպիսի տպավորություն չի ստեղծվում, որ հասկացությունների նրբացումից զատ՝ պյորթեմի էապես ավելի խորը հասկացում նվաճված լիներ», տես և M. Frank, *Selbstgefühl*, Suhrkamp, Ffm., 2002, S. 259:

<sup>200</sup> F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, S. 95.

<sup>201</sup> Տես և նույն տեղում, էջ 95:

<sup>202</sup> A. Diemer, Աշկ. աշխ., էջ 144:

Սրան գումարվում են մեկնության «ոսկե օրենքների» շարքը համալրող երկու պատզամ, որոնք կոչված են պատմեց ծառայելու դիլետանտիզմի և ինքնավստահության դեմ:

21. Եթե որոշակի լեզվական հարստությունը միայն մեկնության ժամանակ է ձեռք բերվում բառարաններից և առանձին ծանոթագրություններից, ինքնուրույն մեկնարանությունն անհնար է<sup>203</sup>:

22. Եթե ամիրաժեշտ պատմական գիտելիքները միայն մերածություններից են քաղվում, ինքնուրույն մեկնարանությունն անհնար է<sup>204</sup>:

Նավաքածու շարադրանքն ավարտում է «հերմենևտիկական շրջանի» սկզբունքին հարող հետևյալ մեթոդական ցուցումով.

23. Եզակի գրվածքի շրջանակներում նույնպես առանձինը (*Einzelne*) կարող է միայն ամբողջից հասկացվել, և ամիրաժեշտ է, ինչուսարար, թուուցիկ մի ընթերցում ամբողջը մեկ հայացքով որսալու համար, (մի բան), որ նախորդում է ստույգ մեկնարանությանը<sup>205</sup>:

\*\*\*

Զցանկանալով խորանալ տեխնիկական մանրամասների մեջ, կարելի է Շլայերմախերի մասին խոսքն այսքանով ավարտված համարել: Մնում է մեկ անգամ ևս շեշտել, որ թեև Շլայերմախերը չհաղթահարեց միասնականի և բազմազանության համադրության մեխանիզմի մշակման հետ կապված բոլոր դժվարությունները, նրա առաջարկած նոտեցումները հանճարեղ էին: Դրա վկայությունն այն է, որ արդի փիլիսոփայական միտքը լուծումները Շլայերմախերի նախանշած ճանապարհին է փնտրում՝ դիմելով հասարակության շրջանակներում համագործակցող մարդկանց հաղորդակցման տարբեր եղանակների և միջոցների վերլուծությանը:

Շլայերմախերի վարդապետության բազմակողմանիությունը հիմք դրեց հերմենևտիկայում պարզորոշ դրսուրվող երկու միտումների համար: Առաջին, մեթոդարանական-իմացարանական ուղղության ամե-

<sup>203</sup> Նույն տեղում:


<sup>204</sup> Նույն տեղում, էջ 96:

<sup>205</sup> Նույն տեղում, էջ 97:

### **ՀԱՍԿԱՑՄԱՆ ԱԽՈՐԽԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

նավառ ներկայացուցիչն եղավ Վիլհելմ Ռիլբայը: Երկրորդ, գոյաբանական-աշխարհայացքային միտումը, սկիզբ առնելով Մարտին Շայդեգերի ստեղծագործության մեջ, իր շարունակությունը գտավ բներկութարանական դպրոցի աշխատություններում: Շամակարգված ձևով այն ներկայացրեց Շանս-Գեորգ Գաղամերը:





# ԱՐՄԵՆ

ՎԻԼԻԵԼՄ  
ԴԻԼԹԱՅ

1833 - 1911

## ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՐԻ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱ

*Nah ist nur Innres, alles andre fern.  
Und dieses Innere gedrängt und täglich  
mit allem überfüllt und ganz unsäglich,*

R. M. Rilke<sup>1</sup>

Վիլհելմ Դիլթայը կյանքի փիլիսոփայության ակադեմիական թևի ներկայացուցիչ է: Նա համարվում է առաջինը, որ մանրակրկիտ քննել է հունական գիտությունների մեթոդաբանության ստեղծման հարցը: Արդեն 1883 թվականին Դիլթայը հանդես է եկել *Ոգու մասին գիտությունների մերածություն հիմնարար երկու*<sup>2</sup>, ուր սկզբունքային հարցադրում էր արվում «բնության մասին գիտություններն» այսպես կոչված «ոգու մասին գիտություններից» տարրերակելու վերաբերյալ: Բուն տարրերակման գաղափարը Դիլթային չէր պատկանում: Դայտնի է, որ դեռևս 1858-ին այդ միտքն արտահայտել էր գերմանացի նշանավոր պատմաբան Յ. Գ. Դիլյազենը<sup>3</sup>, իսկ «ոգու մասին գիտություններ» (Geisteswissenschaften) եզրի առաջացումը կապվում է Զ. Ս. Միլի Տրամարանության համակարգի գերմանական թարգմանության հետ<sup>4</sup>: Սակայն շնորհիվ Վ. Դիլթայի այդ հարցադրումը վերաճեց հետազոտությունների մի ընդարձակ և ինքնուրույն բնագավառի, իսկ «ոգու մասին գիտություններ» արտահայտությունը լայն տարածում ստացավ:

<sup>1</sup> Միայն ներքինն է մոտ, մնացյալը հեռու է: / Եվ ներքինն այդ նեղվում է՝ օրվա անցուցարձով / լեցու թիւններամ: Անասեի է այս: / Ռ. Մ. Ռիլկե

<sup>2</sup> W. Dilthey, “Einleitung in die Geisteswissenschaften. Versuch einer Grundlegung für das Studium der Gesellschaft und der Geschichte. Erster Band”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften* (հետազոյում՝ WDGS), B. 1, Verlag von Teubner, Leipzig und Berlin, 1922.

<sup>3</sup> Տ՛ ս և K.-O. Apel, *Die Erklären: Verstehen – Kontroverse in transzentalpragmatischer Sicht.*, Suhrkamp, Ffm., 1979, էջ 15:

<sup>4</sup> Տ՛ ս և Г. Х. ֆոն Բրիտ, *Логико-философские исследования*, Прогресс, М., 1986, էջ 199:

Ներածությունը բացվում է կոնս Պաուլ Յորք ֆոն Վարթենբուրգին նվիրված հետևյալ տողերով. «Մեր առաջին զրոյցներից մեկի ընթացքում ես զարգացրել եմ Զեր առջև նախագիծը մի գրքի, որ դեռ այն ժամանակ համարձակվեցի Պատմական բանականության քննադատություն անվանել<sup>5</sup>: Այս նվիրումն իմքնին խոսուն է, քանի որ միանգամից ուրվագծում է Վ. Դիլթի վերաբերմունքը նոր ժամանակի փիլիսոփայական մտածողության հանգուցակետի՝ Ի. Կանտի ուսմունքի հանդեպ:

Դիլթայն ընդհանրապես չէր խուսափում ազդեցություններից: Նրա հոգևոր հայրերի թվում էին Ֆ. Շլայերմախերը և Օ. Կոնտը, Ա. Շոպենհաուսերը և Է. ֆոն Շարժմանը. Նրա փիլիսոփայության աղերսները ծգվում էին մինչև պողիտիվիզմ և ռոմանտիզմ: Սակայն Վ. Դիլթայի յուրահատուկ ուսմունքի ծևավորման համար վճռական նշանակություն է ունեցել երկու հակադիր միտում՝ գերմանական դասական իդեալիզմը (նախ և առաջ՝ կանույան կրիտիկիզմը) և գերմանական պատմական դպրոցը, որի ակունքների մոտ կանգնած էին Յ. Վինկելմանը և Յ. Շերները:

Որպես մշակույթի պատմաբան՝ Վ. Դիլթայը հետևում էր պատմական դպրոցի այնպիսի նշանավոր ներկայացուցիչների, որպիսիք էին Յ. Գրոյզենը և Լ. ֆոն Ռամկեն, փորձելով գործնականում իրականացնել վերջինիս առաջադրած սկզբունքը՝ «Ներկայացնել պատմությունն այնպես, ինչպես որ այն կա»<sup>6</sup>: Սակայն Դիլթայը նաև գիտակցում էր, որ այդպիսի մոտեցման բացարձակացումը ռելյատիվիզմի վտանգ է պարունակում: Մշակույթի առանձին օբյեկտների պատմական նկարագրությամբ սահմանափակվելու դեպքում հումանիտար ուսումնասիրության ոլորտը չէր կարող բավարարել համընդհանրության և անհրաժեշտության այն պահանջները, որոնք Վ. Դիլթայը, հետևելով Կանտին, գիտականության ընդունված չափանիշներ էր համարում: Այդ

<sup>5</sup> W. Dilthey, “Einleitung in die Geisteswissenschaften. Versuch einer Grundlegung für das Studium der Gesellschaft und der Geschichte. Erster Band”, in: WDGS, B. 1, S. IX. Ավելորդ չի լինի նշել, որ կոնս Յորքի հետ զրոյցները ընդհանրապես մեծ նշանակություն են ունեցել Դիլթայի ուսմունքի ծևավորման մեջ: Կոնս Պ. Յորք ֆոն Վարթենբուրգի հայացըների մասին տես ս H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, 1972, էջ 237-240:

<sup>6</sup> Տես ս. Bönnisch, *Untersuchung zur “hermeneutischen” Linie im spätbürgerlichen philosophischen Denken unter besonderer Berücksichtigung des Verhältnisses von Erkennen und Handeln*, Akademie der Gesellschaftswissenschaften, Berlin, 1980, էջ 20:

իսկ պատճառով Ներածության հեղինակը մտադրվում է ի. Կանտի քննադատական աշխատանքը շարունակել հումանիտար գիտությունների ոլորտում, զուտ բանականության քննադատությունը լրացնելով պատճական բանականության քննադատությամբ:

Ոգու մասին գիտությունների խնդիրը, ըստ Դիլթայի, պատճական-հասարակական իրականության եզակի, անհատական երևույթների վերհանումն է, նրանց նկարագրություններում նույնաձևության բացահայտումը և հետագա պատկերման նպատակների ու կանոնների ամրագրումը<sup>7</sup>: Այս գործունեությունը, բնականաբար, հնարավոր չէ առանց վերլուծական աշխատանքի, վերացարկումների, հատուկ ստեղծված հասկացությունների (KunstbegriFFE) կիրառման: Սակայն վերացական արտահայտությունները, որոնք, անտեսելով ուսումնասիրվող օբյեկտի ինչ-ինչ կողմեր, զարգացնում են մյուսները, կարող են միայն միջոց հանդիսանալ ոգու մասին գիտությունների համար և ոչ երեք նպատակ: Նրանք թերի են և միակողմանի: Նույնքան թերի է օբյեկտի փաստական նկարագրությունը: Պայքարը վերացական և պատճական դպրոցների միջև անպտուղ է: Յուրաքանչյուր առանձին հումանիտար գիտություն առաջանում է միայն պատճական-հասարակական իրականությունից հատուկ հասկացությունների միջոցով քաղված մասնակի բովանդակության հիման վրա<sup>8</sup>: Ենտևաբար, յուրաքանչյուր այդպիսի գիտություն միայն հարաբերականորեն՝ մյուս գիտությունների հետ ունեցած իր կապերի մեջ վերցրած կարող է ներկայացնել հասարակական-պատճական իրականության ընդհանրացված պատկերը<sup>9</sup>: Ոգու մասին առանձին գիտությունների միջև եղած կապերի և հարաբերությունների իմաստավորման անհրաժեշտությունից ելնելով, Դիլթայն առաջադրում է դրանց իմացարբանական հիմնավորման խնդիրը<sup>10</sup>: Այդ հիմնավորումն իրականացվելու էր իմացության տեսության և տրամաբանության այնպիսի մի միասնության հիման վրա, երբ ինքը՝ տրամաբանությունը, հանդես է գալիս որպես ուսմունք մեթոդի մասին (Methodenlehre)<sup>11</sup>: Նախկին՝ ծևական տրամաբանությունն իրավասու էր գործելու միայն շարադիր (դիսկուրսիվ) մտածողության շրջանակնե-

<sup>7</sup> Տե՛ս WDGS, B. 1, էջ 27:

<sup>8</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 27-28:

<sup>9</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 28:

<sup>10</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 116:

<sup>11</sup> Տե՛ս նոյն տեղում:

րում, քանի որ վերանում էր համոզնունքի ներքին գգացողությունից (Überzeugungsgefühl), բավարարվելով դատողությունների և մտահանգումների ուսումնասիրությանը: Քննադատական մտածողության պահանջներին համապատասխանելու համար տրամարանությունը պետք է ընդլայնի վերլուծության ոլորտը, դուրս գալով շարադիր մտածողության սահմաններից: Նա պետք է ներառի հետազոտության այն բնագավառները, որոնք Կանտն առանձնացրել է որպես տրամացենդենտալ էսթետիկա և անալիտիկա, այսինքն՝ անդրադառնա շարադիր մտածողության հիմքում ընկած մտային փոխկապվածություններին (Denkzusammenhänge)<sup>12</sup>: Տրամարանության առաջարկված ընդլայնումը պետք է ընթանա այն ուղղությամբ, որ նախագծել էր Հելմհոլցը, «անգիտակցական մտահանգման» հասկացությունը ներճուծելով<sup>13</sup>: «Այսպիսով՝ տրամարանությունը հաստատվում է որպես միջնորդ օդակ իմացարանական հիմնավորման և առանձին գիտությունների միջև, դրանով իսկ առաջ է զայխ ժամանակակից գիտության այնպիսի մի ներքին փոխկապվածություն, որ պետք է գրավի մեր իմացության հին մետաֆիզիկական փոխկապվածության տեղը»<sup>14</sup>:

Ներածութան առաջին հաստորում Վ. Դիլայը փաստորեն չիրականացրեց իր առջև դրված խնդիրը: Այն ավելի շատ «ներածության ներածություն» էր, որի նպատակն էր փիլիսոփայական մտքի զարգանան պատմության մանրակրկիտ վերլուծության հիման վրա ցույց տալ, որ գոյություն ունեցող մետաֆիզիկան անկարող է հանդես գալ որպես ոգու մասին գիտությունների մերօդաբանություն: Դիլայը իր երկասիրությունը մտադրվել էր լրացնել երկրորդ հաստորով, ուր պետք է իրականացներ հարցի պատմական և իմացարանական վերլուծությունը: «Քանի որ մտավոր զարգացման պատմությունն արևի պայծառ լույսի տակ ցույց է տալիս աճն այն նույն ծառի, որի արմատները գետնի տակ իմացարանական հիմնավորում են գտնում»<sup>15</sup>:

Այդպիսի մի փորձ նա կատարել է 1897-ին, և մեկը՝ 1907-ին: Երկրորդ հաստորն այդպես էլ լույս աշխարհ չեկավ: Սակայն Դիլայը իր հետնորդներին թողեց հարցի մշակմանը նվիրված բազմաթիվ այլ գործեր, հատվածներ, պատարիկներ, գրառումներ, որոնք կարելի է դիտել

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 117:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 118:

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 119:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 20:

որպես Ներածությունը շարունակելու անվերջանալի մի փորձ: Փորձն այդ չամբողջացավ, քանի որ Դիլթայի հայացքները տարիների ընթացքում զգալի փոփոխություններ կրեցին:

Վ. Դիլթայի ինտելեկտուալ զարգացումը նպատակի, արժեքային ուղղվածության և մտածելակերպի միասնությամբ հանդերձ բաժանվում է երկու հիմնական շրջանի, որոնց ընդունված է անվանել հոգեբանական և հակահոգեբանական կամ հոգևոր<sup>16</sup>:

Առաջին շրջանին պատկանող գաղափարները համակարգված արտահայտվել են Յոզեփ աշխարհ. կյամքի փիլիսոփայության ներածություն աշխատության մեջ<sup>17</sup>: Այստեղ ժողովված առանձին գործերը շաղկապված են մեկ ընդհանրական միտունով՝ նրանց նպատակը բացադրող և հասկացող գիտությունների սկզբունքային՝ իմացարանական տարրերության հաստատումն է:

Բացատրող գիտությունները (erklärende Wissenschaften), ըստ Դիլթայի, միշտ ելնում են միանշանակ որոշված տարրերի սահմանափակ քանակությունից (ամբողջության մասերից), փորձելով դրանք հասկանալ պատճառական կապերի միջոցով: Նրանք վարկածներ են առաջադրում, որոնք հետագայում հաստատվում կամ հերքվում են: Յուրաքանչյուր բացատրող գիտության հիմքում վարկածների համակցություն է ընկած: Գիտության այդ իդեալն առաջացել է ատոմիստական ֆիզիկայի զարգացման շնորհիվ<sup>18</sup>: Այն հասուն է բնագիտությանը, քանի որ վերջինս գործառում է արտաքին ընկալումներից բաղկացած տարրերը, նպատակ ունենալով այդ տարրերի կարգավորումը:

Հասկացող գիտությունների (verstehende Wissenschaften) կարգավիճակը սկզբունքորեն այլ է: «Յոզեփ կյանքի փոխկապվածությունը, որպես ի սկզբանե տրված միասնություն, մշտապես ընկած է սրանց հիմքում: Եթե բնագիտության համար միասնությունը նպատակ է, ապա հումանիտար ոլորտի համար՝ անմիջականորեն վերապրվող ելակետ: Այդ է պատճառը, որ «Բնությունը մենք բացատրում ենք, հոգևոր կյանքը՝ հասկանում»<sup>19</sup>:

<sup>16</sup> Տե՛ս, օրինակ, A. Diemer, *Elementarkurs Philosophie: Hermeneutik*, Düsseldorf, Wien, 1977, էջ 80:

<sup>17</sup> W. Dilthey, “Die geistige Welt: Einleitung in die Philosophie des Lebens”, in: WDGS, B. 5, L. ս. B., 1924.

<sup>18</sup> Տե՛ս ո նույն տեղում, էջ 139-140:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 143:

Բնական և հասարակական գիտությունների տարբերությունն էապես պայմանավորված է դրանց առարկաների տարրերությամբ. առաջինի ոլորտը արտաքին աշխարհն է, երկրորդինը՝ ներքինը: Ահա այդ թեզի հակիրծ, համարյա աֆորիստիկ ծևակերպումը. «Բնությունը մեզ համար օտար է: Քանի որ այն արտաքինն է, ոչ ներքինը: Յասարակությունն է մեր աշխարհը»<sup>20</sup>:

Վերջին միտքը չափազանց կարևոր է «պատմական ապրիորիի» այս անխոնջ հետազոտողի հարցադրումը ճշգրիտ ընկալելու համար: Ծիշտ չեր լինի կարծել, որ հոգնոր կյանքի վերապրումը դնելով «ոգու մասին գիտությունների» հիմքում, Դիլթայը դրանց մեթոդաբանությունն ամբողջությամբ հանգեցնում է իռացիոնալ հայեցողությանը: Այդպիսի դիրքորոշման համար նրա մտածողությունը չափազանց ակադեմիական էր և «չափազանց գերմանական»: Մենք արդեն գիտենք, որ Դիլթայը բոլորովին էլ չէր ժխտում հասուլ ստեղծված հասկացությունների (KunstbegriFFE) դերը հումանիտար իմացության ընթացքում: Յասկացող գիտությունները չեն սպառվում վերապրումով: Դրանց նպատակը վերապրման և առանձին հասարակական գիտություններում ծևավորվող պատմանշակութային նյութի անընդհատ փոխհարաբերումն է: Ինկ այդ պրոցեսը մանրակրկիտ վերլուծություն և ռացիոնալ նկարագրություն է ենթադրում: Մարդու աշխարհը՝ պատմության աշխարհը, առաջին պահն է մոլում: «Ամեն մի իսկական փիլիսոփա իր մեթոդի շնորհիվ է այդպիսին, ...նորն իմ մեթոդում այն է,- գրում է Դիլթայը,- որ ես մարդու ուսումնասիրությունը կապեցի պատմության հետ»<sup>21</sup>:

Արձանագրությունը պատահական չէ. հայտնի է, որ Վ. Դիլթայը մշակույթի փայլում պատմաբան էր: Յետագայում Յայնրիխ Ռիկերտը նրան «ավելի պատմաբան, քան փիլիսոփա» կանվանի<sup>22</sup>: Սակայն այդ գնահատականը պետք է վերապահումով ընդունել: Թերևս իրավացի է Մ. Մարքվարդտը, նշելով, որ Դիլթայի փիլիսոփայության հիմնական հասկացությունների իմաստներն ու գործառույթները պատմական խորից են բացորոշվում<sup>23</sup>:

<sup>20</sup> WDGS, B. 1, S. 36.

<sup>21</sup> WDGS, B. 5, S. XLIX-L.

<sup>22</sup> Տէ՛ս Գ. Ռիկերտ, *Философия жизни*, Ника-Центր, К., 1998, էջ 311:

<sup>23</sup> Տէ՛ս M. Marquardt, “Einleitung”, in: W. Dilthey, *Aufsätze zur Philosophie*, Union, Berlin (Verlag Werner Dausien, Hanau), 1986, էջ 9:

Պատմության հետազոտության ընթացքում հոգեկան կյանքի միասնությունը վճռական, իմացարանական նշանակություն ունի: «Առանց հոգեկան փոխկապվածությունների հետ ունեցած իրենց հարաբերության ոգու մասին գիտությունները ազրեգատ են, կապուկ (Bündel), բայց ոչ համակարգ»<sup>24</sup>: Քանի որ հումանիտար ոլորտին պատկանող բոլոր գիտությունների առարկաները՝ տնտեսությունը, իրավունքը, կրոնը, արվեստը և այլն, հենվում են հոգեկան փոխկապվածության նախնական միասնության վրա, գտնում է Դիլթայը, ապա դրանց բոլորի իմացարանական հիմքը կարող է հանգեցվել նիկնույն արմատին<sup>25</sup>: Եվ այդ արմատը հոգեբանական է:

Դիլթայի շրջադարձը դեպի հոգեբանություն անսպասելի համարել չի կարելի: Սենք իիշում ենք, թե ինչպես, տրամարանությունը մեկնաբանելով որպես մեթոդաբանություն, Դիլթայը համոզմունքի ներքին զգացողություն էր պահանջում դրանից: Բնական է, որ այդպես ընթոնված տրամարանությունը լուծվելու էր հոգեբանության մեջ: Զարմանալի չէ, ուրեմն, որ Վ. Դիլթայը Վճռականորեն մերժում է իմացարանության հակահոգեբանական դպրոցի դիրքորորշումը: Իմացության տեսությունն ինքնին վերցրած կարող է իհարկե ենթադրել հոգեկան փոխկապվածություններ, օգտագործել դրանք: Սակայն նա ի վիճակի չէ վերահսկելու այդ փոխկապվածությունները:

Այստեղ նկատելի են դառնում Վ. Դիլթայի տարածայնությունները Կանտի և նորկանտականության հետ: Դրա ցայտուն դրսևորումն եղավ այն բանավեճը, որ ծավալվեց 1894-1896 թթ. Վ. Դիլթայի և նորկանտականության բաղենյան դպրոցի հիմնադիր Վ. Վինդելբանդի միջև<sup>26</sup>:

Վ. Վինդելբանդը, 1894 թվի իր ռեկտորական ճառում<sup>27</sup> լայն հասարակայնության առաջին անգամ ներկայացնելով պատմական և բնական գիտությունների դասակարգման իր սեփական տարրերակը, հակիմը, բայց ազրեցի քննադատության ենթարկեց Դիլթայի հայացքները: Ոգու մասին գիտությունների ներածության հեղինակին ուղղված հիմնական առարկությունները հետևյալն էին:

<sup>24</sup> WDGS, B. 5, S. 148.

<sup>25</sup> Տե՛ս և նույն տեղում, էջ 149:

<sup>26</sup> Բաղենցիների վերաբերմունքը Դիլթայի ուսմունքի նկատմամբ հետազայում իր արտահայտությունը գտավ Յ. Ռիկերտի՝ արդեն հիշատակված Կյանքի վիլիտսկայությունը աշխատության մեջ:

<sup>27</sup> В. Виндельбанд, “История и естествознание”, Прелюдии. Философские статьи и рецензии, Изд. Д. Е. Жуковского, СПб, 1904.

Հիմքը, որից մակաբերվում է գիտությունների դիլքայյան դիխոտոմիան, ինքնին հեղիեղուկ է: Մրանց առարկաների՝ բնության և ոգու հակադրությունը հենվում է արտաքին և ներքին ընկալումների Զ. Լոկի ծևակերպած հակադրության վրա: Սակայն, ժամանակակից իմացարանությունն, ըստ Վինդելբանդի, կասկածի տակ է դնում «ներքին ընկալումը» իմացության ինքնուրույն ծն ընդունելու հիմնավորվածությունը:

Դամընդիանուր ճանաչում չի գտել նաև այն կարծիք՝ իր այսպես կոչված ոգու մասին գիտությունների փաստերը ելնում են բացառապես ներքին ընկալումից:

Եվ վերջապես, բաժանման ծևական և առարկայական սկզբունքները փոխհամապատասխանեցված չեն. հաշվից դուրս է մնում այնպիսի մի բնագավառ, որպիսին հոգեբանությունն է: Ըստ առարկայի՝ այն պետք է որ պատկաներ ոգու մասին գիտություններին, բայց իր մեթոդաբանական միջոցներով և հնարներով որոշակիորեն հարում է բնագիտությանը<sup>28</sup>.

Վինդելբանդն իր հերթին առաջարկում է հրաժարվել գիտություններն ըստ առարկայի տարբերակելուց (քանի որ ելակետային փաստերը, նոր կարծիքով, չեզոք են և նոյնատիպ երկու դեպքում էլ) և դասակարգումն իրականացնել զուտ ծևական հիմքի վրա՝ ըստ մեթոդների: Ելնելով դրանից՝ նա առանձնացնում է «նոմոտետիկ»՝ օրենք արձանագրող և «հիդրորաֆիկ»՝ առանձին իրադարձություններ նկարագրող գիտություններ՝ Իդիոգրաֆիկ գիտությունների բովանդակությունը, իհարկե, չի սպառչում անհատականացված օբյեկտների ներկայացմանը, այլապես նրանք կզրկվեին իրենց առարկայից, իսկ բարենցիների ուսմունքը կժառանգեր «պատմական դպրոցի» բոլոր մեթոդաբանական արատները: Վինդելբանդը, որն «առավել կանտական» էր, քան Դիլքայը, չէր կասկածում, որ փաստական նկարագրությունների անհրաժեշտությունն ու համընդհանրությունն ապահովելու համար իմացարանական հիմնավորում է պահանջվում: Սակայն, ի տարբերություն «հոգևոր աշխարհի...» հեղինակի, նա այդ հիմնավորումը վնատրում էր ոչ թե սուբյեկտիվի (հոգեկան կյանքի ամբողջության), այլ օբյեկտիվի ոլորտում, վերջինիս տակ հասկանալով «գոյություն չունեցող», բայց մշակույթի համար «նշանակալի» նորմերի՝ արժեքների ամբողջությունը:

<sup>28</sup>Տե՛ս նոյն տեղում, էջ 316-317:

<sup>29</sup>Նոյն տեղում, էջ 320:

նը: Նմանությունը կանույան ապրիորիին այստեղ լիակատար էր: Յետազգում այդ գաղափարն իր մանրամասն հիմնավորումն ու մշակումն էր ստանալու Վ. Վինդելբանդի հավատարիմ աշակերտ և զինակից Յ. Ռիկերտի բազմաթիվ աշխատություններում<sup>30</sup>: Վերջինս նաև գործածության մեջ է նոցրել «մշակույթի մասին գիտություններ» արտահայտությունը:

Դիլբայը հիմնադագին է ընդունում քննադատությունը: Նրա պատասխանը պատրաստ էր արդեն 1895-ին<sup>31</sup>: Դիլբայի ուշադրության կենտրոնում էր ամենակնճռոտ և ամենակարևոր հարցը՝ ներքին և արտաքին ոլորտների հստակ տարրերակման չափանիշների հիմնավորվածությունը:

Նորկանտականները ելնում էին զգայությունների չեզոքության գաղափարից, իմացական ամբողջ ակտիվությունը վերագրելով ռացիոնալ սկզբունքին: Դիլբայն աշխատում է ցույց տալ, որ այդ բյուրիմացության արմատները գալիս են Կանտից: «Կանտն իր ոչ մի հայտնագործությանն այնքան նշանակություն չէր տալիս,- գրում է նա,- որքան հայեցողության և մտածողության բնույթի ու սկզբունքների խստիվ տարրերակմանը: Սակայն այն բանում, որ նա հայեցողություն է անվանում, առկա են ամենուրեք մտային պրոցեսներ կամ դրանց համարժեք ակտեր: ...Եվ ամբողջ շարադիր մտածողությունը կարող է որպես այդ լոեցյալ (schweigenden) մտային պրոցեսների բարձրագույն աստիճանը ներկայացվել»<sup>32</sup>:

Դիլբայն այստեղ հազիվ թե իրավացի է Կանտի հանդեպ: Կանտի ուսմունքը զգայականության մասին առնվազն բազմիմաստ է և տարբեր մեկնաբանությունների տեղիք է տալիս: Զգայականության պրոբլեմին նվիրված տրանսցենտնտալ էրետիկան հնարավոր չէ հասկանալ առանց հայեցողության ապրիորի ծների ներգրավման, իսկ վերջիններս, հանդես գալով ակտիվ, ծնավորող սկզբունքների դերում, կասկածի տակ են դնում զգայականության, այսինքն՝ արտաքին տպավո-

<sup>30</sup> Տե՛ս, օրինակ, Γ. Ռիկերտ, *Науки о природе и науки о культуре*, Образование, СПб, 1911:

<sup>31</sup> Սկզբնապես այն կրում էր ՝ամենատական հոգեբանության մասին վերնագիրը: Սակայն գործի հրապարակումը ծգծվում է, և միայն հաջորդ տարի «Անհատականության ուսումնավորության հարցի շուրջը» (Beiträge zum Studium der Individualität) խորագույք լույս է տեսմուն այդ աշխատության մի մասը: Տե՛ս WDGS, B. 5, էջ 292: Այդ հարցի վերաբերյալ Դիլբայը բոլոր մշակումները, դրույթները և փաստարկները գետեղված են միևնույն հինգերորդ հատորում:

<sup>32</sup> WDGS, B. 5, S. 149.

րություններ ստանալու ունակության ամենավճռորոշ բնորոշիչը՝ կրավորականությունը, պասիվ հարաբերությունն օբյեկտին: Առաջանում է ներքին մի հակասություն՝, որից կարելի է խոլոյ տալ երկու ծանապարհով՝ հայեցողությունը տարրալուծել մտածողության մեջ, կամ, ընդհակառակը, մտածողությունը դիտել որպես բարձր աստիճանի վրա իրականացվող հայեցողություն: Առաջին ծանապարհով գնաց գերմանական իդեալիզմը, իսկ այնուհետև՝ նորկանտականությունը: Ընդ որում՝ այս հարցում տարրերությունները մարրուրգյան և բադենյան դպրոցների միջև սկզբունքային չեն. «...հայեցողությունն ինացության մեջ չի մնում այլևս մտածողությանը հակադիր և հակադրված, որպես վերջինիս համար օտար մի գործոն,- գրել է Պ. Նատորպը,- այն մտածողություն է, բայց ոչ թե օրենքի պարզ մտածողություն, այլ առարկայի լրիվ մտածողություն»<sup>33</sup>: Այդպիսի մոտեցման դեպքում հայեցողության ապրիորիտից ձերբազատված զգայական նյութին իսկապես միայն չեղոք տարրերի դերն էր համապատասխանում:

Դիլբայը (համենայն դեպք վաղ Դիլբայը) ընտրեց հակառակ ծանապարհը: Կյանքի փիլիսոփայության այդ նշանավոր ներկայացուցչի համար հայեցողությունն ինքնին լեցուն էր կյանքով և մանրազմին ուսումնասիրության կարիք ուներ: Այստեղից էլ նրա ուսմունքը զգայությունների մասին, այստեղից՝ ներքին և արտաքին փորձի տարրերակումը:

Դիլբայը մատնանշում է (և դա չափազանց կարևոր է նրան ծիշտ հասկանալու համար), որ բնության և ոգու մասին գիտությունների տարրերակումը հենվում է ֆիզիկական և հոգևոր փաստերի և ոչ թե համապատասխան օբյեկտների տարրերության վրա: Բնական և հոգևոր օբյեկտների միջև ոչ մի տարրերություն չկա<sup>35</sup>: Օբյեկտի հասկացությունն ինքնին պայմանավորված է նրանով, որ զգայական տպավորություններն ի մի բերվելով, հարաբերության մեջ են դրվում «արտաքինի» հետ և հակադրվում են ես-ին՝ որպես նրանից անկախ գոյություն ունեցող մի ամբողջություն: Այդ ձևով առաջացած օբյեկտների ճնշող մեծամասնությունը կարող է միավորվել մեկ ընդհանրա-

<sup>33</sup> Հայեցողության կանույան ըմբռնման ներքին հակասականության մասին ավելի մանրանան տես և Լ. Աճրամյան, *Кантона философия математики. Старые и новые споры*, Айастан, Еր., 1978:

<sup>34</sup> Պ. Նատորպ, “Кант и Марбургская школа”, в кн.: *Новые идеи в философии*, 5, О образование, СПб, 1913, с. 108.

<sup>35</sup> WDGS, B. 5, S. 248.

կան փոխկապակցության մեջ, որը մենք բնություն ենք անվանում<sup>36</sup>: Ընդ որում՝ Դիլբայը կասկածի տակ չի դնում օրյեկտիվ իրականության գոյությունն ինքնին<sup>37</sup>: Բայց նա համարում է, որ սուբյեկտից անկախ իրականությունը մարդուն կարող է տրված լինել միայն զգայական տպավորությունների միջոցով, և, հետևաբար, «սեփական ես-ը օրյեկտի անքակտելի կորելատն է հանդիսանում»<sup>38</sup>:

Այս երկու կորելատիվ ոլորտների հակադրությունից բխում է փորձի տարրեր՝ արտաքին և ներքին տեսակների զանազանման անհրաժեշտությունը: Դիլբայը սկսում է ընկալումների (Wahrnehmungen) վերլուծությունից: Արտաքին ընկալումն սահմանելով որպես ընթացք, որում զգայական տպավորությունները կապվում են ես-ից տարրերակված ամբողջության հետ, նա ընդլայնում է այդ պատկերացումը, ներմուծելով արտաքին փորձի հասկացությունը: Վերջինս ենթադրում է արտաքին ընկալումների կարգավորում շարադիր մտածողության միջոցով<sup>39</sup>: Արտաքին փորձը, այսպիսով, զգալիորեն տարրերվում է «զուտ զգայականությունից», ընդհուպ մոտենալով այն իմացական կազմավորմանը, որին ժամանակակից մեթոդաբանությունը «գիտելիքի ենակիրիկ մակարդակ» է անվանում: Մյուս կողմից, աչքի է զարմում նաև արտաքին փորձի և բնության հասկացությունների նմանությունը, որը զարմանք չպետք է հարուցի, եթե իշենք, որ բնությունը կանոյան ավանդություն ոչ այլ ինչ է, քան օրյեկտիվացված պատկերացում:

Արտաքին փաստերից տարրերվում են ներքին պրոցեսները և երևույթները, որոնց ընդհանրական հատկանիշը նեգատիվ է՝ սրանք հարաբերված չեն արտաքինի հետ<sup>40</sup>: Այդպիսի ներքին փաստերից են հույզերը, մտածողության և կամեցողության ակտերը<sup>41</sup>: Եթե մեր ուշադրությունը կենտրոնացնում ենք ներքին պրոցեսների և իրադարձությունների վրա, առաջ են գալիս ներքին ընկալումներ: Այդ ներքին

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>37</sup> Արտաքին աշխարհի ռեալության իմմագործանը Վ. Դիլբայը առանձին աշխատություն է նվիրել: Նրա փաստարկների վերլուծությունը տե՛ս և Լ. Գ. Իօնին, *Պոնիմաօպայ Հոգուոլոգիա*, Խաչա, Մ., 1979, էջ 20-21:

<sup>38</sup> WDGS, B. 5, S. 248. Պետք է նշեն, որ բնությունը իմբնագիտակցության կորելատ հայտարարելով՝ Դիլբայը ոչ մի անհանգստություն չի դրստրում բնապիտության կարգավիճակի վերաբերյալ: Այդ հանգամանքը, ըստ նրա, ոչ մի նշանակություն չունի բնական գիտությունների համակարգի իմբնալույնության համար (նույն տեղում, էջ 249):

<sup>39</sup> Տե՛ս WDGS, B. 5, էջ 243:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>41</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 244:

փաստերի յուրահատկությունն այն է, որ դրանք, մի կողմից հարաբերված լինելով գիտակցությանը, մյուս կողմից պահպանում են իրենց որոշակի կապերն արտաքին ընկալումների հետ: Վերջիններս կազմում են ներքին ընկալումների մշտապես առկա հիմքը, և նույնիսկ այն ժամանակ, եթե մեր ուշադրությունը ներքին պրոցեսներին է ուղղված, նրանց հարաբերվածությունը օբյեկտներին (Objektbildern) մնում է գիտակցության մեջ<sup>42</sup>: Ներքին ընկալումների (փաստերի) մասին պատկերացումն իր հերթին ընդհանրացվում է ներքին փորձի հասկացության մեջ: Ներքին փորձը ներքին փաստերի շարադիր մտածողության միջոցով հրականացված այնպիսի միավորում է, որը նպաստում է ներքին աշխարհի իմացության ընդլայնմանը<sup>43</sup>: Ներքին փորձի հասկացության տեսական նշանակությունը, ըստ Դիլբայի, այն է, որ շնորհիվ նրա հնարավոր է դառնում «սեփական անհատական հոգեկան փոխկապակցության ըմբռնումը»<sup>44</sup>:

Սակայն գիտակցության ֆենոմենների փոխկապակցությունները ներքին փորձով չեն սպառվում: Բանն այն է, որ վերջինս անզոր է լուծելու օբյեկտ-պատկերացումների, այսինքն վերոհիշյալ՝ կանոյան իմաստով օբյեկտների (Objektvorstellungen) ներքին իմաստավորման հարցը: Դիլբայը ստիպված է գաղափար մտցնել փորձի մի երրորդ, «միջնորդ» դասի մասին: Դա այն հոգևոր ընթացքներն են, որոնք գործում են օբյեկտ-պատկերացումների կազմավորման ժամանակ: Դեռևս կանոնական կանոնական առաջնային այդ ընթացքները տրանսցենդենտալ է համարում, սակայն նշում է, որ այդ տրանսցենդենտալ ռեֆլեքսիան անմիջական կապի մեջ է հոգեբանության և պսիխոֆիզիկայի հետ<sup>45</sup>: Այսպիսով՝ կանոյան ապրիորին յուրահատուկ մեկնարանություն է ստանում: Դիլբայն ընդգծում է, որ երրորդ դասին պատկանող պրոցեսները, տրանսցենդենտալ լինելով հանդերձ, շարունակում են փորձ մնալ, քանի որ այստեղ «փորձի մեկնությունը և համընդիմանուր օրինաչափ կապերի վերհանումը սակավ անջատելի են միմյանցից, քան դա տեղի ունի արտաքին կամ ներքին փորձի ուսումնասիրության ժամանակ»<sup>46</sup>:

<sup>42</sup> Տե՛ս նոյն տեղում:

<sup>43</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 245:

<sup>44</sup> Նոյն տեղում:

<sup>45</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 246:

<sup>46</sup> Նոյն տեղում, էջ 247:

Վերջին պնդումը սկզբունքային է Դիլթայի համար: Միայն ներքին կյանքի անմիջական տրվածությունը, նրա փորձնական բնույթը կարող է հնարավոր դարձնել հումանիտար իմացության հնարավորությունը, քանի որ, ըստ Դիլթայի, միայն այդպիսով են հոգևոր փաստերը մեզ մինչև վերջ հասկանալի դառնում<sup>47</sup>:

Սակայն դրանով հասարակագիտության հիմնավորման խնդիրը չի լուծվում: Չէ՞ որ իմացարանական-մեթոդաբանական տեսակետից «հարցն այն է, թե ինչպես են անհատի փորձը և նրա իմացությունը պատմական փորձի մակարդակի բարձրանում»<sup>48</sup>:

Նշված դժվարությունը հաղթահարելու համար Դիլթայը մտցնում է տրանսպոզիցիայի՝ փոխադրման գաղափարը: Ներքին փորձը միշտ հարաբերված է մարդկային մարմնի հետ. հենց դրա համար էլ «ներքին» է համարվում: Սակայն տարբեր մարդկանց հոգեկանի միահնանությունը հնարավորություն է տալիս փոխադրում կատարել՝ վերագտնել սեփական ներքին փորձը այլ անհատների մեջ և, դրանով իսկ, հիմք դնել մեկ միասնական հոգևոր աշխարհի ընդհանուր փոխկապակցության ծևափորման համար: Կենց այդ հոգևոր աշխարհն է, որ հանդես է գալիս որպես ոգու մասին գիտությունների ուսումնասիրության առարկա: «Եվ ամենուր ոգու մասին գիտություններում հնարավոր է մատնանշել, թե ինչպես, հոգևոր կյանքի նույնականության հիման վրա, փոխադրում են միմյանց հետ արտաքին փորձը, ներքին փորձը, տրանսպոզիտներալ մեթոդը և ներքին փորձի փոխադրումը արտաքին օբյեկտների մեջ: Ամենուրեք ամբողջական հոգևոր կյանքի նույնական փոխկապվածությունը ներկայանում է որպես հիմք, որից կարող են ծագել ոգու մասին գիտությունները»<sup>49</sup>:

«Այս իսկ պատճառով բնության և ոգու մասին գիտությունների տարրերությունը ոչ թե մեթոդով, այլ բովանդակությամբ է պայմանավորված»<sup>50</sup>: Կենց այդ բովանդակությունն է, որ մկատի ուներ Մ. Շայդե-

<sup>47</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 249:

<sup>48</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 209.

<sup>49</sup> WDGS, B. 5, S. 251.

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 253: Վերը շարադրվածը հաշվի առնելու դեպքում տարակուսանք է առաջացնում իր ժամանակավոր իրատարակություններից մեկում տեղ գտած այն պնդումը՝ իրը «20-րդ դարի սկզբին (?) Դիլթայը, հետևելով Որկերտին (?)», ծևակերպեց մի դրույթ, որի համաձայն թանգիտությունը և պատնական գիտությունները («ոգու մասին գիտությունները») տարբերակվում են ոչ թե ուսումնասիրության առարկայով, այլ մեթոդով... (?)» (Եղյացանա ֆիլոսոփիա կանոն և հաջա սովորական պատմություն, Մ., 1977, с.190): Ինչպես մենք կհամոզվենք ստորև, Դիլթայը հետագայում

գերը, ասելով, որ Դիլբայը նոր իրական առարկայական բնագավառ է հայտնաբերել փիլիսոփայության համար<sup>51</sup>:

Իմացարանական տեսակետից իրավիճակը կարծեն փոքր-ինչպարզվում է: Ինչպես բնական, այնպես էլ հասարակական գիտությունների առարկաները, ըստ Դիլթայի, ծևավորվում են հոգեկանի սահմաններում: Դրանք արդեն մշակված հոգևոր իրողություններ են, որոնցից մեկը հարաբերված է «արտաքինի» հետ, իսկ մյուսը՝ «մերքինի»: Այստեղից բխում է նաև մեթոդաբանական տարրերությունը: Քանի որ բնական գիտությունների նյութը հանդես է զալիս առանձին «ամեկան» օբյեկտների ծևով, ապա բնագիտությունը հենվում է միջնորդավորված կառուցման՝ կոնստրուկտիվ մեթոդի վրա: Ոգու մասին գիտությունների առարկան՝ հոգեկան կյամքի անբողջականությունը, սուբյեկտին տրված է անմիջականորեն. այստեղից էլ՝ հումանիտար մեթոդի վերլուծական և նկարագրական բնույթը<sup>52</sup>: Սակայն պատկերը վերջնականութեն հատակ դարձնելու համար պետք է ներկայացվեին նաև բաժանման տրամաբանական հիմքերը: Այս խնդիրը Դիլթայն աշխատում է լուծել, պատասխանելով Վիճութանդի մյուս հիմնական փաստարկին հոգեբանության անորոշ կարգավիճակի վերաբերյալ:

Վ. Դիլքայի կարծիքով հոգեբանությունը ոգու մասին առանձին գիտություն չէ սոսկ, այլ բոլոր այդպիսի գիտությունների հուսալի հիմքը, քանի որ դրանց բոլորի արմատը հանդիսացող հոգեկան կյանքի

Ըստ մասնակիության կազմակերպությունները կազմում են համագումարային կազմակերպությունը՝ ուղարկելով դիմում կազմակերպությունների համագումարի համար:

զավագագությունը դարձավալի. որ աղյօտ մակար, էջ 22.

5) WDGS, B. 5, S. 168. 3. Դաքերմասան Ակասուս է, որ բնության և ոգոյ մասին զիտությունների դիլայայն տրանսցենդենտալ-տրամասանական տարրերակության է նշանակած է ոչ թե օրյեկտիվացման երկու տարրեր նախագծերից, այլ օրյեկտիվացման ասորիժամից. բնությունը մենք այնպիսի տեսանկյունից ենք դիտարկում, որը մեզ հնարավորություն է տալիս երևալըներին տիրապետել համընդհանուր օրենքների միջոցով, այն դեպքում, եթե ոգոյ մասին զիտություններում սոլյետիվի փորձ սկզբունքորեն չի սահմանափակվում փստենատիկ դիտարկմանը. մուտք դեպի իրավանույթը ամբողջությամբ բաց է պահպիւմ, և կուտակված նախագիտական ողջ գիտելիքի ռեզոնանսաստեղծ միջավայրը կատարում է ներս (J. Habermas, *Erkenntnis und Interesse*, Suhrkamp, Ffm., 1973, S. 181-182):

միասնությունը հոգեբանության ուսումնասիրության առարկա է: Սակայն իին հոգեբանությունն, իսկապես, չի կարող այդ խնդիրը լուծել, քանի որ (և Դիլբայն այստեղ լիովին համաձայն է Վիճողելքանդի հետ) նրա մեթոդը փոխէ առնված բնագիտությունից: Ավանդական հոգեբանությունը բացասարող հոգեբանություն է, որը պատճառական կապերի մասին վարկածներ է առաջ քաշում և փորձում է հիմնավորել դրանք կոնստրուկտիվ ծանապարհով: Այդ տիպի (եքսպերիմենտալ) հոգեբանության ականավոր մերկայացուցիչներից է, օրինակ, Վիլհելմ Կունդտը:

Սակայն ինչո՞ւ կոնստրուկտիվ մեթոդը չի բավարարում Դիլբային: «Մեզ տրված հոգեբանական փաստերն այնքան բազմիմաստ են, գրում է նա, - որ կոնստրուկտիվ հոգեբանության հասկացութային միջոցների օգնությամբ հնարավոր է հոգեբանական համակարգի տրամաբանորեն անհակասական փոխկապվածություններ ստեղծել ելնելով բոլորովին տարրեր նախադրյալներից»<sup>53</sup>: Ուրեմն բանն այն չէ, որ բացասարող հոգեբանությունը չի կարողանում կուռ տեսություն ստեղծել: Բանն այն է, որ այն չափազանց շատ տեսություններ է ստեղծում, բայց դրանցից և ոչ մեկը չի տալիս օբյեկտի լրիվ պատկերը: Իսկ դա նշանակում է, որ կոնստրուկտիվ մոտեցման միջոցով հնարավոր չէ հաղթահարել հոգեբանության տարրեր դպրոցների միջև ծավալվող վեճերը և մեկ միասնական մեթոդ նշակել: Յոգեբանության ընթացքը պետք է վերլուծական լինի և ոչ թե կոնստրուկտիվ:

Դիլբայն առաջարկում է նոր տիպի՝ մկարագրող և տրոհող հոգեբանություն (beschreibende und zergliedernde Psychologie), որն իր հերթին լրացվելու էր համեմատական հոգեբանությամբ: Եթե առաջինի նպատակը հոգեկան կյանքի միանմանության վերհանումն է, ապա վերջինս զբաղվում է տարրերությունների ուսումնասիրությամբ: Մրանք միմյանց հարաբերվում են այնպես, ինչպես ծարի բունն իր ճյուղերին<sup>54</sup>: Այս համեմատությունն արդեն ցույց է տալիս, որ պատճառական կապերի նկարագրության համար ավանդական տրամաբանության մշակած շարադիր, շղթայակերպ կազմավորումները կարող են միայն համահարթել, բայց ոչ նույնակերպորեն որսալ ներքին կյանքի բազմաչափ ճյուղավորումները: Վերլուծական հոգեբանությունը կարող է տարրեր հնարներ կիրառել, սակայն սկզբունքային է, որ հոգեկան կյանքի միասնությունը դիտվի որպես ի սկզբանե տրված նախապայ-

<sup>53</sup> WDGS, B. 5, S. 168.

<sup>54</sup> Տե՛ս WDGS, B. 5, էջ 241:

ման և ոչ թե նպատակ: Նման խնդրի իրականացման համար համապատասխան տրամաբանական ձևի որոնումները բերում են Դիլբային կառուցվածքի գաղափարին: «Պատճառական կապի և կառուցվածքի տրամաբանական հակադրությամբ ամբողջանում է բնության և ոգու մասին գիտությունների դիլբայան բաժանումը:

Վերլուծական հոգեբանությունը իմացարանական, մեթոդաբանական և տրամաբանական գործառությունը է ձեռք բերում: «Կատարյալ, մշակված հոգեբանությունը իմացության տեսության կարիք չունի, այնինչ ամեն մի մշակված հոգեբանություն միայն գիտական իրականացումն է այն բանի, որը նաև իմացության տեսության հիմքն է կազմում: Իմացության տեսությունը հոգեբանությունն է շարժման մեջ...»<sup>55</sup>:

Դամոգե՞ց արդյոք Դիլբայը բաղենցիներին: Որքանո՞վ է ընդհանրապես համոզիչ նրա վերլուծությունը: Այս հարցերը ծագում են անխուսափելիորեն, երբ մենք, վերջապես դուրս գալով Վ. Դիլբայի խճված կառուցումների լարիրինթոսից, փորձում ենք իմաստավորել անցած ժանապարհը:

Վ. Վինդելբանդը և Յ. Ռիկերտը, իհարկե, մնացին իրենց կարծիքին: Կյանքի փիլիսոփայության մարտնչող հոգեբանականությունը չէր կառող ընդունելի լինել տրանսցենտալ իդեալիզմի համար: Ասենք, Դիլբայի փաստարկներն ել մինչև վերջ ապացուցողական չէին: Կնշական նշում է Յ.-Գ. Գաղամերը, միայն եղանուղ Շուտեռլի *Տրամաբանական հետազոտությունների* երկրորդ հատորի ուսումնասիրությունը Դիլբային հնարավորություն տվեց ստույգ ասելու, թե ինչով է «կառուցվածքը» տարբերվում «պատճառական կապից»<sup>56</sup>: Բայց դրան համելու համար Դիլբայը դեռ պետք է հաղթահարեր իր վաղ շրջանի պսիխոլոգիզմը:

Վ. Դիլբայի բանավեճը ֆրայբուրգյան դպրոցի հետ վճռական նշանակություն ունեցավ (և ունի) հասարակագիտության մեթոդաբանության մշակման համար: Այսպես կոչված «մեթոդաբանական մոնիզմը», որը հակված է անտեսելու հումանիտար գիտությունների որակական յուրահատկությունը, կարող է սկզբունքային չհամարել կյանքի փիլիսոփայության և նորկանտականության իմացարանական տարածայնությունները: Այնինչ պատմափիլիսոփայական միևնույն ընթացքի մեջ

<sup>55</sup> Նոյն տեղում, էջ 151:

<sup>56</sup> Տե՛ս և H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, էջ 212:

դրսնորված այդ *Աերքին* հակասության ուսումնասիրությունը կարող է ավելին տալ, քան «օգու մասին գիտությունների» յուրահատկությունն ընդունողների և ժխտողների շատ վեճեր: Վինդելբանդի գլխավորած դպրոցի բախումը Դիլթայի հետ նշանավորեց երկու հակադիր դիրքորոշումների պայքարը մերօդաբանության մեջ: Դիլթայի մոտեցումն ինձ գերադասելի և ավելի համակրելի է թվում: Իհարկե, մտածողի հարցադրումների խորությունն առավել ցայտուն դրսուրվեց նրա փիլիսոփայական զարգացման երկրորդ փուլում, երբ «հոգեբանական իմացարանության» ներքին հակասությունները նրան վճռական շրջադարձի մղեցին: Բայց արդեն իսկ առաջին շրջանում Վ. Դիլթայի տեսությունը պարունակում էր որոշ սկզբունքային հարցադրումներ, որոնց անտեսումը բարենցիների կողմից լրաց իմաստային կորուստների էր հանգեցնում: Դա նախ և առաջ հումանիտար ոլորտի նկատմամբ *Աերքին* մոտեցման պահանջն էր: Դիլթայն առավելություն ունի բաղենյան դպրոցի ներկայացուցիչների նկատմամբ արդեն իսկ այնքանով, որեւ է Յ.-Գ. Գաղամները, որ նա չի մոռանում, որ փորձը ոգու մասին գիտություններում «Էապես այլ է, քան բնագիտական իմացության բնագավառում»<sup>57</sup>: Խսկապես, Դիլթային հատուկ է սուրյեկտի և օրյեկտի դիալեկտիկայի ավելի խոր գիտակցում, որից և բխում է բանավեճի ընթացքում սկզբունքային նշանակություն ձեռք բերած նրա թեզը՝ ուսումնասիրության մեթոդ պետք է համապատասխանության մեջ լինի օրյեկտի հետ և պայմանավորվի նրանով:

Նորկանտականների մոտ սուրյեկտը և օրյեկտը հակադիր են՝ նոյնական տվյալներից սուրյեկտը տարբեր օրյեկտներ է կառուցում: Դիլթայը հարաբերականացնում է այդ կապը: Ներքին վերապրումը ենթադրում է օրյեկտի և սուրյեկտի նախնական փոխկապվածություն, հետևաբար և վերապրող ու հասկացող կապ վերստեղծվող երևույթի հետ<sup>58</sup>:

Յ. Ռիկերտին այս տեսակները չափազանց հեղիեղուկ պետք է թվար: Պատահական չէ, որ կյանքի փիլիսոփայության հետ բանավիճելիս Ռիկերտն իր համար որպես բնարան ընտրել է աշակերտի հայտնի ռեպլիկը *Ֆաուստից*. «Doch ein Begriff muss bei dem Worte sein»<sup>59</sup>: Արժեք-

<sup>57</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 208:

<sup>58</sup> Քննադաշտում Դիլթայի այս դիրքորոշումը բարձր կզմահատի է. Յուսեռլը: Տե՛ս Է. Գյուսերլ, “Кризис европейского человечества и философия”, *Общество. Культура. Философия*, М., 1983, էջ 51:

<sup>59</sup> «Բայց չէ՞ որ խոսքին կից հասկացություն է պետք» (J. W. Goethe, *Faust*, B.u.W., 1983, S. 121): Տե՛ս Գ. Ռիկերտ, *Философия языка*, էջ 301:

ների տեսությունը Ոիկերտի համար հանդես է գալիս որպես *արտաքին* տրանսցենտնատալ նախադրյալ պատմական փաստերի ընտրության և իմաստավորման համար: Այն չի կարող փոխարինվել «պատմական իրականության» քննությամբ (թեև ենթադրում է այդ քննությունը), քանի որ այդ դեպքում կորսվում է պատմական անցքերի էականությամ չափանիշը: Յ. Յաքերման այս առիթով խոսում է Ոիկերտի «գաղտնի կենսափիլիսոփայական կանխադրութի» մասին. վերջինս իրականությունն իրացիոնալ է համարում և չի հավատում, որ այն իր *անկրծատ վիճակով* կարող է լեզվականորեն ամրագրելի տեսքի բերվել<sup>60</sup>:

Ինչո՞ւ սակայն ինքը՝ Դիլթայը, չի վախենում էականության կրուստից և կամայականությունից, երբ խոսում է հոգեկան փոխկապածությունների ներունակ տրոհման և ներկայացման մասին: Որովհետև նրա չափանիշը ներքին է: «Ոգու մասին գիտության հմարավորության առաջին պայմանն այն է,- գրում է Պատմական աշխարհի հեղինակը,- որ ես ինքս պատմական էակ եմ, որ նա, ով ուսումնասիրում է պատմությունը, նույն ինքն է, որ պատմությունը կերտում է»<sup>61</sup>: Այս կերպ Դիլթայը շեշտում է, որ պատմական փորձի կարգավորման սկզբունքը ոչ թե բարիս ուղղափառ իմաստով «տրանսցենտնատալ» արժեքային հարաբերությունն է, այլ «ներքին պատմականությունը, որը հենց իրեն՝ փորձին է պատկանում»<sup>62</sup>: Մրանով է, որ հմարավոր է դաշնում «պատմական ապրիորին»: Բայց հենց այստեղ էլ հարցեր են առաջանում: Ներքին պատմականության մասին պատկերացման հետ մեկտեղ Դիլթայի համակարգ է խուժում մի չափազանց կարևոր կատեգորիա՝ *ժամանակը*. Յետագայում, Մարտին Յայերգերի ջանքերով, այն կենտրոնական տեղ է գրավելու հերմենուստիկական պրոբլեմատիկայում, իսկ այստեղ՝ Դիլթայի մոտ, սկզբնավորվեց նրա շրջադարձը դեպի հերմենուստիկան, ակնհայտորեն ցուցադրելով ինքնադիտարկման (հոգեբանական) մեթոդի անբավարարությունը<sup>63</sup>:

<sup>60</sup> J. Habermas, *Erkenntnis und Interesse*, S. 201 (Anmerkung).

<sup>61</sup> WDGS, B. 7, S. 278.

<sup>62</sup> Տե՛ս H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, էջ 208:

<sup>63</sup> Արդեն 1900-ին Դիլթայը հանդես է գալիս «Յերմենստիկայի ծագումը» ծրագրային հոդվածով («Die Entstehung der Hermeneutik», in: WDGS; B. 5, S. 317-338; հոդվածի՝ տողերիս հեղինակի կատարած հայերեն բարզմանությունը տես ստորև, էջ 117-138: 1907-1910 թվականներին նա գրում է աշխատությունների մի ամբողջ շարք, որն ամբողջանում է «Պատմական աշխարհի կառուցվածքը ողու մասին գիտություններում խորագի տակ» («Der Aufbau der geschichtlichen Welt in den Geisteswissenschaften», in: WDGS, B. 7, 1927):

Քննելով ժամանակայնությունը (*Zeitlichkeit*)՝ որպես կյանքի ընթացքի հիմնական գծերից մեկը, Դիլթայը կոնկրետ ժամանակը բնորոշում է որպես շարժում, որում ներկան անընդհատ անցյալի է փոխակերպվում, իսկ ապագան՝ ներկայի: Բայց «...ներկան որպես այդպիսին երեք չի կարող տրված լինել փորձում», քանի որ ժամանակի նույնիսկ փոքրագույն հատվածը, ներկայի հետ մեկտեղ, նաև հիշողություններ է պարունակում այն մասին, ինչ ներկա է եղել քիչ առաջ<sup>64</sup>: Անցյալի և ներկայի այդ փոխակապակցությունից առաջանում են ապրումներ (*Erliebnisse*)՝ կենսական ընթացքի այն փոքրագույն տարրերը, որոնք ինքնուրույն նշանակություն ունեն մեզ հաճար և դրա շնորհիվ առանձին միավորներ են կազմում<sup>65</sup>: Այսպես ասպարեզ է մտնում ուշ Դիլթայի ուսմունքի մյուս կարևոր բաղադրատարրը՝ նշանակության կատեգորիան (Bedeutung):

Վերջինս արտահայտում է «...կյանքի մասի հարաբերությունն ամբողջին, որը կյանքի երթյամբ է հիմնավորված»<sup>66</sup>: Ինչպես տեսնում ենք, նշանակության կատեգորիան է հանդես գալիս որպես կառուցվածքի հասկացության հետագա ճշգրտում: Այն կոչված է բացահայտելու հոգեկան կյանքի ներքին կազմությունը: Վերապումը հենվում է հիշողության վրա, հիշողությունն իր հերթին ընտրություն է ենթադրում. «...և այդ ընտրության սկզբունքը նշանակության մեջ է պարունակվում»<sup>67</sup>:

Նշանակությունների միջև եղած ներքին կապերը (Bedeutungsbeziehungen) կազմավորում են ներկա ապրումը: Վերջինիս դրսևորման ամենացայտուն ծառ ինքնակենսագրությունն է: Ինքնակենսագրությունը «...կյանքի մեկնությունն է՝ դիպվածի, ճակատագրի և բնավորության հետ նրա խորհրդավոր առնչություններով հանդերձ քննված...»<sup>68</sup>:

Ինքնակենսագրությունն անսպասելիորեն մեծ տեղ է ստանում Դիլթայի ուսմունքում: Այն փաստորեն հանդես է գալիս որպես պատմական հետազոտության իրականացման հիմնական ծառ: Ինքնակենսագրությունը միշտ անկրկնելի է, քանի որ մարդկային կյանքի շարժիչ գոպանակը դիպվածն է (Zufall): Այդ միտքը Դիլթայն արտահայտում է

<sup>64</sup> Տե՛ս WDGS, B. 7, էջ 72-73:

<sup>65</sup> «Ապրում» տերմինը Դիլթայը տարածում է նաև ավելի լայն ընդգրկում ունեցող իդեալական միավորների վրա, եթե վերջիններս առանձին նշանակություն են ծերում կենսական պրոցեսում:

<sup>66</sup> WDGS, B. 7, S. 233.

<sup>67</sup> Նույն տեղում:

<sup>68</sup> Նույն տեղում, էջ 74:

փայլուն աֆորիզմի միջոցով. «Մենք երբեք պատրաստ չենք լինի նրան, ինչ դիպաված ենք անվանում. երկի այն ամենը, ինչ նշանակալից է մեր կյանքի համար՝ որպես փառահեղ կամ սարսափելի, միշտ դիպածի դրոնվ ներս է խուժում»<sup>69</sup>: Մյուս կողմից, սակայն, ինքնակենսագրության մեջ առկա է նաև ընդհանուր պատճական օրինաչափությունը<sup>70</sup>:

Ինքնակենսագրության հիմքում ընկած է ապրումը: Սակայն, ինչպես առիթ ունեցանք համոզվելու, դա անցյալի ապրում է, որը հենված է հիշողության վրա: ճիշտ է, Դիլբայը շեշտում է, որ հիշողության ապրումը ինքնին ներկայում է տեղի ունենում, սակայն հասկանալի է, որ դրանում նորովի վերակենդանանում է այն, ինչն արդեն վերապրել է անցյալում: Այդ պրոցեսի յուրահատկությունը նկարագրելու համար Դիլբայը ստիպված է նոր հասկացություն նացնել՝ *վերապրումը* (Nacherleben), որը անցյալի նորովի «կրկին-ապրում» է ենթադրում: Այս առաջին հայացքից անմշան թվացող ծզգրտումը խիստ կարևոր հետևությունների է հանգեցնում: Եթե մենք գործ ունենք անցյալում տեղի ունեցածի հետ, ապա վերջինս, վերապրող սուրյեկտին հասու դառնալու համար, որոշակի օբյեկտիվացում է պահանջում: Անցյալը պետք է ամրագրված լինի:

Գրավոր արձանագրված ինքնակենսագրությունն իր կարգավիճակով չի տարբերվում այլոց օբյեկտիվացված կենսագրություններից: Դիլբայի առջև նորից ծառանում է ինտերսությեկտիվության պրոբլեմը: Պարզվում է, որ ես-ից դուրս գտնվող սուրյեկտներին փոխադրման միջոցով կարելի է վերագրել նմանություններ, բայց ոչ տարբերություններ: Սակայն անհատականությունը ճանաչվում է տարբերության միջոցով<sup>71</sup>: Ուրեմն, այլ սուրյեկտների կենսագրությունների ուսումնասիրությունը դառնում է անհրաժեշտություն: Բայց ինչպես անցնել այլ սուրյեկտների կենսագրություններին: Չէ՞ որ վերջիններս անմիջական վերապրման առարկա դառնալ չեն կարող: «...Օտար գոյությունը տրվում է մեզ նախ և առաջ դրսից՝ զգայական փաստերի, շարժուծնի (Gebärden), գույների և գործողությունների միջոցով»<sup>72</sup>: Յոզեփ կյանքի այս զգայական դրսուրումները հանդես են գալիս որպես նշաններ

<sup>69</sup> Նույն տեղում, էջ 74:

<sup>70</sup> Խոսքն առաջին հերթին նշանավոր մարդկանց ինքնակենսագրության նախնին է: Այսպես՝ Դիլբայի համար իդեալական ինքնակենսագրության օրինակ է Գյորեի Բանաստեղծությունը և ծզմարտությունը:

<sup>71</sup> Տե՛ս ա WDGS, B. 5, էջ 318:

<sup>72</sup> Նույն տեղում:

օտարի ներքինը հասկանալու համար: Վեր-ապրումն, այսպիսով, այլ սուբյեկտների հասկացում է պահանջում:

Դիլթայը հասկացման տարրեր մակարդակներ է մատնանշում: Անցումը հասկացման ստորին ծևերից բարձրագույններին ենթադրում է անցում դեպի անհատականի հասկացումը. «...եզակին հոգևոր աշխարհում ինքնին արժեք է (Selbstwert)»<sup>73</sup>:

Սրանով ձևավորվում է ուշ Դիլթայի ուսմունքի հիմքում ընկած եռամիասնությունը՝ «ապրում» (Erleben) - «արտահայտություն» (Ausdruck) - «հասկացում» (Verstehen)<sup>74</sup>: Ընդունելով այս սխեման, նա վերջնականացնեն հրաժարվում է պսիխոլոգիզմից: Յոզեֆանական մոտեցումը նախ և առաջ ինքնազննում էր ենթադրում, ներքին կյանքի անմիջական հայեցողություն: Հասկացման հանար, ընդհակառակը, հատկանշական է օտարի յուրացումը. «Դիցուկ ես ասում եմ՝ չեմ հասկանում՝ ինչպես ես կարող էի այդպիսի բան անել...,- բացատրում է Դիլթայը, բայց դրանով ես ուզում եմ ասել, որ իմ երթյան դրսադրումը զգայական աշխարհում հակադրվել է ինձ որպես օտար մի բան և, որպես այդպիսին, չի ենթարկվում իմ մեկնաբանությանը...»<sup>75</sup>:

Հասկացումը, այսպիսով, կյանքի դրսադրումների զգայական ամրագրում է ենթադրում: Ամրագրման ծևերը բազմազան են: Դրանցից կարևորագույնը լեզուն է. «...միայն լեզվի մեջ է, որ մարդկային ներքինն իր լիակատար սպառիչ և օբյեկտիվորեն հասկանալի արտահայտությունն է գտնում»<sup>76</sup>: Գրավոր արձանագրված կենսական արտահայտությունների (Lebensäusübungsgen) օրինաչափ հասկացումը Դիլթայն անվանում է մեկնություն, իսկ այդ մեկնության արվեստը՝ հերմենուստիկա<sup>77</sup>:

Դերմենստիկան նշանավորեց Վ. Դիլթայի անցումն անհատականության վերլուծությունից պատմական իրականության հետազոտությանը<sup>78</sup>:

<sup>73</sup> WDGS, B. 7, S. 212.

<sup>74</sup> Տե՛ս ս նույն տեղում, էջ 71:

<sup>75</sup> WDGS, B. 5, S. 318.

<sup>76</sup> Նոյն տեղում, էջ 319:

<sup>77</sup> Տե՛ս ս նույն տեղում, էջ 332-333:

<sup>78</sup> Վ. Դիլթայի հայացքների ակնարկն ավարտելով՝ Լ. Իոնինը նկատում է. «Երբեմն Դիլթայի հոգեբանությունը նոյնացվում է նրա հերմենստիկայի հետ: Այնինչ հերմենստիկան պսիխոլոգիզմի հաղթահրում էր նշանակում»: Ստուգ դիտողություն է: Տե՛ս և Լ. Գ. Իոնին, *Պոնիմակայա սույնության առաջնային գործություններ*, էջ 37:

Դիլթայ-երկրորդն անշուշտ որակապես տարբերվում է Դիլթայ-առաջինց, սակայն նրա հասունացման ընթացքում նաև զարմանալի հետևողականություն և արժեքային դիրքորոշումների կայունություն է նկատվում: Դիլթայի ինտելեկտուալ զարգացման երկու փուլերի հանգուցակետերի համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու ինչպես տարբերությունները, այնպես էլ աշխարհայցքային այն ներքին միասնությունը, որը հատուկ էր մտածողին:

Դիլթայի հմացարանության կենտրոնական թեզը հմացության սուլբյեկտի և օբյեկտի ներքին կապի, հետևաբար նաև բնական և հումանիտար գիտությունների մեթոդի և առարկայի սկզբունքային տարբերության մասին՝ մնում է անսասան: Սակայն փոխվում է նրա մեկնաբանությունը: Եթե վաղ Դիլթայի մոտ ոգու մասին գիտությունների առարկան առանձին անհատների ներքին կյանքի առնչությունների հիման վրա առաջացող հոգեբանական ռեալությունն էր, ապա երկրորդ շրջանի Դիլթայի համար դա պատմական աշխարհն է, որը հանդես է գալիս մշակութային կազմավորումների տեսքով<sup>79</sup>:

Սրան համապատասխան վերահիմաստավորվում է նաև մեթոդը: Քանի որ պատմական աշխարհի բովանդակությունը հետազոտողին տրված է զգայական նշանների ամբողջության, այսինքն՝ տեքստի ձևով, ապա զարմանալի չէ, որ «Դիլթայը պատմական անցյալի ուսումնասիրությունը, ի վերջո, պատկերացնում է որպես վերծանում և ոչ թե որպես պատմական փորձ»<sup>80</sup>: Վերլուծական հոգեբանությունն իր տեղը գիշում է հերմենուսիկային: Վերջինս, ի տարբերություն հոգեբանության, զուրկ է հետազոտության սեփական առարկայից և այդ իսկ պատճառով հանդես է գալիս որպես ոգու մասին գիտությունների համընդիմանուր մեթոդ<sup>81</sup>: Սրանց բոլորի հիմքում ընկած է ներքին կյանքի հասկացումը, որն իրականացվում է արտահայտությունների վերծանման միջոցով:

Սակայն ինչպես կարող է հետազոտող սուլբյեկտը (ես-ը), ելնելով պատմական անցյալում գործող մեկ այլ սուլբյեկտի (դու-ի) ներքին կյանքի արտաքին դրսնորումներից, նրա ներքինը հասկանալ նույնակերպութեն: Այստեղ կրկնակի դժվարություն է առաջանում: Նախ՝ պետք

<sup>79</sup> Յննատ. Կարլ Պոլակի «Երրորդ աշխարհի» հետ (Կ. Պոլպեր, *Логика и рост научного знания*, Прогресс, М., 1983, с. 439-495):

<sup>80</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 228.

<sup>81</sup> Տե՛ս WDGS, B. 7, էջ 205:

է համոզված լինել, որ կյանքի արտաքին արտահայտությունները նույնակերպ են արձանագրում պատմական սուբյեկտի ներքին ապրումները, և երկրորդ՝ հարկավոր է ցույց տալ, որ այդ դրսնորումները, եթե նույնիսկ դրանք աղեկված են, կարող են ծշգրտորեն վերծանվել հասկացող սուբյեկտի կողմից: Այն, ինչ վերլուծական հոգեբանության մեջ հեշտությամբ ապահովվում էր ինքնադիման միջոցով, հերմենաստիկայում առանձին հիմնավորման կարիք ուներ: Ես-ի և դու-ի միջև մի միջնորդ օղակ է պահանջվում, մեղիում, որը կիրականացներ նրանց կոնտակտը հասկացման ընթացքում:

Նշելով կենսական ապրումների դրսնորման գգայական-նշանային բնույթը և շեշտելով լեզվի վճռական դերը դրանց վերհանման պրոցեսում, Դիլթայը ճանապարհ է հարթում 20-րդ դարի հերմենաստիկական այն միտումի համար, որն այդպիսի միջնորդ օղակի դերում դիտելու էր լեզուն, վերջինս ներկայացնելով որպես ես-ի և դու-ի միջև ինտերակտյունիվ կապն ապահովող ուժիվերսալ միջոց:<sup>82</sup> Սակայն ինքը՝ *Պատմական աշխարհի հեղինակը*, գնաց այլ ճանապարհով: Յոգու խորքում նա չէր վստահում «արտաքինին»: Նրա հենարանը միշտ «ներքինն» էր եղել և «ներքինն» էր մնալու: Յետևաբար, առանձին սուբյեկտից պատմական փոխկապակցությանն անցնելիս մնում էր՝ «...որքան ուզում է քննադատվի սպեկուլյացիան՝ իրական սուբյեկտը փոխարինել «տրամարանական սուբյեկտով»<sup>83</sup>: Ես-ը և դու-ն նույնանում են հասկացման մեջ, քանի որ երկուսն էլ պատկանում են միևնույն կենսական տարերքին: Ընդ որում՝ վերջինս Դիլթայի մոտ գնալով ավելի վերացական մեկնաբանություն է ստանում: Մշակույթում կայուն օրյեկտիվացված

<sup>82</sup> Այսպիսի հեղինակների թվին են պատկանում, օրինակ, Կ.-Օ. Ապելը (տե՛ս *Transformation der Philosophie*, B. 2, էջ 220-263) և Յ. Յաբրեմասը (տե՛ս *Theorie des kommunikativen Handelns*, B. 1 & 2, Suhrkamp, Ffm., 1980): Վերջինս խնդրին հետևյալ մեկնաբանությունն է տվել: Ես-ը փորձում է պահպանել իր հոգուն մունխությունը, միևնույն ժամանակ գիտակցելով կյանքի տուբսորադի մշտական բայցայունը (J. Habermas, *Erkenntnis und Interesse*, S. 194): Կյանքի տարբեր փուլերում կուտավկող կենսապիրուն օտարվում է կյանքի անընդհականությունից արդեն իսկ սեփական կենսագրության շրջանակ-ներում, որովհետև ենթությունը մկանագրությունը՝ նարատիկ/պատմողական ասույթները հետարած մեջմությունների վրա են հենվում: Նրանք պատմում են իշտաբությունների նախան, եւնելով ավելի ուշ տեղի ունեցած իրադարձությունների հեռանալուից, այսինքն՝ այնպիսի մի դիրքոց, որից առաջիններն ի սկզբանե չին կարող դիտարկված և արձանագրված լինել (նոյն տեղում, էջ 193): Ակնարքային ապումների պահպանումը դիմայուային հարաբերություն է ենթադրություն: Կյանքի հոսքի հետադարձ մեկնության ընթացքում «ինքնագիտակցությունը կազմակլովվում է երկու տարբեր հարությունների հատման կետում: Իրդողնական մակարդակում տեղի է ունենում ինտերսությունների հասկացում ուղղված հետ, ուղղահայցում՝ ինտրասությունների հասկացում ինքն իր հետ» (նոյն լույսում, էջ 199):

<sup>83</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 210-211.

ծև ստացած պատմական կազմավորումները, կտրվելով անմիջական ապրումի հողից, ներկայանում են որպես անանձնական ոգու խտացումներ: Պատահական չէ, որ Դիլթեյ «...ոգուց է խոսում այնտեղ, ուր առաջ «կյանք» էր ասում»<sup>84</sup>: Եվ թեև Դիլթայն իսկապես աշխատում է խույս տալ ոգու մետաֆիզիկական գոյաբանությունից, շեշտելով պատմական իրականության պայմանավորվածությունն առանձին անհատների գործունեությամբ<sup>85</sup>, շարժումը դեպի հեգելյան տիպի օբյեկտիվ իդեալիզմ գնալով ակնհայտ է դառնում<sup>86</sup>:

Վերապրման արտաքին արտահայտությունները (Erlebnisausdrücke) ներկայացնում են վերապրման իրական պատկերը, քանի որ դրանք կապված են ոգու այնպիսի խորը շերտերի հետ, որոնք նատչելի չեն ինքնադիտարկմանը և գիտակցությանն ընդհանրապես: Պատմական տեքստերի հեղինակը կարող է, իհարկե, ստել, կեղծել, փորձել շփոթության մեջ գցել ընթերցողին և այլն: «Սակայն երբ մեծ կերտվածքներում հոգևորը (eine Geistiges) ձերրազատվում է իր ստեղծողից՝ բանաստեղից, արվեստագետից, գրողից, մենք խորանում ենք մի ուլորտ, որտեղ խարկանքն ավարտվում է»<sup>87</sup>: Գիտելիքի և գործողության միաձուլումից առաջացած այդ շրջանը, դուրս մնալով գիտակցական վերահսկման բոլոր միջոցների՝ դիտարկման, ռեֆլեքսիայի, տեսության ազդեցությունից, հիմք է ծառայում նույնակերպ արտահայտության համար:

Կենսական դրսնորումները ծցգրիտ հասկանալու համար անհրաժեշտ է նույնացում հեղինակի հետ, որը պահանջում է իրեն հեղինակի

<sup>84</sup> Նոյն տեղում, էջ 214:

<sup>85</sup> Տես ս, օրինակ, Դիլթայի վճռական ռեալիզմը Երիմգիառուցի 1895-ի հոդվածի կապակցությամբ (WDGS, B. 5, S. 238): Ընդհանրապես պետք է ասել, որ հակամետաֆիզիկական և նոյնիսկ պողիփական ուժեղ միտումը հատուկ է եղել Դիլթային դեռևս Ներածության ժամանակներից: 1893-ին Դ. Ֆայինգերը, բնորոշելով Դիլթայի փիլիսոփայությունը, գրել է. «Ողու մասին գիտությունների ներածությամբ նա հայտնի դարձավ իր պահտիկմով, որը կանոնական գծերի հետ մեկտեղ, հիշեցնում էր Բրենտանի և Շուպերի տեսակետները: Տրանսցենդենտալ աշխարհի մերժումը նրա համար դժվար ընդունելի եղավ, սակայն մնացած հարցերում նա կարող էր որպես պողիփական ներկայանայ»: Մերժերվում է ըստ՝ M. Marquardt, “Einführung”, in: W. Dilthey, *Aufsätze zur Philosophie*, S. 28: Սոտավորապես նոյն կարծիքն է հայտնել է. Դուտեռլը (տես նոյն տեղում):

<sup>86</sup> Այս հակումը հեգելյան փիլիսոփայության նկատմամբ 3.-4. Գաղամերը բացատրում է երիտասարդ Շեգելի և Դիլթայի հեղացըների ներին հարազատությամբ: Այսպես Դիլթային հաջողվել է ցույց տալ, որ ոգու հեգելյան ընթրնման հիմքում ընկած է միստիկական պանթեիզմի կողմից մշակված պմամատիկական հասկացությունը: Տես և W. Dilthey, “Die Jugendgeschichte Hegels”, in: WDGS, B. 4:

<sup>87</sup> WDGS, B. 7, S. 207.

տեղը դմելու, ուրիշի կաշվի մեջ մտնելու, «ներս թափանցնելու» (Sichhineinversetzen) կարողություն<sup>88</sup>: Իզուր չէր Դիլքայը հերմենևտիկայի մասին իր հոդվածում խոսում վերծանողին անհրաժեշտ «անհատական արվեստի և հմտության (Virtuosität) մասին»<sup>89</sup>: «Դասկացումը ես-ի վերագտնումն է դու-ի մեջ,- օրում է նա-՝ ոգին վերագտնում է իրեն փոխկապակցության ավելի ու ավելի բարձր աստիճաններում, ոգու այդ ինքնությունը (նոյն ինքը մնալը՝ Selbstigkeit) ես-ում, դու-ում, համրության յուրաքանչյուր սուբյեկտում, մշակութի յուրաքանչյուր համակարգում, վերջապես ոգու անբողջականության (Totalität) և համընդիանուր պատմության մեջ հնարավոր է դարձնում տարբեր ձեռնարկների (Leistungen) փոխգործունեությունը ոգու մասին գիտություններում»<sup>90</sup>:

Այսպիսով շրջանը փակվում է: Ելմելով հոգեբանական վերապրման նկարագրությունից, Վ. Դիլքայը փորձեց փոխարինել վերջինս օրյեկտիվ կազմավորումների հասկացմամբ, սակայն պարզվեց, որ հասկացման հիմքում ընկած է նոյն «հոգեհարազատության», հոգեկան նիասնության այն պահանջը, որն այդպիսի վճռական նշանակություն ուներ Ներածության... և Նողևոր աշխարհի... հեղինակի համար:

Վերադա՞րձ էր դա արդյոք վաղ շրջանի գաղափարներին: Եվ այն՝ և ոչ: Դիլքայը, իհարկե, ինչ-որ իմաստով կրկնում է իրեն, սակայն վերառված ձևով, բոլորովին այլ մակարդակի վրա, քանի որ փաստորեն հոգեբանական վերապրումից անցում է կատարում դեպի ինտելեկտուալ հայեցողություն: Դրանով իսկ ուշ Դիլքայն անքակտելիորեն կապվում է 20-րդ դարի փիլիսոփայության մեկ այլ հիմնարար ուղղության՝ բներևութաբանության (ֆենոմենոլոգիայի) հետ: Պատահական չէր, որ բնագիտության և ոգու մասին գիտությունների բաժանման տրամաբանական հիմքերի ճշգրտումը Դիլքայն իրագործեց է. Դուսեռլի Տրամաբանական հետազոտությունների անմիջական ազդեցության տակ: Յենց այստեղ էր, որ «պատճառական կապին» տրամաբանորեն հակադրված «կառուցվածքը» փոխարինվեց «նշանակությամբ»: Դատկանշական է այդ կատեգորիայի դիլքայան մեկնաբանությունը: Ժամանակակից տրամաբանական-մեթոդաբանական հետազոտությունների ավանդույթը մեզանում այն մտայնությունն է առաջացրել՝ իբր նշանա-

<sup>88</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 214:

<sup>89</sup> Տե՛ս WDGS, B. 5, էջ 319:

<sup>90</sup> WDGS, B. 7, S. 191.

կությունն անպայմանորեն պետք է կապված լինի լեզվական կազմավորումների, նշանային համակարգերի, այլ կերպ ասած՝ տեքստերի հետ: Այդ կապն, իհարկե, առկա է նաև Դիլբայի մոտ: Ոգու մասին գիտություններում մեկնաբանության անմիջական առարկան պատճական տեքստերն են, հետևաբար և նշանակությունն այստեղ դիտվում է որպես տեքստի նշանակություն: Սակայն լեզվական նշանակությունները միայն արտաքին դրսնորումներն են այն ներքին հոգեկան կապակցությունների, որոնք Դիլբայը դիտում է որպես կյանքի ամրողականության և նրա մասերի հարաբերություններ: Նշանակությունն, այսպիսով, ոչ միայն լեզվական, այլև հոգևոր բներևույթ է: Դիլբայի այդ հասկացության կապը «գիտակցության ինտենցիոնալության» հետ այսօր արդեն կասկած չի հարուցում<sup>91</sup>:

Եթե նշանաբանական ավանդույթը դիտում է նշանակությունը որպես զուտ լեզվական կազմավորում, իսկ բներևութաբանությունն այն տեղադրում է գիտակցության ոլորտում, ապա Դիլբայի ուսմունքում լեզվականի և հոգևորի զարմանալի միասնություն է մկատվում, որը և նրա հետևորդներին հնարավորություն է տալիս հեշտությանք անցնելու ինչպես նշանաբանական, այնպես էլ բներևութաբանական հարացույցներին: Իրեն՝ Դիլբային, այդ երկակիությունը քիչ էր անհանգստացնում, քանի որ լեզվականի և հոգևորի միասնությունը նրա մոտ, մենք գիտենք այդ, որպես նախնական տրվածություն է հանդես գալիս: Իսկ դա պետք է նշանակեր, որ լեզվականորեն ամրագրվածը մշտապես թարախված է հոգևորի մեջ, ապրումը միշտ «խելոք» ապրում է, իսկ կյանքն իր մեջ «էն գլխից» գիտելիք է պարունակում<sup>92</sup>:

<sup>91</sup> Սամրամասն տե՛ս H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 211-212, հմմտ. WDGS, B. 7, էջ 237: Արածարդելով նշանակությունը որպես կենսական ապրումների կարևորությունը գնահատելու ներունակ սկզբունք, Դիլբայը չի մերժում նաև արժեքի հասկացությունը, նշելով սակայն նրա ծևական բնույթը. «Արժեքը առարկայական հարաբերություն է, որը իրականացվում է հասկացության միջոցով: Նրանում կյանքն ընդհատված է: Սակայն դրանով իսկ նա չի կորցնում իր կապը կյանքի հետ» (WDGS, B. 7, S. 243): Վերջին դիտողությունը վկայում է, որ Դիլբայը, ի տարբերություն բաղենցների, փորձում է աղմառավորել արժեքները կենսական փորձի անմիջականության մեջ: «Չկա հասկացում առանց արժեքի զացողության» (Wertgefühl), - գրում է նաև իր ծոցատեսություն (WDGS, B. 5, S. 336):

<sup>92</sup> Լեզվականի և հոգևորի այս հանդարտ-հաշտեցնող համակեցությունը գտնում ենք ֆ. Շլայերնախերի և Դ.-Գ. Գաղամերի հերմենուսիկական ուսմունքներում: Արածիմից դիլբայան ավանդույթը սկզբանիվում է, մյուսը հանդես է գալիս որպես նրա անմիջական շարունակող (Դ.-Գ. Գաղամեր, Զվ. աշխ.): Դիլբայները, որ լեզվականորեն շամրագրված «զուտ հոգևոր» իմաստի գոյության հնարավորության հարցը գտնվում է արդի փիլիսոփայական վեճերի կիզակետում: Այդ մասին տես J. Derrida, *La voix et le phénomène*

Սակայն նշանակության կատեգորիայի դերը Դիլթայի ուսմունքում դրանով չի սպառվում: Բնորոշելով նշանակությունը որպես ամբողջի և մասի հարաբերություն, Դիլթայն արդեն իսկ կանգնում է դժվարին պրոբլեմի առջև: Դա հերմենստիկական շրջանն է, որն ամբողջ նոր և հին հերմենստիկայի պրոբլեմային կիզակետն է կազմում<sup>93</sup>:

Հերմենստիկական շրջանի այն տարրերակը, որը հիմնվում է ամբողջի և մասի փոխադարձ հարաբերության դիալեկտիկայի վրա, Դիլթայը նշանակում է որպես հերմենստիկայի երկրորդ ապորիա<sup>94</sup>: Դժվարությունն այստեղ այն է, որ ամբողջը հասկացվում է ելենելով մասերից, իսկ մասերի ընթանումն, իր հերթին, ամբողջի իմացություն է ենթադրում: Այսպես՝ գեղարվեստական ստեղծագործությունը որպես ամբողջություն հասկանալի է միայն մասերի շնորհիվ, իսկ վերջիններս անընթանելի են ամբողջականության համատեքստից դուրս: Դասկացման ժամանակ ամբողջի և մասի միջև տեղի ունեցող փոխգործունեությունը մի անընդհատ ընթացք է, որը հարստացնում է իմացությունը<sup>95</sup>: Ամբողջի և մասի հասկացություններն ինքնին հարաբերական են. գրական երկը որպես ամբողջ է դիտվում տեքստով կազմող առանձին նախադասությունների համեմատ, սակայն հանդես է գալիս որպես մաս, եթե հարաբերվում է որոշակի գրական ուղղության հետ:

Նույնը վերաբերում է նաև հոգևոր կյանքի ամբողջությանը: «Մարդ պետք է սպասի կյանքի ընթացքի ավարտին և միայն մահվան ժամին կարող է հայացքով ընդգրկել այն ամբողջը, որից ելենելով մասերի հարաբերությունները վերջնականորեն արձանագրելի են դառնում»<sup>96</sup>:

*nomén. Introduction au problème du signe dans la phénoménologie de Husserl*, Presses universitaires de France, Paris, 1967:

<sup>93</sup> Հերմենստիկական շրջան մասին մանրամասն տե՛ս A. Diemer, *Elementarkurs Philosophie: Hermeneutik*, էջ 143:

<sup>94</sup> Տե՛ս WDGS, B. 5, էջ 334:

<sup>95</sup> Հերմենստիկմերն, ինչ խոսք, հասկանում են այս երևույթի դիալեկտիկական բնույթը. «Գնայլվ ավելի «հերմենստիկական պարույրից» են խոսում,- գործ է Ա. Դիմերը,- քանի որ նախահակացունը և հասկացունը (Vorverständnis und Verständnis) ոչ միայն հակառպնում են իրա, այլև այդ հակառպության ընթացքում միևնույն ժամանակ պատճականորեն զարգացնում են միմյանց»: Տե՛ս A. Diemer, *Elementarkurs Philosophie: Hermeneutik*, էջ 114:

<sup>96</sup> WDGS, B. 5, S. 233. Ծաշտադրելով մարդկային կյանքի՝ մահվանով սահմանափակված լինելը, Դիլթայը փիլիսոփայական ուսումնասիրության ոլորտն է մերժաշեն նարող պատճական փաստագիրությունը, նորա այստեղ և իհման գոյություն ունենալը և դրանով հող է նախասարաստել իհմնարար գոյաբանության համար: Թեման զարգացված է Ա. Դայդերի Գոյություն և ժամանակում, ուր մահվան անշրջանցելիության գիտակցումը (ներկայող մարդու գոյությունն ի մահ) կոչված է ոչ թէ սարսափենը ծնել, այլ հնարավորություն տալ ընկալելու կյանքն իր ամբողջականության մեջ և դրանով իսկ հնարավոր դարձնել գոյության եքախտենցիալ հասկացումը: Բայց Դայդերի մոտ մասի այն

Սակայն նույնիսկ կյանքի ավարտը մեկնության ավարտ չի նշանակում. պատմությունը, իսկ նրա հետ մեկտեղ նաև պատմամշակութային ավանդույթը, շարունակում են ապրել հեղինակից հետո: Ամբողջականության շրջանակներն ընդլայնվում են, և հասկացման խնդիրն անվերջ է դառնում: Պահանջվում է, ելենկով հեղինակին անհայտ մշակութային համատեքստերից, հասկանալ նրան ավելի լավ, քան ինքն էր իրեն հասկանում<sup>97</sup>:

«Հասկացումն, այսպիսով, վեր է ածվում գերազույն լարվածություն ունեցող ինտելեկտուալ պրոցեսի, որը երբեք չի կարող լիովին իրականացվել»<sup>98</sup>: Գուցե դա է պատճառը, որ հասկացման վերջնական սահմանումն ինքնին էլիպտիկ է, փոխաբերական: Ուշ շրջանի իր հավելումներից մեկում Վ. Դիլթայը որակում է հասկացումը որպես «որոշակի-անորոշ, որոշարկման փորձ, մշտապես-անավարտ (Nieuende-kommen), մասի և ամբողջի փոխարկում...»<sup>99</sup>:

Այսպիսին է, ընդհանուր գծերով, Վ. Դիլթայի ուսմունքը հասկացման և հասկացման տեսության՝ հերմենուստիկայի մասին: Մնում է ավելացնել, որ ուշ Դիլթայի վերջին նշանակալից մեթոդաբանական գործը Աշխարհայեցողության տիպերը և նրանց դրսմորումը մետաֆիզիկական համակարգերում, աշխատությունն էր<sup>100</sup>: 1911 թվին հրապարակ ելած այդ ուսումնասիրության մեջ Դիլթայը փորձում էր անհատական վերապրումների բազմազանությանը հատուկ որոշակի ընդհանրական գծերից անցնել սրանց օբյեկտիվացված արտահայտությունների տիպարանությանը, դրանով իսկ լրացնելով հերմենուստիկայի ջանքերը ե-

բացառաձակ եղբն է, որով սահմանափակված է պերսոնալիստական հերմանականցումը: Մատնանշելով Դիլթայի ուսմունքը պերսոնալիզմը, Յայենգերն ավելացնում է. «Դիլթայի աշխատանքը միտված է եղբ մարդու մասին այնպիսի գիտության մշակմանը, որը նրան ընթանական մասնակցության ձևում է անհատական գործող անձնափորտյուն»: Տե՛ս Մ. Խանցեգր, *Прологемены...*, շ. 127: «Դիլթայի հայդեկտյամ գնահատականը տե՛ս և նաև M. Heidegger, *Sein und Zeit*, Niemeyer, Tübingen, 1993, շ. 77:

<sup>97</sup>Վ. Դիլթայի համար կարող այս թեզը արդեն վճռական տեղ էր գրավում Ֆ. Շլյերմախերի հերմենուստիկական ուսմունքում: Տե՛ս F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik*, էջ 94:

<sup>98</sup> WDGS, B. 7, S. 227.

<sup>99</sup> Նոյն տեղում:

<sup>100</sup> W. Dilthey, “Die Typen der Weltanschauung und ihre Ausbildung in der metaphysischen Systemen”, in: WDGS, B. 8; ոլուերեն թարգմանությունը տե՛ս և B. Դիլթեյ, “Типы мировоззрения и их обнаружение в метафизических системах”, в кн.: *Новейшие идеи в философии. Сб. I*, 1912: Նշված աշխատության հիմնական գաղափարները ծևավորվել են դեռևս 1898-ին: Տե՛ս և “Die drei Grundformen der Systeme in der ersten Hälfte des 19. Jahrhunderts”, in: WDGS, B. 4:

զակիի և ընդհանուրի միջև կապ հաստատելու և ինտերսուրյեկտիվության պյորբենքը լուծելու համար<sup>101</sup>:

---

<sup>101</sup> Հասկացման տեսության և աշխարհայեցողության տիպերի դասակարգման կոմբեպցիաների լրացուցչական բնույթը իրավացիորեն շեշտում է Մ. Մարգարդտ, Einleitung – W. Dilthey, Aufsätze zur Philosophie, S. 18), սակայն առնվազն ճշգրիտ չէ Ս. Օդույը, հերմենևտիկական և նկարագրական հոգեբանությունը դիտելով որպես Դիլթայի փիլիսոփայության փոխկապակցված բաժիններ (С. Ф. Одуев, “Герменевтика и описательная психология в “Философии жизни” Вильгельма Дильтея”, *Герменевтика: История и современность*, Мысл, М., с. 118): Վերը մենք համոզվեցինք, որ այդ երկու մոտեցումները Դիլթայի հայացքների զարգացման տարբեր փուլեր են ներկայացնում:

## Վիլհելմ Դիլթայ

### ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՅԻ ԾԱԳՈՒՄԸ (1900)<sup>1</sup>

Ավելի վաղ գրված մի աշխատության մեջ ես քննարկել եմ անհատականացման կերպավորումը մարդկային աշխարհում իր այն ձևով, որով այն իրագործվում է արվեստում, հատկապես պոեզիայում։ Այժմ մեր առջև կանգնում է առանձին անձնավորությունների և ընդհանրապես եզակի մարդկային գոյության մեծագույն ձևերի գիտական իմացության մասին հարց։ Արդյո՞ք այդպիսի իմացությունը հնարավոր է, և ի՞նչ միջոցներ ունենք դրան հասնելու համար։

Մեծագույն նշանակության մի հարց։ Մեր գործողություններն ամենուրեք այլ անձնավորությունների հասկացում են ենթադրում՝ մարդկային երջանկության պատկառելի մի մաս ծագում է օտար հոգեվիճակների հուզական վերապրումից։ ամբողջ բանասիրական և պատմական գիտությունը իհմնված է այն նախադրյալի վրա, որ եզակի հասկացումը կարող է օբյեկտիվության աստիճանի բարձրացվել։ Սրա վրա կառուցված պատմական գիտակցությունը ժամանակակից մարդուն հնարավորություն է տալիս մարդկության ողջ անցյալն իր մեջ որպես ներկա պարփակել։ սեփական ժամանակի բոլոր սահմանափակումների վրայով նայում է նա անցյալի մշակույթներին, իր մեջ ժողովում դրանց ուժը և ընթացինում դրանց կախարդանքը՝ երջանկության մեծագույն լիցք է ճառագում մարդու համար այդտեղից։ Եվ երբ սիստեմատիկ բնույթ ունեցող ոգու մասին գիտությունները եզակի այս օբյեկտիվ պատկերացումից ընդհանուր օրինաչափ հարաբերություններ և ընդգրկուն փոխկապակցություններ են մակաբերում, նաև նրանց համար հիմք են մնում հասկացման և մեկնության գործընթացները։ Չետևաբար այդ գիտությունների վստահելիությունը՝ ոչ պակաս, քան

<sup>1</sup> Դիլթայի հոդվածը լույս է տեսել բաներորդ դարասկզբին (Festschrift: Philosophische Abhandlungen, Christoph Sigwart zu seinem 70. Geburtstag 28 März 1900 gewidmet, Tübingen 1900, S. 185–202)։ Դայերեն բարգնանությունը կատարվել է Դիլթայի Երկերի ժղովածոնից (W. Diltzey, *Gesammelte Schriften*, B. 5, Verlag von Teubner, Leipzig und Berlin, 1924, S. 317–338), հրապարակվել է 2005-ին (*Ութիրկոն*, թիվ 1(8), 2005, էջ 9–17)։ Սույն հրատարակությունը պատրաստելիս տեքստը համեմատվել է անգլերեն և ռուսերեն բարգնանությունների հետ, ենթարկվել է խմբագրման, ավելացվել են որոշ ծանոթագրություններ։

պատմության դեպքում, կախված է այն բանից, թե արդյո՞ք եզակիի հասկացումը կարող է հանրաճշանակության մակարդակի բարձրացվել: Այսպիսով՝ արդեն իսկ ոգու մասին գիտությունների շեմին մեզ հանդիպում է մի հիմնախնդիր, որը հենց դրանց է հատուկ՝ ի տարբերություն ողջ բնագիտական իմացության:

Ոգու մասին գիտություններն ամեն մի բնագիտական իմացության նկատմամբ անշուշտ ունեն այն առավելությունը, որ նրանց առարկան զգայություններում տրված արտաքին երևույթ, ինչ-որ գիտակցության մեջ ինչ-որ իրականության սուսկական անդրադարձ չէ, այլ անմիջական ներքին իրականությունն ինքը՝ որպես ներքինից ապրված փոխկապակցություն: Սակայն արդեն իսկ այն կերպից, որով այդ իրականությունը տրված է *մերժին փորձում*, նրա օբյեկտիվ ըմբռնման համար մեծ դժվարություններ են ծագում: Դրանք այստեղ չեն քննարկվելու: Այնուհետև. ներքին փորձը, որում ես հասու եմ լինում սեփական վիճակներիս, ինքնին վերցրած, երբեք ի գործու չէ իմ անհատականությունը հասցնել իմ գիտակցությանը: Միայն իմ ինքնությունն ուրիշների հետ համեմատելով է, որ ես անհատականի փորձ եմ ծեռք բերում. դրանով է իմ գոյության մեջ ուրիշներից տարբերվողը հասնում իմ գիտակցությանը, և Գյոթեն ավելի քան իրավացի էր, որ մեր բոլոր փորձառություններից այս կարևորագույնը շատ դժվար է ծևափորվում, և մեր պատկերացումը սեփական ուժերի չափի, բնույթի և սահմանների մասին միշտ էլ մնում է չափազանց անկատար: Սակայն օտար գոյությունը մեզ տրված է նախ և առաջ դրսից՝ զգայական փաստերի, շարժուձևի, հնչյունների և գործողությունների միջոցով: Առանձին նշանների միջոցով զգայություններում տրվածի նմանակման ընթացքում է միայն, որ մենք լրացնում ենք այդ ներքին փորձառությունը: Ամեն ինչ՝ այդ լրացման նյութը, կառուցվածքը, ամենաանհատական գծերը, մենք պետք է փոխառենք մեր սեփական կենսականությունից: Բայց ինչպես կարող է անհատականորեն կաղապարված գիտակցությունը այդպիսի մի նմանակման միջոցով հասնել օտար և բոլորովին այլ կերպ ծևափորված անհատականության օբյեկտիվ իմացությանը: Այդ ի՞նչ ընթացք է, որ իմացության մնացած պրոցեսների համեմատ այդքան օտար է թվում:

Ընթացքը, որում դրսից զգայականորեն տրված նշանների միջոցով ճանաչում ենք մերքինը, մենք անվանում ենք *հասկացում*. Սա բառօգտագործում է. ստույգ հոգեբանական եզրաբանությունը, որի կարիքը

մենք շատ ունենք, կարող է իրականություն դառնալ միայն այն ժամանակ, երբ արդեն կայուն ամրագրված, հստակ և գործարկելի սահմանված արտահայտության կիրառությանը հավասարապես հետևեն բոլոր գրողները: Բնության հասկացումը՝ *interpretatio naturae*, պատկերավոր արտահայտություն է: Բայց սեփական վիճակների ըմբռնումը նույնպես մենք միայն անուղղակի իմաստով ենք հասկացում կոչում: Դիցուկ, ես ասում եմ՝ չեմ հասկանում՝ ինչպես ես կարող էի այսպես վարվել, այսինքն՝ ես այլևս ինքս ինձ չեմ հասկանում: Դրանով, սակայն, ես ուզում եմ ասել, որ իմ էության՝ զգայական աշխարհում ի հայտ եկած այս դրսնորումը հանդես է գալիս որպես օտարին պատկանող, և ես ի վիճակի չեմ այն մեկնաբանել, կամ մեկ այլ դեպքում՝ ես հայտնվել եմ մի վիճակում, որին նայում եմ տարակուսանքով, օտարին նման: Այսպիսով, մենք հասկացում ենք անվանում այն գործընթացը, ուր զգայականորեն տրված նշաններից ելնելով, ճանաչում ենք հոգեկանը, որի դրսնորում են այդ նշանները:

Այդ հասկացումը ձգվում է մանկական թոթովանքից մինչև Դամկետն ու բանականության քննադատությունը: Քարի, մարմարի, երաժշտորեն ծևավորված հնչյունների, որմաշարժի, խոսքի և գրի, գործողությունների, տնտեսական կարգերի և սահմանադրությունների լեզվով մեզ հետ խոսում է մինմույն մարդկային ոգին և մեկնություն է պահանջում: Այսինքն, հասկացման ընթացքը, որքանով այն իմացության սույն եղանակի ընդհանուր պայմաններով և միջոցներով է բնորոշվում, միշտ պետք է ընդհանուր հատկանիշներ ունենա: Նրա հիմնական գծերը նույն են: Եթե, օրինակ, ես ուզում եմ հասկանալ Լեռնարդոյին, ապա գործողությունների, գեղանկարների, պատկերների և գրությունների փոխանդրադարձ մեկնաբանությունները հանդես են գալիս որպես համասեռ և միասնական խոհերնթաց:

Դասկացումը տարբեր մակարդակներով է երևան գալիս: Դրանք առաջին երրին պայմանավորված են հետաքրքրության աստիճանով: Եթե հետաքրքրությունը սահմանափակ է, այդպիսին է նաև հասկացումը: Ի նշանամբ ենք երբեմն լինում այս կամ այն բանավեճն ունկնդրելիս, միայն արձանագրում ենք մեզ համար գործնական կարևորություն ունեցող որևէ կետ՝ առանց հետաքրքրություն ունենալու խոսողի ներքին կյանքի նկատմամբ: Մինչեւ այլ դեպքերում մենք լարված ծգտում ենք դեմքի յուրաքանչյուր շարժման, յուրաքանչյուր բառի մի-

ջոցով թափանցել խոսողի ներքինի մեջ: Սակայն նույնիսկ գերլարված կենտրոնացումը միայն այն նեպքում արվեստավարժ (*Kunstmalässtig*) գործընթացի կվերածվի, եթե նվաճվի օբյեկտիվության այնպիսի վերահսկելի աստիճան, երբ կյանքի դրսորումն ամրագրված է, և մենք դրա շնորհիվ, կարող ենք նորից ու նորից անդրադառնալ դրան: *Տևականորեն ամրագրված կենսադրսորումների այդպիսի արվեստարնույթ* (*Kunstmalässtig*) հասկացումը մենք անվանում ենք մեկնություն (*Auslegung*) կամ մեկնարանություն (*Interpretation*): Այս ինաստով է, որ գոյություն ունի նաև մեկնարվեստ, որի առարկաները քանդակները կամ գեղանկարներն են, և արդեն Ֆրիդրիխ Ալտգուտս Վոլֆը<sup>2</sup> հնէաբանական հերմենաստիկայի և քննադատության պահանջ էր դնում: Վելքերը<sup>3</sup> հանդես եկավ դրա օգտին, և Փրելերը<sup>4</sup> փորձում էր իրականացնել այն: Բայց արդեն Փրելերն էլ շեշտում էր, որ համր երկերի այդ մեկնությունը մշտապես ստիպված է իր բացատրությունները գրականությունից քաղել:

Գրականության անգնահատելի նշանակությունը հոգևոր կյանքի և պատմության մեր հասկացման համար այն է, որ միայն լեզվի մեջ է մարդու ներքինը գտնում իր լիակատար, սպառիչ և օբյեկտիվորեն հասկանալի արտահայտությունը: Այսպիսով՝ հասկացման արվեստն իր զագարնակեսին է հասնում մարդկային գոյությամ՝ գրի մեջ պահպանված մնացորդի մեկնության կամ մեկնարանության մեջ:

Սրա շնորհիվ այդ մնացորդի մեկնությունը և դրա հետ անբակտելիորեն կապված քննադատական գործառումը բանասիրության ելակետն են հանդիսացել: Վերջինս իր խորքի մեջ գրի մեջ պահպանվածն այդ կերպ գործառելու անհատական արվեստ և հմտություն է (*Virtuosität*). Իրշարժանների կամ պատմականորեն ավանդված գործողությունների ամեն մի այլ մեկնարանություն կարող է հաջողության հասնել միայն այդ արվեստի և նրա արդյունքների հետ փոխկապակցված: Մենք կարող ենք սիսալվել պատմության մեջ գործող անձնավորությունների դրդապատճանների վերաբերյալ, գործող անձինք իրենք կարող են խարուսիկ լույս տարածել դրանց վրա: Սակայն մեծ բանաս-

<sup>2</sup> Ֆրիդրիխ Ալտգուտս Վոլֆ (1759-1824), դասական բանասեր և մանկավարժության տեսաբան:

<sup>3</sup> Կարլ Թեոդոր Վելքեր (1790-1869), ազատական քաղաքական գործիչ և հանրային իրավունքի պրոֆեսոր:

<sup>4</sup> Լյուդվիգ Փրելեր (1809-1861), գերմանացի բանասեր և պատմաբան:

տեղի կամ գյուտարարի, կրոնական հանճարի կամ փիլիսոփայի երկն ամեն պարագայում կարող է միայն նրա հոգևոր կյանքի ճշնարիտ արտահայտությունը լինել. կեղծիքով լեցուն մարդկային հասարակության մեջ այդպիսի երկը միշտ էլ ճշնարիտ է և, ի տարբերություն նշանների միջոցով արձանագրված որևէ այլ արտահայտության, ենթակա է լիակատար և օրյեկտիվ մեկնարանության. չէ՝ որ նրա լույսով են առաջին անգամ լուսավորվում ժամանակի այլ գեղարվեստական հուշարձաններն ու ժամանակակիցների պատմական գործողությունները:

Մեկնարանության այս արվեստը զարգացել է նույնքան աստիճանաբար, օրինաչափ և դանդաղ, որքան բնության քննությունը փորձի միջոցով: Նա առաջացել և պահպանվել է բանասերի անհատական հանճարեղ մեծահմտության (Virtuosität) մեջ: Այսպիսով, բնական է, որ այն գերազանցապես մեկնության մեծահմուտների և նրանց գործերի հետ անհատական շփման միջոցով է ուրիշներին փոխանցվել: Միևնույն ժամանակ, սակայն, ամեն մի արվեստ գործում է կամոնների համաձայն: Դրանք ստվարեցնում են հաղթահարել դժվարությունները: Դրանք մեզ են հասցնում անհատական արվեստում նվաճվածը: Այդ պատճառով էլ մեկնության արվեստից վաղուց ի վեր առաջ է եկել նրա կամոնների մկարագրությունը: Եվ այդ կամոնների բախումից, կենսականորեն կարևոր երկերի մեկնության վերաբերյալ եղած տարրեր ուղղությունների պայքարից և, դրանով պայմանավորված, կամոնները հիմնավորելու պահանջից առաջացել է հերմենատիկական գիտությունը: Այն ուսմունք է գրական հուշարձանների մեկնության արվեստի մասին:

Քանի որ վերջինս հանրանշանակ մեկնության հնարավորությունը մակաբերում է հասկացման վերլուծությունից, այն ի վերջո մոտենում է այն ընդհանուր խնդրի լուծմանը, որից ծայր է առել ներկա քննությունը. ներքին փորձի վերլուծության կողքին կանգնում է հասկացման վերլուծությունը, և երկուսը միախան ոգու մասին գիտություններին ցույց են տալիս դրանցում իրականացվող հանրանշանակ իմացության հնարավորությունն ու սահմանները, որքանով այդ իմացությունը պայմանավորված է այն կերպով, որով մեզ սկզբնապես տրված են հոգեբանական փաստերը:

Այժմ ես կցանկանայի օրինաչափ այդ ընթացքը ցուցադրել հերմենատիկայի պատմության մեջ: Թե ինչպես խորը և հանրանշանակ հասկացման կարիքից առաջացավ բանասիրական մեծահմտությունը,

որից իրենց հերթին ծագեցին կանոնների առաջադրումը, դրանց կարգավորումը որոշակի նպատակի ներքո, որը, տվյալ ժամանակի գիտության վիճակով պայմանավորված, հետագա ճշգրտումների ենթարկվեց, մինչև որ վերջապես կանոնների առաջադրման ապահով ելակետ գտավ հասկացման վերլուծության մեջ:

## 1.

Բանաստեղծների արվեստավարժ մեկնությունը (ερμηνεια) զարգացել է Հունաստանում՝ դասավանդման կարիքներից: Հոմերոսի և այլ բանաստեղծների մեկնությանն ու քննադատությանն աղերսված շռայլ հոգևոր խաղը հունական լուսավորության դարաշրջանում սիրված էր անենուրեք, որտեղ հունարեն էին խոսում: Ավելի ամուր հիմք առաջացավ այն ժամանակ, երբ այդ մեկնությունը սովորականություն և հոեստորների դպրոցներում առնչության մեջ մտավ հոեստորականության հետ: Քանզի սրանում՝ խոսակցականության առնչությամբ գործադրված, թաքնված էր ավելի ընդհանուր ուսմունքը գրական կոմպոզիցիայի մասին: Արիստոտելը՝ օրգանական աշխարհի, պետական կառույցների և գրական ստեղծագործությունների այդ մեծագույն համակարգողն ու տրոհողը, իր Հոեստորականության մեջ սովորեցնում էր մասերի բաժանել գրական արտադրանքի ամբողջությունը, տարրերակել ոճաձները, ճանաչել ոիթմի, պարբերության, փոխարերության ազդեցությունը: Անքանութեանը հոեստորականության մեջ ներգործող խոսքի հասկացությանի բնորոշումներն ավելի պարզ, բացորոշ ծևով են առաջադրվում. այդպես են ներկայացվում օրինակը, էմբիմեմը, ասույթը, իրոնիան, փոխարերությունը, հակաթեզը: Իսկ արիստոտելյան պոետիկան բացորոշ ուսումնասիրության առարկա դարձրեց պոեզիայի ներքին և արտաքին ծերեն ու ներգործող տարրերը՝ արտածված պոեզիայի և նրա տեսակների էության և նպատակի սահմանումից:

Մեկնության արվեստը և դրա կանոնների համակարգումը երկրորդ կարևոր քայլը կատարեցին ալեքսանդրյան բանասիրության մեջ: Հունաստանի գրական ժառանգությունը կուտակվեց գրադարաններում, տեքստերի գրախոսականներ պատրաստվեցին, և կատարված քննադատական աշխատանքի արդյունքներն արձանագրվեցին քննադատական նշանների վարպետորեն մշակված համակարգի միջոցով: Ոչ հավաստի ձեռագրերն անջատվեցին, պատրաստվեցին առկա ողջ

գրակազմի ցանկերը: Եվ ահա գործի անցավ բանասիրությունը՝ որպես անմիջական լեզվական հասկացման վրա հիմնված տեքստի գրախոսության արվեստ, բարձրագույն քննադատություն, մեկնություն և արժևորում, որպես հունական ոգու վերջին և ամենահարազատ կերտվածքներից մեկը. չէ<sup>5</sup> որ իրճվանքը մարդկային խոսքի նկատմամբ նրա զորեն շարժիչ ուժն է եղել Հոմերոսի ի վեր: Ալեքսանդրյան մեծ բանասերներն սկսեցին նաև գիտակցել այն կանոնները, որոնք պարունակում էր իրենց կիրառած հանձարեղ հմտությունը: Արդեն Արիստարքոսը<sup>6</sup> գիտակցաբար էր գործում՝ Հոմերոսի բառօգտագործումը խստիվ և ամբողջական ձևով արձանագրելու և բացատրությունն ու տեքստի սահմանումը դրանով հիմնավորելու սկզբունքին համաձայն: Հիպարքոսը<sup>7</sup> գրական-պատմական հետազոտությունը լիովին գիտակցված կառուցում էր առարկայական մեկնաբանության վրա, երբ ցույց էր տալիս Արաբոսի<sup>8</sup> Ֆենունների աղյուրները և այդ բանաստեղծությունը դրանցից ելնելով էր մեկնաբանում: Եվ եթե Հեսփորոսին ավանդաբար վերագրվող բանաստեղծություններից որևէ մեկը կեղծ էր ճանաչվում, Հոմերոսի վիպերգություններից տողերի մի պատկառելի քանակ էր անշատվում, հայտարկում էր, որ Իշխակամի վերջին երգը և, առավել միաձայնությամբ, նախավերջին երգի մի մասն ու Ողիսակամի վերջին երգն ամբողջությամբ ավելի վաղ ծագում ունեն, ապա այդ ամենը տեղի էր ունենում գուգորդության սկզբունքի մեծարվեստ կիրառության շնորհիվ, որից ելնելով էլ միաժամանակ արձանագրվում էին տվյալ բանաստեղծության բառօգտագործման կանոնը, պատկերացումների շրջանակը, ներքին համաչափությունն ու գեղագիտական արժեքը, և այն ամենը, ինչ դրան հակասում էր, մի կողմ էր դրվում: Չէ<sup>9</sup> որ նման բարոյագեղագիտական կանոնի կիրառությունը Ձեմողոտոսի<sup>10</sup> և Արիստարքոսի կողմից կանհայտորեն ծագում է արեթեգերի (Atethesen)<sup>11</sup> հիմնավորման հետևյալ եղանակից. ծիա ու առեռեց (բանզի չի համապատասխանում), այն է՝

<sup>5</sup> Արիստարքոս (մ.թ.ա. մոտ 217-145), Ալեքսանդրյայի թերականական և քննադատական դպրոցի հիմնադիր:

<sup>6</sup> Հիպարքոս (մ.թ.ա. մոտ 160), հոյն աստղագետ, Արաբոսի երկի մեկնության հեղինակ:

<sup>7</sup> Արաբոս (մ.թ.ա. մոտ 270) երկու հունարեն աստղագիտական պրեմեների հեղինակ:

<sup>8</sup> Ձեմողոտոս Եթեսի (մ.թ.ա. մոտ 325-260), հոյն թերական, Ալեքսանդրյայի գրադարանի առաջին վերակացում, Հոմերոսի Իշխակամի և Ողիսակամի առաջին քննադատական խմբագիրը:

<sup>9</sup> Հունահեմ՝ «հրամաքում դրույթից», մկանի ուժի հենացած կամ ոչ ստույգ դրույթի մերժումը տեքստի վերլուծության ժամանակ: Այս եղողի թարգմանությունը որոշակի դժվարություններ է առաջացրել Դիլայի անզլանեցու թարգմանիչների մոտ. այսպէս, ֆ. Ձեմոսն և Ո. ՄըրՌիլը առաջարկել են «աքնթեզ»-ի փոխարեն կարդալ «անտիթեզ»:

quid herorum vel deorum gravitatem minus decere videbatur (քանզի հարիր չի թվում հերոսների կամ աստվածների արժանիքներին): Արիստարքոսը նաև վկայակոչել է Արիստոտելին:

Մեկնաբանության ծիշտ ընթացակարգի վերաբերյալ մեթոդական գիտակցությունը ալեքսանդրյան դպրոցում էլ ավելի ուժեղացավ պերգամենյան բանափրությանը հակադրվելու շնորհիվ: Ներմենստիկական ուղղությունների մի հակադրություն, որ համաշխարհային պատմական նշանակություն ուներ: Քանզի քրիստոնեական աստվածաբանության մեջ, նոր իրավիճակում, այն նորից է առաջ եկել, և բանաստեղծների ու կրոնական գորոնների մասին երկու մեծ պատմական տեսակետները պայմանավորված են եղել դրանով:

Ստորև լրացրից կրատես Մալոսցին<sup>10</sup> պերգամենյան բանափրության մեջ ներմուծեց այլաբանական մեկնաբանության սկզբունքը: Այս մեկնակերպի տևական իշխանությունը պայմանավորված էր նախսառաջ նրանով, որ այն հավասարակշռում էր կրոնական նախավկայությունների և զտված-մշակված աշխարհայացքի միջև եղած հակասությունը: Դրա շնորհիվ այն հավասարապես անհրաժեշտ է եղել Վեհաների, Յոմերոսի, Աստվածաշնչի և Ղուրանի մեկնիչներին՝ նույնքան անքակտելի, որքան և անօգտագործելի մի արվեստ: Բայց այդ գործելակերպի հիմքում բանաստեղծական և կրոնական արտադրողունակության խորը մի հայեցակետ կար ընկած: Յոմերոսը պայծառատես է, և նրա խորունկ բափանցումների ու կոպիտ զգայական պատկերների միջև եղած հակասությունը կարող է բացատրվել միայն, եթե վերջիններս որպես զուտ բանաստեղծական կերպավորման միջոցներ ընթանվեն: Եվ քանի որ այդ կապը հասկացվում էր որպես պնևմատիկ իմաստի դիտավորյալ քողարկում պատկերների միջոցով, առաջացավ այլաբանական մեկնաբանությունը:

## 2.

Եթե չեմ սխալվում, այդ հակասությունն իր վերադարձն է ապրում փոփոխված պայմաններում՝ ալեքսանդրյան և անտիոքյան աստվածաբանական դպրոցների պայքարում: Նրանց ընդհանուր հիմնադրույթն անշուշտ այն էր, որ մարդարենության և կատարման ներքին մի

<sup>10</sup> Կրատես Մալոսցի Կիլիկիայից, Արիստարքեսի ժամանակակիցն է, Պերգամենյան քերականական դպրոցի հիմնադիրը:

փոխկապակցություն միավորում է Յին և Նոր կտակարանները: Այդ կապն առաջանում է Նոր կտակարանում իհն մարգարեությունների և նախանձնուշների օգտագործման շնորհիվ: Քրիստոնեական եկեղեցին, որը ելնում էր այդ կանխադրույթից, հայտնվեց հակառակորդների հանդեպ բարդ մի իրավիճակում՝ կապված Սուրբ Գրոց մեկնության հետ: Յինաների դեմ նա կարիք ուներ այլարանական մեկնության՝ Բանի աստվածաբանությունը (Logos-Theologie) Յին կտակարան ներմուծելու համար. գնոստիկների պարագայում, ընդհակառակը, նա պետք է պաշտպանվեր այլարանական մեթոդի չափազանց հեռու գնացող կիրառությունից: Փիլիպին<sup>11</sup> հետևելով, Յուստինոս<sup>12</sup> ու Իրենեոս<sup>13</sup> փորձեցին կանոններ մշակել այլարանական մեթոդի սահմանագատման և օգտագործման համար: Յինաների և գնոստիկների հետ նույն պայքարում Տերտուլիանոսը<sup>14</sup> փոխ առավ Յուստինոսի և Իրենեոսի գործելակերպը, իր հերթին զարգացնելով ավելի կատարյալ մեկնարկեստի արդյունավետ կանոններ, որոնց սակայն ինքն էլ միշտ չէ, որ հավատարիմ էր մնում: Յունական եկեղեցում այդ հակառակության ընթացքում սկզբունքային նակարդակի հասավ: Անտիոքյան դպրոցն իր տեքստերը բացատրում էր միայն քրիստոնական-պատմական հիմքերից ելնելով: Այսպես օրինակ, Թեոդորոս Անտիոքյան Եղջ Եղջոցում տեսնում էր միայն հարսանեկան մի երգ: Յորը նրա համար միայն պատմական ավանդության բանաստեղծական կերպավորում էր: Նա մի կողմ դրեց սաղմոսների վերնագրերը և մերժեց մարգարեական պատգամախոսությունների գաղափարը մասի ուղղակի առնչությունը Քրիստոսի հետ: Նա չէր ընդունում տեքստերի կրկնակի իմաստը, այլ միայն եղելությունների ավելի բարձր կարգի փոխկապակցվածությունը: Դրան հակառակ, Փիլիպը, Կլեմենտը<sup>15</sup> և Օրիգենը<sup>16</sup> բուն տեքստերի մեջ պնմատիկ իմաստը տարբերում էին իրականից:

<sup>11</sup> Փիլիպ Յին (Ալեքսանդրիացի) (մ.թ.ա. 20-մ.թ. 40), իրեա հելլեն փիլիսոփա, որը իրեաների Սուրբ Գիրքը մեկնել է հունական փիլիսոփայության համատեքստում:

<sup>12</sup> Յուստինոս Նախառակ (մոտ մ.թ. 100-160), հոյն աստվածաբան, եկեղեցու հայրերից:

<sup>13</sup> Սր. Իրենեոս, Լիոնի եպիսկոպոսը, ապրել է մ.թ. 2-րդ դարի վերջին կեսին, գնոստիկների եռանդուն հակառակորդ:

<sup>14</sup> Կվինտոս Սեպտիմոս Ֆլորենս Տերտուլիանոս (մ.թ. 160-240), վաղ քրիստոնեական շրջանի գրող և աստվածաբան, նախապես ովկորված է եղել ստորցիզմով, քրիստոնեությունը ընդունել է մոտ 195-ին:

<sup>15</sup> Կլեմենտ/Կլեմենտ Ալեքսանդրիացի (մոտ մ.թ. 150-215), նպաստել է հելլենիզմի և քրիստոնեական մոտքի փոխմերթափականցմանը, Օրիգենեսի ուսուցիչը:

<sup>16</sup> Օրիգենես (մոտ մ.թ. 185-254), քրիստոնյա աստվածաբան, աստվածաշնչյան բանափրության հիմնադիր:

Մեկնության արվեստից դեպի հերմենուստիկա առաջընթացը, որով այն գիտական գիտակցության մակարդակի է բարձրացվել, հերթական քայլ էր, որն իրականացվեց մեզ հասած առաջին հերմենուստիկական տեսությունների պայքարի շնորհիվ: Արդեն Փիլոնը խոսում է Յին կտակարանում կիրառված «կանոնների» (կանոնեց) և «այլաբանության օրենքների» (նօմօտ տէց ալլեղորիաց) մասին, որոնց իմացությունը պետք է կազմի Սուլը Գրքի մեկնաբանության հիմքը: Սրա վրա Օրիգենեսը Առաջին սկզբունքների մասին (Պերι աρχաց) աշխատության չորրորդ գրքում և Ավգուստինոսը Քրիստոնեական ուսմունքի մասին (De doctrina Christiana) երկի երրորդ գրքում կապակցված հերմենուստիկական տեսություն են հիմնել: Սրանց իրենց հերթին հակադրվել են անտիքյան դպրոցի երկու, ցավոք կորուսյալ, աշխատություն՝ Դիոդորոս՝ *Տեսության և փոխարերության հակամարտությունը* (Տιց ծիափօրա թեարιաց և ալլեղորիաց) և Թեոդորոս՝ *Վասն պատմության և փոխարերության ընդդեմ Օրիգենեսի* (De allegoria et historia contra Origenem):

## 3.

Վերածննդից սկսած մեկնաբանությունը և նրա կանոնների ծևավորումը նոր փուլ են մտնում: Լեզվի, կյանքի պայմանների և ազգության բերունով մարդ անջատված էր դասական և քրիստոնեական հնադարից: Դրան համապատասխան՝ այլ կերպ, քան Յոռմում էր, մեկնաբանությունը վերածվում է օտար հոգևոր կյանքի մեջ թափանցման՝ իրականացված քերականական, առարկայական և պատմական հետազոտությունների միջոցով: Եվ այդ նոր բանասիրությունը՝ բազմաբանությունը (Polymathie) և քննադատությունը, ամենազանազան առումներով ստիպված էր աշխատել միայն կրկնորդված տեղեկությունների և բեկորների հետ: Ուրեմն այն պետք է լիներ ստեղծագործական և կառուցողական նոր ծևով: Դրա համար էլ բանասիրությունը, հերմենուստիկան և քննադատությունն ավելի բարձր աստիճանի բարձրացան: Յաջորդ չորս դարերից մեզ հարուստ հերմենուստիկական գրականություն է հասել: Այն երկու տարբեր հոսանքի է բաժանվում, քանի որ դասական և աստվածաշնչյան գրերն էին այն մեջ ուժեղը, որ մարդ ձգտում էր յուրացնել: Դասական-բանասիրական կանոնադրումն իրեն բնորոշում էր

որպես *ars critica*: Այդպիսի երկերը, որոնցում առանձնանում էին Սկոպիոսի<sup>17</sup>, Կլերիկոսի<sup>18</sup> և Կալեսիոսի<sup>19</sup> անավարտ գործերը, իրենց առաջին մասում տալիս էին հերմենուսիկական արվեստի տեսությունը: Անհամար հոդվածներում և առաջաբաններում խոսք էր գնում de interpretatione<sup>20</sup>: Սակայն հերմենուսիկայի վերջնական կազմավորման համար մենք պարտական ենք աստվածաշնչյան մեկնաբանությանը: Այդ գրվածքներից առաջին նշանակալիցը և երսի առավել խորագինը Ֆլացիուսի<sup>21</sup> *Clavis*ն էր (1567):

Գտնված մեկնության կանոնների մասին պատկերացումն այստեղ առաջին անգամ միացվեց ուսուցողական կառույցի հետ՝ շնորհիվ մի կանխադրույթի, ըստ որի կանոններին հետևող մեծարվեստ ընթացակերպի կիրառության դեպքում հանրանշանակ հասկացումը կարող է հասանելի լինել: Այս սկզբունքային տեսակետը, որ փաստորեն կառավարում է ողջ հերմենուսիկան, գիտակցվել է Ֆլացիուսի կողմից 16-րդ դարում նովոր պայքարի ընթացքում: Ֆլացիուսը ստիպված էր երկու ծակատով պայքարել: Ինչպես վերամկրտողները, այնպես էլ վերանորոգված կաթոլիցիզմը պնդում էին Սուրբ Գրքի մութ լինելը: Սրան հակադրու Ֆլացիուսը դասեր է արնում մանավանդ Կալվինի աստվածաշնչյան մեկնությունից (Exegese), որտեղ ամենդիատ անցում էր կատարվում մեկնություններին: Այն օրերի լուրերականի ամենից հրատապ խնդիրը ավանդույթի մասին կաթոլիկական ուսմունքի հերքումն էր, որը հենց այդ ժամանակ նոր ծևակերպում էր ստացել: Գորի մեկնությունն իրենով պայմանավորելու ավանդույթի հավակնությունը մեկնության բողոքական սկզբունքի դեմ բանավեճում կարող էր հիմնավորվել միայն այն դեպքում, եթե ընդունվեր, որ աստվածաշնչյան գրերից ինքնին բավարար և հանրանշանակ մեկնություն արտածվել չի կարող: Թրիդենտյան ժողովը, որն աշխատեց 1545-1563 թվականներին, այդ հարցերը քննարկել է իր չորրորդ նստաշրջանից սկսած. 1564-ին լույս է տեսել դեկրետների առաջին բնագրային հրա-

<sup>17</sup> Գասպարոս Սկոպիոս (1576-1649), նոր եվրոպական բանասիրության ստեղծողներից մեկը, լատինաբան:

<sup>18</sup> Յոհաննես Կլերիկոս (1657-1736), հոլանդացի աստվածաբան:

<sup>19</sup> Յենի Կալեսիոս (Ամրի Կալուա) (1603-1676), ֆրանսիական եկեղեցու պատմաբան:

<sup>20</sup> Մեկնության մասին:

<sup>21</sup> Սարբիան Ֆլացիուս իլիրիկոս (1520-1575), լուրերական աստվածաբան, նրա Բանալի սուրբ Գրոց (*Clavis Scripturae Sacrae*) գիրքը նվիրված է աստվածաշնչի մեկնությանը:

տարակությունը։ Դրանցից ամենախորագնինը Բելարմիմա<sup>22</sup> էր՝ թրի-դենտյան կարուղիզմի այդ ներկայացուցիչը, որ Ֆլացհուսի երկասի-րությունից որոշ ժամանակ անց՝ 1581 թ., իր բանավիճային գրության մեջ մերժում էր Աստվածաշնչի հասկանալիությունը և դրանով փորձում ապացուցել ավանդույթի միջոցով այն լրացնելու անհրաժեշտությունը։ Այդ պայքարի հետ կապված, Ֆլացհուսը վճռում է հերմենևստիկական եղանակով ցույց տալ հանրանշանակ մեկնաբանության հնարավո-րությունը։ Եվ այդ հանձնառության իրականացմանն ուղղված իր նա-քառում ընթացքում նա այնպիսի միջոցների և կանոնների իմաստա-վորման է հանգում, որ ավելի վաղ գոյություն ունեցած հերմենևստիկա-ներից ոչ մեկը երթև չէր ստեղծել։

Եթե մեկնիցը տեքստի հետ կապված դժվարությունների է հանդի-պում, ապա դրանք լուծելու նուրբ, օժանդակ մի միջոց կա. Սուրբ Գրոց փոխկապակցվածությունը՝ կենդանի քրիստոնեական հավատի մեջ տրված։ Եթե սա դոգմատիկականից մեր մտածելակերպի թարգմա-նենք, կտեսնենք, որ կրոնական փորձառությանը բնորոշ հերմենևստի-կական այս դրույթը միայն առանձին դեպքն է ընդհանուր սկզբունքի, որի համաձայն՝ ամեն մեկնաբանության մեջ առկա է իրական փոխկա-պակցություններից ելնող մեկնության գործոնը։ Մեկնության այդ կրո-նական սկզբունքի կողքին, սակայն, կան նաև դատողության վրա հիմնվածները։ Դրանցից ամենամերձավորը քերականական մեկնաբա-նությունն է։ Բայց Ֆլացհուսն առաջինն է լինում, որ դրա հետ մեկտեղ ըմբռնում է մեկնության հոգեբանական կամ տեխնիկական սկզբունքի նշանակությունը, որի համաձայն՝ առանձին տեղը պետք է մեկնաբան-վի՝ ողջ երկի մտադրությունից և կառուցվածքից ելնելով։ Եվ այդ տեխ-նիկական մեկնաբանության համար նա առաջինն է մեթոդաբար օգ-տագործում հուետորականության մեջ նվաճված գիտելիքները՝ գրա-կան ստեղծագործության ներքին փոխկապակցության, նրա կառուց-վածքի և ներգործող տարրերի վերաբերյալ։ Մինչ այդ խնդիրն արդեն նախապատրաստված էր արհստոտելյան հուետորականության այն փո-խակերպմանը, որն իրականացրել էր Մելամիթոնը<sup>23</sup>։ Ֆլացհուսը գի-տակցում է, որ առաջինն ինքն է մեթոդաբար կիրառել առանձին տեղե-

<sup>22</sup> Ութերս Բելարմին (1542-1621), կարդինալ, ծիզվու աստվածաբան։

<sup>23</sup> Ֆիլիպ Մելամիթոն, անունը Շվարցեր ազգանվան հունականացված տարրերակն (1497-1560), Լութերի մերձավոր գինակիցներից, բանասեր, փիլիսոփա, հումանիստ, աստվածաբան, դասագրքերի հեղինակ, համարվել է «Գերմանիայի ուսուցիչը»։

րի միանշանակ սահմանան համար անհրաժեշտ օժանդակ այն միջոցը, որը տալիս են երկի համատեքստը, նպատակը, համանասնությունը, առանձին մասերի և բաղկացուցիչների համակցվածությունը (Kongruenz): Դրա հերմենուստիկական արժեքը նա ստորոգում է մեթոդի մասին ուսմունքի ընդհանուր հայեցակետին: «Չէ՞ որ բոլոր դեպքերում և ամենուրեք որևէ ամբողջի առանձին մասերն այդ ամբողջի և նրա մյուս մասերի նկատմամբ իրենց հարաբերության շնորհիվ են հասկանալի մնում»: Նա հետամուտ է լինում ստեղծագործության այդ ներքին ձևին ու առանձին ներգործող տարրերին և արդեն Պողոսի ու Յովհաննու ոճերի նրբինաստ բնութագրություններ է ուրվագծում: Դա մի մեծ առաջընթաց էր՝ իհարկե, հռետորական ընթրննան սահմաններում: Չէ՞ որ, ի վերջո, Մելանխորին և Ֆլացիուսի համար ամեն մի գրվածք, ինչպես կանոնների համաձայն ստեղծված է, այնպես կանոնների համաձայն էլ հասկացվում է: Այն նման է տրամաբանական ավտոմատի, որ զգեստավորված է ոճով, պատկերներով և խոսքի ֆիզուրներով:

Նրա գործի ձևական թերինները հաղթահարվեցին Բառումգարտենի հերմենուստիկայում: Բայց նրանում, միևնույն ժամանակ, իր նշանակալիությունը հավաստեց երկրորդ մեծ աստվածաբանական-հերմենուստիկական շարժումը: Բառումգարտենի *Լուրեր Յալլեի մի գրադարանից* երկի շնորհիվ գերմանացիների տեսադաշտը հոլանդական մեկնիչների հետ մեկտեղ սկսեցին մուտք գրոնել անգլիացի ազատախոհներն ու Յին կտակարանի լուսաբանմանք գրադվոր ազգագրագետները: Զենլերը և Միխայելիսը ձևավորվեցին նրա հետ շփման և նրա աշխատանքներին մասնակցության շնորհիվ: Միխայելիսն առաջինը կիրառեց լեզվի, պատմության, բնության և իրավունքի միասնական հայեցակարգը Յին կտակարանի մեկնաբանության համար: Զենլերը՝ մեծն թրիստիան Բառուի նախորդը, ջարդեց նորկտակարանային կանոնի միասնությունը, ծզգիտ խնդիր առաջարից ամեն մի առանձին գրվածք իր տեղական բնույթից ընթրնելու վերաբերյալ, հետո այդ գրությունները միավորեց մի նոր միասնության մեջ, որ մակարերված էր երայական քրիստոնեության և ազատ կարգի քրիստոնյաների միջև մղված վաղքրիստոնեական պայքարի կենդանի պատմական ընթրնումից; աստվածաբանական հերմենուստիկայի համար կատարած իր նախապատրաստության ընթացքում նա խոժող վճռականությանը հանգեցրեց ողջ այդ գիտությունը երկու հիմնամասի՝ լեզվի օգտագործման և պատմական հանգամանքների հիման վրա կատարվող

մեկնաբանությունների: Դրանով անբողջացավ մեկնության ազատագրումը դոգմայից, իմնադրվեց քերականական-պատմական դպրոցը: Այնուհետև եռնեստի նրբազգաց և զգուշավոր ոգին երկնեց նոր հերմենևտիկայի դասական գրվածքը՝ *Մեկնության հիմնարկը (Institutio interpretis)*: Այն կարդալով՝ դեռ Շլյերմախերն է իր սեփական հերմենևտիկան զարգացրել: Իհարկե, այդ առաջընթացը նույնպես իրականանում էր խիստ սահմաններում: Այդ մեկնիչների ձեռքի տակ որևէ դարաշրջանի որևէ գրվածքի կառուցվածքն ու գաղափարական հյուսվածքը տարրալուծվում էին միևնույն կերպ՝ տեղով և ժամանակով պայմանավորված պատկերացումների մի շրջանակում: Պատմության այդ պրագմատիկական ըմբռնման համաձայն՝ կրոնական և բարոյական առումնով նույնակերպ նարդկային բնությունը միայն արտարին՝ տեղի և ժամանակի հանգամանքներով է սահմանափակված: Այն պատմական չէ:

Այդ ամբողջ ընթացքում դասական և աստվածաշնչյան հերմենևտիկանները զուգահեռ էին ընթանում: Պետք չէ՞ արդյոք, այդ երկուսը որպես ընդհանուրի կիրառություններ հասկանալ: Վոլֆական Մայերն այդ քայլն արեց իր Մեկնության ընդհանրական արվեստի փորձով՝ 1757-ին: Նա իր գիտության բնույթը իսկապես հնարավորինս ընդհանուր էր հասկանում. այն պետք է այնպիսի կանոններ նախանշեր, որոնք դիտարկելի են նշանների ամեն մի մեկնության ժամանակ: Բայց գիրքը նորից ցույց տվեց, որ կառուցիկության և համաշափության դիտակետից ելնելով, նոր գիտություն չեն հայտնաբերի: Այդպես միայն կեղծ պատուհաններ են գոյանում, որոնց միջով ոչ ոք նայել չի կարող: Ազդեցիկ հերմենևտիկան կարող էր առաջանալ միայն այնպիսի մի գլխում, որտեղ բանասիրական մեկնաբանության մեծահմտությունը միանում էր իսկական փիլիսոփայական ունակության հետ: Նման մեկն էր Շլյերմախերը:

## 4.

Պայմանները, որոնցում աշխատում էր Վինկելմանի՝ գեղարվեստական երկերի մեկնաբանությունը, Յերդերի՝ դարաշրջանների և ժողովուրդների հոգու մեջ համահանճար թափանցումը, նաև նոր գեղագիտական հայեցակետից ելնող բանասիրությունը՝ ներկայացված Յայնեի (Heyne), Ֆրիդրիխ Ալտգուտ Վոլֆի և նրա աշակերտների անուն-

ներով, որոնցից Յայնդորֆը՝ համատեղ պլատոնյան ուսումնասիրությունների շնորհիվ, սերտորեն կապված էր Ծլայերմախերի հետ – այս ամբողջը նրա մոտ կապվում էր գերմանական դասական փիլիսոփայության մեթոդի հետ, որը գիտակցության մեջ տրվածից այն կողմ անցնելով, հասնում էր ստեղծագործական այն ունակությանը, որը, որպես միասնություն գործելով և ինքն իրեն չգիտակցելով, մեր մեջ առաջ է բերում աշխարհի անբողջական ծնը: Յենց այս երկու մոմենտների միակցումից էլ առաջացան նրա յուրահատուկ մեկնության արվեստը և գիտական հերմենևտիկայի վերջնական հիմնավորումը:

Մինչ այդ հերմենևտիկան, լավագույն դեպքում, կանոններից կառուցված մի շենք էր, որի մասերը՝ առանձին կանոնները, միասին պահող հանրանշանակ մեկնարանության նպատակն էր: Այդ մեկնարանության ընթացքում փոխազդող գործառույթները նա սահմանազատել էր որպես քերականական, պատմական, գեղագիտական-հոետորական և առարկայական մեկնություններ: Բազում դարերի բանասիրական մեծահմտությունից նա գիտակցությանն էր հասցրել այն կանոնները, որոնց համաձայն այդ գործառույթները պետք է ազդեին: Եվ ահա Ծլայերմախերն այդ կանոններից այն կողմ է անցնում՝ դեպի հասկացման վերուծությունը՝ դեպի այդ նպատակադրված գործողության ճանաչումն ինքնին, և այդ ճանաչումից էլ մակարերում է հանրանշանակ մեկնության հնարավորությունը, նրա օժանդակ միջոցները, սահմանները և կանոնները: Բայց հասկացումը՝ որպես վերապատկերում, որպես վերստեղծում, նա կարող էր վերլուծել միայն գրական արտադրության ընթացքի մեկատմամբ իր կենդանի հարաբերության մեջ: Ստեղծագործական ընթացքի կենդանի հայեցողության մեջ, ուր առաջանում է կենսունակ գրական երկը, նա ընդունեց մեկ այլ ընթացակերպ ճանաչելու պայմանը, ընթացակերպ, որը գրավոր նշաններից հասկանում է երկի ամբողջությունը, իսկ սրանից՝ նրա հեղինակի մտադրությունն ու ոգեկերտվածքը:

Սակայն այդ ձևով դրված հիմնահարցի լուծումը նոր հոգեբանական-պատմական աշխարհայացք էր պահանջում: Մենք հետևել ենք խնդրու առարկա հարաբերությանը՝ սկսած այն կապից, որ կա հունական մեկնության և որպես գրական արտադրության որոշակի ծնին վերաբերող արվեստավարժ ուսմունք հասկացված հոետորականության միջև: Բայց այդ երկու ընթացակերպերի ըմբռնումը միշտ տրամաբա-

նական-հռետորական է մնացել: Կատեգորիաները, որոնց միջոցով այն իրականացվել է, միշտ եղել են սարքելը (Machen), տրամաբանական փոխկապակցությունը, տրամաբանական կարգը և այնուհետև այս տրամաբանական արդյունքները ոճի, խոսքի ֆիզուրների և պատկերների միջոցով զարդարելը: Դիմա, սակայն, գրական արտադրանքը հասկանալու համար բոլորովին նոր հասկացություններ են կիրառվում: Այժմ կա միասնական և ստեղծագործ մի ունակություն, որն ինքն իր ազդելուն ու կազմավորելուն անզիտակից, հանձն է առնում ստեղծագործություն երկնելու առաջին գրգիռները և պատկերավորում դրանք: Ընկալումը և ինքնուրույն պատկերումն այստեղ անբաժանելի են: Անհատականությունն իր ազդեցությունը տարածում է մինչ մատնեծայրերն ու առանձին բառերը: Գրական երկի արտաքին և ներքին ծնը նրա բարձրագույն արտահայտությունն են: Եվ ահա այդ գործը բախվում է սեփական անհատականությունն ուրիշի երկի հայեցողությանը լրացնելու չհագեցող պահանջի հետ: Հասկանալն ու մեկնարանելը կյանքում իսկ միշտ առկա են և իրապուրիչ՝ իրենց ամբողջացումը նրանք գտնում են կյանքով լեցուն երկերի և նրանց՝ հեղինակների ոգու հետ ունեցած փոխադարձ կապի մեծարվեստ մեկնարանության մեջ: Սա էր նոր աշխարհայացքի այն առանձնահատուկ ծնը, որ նա ստացել էր Շլայերնախերի ոգում:

Եվ դա պապակովեց ևս մեկ պայման ընդհանուր հերմենևտիկայի մեջ շարժի համար, որում Շլայերնախերը և նրա ընկերները նոր հոգեբանական-պատմական աշխարհայացքը մեկնարանության բանասիրական արվեստի վերածեցին: Դենց այդ ժամանակ էր, որ գերմանական ոգին, ի դեմս Շիլլերի, Վիլհելմ Փոն Շոլմբուլդտի, Շլեգել Եղբայրների, շրջադարձ էր կատարել բանաստեղծական արտադրությունից դեպի պատմական աշխարհի հետադարձ հասկացումը: Դա մի հզոր շարժում էր. նրան են պարտական Բյոբը, Դիսսենը, Վելքերը, Շեգելը, Ռամկեն, Սավինյին: Ֆրիդրիխ Շլեգելն եղավ Շլայերնախերին դեպի բանասիրական արվեստ առաջնորդողը: Հասկացությունները, որ նրա փայլուն աշխատանքներում ճանապարհ էին հարթում դեպի հունական պոեզիա, Գյորե կամ Բոկաչչո, վերաբերում էին ստեղծագործության ներքին ծնին, գրողի զարգացման պատմությանը և գրականության՝ ներքինից տրոհված ամբողջին: Եվ վերակազմող բանասիրական արվեստի առանձին այդ նվաճումների հետևում նա տեսնում էր քննադա-

տության գիտության նախագիծը՝ *ars critica*, որը պետք է հիմնվեր արտադրողական գրական ունակության տեսության վրա: Որքան մոտ էր այդ նախագիծը Շլայերնախերի Շերմեննատիկա և քննադատությունին:

Շլեգելին էր պատկանում նաև *Պլատոնի թարգմանության նախագիծը*: Սրա վրա մշակվեց նոր մեկնաբանության տեխնիկան, որը բյոքն ու Դիսենը հետո կիրառեցին *Պիմնդարեսի նկատմանք*: *Պլատոնի պետք* է որպես փիլիսոփայող արվեստագետ հասկացվի: Մեկնաբանության նպատակն է փիլիսոփայելու պլատոնյան եղանակի և *Պլատոնի գործերի գեղարվեստական ձևի միասնությունը*: *Փիլիսոփայությունն այստեղ դեռևս կյանքն ինքն է՝ զրոյցի հետ սերտաճած*. նրա գրավոր ներկայացունքը միայն հիշողության համար կատարած արձանագրությունն է: Այնպես որ, այն պետք է երկխոսություն լինի, այն էլ այնպիսի գեղարվեստական ձևով, որ նրա վերարտադրելն ինքնին մտքերի կենդանի փոխկապակցման կարիք ունենա: Միևնույն ժամանակ, սակայն, պլատոնյան այդ մտածողության խստիվ միասնությանը համաձայն՝ յուրաքանչյուր երկխոսություն պետք է շարունակի նախորդը, նախապատրաստի հաջորդը և առաջ ընթանա՝ մինյանց հյուսելով փիլիսոփայության տարրեր մասերի թելերը: Երկխոսությունների այդ առնչություններին հետամուտ լինելու դեպքում առաջանում է հիմնական գործերի մի փոխկապակցություն, որը բացահայտում է *Պլատոնի ամենախորունկ միտումները*: Միայն արվեստի կանոններով հյուսված այդ փոխկապակցության ամբողջացմանը է ի հայտ գալիս, Շլայերնախերի կարծիքով, *Պլատոնի իսկական հասկացումը*. սրա համենատությամբ նրա գործերի ժամանակագրական հերթականության արձանագրությունը նվազ էական է, թեև այն իհարկե բազմաթիվ առումներով համընկնում է այդ փոխկապակցության հետ: Բյոքն իր հոչակավոր գրախոսականում հիմք ուներ ասելու, որ այս վարպետ աշխատանքը նոր է բացահայտել *Պլատոնին բանասիրական գիտության համար*:

Նաման բանասիրական մեծահմտությունը, սակայն, Շլայերնախերի ոգում էր, որ առաջին անգամ կապվեց հաճարեղ փիլիսոփայական ունակության հետ: Եվ այն էլ տրանսցենդենտալ փիլիսոփայության բովում մարզված, ունակություն, որն առաջին անգամ հերմենուստիկական հիմնախմնդրի ընդհանուր ըմբռնման և լուծման համար բավարար միջոցներ էր առաջարկում. այդպես առաջացան մեկնության ընդհանուր գիտությունն ու արվեստավարժությունը:

Դրա առաջին նախագիծը Շլայերմախերը մշակեց 1804-ի աշնանը Եղնաստիի Սեկոնդության ընթերցման հիման վրա, քանզի դրանով էր մտադրված բացել իր եքզեգետիկ դասընթացը Յալեում: Այդտեղից առաջացած հերմենևստիկան մեզ է հասել բոլորովին ոչ ազդու ծփի մեջ: Նրան ազդեցություն պարզեց նախնառաջ Շլայերմախերի հալեյան ժամանակի աշակերտ Բյորը փիլիսոփայական հանրագիտարանի մասին դասախոսությունների հոյակապ մի հատվածում:

Շլայերմախերի հերմենևստիկայից ես առանձնացնում եմ այն դրույթները, որոնցից, ըստ իս, կախված է հետագա զարգացումը:

Գրավոր երկերի ամեն մի մեկնություն միայն հասկացման ընթացքի արվեստավարժ արտահայտությունն է, որը տարածվում է ողջ կյանքի վրա և վերաբերում է խոսքի և գրի բոլոր տեսակներին: Դրան համապատասխան, հասկացման վերլուծությունը մեկնության կանոնների հաստատման հիմքն է: Վերջինս, սակայն, կարող է իրականացվել միայն գրական երկերի վերլուծության հետ կապված: Միայն հասկացման և գրական արտադրության միջև եղած հարաբերության վրա կարող է հիմնվել կանոնների այն կապակցությունը, որով որոշարկվում են մեկնության միջոցներն ու սահմանները:

Հանրանշանակ մեկնաբանության հնարավորությունը կարող է մակարերվել հասկացման բնույթից: Մեկնիշի և հեղինակի անհատականությունները նրանում չեն հակադրվում որպես երկու անհամեմատելի փաստ՝ երկուսն էլ ձևավորվել են մարդու համընդհանուր բնույթին համապատասխան և դրանով իսկ հնարավոր են դարձրել մարդկանց խոսքի և գրի ընդհանրությունը (Gemeinschaftlichkeit): Շլայերմախերի սեղմագրած արտահայտություններն այստեղ կարող են հետագա հոգեբանական պարզաբանում ստանալ: Անհատական ողջ զանազանությունը, ի վերջո, ոչ թե անձանց որակական տարրերություններով է պայմանագրված, այլ նրանց մեջ ընթացող հոգեկան շարժերի աստիճանների տարրերությամբ: Եթե մեկնիշը, նաև սեփական կենսականությունը հավասարապես փորձարկելով, մտովի որևէ պատմական միջավայր է տեղափոխվում, նա կարողանում է – այդ տեսանկյունից ելնելով և այդ պահին – որոշ հոգեկան ընթացքներ շեշտադրել և ուժեղացնել, մյուսները հետին պլան մղել և, այդպիսով, օտար կյանքի վերստեղծված պատկեր առաջ բերել իր մեջ:

Եթե մարդ աչքի առաջ ունենա այդ գործնթացի տրամաբանական կողմը, կարող է առանձին, միայն հարաբերականորեն որոշարկված

նշանների հիման վրա ճանաչել նրանում այն փոխկապակցությունը, որն առաջանում է առկա քերականական, տրամաբանական և պատմական գիտելիքների մշտական փոխազդեցությանից: Մեզանում ընդունված տրամաբանական եզրերով արտահայտած՝ հասկացման այդ տրամաբանական կողմը ներկայանում է որպես ինդուկցիայի, ընդհանուր ճշճարտություններն առանձին դեպքի նկատմամբ կիրառելու և համեմատական նոտեցման փոխազդեցություն: Դաշորդ խնդիրը կիմեր արձանագրությունն այն առանձնահատուկ ձևերի, որ այստեղ ընդունում են նշյալ տրամաբանական գործողություններն ու նրանց կապակցությունները:

Այստեղ երևան է գալիս կենտրոնական դժվարությունը, որ հատուկ է ողջ մեկնարկնեստին: Առանձին բառերից և նրանց կապակցություններից պետք է հասկացվի երկի ամբողջությունը, այն դեպքում, եթե եզակի լրիվ հասկացումն արդեն իսկ ամբողջի հասկացում է ենթադրում: Այս շրջանը կրկնվում է առանձին երկի՝ նրա հենդիմակի ոգեկերտվածքի և զարգացման նկատմամբ ունեցած հարաբերությունում, և նորից վերադառնում է առանձին երկի՝ գրական ժամրի հետ ունեցած առնչության մեջ: Այդ դժվարությունը Շլայերմախերը լուծել է գործնականորեն և ամենագեղեցիկ ձևով պլատոնյան *Պետության* իր ներածության մեջ: նույն գործելառնի այլ օրինակներ են ինձ մատուցում նրա էքզեգետիկ հասախոսությունների ձեռագրերը: [Աս սկսել է ներքին բաժանմանը միտված ընդհանուր մի հայացքով, որը կարող էր համեմատվել թռուցիկ ընթերցման հետ, մասերին դիպչելով՝ ընդգրկել է ողջ փոխկապակցվածությունը, լուսաբանել է դժվարությունները, այդ ամենի ընթացքում պահպանել է կոմպոզիցիան ապահովող տեղերի նկատմամբ իր խոհական կենտրոնացումը: Միայն դրանից հետո է սկսվել բուն մեկնարանությունը:] Տեսականորեն այստեղ մարդ հասնում է ամեն մի մեկնության սահմանին՝ այն իր առաջադրանքը միշտ էլ մինչև որոշակի սահման է կատարում. այսպես ամեն մի հասկացում միշտ էլ մնում է միայն հարաբերական և երբեք չի կարող ավարտի հասցել: *Individuum est ineffabile* (Անհատն անարտահայտելի է):

Մեկնության ընթացքի տրոհումը քերականական, պատմական, գեղագիտական և առարկայական մեկնարանությունների, որ Շլայերմախերին էր հասել նախորդներից, նա մի կողմ որեց: Այդ տարբերությունները ցույց են տալիս միայն, որ քերականական, պատմական, առարկայական և գեղագիտական գիտելիքները պետք է առկա լինեն, եթե

սկսվում է մեկնությունը, և կարողանան իրենց ազդեցությունն ունենալ նրա յուրաքանչյուր ակտի վրա: Քայլ մեկնության բուն ընթացքը հնարավոր է բաժանել միայն երկու կողմի, որ պարունակվում են հոգևոր կերտվածքի՝ լեզվական նշանների միջոցով իրականացվող ճանաչողության մեջ: Քերականական մեկնությունը տեքստում շարժվում է համգույց առ համգույց՝ հասնելով ամբողջական երկի բարձրագույն կապակցություններին: Հոգեբանական մեկնության ելակետը ներքին ստեղծագործական ընթացքի մեջ թափանցելն է, այն առաջ է շարժվում դեպի երկի արտաքին և ներքին ծևը, այստեղից էլ սակայն շարունակում է ընթացքը դեպի երկի և այն երկնողի հոգեկերտվածքի ու զարգացման միասնության ընթացքը:

Դրանով նվաճվում է այն կետը, որից ելնելով՝ Ըլայերմախերը վարպետորեն զարգացնում է մեկնարկվեստի կամոնները: Դիմնարար նշանակություն ունի նրա ուսմունքը արտաքին և ներքին ծևի մասին, մանավանդ խորազմին են գրական արտադրության ընդհանուր տեսության ուղղությամբ արված փորձերը. սրանում էր պարունակվելու գրականության պատմության օրգանոնը:

Ներմեննատիկական ընթացակերպի վերջնական նպատակն է հեղինակին ավելի լավ հասկանալ, քան առ ինքն է իրեն հասկացել: Մի դրույթ, որ ներկայանում է որպես չգիտակցված ստեղծագործության մասին ուսմունքից արված անհրաժեշտ հետևողություն:


## 5.

Բերենք հանրագումարի: Դասկացումը միայն գրավոր հուշարձանների դեպքում է վերածվում մեկնության, որ հանրանշանակության է հասնում: Թեև բանասիրական մեկնարանությունը հերմեննատիկայի մեջ իր մերողի և իրավական հիմքերի գիտակցմանն է գալիս, ի վերջո, արդարացված է նաև այդ առարկայի գործնական օգտագործելիությունը կենդանի վարժությունից շատ էլ բարձր չղասելը Ֆր. Ա. Վոլֆի կողմից: Քայլ ինձ թվում է, որ մեկնության ձեռնարկը որպես այդպիսին, գործնական օգտագործելիությունից անդին, իր երկրորդ, գլխավոր խնդիրն ունի. այն պետք է՝ ընդդեմ պատմության բնագավառն անընդհատ ներխուժող ռոմանտիկական կամայականության և սկեպտիկական սուրյեկտիվիզմի, տեսականորեն հիմնավորի մեկնարանության հանրանշանակությունը, որով հաստված է պատմության ողջ վստահելիությունը:

## **ՀԱՍԿԱՑՄԱՆ ԱԽՈՐԽԱՎՈԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

Ինացության տեսության, տրամաբանության և ոգու մասին գիտությունների մեթոդաբանության փոխկապակցության մեջ ներառվելով, մեկնաբանության այդ ուսմունքը վերածվում է փիլիսոփայությունը և պատմական գիտությունները միմյանց կապող կարևոր օղակի՝ հանդես գալով որպես ոգու մասին գիտությունների հիմնադրության հիմնական բաղադրանասերից մեկը:





# ԱՐՄԱՆ

Սարգիս  
ԴԱՅԵԳԵՐ

1889 - 1976

## ՀԱՅԴԵԳԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՈՒՆԸ

Քանզի երևում է, որ ծեզ վաղուց արդեն ծանոթ է այն, ինչ դուք իսկապես նկատի ունեք, երբ «գոյ» եք ասում, իսկ մենք թեև կարծում էինք իբր գիտենք, բայց այժմ ահա շփորության մեջ ենք:

Plato, *Sophistes*, 244 a

Պլատոնի *Սոփինստից* քաղված այս նախադասությամբ սկսելով իր գոյությունը և ժամանակը<sup>1</sup>, Մարտին Քայլեգերը երկու հանգամանք է արձանագրել: Նախ, որ գոյի վերաբերյալ հարցումը մեր ժամանակներում նույնքան անպատճախան է մնում, որքան հույների օրոք. և դա մեզ պարտադրում է նորովի դնել գոյության իմաստի մասին հարցը: Երկրորդ, որ գոյությունը չհասկանալը մեզանում այլևս շփորություն չի առաջացնում: Ուրեմն կարևոր է ըմբռնում արթնացնել բուն հարցի հմաստի նկատմամբ:

Սրանով առաջադրվել է հարացույցը: Քայլեգերյան մտքի հորձանուտը ներքաշված որևէ հետազոտող, անկախ իր դիրքորոշումից և ուսումնասիրության առարկայի ընտրությունից, ստիպված է գործել ինտելեկտուալ մի մթնոլորտում, որում միշտ զգալի է «գոյության իմաստի մասին հարցը չհասկանալու» կապակցությամբ առաջացող այն շփորությունը՝ փիլիսոփայական այն անհանգստությունը, որ ոչ կոռեկտ քաղաքական անցյալ ունեցող, այդպես էլ չապաշխարած թողնառութերգի ճգնավորն իր անկոտուում համառությամբ պարտադրեց հետարդիական քաղաքակրթությանը: Թե որքանով է այդ մթնոլորտը նպաստել հայլեգերյան հարցի լուծմանը կամ գոնե հարցադրման լեգիտիմության ճանաչմանը, այլ բան է: Որովհետև անհանգստություն ունենալը՝ շփորվելը, դեռ խաղի առաջարկված կանոնները, հետևաբար նաև հարց տալու հայլեգերյան կերպն ընդունել չի նշանակում:

<sup>1</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, Niemeyer, Tübingen, 1993.

Խոսքն ավելի շուտ ինչ-որ մի բանի պակասի մշտական զգացողության մասին է և արդի փիլիսոփայության մեջ այդ զգացողությամբ ստեղծված լարվածության այն դաշտի, որ մենք երկի թե կարող ենք Դայդեգերի մերկայություն անվանել:

Երկի տեղին է եղել Վոլֆգանգ Շտեգմյուլերի զգուշացումն այն մասին, որ Դայդեգերի փիլիսոփայությունն ընթերցողին արձագանքելու երկու իրարամերժ հնարավորությունն է ընձեռում։ Նախագես կոշտ դիրք ընդունածներն այն ընկալում են որպես անօգտագործելի բառանկարչություն, լավագույն դեպքում՝ ռացիոնալացված իրացիոնալիզմի մի տարատեսակ, որ պետք է պարզապես մի կողմ դնել, իսկ նրա հետևորդներին էլ թվում է, որ Դայդեգերի առաջարկած մտքի շրջադարձի շնորհիկ նախորդ փիլիսոփայության բոլոր նվաճումներն արդեն գերազանցված են։

Դեմք դա է Դայդեգերի փիլիսոփայության մերժին ողբերգականությունը, որ նրա «համակարգի» դրական մետաֆիզիկական մղումներն անտեսվում են ինչպես բարեկամների, այնպես էլ թշնամիների կողմից<sup>2</sup>։

Սակայն անցյալ դարի վարունականներին տրված այս գնահատականից հետո անցած տասնամյակներն ապացուցեցին, որ հայդեգերյան մտքի որևէ դրսևորում, եթե այն նույնիսկ ցուցադրական մարդարեկական կեցվածքով է մատուցվում, երբեք չի հանգեցնում լրության՝ ոչ ցնցված երկրպագուներն են ակնածանքից պապանձվում, ոչ էլ օտարներն են ձանձրույթով մի կողմ քաշվում։ Խոսում են բոլոր՝ հավատացյալները և ամիսավատները, բներևութաբանները և էքզիստներիախստները, պոգիտիվիստները և արագնատիստները, մեռմարքսիստները և հետստրուկտուրալիստները, քաղաքագետները և տեղեկատվական տեխնոլոգիաների նաևնագետները։ Եվ այս շինություն ապրող մարդկանց երկխոսությունը ստեղծել է անվերջանալի մի տարրներց՝ դիսկուրս, որի հետագա զարգացումն այլևս քիչ է կախված այն սկզբանավորողի կամքից և հայացքներից։

Դամաշխարհային փիլիսոփայական դաշտում տեկտոնիկ տեղաշարժեր առաջացրած այդ տարօնթացի՝ հայդեգերյան դիսկուրսի սկզբնավորումը և առանձին բաղկացուցիչները կրննվեն ստորև<sup>3</sup>։

<sup>2</sup> W. Stegmüller, *Hauptströmungen der Gegenwartspphilosophie*, 1965, S. 177, մեջբերվում է ըստ՝ W. Biemel, *Martin Heidegger*, Reinbek bei Hamburg, 1999, S. 156։

## «ԳՈՅՈՒԹՅԱՆ» ԵՎ «ՆԵՐ-ԿԱՅՈՒԹՅԱՆ» ՄԻԶԵՎ

### Աստծո մասին

Ամեն մի փիլիսոփայություն ...պետք է իմանա, որ կյանքի սեփականացումը, որը ինքն իրազորեն է, կրոնական տեսակետից Աստծո վրա ծեռը բարձրացնել է նշանակում։ Բայց միայն դրանով է, որ նա Աստծո առջև կանգնած է ազնիվ, այսինքն՝ իրեն հասամելի հնարյակորություններին համապատասխան։ աթեխտը կատեր գերծ մնայով կրոնականով մտահոգված դատարկաբանության գայթակղությունից։

Մ. Հայդեգեր

Մարտին Հայդեգերը ծնվել է մեծամասամբ կաթոլիկ բնակչություն ունեցող Հարավային Գերմանիայի Սեսկիրիս քաղաքում, համեստ եկամուտ ունեցող տակառագործի ընտանիքում, և իր անունը ստացել այդ գավառական վայրի հովանավորը համարվող սուրբ Մարտինի պատվին։ Տեղի եկեղեցու ծախրով ուղարկվել է Կոնստանցի կարողիկ գիշերօրիկ գիմնազիան, որի դասախոսների՝ քահանա-աստվածաբաններ Բրանդ-հուրերի և Գրյորերի հոգատար ուշադրության շնորհիվ հնարյակորություն է ունեցել, աստվածաբանական պարապմունքների հետ մեկտեղ, զբաղվել նաև փիլիսոփայության ուսումնասիրությամբ։ Հայդեգերի ուսման շարունակությունը ֆրայբուրգի համալսարանում, ինչպես նաև հետհամալսարանական առաջին քայլերը նոյնպես գլուխ են եկել կաթոլիկ շրջանակի օգնությամբ՝ նախ ճիզվիտ հոգևորականների և հետո մասնավոր հիմնադրամի տրամադրած կրթաթոշակների շնորհիվ։

Իհարկե, այդ հովանավորությունն, առավելություններից բացի, նաև որոշակի սահմանափակումներ էր ենթադրում։ Այսպես, օրինակ, Հայդեգերը նպաստ է ստացել Թովմա Արքինացու ուսմունքի հետազոտության համար՝ պայմանով, որ նրա աշխատանքը դուրս չի գա աստվածաբանության շրջանակներից։ Բնականաբար, երիտասարդ գիտնականը վարվել է այնպես, ինչպես մեր ժամանակի բոլոր ազնիվ «գրանտակերները»՝ աշխատել է միավորել հովանավորողների հանձնարա-

<sup>3</sup> Հայդեգերյան փիլիսոփայության սիստեմատիկ շարադրանքը դուրս է մեր խնդրի շրջանակներից։ Այս առումով օգտակար կարող են լինել հետևյալ իրապարակումները՝ G. Figal, *Martin Heidegger zur Einführung*, Junius, Hamburg, 2003 (1992); W. Biemel, *Heidegger*, Rowohlt, 1999 (1993), ինչպես նաև՝ D. Thomä (Hrsg.), *Heidegger-Handbuch. Leben – Werk – Wirkung*, Metzler, Stuttgart-Weimar, 2003։ Որպես փիլիսոփայական կենսագորություն հանձնարարեն է R. Safranski, *Ein Meister aus Deutschland. Heidegger und seine Zeit*, Carl Hanser Verlag, München, 1994։

րությունը սեփական գիտական հետաքրքրությունների հետ: Այդպես նրա ուշադրության կենտրոնում է հայտնվել միջնադարյան սխոլաստիկայի հիմնական պրոբլեմը՝ ունիվերսալիաների խնդիրը, որը, ըստ Էւթյան, բազմաթիվ գուտ փիլիսոփայական մեկնաբանությունների հնարավորություն է տալիս: Այդ շրջանն իր աճփոփումն է գտել նրա Դուռն Սկոտի ուսմունքը կատեգորիաների և նշանակության մասին հարիլիտացիոն թեզում (1915):

Բայց Յայդեգերի համար գնալով ավելի ակնհայտ է դառնում աստվածաբանական և փիլիսոփայական մոտեցումների անհամատեղելիությունը: Առաջինի համար ելակետը հավատն է, այնինչ երկրորդն իր գոյության հնարավորությունը հենց այդ հավատը կասկածի տակ դնելու շնորհիվ է ձեռք բերում: Տարիներ անց Յայդեգերը կգրի:

Բայց մյուս կողմից այն հավատը, որ մշտապես կանգնած չէ անհավատության հնարավորության առջև, հավատ էլ չէ, այլ հարմար մի կեցվածք, ինքը իր հետ ծեռք բերված մի պայմանավորվածություն, անփոփոխ պահելու ինչ-ինչ հանգամանքներում ժառանգված ուսմունքը: Դա ոչ հավատ է, ոչ էլ հարցում, այլ անտարբերություն, որն այդքանով կարող է, ընդ որում մեծ հետաքրքրությամբ, զրադվել ամեն ինչով՝ ինչպես հավատով, այնպես էլ հարցեր տալով<sup>4</sup>:

Եվ քանի որ փիլիսոփայությունը խենթություն ունի կասկածելու այնտեղ, ուր հավատը կասկածել չի ցանկանում, ապա՝

«Քրիստոնեական փիլիսոփայությունը» փայտե երկաթ է և թյուրիմացություն<sup>5</sup>:

Յայդեգերի այս մտայնությունից բխող առաջին քայլը, այնուամենայնիվ, ավանդական քրիստոնեական ուսմունքից հրաժարվելը չի եղել. նա պարզապես անցում է կատարել կաթոլիկությունից բողոքականության: Որքան էլ մեծ լիներ այդ որոշման վրա 1917-ին ամուսնացած երիտասարդի բողոքական կնոջ՝ Էլֆրիդե Պետրիի ազդեցությունը<sup>6</sup>, կարևոր իհարկե այն էր, որ բողոքական լութերական ավանդույ-

<sup>4</sup> M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, Max Niemeyer Verlag, Tübingen, 1966, S. 5.

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 6:

<sup>6</sup> Անուանության առաջին օրերին Յայդեգերն իր շփոթված ծնողներին տղանարդու և փիլիսոփայի միամտությամբ վստահեցնում էր, որ ընտանիքի կոնֆեսիոնալ համասեռու-

թը շատ ավելի մեծ տեղ էր թողնում քննադատական մտածողության համար, քան կաթոլիցիզմի դոգմատիկան և նրա կարօր հիմնարկային կառուցը:

Բայց Յայրեգերի խնդիրը քրիստոնեական դոգմատիկայի քննադատական վերանայումը չի եղել երբեք, այլ կրոնական հարացուցին պատկանող հիմնարար հարցերի անկախ և ինքնուրույն վերարձար-ծումը փիլիսոփայության միջոցներով:

Այդ երկու դիրքորոշումների արմատական տարրերությունը հաս-կանալի դարձնելու համար անդրադառնանք ուշ Յայրեգերի մի մեկնա-րանության, որով նա Յեգելին նվիրված դասախոսության մեջ լուսա-բանել է «Ինչպես է Աստված մուտք գործում փիլիսոփայություն»<sup>7</sup> հար-ցը: Աստծոն «մուտքը» փիլիսոփայության բնագավառ մտածողը կապում է մետաֆիզիկայի հիմնական խնդրի՝ ողջ գոյություն ունեցողի հիմքը պարզաբանելու անհրաժեշտության հետ: Այդ ուղղությամբ կատար-ված հետազոտությունների հիման վրա դասական փիլիսոփայությունը հանգել է նախապատճառի գաղափարին, որն ինաստավորել է որպես ինքն իր պատճառը՝ *Causa sui*: «Այդպիսին է Աստծո իրական անունը փիլիսոփայության մեջ», - եզրակացնում է Յայրեգերը, բայց նաև ավելացնում:

Նման մի աստծու հմարավոր չէ ոչ աղոթել, ոչ զոհ մասուցել:  
*Causa sui*-ի առջև մարդ չի կարող ոչ երկյուղած ժնկի իջնել, ոչ էլ նրա առջև նվազել կամ պարել:

Քենց դրա համար էլ ամ-աստված մտածողությունը, որ ստիպված է հրաժարվել փիլիսոփայության աստծուց՝ աստծուց որպես *Causa sui*, գուցե ավելի մոտ է կանգնած աստվածային Աստծում<sup>8</sup>:

Դաշտն, այսպիսով, կարելի է մաքրված համարել: Մի կողմից, Յայ-րեգերը գտնում է, որ փիլիսոփայության համար անթույլատրելի է

թյունը չի խախտվի, քանի որ Էլֆրիդեն վճռական է և առաջիկայում կաթոլիկություն է բնորունելու:

<sup>7</sup> M. Heidegger, “Die onto-theo-logische Verfassung der Metaphysik”, in: derselbe, *Identität und Differenz*, Neske, Stuttgart, 1957, S. 64.

<sup>8</sup> Նոյն տեղում, էջ 65: «Անաստված» բառը՝ «gotlos», գթիկով՝ որպես «got-los» գրելով, Յայրեգերն իմաստի փոփոխություն է կատարում, «աստված չունեցող»-ը դարձնելով «աստծուց անջատ»:

«կրոնականի մասին դատարկաբանելու» գայթակղությունը<sup>9</sup>, մյուսից, չի բավարարվում նախահիմքի վերաբերյալ ավանդական մետաֆիզիկայի վերացական պատկերացումներով։ Ով որ աստվածաբանությունը՝ քրիստոնեական լինի այն, թե փիլիսոփայական, ուսումնասիրել է, հետամուտ լինելով նրա ծագումնաբանության, ասում է մտածողը, «այսօր գերադասում է մտածողության բնագավառում լոել Աստծո մասին»<sup>10</sup>։

Կյանքը մեկնելու, նրա իմաստն ի ցույց դնելու իր հավակնությամբ փիլիսոփայությունը փաստորեն ճգոտում է զբաղեցնել աստվածաբանության տեղը, և Յայեգեգերը միայն հետևողական է, երբ այդ ժեստը «Աստծո վրա ձեռք բարձրացնել» է որակում։ Աստծո գոյությունը դրանով կասկածի տակ չի դրվում, այն ուղղակի փակագծվում է և դրւու բերվում փիլիսոփայության շրջանակներից<sup>11</sup>։

Ենց այստեղ է, որ իր ողջ սրությամբ կանգնում է «գոյության» մասին հայեցերյան հարցը, որն այլս չի բավարարվում «գոյության նախահիմքի» մատնանշմամբ՝ Աստված կոչվելու լինի այն, թե *Causa sui*, այլ փորձում է հասկանալ «գոյություն ունենալը» որպես այդպիսին։ Խոսքն այստեղ, ուրեմն, որևէ առանձին գոյի ինչպես աշխարհ եկած լինելու մասին չէ և ոչ էլ այն մասին, թե ինչպես կա տվյալ գոյը։ Խնդիրը հասկանալի դարձնելու համար Յայեգեգերը վերաբարձել է Լայրնիցի հռչակավոր ծևակերպումը։ «Ինչո՞ւ ընդհանրապես կա գոյը և ոչ, ավելի շուտ, ոչինչը»<sup>12</sup>։ Յացում, որ բացորոշում է Յայեգեգերի իրական մտահոգությունը. ի՞նչ է նշանակում լինելլ.

Չնորանանք, որ միևնույն հարցը Յայեգեգերի ժամանակակիցն ու հակուտնյան՝ Լյուդվիգ Վիտգենշտայնը, իր 1921-ին լույս տեսած *Տրամաբանական-փիլիսոփայական տրակտոսում* զարմանալի համահանձար նույնականությամբ արձարձել էր հետևյալ ծևակերպմանը.

<sup>9</sup> Բնաբանում մեջբերված հատվածը վերցված է 1922 բվականի Արիստոտելին նվիրված դասախոսությունից։ M. Heidegger, „Phänomenologische Interpretationen zu Aristoteles (Anzeige der hermeneutischen Situation)”, in: *Dilthey-Jahrbuch für Philosophie und Geisteswissenschaften* (hg. von E. Rodi), B. 6, Göttingen, 1989, S. 246։

<sup>10</sup> M. Heidegger, “Die onto-theo-logische Verfassung der Metaphysik”, in: ders., *Identität und Differenz*, S. 45.

<sup>11</sup> «Յայեգեգեր խոսում է ասոծն մասին այնպես, ինչպես Յուլեռլը գիտակցությունից դուրս գտնվող իրավանության մասին՝ Յայեգեգերը փակագծերի մեջ է վերցնում աստծուն» - արձանագրել է Զաքրիանսկին, նաև նկատելով, որ մտածողը «ազատ է բրաց-աստվածներ ստեղծելու որևէ միունմից»։ R.Safranski, նշվ. աշխ., էջ 137։

<sup>12</sup> M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, S. 1.

Միստիկականն այն չէ, թե ինչպես կա աշխարհը, այլ այն, որ այն կա<sup>13</sup>:

Բայց տրամաբանական պոզիտիվիզմի իիմնադիրը «միստիկականը» նաև անարտահայտելի էր համարում<sup>14</sup> և նպատակ ուներ այն դուրս բերել գիտական դիսկուրսի շրջանակներից: Դայդեգերը, դրան հակառակ, հենց այդ անարտահայտելիի մասին էր ցանկանում խոսել, և քանի որ կրոնի ու ավանդական փիլիսոփայության լեզուները տարուավորված էին այլևս, նա պետք է գտներ «գոյության» մասին ծշգրիտ խոսելու իր սեփական կերպը:

### Արժեքները և բուն իրերը

Դետևարար, մենք պետք է վերադառնամք դեպի Կանտը:

Օ. Լիբճան

Դեպի իրերն իմքնի՛մ<sup>15</sup>:

Ե. Յուսենը

Մեզ՝ «արժեքների» մասին դատարկաբանող այսօրվաններիս, կարող է տարօրինակ թվալ, որ միստիկ-կրոնականի և սպեկույատիվ փիլիսոփայականի կեղևը թոթափել ցանկացող Դայդեգերն անտեսել է կյանքն ինքնուրույն մեկնելու համար ամենաբնական թվացող ճանապարհը՝ արժեքային մոտեցումը: Դայտնի է, որ հենց այդ տարիներին և այն միջավայրում, ուր ձևավորվել է հայդեգերյան միտքը, նորկանտականության բաղենյան դպրոցի գաղափարները լայնորեն տարածված և գնահատված են եղել: Բնական է, ուրեմն, որ դրանք իրենց կնիքը պետք է բողնեին (և իսկապես բողել են) երիտասարդ Դայդեգերի վրա: Բայց այդ ազդեցությունը եղել է նեգատիվ՝ վերջինս բաղենցիների արժեքների տեսությունը գնահատել է որպես փիլիսոփայության ձևա-

<sup>13</sup> L. Wittgenstein, *Tractatus logico-philosophicus*, Suhrkamp, Ffm., 1998, 6.44.

<sup>14</sup> Սույն տեղում, 6.522:

<sup>15</sup> Zu den Sachen selbst. Բնագիրն ավելի բազմանշանակ է՝ «Sache»-ն «իրն» է, «առարկան», բայց նաև գործը, խնդրի բովանդակությունը, այսպես՝ zur Sache կնշանակի անցնենք գործին, իսկ Sachlichkeit՝ առարկայական վերաբերնունը գործի նկատմամբ: Ծարադրման ընթացքում զուգահեռաբար կօգտագործվի նաև «դեպի բուն իրերը» բանածումը, քանի որ որոշ համատեքստրում բարակ բաղդանությունն ամհարկի զուգորդություն է առաջացնում կանտյան «ինքնին իրի» հետ:

պաշտ բովանդակագրկում, որի հաղթահարման մեջ էլ հենց տեսել է իր առաքելությունը:

Իրեն անմիջապես նախորդող սերնդի փիլիսոփայության նկատմամբ իր վերաբերմունքը Յայդեգերն արտահայտել է 1925 թվականի մարդության դասախոսության մեջ: *Պրոլեգոմենա ժամանակի հասկացության պատմության վերտառությունը* կրող այդ դասընթացը<sup>16</sup> հայտնի է նրանով, որ անմիջականորեն նախապատրաստում է Գոյության և ժամանակի հասկացության կառույցը. նրա գրավիչ կողմերից մեկն էլ այն է, որ հեղինակը, որպես ուսումնական նյութը մատուցող դասախոս, շատ ավելի բացորոշ է խոսում ժամանակի փիլիսոփայական ուղղությունների մասին, քան դա անելու էր իր երկու տարի հետո լույս տեսած և զուտ արձանագրող առօգանությամբ բանաձևած հոչակավոր մեմագրության մեջ:

XIX դարի երկրորդ կեսին, նշում է Յայդեգերը, փիլիսոփայությունը կերպափոխություն է ապրել, ձգտելով ազատվել սպեկուլյատիվ իդեալիզմից: Ինքնանորոգման այդ շարժման անհրաժեշտ է եղել, բայց իրականացվել է անհաջող, քանի որ փիլիսոփայությունը կտրուկ սահմանափակվել է իր առարկայական ոլորտը, ինքն իրեն իմաստավորելով որպես գիտության տեսություն, գիտական գիտելիքի տրամարանություն: Մյուս բացասական արդյունքն այն էր, որ ձգտելով վերադառնալ սեփական ակունքներին, փիլիսոփայությունն այդ վերադարձն իրագործել է շրջվելով ոչ թե դեպի բուռ իրերը, այլ դեպի այն փիլիսոփայությունը, որը պատճականորեն նախորդել է այլևս սպառված համարվող իդեալիզմի փուլին: Եվ դա Կանտի փիլիսոփայությունն էր: Այսպիսվ՝ իրեն նոր կարծող փիլիսոփայությունը փաստորեն մնում է ավանդականի ծիրի մեջ: Զևավորվում է նորկանտականությունն ի դեմս մարդության դպրոցի (Յերման Կոհեն և Պաուլ Նատորպ), որն, ըստ Յայդեգերի, Կանտի ներ՝ տեսագիտական մեկնարանության արդյունք էր:

Մրա հետ կապված բացթողումը լրացնելու և պատճական գիտությունները ներգրավելու նպատակով հարց է դրվել Կանտի աշխատան-

<sup>16</sup> M. Heidegger, “Prolegomena zur Geschichte des Zeitbegriffes”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, II Abt., B. 20, Klostermann, Ffm., 1979. Աշխատանքի շարադրման ընթացքում այս կարևոր երկի բնագիրը ձեռքի տակ չունենալու պատճառով մեջբերումները կատարվում են ռուսենա թարգմանությունից՝ M. Хайдеггер, *Пролегомены к истории понятия времени*, Водолей, Томск, 1998 (Յայդեգերի երկերի լիակատար ժղովածուին տրվող հետագա հղումները կտրվեն երկուառ կրոպտա կրօնատման և հատողի թվի տեսքով, տվյալ դեպքի համար՝ GA 20):

քը պատմական բանականության քննդաստությամբ լրացնելու վերաբերյալ: Այդպես է դեռևս յոթանասնականներին խնդիրը ձևակերպել Վիլհելմ Դիլբայը, որի նվաճումը Յայդեգերը ոչ թե գիտության տեսության ստեղծման մեջ է տեսնում, այլ նրանում, որ վերջինս ծգտել է պարզաբանել, թե ինչ բան է պատմական իրականությունը, և ինչ ձևով է հնարավոր այն հետազոտել:

Նորկանտականության մարդուրգայն դպրոցից և Դիլբայից եկող ազդակներն ընկալել են բաղենցիները՝ Վիլհելմ Վինդելբանդը և Յայնրիխ Ռիկերտը, որոնք «իշեցրին դրանք տափակ տրիփիալության մակարդակի և անճանաչելիության չափ խեղաքյուրեցին խնդիրները... Բանը հասավ նրան, որ գիտության որիկերտոյան տեսության մեջ նույն այդ խնդրո առարկա գիտություններն անճանաչելի են դարձել՝ այդ տեսության հիմքում ընկած են գիտությունների դատարկ սխեմաները»<sup>17</sup>:

Յայդեգերի հժգործությունը բաղենցիների փիլիսոփայությունից խոր արմատներ ուներ: Նորկանտականությունը, վերադառնալով Կանտին, վերակենդանացրել էր նաև այն կրկնակի հեռանկարը՝ որպես իր իրերի մեջ և որպես ազատություն, որից ելնելով կանոյան տրանսցենդենտալգոմը դիտարկում էր մարդուն: Նույն բաժանումից էր բիսեցվել նաև մարդու մասին գիտությունների համակարգը, ուր, Յայդեգերի կենսագիրներից մեկի սրամիտ արտահայտությամբ, միջնադարյան երկակի ծշմարտության սկզբունքը հիշեցնող հարաբերություններ էին իշխում՝ նյութական կողմն թողնված էր մատերիալիզմին, իսկ հոգևորին վերագրվում էր պայմանական «իբրև թե գոյություն»<sup>18</sup>: Այդ միտումի կատարյալ դրսնորումն էր Յանս Ֆայիհնգերի հիշպես եթե-ի փիլիսոփայությունը՝ *Philosophie des Als Ob*:

Նորկանտականությունն էլ, նույն սկզբունքից ելնելով, գտնում էր, որ բնագիտությունը գործ ունի որոշակի իրերի, իսկ ոգու մասին գիտությունները՝ գոյություն չունեցող, բայց նշանակալից արժեքների հետ: Արժեքների մասին գաղափարի ձևակորմանը, անշուշտ, նպաստել է գերմաններենում հաճախ օգտագործվող *gelten* բառը, որը որևէ մեկի, մարդկանց խմբի կամ մի ողջ հանրության համար նշանակություն ունենալ է նշանակում: Եթե մենք ասում ենք՝ տոմսը, բարքը կամ օրենքը նշանակալից են (der Ticket, der Brauch, das Gesetz gelten),

<sup>17</sup> Մ. Խայդեգգեր, *Пролегомены к истории понятия времени*, с. 21.

<sup>18</sup> Տե՛ս R. Safranski, Աշվ. աշխ., էջ 50:

պարզապես նկատի ունենք, որ դրանք գործում են, ուժի մեջ են, այսինքն՝ վավեր են: Ահա իրական գոյությունից զուրկ այդ վավերականության գաղափարն է, որ ընկած է արժեքների մասին փիլիսոփայական տեսության հիմքում: Արժեքների տեսությանը թվում է, հեգնում է Յայդեգերը, նկատի ունենալով նորկանտականությունը և Մաքս Վեբերին, իր մարդիկ, իրերը կամ առարկաներն սկզբից առկա են լինում որպես մերկ իրողություններ, որոնք «մեր փորձառության ծավալման ընթացքում արժեքային բնույթ ստանալով, զգեստավորվում են՝ այս-տեղ-այստեղ մերկ չքափառելու համար»<sup>19</sup>:

«Խորանալով նշանակալիցության գաղտնիքների մեջ (Geheimnis des Geltens),- նշում է Զաֆրանսկին,- ակադեմիական փիլիսոփաներն աչքաթող արին, որ նշանակալիցը՝ արժեք ունեցողը, նախ և առաջ փողոն է»<sup>20</sup>: Պետք է հայտնվեր դրսից մեկը՝ հիշեցնելու համար, որ փողոն այնքանով է փող դառնում, որ դրան արժեք է վերագրվում<sup>21</sup>: Այս պարադրսն իսկապես ուշագրավ է. տեսությունը, որ հավակնում է հոգևոր ոլորտի յուրահատկության բացահայտմանը, ծեռքից բաց է թողնում իր հետազոտության առարկան, քանի որ վերջինիս գոյության պայմանական կարգավիճակ է վերագրում: Այսպիսով՝ նորկանտականությունը ոչ թե իրերին է վերադրում, այլ... Կանտին:

Բնական է, որ գոյության խնդրին հետամուտ Յայդեգերը Դիլքայի ծանապարհն էր գերադասելու: Վերջինիս առավելությունը նորկանտականության նկատմամբ և նրա հատուկ տեղը XIX դարի երկրորդ կեսի փիլիսոփայության մեջ Յայդեգերը տեսնում է նրանում, որ Դիլքայը փիլիսոփայում էր, ելնելով բուն իրերից<sup>22</sup>: Նա թեև իր հարցադրումները չհասցրեց անհրաժեշտ խորության, բայց գտավ այն առարկայական բնագավառը, որն ուղենիշ է նոր փիլիսոփայության համար: Որովհետև՝

...փիլիսոփայության մեջ զլիսավորը նոր ոլորտներ, բուն առարկայական բնագավառներ բացահայտելն է և դրամց՝ հասկացությունների

<sup>19</sup> M. Heidegger, “Phänomenologische Interpretation zu Aristoteles. Einführung in die hermeneutische Forschung”, in: GA 61, Ffm., 1985, S. 191.

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 55:

<sup>21</sup> Զաֆրանսկին նկատի ունի ակադեմիական շրջանակին չպատկանող Գեորգ Զիմելին և նրա դասական դարձած եկլը՝ Փողի փիլիսոփայությունը (G. Simmel, *Philosophie des Geldes*, Duncker & Humblot Verlag, Berlin, 1900):

<sup>22</sup> Վ. Դիլքայի և բաղենյան դպրոցի բանավեճի մանրամասները տե՛ս սույն երկասիրության Դիլքային նվիրված բաժնում՝ էջ 93-96:

արտադրողական կազմավորման միջոցով գիտության սեփականությունը դարձնելը: Յենց դրանում է գիտական փիլիսոփայության չափանիշը, այլ ոչ թե համակարգեր կառուցելու ունակության, որը հենվում է միայն պատմությունից յուրացրած հասկացութային նյութի կամայական մշակման վրա<sup>23</sup>:

Բնագավառն, այսպիսով, նվաճված էր՝ խնդիրն այն ուսումնասիրելն էր: Դրա համար Հայդեգերը մեթոդի կարիք ուներ, քանի որ գտնում էր, որ Դիլթայը, հայտնագործելով պատմականությունը՝ որպես փիլիսոփայական ուսումնասիրության նոր ոլորտ, դրա հետազոտության համար սեփական աղեկվատ մեթոդ ստեղծել չի կարողացել: Այս գնահատականը պետք է, իհարկե, վերապահումով ընդումել<sup>24</sup>: Մոտ ապագայում երիտասարդ մտածողն ինքն էլ ավելի բազմակողմանի էր օգտագործելու դիլթայյան ուսումնաքի ներունակ հնարավորությունները: Բայց այժմ նրա ուշադրության կենտրոնում եղանակ Հուսեռլի (1859-1938) բներկութարանությունն էր՝ ֆենոմենոլոգիան, որը նույնապես ձգտում էր թոթափել նախկին փիլիսոփայական համակարգերի վերացական սխեմատիզմը և անկանխակալ հայացքով գննել բուն իրերը: Վերջինիս ծիրում քննարկվող խնդիրների տեսակետից Հայդեգերն իսկապես իրավացի էր. հուսեռյան մեթոդը Դիլթայի տեսության համեմատ առավել մանրակրկիտ էր մշակված: Հայտնի է, օրինակ, որ իր ուսմունքի կենտրոնական հասկացություններից մեկի՝ «կառուցվածք» եզրի բովանդակությունը Դիլթային հաջողվել է բացորշել միայն այն ժամանակ, երբ նա ծանոթացել է Հուսեռլի *Տրամարանական հետազոտություններին* և փոխ առել «միաստի» հուսեռյան մեկնաբանությունը<sup>25</sup>: Գիտնականի այդ նրազգաց ընկալունակության մասին Հայդեգերը խոսում է առանձին ակնածանքով<sup>26</sup>: Նա գտնում է,

<sup>23</sup> Մ. Խայդեգեր, *Прологомены к истории понятия времени*, с. 22.

<sup>24</sup> Հասկանալի է, որ Դիլթայը դրան չիր համաձայնի. «Ամեն նի իսկական փիլիսոփա իր մեթոդի շնորհիկ է այրափին, գրել է նա ժամանակին, ...նորն իմ մեթոդում այն է, որ ես նարու ուսումնասիրությունը կապեցի պատմության հետ», Wilhelm Diltheys Gesammelte Schriften, B. 5, էջ XLIX-L:

<sup>25</sup> Այդ մասին տես՝ H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, Mohr, Tübingen, 1972, էջ 211-212:

<sup>26</sup> «Եր Դիլթայը ծանոթացավ Հուսեռլի *Տրամարանական հետազոտություններին*, գրում է Հայդեգերը. - նա արդեն յոթանասուն տարեկան էր՝ մի տարիք, որում ուղիշմերը վաղուց արդեն հուսալի և հարմարավետ համակարգեր տեր են դարձել: Այնինչ Դիլթայը, իր մերձավոր ուսանողների հետ միասին, ծեռնամուխ եղավ այդ գրի ուսումնա-

որ երկու մեծերի մտածողության հիմնական միտումի ընդհանրությունն է, որ թույլ է տվել ծերունազարդ Դիլքային հասկանալ հուսեռյան երկի նշանակությունը:

Եթե էղմունդ Յուսեռլի բներևութաբանական հետազոտությունը Դիլքայի համար մի դիտակետ եղավ, որը նրան օգնեց հետին թվով իմաստավորել տարիների իր վաստակը, ապա Յայդեգերի համար Յուսեռլը հանդես եկավ որպես ելման կետ, որից սկիզբ առավ և թափ հավաքեց նրա ինքնուրույն փիլիսոփայական ուղին<sup>27</sup>: Յուրացնելով հուսեռյան բներևութաբանությունը՝ որպես դեպի բուն իրերն առաջնորդող փիլիսոփայական մեթոդ, Յայդեգերը կերպափոխեց այն և հաճապատասխանեցրեց գոյության նաևին փիլիսոփայական նոր լեզվով հոսելու իր կենտրոնական խնդրին: Ֆիշտ կլինի, ուրեմն, անդրադառնալ այդ մեթոդի առանձնահատկություններին այն տեսանկյունից, որից նրան դիտարկում է ինքը՝ Յայդեգերը:

## Ի՞նչ է բներևութաբանությունը

Բայց այլև բավ են խեղված տեսությունները: Որևէ հնարավոր տեսություն մեզ չի կարող շփոթեցնել բոլոր սկզբումների սկզբումքի վերաբերյալ՝ որ սկզբնականը ներկայացնող ամեն մի հայեցողություն իմացության իրավասու արյուր է, որ այն ամենը, ինչ մեր «իմտուիցիայի» մեջ ներկայանում է որպես սկզբնական (այսպես ասած, իր կենողամի իրականության մեջ), պետք է պարզաբան բժդումի այնպես, ինչպես կա, բայց նաև այն սահմաններում, որոնցում այն կա:

Է. Յուսեռլ

Յուսեռյան բներևութաբանական փիլիսոփայության սկզբումքների սկզբումքը դեպի բուն իրերը միտված լինելն է: Այդ յուրահատուկ մաքսիմի բովանդակությունն, ըստ Յայդեգերի, բացորոշվում է ֆենոմենոլոգիայի երեք հիմնարար հայտնագործությունների շնորհիվ: Դրանք են ա) իմտենցիոնալությունը, բ) կատեգորիալ հայեցողությունը և գ) ապրիորիի իրական իմաստը:

սիրությանը, որը տևեց մի ողջ կիսամյակ»: Տե՛ս M. Խայդեգգեր, *Прологомены к исто-рии понятия времени, т. 28:*

<sup>27</sup> Յուսեռլին աշակերտելու, նրա հետ ամենասերտ մոտիկության տարիները սկսվել են քսանական թվականների սկզբից և տևել մինչև Գոյություն և ժամանակի երևան գալը՝ զիրը, որում, Յուսեռլի կարծիքով, Յայդեգերը խեղաքյուրել է իր ուսմունքը:

## Ա. Ինտենցիոնալությունը

Ինտենցիոնալության հասկացությունն էղմունդ Հուսեռլը փոխ է առել Ֆրանց Բրենտանոյից, որն իր իսկ հավաստմանք, վերարտադրել է այն, ինչ արդեն հայտնի է եղել Արիստոտելին և նրա վրա հենվող միջնադարյան սխոլաստիկային: Եզրը ծագում է լատիներեն intentio բառից, որ նշանակում է «միտում», «միտվածություն», և մեզ հետաքրքրող փիլիսոփայական համատեքստում կարող է բարգմանվել որպես «ուղղորդվածություն դեպի...» Դրանով շեշտվում է այն ինքնին ակնհայտ բվացող հանգամանքը, որ յուրաքանչյուր ապրում, յուրաքանչյուր հոգեկան ակտ ուղղորդված է ինչ-որ բանի: Դատողությունը դատողություն է ինչ-որ բանի մասին, պատկերացումը ինչ-որ բանի պատկերացում է, և այսպես շարունակ:

Բայց բներևութարանական հարցադրման իմաստը, իհարկե, այդքան մակերեսային չէ: Ինտենցիոնալությունը նկատի չունի, ասում է Յայդեգերը, որ մեր գիտակցության իդեալական բովանդակությանը համապատասխանում է իրական աշխարհի որևէ օբյեկտ կամ իրադարձություն: Իհարկե, երբեմն հենց այդպես էլ լինում է: Սակայն այդ հանգամանքի տեսական հիմնավորումն առնվազն երկու դժվարության է բախվում: Նախ, դեռևս Դեկարտի ժամանակներից հայտնի է (և դրա վրա է հիմնված ողջ քննդատական փիլիսոփայությունը), որ գիտակցության մեջ տրված միայն «գիտակցության բովանդակությունն» է: Դետևաբար, զուտ փիլիսոփայական տեսակետից գիտակցության անմիջական «ելքը» դեպի իրականություն անբույլատրելի պետք է լիներ: Մյուս կողմից՝ անվիճելի է, որ ոչ բոլոր հոգեկան ակտերն են իրական օբյեկտների համապատասխանում. եթե այդպես լիներ, անբացատրելի կմնային, մասնավորապես, զգայախարություններն ու հալուցինացիաները: Այնպես որ, ինտենցիոնալությունը հոգեկան ապրումների հարաբերությունը չէ արտաքին իրերին, որն իսկապես հաճախ առկա է լինում: Դա այդ ապրումների հատկությունն է, նրանց գոյության ծնը:

**Դոգեկան ապրումներն ինտենցիոնալ են որպես այդպիսիք:**

Դեմք դրա շնորհիվ է, բացատրում է Յայդեգերը, որ հնարավոր է դառնում զգայությունների խարկանքը՝ այդ խաբուսիկ ընկալումներն էլ ի վերջո այլ բան չեն, քան ուղղվածություն դեպի...՝ անկախ նրանից՝ գոյություն ունի՝ արդյոք իրականության մեջ դրանց համապատասխանող առարկան:

Կարենոր է, որ գիտակցության իմտենցիոնալությունը գուտ տեսական դասողությունների վրա հենված մտակառուց չէ, այլապես այն չէր կարող առաջնորդել մեզ դեպի բուն իրեղը: Իմտենցիոնալությունն արտահայտում է աշխարհում ապրող մարդու բնական ուղղորդվածությունը: Ամեն մի գիտակցություն դեպի դուրս է ուղղված<sup>28</sup>: Չէ՞ որ, ասում է Յայդեգերը, երբ մենք նայում ենք արողին, մեզ համար պարզ է, որ մեր տեսածը աթոռ է, այլ ոչ թե աթոռի «պատկերացում», նրա մտապատկերի հայեցողություն կամ նրա առաջացրած «օգայությունների կոնալեքս»: Այն, ինչ ընթանում է այդ «բնական» ընկալումը, մենք անվանում ենք «շրջակա աշխարհի առարկա»: Այդպիսի ընկալումը կենդանի մերկայության բնույթ ունի: Այն նաև ամրողական է. եթե ես պտտվում են պահարանի շուրջը, ես ճշտապես տեսնում եմ պահարանը որպես այդպիսին և ոչ թե նրա այս կամ այն «տեսանկյունը», որն այդ պահին օբարեցնում է իմ տեսադաշտը: Ենց այդ պատճառով էլ իմտենցիոնալությունը նախնական իմտենցիոնալ ապրումների և օբյեկտների հետին թվով հարաբերումը չէ, այլ մի կառուցվածք, որի հիմնարար կազմությունն անհրաժեշտաբար ենթադրում է սեփական իմտենցիոնալ օբյեկտի առկայությունը<sup>30</sup>:

Իմտենցիոնալության երևույթն իր ողջ կոնկրետության մեջ հետագոտելու համար Յայդեգերն անհրաժեշտ է համարում անցնել կատեգորիալ հայեցողության հասկացության լուսաբանմանը:

## Բ. Կատեգորիալ հայեցողությունը

Քանի որ հայեցողությունը կենդանի ներկայության մեջ տրվածն անմիջականորեն ընկալելն է՝ նայել-տեսնելը, բնական հարց է առաջանում՝ ի՞նչ ռացիոնալ իմաստ կարող է ունենալ կատեգորիալ հայեցողությունը, այսինքն՝ ինչպես կարելի է նայել-տեսնել ընդհանուրից:

<sup>28</sup> «Ի վերջո ամեն ինչ դրսում է,- կզրի հետազայում ժամ Պոլ Սարտրը,- ամեն ինչ մենք իմքներն ներառյալ՝ դրսում, աշխարհում, ուրիշների միջև... եթե մեզ հաջողվեր... բափանցել գիտակցության “ներսը”, հողմը կրօներ մեզ և դուրս կշպուտ՝ դեպի այս ծառի բույնը, դեպի ճանապարհի փոշին, քանի որ գիտակցությունն ամբողջությամբ դրսում է...»: J.-P. Sartre, “Un idée fondamentale de la phénoménologie de Husserl: L'intentionnalité”, 1936. “Situations I”, Paris, 1947, p. 35.

<sup>29</sup> «Ծննդում» եզրի այստեղ օգտագործված է լայն իմաստով. ո՛չ որպես «հասկանալ», այլ որպես «որսալ»՝ իմաստ, որ առկա է գերմաներենի «begreifen»-ում և ռուսերենի «չխватывать» բառում:

<sup>30</sup> M. Хайдеггер, *Прологемены к истории понятия времени*, с. 50-51.

Այն, որ այդ հարցը Հայդեգերի համար օտար չէ, գիտենք, քանի որ իշխում ենք նրա հետաքրքրությունը կատեգորիաների մասին միջնադարյան ուսմունքի՝ ունիվերսալիաների պրոբլեմի նկատմամբ: Երբ Հայդեգերն ասում է, որ կատեգորիալի անմիջական ըմբռնումն իր կոպիտ ծևով հայտնագործված է եղել վաղուց<sup>31</sup>, նա նկատի ունի հենց սխոլաստիկան: Բայց հասկանալի է, որ միջնադարյան նախի գոյաբանականությունը վաղուց հաղթահարած արդիական մարդու համար կատեգորիալի հայեցողությունը կարող էր հնարավոր ճանաչվել միայն որոշակի՝ նոր իմաստով: Եվ այդ նոր ուղին Հայդեգերին մատնանշում էր հուսեռյան բներկութաբանությունը: Դեռևս 1915-ին Դունս Սկոտին նվիրված իր թեզում Հայդեգերը, սահմանելով կատեգորիաները որպես «որևէ առարկայի ընդհանուր բնորոշումներ՝ վերցված իրենց առարկայականության մեջ»<sup>32</sup>, ակնհայտորեն շեշտել էր դրանց հարաբերվածությունն աշխարհին: Բայց, մյուս կողմից, նա նշել էր նաև, որ «առարկան և առարկայությունն իմաստ ունեն միայն որոշակի սուբյեկտի համար»<sup>33</sup>: Սուբյեկտի՝ առարկային ուղղորդված լինելու այդ գաղափարն, իհարկե, սերում էր Դուսեռլի *Տրամարանական հետազոտություններից*<sup>34</sup>:

Այն մասին, որ Դուսեռլի *Տրամարանական հետազոտություններում* մշակված զգայական և կատեգորիալ հայեցողությունների տարրերակումը առանձնահատուկ դեր է խաղացել իր փիլիսոփայական զարգացման համար, Հայդեգերը պատմել է Իմ ճանապարհը դեպի ֆենոմենոլոգիա հայտնի խտացման մեջ<sup>35</sup>: Նույն դիրքն է ներկայացված նաև 1925 թվի նարբուրգյան դասախոսություններում, որտեղ, հուսեռյան «Վեցերորդ հետազոտության» համատեքստից ելնելով, Հայդեգերն առաջարկել է «զգայականի» և «կատեգորիալի» իր մեկնարանությունը:

<sup>31</sup> M. Heidegger, GA, B. 1, *Friuhe Schriften*, Ffm., 1978, S. 53.

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 403:

<sup>33</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 53:

<sup>34</sup> Քննու. G. Figal, *Martin Heidegger zur Einführung*, Junius, Hamburg, 2003, S. 13:

<sup>35</sup> M. Heidegger, *Mein Weg in die Phänomenologie*, հղումն ըստ W. Biemel, *Heidegger*, S. 27: Կատկանշական է, որ *Տրամարանական հետազոտություններից* վեցերորդը, որ Հայդեգերի համար ամենաեականն է կատեգորիալ հայեցողության բնույթը հասկանալու առումով՝ նա այդ տեսանու ուսմենապիհության նվիրված հասուկ սեմինար է անցկացրել 1919-ին, Դուսեռլ հնացած է համարել և գրից երկորդի հրատարակության մեջ այլևս չի ներառել: 1922-ին, Հայդեգերի դրոմաճը, եղինակը վերահատարակել է «Վեցերորդ հետազոտությունը» հասուկ ջանրաբուժյանը, որ դա արվում է «ներկայացվող երկի բարեկամների» խնդրանքով: Տե՛ս նույն տեղում:

Զգայականը (բներևութաբանական իմաստով) Յայդեգերը կապում է գոյի ամբողջության հետ, որը «նախատրված է իր առարկայական բովանդակության» մեջ<sup>36</sup>:

Կատեգորիալ ակտերն ել, վերջին հաշվով, հիմնված են զգայական հայեցողության վրա՝ այս իմաստով նրանք հիմնավորված են (fundiert): Անհատականի հայեցողության մեջ կատեգորիալի ներկայության շնորհիվ է, որ մենք կարող ենք կազմավորել նոր առարկայականություն՝ ընդհանուրը: Կատեգորիալ ձևերը առարկաներ են, որոնք տեսանելի են դառնում ինտենցիոնալ ակտերի ժամանակ: Դրանք չեն ներմուծվում սուբյեկտի կողմից, այլ ներկայացնում են գոյը իր «բուն գոյության մեջ»:

Երբ մենք ասում ենք, որ կատեգորիալ ակտերը նոր առարկայականություն են «կազմավորում», դա չի նշանակում, որ դրանք այն «արտադրում» կամ «կառուցավորում են» այն իմաստով, որ նկատի ունի կանուգ, երբ իր Ձուտ քանականության քննադատության մեջ խոսում է կատեգորիաների մասին: Յայդեգերի համար հատկապես կարևոր է, որպեսզի բներևութաբանական կատեգորիաները չշփոթվեն կանույան՝ փորձի առարկաներն իրենց կանոնների համաձայն կարգավորող և դրան որոշակի ձև տվող կատեգորիաների հետ: Կազմավորել, ասում է Յայդեգերը, նշանակում է թույլ տալ տեսնել գոյը իր առարկայականության մեջ<sup>37</sup>:

Բայց Յայդեգերի համար նույնքան սկզբունքային է, որ բներևութաբանության տեսակետից դիտարկված կատեգորիալ հայեցողությունը չմեկնարանվի որպես ինսուլիցիա բերգսունյան իմաստով՝ որպես իրականության ծածկյալ ոլորտներն ու խորքերը թափանցելու, դրանք անմիջականորեն հայելու արտակարգ մի ունակություն: Դրան հակառակ, կատեգորիալ հայեցողությունը թեև որոշակի պատրաստվածություն է պահանջում հետազոտողից, հասանելի է բոլոր հասարակ մահկանացուներին:

Կատեգորիականի հայեցողությունը, ըստ մտածողի, հնարավոր է դառնում ընկալման ակտերի պարզության շնորհիվ: Պարզության մասին պնդումը չի բացառում, որ ընկալումներն ինքնին կարող են ծայրահեղ խճողված և նուրբ կառուցվածք ունենալ: Այն ենթադրում է, սա-

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 77:

<sup>37</sup> Տե՛ս նույն տեղում:

կայն, որ ընկալման ակտի մեջ տրված բազմազան տարրերի միասնությունն ի հայտ է գալիս այն նույն մակարդակի վրա, որում մենք ընկալում ենք նրա բազմազանությունը, այսինքն՝ ընկալման ակտի միասնությունը չի հաստատվում հետին թվով՝ ավելի բարձր մակարդակի ակտի միջոցով:

Դարցադրումը լուսաբանելու համար նորից վկայակոչվում է Դայդեգերի սիրած օրինակը՝ ղեղին աթոռը: Բնական ծևով ուղղորդված մարդը, հիշեցնում է մտածողը, դեղին աթոռ տեսնելիս, գիտնականի կեցվածքով չի արձանագրում՝ այս աթոռը դեղին է: Նա սովորաբար նկատի է ունենում, որ՝ այստեղ դեղին աթոռ կա: Այս երկրորդ պնդման մեջ գոյությունն այլևս չի գալիս որպես սուրբեկտը՝ աթոռը, և պրեդիկատը՝ դեղնությունը, միացնող տրամաբանական-քերականական կապ՝ է: Խոսքը պարզապես որպես դեղին գոյություն ունեցող աթոռի (der gelbseiente Stuhl) միասնական ընկալման նասին է: Եթե մենք ասում ենք՝ աթոռը դեղին է, ոա չի նշանակում, որ մենք այդ պատկերը ստեղծել ենք, սինթեզելով առարկայի և նրա որոշակի հատկության առանձին գոյություն ունեցող տարրերը: Միասնությունը նախասկզբնական է. աթոռի գոյությունն ի սկզբանե ղեղին աթոռի գոյություն է, հատկությունների անջատումն արդեն երկրորդ կարգի ակտ է: Այդ պարզության շնորհիվ է, որ ընդհանուրը՝ կատեգորիալը, ընկալման ակտի մեջ ակնառու է և տրված է որպես ակնհայտություն:

Դայդեգերյան նոտեցման յուրահատկությունն այստեղ այն է, որ ակնհայտությունը նրա մոտ աղերսվում է ոչ թե ընկալման մեջ տրված առարկայի հատկությունների իմացությանը, այլ դրանց գոյությանն ինքնին, որովհետև իմացությունն ու գոյությունը համընկնում են միևնույն ակտի շրջանակներում: Սրանով, ծշմարտությունն այլևս չի դիտարկվում որպես տրամաբանական ասույթին վերագրվող բացառիկ գործառույթ, այլ կիրապիս է բուն ընկալման նկատմամբ: Դայդեգերը գտնում է, որ վերը նկարագրված համատեքստում «ծշմարիտ» (wahr) և «իսկապես» (wahrlich) բառերը կարող են օգտագործվել որպես հոմանիշներ: Զաւկանալի է, որ գոյությունը, կախված մեր շեշտադրությունից, վերաբերում է ոչ միայն աթոռին, այլևս նրա հատկություններին: Եթե ինտենցիոնալ ակտի առարկան դեղնությունն է, ապա «ծշմարիտ» է, որ աթոռը դեղին է» ավանդական ասույթի փոխարեն ես կարող եմ ասել՝ աթոռն իսկապես դեղին է, և դրանով իսկ՝ «իսկություն» բարի միջոցով, միավորել գոյությունը և ծշմարտությունը:

Օրինակը կոչված է հավաստելու, որ ընդհանուրը՝ ասենք դեղինը կամ կարմիրը որպես այդպիսին, պակաս առարկայական չէ, և կարող է տրված լինել անմիջականորեն: Բայց այդ նոր առարկայականությունը հենարամի՝ հիմքի պահանջ ունի՝ նրան պետք է որևէ նմուշի (հենց նույն դեղին կամ կարմիր աթոռի) նախնական տրվածություն, որը, սակայն, նկատի չի առնվում, այսինքն՝ կենտրոնացած ընկալման թեմա չի դարձնում կատեգորիալ հայեցողության ակտի պարագայում: Ընդ որում՝ Յայդեգերին արձանագրում է, որ նոր առարկայականության՝ իդեայի կոնկրետ անհատականացումների (հիդեացիաների) ճավալը կարող է կամայական լինել<sup>38</sup>:

### Միջամկյալ դիտարկում՝ ի՞նչ կա փակագծի ներսում

Սակայն ի վերջո նման նոումնեների հնարավորությունն ըմբռնելի չէ, և երևույթների ոլորտից դուրս եղածը դատարկ է:

Ի. Կամս

Ի գիտություն ընդունելով Յայդեգերի պնդումն այն մասին, որ նոր՝ իդեական առարկայականության գաղափարի ներմուծմամբ փիլիսոփայությունը նշանակալից քայլ է կատարում դեպի «իրերն ինքնին», տողերիս հեղինակն, այնուամենայնիվ, ստիպված է խոստովանել, որ չի կարողանում ազատվել անբավարարվածության որոշակի զգացողությունից՝ կապված բներևութաբանական հայեցողության մեջ տրված ինտենցիոնալ առարկաներին ինքնին, այսինքն՝ բուն իրերի կարգավիճակ շնորհելու հետ: Դասական փիլիսոփայական ավանդույթի ծիրում կրություն ստացած հեղինակի մտքում իրերն ինքնին առնչվում են «մեզանից անկախ գոյություն ունեցող իրականության» հետ, և նա կուգեր վստահ լինել, որ հայդեգերյան փաստարկներին հետևելիս ոչ մի էական հանգանաճ բյուրիմացարար բաց չի բռնել: Ուրեմն իմաստ ունի, բներևութաբանական մեթոդի բնութագրությունը շարունակելուց առաջ, վերջնականապես ճշտել խնդիրը, և նկատի ունենալով, որ կատեգորիալ հայեցողության բներևութաբանական հիացքի ինքնահաստատումը տեղի է ունեցել կանույան հարացույցին սկզբունքորեն հակադրվելու միջոցով, հակիրճ ներկայացնել «կատեգորիալի» և «բուն իրերի» հնարավոր փոխանչության մասին Կանտի, Յայդեգերի և հայդեգերի հայացքների միջև եղած տարբերությունները:

<sup>38</sup> М. Хайдеггер, *Прологомены к истории понятия времени*, с.77.

Վերն արդեն նշել ենք, որ կատեգորիաների մասին բներևութաբանական և Կանտի քննադատական ուսմունքների միջև եղած սկզբունքային հակադրությունն առաջին հերթին կապված է բներևութաբանության *հակակոնստրուկտիվիզմի* հետ: Դայտնի է, որ քննադատական փիլիսոփայությունը մարդու հնարավոր փորձի առարկաների ոլորտը՝ ընությունը կանույան իմաստով, ընթանել է որպես իմացության ընթացքում իրականացվող կառուցավորման արդյունք: Սուրյեկտին արտաքին գրգիռի շնորհիվ տրված զգայական բազմազանությունը կարգավորվում է հատուկ տրանսցենդենտալ ապրիորի ծների՝ տարածության և ժամանակի միջոցով: Դրանց նկատմամբ կիրառվող կատեգորիաներն ապահովում են մտածողության միասնությունը: Տրանսցենդենտալ սուրյեկտի գործունեության շնորհիվ ծևավորված կոնստրուկտների այդ աշխարհը Կանտն անվանել է *ֆենոմենալ՝ երևութային*, և փորձի առարկաները դիտարկել է որպես իրեք մեզ համար՝ *Dinge für uns*: Ի հակադրություն դրան՝ Դուսեռլի և Դայտեգերի նկատի ունեցած ֆենոմենները ոչ թե կառուցվում են, այլ հայպում ինտենցիոնալ ակտերի ընթացքում: Այդ իմացական գործողության հիմքում ընկած է կատեգորիալ հայեցողության ունակությունը, որի առկայությունը մարդու մոտ միանշանակ ժիստվում է Կանտի կողմից<sup>39</sup>: Գուցե, եթե խոսքը ոչ թե մարդկային իմացության մասին լիներ, այլ ինտելեկտուալ հայեցողության կարողությամբ օժտված հնչ-որ վարկածային էակների, հանգանքները, որի հնարավորությունը Կանտը չի բացառում, քյոնիզորեղցի իմաստունը հաճածայներ հուսեռլ-հայդեգերյան մոդելի հետ: Բայց Կանտը մարդկային իմացության մասին է խոսում, և դրա համար էլ ֆենոմենները նրա մոտ ինքնին իրերի կարգավիճակ չունեն:

Միևնույն ժամանակ, սակայն, որքան էլ այս տարրերությունը վճռական է, այն չի վերացնում կանույան կրիտիցիզմի և բներևութաբանության միջև առկա կարևոր գուգահեռականությունը: Ինչպես մեկում, այնպես էլ մյուսում ֆենոմենները՝ կոնստրուկտ լինեն դրանք, թե ինտենցիոնալ օբյեկտ, ներկայացնում են *տրանսցենդենտալ սուրյեկտին հասու առարկայականի* ոլորտը: Եվ Կանտի համար հուսեռյան «բուն իրեր» արտահայտությունն այնքանով կարող էր կիրառելի լինել ֆենո-

<sup>39</sup> Տե՛ս Ի. Կանտ, *Ջուտ բանականության քննադատություն*, Սարգսի Խաչենց. Փրինթինգ, Եր., 2006, էջ 262: Դմտ. I. Kant, “Kritik der reinen Vernunft”, in: ders., Kritik der reinen Vernunft. Kritik der praktischen Vernunft. Kritik der Urteilskraft, Wiesbaden: Marix, 2004, էջ 198:

մենքների նկատմամբ, որքանով որ միայն դրանք են, ըստ նրա, հանդես գալիս որպես մարդու հնարավոր փորձի առարկաներ, այսինքն՝ որպես քննություն:

Սակայն հայտնի է, որ Կանտը, վերոհիշյալ վարկածային էակների ենթադրյալ հնարավորություններից ելնելով, այնուամենայնիվ, չի հրաժարվել նաև ոչ զգայական հայեցողության օբյեկտների մասին գաղափարի ներմուծումից, դրանք անվանելով նոումնեններ՝ կամ ինքնին իրեր՝ Dinge an sich<sup>40</sup>: Թեև այս լեզվական բանաձևի արտաքին նմանությունը հուսեռյան «հնքնին իրերին» աչքի է զարնում<sup>41</sup>, հենց այստեղ է գտնվում հուսեռյան ֆենոմենոլոգիայի և կանույան կրիտիցիզմի հակամարտության ամենաթեժ կետերից մեկը:

Ընդունված է շեշտել, որ Յուսեռլի՝ «իրենք իրենց բացահայտող» ֆենոմենները հենց դրա համար ել բներկույթներ՝ բուն երևույթներ են կոչվում, որ էական են ինքնին՝ նրանց ետևում թաքնված այլ բովանդակություն չկա, այնինչ կանույան դրայիզմն աշխարհը երկատում է ֆենոմենների և նոումնենների, ընդ որում՝ վերջիններս այդպես ել մնում են անճանաչելի, քանի որ մարդը, ըստ Կանտի, գորու լինելով մտահասու հայեցողության ունակությունից, չի կարող նոումնենները դարձնել իր հնարավոր փորձի առարկա: Իրականում, սակայն, կանույան հղացքը շատ ավելի նուրբ է, իսկ աշխարհի մասին պատկերացումները՝ կուռ և միասնական: Կանտի խնդիրը ոչ թե անճանաչելի առարկաների ոլորտի մասին պնդումներ անելն է եղել, այլ մարդկային իմացության յուրահատկության և սահմանների սրափ ու ճշգրիտ գծագրությունը: Ֆենոմենների և նոումնենների տարրերակնան իիմքին նվիրված հայտնի հատվածում կարդում ենք.

Նոումնի հասկացությունն ուստի սուկ սահմանային հասկացություն է զգայականության հավակնությունները սահմանափակելու համար և ունի սուկ բացասական կիրառություն:

<sup>40</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>41</sup> Այն, որ Կանտի մոտ «իր»-ը նշանակելու համար օգտագործված է ոչ թե «Sache», այլ «Ding» բառը, տվյալ դեպքում կարևոր չէ: այդ եզրերի փոխփոխարինելիության մասին տե՛ս Բ. Կորենոյ, «‘Сами вещи’ Мартина Хайдеггера», в кн.: Исследования по феноменологии и философской герменевтике, ЕГУ, Мин., 2001, էջ 18-19, մասնավորապես նշված էցի ծանոթագրություն 31-ը:

...Այդ պատճառով առարկաների բաժանումը ֆենոմենների և նոումենների, իսկ աշխարհի բաժանումը զգայահասու և մտահասու աշխարհների թույլատրելի չէ դրական նշանակությամբ...

Նոումենի հասկացությունը, վերցրած սուկ պրոբլեմատիկ կերպով, այնուհանդեռ ոչ միայն ընդունելի է մնում, այլև անխուսափելի՝ որպես զգայականությամբ սահմաններ դնող հասկացություն:

...Այսպես՝ մեր դասողականությունը բացասական ընդլայնում է ստանում, այն է՝ նոումեններ կոչելով իմքնին իրերը (որոնք դիտվում են ոչ իրոն երևույթներ) ոչ թե սահմանափակված է զգայականությամբ, այլ ավելի շուտ ինքն է սահմանափակում զգայականությունը: Բայց միաժամանակ դասողականությունը անմիջապես սահմաններ է դնում ինքն իրեն իմքնին իրերը կատեգորիաներով չճանաչելու առնչությամբ, այսինքն՝ նտաժելու համար դրանք որպես անհայտ ինչ-որ բամ<sup>42</sup>:

Մեզ համար սկզբունքայինն այստեղ այն է, որ Կանտի հիմքում «իրերն իմքնին» ներկայանում են ոչ թե որպես իմացության անկանկած ելակետ (Ճուտերը պիտի ասեր սկզբնականը ներկայացնող հայեցողությում՝ originär gegebende Anschauung), այլ որպես մի պրոլեմատիկ ոլորտ, որը դուրս է դրվում իմացության իրական գործընթացից նրա խստությունն ու ծշգրտությունն ապահովելու նպատակով: Ճետևարար, Կանտի և Ճուտերի մոտեցումների տարրերությունը հասկանալու համար պետք է հիշել, թե հ՞նչն է նույն նպատակով դուրս դրվում իմացությունից հուտեռյան ֆենոմենոլոգիայի համակարգում:

Ճուտերը բներևութաբանական մեթոդի իմքնում ընկած է հանրահայտ ֆենոմենոլոգիական էպօչյուն՝ փակագծման հնարյ, որի միջոցով նտաժողը գիտակցության բովանդակության վրա կենտրոնանալու համար իրաժարվում է այսպես կոչված «բնական դիրքորոշումից» և գիտական հետազոտության շրջանակներից դուրս է բերում ողջ տարածաժամանակային ոլորտը:

**Մենք գործողությունից դուրս ենք դնում բնական դիրքորոշման էլությամբ պատկանող իմքնական թեզը, մենք փակագծերի մեջ ենք վերցնում այն ամենն ու յուրաքանչյուրը, որ այն գոյական առումով շրջապատում է, այսինքն՝ այս ամրող բնական աշխարհը, որ մշտա-**

<sup>42</sup> Ի. Կանտ, Զուտ բանականության քննադատություն, էջ 265-266:

պես «մեզ համար առկա է», «հասանելի» և որը միշտ շարունակում է տևել որպես գիտակցությանը համաչափ «իրականություն», նույնիսկ եթե մենք գերադասում ենք այն փակագծերի մեջ առնել:

Այդպես անելով... ես չեմ բացասում այս «աշխարհը» սովեստի մնան, ես չեմ կասկածում նրա գոյությանը սկեպտիկի մնան, այլ կիրառում եմ «ֆենոմենոլոգիական էպօչի», որն ինձ համար լիովին բացառում է որևէ դատողություն տարածաժամանակային աշխարհի մասին<sup>43</sup>:

Այնպես, ինչպես Կանտն արգելում է նոումենի օգտագործումը դրական իմաստով, այդպես էլ Յուսեռլը հայտարարում է, որ բնական աշխարհի մասին իիմնարար թեզը «մի ապրում» է, որը «մենք “չենք օգտագործում”»<sup>44</sup>: Խաղից դուրս հայտարարելով տարածաժամանակային իրողությունները, Յուսեռլը հնարավորություն է ստանում կենտրոնանալ գիտակցության հոսքի վրա և հենց դրա շնորհիվ գիտակցության ֆենոմենները բուն իրեն անվանելու իրավունք է ձեռք բերում. իսկապես, գիտության, մանավանդ մաթեմատիկայի առարկաների կազմության առումով դրանք սահմանադրի են, իսկ դրանց հարաբերությունը «ֆիզիկական» աշխարհի նկատմամբ գործողությունից դուրս է հայտարարված:

Այսքանով տրանսցենդենտալ սուբյեկտիվիզմի շրջանակներում գործող Յուսեռլն իր «բուն իրերով» պակաս համոզիչ չէ, քան Կանտն իր «ֆենոմեններով»: Երկուսն էլ «փակագծերում պահված բան» ունեն: Այն հարցին, թե ինչու է իրենց առաջարկած ինացության ծնն «առարկայական», նրանք կարող են հանգիստ խղճով պատասխանել՝ որովհետև մնացածը փակագծված է և «օգտագործման ենթակա չէ»:

Իսկ ի՞նչ է պարունակում Յայդեգերի փակագիծը: Այդ մասին մենք արդեռ խոսել ենք և հիշում ենք՝ Յայդեգերը փակագծել էր Աստծում<sup>45</sup>: Բայց նա, ի տարբերություն Կանտի և Յուսեռլի, արել էր դա «առանց հղման իրավունքի»: Աստված Յայդեգերի հղացքում սահմանային հասկացություն (Grenzbegriff) չէ և չունի որևէ կարգավորիչ՝ ռեգուլյատիվ նշանակություն: Յանենատության եզրն այս դեպքում ոչ թե փիլի-

<sup>43</sup> E. Husserl, „Ideen zu einer reinen Phänomenologie (1913)”, in: Husserl, Ausgew. und vorgestellt von U. Steiner, München, 1997, S. 135-136.

<sup>44</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 133:

<sup>45</sup> Կմնտ. ծանոթ. 16-ը և դրան համապատասխանող հատվածը:

սովայական համբարության նրա գործընկերներն են, այլ ավելի շուտ քննագետն Լապլասը, որն իր տիեզերական մեխանիկայի կառուցման ժամանակ «այդ վարկածի կարիքը չի ունեցել»: Հայդեգերն էլ, նույն կերպ դասականից էապես տարրերվող մի ձեռնարկ էր սկսել, որի համար ուրիշ միջոցներ էին հարկավոր: Այնպես որ Հայդեգերի փակագիծն իրականում դատարկ էր, և ողջ գոյություն ունեցողը բաց էր նրա առօք: Դրա համար էլ «քուն իրերը» հայդեգերյան իմաստով չեն մնում տրանսցենդենտալ սուբյեկտի շրջանակներում, ինչպես դա տեղի էր ունենում Կանտի և Շուտենի դեպքերում, նրանք անմիջականորեն «ներխուժում են աշխարհ», ոչ միայն ծանազվելու, այլև լինելու հայտ են ներկայացնում և սկզբունքորեն փոխում մեր պատկերացումները «ներսի» և «դրսի», «սուբյեկտի» և «օբյեկտի» փոխառնչությունների մասին: Սա է, որ հայդեգերյան մոտեցումն այդքան յուրահատուկ է դարձնում. հայտնի հեքիափի էլիսի նման նա հայացք է նետում գիտակցության ֆենոմենների հայելու մեջ և հայտնվում է «հայելուց անդին»:

Դրանով են բացատրվում «քննելութաբանությունը՝ շարունակությունը»՝ ապրիորիի իսկական իմաստի, նրա մեկնաբանության յուրահատկությունը և այն գուգորդությունների շղթան, որ Հայդեգերը մակարերում է այդտեղից:

## Ի՞նչ է բներևութաբանությունը (շարունակություն)

Այդ ընթացքում ես... հասկացա մի բան՝ այն, ինչ գիտակցությամ ակտուի ֆենոմենոգիայում իրականացնում է որպես ֆենոմենների հմբա-իրեն-ի-հայտ-քերելը, ի սկզբանե մտածվել է Վրհսոտեկի կողմից և ողջ հունական մոտածողության և կեցության ընթացքում որպես Ալիթեա, որպես ներկա գոնվողի անբարույցություն, նրա բացահայտում, որպես նրա հմբա-ի-բնե-ցուց-տալը:

Մ. Հայդեգեր

### 4. Ապրիորիի իսկական իմաստը

A priori – prius – πρότερον նշանակում է սրամից առաջ՝ նախկինում. հետևաբար ա priori-ն «ինչ-որ բանի» մեջ այն է, որ ոչ միայն հիմնա կա, այլև առաջ է եղել: Կանտից, իսկ ըստ Էության՝ Դեկարտից սկսյալ ապրիորի է համարվում այն իմացությունը, որով պայմանավոր-

ված է իմացական գործունեությունը: Դա այնպիսի իմացություն է, որ չի հենվում էմպիրիկ, ինդուկտիվ փորձի վրա: Ինացության դեկարտյան մեկնաբանությունից քիսում է, որ ապրիորի իմացությունը հասանելի է միայն սուբյեկտի շրջանակներում, քանի որ վերջինս պարփակված է իր սեփական ոլորտում, և հետևաբար ապրիորի իմացությունն առկա է ամեն մի իրական, առնվազն տրանսցենդենտալ իմացության մեջ: Ավելի լայն իմաստով ապրիորին կարելի է սահմանել որպես ամեն մի սուբյեկտիվ գործունեություն ընդհանրապես, որքանով որ վերջինս դեռևս չի հատել սեփական մերունակության՝ իմանենտության սահմանը<sup>46</sup>:

Ապրիորիի սուբյեկտիվ՝ կանտ-դեկարտյան ընթանանը Յայդեգերը հակադրում է բներևութաբանական մեկնաբանությունը, որն ապրիորին չի սահմանափակում սուբյեկտիվի ոլորտով: Կան զգայական իդեաներ (գույնը, նյութականությունը, տարածականությունը), որոնք առկա են ամեն մի այստեղ և հիմա գոյություն ունեցող եզակի առարկայից առաջ: Ողջ երկրաչափությունը որպես այդպիսին ոչինչ այլ բան չէ, քան նյութական ապրիորի գոյության ապացույց: Անկախ նրանից՝ իրական են առարկաները, թե իդեալական, դրանց առարկայականության մեջ ինչ-որ բան կա, որ կառուցվածքային առումով գոյություն ունի ապրիորի՝ մնացյալից առաջ: Սրանից ահա պարզ է դառնում, գտնում է մտածողը, որ ապրիորին բներևութաբանական տեսակետից ոչ թե գործունեություն է, այլ գոյությունն ինքը. այն ո՞չ իմանենտ է, ո՞չ տրանսցենդենտ, չի պատկանում սուբյեկտիվությանը, բայց և ենթակա չէ իրականությանը:

Այսպիսով՝ բներևութաբանությունը ցույց է տալիս նախ՝ ապրիորիի ունիվերսալ նշանակությունը, և երկրորդ՝ նրան բնորոշ անտարերությունը սուբյեկտիվության համեմա: Ֆենոմենոլոգիական մոտեցման այստեղից բխող երրորդ յուրահատկությունը այն է, որ այդ երևույթը կարող է հասանելի լինել պարզ հայեցողության մեջ: Չորրորդ կետով Յայդեգերն արձանագրում է, որ ապրիորիի «նախորդող» բնույթը կապված չէ իմացության միմյանց հաջորդող փուլերի, ո՞չ էլ որևէ գոյի մեկ այլ գոյից ծագելու ժամանակային հերթականության հետ: Ապրիորին, ըստ նրա, գոյի գոյության մակարդակների հարաբերությունն է:

<sup>46</sup> Տե՛ս և Մ. Խայդեգեր, *Прологомены к истории понятия времени*, § 7:

Ընդհանրացնելով ֆենոմենոլոգիական մոտեցման երեք հայտնագործությունների իր վերլուծությունը, Հայդեգերը ձեռնամուխ է լինում բներևութարանության ընդհանուր բնորոշմանը: Նա հիշեցնում է, որ բներևութարանական առաջին հետազոտությունները նվիրված են եղել գիտության տրամարանությանը և իմացության տեսությանը: Տրամարանությունն ուսումնասիրում է մտածողությունն ու նրա օրենքները, բայց ոչ հոգեբանական մակարդակով, այլ դիտարկելով մտածողությունը որպես բուն մտածվողի՝ առարկայի օրինաչափություն: Այս՝ հաճարյա հեգելյան դիտարկումով Հայդեգերը հարց է դնում ննան առարկաներն ուսումնասիրող միասնական գիտության հնարավորության մասին և հանգում հետևյալ եզրակացությունների:

Դաշտը, որում սկզբնապես ի հայտ են գալիս փնտրվող դիսցիպիլինի առարկաները, ինտենցիոնալությունն է, այդ դաշտի հետազոտության տեսանկյունը՝ ապրիորին: Բանի որ կատեգորիալ ապրիորին ենթակա է պարզ նախասկզբնական ընկալման՝ հայեցողության, այդ պարզ տեսնվածի արձանագրության ձևը նկարագրությունն է՝ դեսկրիպտիվամ: Վերջինս կիրառվում է որպես բացահայտվածի տրոհում, որն, ըստ Էւրյան, վերլուծական ընթացակարգ է: Ի մի բերելով իր բնորոշումների շղթան՝ Հայդեգերը եզրակացնում է.

Բներևութարանությունը ինտենցիոնալության՝ որպես ապրիորիի վերլուծական նկարագրությունն է<sup>47</sup>:

Եվս մեկ անգամ Հայդեգերն անհրաժեշտ է համարում շեշտել, որ բներևութարանությունը «դեսկրիպտիվ հոգեբանություն» չէ: Դա սկզբունքը նոր մի գիտություն է, որի շնորհիվ Պլատոնի ժամանակ-ներից ի վեր փիլիսոփայության առջև կանգնած խնդիրն իրական հիմք է ձեռք բերել՝ այժմ նորից գոյություն ունի կատեգորիաների հետազոտության հնարավորություն: Եվ կատեգորիաներն, ինչպես գիտենք, միայն մտքին չեն, որ պատկանում են: Ուրեմն պատահական չեն, որ այս համատեքստում նորից հնչում է փիլիսոփայության ամեն մի ենթակայությունից դուրս լինելու հավակնությունը.

Փիլիսոփայական հետազոտությունը եղել է և մնում է աթեիստական, որի շնորհիվ էլ կարող է թույլ տալ իրեն «մտածողության հանդ-

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 85:

«Ուրիուն», ավելին՝ այդ «համդգությունը» ոչինչ այլ բան չէ, քան փիլիսոփայության սեփական ներքին անհրաժեշտությունը և իր սեփական ներքին ուժը, և հենց իր աթեխստական լինելու շնորհիվ է, որ փիլիսոփայությունը դառնում է այն, ինչ մեծերից մեկն անվանել է «զվարք գիտություն»<sup>48</sup>:

«Մտքի անվախների» նիցշեական թեման (Wir Furchtlosen) նշանավորում է Հայդեգերի շեղումը հուսեռյան բներևութաբանության տրամացնենթեմոտալ հարացույցից. Բայց գիտակցության մեջ տրված եւրիունների հայեցողությունից անմիջապես՝ առանց փակագծերում մտապահված «երե»-ների և «իբր թե»-ների, դեպի բուն աշխարհը քայլ կատարելու համար, նույնիսկ Հայդեգերի նման «անվախին» հենարաններ էին հարկավոր: Այդպիսի հենարաններից մեկը եղավ նրա համար ինը հունական միտքը:

Երբ Հայդեգերը նկարագրելով իր ճանապարհը դեպի ֆենոմենոլոգիա, պատմում է, թե ինչպես «ավելի նախազգացումից, քան իիմնավորված համոզմունքից ելնելով» կորհել է, որ ֆենոմենոլոգիական հայեցողության մեջ ի հայտ եկող առարկայականությունը մինչ այդ՝ նախասկզբնական ձևով, մտածված է եղել Արիստոտելի և ողջ հունական մտքի կողմից (տե՛ս սույն հատվածի բնաբանը<sup>49</sup>), նրա միտումը միայն շնորհակալ պատմափիլիսոփայական հղումը չէ: Որքան էլ Հայդեգերը գնահատեր հուսեռյան մեթոդի նրբին մշակվածությունը և նրա ընձեռած բազմազան հնարավորությունները, նա չի դիտարկում արդի բներևութաբանության և հունական մտքի հարաբերությունը որպես կերպառում՝ Aufheben հեգելյան իմաստով, երբ «ավելի զարգացած» ուսմունքը «իր մեջ է առնում» զարգացման ավելի վաղ փուլում առաջ եկած զաղափարների «դրական բովանդակությունը»: Նույներն այն աղբյուրն են և մախասկիզբը՝ Ursprung, որից նրա միտքը շարունակում է սնվել իր ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 87: Քննությունը է, թե ինչն ի վերջո հաղթանակ տարած քրիստոնեական Աստծո նկատմամբ՝ ինքը քրիստոնեական քարոյականությունը, ճշմարտության գնալով առավել խորությանը ըմբռնվոր հասկացությունը, քրիստոնեական խիղճը դավանողների նրբազգացությունը, որը փինադրվելով և զույնով վերածվում է գիտական խոճի, ամեն զնով նվաճվող ինտելեկտուալ մաքրասիլության» (F. Nietzsche, Fröhliche Wissenschaft, No 357):

<sup>49</sup> M. Heidegger, “Mein Weg in die Phänomenologie”, տե՛ս և W. Biemel, *Heidegger*, էջ 31.

Բնական է, ուրեմն, որ ֆենոմենոլոգիայի էության հետագա ճշգրտումը Հայդեգերն իրականացնում է, անմիջականորեն անդրադառնալով հունարենի հիման վրա կազմված այդ եղրի բաղկացուցիչների՝ ֆենոմեն և լոգոս բառերի նախասկզբնական իմաստի վերծաննան:

Դունարեն գունօքում գույց է մտածողը, գունեսթու բայի դերբայական ձևն է և նշանակում է «այն, ինչ իրեն ցույց է տալիս»: Նրա հիմքում ընկած է փա – գուստարմատը, որը նշանակում է լուս, պարզություն և նկատի ունի այն, ինչ տեսանելի է ինքնին: Ֆենոմենները, այդպիսով, այն «ինքնին երևացողներն» են, որ հույնները նույնացնում էին գոյի հետ՝ ու ծույալ: Կարևոր է, որպեսզի ֆենոմենը չփորվի ավանդական մետաֆիզիկայի «երևույթի» հետ, որն ընդունված է հասկանալ «երևույթ-էություն» գույքային հակադրության համատեքստում: Ֆենոմենի իմաստն այն չէ, որ նա մատնանշում է իր հետևում թարմված էությունը՝ ֆենոմենը ցույց է տալիս ինքն իրեն:

Մոտավորապես նույն ոգով է տրվում նաև լօցօց բարի մեկնությունը, որը կապվում է լեցեան՝ «խոսել» բարի հետ: Խոսելը Հայդեգերն առաջարկում է հասկանալ «ի բաց դմելու», «մեկնելու՝ փոքրու» իմաստով և հիշեցնում է, որ Արիստոտելը լօցօց-ի երկու նշանակություն է տարրերել. ընդհանուր՝ լօցօց սեմանտիկօց, և երկրորդը՝ լօցօց առօտեակօց, որը ենթադրում է, որ խոսքը թույլատրում է տեսնել այն, ինչ նրանում ասված է: Քենց այս երկրորդ իմաստով է, որ պետք է հասկացվի լոգոսը «ֆենոմենոլոգիա» բառում<sup>50</sup>:

Սրանից ելելով՝ ֆենոմենոլոգիան սահմանվում է որպես լեցեան գունեթու գունականական արտահայտությանը և բացորոշվում է որպես «ինքն իր մեջ բացը իրենից ելնելով տեսնելու թույլատվություն»: Նաև բներևութաբանության սկզբունքը՝ «դեպի բուն իրերն» առաջնորդող կոչը, ըստ Հայդեգերի, ոչինչ այլ բան չէ, քան ֆենոմենոլոգիայի անումը: Եվ այդ անումը աստվածաբանության, կենսաբանության և բոլոր մյուս գիտությունների անվանումներից տարբերվում է նրանով, որ ոչինչ չի ասում այդ գիտության թեմայի առարկայական որոշակիության մասին, այլ միայն արտահայ-

<sup>50</sup> Ուշադիր ընթերցողն, իհարկե, կնկատի, որ այն ինքնատիպ իմաստները, որ Հայդեգերը մակաբերում է իին հունական արմատների վերլուծությունից, որոշ չափով առկա են հայերենի «բներևու» և «քան» բառերում. առաջինը ցույց է տալիս բուն երևույթը, իսկ երկրորդը միավորում է իր մեջ խոսքը և խոսքի բովանդակությունը. Դրանից ելելով է, որ սույն երկանիություն մեջ «բներևույթը» և «բներևութաբանությունը» օգտագործվում են «ֆենոմենին» և «ֆենոմենոլոգիային» գույզաներու որպես վերջիններիս հոմանիշներ:

տում է նրա «ինչպես»՝ այն կերպը, որով որևէ բան դաշնում է նման հետազոտության առարկա:

Ինչպես տեսնում ենք, բներևութաբանության էլույթումը բացահայտելու համար Հայդեգերը երկար ուղի է անցնում. նա սկսում է Հուսեռլի *Տրամաքանական հետազոտություններից* և հասնում է հին հունական փիլիսոփայության ակունքներին: Այս անցումը, իր ողջ գրավչությամբ հանդերձ, նաև Վտանգները եր պարունակում: Զգտելով մինչև վերջ իրականացնել «դեպի բուն իրերը» կարգախոսը, Հայդեգերը դիմում է հույների նախաքննադատական նախկինությամբ գինանցին: Բայց որքանո՞վ էր հնարավոր վերականգնել հույների աշխարհընկալման անմիջականությունը, միևնույն ժամանակ պահպանելով քսաներորդ դարակզբի գիտնականի համար պարտադիր նորի սրավությունը և գիտական խստությունը: Հայդեգերի ողջ կյանքի գործը մի յուրահատուկ ծիգ էր, միտված այդ խնդրի տարրեր լուծումների որոնումներին:

### Անձնավորությունը որպես իմտենցիոնալ գոյ

Ինչպես է ընդհանրապես հնարավոր, որ բացարձակ դիրքորոշման այդ դրույթ՝ գոտո գիտակցությունը, որը չէ՝ որ պետք է բացարձակորեն անջատված լինի ողջ տրամացեմենտից, մինույն ժամանակ միավորված է իրականության հետ՝ իրական մարդու միասնության մեջ, որն ինքը գտնվում է աշխարհում որպես իրական օրյեկտ<sup>51</sup>:

Ս. Հայդեգեր

Հարցը, որի միջոցով Հայդեգերն իրականացնում է հուսեռյան բներևութաբանության «գոյաբանականացումը», առաջարկված է համոզիչ հետևողականությամբ: Եթե Հուսեռլը, փակագծելով տարածաժամանակային աշխարհին միտված բնական դիրքորոշումը, գիտակցությունը դիտարկում է որպես «բացարձակ գոյության» ոլորտ, որի կատեգորիալ կազմությամբ հիմնավորվում է բացարձակ գիտության հնարավորությունը, ապա նա պետք է կարողանա նաև ասել, թե ինչով է գիտակցության գոյությունը տարրերվում տարածաժամանակային իրականության գոյությունից: Այսինքն՝ եթե բներևութաբանության, ինչպես և ողջ արևմտյան փիլիսոփայության համար վճռորոշ է գիտակցության և տրամացեմենտներու իրականության տարանջատումը, անհրաժեշտ է հասկանալ, որ վերջինիս հիմքում ընկած է գոյի այդ երկու

<sup>51</sup> М. Хайдеггер, *Прологомены к истории понятия времени*, с.109.

իհմնարար ոլորտների գոյության կերպերի հակադրությունը: Եվ այդ հակադրությունը չի ընբռնվի, մինչև չպարզվի, թե ինչ է նշանակում գոյություն ունենալը ընդհանրապես, այսինքն՝ չդրվի հարց գոյության իմաստի մասին:

Ողջ Հայդեգերն այս հարցադրման մեջ է: Գոյության իմաստի մասին հարցը, որ փիլիսոփայության մեջ շարունակաբար վկայակոչվել և հետապնդվել է «արժեքային» երանգավորումով՝ որպես «հոգևորի ոլորտում» լուծվելիք «կյանքի իմաստի» խնդիր, թողտնառութերգցի մենակյացը հաջողացրել է դնել որպես գոյի տարբեր ոլորտների տարանցատման տեխնիկական այրորժեմ<sup>52</sup>:

Հայդեգերը չի հրաժարվում բներևութաբանական մեթոդից, սակայն հայտարարում է, որ այն մինչ այժմ բավականաշափ հետևողական չի կիրառվել: Եթե բներևութաբանությունն իսկապես ցանկանում էր ելնել «բուն իրերից», ապա նա չպետք է փակագծեր «բնական դիրքորոշումը», այլ ընդհակառակը՝ ելնել դրամից, այսինքն՝ սկսել այնպիսի գոյից, որ մեզ տրված է անմիջականորեն: Միայն այստեղից է հնարավոր նվաճել գոյի գոյական բնորոշումը, քանի որ «գիտակցությունը և բանականությունը կոնկրետ են և ներգրավված են մարդ կոչվող կոնկրետ գոյի գոյական որոշակիության մեջ»<sup>53</sup>:

Բայց, Հայդեգերի կարծիքով, վերադառնալ «բնական դիրքորոշմանը» չի նշանակում վերարձարծել այն, ինչ Հոււեուն է այդպես անվանել: Վերջինիս համար «բնականը» մարդու կենդանական վիճակն է՝ որպես կյանք, չառ, որն ի վերջո մեկնաբանվում է հոգեբանական կամ ռացիոնալիստական իմաստով՝ որպես *animal rationale*: Այնինչ դա ոչ թե բնական, այլ բնագիտական դիրքորոշում է. այն մարդուն վեր է ածում նատուրալիստական հոգեբանության առարկայի, որը կառուցավորվում է և բացարկում համընդհանուր օրենքտիվ օրենքների տեսակետից:

<sup>52</sup> Սրանով խնդիրը չի դադարում մարդկային գոյության ամենախորունք ծալքերին վերաբերել, ուղղակի հիմնովին վերահմասասպրդվում է հարցին մոտենալու ընդունված կերպը: Այս կասպակցությամբ տեղին է հիշել Վ. Լենինի դիտողությունն այն նաևին, որ Մարքսի տեսության մեջ «ոչ մի գրան եթիկ չկա»: Որուսկան հեղափոխության առաջնորդն, իհարկե, նկատի չուներ, որ մարքսիզմը գուրկ է բարոյագիտական բաղադրիչից, քայլ ուզում էր շեշտնել, որ տցիալիզմի անխուսափելիության վերաբերյալ նարբայան փաստարկները հիմնված են ոչ թե բարոյագիտական գործոնների, այլ տնտեսագիտական փաստերի վերլուծության վրա:

<sup>53</sup> Մ. Խայդեգեր, *Пролегомены к истории понятия времени*, с. 115.

Դրան հակառակ՝ մարդու բնական մեկնաբանությունը հենվում է ինտենցիոնալության զաղափարի հետագա զարգացման վրա: Գոյաբանական հարցադրման մեջ պահպանելով ինտենցիոնալության ֆենոմենոլոգիական թեման, Հայդեգերը հնարավորություն է ստանում ցույց տալ, որ գոյի գոյության մասին հարցի լուծման համար ներգրավված գոյի կոնկրետ տեսակը՝ մարդը, իմքնին ինտենցիոնալ է, այսինքն՝ «ուլղղորդված է դեպի...» և մշտապես դուրս է գալիս ինքն իր սահմաներից<sup>54</sup>: Դա նշանակում էր, որ գիտակցության ինտենցիոնալությունը, որի մասին խոսում էր Յուսեռլը, միայն մասնավոր դրսնորումն է մարդու աշխարհում լինելու այն սպեցիֆիկ կերպի, որի շնորհիվ գիտակցությունը, ինանենտ լինելով հանդերձ, այնուամենայնիվ միավորված է աշխարհի հետ<sup>55</sup>: Այդպես ընդունված մարդն արդեն ոչ թե առարկա է, այլ անձնավորություն (*Person*), որի հիմնարար բնորոշումը պատմականությունն է:

Սրանով ասպարեզ է գալիս հայդեգերյան փիլիսոփայության հիմնական լայտմոտիվներից մեկը՝ անձնավորությունը որպես ինքն իր սահմաններից դուրս եկող, ինտենցիոնալ, պատմական գոյ:

Հրաժարվելով մարդուն դիտարկել որպես *animal rationale*, Հայդեգերը մարդկային գոյության իրացիոնալ բնույթ չի վերագրում: Նա խնդրին մոտենում է անկասկած համոզմունքով, որ մարդկային կյանքի ամենախորունկ ծալքերը հնարավոր է քննել, խուսափելով իրացիոնալիզմից: Վերջինս, ըստ մտածողի, այլ բան չէ, քան հարմար մի պիտակ, որը տեսաբանող գիտություններն օգտագործում են՝ նշանակելու համար ապրումների մնացորդից բաղկացած այն «խավար բիծը», որից իրենք թեև սննդում են, բայց որն իրենց *տեսական դիրքորոշման* համար, այնուամենայնիվ, անհասանելի է մնում<sup>56</sup>: Յետևաբար, անմիջականորեն տրված և կոնկրետ վերապրվող նախատեսական կյանքի ճշգրիտ ուսումնասիրությունը պեսոր է իրականացվի տեսական դիրքորոշման հնարներից սկզբունքորեն տարբերվող միջոցներով: Մարդու նկատմամբ այդ նոր, յուրահատուկ մոտեցման ակունքներում կանգնած են եղել Հայդեգերի կողմից հաճախ վկայակոչվող Վիլհելմ Դիլթայը և դանիացի աստվածաբան Սյորեն Կիրկեգորը:

<sup>54</sup> Ղննտ. Բ. Կորենոյ, “‘Сами вещи’ Мартина Хайдеггера”, *Исследования по феноменологии и философской герменевтике*, № 29:

<sup>55</sup> Ղննտ. բնարանը:

<sup>56</sup> M. Heidegger, “Zur Bestimmung der Philosophie”, in: GA 56/57, Klostermann, Ffm., 1987, S. 117.

## Անձնավորության պատմականությունը. Վ. Դիլբայի հետազոտություն-ները և կոմս Յորդի գաղափարները

...պատմականությունը հասկանալու մեր ընդհանուր շահագրգռվածությունը:

Կոմս Պ. Յորդ ֆոն Վարթենբուրգ

Վիլհելմ Դիլբային Ղայդեգերը համարում էր առաջինը, որ հասկացել է բներևութաբանության մտադրությունները և խնդիր դրել մշակելու նոր գիտություն, որում մարդը կդիտարկվեր որպես պատմության մեջ գործող կենդանի անձնավորություն և, հետևաբար, կնկարագրվեր ու կվերլուծվեր որպես այդպիսին: Խսկապես, Դիլբայի տարերքը պատմական կյանքն էր, մարդկանց միջյանց կապող հասարակական և հոգևոր այն փոխանոնչությունները, որոնք նա փորձել է նկարագրել մշակութային ֆենոմենների վերհանման և համադրության միջոցով: Եզակի անձնավորության դերը նրա ուսմունքում կենտրոնական էր այնքանով, որ «միայն ինքնազննությամբ ենք մենք մեզանում գտնում կյանքի միասնությունը և նրա շարունակականությունը, որը կրում է և կայում է պահում այդ բրոլոր խանցյալի հոգևոր կյանքի ծևերի նկատմամբ ունեցած՝ հարաբերությունները»<sup>57</sup>: Բայց Դիլբայն այդպես էլ չկարողացավ հաղթահարել անձնավորության ներքին փորձառության վրա կենտրոնացած էմպիրիկ հետազոտության և համրանշանակ գիտության իր տեսլականի միջև ակնհայտորեն երևակվող հակասությունը, այսինքն՝ ցույց տալ, թե «ինչպես են անհատի փորձը և նրա իմացությունը բարձրացվում պատմական փորձի մակարդակի»<sup>58</sup>:

Դիլբայի հղացքի ներքին հակասականությունը շրջանցելու, բայց և նրա ստեղծագործական ազդակները լրիվ յուրացնելու նպատակով Ղայդեգերը, դիլբայյան գաղափարների վերլուծության ժամանակ, հաճախ նկատի է ունեցել վերջինիս բարեկամ և գաղափարակից կոմս Պաուլ Յորդ ֆոն Վարթենբուրգի դիտողությունները<sup>59</sup>: Մտածողը համոզված էր, որ կոմս Յորդի արմատական հարցադրումներն առավել ցայտուն են դարձնում Դիլբայի «դիլբայականությունը», օգնելով տես-

<sup>57</sup> Վ. Դիլբայի Ոգու մասին գիտությունների ներածությունից քաղված այս նախադասությունը Ղայդեգերը մեջբերել է իր վերն արդեն իիշատակված աշխատության մեջ՝ M. Heidegger, “Zur Bestimmung der Philosophie”, in: GA 56/57, S. 164:

<sup>58</sup> Սի հարց, որ Հ.-Գ. Գադամը բնորոշում է որպես «պատմության բուն իմացաբանական պրոբլեմը», տես և H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, էջ 209:

<sup>59</sup> Տես և M. Heidegger, *Sein und Zeit*, § 77:

նել ավելին, քան վերջինս արտահայտել է անմիջականորեն<sup>60</sup>: Շատ բաներ, որ Դիլթեյի կոնկրետ պատմամշակութային հետազոտություններում առկա էին սոսկ որպես պրակտիկ ուսումնասիրության կենդանի նյարդ, կոմս Յորքն իմաստափորում էր որպես իմացարանական սկզբունք, որը բացորոշ ձևակերպում է պահանջում: Դիլթեյի հետազոտություններից և կոմս Յորքի գաղափարներից ձևավորված սինթետիկ անդրադարձում երևան է զալիս նրանց «պատմականության վերաբերյալ ունեցած ընդհանուր հետաքրքրությունը»<sup>61</sup>, որը դառնում է հայդեգերյան մտքի հիմնական թեմաներից մեկը:

Պ. Յորք ֆոն Վարթենբուրգի դիրքորոշումը տեսանելի է նրա նամակից քաղված հետևյալ հատվածում, ուր նա խոսում է Դիլթեյի կողմից հաճախ կիրառվող և որպես ոգու մասին գիտությունների մեթոդ դիտարկվող համեմատության հնարի մասին.

Այստեղ ես զատկում եմ Ձեզամից... Դամեմատությունը միշտ էսթետիկական է, միշտ պատկերից անրաժան: Վիճելքանդը պատմությանը պատկերներ է վերագրում: «Տիպի» Ձեր հասկացությունը շատ ավելի ներքին է: Այստեղ խոսքը բնավորությունների մասին է՝ ոչ պատկերների: Նրա՝ համար պատմությունը պատկերների, առանձին կերպարների մի շարան է, էսթետիկական առաջադրանք: ...Այնինչ պատմության Ձեր հասկացությունը ուժերի, ուժային միավորների փոխկապակցությունների հասկացություն է, որի նկատմամբ պատկերի կատեգորիան կարող է կիրառվել միայն փոխարերական իմաստով<sup>62</sup>:

Մեջբերված պարբերության մեջ ուշադրություն է գրավում կոմս Յորքի օգտագործած «Ուժ» եղբա: Մեծ հավանականությամբ կարելի է ենթադրել, որ այն սերում է Յեգելի Ոգու բներևութարանությունից: Ուժի հեգելյան ընթանան համար որոշչը ինքնաշարժումն է, որի ընթացքում ներքինն իր անմնացորդ դրսնորումն է գտնում՝ արտահայտվում է արտաքինի մեջ: Ոգու բներևութարանության մեջ կարդում ենք.

<sup>60</sup> Հմնտ. նույն տեղում, էջ 398:

<sup>61</sup> Նույն տեղում:

<sup>62</sup> Briefwechsel zwischen Wilhelm Dilthey und dem Grafen Paul Yorck von Wartenburg 1877-1897, Halle a.d.S., 1923: Մեջբերվում է ըստ M. Heidegger, Sein und Zeit, էջ 399-400:

Այսպիսով՝ դրանք <ուժեղը> փաստորեն չունեն սեփական սուբստանցներ՝ իրենց կրելու և հարատևությունն ապահովելու համար։ Ուժի հասկացությունը ներկայանում է ավելի շուտ որպես էռթյունն իր սեփական իրականության մեջ։ ուժը որպես իրական կա միմիայն իր արտահայտության մեջ, որը ոչինչ այլ բան չէ, քանի ինքն իր վերառումը<sup>63</sup>։

Հեգելյան բնորոշման լույսի ներքո հասկանալի է դառնում «ուժի» հասկացության հակադրությունը վինդելքանոյան «պատկերներին»։ Ուժերի և ուժային փոխկապակցությունների դրսնորումները հանդես են զալս որպես «արտահայտություններ»։ Դրանով նրանք «օրյեկտիվանում են» և ստանձնում անկրկնելի անհատների և փոխկապակցված մշակութային ֆենոմենների ոլորտները միացնող կամրջի դերը։ Իհարկե, արտաքինից նրանք կարող են ներկայանալ որպես պատկերների շարք, բայց իրականում դրանց աղբյուրը ինքնայտականացվող եռթյունների դիմանիկան է։ Պատահական չէ, որ խոսելով ուժի և պատկերի արմատական տարրերության մասին, կոնճ Յորդը կասկածի տակ է դնում համեմատության հնարի մեթոդաբանական արժեքը։ Պատմության մեջ գործող ուժերի համեմատությունը միշտ մակերեսային է։ Այն բավարարվում է առանձին հատկությունների արտաքին նմանությամբ և չի անդրադարձնում ուսումնասիրվող ֆենոմենի ինքնածավալման ներքին տրամաբանությանը։ Յորդի մոտեցումը բարձր գնահատող Շանս-Գեորգ Գաղամերը հիշեցնում է համեմատության մեթոդի՝ Հեգելի իրականացրած «համճարել քննադատության» մասին<sup>64</sup>։

Բայց հեգելյան բներկութաբանությունը միակ աղբյուրը չէ, որին աղերսվում է «ուժի» յորթյան ըմբռնումը։ Յայտնի է, որ ուժի հասկացությունն իր կոնկրետացումն է գտել գերմանական պատմական դպրոցի ներկայացուցիչներ Լեոպոլդ Ռամկեի և Յոհան Գուտավ Շրոյդենի երկերում։ Պատմության իմաստը, Ռամկեի կարծիքով, ոչ թե պատմական գործիչների նպատակներով և նախասիրություններով է որոշվում, այլ պատմական գործողություններով, որոնցից ելնելով մենք ճանաչում ենք պատմական ուժեղը։ Վերջիններս չի կարելի դիտարկել որպես մո-

<sup>63</sup> G. W. F. Hegel, *Phänomenologie des Geistes*, Suhrkamp, Ffm., 1986, S. 115.

<sup>64</sup> Տե՛ս H.-G. Gadamer, *Op. cit.*, էջ 220։ Հեգելյան քննադատությունը տե՛ս ս Տրամաբանության գիտության երկորր գրքի «Տարբերությունը» հատվածում, Գ. Վ. Փ. Գեղել, *Наука логики*, տ. 2, Մայսլ, Մ., 1971, էջ 41-44։

նադային փակ սուբյեկտներ: Յուրաքանչյուր անհատականացում կանխաձևված է իրեն դիմակայող իրականության միջոցով, հետևաբար, անհատականությունը պետք է դիտարկվի ոչ թե որպես սուբյեկտիվություն, այլ միջավայրի հետ փոխազդեցության մեջ գտնվող կենդանի ուժ<sup>65</sup>: Ուժի կատեգորիայի ներմուծման շնորհիվ Ռամկեն հնարավորություն է ստանում պատճական փոխկապակցվածությունները դիտարկել որպես նախնական տրվածություն<sup>66</sup>:

Պատճականի նախնական տրվածության գաղափարն առկա է նաև Դրոյդենի «Պատճաբանության» մեջ, ուր կենտրոնական տեղ է գրավում «քարոյական ուժերի» հասկացությունը՝ «sittliche Mächte»<sup>67</sup>: Անհատականի և հասարակականի ներքին աղերսվածությունը Դրոյդենի մոտ իր լրացուցիչ հիմնավորումն է ստանում «sittlich» ածականի շնորհիվ, որքանով որ «Sitte» բառն ավելի շուտ համայնական բարերին է վերաբերում, ոչ անհատական էթոսին: Անհատի բարոյական ուժը պատճական բնույթ է ձեռք բերում, երբ մասնակցում է ընդհանուր մեծ նպատակների իրագործմանը: Ակնհայտ է, սակայն, որ բարերի հետ մեկտեղ «քարոյական ուժերում» առկա է նաև անհատականը, քանի որ ուժի մասին պատկերացումն ինքնին անհատականացում է ենթադրում: Մարդու պատճական ընթացքների մեջ ներգրավվածությունն իրականացվում է կոնկրետ դարաշրջանի և նրա բարոյական պատկերացումների հետ անքակտելիորեն կապված անծնավորության շահագրգիռ, հետևաբար, միակողմանի առնչվածության ձևով<sup>68</sup>: Դրոյդենը խոսում է «երջանիկ կերպով անկատար մարդկային բնության յուրահատուկ քարիզմայի» մասին, որի շնորհիվ մարդը՝ «հոգևոր և մարմնական միևնույն ժամանակ», ստիպված է գործել էթիկական ձևով<sup>69</sup>:

Դասկանալի է, որ այս ամենի մասին լավ գիտեր ոչ միայն կոմս Յորքը, այլև ինքը՝ Դիլբայը: Երբ կոմս Յորք ֆոն Վարթենբուրգը խոսում է «ուժերի» կամ «քնավորությունների» մասին, նրա նպատակը պատճության մեջ նման քենոմենների առկայության պարզ արձանագրությունը չէ, այլ այդ հանգամանքը ուժինեկտիվ ձևով իմաստավորելու, հետազոտության սկզբունքի մակարդակի բարձրացմելու պահան-

<sup>65</sup> Ծարադրված է նույն տեղից (H.-G. Gadamer, *Op. cit.*), էջ 194:

<sup>66</sup> Նոյն տեղում, էջ 195:

<sup>67</sup> J. G. Droysen, *Historik*, Veit, Leipzig, 1868, § 55 ff.

<sup>68</sup> Տե՛ս H.-G. Gadamer, *Op.cit.*, S. 201-202:

<sup>69</sup> Մեջբերվում է նոյն տեղից, էջ 200:

ջը: Չի կարելի չհամաձայնել պատմափիլիսոփայական համատեքստին քաջ ծանոթ Գաղամերի հետ, որը կոմս Յորքի դերը տեսմուն է նախ և առաջ նրանում, որ վերջինս պահպանել է ոչ միայն դիլքայյան մոտեցման, այլև վաղ Յեգելի փիլիսոփայության ոգին: Դրա շնորհիվ նրան հաջողվել է ի ցուց դնել «ինքնազիտակցության և կյանքի կառուցվածքային համապատասխանությունը»<sup>70</sup> և սույնով ճանապարհ հարթել կյանքի ներքինից դիֆերենցված, բացորոշող ուսումնասիրության համար:

Այս ինքնին անվիճելի թեզին պետք է սակայն ավելացնել, որ կոմս Յորքի հարցադրումը հետագա զարգացման երկու, թեև փոխկապակցված, բայց հակառակ ուղղվածություն ունեցող հնարավորություն է ընծեռում: Մեկն անձնավորության ներքին փորձից դեպի պատմական, վերանձնական փորձը անցում կատարելու դիլքայյան ուղին էր: Մյուսը՝ անձնավորության ներքին պատմականությունն ինքն իրենից բացորոշելու խնդիրն էր, որն անմիջականորեն տանում էր դեպի անձնավորության կիրկեգորյան հղացքը:

Տվյալ հանգամանքը, որի հիմնավորումը ես կաշխատեմ ներկայացնել հաջորդ հատվածում, իհմք է տալիս ամենու, որ կոմս Պաուլ Յորք ֆոն Վարթենբուրգը որոշակի ավանդ ունի ոչ միայն դիլքայյան նախագծի բարնված հնարավորությունների, այլև Դիլքայի և Կիրկեգորի հարցադրումների ներքին հարազատության բացահայտման գործում:

### **Զրուց Կիրկեգորի հետ. փաստականության ներ-կայությունը**

Եթե նոյնիսկ Միքայել իրէշտակապետը գրի առներ բոլոր այն գործերը, որ իրեն համձնարարվել են, և ինքը կատարել է, միևնույն է, դա չէր լինի նրա պատմությունը:

Ս. Կիրկեգոր

Սյորեն Կիրկեգորի (1813-1855) խթանող մտքի նկատմամբ իր վերաբերմունքը Յայդեգերը ժամանակին արտահայտել է իր ատենախոսական թեզի հենց սկզբում կատարած մեջբերումով և «աղբյուրի շնորհակալ մատնանշմանը»<sup>71</sup>: Եթե Կիրկեգորի վկայակոչումները հայդեգերյան տեքստերում այնուամենայնիվ այնքան առատ չեն, որքան Դիլ-

<sup>70</sup> H.-G. Gadamer, *Op. cit.*, S. 238.

<sup>71</sup> GA 61, S. 182.

թայինը, դա չի վկայում առաջինի ազդեցության նվազ չափի մասին, այլ գուցե հակառակը՝ համահանձար ընկալման այնպիսի մի աստիճանի, որից հետո հղումն ինքնահղումից դժվար տարբերելի է դաշնում:

Քրիստոնեության «բացարձակ դիրքերից» հանդես եկող Կիրկեգորը, ի տարբերություն Ղիլքայի, խոսում էր ոչ այնքան պատմական փոխկապակցությունների ամբողջությունը բացորոշելու մասին, որքան բում պատմականության, որն ընթանվում էր որպես յուրաքանչյուր առանձին վերցրած անձնավորության մեջ արմատավորված և նրա փաստական իրավիճակը բնորոշող յուրահատուկ մի ֆենոմեն: Ընդ որում ծնկը, որով Կիրկեգորը նոտեցել է անձնավորության, կամ ինչպես ինքն էր գերադասում ասել՝ անհատի գոյության պատմական բնույթի վերծանմանը, կարող է արտառոց թվալ: Դանիացի աստվածաբանի կրոնաբանական տրակտատը՝ «Աիի հասկացությունը», հենվում է Աղամի և Եվայի առաջին մեղքի և նրանց՝ դրախտից արտաքաման աստվածաշնչյան պատմության վերլուծության վրա: Սակայն առասպելական այդ մոդելի քննությունից մակարերված արդյունքը աչքի է ընկնում գիտական սթագիությամբ և տրամաբանական համոզչությամբ:

Պատմականության սկիզբը Կիրկեգորը կապում է *առաջին մեղքի* հիմնարար իրողության հետ: «Պատմությունը սերունդների սոսկական հերթափոխ չէ. այն առնչվում է յուրաքանչյուր անհատի գոյությանը: Անընդունելի է առաջին մեղքի պրոբլեմը բացառապես Աղամի հետ առնչելը, հետագա սերունդները վերածելով «մեղավորության շահագրգիռ դիտորդների, բայց ոչ մեղավորների»<sup>72</sup>: Ենչտ չէ կարծել, որ ավելի ուշ ծնվածները էապես տարբեր են առաջին մարդուց՝ «անմեղությունը կարելի է կորցնել միայն մեղքի միջոցով, և յուրաքանչյուր մարդ, ըստ եռթյան, անմեղությունը կորցնում է նույն կերպ, ինչ Աղամը»<sup>73</sup>: Եթե մենք ասում ենք, որ Աղամը աշխարհի բերել մեղքը, պետք է ընդունենք, որ նույնը և նույն իրավունքով վերաբերում է ամեն մի անհատի, որն իր առաջին մեղքի միջոցով մեղքն աշխարհի բերում:

Առաջին մեղագործության՝ սերունդների հերթափոխի ընթացքում վերաբաղրպակող հանգունակը Կիրկեգորը վերլուծում է ամենայն մանրամասնությամբ: Մարդն, ըստ աստվածաբանի, դրախտում ներկա է եղել որպես հոգու և մարմնի ներքինից չտարբերակված միասնություն:

<sup>72</sup> С. Клеркегор, “Понятие страха”, его же, *Страх и трепет*, Республика, М., 1993, с. 139.

<sup>73</sup> Նույն տեղում:

Դա դեռևս իրական համադրություն՝ սինթեզ չէ: Միավորող սկզբունքը՝ ոգին, կարող էր իրականացնել սինթեզը միայն այն դեպքում, եթե այդ չոփքերենցված էությունը խոցվեր տարբերությամբ<sup>74</sup>: Երկնելքումը տեղի է ունեցել, երբ առաջին տղամարդը և կինը խախտել են աստվածային արգելքը և գիտակցել իրենց սեռական տարբերությունը<sup>75</sup>: Սեռականությունն այստեղ կարևոր է այնքանով, որ մարմնավորում է մարդու մեջ զգայականի դրսնորման ծայրագույն աստիճանը: Այդ սահմանային կետում, երբ հոգին և մարմինը հակադրված են, ոգին իրական է դառնում: Առաջին մեղքի մեղսագործությամբ մարդը վերջնականապես կայանում է որպես մարդ: Մինչ առաջին մեղքը նա կենդամի չէր, բայց, ըստ Էության, չի եղել նաև մարդ: Մարդը մարդ է դառնում շնորհիվ այն բանի, որ միաժամանակ դառնում է կենդամի: Որովհետև, գտնում է Կիրկեգորը, թեև մեղավորությունը ոչ մի դեպքում չի կարելի նույնացնել զգայականության հետ, բայց:

...առանց մեղքի չկա սեռականություն, իսկ առանց սեռականության չկա պատմություն: Կատարյալ ոգուն հատուկ չէ ոչ մեկը, ոչ մյուսը, ահա թե ինչու, ասենք, սեռական տարբերությունը մեղյալների հարության պահից վերարկում է, և իրեշտակը պատմություն չունի: Եթե նոյն նիսկ Միքայել հրեշտակապետը գրի առներ բոլոր այն գործերը, որ իրեն հանձնարավել են, և ինքը կատարել է, միևնույն է, դա չէր լինի նրա պատմությունը: Միայն սեռականում է սինթեզմ առաջադրված որպես հակասություն, բայց ինչպես և ամեն մի հակասություն, այն առաջադրված է նաև որպես խնդիր, որի պատմությունը սկսվում է հենց այդ ակնքարթից: Այդպիսին է իրականությունը, որին նախորդում է ազատության հնարավորությունը: Բայց ազատության հնարավորությունն այն չէ, որ կարելի է ընտրություն կատարել բարու և չարի միջև: ...Դմարավորությունը կայողանալու մեջ է<sup>76</sup>:

Կիրկեգորյան պատմականությունն, այսպիսով, հանդես է զալիս որպես կամային նիտվածություն, որ հատուկ է ամեն մի անհատի, որքանով որ վերջինս ներքին հակասականությամբ օժտված վերջավոր էակ է՝ որակապես տարբեր ինչպես Աստծուն անմիջականորեն առնչված

<sup>74</sup> Քեզիի ազդեցությունն այստեղ ակնհայտ է:

<sup>75</sup> «Եվ նրանց երկուսի աչքերը բացվեցին, և գիտեցան, որ մերկ են. և թգենու տերևներ լսուցին, և իրենց համար ծածկոցներ շինեցին», Ծննդոց, Գ, 7, 8:

<sup>76</sup> C. Կերկերօ, “Պոնտիուս ստրախա”, с. 150.

կատարյալ իրեշտակներից, այնպես էլ անտարբերության մեջ ընկղմված կենդանական աշխարհից: Այդ կամային մղումը մեխանիզմ ունի, որը, հոգեբանության մեջ արմատավորված լինելով հանդերձ, ըստ եռթյան հոգեբանական չէ: Նրա հիմքում կրոնակարիկական խնդիր է ընկած<sup>77</sup>: Դա վերջավոր մարդու ազատ լինելու հնարավորությունն է, որը սրբազն պատմության սկզբում դրսնորվում է որպես մեղքի հնարավորություն: Քետևաբար, «կարողանալու» գաղափարը վերաբերում է սեփական հնարավորություններն իմքնուրույն օգտագործելու ազատությանը, որով դրախտից արտաքսված վերջավոր մարդը պատմական է դաշնում:

Սեփական հնարավորությունները հանձն առնելու կրոնաբարոյական պահանջն իր հետագա հիմնավորումն է ստանում Կիրկեգորի մյուս հիմնարար երկում՝ «Ահ ու սարսափ»ում: Մարդկային Ես-ը սահմանելով որպես ոգու՝ իմքն իր նկատմամբ ունեցած հարաբերություն, աստվածաբանը բացատրում է.

Աստված, մարդուց այդ հարաբերությունն արարելով, նրան հետո կարծեն իր ծեռքերից բաց է թողնում, այնպես որ այդ ակնթարթից սկսած, այդ հարաբերությունը պետք է իմքն ուղղորդի իրեն: Եվ այդ հարաբերությունը ոգին է կամ Ես-ը, և նրանում պատասխանատվություն կա...<sup>78</sup>.

Ինչպես տեսնում ենք, պատմականության կիրկեգորյան ըմբռնումն առնչվում է անհատ մարդու գոյության ամենածածուկ շերտերին՝ նրա հնարավորությանը, ազատությանը և պատասխանատվությանը: Եվ այս ամենի հիմքում ընկած է մարդու վերջավորությունը, նրա՝ «Աստծո ծեռքերից բաց թողնված» լինելը: Քենց դրանով էլ պայմանավորված է կիրկեգորյան հղացքից բխող ամենակարևոր եղակացնություններից մեկը.

Մարդն այն պատճառով չէ պատմական, որ պատմություն կա, այլ պատմություն կա, որովհետև մարդն իր էությամբ պատմական է<sup>79</sup>:

<sup>77</sup> Տեղին է հիշել, որ դրոյգենյան «քարոյական ուժերը» նույնպես մակաբերվում էին «երջանիկ կերպով անկատար մարդկային բնության» վերջավորությունից, որը մարդուն երիկական գործելակերպ էր պարտադրում:

<sup>78</sup> C. Կերքերը, “Страх и трепет”, որը յէ, *Страх и трепет*, с. 255, 257.

<sup>79</sup> Քննո՞ւ՝ «այս գոյակուրը «ժամանակային» չէ, քանի որ «պատմության մեջ է գտնվում», այլ ընդհակառակը՝ այն կա և կարող է լինել պատմականորեն, քանի իր գոյության հիմքի հանաձայն ժամանակային է»: M. Heidegger, *Sein und Zeit*, S. 376.

Այս սկզբունքային կետի վերաբերյալ ընդհանուր առումով համակարծիք են եղել ինչպես Կիրկեգորն ու Դիլբայը, այնպես էլ նրանց հարցում անող Մարտին Յայդեգերը: Դրանով վերը քննարկված հղացքների ակնհայտ տարբերություններն իհարկե չեն վերանում: Մենք տեսել ենք, որ «ուժերը» դիլբայ-յորբյան համատեքստում մեկնարանվում են կյանքի փիլիսոփայության դիրքերից՝ որպես կոնկրետ պատմական և նշակութային փոխկապակցությունների՝ «բարբերի» մեջ արմատավորված և միջավայրի հետ փոխանակում իրականացնող բաց միավորներ: Դրա համար էլ այդ ուժերը «բարոյական ուժեր» են համարվել, քանի որ անձնական լինելով պահպանում են իրենց կապը վերանձնական բարբերի հետ: Դրանց պատմականությունը սեփական սահմաններից մշտապես դուրս գալու՝ միջավայրի վրա ազդելու և նրանց ազդեցություններ կրելու մեջ է: Կիրկեգորյան «անհատի» գործելակերպն էլ կարող է «էթիկական» համարվել, բայց ոչ թե «համայնական բարբերի» հետ իր ունեցած կապի, այլ սեփական վերջավորությունը գիտակցող ներքին սրափությամ առումով: Մարդը Կիրկեգորի մոտ պատմական է իր իսկ հնարավորությունների մկանամբ բաց լինելու, դրանք հանձն առնելու և դրանց համար պատասխանատվություն կրելու վճռականության շնորհիվ:

Այս երկու յուրօրինակ մոտեցումները միավորող հանգամանքը դրանց սուբյեկտների կենտրոնախույս բնույթն է, նրանց՝ դեպի դուրս միտվածությունը, որն առավել ակնառու է դառնում, եթե ոչ միայն էմպիրիկ բազմազանության շրջանակներում է դիտարկվում, այլ կոնս Յորքի պահանջի համաձայն՝ բարձրացվում է մեթոդաբանական սկզբունքի մակարդակի: Այդ դեպքում ի հայտ է գալիս դրանց ներքին կառուցվածքային նույնությունը՝ ինտենցիոնալությունը: Դրա շնորհիվ է, որ Յայդեգերին հաջողվել է անձնավորության երկու ռահվիրաների հղացքների մերձեցումը և վերահմաստավորումը բներևութաբանական հարացույցի շրջանակներում: Սինթեզն ապահովող վճռական քայլը մտածողն արել է, երբ վերջավոր մարդու՝ «ինքն իր համար և ինքն իր հնարավորություններից» ելնող գոյության կերպն իմաստավորել է որպես «փաստականություն»<sup>80</sup>: 1923 թվականի ամառային սեմեստրում

<sup>80</sup> Ուշագրավ է Ժ. Գրոնդենի դիտողություն այն մասին, որ հայդեգերյան փաստականությունը (*Faktizität*) ձևավորվել է որպես նորվանտականության տրամարանականության (*Logizität*) հակուսնյա: Տե՛ս Ժ. Գրոնդեն, “Герменевтика фактичности как онтологическая деструкция и критика идеологии. К актуальности герменевтики

Աերկայացված իր դասախոսությունների հենց սկզբում նա տվել է փաստականության հետևյալ բնորոշումը.

**Փաստականությունը «մեր» «սեփական» մեր-կայության (*Dasein*) գոյակերպի անվանումն է:** Ավելի ծզգիտ, այդ արտահայտությունը նշանակում է՝ յուրաքանչյուր անգամ հենց այս մեր-կայությունը [...], որքանով որ նրա գոյակերպը որպես գոյություն «մերկա լինելը» է: Ներկա լինել որպես գոյություն նշանակում է երեք և որևէ կերպ չլինել հայեցղողության և հայեցղական բնորոշման առարկա, ոչ էլ դրանց կողմից պարզապես ի գիտություն ընդունվել կամ հաշվի առնվել, այլ մեր-կայությունը «կա» իճք իր համար՝ որպես իր «ամենասեփական» գոյության «ինչպեսը»<sup>81</sup>:

Հատկանշական է, որ մեջբերված հատվածում չեն օգտագործվում «անձնավորություն» կամ «անհատ» բառերը: Դրանց փոխարինել է *Dasein*-ը<sup>82</sup>, որը ես տվյալ համատեքստում թարգմանել եմ որպես «մեր-կայություն»: Յայդեգերի համար կենտրոնական այս հասկացության իմաստը բացորոշելու համար օգտակար է համարդել «Dasein» եզրի քերականական և փիլիսոփայական տեսանկյունները<sup>83</sup>: Գերմաներեն «Dasein»-ում, որ նշանակում է «առկայություն», «գոյություն» կամ «կյանք» (որու համար անհրաժեշտ պարզագույն նախադրյաների իմաստով<sup>84</sup>), գոյականը՝ «Dasein», և բայց՝ «da sein», փաստորեն համընկնում են: Դա թույլ է տալիս սուրստանտիվի կարգավիճակով օգտագործված բառն ընկալել որպես բայի անկատար ծև և դրանով շեշտել մարդկային կենդանի գոյության մերքին դիմանիզմը, նրա կենսագործունեության պրոցեսուալ բնույթը: Բայց Գ. Ֆիզալն այս կապակցությամբ իրավացիորեն հիշեցնում է, որ եթե Յայդեգերի միակ խնդիրը անձնավորության շարժունակության ցուցադրությունը լիներ, նա կարող էր լիովին բավարարվել «Leben» (կյանք) բառով: «Dasein» և «Leben» բառերն իմաստային առումով շատ մոտ են, և վերջինս նույն-

Хайдеггера”, в кн.: *Исследования по феноменологии и философской герменевтике*, ЕГУ, Минск, 2001, էջ 46:

<sup>81</sup> M. Heidegger, “Ontologie (Hermeneutik der Faktizität)”, in: GA 63, Ffm., 1988, S. 7.

<sup>82</sup> Արտասանել «յա զայն»:

<sup>83</sup> Տե՛ս G. Figal, *Martin Heidegger zur Einführung*, էջ 37-38:

<sup>84</sup> Տե՛ս Wahrig, *Deutsches Wörterbuch*, Bertelsmann, 1997:

պես հնարավոր է ընկալել որպես իմֆինիտիկ՝ «Leben»-ը «կյանքն» է, իսկ «leben»-ը՝ «ապրելը»: Սրանով, իհարկե, Յայդեգերը մնալու էր կյանքի փիլիսոփայության դիլթայյան ծիրում: Այնինչ, «Dasein»-ի ներմուծմամբ մտածողը հնարավորություն է ստանում ակտուալացնել նաև «da sein» բայի լրացուցիչ՝ «այստեղ լինել», «ներկա գտնվել» իմաստները, որով այդ եզրը շեշտակիրեն մոտեցվում է իմբն իրեն հարաբերված, արթում անձնավորության կիրկեգորյան ըմբռնմանը<sup>85</sup>:

Անկասկած է, որ դիլթայյան և կիրկեգորյան տեսությունների այդ սիմբեզից է առաջ եկել Յայդեգերի փաստականության հերմենուստիկայի յուրահատուկ կառուցքը: Այլ բան է, սակայն, որ նույն այդ համադրության ընթացքում առաջացած աննկատելի ճեղքվածքները հետագայում պայմանավորեցին նրա գլխավոր երկի՝ Գոյության և ժամանակի, ներքին հակասականությունը և դրա փիլիսոփայական թեմաների՝ այստեղից բխող կերպափոխությունների շարանը:

### **Բներևութաբանությունը, գոյարանությունը և հերմենուստիկան**

Երեք բար պետք չէ՝ դա միևնույն բանն է:

Վ. Ի. Լեմին

Յիշեցնեմ, որ սույն հետազոտության մեջ անձնավորության խնդրին մենք բախվեցինք այնքանով, որքանով Յայդեգերի հետ միասին որոնում էինք գոյի այն առանձնահատուկ տեսակը, որի օգնությամբ հնարավոր կլիներ պարզել գիտակցության՝ գոյություն ունենալու ուրույն կերպը, իսկ այնուհետև գոյության իմաստն ընդհանրապես: Այդ հարցադրումը, թեև չէր համապատասխանում հուսեռյան բներևութաբանության ավանդական նողելին, այնուամենայնիվ պահպանում էր կապն իր սկզբնադրյուրի հետ, քանի որ կառող էր ոփուլվել որպես ուսուցչի՝ «դեպի իրերն ինքնին» առաջնորդող կարգախոսի կիրառության ոլորտի ընդլայնում: Բայց հարացուցը վերջնականապես փոխվում է, երբ պարզ է դառնում, որ բներևութաբանական հետազոտու-

<sup>85</sup> Յայդերեն «ներկայութուն» եզրը նկատի ունի հենց այդ հանգամանքը և կոչված է արտահայտել հայդեգերյան հղացքի բազմիմաստությունը՝ տարանջատող գծիկը շեշտում է գոյության (կայության) բաղադրիչը, պահպանում ներքին սրագության՝ ներկա լինելու կանոնրագույն գործառույթը և հնարավորություն տալիս տարբերելու այս յուրահատուկ եզրը պարզ «ներկայությունից» (Anwesenheit), որը նույնպես հաճախ օգտագործվում է հայդեգերյան փիլիսոփայության շղթանակներում:

թյան համար անմիջականորեն հասանելի միակ գոյը՝ ներկայությունը, հանդես է գալիս որպես պատմական ֆենոմեն:

Դայտնի է, որ խատիվ գիտության հնարավորությունը հիմնավորել փորձող Հուսեռլի համար պատմականությունն ուսումնասիրության թեմա չի եղել: Խատիվ գիտելիքի հիմքում դրված անփոփոխ և հավերժական ապրիորի պատմական լինել չեղ կարող<sup>86</sup>: Գոյը բնորոշող կատեգորիաների համակարգի պատմական պայմանավորվածության լայտ-մուտիվն ավելի շուտ հեգեյան ծագում ունի: Ուրեմն, եթե խոսքն անպայման բներևութաբանությունը պատմական դարձնելու մասին էր լինելու, ֆենոմենոլոգիայի հեգեյան տարբերակին դիմելը կարող էր ավելի պատեհ թվալ. չո՞ որ վերջինս նկարագրել է մարդկային գիտակցության մեջ ի հայտ եկող պատկերների այն հերթափոխը, որում, ինչպես Հեգելը կարծում էր, արտացոլված են օբյեկտիվ ոգու զարգացման հիմնական աստիճանները:

Սակայն հեշտ է համոզվել, որ պատմականության հեգեյան ընթացումը չեղ կարող ընդունելի լինել Հայդեգերի համար: Պատճառը միայն այն չեղ, որ Հեգելի և Հուսեռլի բներևութաբանական մեթոդները սկզբունքորեն տարբեր են՝ առաջինը կառուցավորող էր, իսկ երկրորդը՝ հայեցող: Իրական բարդությունը ոչ այնքան տարբերությունն էր, որքան ննանությունը. Երկու մտածողներն էլ աշխարհին նայում էին *sueb specie aeternitatis*՝ հավերժության դիրքերից:

Հեգելի աշխարհայցքը պատմական էր այնքանով, որ անցյալի բոլոր իրադարձությունները նրանում դիտարկվում էին որպես համաշխարհային պատմության անհրաժեշտ փուլեր, որոնք վերառվում-պահպանվում են վերջնական արդյունքում: Եվ դա նշանակում էր, որ իրականության ամփոփիչ՝ բուն հեգեյան պատկերն այլևս պատմական լինել չեղ կարող. մեծ դիալեկտիկի «ամեն ինչ ընթանող» միտքը կտրում-անցնում էր ողջ պատմությունը, և բոլոր դարաշրջաններն ու իրադարձությունները հավասարապես թափանցիկ էին նրա առջև: Սեփական փիլիսոփայությունը որպես բացարձակ ոգու ինքնաճանաչման վերջնական արդյունք դիտարկող Հեգելին պետք է թվար, որ իր տրամադրության տակ բացարձակ, փաստորեն՝ աստվածային, դիտակետ կա:

<sup>86</sup> Տե՛ս E. Husserl, “Philosophie als strenge Wissenschaft”, in: *Logos*, B. 1 (1910/11), Neuauflage, Ffm., 1965: Պատմականության խնդրին Հուսեռլն անդրադարձել է միայն կյանքի վերջին տարիներին, երբ հայդեգեյան հղացքն արդեն ծևակորված էր:

Հայդեգերը գուրկ էր նման պատրանքից: Նրա դիտակետը միշտ կապված էր յուրաքանչյուր անգամ «հենց ա՞յս» կոնկրետ գոյի գոյության հետ և այդ իմաստով խորապես կիրկեգորյան էր: Բայց միայն այդ իմաստով: Սկզբունքային առումով, թեև Հայդեգերի գոյաքանությունը փաստացի կյանքին էր վերաբերում, խնդրի կիրկեգորյան լուծումը նրա համար նույնքան անընդունելի էր, որքան և հեգելյանը: Կիրկեգորի՝ այստեղ և հիմա գոյություն ունեցող անհատն, այն՝ վերջավոր էր, բայց նրան տրված էր քրիստոնեական հավատի միջոցով աստվածայինին հաղորդվելու հնարավորությունը: Հայդեգերի համար Հեգելի փիլիսոփայական, և կիրկեգորի՝ քրիստոնեական աստվածները հավասարապես փակագծված էին: Դրանով նրա խնդրի բարդությունը բազմապատճենում էր: Մի կողմից, նա պետք է կարողանար միավորել անկրկնելի անհատականության կիրկեգորյան գաղափարը և կատեգորիաների պատմականության վրա խարսխված փիլիսոփայության հեգելյան ծրագիրը<sup>87</sup>: Մյուսից, սակայն, նա պետք է հաշվի առներ, որ այդ երկու՝ իր համար այդքան կարևոր դիտակետերը փոխադարձարար թափանցիկ չեն.

Հենց այդ ոչ բափանցիկությունն էլ նկատի ունի Հայդեգերը, եթե արձանագրում է, որ փաստացի կյանքը չի կարող ըմբռնվել անմիջականորեն: Եվ այստեղ ի հայտ է գալիս երրորդ դժվարությունը՝ ընդունելով փաստականության միջնորդավորված բնույթը, Հայդեգերը ծեռք է բարձրացնում հուսեռյան բներևութաբանության հիմնայուներից մեկի՝ ակնհայտության սկզբունքի վրա: «Ինտուիցիան», որը Հուսեռլի հղացքում արտահայտում էր կատեգորիալի՝ հայեցողության մեջ անմիջականորեն տրված լինելու գաղափարը, փոխարինվում է մարդու՝ որպես առանձնահատուկ գոյի կենդանի և փաստական «ներ-կայությամբ»: Կենդանի ներկայությունն, իհարկե, ենթադրում է անմիջականություն և առնվազն այդքանով վերարտադրում է կենդանի հայեցողության գործառույթը: Բայց նրա փաստականությունը պատմական և պահանջում է միջնորդավորված մոտեցում: Դրա պատճառն այն է, որ մեր ներկան տրված չէ մեզ հայեցողության միջոցով, այն թեկվում է պատմական ավանդության մեջ, իսկ վերջինս ակնհայտ չէ և հասկացման կարիք ունի: Սրանով Հայդեգերը փաստորեն վերահստատում է հայտնի հերմենուսիկական թեզն այն մասին, որ ավանդության անհա-

<sup>87</sup> Հմնտ. G. Figal, *Martin Heidegger zur Einführung*, էջ 17:

տական ընկալումը ոչ թե հասկանալուց է սկիզբ առնում, այլ չհասկանալուց<sup>88</sup>:

Բնական է, որ դիրքորոշման այս ճգրտման արդյունքում Յայդեգերի տեսադաշտում նորից հայտնվում է Վիլհելմ Դիլթայը: Մենք իշխում ենք, որ երիտասարդ բներևութաբանի հիացմունքը դիլթայան փիլիսոփայությամբ վերաբերում էր «հետազոտության նոր բնագավառի հայտնագործությանը»՝ ոչ մեթոդին: Եվ այնուամենայնիվ, որքան ավելի է Յայդեգերը հեռանում բներևութաբանության հուսեռյան ընթանումից, այնքան ավելի ուշադիր է դառնում ուշ Դիլթայի հերմենուսիկական մեթոդի միջուկի՝ հասկացման նկատմամբ:

Նաև այստեղ Յայդեգերը լիովին ինքնուրույն է մնում: Ի տարբերություն «ոգու մեթոդաբան» Դիլթայի՝ հերմենուսիկայում նրան հետաքրքրում է ոչ թե «հասկացման տեսությունը», այլ պատմականորեն գոյություն ունեցող ներ-կայության ինքնահասկացումը: Դրանով «հասկանալը» դուրս է բերվում ոգու մասին գիտությունների մեթոդի կարգավիճակից, որ նա վայելում էր Դիլթայի մոտ, և առավելագույնս մոտեցվում Ես-ի՝ ինքն իրեն հարաբերված լինելու կիրկեգորյան գաղափարին:

Ընդունելով, որ անձնավորության ինքնահասկացումը կարող է իրականացվել միայն զարտույի ծանապարհով որպես ոչ բափանցիկ պատմական ավանդության անհատական յուրացում, Յայդեգերն ընդհուած մոտենում է սեփական փիլիսոփայական հղացքի ծևավորմանը, որի բարդ հյուսվածքում առանձնահատուկ տեղ էր հատկացված ինչպես Ս. Կիրկեգորից և Վ. Դիլթայից, այնպես էլ Ե. Յուսեռլից քաղված լայտնուտիվների անկուլմելի համարությանը<sup>89</sup>:

Կերպափոխությունները, որոնց Յայդեգերը ենթարկում է իր նախորդների գաղափարները, իրոք ուշագրավ են:

<sup>88</sup> Ծլայերմախերն այդ կապակցությամբ ասում է. «(Սեկոնդարյան) արվեստի աղքատիկ փորձը ելուում է նրանից, որ հասկացումն առաջանում է ինքնին և նպատակն արտահայտում է բացասական ձևով՝ պետք է խուսափել չհասկանալուց: ...Յարուսան փորձը ելուում է նրանից, որ ինքնին առաջանում է չհասկանայթ, և որ յուրաքանչյուր կետում պետք է ձգտել հասկացնան և փնտուել այն»: F. Schleiermacher, *Hermeneutik und Kritik* (Hg. v. M. Frank), Ffm., 1977, S. 92 (հմնտ. սույն գրքի էջ 74 հետ):

<sup>89</sup> Այդ համարության մեջ անշփոթելի է կոնս Յորիք աղեցության շնորհիվ ներմուծված հեգելյան ֆերմենտը: Յորքը, մատնացույց անելով «կյանքի և ինքնագիտակցության մետաֆիլիկական փիլիսոփակացվածությունը», որի գիտակցությունը բավարար չափով հատուկ չէր ոչ Դիլթային, ոչ Յուսեռլին, կարողացել էր «կամուրջ գցել Յեգելի ոգու բներևութաբանության և Յուսեռլի տրանսցենդենտալ սույրեկտիվության բներևութաբանության միջև»:Տե՛ս և H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, էջ 240:

Ավանդական բներևութաբանական ընթացակարգը գործ ուներ գիտակցության իմտենցիոնալ առարկաների և նրանցում հիմնավորված ապրիորիի հետ: Այդ գույզի գոյաբանական և պատմական վերահմատավորման շնորհիվ ի հայտ է գալիս սկզբունքորեն նոր մի կոնստելացիա՝ «անձնավորություն-ավանդություն» հարաբերությունը:

Դուսեօյան բներևութաբանությունը ենթադրում էր նաև, որ կատեգորիալ հայեցողությունը հնարավոր չէ իրականացնել գիտակցության «բնական դիրքորոշման» պայմաններում՝ տրանսցենդենտալ մոտեցումը պետք է ազատագրվեր տարածաժամանակային պատկերացումների կապանքներից: Յայդեգերի մոտ «բնական դիրքորոշումը», հնչքես գիտենք, նախասկզբնական է և ելակետային՝ այն «ինքն իրեն ցույց է տալիս» և կասկածի տակ դրվել չի կարող: Դրա փոխարեն «ոչ թափանցիկության» խանգարիչ գործառույթը հանձնված է ոչ քննադատական ծնով ընկալված ավանդությանը: Մարդը պատամդ է մնում ավանդությանը<sup>90</sup>, քանի դեռ վերջինս ներքնապես հասկացված չէ: Իսկ ավանդությունը կարող է հասկացվել միայն այն դեպքում, եթե անձնավորությունը արթուն:

Յայսմի է, որ արթունության հայեցգերյան պահանջը (Wachheit) քրիստոնեական ծագում ունի: Վերը մենք տեսել ենք, որ դրա անմիջական աղբյուրը Կիրկեգորի «ինքն իրեն հարաբերված են»-ն է, բայց և գիտենք, որ արթունության, սրափության, նաև հսկելու գաղափարը քրիստոնեական մեջ լայն տարածում է ունեցել և որպես այդպիսին ավանդական է<sup>91</sup>: Յայդեգերը պահպանում է այդ կոնստացիաները, բայց դրա հետ մեկտեղ «արթունությանը» այնպիսի գուտ փիլիսոփայական բովանդակություն է վերագրում, որը հնարավոր է դարձնում այդ եզրի հստիկ՝ համարյա իմստրումենտալ գործառումը երկու տարբեր հեռանկարներից՝ դրսից և ներսից:

<sup>90</sup> Յայդեգերն օգտագործում է բռնվածք՝ եթեաց բառը:

<sup>91</sup> Յայդիս այն կարող է հիշեցնել, օրինակ, Գրիգոր Նարեկացու Սասոյանը, ուր հեղինակի անձնանունը խորհրդանշորեն փոխարինված է «հսկող» բառով: Նարեկացի «Գրիգորիս» (Խոնարեն՝ հսկող) իր աղոթրագրի «Վերստին յաւելուած կրկին հեծութեան նորին հսկողի...» տողով (գլ. Բ և հջ.) անմշականորեն իր անունից է դիմում Աստծուն: Յայդեգերի ոչ քրիստոնյա ժամանակակիցներից այդ ինուուիցիան ամենացայտուն ծևով արտահայտել է Ֆրանց Կաֆկան: Նրա 1920-ն բյութեղացած «Մեկն արթուն պետք է լինի, ասկած է: Ներկա պետք է լինի մեկը:» հայտնի բանաձևում արժանի է հասուկ ուշադրության, քանի որ բնագիրը (Einer muss *da sein*) բառացիորեն վերատադրում է հայդեգերյան հղացքի կենտրոնական եզրը՝ *Dasein*:

Դրսից արթունությունը հարաբերված է ավանդության հասկացմանը: Այդ հարաբերությունը չի կարող նկարագրվել «անմիջական հայեցողության», «նայել-տեսնել կարողանալու» և ավանդական ֆենոմենությական զինանոցից քաղված այլ հնարների միջոցով: Եթե ավանդությունն առաջին հայցքից հասկանալի չէ, ապա այն պատճառով, որ այն փայտացած-կաղապարված է, խեղաթյուրված դարեր տևած անշահագրգիր, ծևական վերարտադրման արդյունքում: Դրա համար էլ Յայդեգերը գտնում է, որ արթուն ձևով հասկանալ ավանդությունը նշանակում է քննադատել այն, բայց ոչ թե իսպառ ժխտելու, այլ ավանդության ակունքին հասնելու, նրա սկզբնական կորիզը հետագա շերտավորումներից զտելու նպատակով՝ հարցադրում, որում մեկ անգամ ևս ի հայտ է գալիս նտածողի վստահությունը «նախասկզբնականի» (Anfängliche) իսկության նկատմամբ, նրա ձգտումը «դեպի իրեն ինքնին»:

Ավանդության այդպիսի՝ ակունքն ի բաց դրող քննադատությունը, ըստ Յայդեգերի, հնարավոր է իրականացնել միայն մեկ ձևով՝ որպես կազմաքանդում (Destruktion): Կազմաքանդումը ոչնչացում չէ, դա գոյություն ունեցող կառույցի առանձին ոչ հարազատ հատվածների գգուշավոր հեռացում է, որի շնորհիվ հնարավոր է դառնում բացահայտել նրա անաղարտ նախասկզբնական տեսքը:

Բնական է հարց տալ՝ ինչպէ՞ս կարելի է վստահ լինել, որ ավանդության կազմաքանդումը հասել է իր նպատակին՝ հաղորդվել է ակունքին, չէ՞ որ «այստեղ և հիմա» գոյություն ունեցող ներ-կայությունը զուրկ է հեգելյան «ամեն ինչ հասկացող» բացարձակ դիտակետից: Պարզվում է, որ կազմաքանդման ուղղությունը և ընթացքը գնահատող չափանիշը մերկան է, բայց ոչ իր անմիջական տրվածության իմաստով, այլ այնքանով, որ ավանդությունը կազմաքանդվում է հանուն ներկայի, հանուն նրա՝ ներկայում նորովի կրկնության: «Պատմության քննադատությունը միշտ էլ միայն ներկայի քննադատություն է», - ասում է Յայդեգերը<sup>92</sup>: Եվ դա զարմանալի չէ, քանի որ ներկայի նկատմամբ արթուն վերաբերմունքը «միայն իր», «սեփական» հնարավորություններից ելնող փաստականության քնական գործառույթն է:

<sup>92</sup> M. Heidegger, “Phänomenologische Interpretation zu Aristoteles (Anzeige der hermeneutischen Situation)”, in: *Dilthey-Jahrbuch für Philosophie und Geisteswissenschaften*, B. 6, S. 239.

Այսպիսով՝ ավանդության հասկացումը տեղի է ունենում անցյալի և ներկայի միջն գտնվող այն լարման դաշտում, ուր այսօրվա իր հմարավորությունների հեռանկարից ելնող արթուն ներկայությունը կազմաքանդում է ավանդությունը, ի բաց դնելով նրա կենդանի ակունքը և նորով կրկնելով այն:

Ստացված եզրակացության մեջ աչքի է զարնում անձնավորության ինքնահասկացման և ավանդության հասկացման անքակտելի կապը: Առաջինն, ինչպես տեսանք, հնարավոր չէ առանց պատճականորեն ժառանգված ավանդության վերարձարձնան: Երկրորդը՝ ավանդության նախասկզբանական իմաստի մասին հարցադրությունը, անհնար է, եթե չի դիտվում հարց տվողի փաստական հմարավորությունների այսօրվա հեռանկարից: Դա նշանակում է, որ «արթունության» հայդեգերյան պահանջը Հուսեղի «Էպոքեն» փոխարինելու կոչված մեթոդաբանական հնար չէ, որի օգնությամբ հնարավոր լինելու մեկընդհշտ պարզել ավանդության անադարտ իսկական իմաստը: Եթե «իսկական» բնորոշումն այս համատեքստում կիրառելի է, ապա ո՞չ թե ավանդության «վերջնականորեն գտնված» մեկնաբանության, այլ անձնավորության՝ որպես ինտենցիոնալ գոյի գոյության կերպի նկատմամբ: Եվ այդ գոյության իսկական կերպը, ըստ Հայդեգերի, արթուն լինելն է: Իսկական գոյության այլընտրանքը ոչ իսկական, այսինքն՝ ոչ արթուն, ավանդապաշտ գոյակերպն է, որը հակված է ավանդության ստանդարտ մեկնության ամինքնուրույն ընդունմանը:

Անձնավորության իսկական և ոչ իսկական գոյության մասին հարցադրումն իր հետ բերում է արթունությունը նաև ներսից ուսումնափրեկու խնդիրը: Չե՞ որ անհատի փաստականության իմաստն այն չէ, որ մենք «կանք» մի որոշակի պատճական ժամանակաշրջանում, այլ այն, որ մեր գոյության կերպն ինքնին բնորոշվում է հենց այդ «մի որոշակի պատճական ժամանակաշրջանում լինելու» հանգամանքով<sup>93</sup>: Հետևաբար, արթունությունը հանդես է գալիս որպես ներկայության կատեգորիալ կազմության էական բաղադրիչներից մեկը: Խոսքն այստեղ ոչ թե այս կամ այն պատճական վիճակի մասին է, այլ անձնավորության գոյության այն կերպի, որով պայմանավորված է նրա «պատճական լինել կարողանալը»: Քանի որ նկարագրության առարկան նորից կատեգորիալ ապրիորին է, կամտ-հուսեղյան հարացույցի հետ կապը այստեղ

<sup>93</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 36:

դեռ կտրված չէ, և այդպիսի հետազոտությունը, իր ողջ յուրահատկությամբ հանդերձ, չի բացառում անմիջական նկարագրության ֆենոմենոգիական մեթոդը: Տրանսցենդենտալ փիլիսոփայության լեզվով այդ նկարագրությունը կարող է բնորոշվել որպես ներ-կայության «արթունության հնարավորության պայմանների» բներևութաբանական բացորշում: Դենց այստեղից էլ պապայուն ծագել է Դայեգերի «ներ-կայության անալիտիկան»:

Ասվածից պարզ է դառնում, որ Դայեգերի իրականացրած կերպավորությունների շարանը չէր կարող չհանգեցնել բներևութաբանական մեթոդի բուն էության վերահմաստավորմանը: Վերջինիս տրամաբանությունն, ինչպես տեսանք, արտահայտվել է հետևյալ քայլերով.

- Ինտենցիոնալ առարկայի կատեգորիալ կազմության վերլուծական նկարագրությունը՝ անալիտիկ դեսկրիպտիվան, որ կենտրոնական դեր ուներ հուսեռյան ֆենոմենոլոգիայում, Դայեգերի մոտ փոխարինվել է պատճական ավանդության կազմաքանդող հասկացմանը: Սույնով բներևութաբանությանը շնորհվել է հերմենևուստիկայի կարգավիճակ:

- Պատճական ավանդության հասկացումը մեկնաբանվել է որպես փաստական ներ-կայության գործառույթ: Դիլթայի՝ լեզվական տեքստերի հասկացման ուղղված հերմենևուստիկական տեսության մոդելի փոխարեն առաջ է եկել փաստականության հերմենևուստիկայի հղացքը:

- Ներ-կայության արթունությունն արձանագրվել է որպես պատճական ավանդության հասկացման պայման: Արթունության պահանջը համապատասխանում է բներևութաբանության յուրահատուկ մեթոդաբանական ուղղվածությունը՝ նրա ինչպեսի՞ն: Դրա շնորհիվ «իրենք իրենց ցույց տվող ֆենոմենների» քողազերծող հասկացումն իր հիմնական խնդիրը համարող փաստականության հերմենևուստիկան պահպանել է նաև բներևութաբանական գործառույթը:

- Ցույց է տրվել, որ ավանդության որևէ մեկնաբանություն՝ հասկացում, չի կարող լինել բուն ինքը բոլոր ժամակների համար: Բուն ինքը կարող է լինել արթուն ներկայությունը: Այստեղից առաջ է եկել փաստական ներ-կայության «արթունության հնարավորության պայմանների» նկարագրության խնդիրը, որի իրականացումը բներևութաբանական միջոցներ է պահանջում:

- «Փաստական ներ-կայության» կատեգորիալ կազմությունը մեկնաբանվել է որպես գոյի գոյությունը բնորոշող ապրիորի: *Փաստականությամ հերմենևստիկան ստացել է գոյարանության կարգավիճակ:*

- Փաստականությունը դիտվել է որպես առանձնահատուկ գոյ, որի գոյակերպի ուսումնասիրությունը կարող է ի բաց դնել գոյության ինմաստն ընդհանրապես: Սույնով հերմենևստիկական բներկութարանությունը վերջնականապես հաստատվել է որպես գոյարանություն<sup>94</sup>:

Արմատական կերպավիդիտությունների և վերահնաստավորումների այս տպավորիչ շղթայի շնորհիվ հայդեգերյան մտքի կիզակետում գտնվող երեք հիմնական դիսցիպլինները՝ գոյարանությունը, բներկութարանությունը և հերմենևստիկան, հարաբերվում են միևնույն առարկային՝ ներ-կայության փաստականությանը, և ըստ եռթյան համընկնում են: Այդ սինթետիկ պատկերացման ծևավորմամբ վերջնականապես բյուրեղանում է վաղ Հայդեգերի փիլիսոփայական հղացքը:

Առջևում գոյությունը և ժամանակն էր:

<sup>94</sup> Հասկանալի է, որ ներկայացված վերակազմությունն արտահայտում է հայդեգերյան հղացքի զարգացման տրամաբանակամ՝ ո՞չ պատմական փուլերը: Բասմերորդ դարի ամենաուրույն փիլիսոփաներից մեկի մտքի ծևավորման փաստական պատմությունը դուրս է մեր հետազոտության շղանակներից:

## ԳԻՐՔ ճԱՆԱՊԱՐՃԻ

Ամենադժվարը հասկացող մեկությունն է, որը ենում է Հայրենիքի մոտք ծավալման վերջից՝ այնպես, որ ըմբեղութան հետ մեկտեղ պահանջում է գրի վերառում, այսինքն՝ կերպավոյնում, և դրա հետ մեկտեղ՝ ըմբռնում, որ նրա որոշակի <առկա> կերպարն անդատեշտություն է:

Վալտեր Բիմել

### Գիրք

Իր անվիճելի գլուխգործոցը՝ Գոյությունը և Ժամանակը, Հայդեգերը գրել է պաշտոն ստանալու ակնկալիքով: Մարբուրգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի առաջարկը՝ Նիկոլայ Հարտմանի հեռանալուց հետո օրդինար պրոֆեսորի ազատված տեղը Հայդեգերին հանձնելու վերաբերյալ, մերժվել էր կրթության նախարարության կողմից, քանի որ Հայդեգերն, իր դիսերտացիոն թեզի պաշտպանությունից հետո (1916) ոչ մի գիտական աշխատանք չէր հրատարակել՝ նաև Մարբուրգում, որտեղ աշխատում էր 1923-ից: Թեև 1926-ին Գոյության և Ժամանակի հապշտաա Բեռլին ուղարկված երկու մամուլերը նախարարությունն «անբավարար» էր համարել, հաջորդ տարի նա, այնուամենայնիվ, ստացել է Մարբուրգի օրդինարիուսի պաշտոնը: Մինչ այդ՝ նույն 1927-ին, ե. Շուլենովի խնդարությամբ հրատարակվող փիլիսոփայական տարեգործի ութերորդ հատորում և միաժամանակ որպես առանձնատիպ լույս է տեսել Գոյություն և Ժամանակը:

Վերը ներկայացված արտաքին հանգամանքները, նաև և առաջ ժամանակի պակասը, իրենց կմիջն էին դրել գրի կառուցվածքի և ոճի վրա: Արդեն իսկ շարադրանքի ծնը միասնական չէր: Տարիների ընթացքում կուտակված նյութը<sup>95</sup> կարգավիրակում և ներկայացվում էր հաստատակամ, առարկություն չվերցնող ապոդիկութիկ շեշտադրությամբ՝ այն, ինչ վաղուց մտածված էր և ներքինց մարսված՝ որպես մանրամասնորեն նշակված, լեզվական կատարելության հասցված շարադրանք, այն, որ դեռ բավականաչափ պարզ չէր՝ ոչ որպես վարկած կամ ենթադրություն, այլ որպես սխեմատիկ ուրշագիծ՝ աշխատանքային ծրագիր, որն իրականացվելու էր գրի դեռևս գրվելիք մասերում:

<sup>95</sup> Գոյություն և Ժամանակի սկզբնավորումն ընդունված է կապել 1923/24 թվականների ծնունդ հետ:

Իհարկե, ծիշտ չէր լինի Գոյություն և Ժամանակի շարադրառի գաղտնիքը փնտրել միայն պարզ շտապողականության կամ հեղինակի ինքնաբավ կեցվածքի մեջ: Նրանում, ավելի շուտ, արտահայտվել է Յայդեգերի մշակած փիլիսոփայական մերոդի հերթական կերպափոխությունը: Բներևութաբանության և հերմենևտիկայի միասնությունը, որ Յայդեգերը հիմնավորել էր տեսականորեն, այժմ ներկայանում էր լեզվական մակարդակով՝ որպես հմքն-իրեն-իր-մեջ-ցույց-տվող խոսքի հայեցող հասկացում: Յայդեգերն իր երկում չէր հրաժարվում ապացուցողականությունից, միայն թե ապացուցները հաճախ առաջարկվում էին ոչ թե տրամաբանական դատողությունների ձևով, այլ որպես բներևութաբանական թափանցիկություն ձեռք բերած խոսքի ակնհայտություն, որը հասկանալը ոչ միայն մեկնություն, այլև նայել-տեսնել էր պահանջում: Թվում է, որ այդ երկում Յայդեգերին հաջողվել է մորիկից ացնել գերմաներենի ողջ իմաստասեղջ ռեսուլու: Բայց անսպասելին այն է, որ փիլիսոփայի խոսքը դրանով այլաբանական կամ փոխարերական հնչեղություն չի ստացել. տրակտատում օգտագործվող եզրերի խստությունը հասցված է այնպիսի աստիճանի, որ մասնագետները գերադասում են խոսել Գոյություն և Ժամանակի» տերմինաբանության տեխնիկական բնույթի մասին: Յենց դրանով էլ պայմանավորված են այդ զարմանալի գրքի լեզվի անկրկնելիությունը և նրա թարգմանության հետ կապված բոլոր դժվարությունները:

Այդ անենով հանդերձ՝ փաստն այն էր, որ հայդեգերյան ձեռնարկն անավարտ էր մնացել: Ներածական գլխում խոստացված վեց բաժինների փոխարեն գրվել էր միայն երկուսը, և այդ բացթողումը, հասկանալի է, զուտ տեխնիկական չէր: Սեփական մտքի նվաճումներն ի մի բերելու և որպես որոշակի ավարտուն ամբողջ ներկայացնելու հայդեգերյան ծիզը բացահայտում էր մտածողի համադրական հղացքի մեջ ներառնված առանձին բաղադրիչների ոչ լրիվ համատեղելիությամբ պայմանավորված բացերը և ծեղծվածքները, որոնք նախնական փուլում անտեսվել էին՝ հետագայում մշակվելու նպատակով:

Խնդիրներից դժվարագույնը, իհարկե, գլխապտույտ անցումն էր, որ Յայդեգերը նախատեսում էր կատարել բներևութաբանական հետազոտության նմուշ-գոյից՝ ներ-կայությունից դեպի գոյությունն իմքնին: Նշված ձեռնարկի հաջողությունից էր կախված ողջ երկի գնահատականը՝ արդյո՞ք Գոյություն և Ժամանակը «գոյության», թե՝ «գոյության հարցը լուծել չկարողանալու» պատմություն է: Այդ խճճված խնդրի մեջ

խորանուխ լինելու համար անհրաժեշտ է շարժվել երկու ուղղությամբ՝ նախ անդրադառնալ գոյության հարցի մասին հայդեգերյան հարցադրման յուրահատկությանը, ապա տեսնել, թե ի՞նչ միջոցներով է Յայդեգերը փորձել մոտենալ առաջադրված հարցի լուծմանը:

## Գոյության հարցը

Յայդեգերին հասկանալու համար պետք է նախ մի պահ մոռանալ «գոյության հարցը»:

Գյունտեր Ֆիգալ

«Մարտին Յայդեգերի ընկերության» ներկայիս նախագահ Գյունտեր Ֆիգալի այս անսպասելի խորհուրդը բազմանշանակ է: Մի կողմից, այն պարզապես արձանագրում է, որ փիլիսոփայի մտքին հասու դառնալու ամենավստահելի ճանապարհը ոչ թե տարածված կարծրատիպերին, այլ նորա զարափարների ծևափորման պատմությանը հետամուս լինելն է<sup>96</sup>: Մյուս կողմից, սակայն, մեջբերված տողերում զգացվում է «գոյության» թեման որպես հայդեգերյան մտքի համար համեմատաբար օտար տարր դիտարկելու վերջին տասնամյակներում առաջ եկած միտունը<sup>97</sup>: Այն կապված է Յայդեգերի վաղ ֆրայբուրգյան դասախոսությունների հետմահու հրապարակման հետ: Դրանց մեջ գոյության խնդիրն արծարծված է միայն մարդկային գոյության առումով և ոչ որպես հարց գոյության մասին ընդհանրապես: Օտտո Պյոգելերն այդ կապակցությամբ նույնիսկ կասկած է հայտնել, որ Յայդեգերը մտադրված է եղել դուրս քողնել իր ամենավաղ դասախոսությունները Երկերի լիակատար ժողովածուից՝ սեփական մտքի սկզբնավորումը չափազանց «էքզիստենցիալիստական» երանգավորումից մաքրելու համար<sup>98</sup>: Յայդեգերը հետագայում<sup>99</sup> իր ձգտել է ինքն իրեն ոճավորել որպես «գոյության մտածող», որի ուշադրության կենտրոնում սկզբից ի վեր գոյության իմաստավորման խնդիրն է եղել:

<sup>96</sup> G. Figal, *Op. cit.*, S. 8.

<sup>97</sup> Վերջինիս մասին խոսում է Ժ. Գրոնդեն, “Герменевтика фактичности как онтологическая деструкция и критика идеологии”, в кн.: *Исследования по феноменологии и философской герменевтике*, Минск, ЕГУ, 2001, т2 53:

<sup>98</sup> O. Poggeler, “Heideggers Begegnung mit Dilthey”, in: *Dilthey-Jahrbuch*, 4 (1986/87), S. 124. Մանրանան տես և Ժ. Գրոնդեն, նոյս տեղում:

<sup>99</sup> Սասնավորապես, իմ ծանապարհը դեպի բներևութարանություն վերը մեջբերված ինքնակենսագրական խտացման մեջ:

Ինձ, այնուամենայնիվ, գերադասելի է թվում այն տեսակետը, որը չժխտելով ինքնառօճավորման հնարավոր հակումը Հայդեգերի մոտ<sup>100</sup>, շեշտում է «գոյության հարցի» օրգանական կապը մտածողի մյուս հիմնարար հարցադրումների, այդ թվում՝ բներևութարանական մեթոդի հետ: Այդ կապի անքակտելիությունը և, միևնույն ժամանակ, ներքին հակասականությունն առավել ցայտում է երևում մեզ հետաքրքրող Գոյություն և Ժամանակ տրակտատում, որի տրամաբանությանը մենք կիետնենք ստորև:

**Գոյություն և Ժամանակի մուտքի հատվածում Հայդեգերի արած հիերատիկ հայտարարությունն այն մասին, թե «գոյության ինաստի մասին հարցը մոռացության է մատնված», մենք արդեն ծանոթ ենք: Հարցի վերարձարձնան անհրաժեշտությունը հիմնավորելու համար Հայդեգերը երեք կարգի փաստարկներ է բերում: Նախ, նա անհրաժեշտ է համարում հակիմը ներկայացնել այն նախապաշտումները, որոնց պատճառով չի ընթանվում գոյության մասին հարցը նորովի դնելու անհրաժեշտությունը: Այնուհետև, նա հիմնավորում է գոյության հարցի գոյարձական և գոյական առաջնայնությունը:**

#### **Ա. Նախապաշտումները<sup>101</sup>**

1. Գոյությունն ընդունված է դիտարկել որպես ամենաընդհանուր հասկացությունը: Սովորաբար նշվում է, որ «գոյության ընթանումը ներկա է այն ամենում, որ մենք ընթանում ենք որպես գոյ» (Թովմա Աքվինացի): Դա ճիշտ է: Բայց հայտնի է, որ ինքը՝ գոյությունը, գոյ չէ, և գոյի համեմատ գոյության ընդհանրությունն էլ «սերի և տեսակի» հարաբերություն չէ: Եթե «գոյությունը» ամենաընդհանուր հասկացությունն է, դա դեռ չի նշանակում, որ այն նաև ամենապարզն է: Ընդհակառակը՝ այն ամենամուքն է և պարզաբանման կարիք ունի:

2. Ասում են, որ «գոյության» հասկացությունն անսահմանելի է: Սա բխում է նրա ընդհանրականությունից՝ չկա ավելի ընդհանրական հասկացություն, որից կարողանայինք մակարերել գոյությունը: Բայց այն, որ «գոյությունը» սահմանելի չէ ավանդական տրամաբանության միջոցներով, չի վերացնում նրա իմաստի մասին հարցը դնելու անհրաժեշտությունը:

<sup>100</sup> «Խոկ ո՞ր փիլիսոփային կամ նույնիսկ ո՞ր մարդուն այն հատուկ չէ», տե՛ս Խ. Գրոհը, նույն տեղում:

<sup>101</sup> Շարադրվում է ըստ՝ M. Heidegger, *Sein und Zeit*, էջ 3-4:

3. Ծեշտվում է, որ գոյությունը «ինքնին հասկանալի» հասկացություն է: Չէ՞ որ յուրաքանչյուր որ հասկանում է «երկինքը կապույտ է», «ես գոհ եմ» և նման կարգի արտահայտությունները: Այս, որ մենք ապրում ենք գոյության մասին որոշ նախասկզբնական պատկերացում ունենալով, անվիճելի է: Բայց դա մեզ չի ազատում խնդիրը փիլիսոփայորեն իմաստավորելու անհրաժեշտությունից: Քենց այդ «ինքնին հասկանալիի», այսինքն՝ «հանրային բանականության գաղտնի դասողությունների»<sup>102</sup> վերլուծությունն է, որ Կանտը «փիլիսոփաների գործն» էր համարում:

Սրանից երևում է, որ գոյության խնդիրը պարզ չէ: Բայց ո՞րն է, այնուամենայնիվ, գոյության իմաստի մասին հարցը դնելու նպատակը: Չէ՞ որ խնդիրի պատկառելի ծագումը՝ Պլատոնի, Արիստոտելի անունների հետ նրա կապված լինելը, հարցադրման արդիականության բավարար հիմնավորում չէ: Խնդիրի սկզբունքայնությունը և կոնկրետությունը ցույց տալու համար Հայդեգերը ներկայացնում է հետևյալ փաստարկերը:

*Բ. Գոյության հարցի գոյաբանական առաջնայնությունը<sup>103</sup>*

Գոյությունը միշտ ինչ-որ գոյի գոյություն է: Գոյերի ամբողջությունը կարող է տարանջատվել առանձին առարկայական ոլորտների, որոնց թվին են պատկանում, օրինակ, պատմությունը, բնությունը, տարածությունը, կյանքը, ներ-կայությունը, լեզուն և այլն: Սրանք, իրենց հերթին, կարող են դառնալ գիտական հետազոտության առարկաներ: Գիտական բնագավառների սկզբնական բաժանումն իրականացվում է միամիտ և կոպիտ ձևով: Դրանց հիմնան վրա ձևավորվում են համապատասխան գիտությունների «հիմնարար հասկացությունները», որոնք հետագայում ծցգրտելու կարիք է առաջանալ: Գիտության մակարդակը որոշվում է նրանով, թե որքանո՞վ են նրա հիմնարար հասկացությունները ունակ դիմակայել ճգնաժամի: Հայտնի է, որ բոլորից ուժեղ և խիստ թվացող գիտությունները՝ մաքենատիկան և ֆիզիկան, հիմնադրույթների ճգնաժամ են ապրել, հիշեցնում է Հայդեգերը<sup>104</sup>: Դժվա-

<sup>102</sup> Այստեղ բառախաղ կա. Կանտի «die geheimen Urteile der gemeinen Vernunft» արտահայտությունը կարելի է հասկանալ նաև որպես «տափակ բանականության գաղտնի դաստավիճաններ»՝ իմաստ, որ սրում է Հայդեգերի ասելիքը:

<sup>103</sup> Ըստ՝ M. Heidegger, *Sein und Zeit*, էջ 9-11:

<sup>104</sup> Մաքենատիկայի և ֆիզիկայի հիմնադրույթների ճգնաժամի այս հիշատակումն ուշագրավ է մտածողի հնդառղիբությունամ առումով՝ սրանով Հայդեգերը հայտնվում է իր ժամանակակից «արթուրների» այն խմբի նշանի տակ, որի մեջ էին Ռասելը և Ուայթ-

րությունների առջև են կանգնած նաև կենսաբանությունը, պատմական ոգու մասին գիտությունները և ուրիշները: Գիտությունների հիմնարար հասկացությունների վերահմաստավորումը հնարավոր չէ առանց դրանց առարկայական բնագավառների ճշգրտման: Վերջինս գոյաբանական խնդիր է և իր հերթին ուղենիշ թելի կարիք ունի: Եթե գիտությունը ցանկանում է խստիվ ձևով ուսումնասիրել գոյություն ունեցողի այս կամ այն բնագավառը, այն պարտավոր է նախ հաշիվ տալ իրեն, թե «ի՞նչ իրականում նկատի ունենք մենք՝ «գոյություն» ասելով»: Ամեն մի գոյաբանություն, որըան էլ այն զարգացած կատեգորիալ համակարգ ունենա, մնում է կույր և իր սեփական մտադրությունները մինչև վերջ չգիտակցող, եթե այն նախապես չի պարզել գոյության իմաստի մասին հարցը:

#### Գ. Գոյության հարցի գոյական առաջնայնությունը<sup>105</sup>

Գիտությունները, որպես մարդու որոշակի գործելակերպեր, պատկանում են այդ գոյի, այսինքն՝ մարդու գոյության կերպին: Վերջինս տերմինաբանորեն ըմբռնված է որպես ներ-կայություն: Բայց գիտական հետազոտությունն այդ գոյի միակ և ամենամերձավոր գոյակերպը չէ: Ներ-կայությունը յուրահասուկ գոյ է, մյուս բոլոր գոյերից այն տարբերվում է իր սեփական գոյությանը հաղորդված լինելու շնորհիվ: Այն ոչ թե պարզապես կա, այլ կա, իր լինելն իր համար խնդիր ունենալով: «Մարդկային գոյության բանն ի՞նչ է» հարցի ծիշտ պատասխանը կլիներ. «Մարդկային գոյության բանը գոյությունն ինքն է»:

Գոյահասկացումն ինքը ներ-կայության գոյական բնորոշումն է: Ներ-կայության գոյական առանձնահատկությունն այն է, որ այն կա գոյարանորեն:

Գոյաբանական լինել չի նշանակում գոյաբանություն կազմավորել: Եթե «գոյաբանություն» եզրը պահպանենք գոյության իմաստին վերաբերվող բացորոշ տեսական հարցադրումների համար, ապա ներ-կայության գոյաբանական լինելը՝ վերը նկատի ունեցած իմաստով, պետք է համարվի նախագոյաբանական: Բայց դա չի նշանակում պարզապես լինել որպես գոյ՝ գոյորեն, այլ լինել, գոյությունը հասկանալով:

հեղը (Principia Mathematica, 1910-13), Ա. Այնշտայնը (հարաբերականության երկու տեսությունները՝ 1905 և 1915) և այլրե: Թեպես նա, ինչպես կտեսնենք սոորև, «գոյության մասին հարցում անոնի» իր դիրքն արտօնյալ է համարում հատուկ գիտությունների ներկայացուցիչների համեմատ:

<sup>105</sup> Ըստ՝ M. Heidegger, *Sein und Zeit*, էջ 11-15:

Գոյությունը, որին ներկայությունը կարող է այս կամ այն ծնով հարաբերվել և միշտ որևէ կերպ հարաբերված է, կոչովում է *արտակայություն*: Ներկայությունն իրեն հասկանում է միշտ իր արտակայությունից ենթելով՝ նկատի ունենալով իր հնքը լինելու կամ հնքը չլինելու հնարավորությունը: Արտակայության հարցը կարող է պարզի բերվել միայն արտակայելու միջոցով: Դա ներկայության գոյական «հանգամանքն» է և կարիք չունի արտակայության գոյաբանական կառուցվածքի տեսական թափանցիկության: Վերջինս այլ կարգի հարց է: Այն կապատճեն է արտակայության կառուցվածքների հետ, որոնց փոխկապակցվածությունն անվանում ենք *արտակայականություն*: Սրա անալիտիկան ենթադրում է ոչ թե արտակայական, այլ *արտակայութենական* հասկացում: Ընդ այդմ՝ ներկայության արտակայութենական անալիտիկայի հնարավորությունը և անհրաժեշտությունը նախապես պայմանավորված են ներկայության գոյական կազմությամբ:

Արտակայականությունը հասկացվում է որպես արտակայող գոյի գոյակազմություն: Բայց վերջինիս գաղափարում արդեն պարունակվում է ընդհանրապես գոյության գաղափարը: Յետևաբար, ներկայության անալիտիկայի իրականացման հնարավորությունը կախված է գոյության իմաստի մասին հարցի նախնական մշակումից:

Գիտությունները ներկայության գոյակերպեր են, որոնցում վերջինս հարաբերվում է այնպիսի գոյի հետ, որը կարիք չունի հնքը լինելու: Բայց ներկայությանը հատուկ է էականորեն՝ գոյություն ունենալ աշխարհում: Դրանով ներկայության գոյահասկացումը հանդես է գալիս նաև որպես «աշխարհի» հասկացում, ինչպես նաև այն գոյի գոյության հասկացում, որ հասու է աշխարհում: Այդ պատճառով գոյաբանությունները, որոնք վերաբերում են ոչ ներկայակերպ գոյի գոյությանը, ինքնին հիմնավորված են ներկայության գոյական կառուցվածքում:

Ուրեմն, հիմնարար գոյաբանությունը, որից էլ միայն կարող են բխել բոլոր մնացած գոյաբանությունները, պետք է փնտրել ներկայության արտակայութենական անալիտիկայի մեջ:

Արտակայութենական անալիտիկան ինքն էլ, վերջին հաշվով, արտակայական է, այսինքն՝ արմատավորված է գոյի մեջ: Միայն այն դեպքում, եթե փիլիսոփայող-հետազոտող հարցումն ամեն անգամ ընթանվում է արտակայական ծնով՝ որպես *հենց այս արտակայող ներկայության գոյահնարավորությունը*, հնարավոր է դառնում արտակա-

յության արտակայութենականության բացորշումը և դրանով իսկ բավարար հիմնավորված գոյաբանական պրոբլեմատիկայի բովանդակային ընթացումը որպես այդպիսին:

Երբ առաջադրվում է գոյության իմաստի մեկնության խնդիրը, պետք է նկատի ունենալ, որ ներ-կայությունը ոչ միայն այն գոյն է, որին նախ և առաջ պետք է ուղղված լինի հարցումը, այլ նաև այն գոյը, որն իր գոյության մեջ միշտ արդեն հարաբերված է մրան, ինչին այդ հարցումը վերաբերում է: Հետևաբար, գոյության հարցը ոչինչ այլ բան չէ, քան բուն ներ-կայությանը պատկանող էական գոյամիտումի՝ նախագոյաբանական գոյահասկացման արմատականացումը:

## «Լինել» հայերեն

*Գոյություն և ժամանակի ներածական հատվածի վերը մատուցված սեղմագրությունը, մանավանդ դրա գրեթե բառացի թարգմանության վերաբած վերջին մասը, աչքի չեն ընկնում պարզությամբ և կարող են անպատրաստ ընթերցողի մոտ տպավորություն ստեղծել, որ Հայեգերին հասկանալու միակ միջոցն, իսկապես, «գոյության հարցը» մի կողմ դնելը է, եթե ոչ հիմնովին մոռանալը: Իհարկե, իրավիճակը հեշտանում է նրանով, որ ուսումնասիրության առաջին գլխում մենք արդեն առնչվել ենք գոյության թեմային, մոտիկից հետևելով հայեգերյան մտքի կայացման տրամաբանությանը: Բայց ներկայացված տեքստը մնում է դժվար ընկալելի, քանի որ օտար շարադրանքը, ինչ լեզվով էլ այն իրականացված լինի, չի կարող ամբողջապես թափանցիկ դարձնել այն, ինչ ի բաց է դնում հայեգերյան բնագիրը: Հետևաբար, Գոյություն և ժամանակի հղացքը հայ ընթերցողին առավել հասանելի դարձնելու համար անհրաժեշտ է անդրադառնալ մտածողի օգտագործած առանձին եզրերի և դրանց փոխարեն առաջարկված հայերեն թարգմանություններին:*

Ստորև ես կսահմանափակվեմ հասկացությունների այն խնբով, որն այս կամ այն ձևով առնչվում է մեզ հետաքրքրող կենտրոնական եզրին՝ «գոյությանը»: Կմեկնաբանվեն «Sein», «Seiendes», «Dasein», «Existenz» և այլ՝ դրանցից ածանցված բառերը, ինչպես նաև «ontisch» և «ontologisch» ածականները: Բոլոր այդ եզրերի հայերեն տարբերակներն արդեն օգտագործվել են նախորդ շարադրանքի ընթացքում:

Յայդեգերյան հղացքի ելակետային եզրը «Sein»-ն է<sup>106</sup>, որ մեզ մոտ բարգմանված է «գոյություն»: Գոյություն ունեցողի ողջ բազմազանությունը նշանակելու համար Յայդեգերն օգտագործում է «Sein»-ի հետ նույնարմատ «Seiendes» բառը, որը բառացիորեն նշանակում է «գոյավոր» կամ նույնիսկ «գոյող»: «Sein»-ը, դրան հակառակ, արտահայտում է բոլոր առանձին «գոյավորներին» հատուկ գոյության համամարք: Այդ «հանգամանքն» ինքնին չի նույնանում առանձին գոյավորների հետ և չի կարող դիտարկվել որպես մեկը դրանց շարքում կամ նույնիսկ որպես հատուկ «արտոնյալ գոյ»: Ավանդական փիլիսոփայությունը և աստվածաբանությունը գոյի և գոյության այդպիսի խիստ տարրերակում չեն ճանաչում: Այսպես՝ հայերենում, որն այս առումով չի տարրերվում այլ եվրոպական լեզուներից, «գոյը» նշանակում է միաժամանակ և՝ գոյություն ունեցող՝ «որ գոյ իրօք, գոյակ, և, որ էն», և՝ Աստված՝ «ամենայն ինչ նովար գոյացեալ», և՝ սուրստանց՝ «գոյ, մանավան՝ գոյը», իր մեջ միավորենով տօ օն-ը և օնօնա-ն, եռ-ը և սուբ-stantia-ն<sup>107</sup>:

Բայց մենք հիշում ենք, որ Յայդեգերը հրաժարվել էր «գոյությունը» որպես «ողջ գոյություն ունեցողի իմք» դիտարկելուց՝ ինչպես քրիստոնեական Աստծո, այնպես էլ փիլիսոփայական «սուրստանցի» իմաստով: Դրա համար էլ սույն շարադրանքում մենք «Sein»-ի համար գերադասել ենք «գոյությունը», իսկ «Seiendes» բառն արտահայտել որպես «գոյ»՝ նկատի ունենալով, որ հայերենում «գոյը» արդեն իսկ գոյություն ունեցողն է, իսկ «գոյության» «-ություն» վերջավորությունը պարզորոշ ցույց է տալիս «Sein»-ի գոյաբանական տարրերությունը բոլոր «գոյավորներից»: Այսպիսով՝ «Seiendes» բարի հայերեն բարգմանությունը որպես «գոյ» նպաստում է «գոյություն» - «գոյ» հասկացութային գույգի ստեղծմանը, պահպանելով հայդեգերյան «Sein» - «Seiendes» երկանդամ կոնստրուկտի նույնարմատ կառուցվածքը և նրա իրական բովանդակությունը: Այս նաև լիովին համապատասխանում է «օնօնա» - «տօ օն» գույգին հունարենում՝ լեզու, որ Յայդեգերը, գերմաներենի հետ մեկտեղ, «ամենահզոր և ամենահոգնորն» էր համարում<sup>108</sup>:

<sup>106</sup> Կարողական «զա՝ յն»:

<sup>107</sup> Տե՛ս և Նոր բառզիթը հայկաբեամ լեզուի, հ. 1, Եր. համալս. հրատ., Եր., 1979, էջ 569:

<sup>108</sup> M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, S. 43. Ուստերենում «Sein – Seiendes» իմաստային գույզը ստվարաբար վերաբարում են «օնութեա» - «սցութեա» երկանդամի միջոցով:

Մեկ այլ դժվարություն կապված է «Sein» բառի բայական ձևի օգտագործման հետ: Գերմաներենում նրա գրությունը որպես գոյական՝ «Sein», ըստ էլության չի տարբերվում դրան աղերսված բայի գրությունից՝ sein: Սակայն բոլոր գոյականները մեծատառով գրելու գերմաներենի համար պարտադիր պահանջի շնորհիկ «Sein»-ը որպես «գոյություն» պարզորոշ առանձնանում է «sein»-ից: Վերջինս մեզ մոտ գերազանցապես արտահայտվում է «լինել» բառի միջոցով: Այստեղ ես հրաժարվել եմ ինքնին հասկանալի թվացող «գոյություն ունենալուց», նկատի ունենալով, որ Հայդեգերի խոսքը սովորաբար ոչ թե այս կամ այն գոյի փաստացի արկայությանն է վերաբերում, այլ գոյություն ունենալուն որպես վիճակ՝ «գոյելուն»: Այդ յուրահատուկ իմաստային երանգը ուսւերենում երբեմն փորձում են արտահայտել «ներկայացնելու» բառի միջոցով, որն իհարկե արհեստական կազմավորում է որևէ ակնառու փիլիսոփայական իմաստ չի փոխանցում: Նույն պատճառով տվյալ դեպքի համար խոտելի է «գոյել» հնացած բառի կիրառությունը: Հայդեգերի փիլիսոփայելու նպատակներից է եղել միշտ ցույց տալ մարդու համար ամենամերձավորը, թեև չնկատվածը, այն տեսանելի և հասկանալի դարձնել զննեցողուն: Եվ երբ մնաք հարց ենք տախս, թե ի՞նչն է «նորմալ» մարդն ավելի լավ հասկանում՝ «գոյելը», «կենա՞լը», թե՞ «լինելը», բանավեճն ինքնարերաբար ավելորդ է դառնում:

Այն, որ հայերենում «գոյությունը» և «լինելը» տարբեր արմատներից են սերում, հասկացման անհաղթահարելի դժվարություններ չի ստեղծում: Հայերենն այստեղ էլ բացառություն չի: Երեսնականներին ստեղծված իր հոչակավոր երկում՝ *Մետաֆիզիկայի ներուժության մեջ*, Հայդեգերը նշել է, որ «գոյություն» եզրում երեք տարբեր բառարմատների նշանակություն է միախառնված՝ *ապրելը, գոյանալը, տևելը*<sup>109</sup>: Մրանցից առաջնորդ հայերենում մեզ հայտնի է որպես «կեցություն»<sup>110</sup>,

<sup>109</sup> M. Heidegger, նույն տեղում, S. 55.

<sup>110</sup> Հայ նոր փիլիսոփայության մեջ գոյության հետ կապված իմաստային կոմպեքսը հաճախ է արտահայտվում «կեցություն» եղրի միջոցով: Այլ ավանդույթն ըստ երևույթին կապված է Կայսիսակի հայերեն թարգմանության հետ (1933 թ.): Վերջինիս հեղինակը՝ Թաղուս Ավալեզյանը, մարդաբան համապատասխան եղրն իրավացիորեն փոխադրել է որպես «կեցություն», քանի որ Մարքսի մոտ խոսքը հասարակական կյանքի մասին է: Թարգմանության ոչ քննադատական տարրածումը մյուս դեպքի վրա ոչ միշտ է հասնողիք: Այսպես, օրինակ, «Աստոր կեցություն» արտահայտության մեջ անհամատասխանություն ի հայտ է գալիս լեզվական բնագիր մակարդակով՝ հարցն այն մասին, թե արդյո՞ք Աստված գոյություն ունի, բնական է, բայց ոչ չի կարող հարցնել՝ կեցու-

Երկրորդը՝ «լինելություն»<sup>111</sup>, Երրորդը՝ «կայություն» կամ «կայում»<sup>112</sup>: Պետք է հաշվի առնել այս հանգամանքը և չընկճվել ֆունկցիոնալ առումով սերտորեն կապված եզրերի հիմքում ընկած հայերեն բառարմատների փոխառկայծումների պատճառով:

Նույնատիպ լեզվական անհամասեռություն կարելի է տեսնել նաև «sein» բայածի եզակի երրորդ դեմքում («ist»), որն, ըստ Յայեգեգերի, առավել խորությամբ է արտահայտում մարդու լեզվի մեջ ամրագրված գոյահասկացումը: Նախադասության մեջ կապի դեր կատարող այդ մասնիկը հայերենում բնական է թարգմանել որպես «է»: Դրա սուբստանտիվից՝ «է-ությունից» ներմուծվող հնաստային երանգը տեղին է. նույն գերմաներենում «ist»-ի անցյալ կատարյալը ստանում է «gewesen» ձևը, որն ուղղակիորեն աղերսվում է «Wesen»՝ «էություն», բառին<sup>113</sup>: «Լինելու» եզակի երրորդ ձևը նշանակելիս «է»-ի հետ մեկտեղ օգտագործվելու է նաև «կա»-ն, որի հնաստաստեղծ պոտենցիալը պայմանավորված է երկու հանգամանքով՝ «կայություն» և «գոյություն» բառերի ակնհայտ հարազատությամբ և «կայություն»-ի հիմքի վրա ձևավորվող մի քանի անհրաժեշտ եզրերի, որոնց կծանոթանանք ստորև:

*Լինելու* միայն մարդուն հասուկ կերպը Յայեգեգերն անվանել է «Dasein»: *Բառն անթարգմանելի է:* Անգլալեզու փիլիսոփայության մեջ այդ փաստի հետ հաշտվել են և եզրն օգտագործում են անփոփոխ՝ «Dasein». Ֆրանսիացիները զերարտադրում են բառացի ինաստը՝ «l'être-là», կամ արտահայտում են այն նկարագրական ձևով՝ «réalité

---

Քյուն ունի<sup>114</sup> արդյոք Աստված, չմեղանձեռվ հայերենի դեմ: Ըստ Յայկացյան բառարանի կեցությունը վերաբերում է բացառապես «լիմքին» (տե՛ս ս. հ. 1, էջ 1093):

<sup>111</sup> «Լինելություն՝ լինելն, եղանակն, ստեղծումն, արարչություն... ծնունդ, ծագումն: Յնպու.՝ «նեշտց, Creatio, Genesis, generatio», նոյն տեղում, էջ 887: Աճառյանը «լինելու» կապւմ է հնելեվողապահ «bho» արնադի հետ, որից ծագում են նաև «քրոն», «քրնություն» բառերը՝ Քր. Աճառյան, Յայերեն արմատական բառարան, Եր. համալի. իրատ., Եր., 1926, հ. 1, էջ 576: Նոյն պատկերացումը գտնում ենք Յայեգեգերի մոտ, որը «եհն», «եհու» արմատներն առնչում են հունարեն ֆ�ցից բառի հետ և, որպես «քրնություն», նաև «աճ», համարում է «գոյության» երեք հնաստաստեղծ բաղադրիչներից մենքը:

<sup>112</sup> «Կայութիւն, կամ կայում»՝ կալն, կայանալն, կայում գոլմ, դադարումն: Յնպու.՝ Տտացիւ, ուժ տասման, Statio, constantia», Տե՛ս ս. Նոր բառզիր հայկագետան լեզուի, հ. 1, էջ 1046:

<sup>113</sup> Յայտնի է, որ «wes» հնդեվողապական արմատն ընկած է «գոյություն» արտահայտող բառերի հիմքում: Այդ մասին խոսում են հՀՀպես Յայեգեգերը, որը «sein» բառի «wes» արմատի հետ է կապում այնպիսի իմաստներ, որովհետ են բնակվելի, կամ առմելի, ներկա կամ բացակա լիմելը (M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, S. 55), այնպես էլ Քր. Աճառյանը, որը նոյն արմատից է մակաբերում գերմաներեն «war» (իլ), «ge-wesen» (եղած) և անգլերեն «was» (Եր, կար) բառերը (Ք. Աճառյան, նոյն, էջ 576):

humaine»՝ «մարդկային իրականություն» (Սարտր): Ոուսները կիրառում են «պրисутствие» և «տուտ-բնություն» տերմինները:

Դայերենում «Dasein»-ի համար «ներկայություն» բառի ընտրությունը ես փորձել եմ իիմնավորել սույն ուսումնասիրության առաջին բաժնում<sup>114</sup>: Ներկա գոյության գործառություն այստեղ կենտրոնական է: Որևէ գոյ՝ քարօ, փայտը, կենդանին և նույնիսկ փոքրիկ երեխան, կարող է լինել առկա, բայց չլինել ներկա՝ որոշակի արթուրության իմաստով: Ընդ որում՝ խոսքն այստեղ գիտակցությամբ օժտված լինելու մասին չէ. մարդ կարող է գիտակցություն ունենալ, բայց «ներկա» չլինել՝ բավական է պատկերացնել ֆիզիկապես ներկա, բայց նոքերով այլուր դեգերող մեկին: Այլընտրանքային տարրերակը, որից ես ափսոսանքով եմ հրաժարվել, «աստ-գոյությունն» է: Մրա առավելությունը բնագրին առավելապես մոտիկ լինելն է. այն արտապատկերում է «Da-sein»-ի քերականական ծնը և նրա պես նշանակում է «այստեղ լինել»: Բայց նրանում խնդրահարույց է «աստ» մասնիկը, որն այնուամենամիվ էապես տարրերվում է գերմաներենի «da»-ից: Վերջինս անմիջական ներկայություն է արտահայտում և ավելի համապատասխանում է հայերեն «ահա»՝ կամ նույնիսկ «այ» բառերին՝ «ահա՝ սա» կամ «այ՝ սա» արտահայտություններում: Այդ ծնով ներկա «ահա՝ գոյությունը» ալտերնատիվի կարիք չունի, այնինչ «աստ-գոյության» մասին լսելիս մարդ իմքնարերաբար նաև «անդ-գոյություն» է պատկերացնում: Այս առումով մեր «աստ»-ը նման է Ռիլկեի «Hiersein»-ին, որը հենց դրա համար էլ «այստեղ լինել» է, քանի որ «այնտեղ լինել» էլ կա: Այնինչ «Dasein»-ի «da»-ն ունիվերսալ է. այն միևնույն ժամանակ կարող է և «այստեղ» նշանակել (da und dort), և «այնտեղ» (hier und da)<sup>115</sup>: Այդ պատճառով էլ «Dasein»-ի՝ որպես «այստեղ լինելու» հակառակը ոչ թե այստեղ լինելն է, այլ այստեղ չլինելը. Նշյալ նկատառություններից ելնելով, մենք հետազոտ շարադրանքում կգերադասենք «ներկայությունը», չմոռանալով, սակայն, «աստ-գոյության» մեջ ավելի ցցուն ի հայտ եկող մի էա-

<sup>114</sup> Տե՛ս «Զրույց Կիրկեգորի հետ. փաստականության ներկայությունը» հատվածը, էջ 169-175:

<sup>115</sup> Նշված նրբերանգի առաջացմանը նպաստում է նաև «da»-ին հատուկ ժամանակային գործառույթը, որը նեզանում առավել նկատելի է «այստեղ»-ի բարբառային տարրերակ-ներում, որպիսիք են ասենք՝ «իհես»-ը կամ «իհեսա»-ն (հնմտ. «Կիրակոսը հեսա» և «հետակամ»): Ցավոք, այս ծներն իրենց ոչ գրական լինելու պատճառով չեն կարող հիմք ծառայել փիլիսոփայական եզրաստեղծման համար:

կան հանգամանք. «Dasein»-ը «զուտ հոգերանական» կամ, առավել ևս, «հիոգնոր» ֆենոմեն չէ, այն կոչված է արտահայտելու մարդուս գործուն և դիմամիկ ներկայությունը փաստացի աշխարհում:

Ներկայության այդ յուրահատկությունը պարզաբանելու համար Դայդեգերը մտցրել է «Existenz» եզրը, որը համարյա նույնքան դժվար թարգմանելի է: Բառն իմբին թվում է ակնհայտ, քանի որ շատ եվրոպական լեզուներում օգտագործվում է որպես «գոյության» հոմանիշ: Բայց մեզ հետաքրքրող համատերսում «Existenz»-ի և «գոյության» նույնացումն անթույլատրելի է: Ո՞չ այն արտաքին պատճառով, որ վերջինս արդեն «գրաղված» է, այլ որովհետև «Existenz»-ը՝ որպես ներկայության գոյության յուրահատուկ կերպ, ոչ միայն տարբերվում է գոյության սովորական ըմբռնումից, այլև հակադրվում է նրան: Բուն «գոյություն» արտահայտելու համար «Existenz» բարի օգտագործումը Դայդեգերն անվանում է անմտություն (Gedankenlosigkeit): Նա գտնում է, որ հունարենում «έξίστασθαι» բառը (Existenz, existieren) ոչ թե «գոյություն ունենալ», այլ «գոյություն չունենալ» է նշանակում, քանի որ ցույց է տալիս տվյալ գոյի «իր կայա-ցած կայունությունից դուրս գալու» ունակությունը<sup>116</sup>. Մեկ այլ տեղում («Սամակ հումանիզմի մասին») նա օգտագործում է «Hinausstehen» բառը, որը «դրսում գտնվել» է նշանակում: Այդ հանգամանքը մեզ հիմք է տվել հայդեգերյան հոդացի այս կարևորագույն եզրը թարգմանել որպես «արտակայություն»:

Այս կապակցությամբ բնական է հարցնել. ինչո՞ւ չէր կարելի «Existenz»-ն ընդհանրապես թողնել առանց թարգմանության, սահմանափակվելով հայատար «էքզիստենց» կազմավորումով: Չե՞ որ բառը սերում է լատիներենից՝ ո՞չ գերմաներենից, իսկ «էքզիստենցիալիզմն» էլ վաղուց արմատավորված է հայերենում: Առավել ևս, որ Դայդեգերը, անդրադառնալով ներկայության՝ որպես ինտենցիոնալ գոյի «ինքնիրենից-դուրս-գտնվելու» գործառույթին, շեշտել է այդ գոյի գոյության «էքստատիկ» բնույթը, «Existenz»-ին համապատասխանող բայաձևը տառադարձել է որպես «ек-sistieren» և ակնարկել այն խորքային առնչությունները, որ «էքզիստենցը» ունի «էքստագի» պլատոնյան ըմբռնման հետ: Քեշտ է, սակայն, համոզվել, որ այդ լուծումն անիրագործելի

<sup>116</sup> «Nicht-sein heißt demnach: aus solcher sich ent-standenen Ständigkeit heraustreten» - M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, S. 49.

Է: Յայդեգերն «Էքզիստ» բառարմատից այնքան տարբեր տերմիններ է արտածել, որ հայերենում դրանց համապատասխանող ինաստների ճշտորոշ վերարտադրությունը հնարավոր է միայն բուն հայերենի լեզվական ողջ հարստության և ճկունության լրիվ օգտագործման պարագայում: Այսպես՝ ռուսերենում դեռ կարելի է «existieren», «exist» կամ «exister» բայերի օրինակով մերմութել արհեստական «էկզիստիրոված» բառը, բայց հայերենում «Էքզիստելը» պարզապես անթույլատրելի է: Մյուս կողմից սակայն «գոյություն ունենալը» էլ պիտանի չէ, քանի որ անհնարին է Յայդեգերի միտքը տեղ հասցնել, հայտարարելով. «Ժայռը կա, բայց այն գոյություն չունի: Ծառը կա, բայց այն գոյություն չունի: Զին կա, բայց այն գոյություն չունի: Յրեշտակը կա, բայց այն գոյություն չունի: Աստված կա, բայց նա գոյություն չունի: ...Միայն մարդը գոյություն ունի»<sup>117</sup>: Սա արտուր է: Բայց, օգտագործելով «արտակայություն» բարից մակարերված բայական ձևը, մենք ասում ենք. «Ժայռը կա, բայց այն չի արտակայում: Ծառը կա, բայց այն չի արտակայում: ...Աստված կա, բայց նա չի արտակայում: ...Միայն մարդն է արտակայում»: Եվ այս ձևակերպումն ավելի քան հասկանալի է. Աեր-կայությունը՝ որպես իմքն իր գոյությանն աղերսված գոյ, կա յուրահատուկ ձևով, և գոյություն ունենալու այդ կերպը կոչվում է արտակայություն:

Արտակայող գոյը մյուսներից տարբերելու համար Յայդեգերն օգտագործում է «daseinmäßiges Seiende» արտահայտությունը, որ մեզ մոտ փոխադրված է որպես Աեր-կայակերպ գոյ: Բոլոր չարտակայող գոյերը, համապատասխանաբար, ոչ Աեր-կայակերպ են:

Մեզ մնում է հակիրծ անդրադառնալ «արտակայության» հիմքի վրա ստեղծված մյուս բառ-հասկացություններին: Արտակայող գոյի գոյակազմությունը, այսինքն՝ արտակայության կառուցվածքների փոխկապակցվածությունը, որը Յայդեգերն անվանում է «Existenzialität», թարգմանված է արտակայականություն: Դրա հասկացման երկու մակարդակներն են՝ արտակայականը existenziell, որը կապված է Աեր-կայության նախավերլուծական՝ գոյական կազմության հետ (Յայդեգերի մոտ՝ ontisch), և արտակայութենականը existenzial, որով իրականացվում է այդ ֆենոմենի վերլուծական, անալիտիկ նկարագրությունը: Վերջինս գոյարձնական է՝ ontologisch: Այստեղից ծագում է Աեր-կա-

<sup>117</sup> Օրինակը վերցված է «Ի՞նչ է մետաֆիզիկան» դասախոսության «Տերածություն»-ից, տե՛ս M. Heidegger, “Einleitung zur: ‘Was ist Metaphysik?’”, in: Martin Heideggers Gesamtausgabe, B. 9, Wegmarken, Klostermann, Ffm., 1976, էջ 374-375:

յուրյան արտակայութենական անալիտիկան՝ existenziale Analytik des Daseins: Դրա արդյունքը՝ հիմնարար գոյաբանությունը, Յայդեգերն անվանում է Fundamentalontologie:

Ուշադիր ընթերցողը կնկատի, որ սույն հատվածում մատուցված լեզվափիլիստիկայական (մանավանդ ստուգաբանական) նյութը փոքր-ինչ ավելին է, քան ուղղակիորեն անհրաժեշտ է գոյության խնդրին նվիրված նախորդ դրվագին մեկ անգամ ևս անդրադառնալու և այն հայերենի ներունակ հնարավորությունների լույսի տակ վերահիմաստավորելու համար: Մնացյալը ստեղծում է առաջընթաց «նախահասկացման» այն բնական ֆոնը, որի կարիքը դեռ զգալու ենք ապագա քայլերի ընթացքում:

## Զեռնարկը

«Գոյություն և ժամանակ»-ը ծախորդություն էր:

Մ. Յայդեգեր

Հատվածի վերնագիրը նպատակ ունի հիշեցնելու, որ անցյալ դարի բասմականներին ծևավորված հայրեգերյան նախագիծը իր մտահղացման թափով և նախատեսված ծավալով էապես գերազանցում էր 1927-ին հրատարակված այն հատվածը, որն այսօր մեզ հայտնի է որպես Գոյություն և ժամանակ. Բարեբախտաբար, ծեռագրի վրա աշխատանքն ընդհատելու և առաջին երկու բաժինները տպագրության հանձնելու պահին մտածողն այնքան վստահ է եղել գործն ավարտին հասցնելու իր կարողության վրա, որ անփոփոխ է թողել գործի ներածական գլուխը: Ողջ ծեռնարկը ներկայացնող և հիմնավորող այդ մասի շնորհիվ այսօր հնարավոր է գնահատել հայդեգերյան պրոյեկտի ներքին տրամաբանությունն իր ամբողջության մեջ: Մենք կանդրադանք այդ ծեռնարկի ընդհանուր ուրվագծին, տեսմելու համար, թե ի՞նչ միջոցներով էր Յայդեգերը նախատեսում մոտենալ իր կենտրոնական խնդրի՝ գոյության մասին հարցի համապարփակ լուծմանը:

Գոյություն և ժամանակի § 8-ում ներկայացված ուրվագիծը ցույց է տալիս նախատեսված հետազոտության երկու հիմնական բաժինները և դրանց ներքին տրոհումը հետևյալ տեսքով.

I. Ներ-կայության մեկնաբանությունը ժամանակայնության վրա և ժամանակի բացորդումը որպես գոյության մասին հարցի տրամացենդենտալ հորիզոն:

1. Ներ-կայության նախապատրաստող հիմնարար վերլուծությունը:

2. Ներ-կայությունը և ժամանակայնությունը:

3. Ժամանակը և գոյությունը:

II. Գոյաբանության պատմության բներևութաբանական կազմակերծման հիմնագծերը՝ տեմպորալության պրոբլեմատիկայի ուղենիշքելի հիման վրա:

1. Կանոնի ուսմունքը սխեմատիզմի և ժամանակի մասին՝ որպես տեմպորալության պրոբլեմատիկայի նախաստիճան:

2. Նեկարտի «*cogito sum*»-ի գոյաբանական հիմքը և միջնադարյան գոյաբանության ներառումը «*res cogitans*»-ի պրոբլեմատիկայի մեջ:

3. Արիստոտելի հետազոտությունը ժամանակի մասին՝ որպես բներևութային բազիսի տարրերաշափ և անտիկ գոյաբանության սահմանմերը:

Դժվար չէ նկատել, որ գոյության մասին հարցը Հայդեգերը պատրաստվում էր քննել երկու կտրվածքով՝ մի կողմից, հետազոտելով ներ-կայությունը որպես գոյությանն անմիջականորեն առնչված և այդ առունով գերակայություն ունեցող նմուշ-գոյ, մյուսից՝ անդրադառնալով գոյությունը փիլիսոփայորեն իմաստավորող ավանդույթին, այսինքն՝ վերլուծելով գոյաբանության պատմության կազմորոշ փուլերը:

Ինչո՞ւ է Հայդեգերը, շրջելով ակադեմիական շարադրանքի համար սովորական համարվող կարգը, պատմափիլիսոփայական վերլուծությունը երկրորդ տեղում դրել:

Մտածողն այստեղ հավատարիմ է մնում իր բներևութաբանական սկզբունքին՝ հետազոտության հիմք ընդունել ոչ թե այս կամ այն իդեալական՝ տեսականորեն նվաճված պատկերացումը, այլ մարդու՝ որպես արտակայող գոյի կենսակերպն իր անմիջական տրվածության մեջ<sup>118</sup>. Ավանդությունը չի հասկացվում ընդհանրապես, այն հասկացվում է փաստական ներ-կայության կողմից: Քանի որ Հայդեգերը գո-

<sup>118</sup> Հնմտ. W. Biemel, *Martin Heidegger*, էջ 40:

յության մասին հարցի իմաստն ավանդության մեջ ծածկյալ էր համարում, իսկ հարցադրումը՝ նոռացության նատմված, նա պետք է՝ ավանդական գոյաբանությունը «սեփական» ծևով հասկանալու համար, կազմագերծեր այն, հասմելով ակունքին: Դա կարող էր հնարավոր լինել միայն ներկայի համատեքստում, որքանով որ վերջինս է պայմանավորում, թե ի՞նչ է փնտրում ավանդության մեջ այդ հարցում անողը: Այդ հարցն իր հերթին աղերսված է դեպի փնտրելու «ինչպե՞ս»-ը: Պատճական ավանդության ծշմարիտ յուրացումը հաջողում է, եթե մարդկային ներկայությունն արթուն է: Ուրեմն, ավանդության կազմագերծումը նախաձեռնելիս պետք էր ապահովել նաև ներկայության «քուն ինքը լինելը», այսինքն՝ իրականացնել գոյության հարցին հետամուտ ներկայության «արթունության հնարավորության պայմանները»:

Ինչպես գոյության մասին հարցի, այնպես էլ դրան վերաբերող փիլիսոփայական ավանդության քննության համար անհրաժեշտ նախնական գոյահասկացումը Յայդեգերը ցանկանում էր շահել մեզ անմիջականորեն հասու առօրյա ներկայության արտակայական կառուցվածքից: Նա հիշեցնում է, որ ներկայությանը գոյորեն հատուկ գոյահասկացումը կարող է ակնհայտ չլինել՝ «ամենանոտը միևնույն ժամանակ ամենահեռուն է»<sup>119</sup>: Գոյականի վերածումը գոյարանական գիտելիքի տեղի չի ունենում ինքնաբերաբար: Այդ փոխակերպմանն է ծառայուն «ներկայության հիմնարար անալիտիկան», որուն իրականացվում է արտակայական նախահասկացման արտակայութենական բացորշում<sup>120</sup>:

Ներկայության հիմնարար վերլուծությունը Յայդեգերն անվանել է նախապատրաստող, քանի որ այն ինքնանպատակ չէր, այլ միջոց, գոյության մարդկային կերպից՝ ներկայությունից ելնելով, լուսանցք բացել դեպի գոյությունն ընթանրապես: Այդ վերլուծությանը հատկացված էին լինելու միայն մասի երկու հատվածները:

Մտադրությունների այս արձանագրությունից պարզորոշ երևում է, որ նախագծի՝ ֆորմալ առումով երկմաս տրոհումը իրականում եռամաս է: Սկզբի նախապատրաստող հատվածներում Յայդեգերը ցանկանում էր վերհանել ժամանակայնությունը որպես մարդկային գոյության հիմնական ֆենոմեն, ցույց տալ, որ հենց նրանով է պայմանավորված

<sup>119</sup> Տե՛ս M. Heidegger, *Sein und Zeit*, էջ 15:

<sup>120</sup> Նույն տեղում, էջ 16:

Անր-կայության իմբռ-իր-սահմաններից-դուրս-գալու հանգամանքը, նրա արտակայող, էք-ստատիկ բնույթը: Ժամանակի կրկնակի գործառույթը՝ որպես Անր-կայության արտակայական կառուցվածքը պայմանավորող բաղադրանաս և դրա շնորհիվ նաև «սթափության հնարավորության պայման», թույլ էր տալիս Յայդեգերին դիտարկել ժամանակը որպես տրանսցենդենտալ հորիզոն, որում գոյության մասին բուն հարցադրումն ի բաց էր դրվելու ծեռնարկի ուրվագծում ազդարարված երկու ուղղություններով.

- առաջին բաժնի երրորդ մասում ժամանակայնության կապը Անր-կայության հետ տարածվելու էր ողջ գոյության վրա,

- երկրորդ մասի երեք բաժիններում պետք է կազմագերծվեր դասական փիլիսոփայության գոյարձանական ավանդույթը՝ ժամանակի հետ իր կապի տեսանկյունից դիտված:

Ամցումը, որ պետք է Անրկայացվեր առաջին մասի երրորդ՝ «ժամանակը և գոյությունը» հատվածում, այդպես էլ իրականություն չի դառնում: Յայդեգերը հրաժարվում է երրորդ հատվածի հրապարակումից, ասելով, որ նման մի խնդիր մտածելու համար անհրաժեշտ լեզու դեռևս գտնված չէ:

Գործի երկրորդ մասի երեք բաժիններում նախատեսված գոյարձնության կազմագերծումը Յայդեգերը պետք է իրագործեր առաջինում նվաճված արդյունքի լույսի ներքո, ցույց տալով դասական մետաֆիզիկայի թերացումը ժամանակի՝ որպես գոյության հասկացման հորիզոնի բացորշման առումով: Դրա համար էլ խոսքը լինելու էր կանոնական ժամանակային սխեմայի (Զուտ բանականության քննադատության սխեմատիզմին նվիրված գլխի) և ժամանակի վերաբերյալ արիստութեյան ուսմունքի մասին: Դեկարտը այստեղ ավելի հակաօրինակի դեր էր խաղում, որքանով որ իր «τες cogitans»-ում հետևողական ծնող արտահայտել և ամրագրել էր տարածական իրի և մտածողության այն, Յայդեգերի համոզմանը՝ անպտուղ հակադրությունը, որ հատուկ էր միջնադարյան սխոլաստիկայի գոյարձանական համակարգերին:

Այդ հատվածները Գոյություն և ժամանակի հրապարակման պահին նույնպես գրված չեն:

Արդյուր կառուցվածքային անավարտությունը, թե՞ բովանդակային դժվարություններն էին պատճառը, որ Յայդեգերը Կոմերելին գրած իր նամակում Գոյություն և ժամանակը անվանել է ծախորդություն

(Verunglückung)<sup>121</sup>: Այս խրին հարցին մոտենալու համար նախ անհրաժեշտ է անդրադառնալ տրակտատի տեքստին այնպես, ինչպես այն գրվել է:

Ստորև մենք քննության կառնենք Գոյություն և Ժամանակի այն դրվագները, որոնք անմիջականորեն պարզաբանում են հայդեգերյան գերխնդրի՝ գոյության մասին հարցի ծակատագիրը տրակտատում: Մտածողն այստեղ կրկնակի ծանապարհ է անցել. նախ՝ պարզապես նկարագրել է առօրյա ներկայության հիմնակազմությունը, առայժմ ծեռնպահ մնալով «նրա ինաստի մեկնաբանությունից»<sup>122</sup>, իսկ ապա՝ առաջին փուլում ստացված «նախապատրաստող անալիտիկան» վերարձրծել է «ավելի բարձր և սեփական գոյաբանական բազայի հիման վրա»<sup>123</sup>: Դաջորդող մի քանի դրվագներում ծեռնարկված ներկայացումն ավելի հակիրծ կլինի, բայց նրանում նույնպես նկատելի կլինեն հերմենուստիկական կրկնության տարրեր. չէ՞ որ գրքում իրենց ավարտուն բանաձևումն են ստացել հայդեգերյան մտքի շատ ֆիգուրներ, որոնց մասին արդեն մանրամասն խոսել ենք:

### ՆԵՐ-ԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գոյք, որի վերլուծությունը դրված է որպես խնդիր, մենք ինքներս ենք: Այս գոյն իր գոյության մեջ հարաբերված է սեփական գոյությանը: Որպես այդ գոյության գոյ, այն վստահված է իր գոյությանը:

Այս ելակետից Հայդեգերը երկու հետևանք է բխեցնում.

1. Մարդկային գոյության «էությունը» նրա լինելու մեջ է, այսինքն՝ ներկայության «էությունը» նրա արտակայությունն է: Սա նշանակում է, որ այդ գոյում մեզ հետաքրքրում են ոչ թե նրա առկա «հատկությունները», այլ նրա համար հնարավոր գոյության կերպերը: Դրա համար էլ «ներկայություն» անվանումը արտահայտում է ոչ թե այդ գոյի «ինչ»-ը, այլ նրա գոյությունը:

2. Գոյությունը, որը «այդ գոյի բանն է», միշտ իմն է<sup>124</sup>: Ներկայությունը երբեք չի կարող արձանագրվել որպես «առկա գոյերի» դասին

<sup>121</sup> Տե՛ս G. Figal, *Martin Heidegger zur Einführung*, Էջ 48:

<sup>122</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, S. 17.

<sup>123</sup> Նոյն տեղում:

<sup>124</sup> «Միշտ իմը»՝ «յեմենիգը», արտահայտությունը Հայդեգերի ստեղծած հերթական նեղողիզմն է. կարևոր այստեղ «յե» մասնիկն է, որ նշանակում է «յուրաքանչյուր ան-

պատկանող գոյ: Վերջիններիս մասին նույնիսկ չի կարելի ասել, որ դրանք անտարբեր են իրենց գոյության նկատմամբ, քանի որ «անտարբեր» կամ «ոչ անտարբեր» լինելը չի պատկանում առկա գոյերի գոյության կերպին: Այնինչ ներ-կայության քննությունը պետք է միշտ անձնական դերանուն ներառի՝ «ես եմ», «դու ես», քանի որ այն «միշտ իմն է»: Ներ-կայությունն ամեն անզամ բնորոշվում է, ելնելով իր հնարավորությունից: Նրա գոյության ձևը հենց հնարավորությունն է, և այդ հնարավորությունը նա ինչ-որ կերպ հասկանում է:

Ներ-կայության գոյական բնորոշումները կարող են բացորոշվել և հասկացվել, նրա յուրահատուկ գոյակազմությունից ելնելով: Վերջինս Շայդեգերն անվանում է «լինել-աշխարհում»՝ *In-der-Welt-sein*: Այս արտահայտությունը մեզ նորից ուղղորդում է ներ-կայության գոյությունը նկարագրելու համար ստեղծված հատուկ հասկացությունների՝ էքզիստենցիալների ոլորտը, որոնք տարբերվում են ոչ ներկայակերպ գոյերի նկարագրության համար օգտագործվող ավանդական միջոցներից՝ կատեգորիաներից: Էքզիստենցիալների բաղադրական գրությունը ցույց է տալիս դրանցով կազմվող իմաստային կորիզի անտարրալուծելիությունը: Քննվող դեպքում դա նշանակում է, որ «աշխարհում-լինելը» միասնական ֆենոմեն է, որն անտարանջատելի է առանձին բաղկացուցիչների, օրինակ՝ առանձին վերցրած «աշխարհի» և առանձին վերցրած «ես-ի», որով սակայն չի բացառվում ներ-կայության գոյակազմության կառուցվածքային մոմենտների բազմաբարդությունը:

Աշխարհում-լինելու ֆենոմենը կարող է հասկացվել նրա կառուցվածքային մոմենտի՝ «աշխարհի» երևույթի պարզաբանման միջոցով: Վերջինիս մասին հարցնելիս մենք չենք լրում ներ-կայությանը վերաբերող թեմատիկ դաշտը, և դա նշանակում է, որ գոյաբանական տեսակետից «աշխարհը» ոչ թե «առկա գոյերի» բնորոշումն է, այլ հենց ներ-կայությանը հատուկ գծերից մեկը: Մրամից ելնելով, Շայդեգերը ներ-կայության գոյությունն անվանում է «աշխարհական», իսկ ոչ ներկայական գոյերի գոյությունը՝ «աշխարհամեծք»: Նա հիշեցնում է նաև, որ «աշխարհը» չպետք է նույնացվի «բնության» հետ: Վերջինս հնարավոր աշխարհամեծք գոյի գոյության սահմանային ձևն է: Գոյը որպես բնություն կարող է բացահայտվել միայն ներ-կայությանը հատուկ գոյու-

գամ», «ամեն անզամ, երբ...», այսինքն՝ «միշտ իմն է» բառակապակցությունը պետք է հասկացվի ոչ այնքան անընդհատության, որքան ներ-կայությունների գոյության բոլոր դեպքերին վերաբերելու իմաստով:

թյան որոշակի մոդուսում: Բայց բնությունը երբեք չի կարող հասկանալի դարձնել ներ-կայության աշխարհականությունը: Դակառակն է ծիշտ՝ «բնության» հասկացությունն ինքնին՝ նաև ռոմանտիկական իմաստով, հասանելի է, միայն ներ-կայության անալիտիկայից ելնելով:

Աշխարհում-լինելն իր փաստականությամբ միշտ ցրված է «մեջը-լինելու» (In-sein) տարրեր կերպերի: Վերջիններիս բնույթը մեզ մոտավորապես հասու է դառնում հետևյալ թվարկման մեջ. ինչ-որ բանի հետ գործ ունենալ, բանի լինել, բան սարքել, բան մշակել և աճեցնել, բանացնել, ծեռքից բաց թողնել, նախաձեռնել, գլուխ բերել, տեղենկանալ, հարցում անել, դիտարկել, լեզու գտնել, պայմանավորել... Մեջը-լինելու բոլոր այս ծները միավորված են «հոգածության» պատկերի մեջ, որն ունի նաև բացասական մոդուսներ՝ անհոգ լինել, հրաժարվել, մատների արանքով նայել և այլն:

«Դոգածությունն» այստեղ օգտագործվում է որոշակի անհանգստության իմաստով, ինչպես օրինակ կարելի է ասել «ես մտահոգ եմ, որ ձեռնարկս գլուխ չի գա»<sup>125</sup>. Բայց դա չի նշանակում, զգուշացնում է մտածողը, որ մարդն այդպիսով դիտարկվում է որպես «տնտես» և «պրակտիկ» արարած: Այդ եզրն ընտրվել է ներ-կայության գոյական նկարագրության համար այնքանով, որքանով գոյարանական մակարդակում նախատեսված է ներ-կայության հարաբերությունն իր սեփական գոյությանը քննել որպես «հոգս»:

Ներ-կայության հոգածող գոյությունն իր մերձակայքում հանդիպում է իրերին, որոնց մասին ընդունված է ասել, որ դրանք «արժեք ունեն»: Բայց այդ բնորոշումը գոյարանական վերլուծության համար պիտանի չէ: Դայդեգերն առաջարկում է հոգածության մեջ հանդիպող գոյը անվանել «գործիք»: Այս յուրահատուկ հասկացությունն արտահայտելու համար Դայդեգերն օգտագործում է «Zeug» բառը, որը նշանակում է որևէ բան ամելու միջոց՝ սարք կամ հարմարանք:

Բառօգտագործման յուրահատկությունն այն է, որ գերմաներենի «-zeug» վերջավորությունն օգտագործվում է առարկայի «ինչի համար լինելը» ցույց տալու համար՝ «Werkzeug» (գործիք), «Fahrzeug» (փոխադրամիջոց), «Spielzeug» (խաղալիք), «Schreibzeug» (գրենական

<sup>125</sup> Շարադրվածի համատեքստից երևում է, որ բնագրի «Besorgtheit» բառն ավելի ծիշտ կիմեր թարգմանել որպես «մուսկոգվածություն»: Ես խուսափել եմ այդ եզրից, բանի որ ներ-կայության գոյությունը ենթադրում է նախառեֆեքտիվ անմիջականության որոշակի աստիճան, որը խաթարվում է «մտքի» հետ կապված իմաստային երանգի ներմուծմամբ:

պիտույք): Որպես «գործելու», «երթևեկելու», «խաղալու» կամ «գրելու» համար օգտագործվող «բան»՝ «-zeug»-ը հայերենում կարող էր փոխանցվել «-ելիք» կամ «-ալիք»՝ «գործելիք», «քշելիք», «խաղալիք», «-ոց»՝ «սողոց», «հաստոց» կամ «-արան»՝ «պահարան», «կախարան», «գործարան» Վերջավորությունների միջոցով: Գործիքի «ինչի համար»-ը՝ նրա «որ ի՞նչ»-ը, արտահայտելու համար Յայդեգերը կիրառում է «ստ-չ» դարձվածքը:

Ենտագա շարադրման ժամանակ օգտակար է հաշվի առնել, որ հայերեն «գործիք» թարգմանությունն այնուամենայնիվ կատարյալ չէ, քանի որ հայերենում լրելյան ենթադրվում է, որ «գործիքը» կամ «սարքը» ինքնին ինչ-որ նպատակի համար պատրաստված են՝ սարքված (այդ պարագայում տեղին կլիմեր «ինստրումենտ» բառը), այնինչ «Zeug»-ի պարագայում դա պարտադիր չէ՝ ցանկացած «ձեռնիա իր» կարող է հանդես գալ որպես գործիք, օգտագործվել որպես միջոց՝ ինչ-որ կարիք այս կամ այն ծնով հոգալու համար<sup>126</sup>.

Գործիքի մասին չի կարելի պարզապես ասել, որ այն «կա»: Խոսքն, ինչպես տեսանք, ինչ որ բանի ինչ-որ բան անելու համար պետք գալու, ձեռքի տակ գտնվելու՝ ձեռնիա լինելու մասին է: Այս թեզով Յայդեգերը ցույց է տալիս ներկայության աշխարհում-լինելու առաջնայնությունը աշխարհի տեսական ընկալման նկատմամբ: Բայց սա չի նշանակում, որ աշխարհում-լինելը գորուր է տեսականությունից՝ atheoretisch: Ուղղակի, առօրյա ներկայությանը հատուկ է ոչ թե դիստանցավորված օբյեկտիվությունը, այլ մասնակցի շահագրգռվածությունը: Սա որոշակի ուղղվածություն է, որի համար աշխարհում-լինելը նախ և առաջ կապված է «օգտագործող հոգածության» հետ:

<sup>126</sup> Որևէ իրի օգտագործելի լինելու այս գործառույթն առօրյա խոսակցության մեջ երթեմն արտահայտում են «հաջաք» բառով: Արաբերեն «ছացեն»-ից (հիգն. «հաց»՝ պետքեր) մերոր այդ օտարաբանությունն ունի երկու հիմնական նշանակություն՝ 1. Կարիք, կարևորություն, նշանակություն... և 2. Գործիք, գործիքներ (տե՛ս Ստ. Սալիխանեանց, Դայերն բացարարակամ բառարան. հ. 3, Դայկ. ՍՍՌ պետ. իրատ. Եր., 1944, էջ 56), որի շնորհիկ բավական հաջող է արտացոլում «Zeug»-ի հմաստը: Ուշագրավ է նաև «պիտույք» բառի ներգրավման հնարավորությունը, որ հեշտում է վերը բերված օրինակներից մենքը: Բայց թարգմանության խնդիրը համարյա անհուսալի է դառնում, եթե հաշվի ենք առնում, որ գերմաներենի «Zeug»-ում ակնարկված են նաև «արտադրել» (erzeugen) բառի հետ կապված «ստերելը»՝ «ծննդու», «լուս աշխարհ բերելու» ինաստով՝ «zeugen», ինչպես նաև «վկայության» (Zeuge), «ցույց տալու» (zeigen) և «նշան» (Zeichen) իմաստները, որոնց կարևորությունը մեզ հետաքրքրող համատեքստում երևան է գալու ստորև:

Վերոշարադրյալը Յայդեգերին հիմք է տալիս եզրակացնելու, որ «գործիքի»՝ որպես միջոցի կառուցվածքում միշտ տեղի ունի «ինչ-որ բանի հղում ինչ-որ բանի»<sup>127</sup>: Զեռնիաս իրի՝ մեկ այլ բանի հղելու այդ հատկությունը Յայդեգերն անվանում է «ձեռնիասի գոյաբանական կանխադրություն»: Այսպես, մուրճի ձեռնիասության, աշխարհում նրա կիրառելիության մեջ արդեն հղման հնարավորություն կա, որում ի հայտ է գալիս աշխարհի աշխարհականությունը:

Դղման գոյաբանական բնույթի մատնանշումն առանձնահատուկ դեր է ստանձնում, քանի որ Յայդեգերին թույլ է տալիս խոսել նշանային, հետևաբար և լեզվական գործունեության գոյաբանական հիմքերի մասին: Դրա համար մտածողն առանձնացնում է միջոցների առանձին տեսակ՝ նշան-միջոցմերը: Այն ձևը, որով Վերջիններս աշխարհամեջ հարաբերություններում հղումներ են առաջ բերում, բնորոշվում է որպես «նշանակել»: Դրա հիմնան վրա առաջ եկած փոխադրձ հղումների համակարգը Յայդեգերն անվանում է «նշանակալիցություն»: Վերջին, իր իսկ խոստովանությամբ՝ ոչ այնքան հաջող արտահայտության միջոցով նա ուզում է ցույց տալ բներևույթների արդեն իսկ գոյաբանական մակարդակի վրա ի հայտ եկող փոխկապակցությունը, որի շնորհիվ միայն հնարավոր է դառնում այն, ինչ հայտնի է որպես սովորական՝ բառային «նշանակություն»:

Նշանները, ըստ Յայդեգերի, այնպիսի միջոցներ են, որոնց յուրահատուկ բնույթը «ցույց տալին է»: Նշանները՝ որպես «ցուցիչ-միջոցներ», մյուս բոլոր «գործիք-միջոցների» համեմատ այն առավելությունն ունեն, որ դրանք ներ-կայությանը որոշակի «կողմնորոշում» են տալիս: Նշանների իմաստն ու նշանակությունը, այսպիսով, մակարերվում են մարդկային գործունեության համատեքստից:

Ներ-կայության՝ որպես հոգսի կառուցվածքը ապահովում է նրա ինտենցիոնալության այնպիսի կերպ, որը հանդես է գալիս նաև որպես նշանակության հասկացման անհրաժեշտ և բավարար պայման<sup>128</sup>: Դրա համար Յայդեգերն առանձին հետաքրքրություն չի ցուցաբերում այն նշանների նկատմամբ, որոնց նշանակությունը հաստատված է պայմանական միջոցներով<sup>129</sup>: Այդպիսով Յայդեգերը հանգում է նաև

<sup>127</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, S. 68.

<sup>128</sup> C. Lafont, *Sprache und Welterschließung. Zur linguistischen Wende der Hermeneutik Heideggers*, Suhrkamp, Ffm., 1994, S. 70: Մեջբերվում է ըստ՝ U. Tietz, *Sprache und Verstehen in analytischer und hermeneutischer Sicht*, Berlin: Akad. Verl., 1995, էջ 14:

<sup>129</sup> Հմտ. U. Tietz, նշված աշխատություն, նոյն տեղում:

լեզվի էության վերամեկնաբանությանը: Լեզվի հետ կապված կենտրոնական խնդիրն այլս «տրամաբանական-ծագումնաբանական հարցը չէ ասույթի մասին», այլ «էքզիստենցիալ-գոյաբանական հարցը գոյության իմաստի մասին»<sup>130</sup>: Բնական է, ուրեմն, որ ելակետայինը մտածողի համար ոչ թե «նշանային համակարգն» է՝ լեզուն, այլ նրա հիմքում ընկած գործունեությունը՝ խոսքը<sup>131</sup>: Վերջինս տրամակայության (Befindlichkeit<sup>132</sup>) և հասկացման հետ մեկտեղ ներկայանում է որպես ներկայության հիմնարար էքզիստենցիալներից մեկը: Լեզուն հանդես է գալիս որպես խոսքի արտաքերպածություն:

Խոսքը կազմորոշ է ոչ միայն լեզվի, այլև ներկայության արտակայության համար ընդհանրապես: Այն ապահովում է ներկայության բացվածությունը, քանի որ ապահովում է ներկայության տրամակայության մասին տեղեկության փոխանցումն այլ ներկայություններին: Դրանով ներկայությունը հնարավորություն է ստանում կիսվելու այլոց հետ իր տրամակայությամբ ու հասկացմամբ և ապահովում է ուրիշների հետ իր համագոյությունը:

## Բոլորը

Այս կարևորագույն կետում Յայդեգերը հատկանշական երկվություն է ցուցաբերում: Մի կողմից, խոսքը դիտարկելով որպես ներկայության արտակայության բացում, մտածողը շարունակում է անձնավորության ինտենցիոնալության մասին իր ելակետային գաղափարի հետևողական ծավալումը: Ներկայության բացությունն արտահայտվում է ուրիշների հետ նրա համագոյության մեջ: Այդ թեզով Յայդեգերը հաղթահարում է Յուլեռլի մենախոսական ինքնագիտակցության արգելափակոցը և իմքը դնում ինտերսությենկուիթյան խնդրի հուսեռյան մեկնարանության արմատական վերահճաստավորման համար<sup>133</sup>: Սյուս կողմից, սակայն, Յայդեգերը նորից հեռանում է համագոր ներկայությունների հաղորդակցության խնդրից, երբ մանրամասնում է «ուրիշների» մասին իր պատկերացումը, բնորոշելով «ուրիշներին» որպես «բոլորը»՝ «Man»:

<sup>130</sup> Նոյն տեղում, էջ 20:

<sup>131</sup> «Լեզվի էքզիստենցիալ-գոյաբանական հիմքը խոսքն է» (*Sein und Zeit*, S. 160):

<sup>132</sup> Այս գոյաբանական եզրին գոյական մակարդակում համապատասխանում է բոլորին քաջ հայտնի «տրամադրությունը» (Stimmung):

<sup>133</sup> Ste' u Tietz, մեջբերված աշխատություն, էջ 22:

«Man» նեղոգիզմը Յայդեգերը ստեղծել է, թերև ձևափոխության ենթակելով քերականական երրորդ դեմք արտահայտող տառ մասնիկը, որը գերմաներենում օգտագործվում է, երբ գործողություն կատարողի անձն անորոշ է մնում. man sagt՝ ասում են, man denkt՝ կարծում են: Մեծատարի ներմուծման շնորհիվ հնարավոր է դառնում բառացի ընթերցումը՝ «Ման»-ը ասում է, «Ման»-ը կարծում է: Եվ քանի որ կրկնակի ո-ով գրված Mann-ը մարդ է նշանակում, անդեմության արտահայտությունը կատարյալ է դառնում՝ բոլոր ասում են, բոլորը կարծում են: Բոլորի շրջանակում հաղորդակցման հիմնական ձևը ասեկուեն է (Gerede):

Դամագոյությունը «բոլորի» հետ ներկայության աշխարհում գոյության որոշակի, «անխկական» կերպ է, որին հատուկ է տարրալուծումն ընդհանուրի իրապարակայնության մեջ: Այն բնորոշվում է որպես ներկայության անկում և նկատի ունի, որ ներկայությունն անջատվել է իր հնգք-լինելու կարողությունից և ընկել է աշխարհ: Անկումը Յայդեգերը նշանակում է verfallen բառով, որը նաև «փչանալու», «քայլավելու», «այլասերվելու» իմաստն ունի, բայց միևնույն ժամանակ զգուշացնում, որ այն չպետք է հասկանալ կրոնական՝ «մեղքի մեջ ընկդմվելու» իմաստով, քանի որ խոսքը ինչ-որ մաքուր, կատարյալ վիճակից դուրս ընկնելու մասին չէ: Անկումը ներկայության արտակայական բնորոշումն է, և այն չպետք է մեկնաբանվի գոյական մակարդակով՝ որպես «լավ» կամ «վատ» հատկություն<sup>134</sup>:

Ինչ-որ կրոնական երանգ այդ եզրը, այնուամենայնիվ, պահպանում է, քանի որ Յայդեգերն անկումը կապում է գայթակղության հետ: Ներկայության անկումը բոլորի հետ լինելու, բոլորի մեջ կորչելու հնարավորություն է տալիս: Բոլորի ինքնավստահությունն ու վճռականությունը փոխանցվում են ամինքնուրույն ներկայությանը, որը դրանով իրեն հանգիստ է գործում: Սա է, որ գայքակղիչ է: Սակայն, արդյունքում, բոլորի շրջապտույտում հայտնված ներկայությունն այդպես էլ ձեռնամուխ չի լինում սեփական հնարավորություններն առաջադրող ձեռնարկի իրականացմանը: Նրա անինքնուրույն գոյությունը բացահայտվում է որպես արկանվածություն:

<sup>134</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, S. 176.

## Ներկայության հիմնարար կառուցվածքը

Դոգմի՝ որպես ներկայության հիմնարար կառուցվածքի բներնույթը քոյլ է տալիս տեսնել, որ այն, ինչ բներնութաբանութամ մեջ հասու է դառնում իմանցիոնալության անվան տակ, միայն բներնույթի արտաքին կողմն է ներկայացնում...:

Մ. Հայդեգեր

Անկումը նշանավորում է ներկայության փախուստն ինքն իրենից: Փախուստի պատճառը ահն է: Խնդիրն այստեղ այն չէ, որ ներկայությունը վախեցած է աշխարհամեջ գոյի հետ կապված ինչ-որ բանից: Ընդհակառակը: Ահարեկված ներկայությունը փախչում է աշխարհամեջ, ձգտելով տարրալուծվել նրանում: Այստեղ Յայդեգերը կարևոր տարրերություն է մտցնում «վախի» և «ահի» միջև: Առաջինը վերաբերում է աշխարհամեջ գոյից եկող որևէ որոշակի վտանգի: Երկրորդը նման առարկա չունի: Սպառնալիքն անորոշ է և նրա հետ գործ ունենալ հնարավոր չէ: Ոչ մի ծեռնիաս գոյ չի սպառնում մարդուն: Դա մի իրավիճակ է, որում աշխարհն զնդիանրապես ոչիմ չի նշանակում: Բայց դրանով աշխարհը չի անհետացել՝ այն ճնշում է, «վրա է տալիս» ամեն կորմից՝ չմշին և իրելամատ: Դեմք այս նշինությունն է, որ խնդիր է առաջացնում՝ ահի «ինչից»-ը աշխարհում-լինելն է որպես այդպիսին:

Ահը ներկայությունից խլում է ինքն իրեն «աշխարհից» և հրապարակայնությունից հեշտ ու հանգիստ հասկանալու հնարավորությունը: Այն միայնակ է դարձնում ներկայությանը, բայց միևնույն ժամանակ բացում է նրան: «Աշխարհում-լինելուն» դեմ հանդիման հայտնված ներկայությունը անհանգստացնող օտարություն է ապրում (Unteillichkeit), որի արտակայական ակունքը «տանը-չլինելն է» (das Unzuhause): Այդ իրավիճակում է, որ ներկայությունը լսում է խղճի կանչը, որը, սակայն, չի վերաբերում այս կամ այն, բարոյապես դրվատելի կամ խոտելի գործողությանը: Անմաքուր խղճը կապված է այն հիմնարար անհանգստության հետ, որն ապրում է ներկայություն՝ իր աշխարհում-լինելը ինքնուրույն իրականացնելու կապակցությամբ:

Ի բաց դրված ներկայությունն ազատ է սեփական (իսկական կամ ոչ իսկական) լինել-կարողանալու համար: Սեփական լինել-կարողանալուն միտված գոյությունը նշանակում է, որ ներկայությունն իր գոյության մեջ ալրեն ինքն իրենից առաջ է: Այդ միշտ արդեն «ինքն իրենից դուրս լինելը» ընթանելի է դարձնում ներկայության գոյաբանական կառուցվածքի արտակայական ամբողջականությունը:

Գոյության այս կերպը Յայդեգերն անվանում է *հոգս (Sorge)*<sup>135</sup>: Հոգսը նկատի չունի որևէ կոնկրետ պրագմատիկական նպատակի նվաճում, կապված չէ ինչ-որ «պակասորդի» հետ: Սա այն արմատական արտակայող կերպն է, որը հատուկ է ներ-կայության գոյությանը:

Զուգահեռ հոգսի և բներսութաբանությունից մեզ ծանոթ իմտենցիոնալության միջև ակնհայտ է՝ երկուսն էլ «ուղղված են դեպի...»: Կարելի է ասել, որ մարդուն ինքն իր սահմաններից դուրս բերող հոգսը իմտենցիոնալության երևոյթի հետագա զարգացումն է, նրա գոյաբանական վերահմատավորումը: Բայց սա փիլիսոփայության՝ Յուսեռլից Յայդեգեր անցած ճանապարհի առումնվ: Յայդեգերը գերադասում է շեշտել խնդրի հակառակ կողմը, արձանագրելով, որ «այն, ինչ բներսութաբանության մեջ հասու է դառնում իմտենցիոնալության անվան տակ, միայն բներսույթի արտաքին կողմն է ներկայացնում»<sup>136</sup>: Գոյաբանական տեսակետից առաջնայինը հոգսն է, որը պայմանավորում է ներ-կայության հիմնարար կառուցվածքը:

Հոգսի բացորոշված սահմանումը Գոյություն և Ժամանակի առանցքային էրգիստենցիալներից է: Ներ-կայության գոյությունը որպես հոգս նշանակում է «իմքն-իրենից-արդեմ-առաջ-լինել-(աշխարհում) որպես գոյություն-(աշխարհամեջ հանդիպակաց գոյի)-մոտ»<sup>137</sup>:

Այս բարդ էրգիստենցիալը, ինչպես տեսնում ենք, բաղկացած է երեք նոմնենտներից՝ աշխարհում-լինելուց, առաջ-ընկնելուց և աշխարհամեջ-գոյի-մոտ-լինելուց, որոնք իրենց հերթին աղերսված են ժամանակի երեք մոդուլներին՝ անցյալին, ապագային և ներկային:

Մարդու հենց-այստեղ-և-իրմա-աշխարհում-լինելը ցույց է տալիս, որ ներ-կայությունը միշտ փաստական է: Մարդն «արկանված է աշխարհ», այսինքն՝ միշտ գտնվում է կոնկրետ պատմական պայմաններում, որոնք որոշվում են արդեն տեղի ունեցածով: Յայդեգերը կարևոր է համարում տեսնել տալ, որ խոսք այստեղ մեռյալ, անցած գնացած «անցյալի» մասին չէ (Vergangenheit), այլ ներ-կայության վրա ազդող, նրա այսօրն իրենով պայմանավորող «եղելության» (Gewesene):

<sup>135</sup> Հոգսի ֆենոմենն աղերսներ ունի Գյոթեի Ֆառստի համապատասխան կերպարի հետ: Այդ նասին է վկայում, մասնավորապես, Յայդեգերի հղումը Կ. Բուրդախի «Ֆառստ ու հոգսը» հոդվածին, տն՝ ս *Sein und Zeit*, էջ 197:

<sup>136</sup> Յն�ն. սոյն հատվածի բնարանը:

<sup>137</sup> Sich-vorweg-schon-sein-in-(der-Welt) ալ Sein բև (innerweltlich begegnendem Seienden), M. Heidegger, *Sein und Zeit*, S. 192.

Ներ-կայությունն աշխարհում միշտ կանգնած է իր առջև բացվող հնարավորություններին դեմ հանդիման: Մրան հաճապատասխան՝ երկրորդ՝ «ինքն իրենից առաջ ընկնելու» մոդուսը ցույց է տալիս, որ ներ-կայության՝ աշխարհում լինելու կերպը, հնարավորություններից ընտրություն կատարելով, ապագային միտված «ձեռնարկ» իրականացնելուն է<sup>138</sup>: Ձեռնարկում ի հայտ է գալիս ներ-կայության գոյահասկացումը:

Ներկայի մոդուսը, իր հերթին, հիշեցնում է աշխարհամեջ իրերի «ձեռնահաս» բնույթի մասին: Մարդու աշխարհը բաղկացած չէ «չեզոք» առարկաներից՝ դրանք պստենցիալ գործիքներ են, որ օգտագործվում են «ձեռնարկի» իրականացման ընթացքում:

Ժամանակայնության երեք մոդումները ոչ միայն հանդես չեն գալիս առանձին-առանձին, այլև չեն գումարվում՝ «ամբողջացնելով ժամանակը»: Ժամանակայնության հիմնարար բնորոշումը «ինքն իրենից դուրս»-ն է: Մրանից ելնելով՝ Յայդեգերն այդ մոդուսներն անվանում է «էքստազներ» (արտակայումներ): Քանի որ ժամանակը գոյ չէ, հիմք չկա խոսելու նրա գոյության մասին՝ ժամանակը ժամանում է<sup>139</sup>:

Յուրաքանչյուր էքստազում ժամանակայնությունը ժամանում է ամրողությամբ, - բացատրում է Յայդեգերը, - դա նշանակում է, որ ժամանակայնության ամեն մի լրիվ ժամանման էքստատիկ միասնության մեջ հիմնավորված է արտակայության (Existenz), փաստականության (Faktizität) և անկումի (Verfallen) կառուցվածքային ամբողջի ամրողությանությունը, այսինքն՝ հոգի կառուցվածքի միասնությունը:

<sup>138</sup> «Արկանվագնությունը» (Geworfenheit) և «ձեռնարկը» (Entwurf) եզրաբանորեն փոխկապակցված են՝ երկուսի հիմքում էլ ընկած է «werfen»-ը որպես «նետել», «արկանել»: Մրանով է պայմանավորված նաև հայերեն եզրերի ընտրությունը:

<sup>139</sup> Այս արտահայտությունը բացատրությամբ կարիք ունի: Ժամանակայնության եւթյունը ներկայացնելու համար Յայդեգերն օգտագործում է «zeitigen» բառը, որն առօրյայում «հասունացնել» է նշանակում, օրինակ՝ գինին պետք է հասունանա (հասնի), և դրա համար ժամանակը է պետք: Ուրեմն, «die Zeitlichkeit zeitigt sich» արտահայտությունը կարծի է հասկանալ այսպէս, որ ժամանակայնությունը հասունանում է: Բայց մյուս կողմից «zeitigen»-ի մեջ ընկալելի է նաև բառացի «ժամանակել» իմաստը: Այդ դեպքում կունենանք՝ ժամանակայնությունը ժամանակվում է: (Նման բառախառներն այնքան բնութագրական են Յայդեգերի համար, որ դրանց հեզանող կրկնակներ են ստեղծվել՝ «խնձորը խնձորում է», «տանձը տանձում»): Ուստի ները, ձգտելով չկորցնել «zeitigen»-ի փոխառկայծող իմաստները, երկու տարեր արտահայտություն են օգտագործում: «Վրեմյա վայրեւատ» և «Վրեմյա վրեմենիտ»: Ելնելով հայերենի հնարավորություններից՝ տեին է օգտագործել «ժամանակայնությունը ժամանում է» արտահայտությունը:

Ժամանումը էքստագների «մեկը մյուսի հետևից» չի նշանակում: Ապագան ավելի ուշ չէ, քան եղելությունը, և սա ավելի շուտ չէ, քան ներկան: Ժամանակայնությունը ժամանում է որպես եղած-մերկայող ապագա»<sup>140</sup>:

Եվ այնուամենայնիվ, ապագան Յայդեգերի մոտ որոշակի իմաստային առավելություն է ստանում՝ ժամանակը ժամանում է ապագայից: Ապագային ուղղված սահմանային բներևույթը մահն է:

### Մահկան մասին

Ներկայությունն ազատ է իր ընտրության մեջ, բայց պետք է հաշվի նստի այն հանգանանքի հետ, որ այս կամ այն առանձին հնարավորության ընտրությամբ մյուսները բացառվելու են: Այնուամենայնիվ, ընտրությունն անխուսափելի է, քանի որ չընտրելը նույնպես ընտրության ձև է:

Հնարավորությունները կարելի են հանձն առնել, ծեռքից բաց թողնել, նրանցից կարելի են առ խուսափել: Բայց կա մի բացարձակ հնարավորություն, որ անխուսափելի է և անշրջանցելի: Դա մահն է: Մահը նաև անփոխանցելի է: Մարդ կարող է, ինչ-որ վտանգավոր գործ ուրիշի փոխարեն ստանձնելով, զոհվել հանուն այդ գործի, ասում է Յայդեգերը: Բայց հնարավոր չէ մեռնել ուրիշի փոխարեն: Որովհետև յուրաքանչյուրի մահը միայն իրենն է:

Երբ Յայդեգերը հիշում է իին ասացվածքը՝ «Յենց որ մարդ կյանք է մտնում, նա արդեն բավականաչափ ծեր է մեռնելու համար»<sup>141</sup>, նա նկատի ունի, որ ծնունդն ու մահը արտաքին պատմեշներ չեն, որոնց միջև ծավալվում է կյանքը: Ներկայությունն ինքնին ոչինչ այլ բան չէ, քան «անընդհատ ընթացք դեպի մահը» (Vorlaufen zum Tode):

Մարդկային գոյության այս հիմնարար բնորոշումը որևէ կապ չունի հիուստեսության կամ վախսկոտության հետ: Վախսկոտն, ըստ մտածողի, նա չէ, ով մտածում է մահվան մասին, այլ նրանք, ովքեր ամեն գնով խուս են տալիս մահվան անշրջանցելի հնարավորությունը որպես կյանքի հիմնարար իրողություն ընդունելուց: Բայց Յայդեգերի կեցվածքը հեռու է նաև ստորիկյան անտարբեր անդրդվելիությունից: Մահվան անխուսափելիության ընդունումն այն զործոնն է, որի շնորհիվ ի

<sup>140</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, S. 350.

<sup>141</sup> Նույն տեղում, էջ 245.

հայտ է գալիս ներկայության գոյության իմաստը: Մասին ամրողացնում է մարդկային ներկայությունը, ի հայտ է բերում նրա վերջավորությունը և պատմականությունը և դուրս բերելով մարդուն «բոլորի» կողմից պարտադրված անդեմ հարաբերությունների ոլորտից, ի բաց է դնում նրան սեփական գոյությանը դեմ հանդիման: Հենց այդ բաց լինելով է, որ ներկայության խևական՝ բուն գոյությունը տարբերվում է անխևականից<sup>142</sup>:

Հետազայում, հնարավոր թյուրիմացություններից խուսափելու համար, Հայդեգերը նորից շեշտել է, որ Գոյություն և Ժամանակում իրականացված մահվան վերլուծության նպատակը ոչ թե մահվան էռթյանը վերաբերող մետաֆիզիկական թեզի մշակումն է եղել, այլ «մի որոշակի ուղղությամբ ներկայության արճատական ժամանակայնության բացահայտումը»<sup>143</sup>:

«Մի որոշակի ուղղության» հիշատակումը պատահական չէ: Մահը ներկայության վերջավորության և ժամանակայնության ամենաակնառու, բայց ոչ միակ դրսնորումն է: Մենք տեսանք, որ եղելության և զալիքի լարված դաշտում արտակայող մարդու գոյությունն ի սկզբանե ժամանակային է, հետևաբար՝ պատմական: Պատմականությունն իրադարձությունների սոսկական հաջորդականություն չէ, այլ գոյության այն յուրահատուկ կերպը, որ հատուկ է մարդուն:

<sup>142</sup> «Խևական» և «անխևական» գոյության մասին խոսելիս թարգմանության դժվարություն է առաջանալու: Ներկայության «իր բնույթին հանապատասխանող» գոյությունը նշանակելու համար հենցնակն օգտագործում է «eigentliches» բառը, որ հայերեն պետք է թարգմանվեր որպես «քուն իրենք», «իրեն պատկանող»: Սրան ամենամոտը հայերեն «սեփական» է: Բայց այն պատմականորեն աղերաված է «սեպուհ» բառին (այսուհեղ՝ սեպականություն) և ոչ թե «իրու»-ին կամ «ուլույն»-ին: Վերջինն մեզանում ավելի շուտ ընկալվում է ուրիշներից տարբերվելու՝ ոչ երևույթ բուն էռթյանը հատուկ լինելու իմաստով: Առաջինից ստացվում է «իրական», որը «ուեալ գոյություն ունեցողի» ավելորդ երան է մտցնում, այնինչ գոյության երկու ծներն էլ, ըստ Հայդեգերի, հակասարապես իրական են: «Բուն»-ից անհրաժեշտ աօականը չի արտածվում՝ «ընական» ու «բնիկը» այլ կոնուտացիաներ են առաջացնում: Մեր օգտագործած «խևական» գերադասելի է այնքանով, որ կապվում է «խևության», հետևաբար «ծշմարիտ» գոյության հետ, բայց անթերի չէ, քանի որ վերաբերադրում է «իրական» թերությունները: Այսօրվա հային հայդեգերյան միտքը նույնակերպ հասցնելու համար ինձ թույլ են տալիս հետևյալ համենատությունը: Մենք խնում ենք չստուգված օդին և բավարարված արձանագրում՝ «ի՞նքն է»: Նույն տրամաբանությամբ՝ խևական գոյությունը «ի՞նքն է»: Մնում է հիշել, որ գերմաներենում «eigentlich»-ն օստագործվում է նաև «այսինքն» (собственно говоря) իմաստով: Խոսքը, ուրեմն, գոյության «այս՝ ինքն» լինելու մասին է:  
<sup>143</sup> “Davoser Disputation zwischen Ernst Cassirer und Martin Heidegger”, in: M. Heidegger, *Kant und das Problem der Metaphysik*, Klostermann, Ffm., 1998, S. 283.

## Ինչու Վարպետը չգրեց երրորդ մասը

Ընդ որում գեկուցողը դեռ հեծմական սրամությամբ ժավալ-վում էր մանաւության սեփական բացասրության շուրջը, թե ինչու է ինքը որոշել հրաժարվել երրորդ մասից, որն աղերսված էր լինելու առաջինին: Իր աշակերտի հարցին Բերիովենը պատասխանել է, որ ժամանակի սրության պատճառով գեղադասել է փոքր-ինչ ընդարձակել երրորդը:

Թոնաս Մանն, Դոկտոր Ֆառառուս

Ուղու մասին, որ Յայդեգերը նախատեսում էր անցնել Գոյություն և Ժամանակում, խոսել ենք մանրամասն: Գրի առաջին բաժնի երկու մասերում իրականացվելու էր Անդր-կայության նախապատրաստող վերլուծությունը և ցույց էր տրվելու նրա կապը ժամանակայնության հետ, երրորդում՝ առաջին երկուսի արդյունքների հիման վրա նվաճված «ժամանակի տրանսցենդենտալ հորիզոնում», անցում էր կատարվելու րուն գոյությամբ, այնուհետև՝ երկրորդ բաժնի երեք մասերում իրականացվելու էր ավանդության կազմագերծող հասկացումը:

Ինչո՞ւ չի գրվել երրորդ մասը: Ինչո՞ւ Անդր-կայության վերլուծության արդյունքում ձեռք բերված ժամանակի հղացքը չի կատարել գոյությանն անցնելու համար անհրաժեշտ «տրանսցենդենտալ հորիզոնի» դերը: Ի՞նչ տեսք էին ունենալու բացակայող հատվածները: Այս հարցերը, որ ստիպված ենք շոշափել գոնեն մակերեսորեն, գիտակցելով, որ դրանց սպառիչ պատասխանները հազիվ թե հնարավլու են:

Զեռնարկի չիրականացված մասերի բովանդակության մասին որոշակի պատկերացում են տալիս տրակտատին հարող երկու աշխատություն՝ Բներլութարանության հիմնախնդիրները վերնագրի Անդրք միավորված դասախոսությունները, որ Յայդեգերը կարդացել է 1927 թվի ամառային սեմեստրի ընթացքում Մարբուրգում<sup>144</sup>, և առանձին հատորով հրատարակված Կանոդ և մետափիզիկայի պրոբլեմը մենագրությունը<sup>145</sup>: Առաջինի ձեռագիր վրա Յայդեգերի ձեռքով գրված է «Գոյություն և Ժամանակի առաջին բաժնի երրորդ մասի նոր մշակում»: Յղումը վերահստատված է Գոյություն և Ժամանակի հեղինակային օրինակի առաջին մասի վերնագրի մոտ կատարված նշումով. «Յմնտ. 1927-ի ամառային սեմեստրի մարբուրգյան դասախոսության հետ (Բներլութարանության հիմնահարցերը)»:

<sup>144</sup> M. Heidegger, “Die Grundprobleme der Phänomenologie”, hgg. v. W.-F. von Hermann, in: GA, B. 24, Ffm., 1975.

<sup>145</sup> M. Heidegger, Kant und das Problem der Metaphysik, Klostermann, Ffm., 1998.

Միևնույն դասախոսության հաջորդ մասը Արիստոտելի Ֆիզիկաի կազմի մեջ նտոնող ժամանակի մասին տրակտատի (գիրք IV) մենաւորացած մի փորձ է և կարող է դիտվել որպես հայդեգերյան ծեռնարկի երկրորդ մասի վերջին բաժնի իրականացում<sup>146</sup>: Կանտին նվիրված գիրքը, որ լույս է տեսել 1929-ին, անմիջապես աղերսված է նույն մասի առաջին բաժնի թեմային:

Այսպիսով՝ զուտ ծևականորեն հնարավոր է պնդել, որ Գոյություն և ժամանակի նախագիծը իրականացված է համարյա ամբողջությամբ՝ բացառությամբ Դեկարտին վերաբերող հատվածի: Սակայն խնդիրն այն չէ, թե որքանով են հետագայում առաջացած այդ տեքստերը տեխնիկապես ամրողացրել (կամ համարյա ամրողացրել) հայդեգերյան գլուխողոքոցը: Շատ ավելի կարևոր է հարցն այն մասին՝ արդյո՞ք այդ գործերն էապես նպաստել են Հայդեգերի ծեռնարկի հիմնական հարցադրամ իրականացմանը:

Իրողությունն այն է, որ ո՞չ Հիմնախնդիրները, ո՞չ Կանտի գիրքը այդ խնդիրը չեն լուծել:

Իր անավարտ տրակտատի առաջին բաժնի երրորդ մասը լրացնել հավակնող Բներևութաբանության հիմնահարցերում ներ-կայությունից դեպի գոյություն կատարվող անցումը Հայդեգերը փորձել է հիմնավորել, վկայակոչելով ներկայության տրանսցենդենտ բնույթը<sup>147</sup>: Մերժելով տրանսցենդենտի տարածված ըմբռնումը որպես այնկողմնայինի՝ «աստված» կոչվի այն, թե «հնարին իր», Հայդեգերը հիշեցրել է, որ transcendere-ն նշանակում է «անցնել», հետևաբար տրանսցենդենտը ոչ թե այն տեղն է, ուր անցնում են, այլ ինքը՝ անցնողը, այսինքն՝ ներկայությունը: Անդրամանողներն օրյեկտներ չեն՝ իրերը չեն կարող անդրանցում կատարել, դրանք սուբյեկտներ են: Ներ-կայությունը, լայնիցյան մոնադների հանգույն, պատուհանների կարիք չունի, քանի որ արտականելու շնորհիվ արդեն իսկ դրւան է՝ ուղիղ գոյի մոտ<sup>148</sup>: Ներ-կայության սահմանազանց, էքստատիկ բնույթի շնորհիվ է, որ նրա առջև բացվում է գոյությունը<sup>149</sup>:

<sup>146</sup> Այդ կարծիքն է հայտնում Գ. Ֆիզալը (նշվ. աշխ., էջ 49), այն դեպքում, եթե Ֆ. Վ. ֆոն Շերնանը վերը հիշատակված հողվածում հակված է ենթադրել, որ Բներևութաբանության հիմնահարցերը լրացնում են առաջին մասի երրորդ բաժնի բացը:

<sup>147</sup> Տե՛ս M. Heidegger, “Die Grundprobleme der Phänomenologie”, in: GA, B. 24, էջ 423: Տե՛ս և M. Heidegger, “Die Grundprobleme der Phänomenologie”, in: GA, B. 24, էջ 423:

<sup>148</sup> Տե՛ս և նույն տեղում, էջ 427:

<sup>149</sup> Հնմտ. Փր.-Բ. ֆոն Խերման, “Бытие и время” и “Основные проблемы феноменологии”, *Философия Мартина Хайдеггера и современность*, Наука, М., 1994, էջ 64-65:

Անդրանցումայնությունը պայմանավորված է ժամանակի էքստատիկ բնույթով, որը ներկայության բուն բովանդակությունն է: **Գոյություն և ժամանակում** այն նկարագրված է որպես հոգափ ամբողջական կառուցվածք՝ երեք ժամանակային էքստագներով: Դրանցից յուրաքանչյուրն ունի որոշակի ուղղվածություն՝ էքստագի հորիզոնային<sup>150</sup> սխեմա: ժամանակին՝ որպես էքստագների միասնություն, համապատասխանում է հորիզոնային սխեմաների միասնությունը: Ժամանակը ձևավորում է արտակայող գոյության նախահասկացման հորիզոնը:

Գիտենք, որ ներկայությանը ի սկզբանե հատուկ գոյահասկացման մասին Գոյություն և ժամանակում խոսվել է բազմից: Բայց գործի երրորդ բաժնի խնդիրը ոչ թե այդ նախառեֆլեքսիվ գոյահասկացումն էր, այլ դրա փիլիսոփայական բացորշումը<sup>151</sup>:

Փիլիսոփայությունը, ինչպես և ամեն գիտություն, առարկայանում է արդեն նախօրոք տրվածի մեջ, գտնում է Ջայիեգերը<sup>152</sup>: Գոյության առարկայացումը հնարավոր է իրականացնել՝ միայն հաշվի առնելով անդրանցումը (տրանսցենդենցը), հետևաբար՝ փիլիսոփայությունը տրանսցենդենտալ գիտություն է: Մյուս կողմից, գոյության հասկանալիության հորիզոնը ժամանակն է, ուրեմն՝ փիլիսոփայությունը նաև տեմպորալ գիտություն է<sup>153</sup>:

**Բներնութարանության հիմնահարցերում** փորձարկվող նոր ռազմավարությունը, բնականաբար, տարբերվում է Գոյություն և ժամանա-

<sup>150</sup> «Horizontal» բառը որպես «հորիզոնային» բարձրանելով, շեշտում ենք, որ խոսքը ոչ թե «հորիզոնական – ուղղահայց» զոյլի բաղկացուցիչի մասին է, այլ «հորիզոն ունենալու»: Տե՛ս և M. Heidegger, “Die Grundprobleme der Phänomenologie”, in: GA, B. 24, էջ 429:

<sup>151</sup> Գյունտեր Ֆիզալը գտնում է, որ ներկայությունից դեպի փիլիսոփայական ավանդության հասկացում շարժվելու հայեցերյան ծրագրը ծագել է Արիստոտելի նախին դեռևս բանականների սկզբն կարողացած դասախոսություններից, որոնք նա Գոյություն և ժամանակը ծանունակ ծանունակ կորպորատ է հաստություն: Անդրադասալով Նիկոնարքոսի երկասում իմանական կարողությունների հասակարգմանը, Ջայիեգերն առանձնացրել է դրանցից երկուսը՝ գործնական խելքությունը՝ «ρήρονεσίς», որն ինքնին «հասկացող գործնություն» է, և իմաստությունը՝ «εσφίνια», որը կապված է խնդրի փիլիսոփայական իմաստավորման հետ: Չարքը ֆրոնեսիս-ից դեպի սովորական փիլիսոփայական ըմբռնում (տե՛ս G. Figal, Աշվ. աշխ., էջ 57–58):

<sup>152</sup> Տե՛ս և M. Heidegger, “Die Grundprobleme der Phänomenologie”, in: GA, B. 24, էջ 399:

<sup>153</sup> Ժամանակի գոյարանական ըմբռնումը ներկայականից տարբերենու համար Ջայիեգերն օգտագործում է ժամանակայնության լատինացված տարբերակը՝ «տեմպորալություն»: Տեմպորալությունը բնութագրում է ժամանակայնությունը՝ գոյության հասկանալիության հորիզոնը լինելու առումով: Տե՛ս և նույն տեղում, էջ 414:

Կում կիրառվածից: Տրակտատից գիտենք, որ Աեր-կայության սեփական սահմաններից դուրս գալը կապված էր նրա իրականացրած ձեռնարկի հետ՝ արտակայել նշանակում է «ձեռնարկել», ինքն իրեն արկանել որոշակի հնարավորության վրա: Նրանց, որ Աեր-կայությունն իր ձեռնարկն իրականացնում է ուրիշների կողքին և Աերաշխարհային գոյի մոտ, Զայդեգերը եզրակացնում է, որ Աեր-կայության նախահասկացումը վերաբերում է ոչ միայն իր արտակայությանը, այլև ուրիշների և Աերաշխարհային գոյի հասկացմանը: Դա նրան տալիս է բնության և համատեղ գոյության պատմության նախահասկացում: Առանձին թեմա է աշխարհի հասկացումը, քանի որ Վերջինիս գոյության ձևը օրյեկտների արկա գոյությունը չէ: Աշխարհը որպես այդպիսին պատկանում է Աեր-կայության արտակայական կառուցվածքին: Այն կա, քանի կա Աեր-կայությունը: Նետևաբար, աշխարհի հասկացումը՝ որպես Աեր-կայության հասկացում, ինքնահասկացում է: Ինքնությունը և աշխարհը փոխադարձ պատկանում են միմյանց՝ Աեր-կայության մեջ<sup>154</sup>: Ներկայության տրանսցենդենտությամբ պայմանավորված (*Գոյություն և ժամանակից մեզ հայտնի*) այս հանգանանքները, անշուշտ, հեշտացնում են անցումը դեպի գոյություն, բայց ինքնին Վերցրած բավարար չեն, քանի որ գոյերի և այլոց գոյության հասկացումն իր հերթին հնարավոր է դառնում շնորհիկ Աեր-կայությանը և՛ գլխից հատուկ որոշակի գոյահասկացման, որը և ենթակա է փիլիսոփայական բացորշման:

Ո՞րմ է Բներևութաբանության հիմնահարցելում այդ խնդրի լուծմանը միտված վճռական քայլը: Մենք հասկանում ենք գոյշ՝ այն արկանելով գոյության վրա, հիշեցնում է Զայդեգերը և եզրակացնում. գոյությունը հասկամալու համար այն պետք է արկանել ժամանակի վրա<sup>155</sup>:

Ի՞նչ է սա նշանակում: Ներ-կայությունը ինքան իրեն, այնպես էլ գոյշ հասկանում է՝ արկանվելով իր հնարավորությունների վրա, կամ, որ նույն բամն է, ձեռնարկելով իր հնարավորությունները: Իսկ ինչպես է գոյությունը արկանվում ժամանակի վրա: Եվ ո՞վ է արկանողը: Նորից Աեր-կայությունը՝ փոխելով հեռանկարը և որպես ձեռնարկ ունենալով ժամանակը, թե՝ հենց գոյությունը որպես այդպիսին: Գոյությունը ձեռնարկում է ժամանակը: Կրոյն՝ սա նշանակում է, որ ժամանակը գոյության հնարավորությունն է:

<sup>154</sup> Տե՛ս՝ ս նոյն տեղում, էջ 420-422:

<sup>155</sup> Նույն տեղում, էջ 396, 397:

Մոտ երկու ամիս կորցնելով *Բներևութաբանության հիմնահարցերում* ձեռնարկված նախագծի տրամաբանությունը գոնե հատվածաբար՝ մեկ-երկու էջում վերարտադրելու վրա, տողերիս հեղինակը չի հաճարձակվում պնդել, որ ըմբռնել է Յայդեգերի առաջարկած լուծման խորքային իմաստը: Յեղինակը հույս ունի, որ այդ տեղատվության պատճառները միայն սուբյեկտիվ չեն: Խնդրի բարդությունը պայմանավորված է նրանով, որ հենց այստեղ է փորձարկվել այն գլխապտույտ ցատկը, որի միջոցով սեփական գոյությունը հասկացող ներկայությունը պետք է հայտնվեր «հայելուց անդին», հասնելով գոյության գոյաբանական հասկացմանը:

Դանգույցը մասամբ կազմագերծելու համար օգտակար է նորից անդրադառնալ «տրանսցենդենտ»-ի հայդեգերյան բացատրությանը՝ քննելով նրա հարաբերությունը գոյություն և ժամանակում կենտրոնական տեղ զբաղեցնող «տրանսցենդենտալ հորիզոն»-ի հասկացության հետ:

Եթե Յայդեգերը *Բներևութաբանության հիմնահարցերում* հայտարարում է, որ «տրանսցենդենտ»-ը ոչ թե օբյեկտի, այլ սուբյեկտի բնութագիրն է, նա գիտակցական հակասության մեջ է մտնում «ավանդական», այսինքն՝ կանույան ըմբռնման հետ, քանի որ լույսայն անտեսում է կանույան կրիտիցիզմի կենտրոնական և սկզբունքային բաժանումը՝ *տրանսցենդենտի* (այնկողմնայինի) և *տրանսցենդենտալի*:

Տրանսցենդենտալն, ինչպես գիտենք, այն է, ինչը ոչ միայն հնարավոր է դարձնում առարկաների մեր փորձառությունը, այլև միևնույն ժամանակ ծնավորում է հնարավոր փորձառության առարկաները<sup>156</sup>: Այդ՝ կանույան իմաստով ըմբռնված «ապրիորին» ոչ թե անդրանցումային, այլ սահմանային բներևույթ է, քանի որ թույլ չի տալիս իրենից այն կողմ անցնել<sup>157</sup>: Գերմանացիք այդ հանգամանքը բնորոշում են որպես «*Unhintergehbarkeit*» կամ «*Unhinterherfragbarkeit*», որն անշուշտ չի նշանակում, որ այդ մասին հնարավոր չէ հարց տալ, այլ որ հարց տալիս մենք մնում ենք մույն հասկացությունների շրջանակում: Ժամանակակից պատկերացումների տեսակետից այդպիսի «տրանսցենդենտալ ապրիորի» կարող է համարվել լեզուն (ոչ առանձին լեզուները, այլ

<sup>156</sup> Դամտ. E. Martens, H. Schnädelbach (Hg.), *Philosophie. Ein Grundkurs*, B. 2, Ro-wohlst, 1998, էջ 550:

<sup>157</sup> Այդ երևույթի մասին մեճը խոսել ենք վերը՝ «Միջանկյալ դիտարկում՝ ի՞նչ կա փակագծի ներսում» հատվածում, էջ 152-157:

լեզվականությունը որպես այդպիսին՝ վերջինս անանցանելի է այն իմաստով, որ նրա մասին որևէ բան ասելու համար էլ լեզու է պետք:

Դժվար չէ համոզվել, որ չնայած Կանտից Յուսեռլ և Յուսեռլից Յայնեգեր անցած ճանապարհին ապրած կերպափոխություններին՝ տրանսցենդենտալի՝ գոյություն և ժամանակում օգտագործվող հասկացությունը պահպանել է կանտյան ավանդույթի հետ իրեն կապող պորտալարը. ժամանակը հայնեգերյան նախագծում ներկայանում է որպես այն, ինչը ոչ միայն հնարավոր է դարձնում գոյության մեր փորձառությունը, այլև կազմում է վերջինին բովանդակությունը: Այդ իմաստով այն հանդես է գալիս որպես նախառեշլեկտիվ գոյության «արտօնություն»:

Մյուս կողմից, հասկանալի է, որ ժամանակի պես յուրահատուկ երևույթի «բներևութարանական/գոյարանական/հերմենևատիկական» նկարագրությունը (մենք հիշում ենք, որ դա միևնույն բանն է<sup>158</sup>) ակնառու դժվարությունների հետ է կապված: Չէ՞ որ ժամանակը, որ ընթացք է, չի կարող կառուցավորվել՝ կանտյան, կամ հայվել՝ հուսեռյան, կատեգորիալ արտօն-ների նման: Ուրեմն, պատահական չէ, որ Յայնեգերի ծերնարկում տրանսցենդենտալությունն իր ժամանակայնության մեջ այլևս չի ներկայանում որպես «արտօն» բարիս ընդունված՝ կատեգորիալ իմաստով, այլ որպես «հորիզոն», որում քայլ առ քայլ ի բաց էր դրվելու գոյության ֆենոմենը: Յուսեռլի բներևութարանությունից սերող այդ փոխարերությունը, իսկ «հորիզոնն» անկասկած փոխարերական եղու է, կոչված է ցույց տալու գոյության մեր փորձառության մեջ առկա պոտենցիալ միտումները, որոնցից ի հայտ են գալիս նոր ակտուալ ինտենցիաների հնարավորությունները: Քանի որ վերջիններն իրենց հերթին նոր հիլումներ են առաջ բերում և այդ ընթացքն անսպառ է, ապա վերջնական վիճակն այստեղ անհասանելի է հորիզոնի նման<sup>159</sup>: «Ամեն մի փորձառություն հղում է որոշակի տիպայնության, որում հնարավոր է նրա շարունակությունը»<sup>160</sup>:

Այդպես ընթանված «տրանսցենդենտալ հորիզոնում» հավասարապես ծանաչելի են ինչպես «փորձառությանը ձև տալու, այն կազմավորելու» կանտյան, այնպես էլ «սեփական սահմաններից դուրս գալու» Յայնեգերի ներմուծած գործառույթները:

<sup>158</sup> Յնձտ. սույն գոյության «Բներևութարանությունը, գոյարանությունը և հերմենևատիկան» դրվագը, էջ 175-183:

<sup>159</sup> Յնձտ. *Husserl. Ausgew. und vorgestellt von U. Steiner*, München: Diederichs, 1997, էջ 516:

<sup>160</sup> Նույն տեղում:

Չեզնամուխ լինելով երրորդ բաժնում նախատեսված անցման նկարգործությանը, Յայդեգերը ստիպված է լինում առավելապես շեշտել անդրաման համգամանքը: Եվ պատահական չէ, որ Գոյություն և ժամանակում նա բնորոշում է ներ-կայությունը որպես «տրանսցենդենտ», իսկ դրա հետ կապված փիլիսոփայությունը որակում է «տրանսցենդենտալ», տեղ չքողնելով այդ եզրի դասական օգտագործման համար: Այդ երկու՝ ավանդաբար տարանջատված եզրերի «փոխախտոտումը» (Kontamination), անշուշտ, գիտակցված լուծում է: Յենց այդ համադրական՝ «տրանսցենդենտ-տրանսցենդենտալ» պատկերացումն է, որ Յայդեգերն օգտագործում է որպես հիմք՝ ներ-կայությունից գոյություն կատարվող թրիչը բացատրելու համար:

Այս արհեստական թվացող կառույցը կայունացնող ատաղձը ժամանակի՝ որպես գոյարձանության տրանսցենդենտալ հորիզոնի մասին հայդեգերյան պատկերացումն է: Յորիզոնի «շարժականությունը» ընթացք է հաղորդում ժամանակի «տրանսցենդենտալ ապրիորի»-ին, ի ցույց դնելով նրա «տրանսցենդենտությունը»:

Այնուամենայնիվ, այդ մեխանիզմը նույնական արդյունք չի բերում, քանի որ Յայդեգերը բախվում է բներևութաբանության մեջ ապրիորին տված իր մեկնաբանությունից անխուսափելորեն բխող դժվարություն-ներին:

Դիշում ենք, որ հայդեգերյան ապրիորին սուբյեկտիվն ու օբյեկտիվը միավորող ունիվերսալիա է: Այն հիմնավորված է որևէ գոյի մեջ, որում ինքն-իրեն-ցույց է-տալիս: Դասական օրինակը դեղին աթոռում երևակվող դեղնությունն է: Բայց, մի քան է աթոռի դեղնությունը, բոլորովին այլ՝ ժամանակայնությունը՝ որպես ապրիորի: Պատահական չէ, որ Բներևութաբանության հիմնահարցելում Յայդեգերը հղում է կատարել ապրիորիի բարացի իմաստին՝ «այն, ինչ ավելի շուտ է», որը փաստորեն ժամանակի սահմանումն է: Այսինքն՝ ոչ թե ժամանակն է բնորոշվել որպես ապրիորի, այլ ապրիորին է սահմանվել որպես ժամանակային:

Սրանով իմացության պայմանները փոխվում են: Անկախ նրանից, որ դեղնության «ունիվերսալիան» աթոռի պարագայում դիտարկվում է հավասարապես որպես «աշխարհի» և «մեր ընկալման» փաստ (օբյեկտիվ և սուբյեկտիվ՝ միևնույն ժամանակ), դեղնությունն ընկալող սուբ-

յեկտը չի նույնանում դեղին աթորի հետ<sup>161</sup>: Այնինչ ժամանակային ապ-ռիորիին կրկնակիորեն (որպես այն ծևավորող և հասկացող) հասու ներ-կայությունը մենք ինքներս ենք: Սրա հաշվին նվաճված նախնական գոյահասկացման շնորհիվ է, որ Յայեգերին հաջողվում է վերառել «ներսի» և «դրսի» հարաբերման խնդիրը: Այս պրագմատիկական դաշտում է լուծվում հարցն այն մասին, թե «ինչպե՞ս է ընդհանրապես հնարավոր, որ բացարձակ դիրքորոշման այդ ոլորտը՝ զուտ գիտակցությունը, որը չէ՝ որ պետք է բացարձակորեն անջատված լինի ողջ տրանսցենդենտից, միևնույն ժամանակ միավորված է իրականության հետ»<sup>162</sup>:

Երբ Յայեգերը գոյությունը հասկանալու համար առաջարկում է այն արկանել ժամանակի վրա, կամ այլ խոսքով ասած՝ ծեռնարկել ժամանակը, նա նախանշում է ներ-կայության նախնական գոյահասկացումից գոյությանն անցնելու մի ճանապարհ, որի հանգունակը, ըստ Էության, «ներսը» և «դրուսը» միավորող Մյորիուսի ժապավենն է: Սակայն պարզվում է, որ գործնականորեն վերառնված խնդիրը տեսական բացորոշման չի ենթարկվում<sup>163</sup>: Ծիշտ է, երկու դեպքում էլ ժամանակը հանդես է գալիս որպես գոյության հասկացման տրանսցենդենտալ հորիզոն, բայց ներ-կայության ժամանակայնությունը, որը «միշտ իմն» է (je meinige), չի նույնանում գոյության ժամանակայնության հետ:

Յայեգերին պետք է գալիս ժամանակի նոր ընթանում, որը սակայն բաղված չէր ներ-կայության անալիտիկայից: «Յայելուց անդին» թափանցելու համար նա ստիպված է լինում անցում կատարել փիլիսոփայական ավանդույթին: Փոխվում է նաև մեթոդը՝ նախառեֆելեկտիվ գոյության բներևութաբանական նկարագրությունը փոխարինվում է ավանդույթի հերմենևտիկական հասկացմանը: Եվ որքան էլ ասենք, որ

<sup>161</sup> Եթե մենքը փորձի համեմատել մեր ընկալումը հեռուստախցիկից էկրանին փոխանցված պատկերի հետ, ապա տեղին կլինի հարցն այն մասին, թե «ո՛ վ է դիտում այդ հեռուստույցը»:

<sup>162</sup> Տե՛ս «Անձնավորությունը որպես իմաստ իմանցնալ գոյ» հատվածի բնարանը, էջ 162:

<sup>163</sup> Նման իրավիճակում Յայեգերի մեջ ժամանակակիցը և հակոտնյամ՝ Լյուդվիգ Վիտգենշտայնը, հարցը «լուծել է», ընդհանրապես մերժելով տեսչկամ ընդհանրացման հնարավորությունը և առաջ բաշելով իր հոչակավոր թեզը՝ «Մի հաղորդեք նշանակության մասին, այլ հաղորդեք օգտագործման մասին»: Յայեգեր – Վիտգենշտայն առնչությունների մասին տես ս U. Tietz, Heidegger und Ludwig Wittgenstein. Diesseits des Pragmatismus - jenseits des Pragmatismus, in: D. Thomä (Hrsg.), Heidegger-Handbuch, Leben – Werk – Wirkung, Verl. J.B. Metzler, Stuttgart – Weimar, 2003:

հայդեգերյան մտքի շրջանակներում հերմենևստիկան և բներևութաբանությունը նույն բանն են, ամեն մի առանձին դեպքում դրանց համատեքստային տարրերությունն ակնհայտ է:

*Բներևութաբանության հիմնահարցերում Հայդեգերը հրաժարվում է Գոյություն և Ժամանակի ժամանակայնության եռամաս բաժանումից և Ենում է Արիստոտելի՝ գոյության մասին պատկերացումների յուրահատուկ մեկնաբանությունից: Եթե ներկայությունը նկարագրելիս ժամանակի հիմնարար մոդուսն ապագան էր (ժամանակը ժամանում էր ապագայից), ապա գոյության բնութագրի հիմքում ընկած է ներկայությունը՝ պրեզենց (Präsenz)<sup>164</sup>: Վերջինս նույնական չէ ներկային, այլ որպես «այդ էքստազի հորիզոնային սխեմայի հիմնարար բնորոշում՝ մյուս մոմենտների հետ մեկտեղ, կազմում է ներկայի անբողջական կառուցվածքը»<sup>165</sup>, այսինքն՝ որոշ իմաստով «պրեզենց»-ը ընդգրկում է նաև անցյալն ու ապագան:*

Ծանրության կենտրոնի տեղափոխումը ապագայից ներկա Գյունտեր Ֆիգալը կապում է «առարկայացման» պահանջի հետ՝ տեմպորալությունը փիլիսոփայության ժամանակն է, վերջինիս արդյունքը «գոյության առարկայացման է», դրամով է, որ գոյաբանությունը գիտություն է դառնում: Եթե անտիկ գոյաբանությունը գործ է ունեցել «առարկաների» հետ, ապա հայդեգերյան տարրերակում դա արտահայտվում է գոյության «լեզվականացման» մեջ<sup>166</sup>:

*Գոյություն և Ժամանակի առաջին մասի երրորդ բաժնի նոր խմբագրություն իրականացնելու Բներևութաբանության հիմնահարցերում կատարած փորձի ամհաջողությունը հավաստված է վարպետի վկայություններում: Զառանանաք, որ մարդուրօյան դասախոսությունների հետ կապված երկու հղումները ծեռագրային էին, այսինքն՝ մասնավոր բնույթ էին կրում: Այնինչ 1953 թվին, Գոյության և Ժամանակի յոթերորդ հրատարակության առաջաբանում Հայդեգերը, արձանագրելով, որ քսանինգ տարվա ընդհատումից հետո գրի շարունակությունն այլև հնարավոր չէ, գոյության մասին հարցի հետագա պարզաբանման հա-*

<sup>164</sup> Այստեղ Հայդեգերը շարունակում է գոյաբանական բներևությները լատինացված եզրերով նշանակելու իր միտումը: Նկատենք նաև, որ վերն օգտագործած «ներկայություն»-ը (Anwesenheit) կապ չունի գժիկով բաժանված «ներկայության» հետ, որով ներք նշանակում ենք «Dasein»-ը:

<sup>165</sup> Տե՛ս M. Heidegger, “Die Grundprobleme der Phänomenologie”, in: GA, B. 24, էջ 435:

<sup>166</sup> Տե՛ս G. Figal, Աշվ. աշխ., էջ 92:

մար խորհուրդ է տալիս դիմել իր 1935-ի դասախոսությանը՝ «Մետա-ֆիզիկայի ներածությանը», որևէ կերպ չհիշատակելով Բներևութարա-նության հիմնահարցերը<sup>167</sup>:

Ժամանակայնության «ներ-կայական» մոդելը պատմափիլիսոփա-յականի հետ համարելու մեկ այլ ուշագրավ փորձ է հանդիսացել Կանտի գիրքը<sup>168</sup>: Խնդիրը նույն էր. այնպէս մոդիֆիկացնել Գյոյություն և ժամանակում նվաճված ժամանակայնության հղացքը, որպեսզի այն կիրառելի լինի նաև ավանդական գոյաբանությունների և, ի վերջո, «բուն գոյության» հասկացման համար:

1927/28 թվականներին, Զուտ բանականության քննադատությանը նվիրված դասախոսության ժամանակ, Յայդեգերն ուշադրություն է դարձել «սխեմատիզմի» մասին հայտնի պարագրաֆիմ<sup>169</sup> և նրանում նմանություն է տեսել կատեգորիաների պրոբլեմի, որը փաստորեն ա-վանդական մետաֆիզիկայում գոյության պրոբլեմն է, և ժամանակի թներևույթի միջև<sup>170</sup>: Նա հույս է ունեցել, որ «արտադրողական երևա-կայության» կանույան հղացքը, ըստ որի՝ ժամանակային սխեման «տեսանելի» («հայելի») է դարձնում կատեգորիաները, հիմք կիանդի-սանա ներ-կայության վերլուծության արդյունքում բացողոշված երեք ժամանակային արտակայումների («էքստագների») մասին պատկերա-ցումը գոյաբանական նակարդակի բարձրացնելու համար:

Այս ծեռնարկը նույնպես հաջողությամբ չի պահպել: Մահվանից մի քանի տարի առաջ՝ 1973-ին, Կանտի մասին գրքի չորրորդ հրատարա-կության առաջաբանում Յայդեգերը մեջբերել է դեռևս երեսնականնե-րից պահպանված իր երկտողը, ուր խոստովանում էր, որ Կանտի տեքստին իր դիմելը մի փախուստ է եղել, որի պատճառն առաջին մա-սի երրորդ բաժնի տապալվելն էր և հասարակայնության կողմից ողջ տրակտատի շիասկացվելը, որ ակնհայտ էր դարձել արդեն 1929-ին: Զուտ բանականության քննադատության մեջ ներկայացված «ժամա-նակի սխեմատիզմի» մեկնության միջոցով նա փորձել է պարզաբանել

<sup>167</sup> St. M. Heidegger, *Sein und Zeit*, էջ VII:

<sup>168</sup> «Կանող և մետաֆիզիկայի պրոբլեմը», տե՛ս ծան. 144:

<sup>169</sup> Ի. Կանտ, «Դատողականության զուտ հասկացությունների սխեմատիզմի մասին», Զուտ բանականության քննադատություն, էջ 167-175:

<sup>170</sup> Կազմ գոյության կանույան մեկնաբանության և իր զարգացրած տեմպորալ պրոբլե-մատիկայի միջև Յայդեգերն արձանագրել է նաև «Յերմենստիկայի հիմնահարցերում»՝ տե՛ս M. Heidegger, “Die Grundprobleme der Phänomenologie”, in: GA, B. 24, էջ 445:

Գոյություն և ժամանակի նյութը, բայց դա չի հանգեցրել նոր հայտնագործությունների և խարարել է սեփական ուղղությունները<sup>171</sup>:

Խոսելով հայդեգերյան հղացքում «ներկայության անալիտիկայի» դերի մասին, Ֆիզալն ուշադրություն է հրավիրել այն բնորոշող «նախապատրաստող» ածականի երկիմաստության վրա, որը մի կողմից ենթադրել է տալիս, որ առանց ներկայության վերլուծության նախապատրաստական փուլի մնացած մասերը գրվել չեն կարող, մյուսից հիշեցնում է, որ այդ փուլը «միայն նախապատրաստող է», հետևաբար չի վերաբերում բուն գոյության մասին փիլիսոփայական հարցադրման եւրեանը<sup>172</sup>: Եթե վերջին ենթադրությունը ճիշտ է, ապա ի՞նչ է մնում «անալիտիկայից» գոյության մասին հարցի համատեքստում:

Քիմնական խմնիղը, որ լուծում է ներկայության նախապատրաստող վերլուծությունը, ներկայության արթունության ապահովումն է, որն՝ ինչպես գիտենք, հանդես է գալիս որպես հասկացման անհրաժեշտ պայման: Սա հիրավի նուրբ պահ է, քանի որ նախապատրաստող վերլուծությունը ոչ միայն որոշակի գիտելիք է տալիս ներկայության փաստականության մասին, այլև փաստացիորեն կերպափոխում է հայդեգերյան մտքին հետևողի տրամակայությունը (Befindlichkeit), նրան դարձնելով ընկալունակ՝ ինչպես գոյահասկացման, այնպես էլ ավանդության կենդանի հասկացման համար: Պատահական չէ, որ 1929-ի «ի՞նչ է մետաֆիզիկան» դասախոսության մեջ Հայդեգերը շեշտել է, որ «մետաֆիզիկական հարցումը պետք է արվի ամբողջից և հարցում անող ներկայության էական վիճակից ելնելով»<sup>173</sup> (ընդգծ.՝ Ա. Ո.):

Հասկանական է, սակայն, որ արթունությունը որպես վիճակ ոչ միայն հետազոտության պայմանն է, այլև ներկայության կառուցվածքային մոլոննոր, որը կապված է ժամանակայնության մասին որոշակի պատկերացման հետ: Բայց հենց դա է, որ հետագա զարգացում չի ստացել: Ժամանակի հղացքը չի վերցվել Գոյություն և ժամանակից: Ավելին՝ վերոհիշյալ «ի՞նչ է մետաֆիզիկան» դասախոսության տեքստում գոյությունը բնորոշվում է ոչ թե ժամանակի, այլ «ոչնչի» և այն ի բաց դնող «ահի» հասկացությունների միջոցով, իսկ Մետաֆիզիկայի ներածությունում, որտեղ, ըստ մտածողի, «գոյության մասին հարցը իր հետա-

<sup>171</sup> Տե՛ս M. Heidegger, *Kant und das Problem der Metaphysik*, էջ XII-XV:

<sup>172</sup> Տե՛ս G. Figal, Աշկ. աշխ., էջ 52:

<sup>173</sup> M. Heidegger, “Was ist Metaphysik?”, S. 103.

գա մշակումն է ստացել», ժամանակի խնդիրը, որոշ անփոփիչ դիտողություններ չհաշված<sup>174</sup>, գործնականում չի արձարձվել:

Յայդեգերի սկզբնական նախագիծն այլևս պահպանելի չէր: Այլ բան է, որ հայդեգերյան գլուխգործոցի նշանակությունը չի սահմանափակվել «գոյության նախն հարցի» շրջանակներով: *Ոչ փիլիսոփայական ներ-կայության* հիմնարար վերլուծությունը *Գոյություն և ժամանակում* մնում է Յայդեգերի ամենամեծ պատմաներգործական հետևանքներ ունեցող նվաճումը: Մյուս կողմից, այն նաև «ծախորդություն էր», քանի որ մեծ դժվարությունների առջև կանգնեցրեց ավանդության կազմագերծման նրա ծրագիրը<sup>175</sup>:

<sup>174</sup> Sti ՚ u M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, tq 156-157:

<sup>175</sup> Կըմստ. G. Figal, նշված աշխ., tq 62:

## ԱՔՑԱՆՈՒՄ

### Ի՞նչ է ժողովրդի բախտը

Սլավոյ ժիմեկը, արձանագրելով Գոյություն և Ժամանակի վերջին գլուխներում տեղի ունեցած «խնդրահարույց կարծ միացումն անհատական և կոլեկտիվ ճակարդակների միջև», հայդեգերյան գլուխգործոցի այդ հատվածները համարել է ոչ պարտադիր, ենթադրելով, որ դրանց հեռացումը չէր խաթարի տեքստի օրգանական ամբողջությունը<sup>176</sup>:

Թեզն ավելի շուտ «սադրիչ» է, քան համոզիք: Որ տրակտատի § 74-ում «ժողովրդի բախտի» գաղափարը ներմուծելով, Դայդեգերն իսկապես բարդությունների առաջ է հայտնվել, անկասկած է: Բայց այդ բարդությունները հարցականի տակ չեն դնում ժողովրդի պատմական գոյության թեմայի օրգանական կապը տրակտատի պյորթեմատիկայի հետ:

Պատմության պյորթեմը, որն ի սկզբանե դրված է եղել հիմնարար գոյարանության հիմքում<sup>177</sup>, առերսված էր կոմս Պաուլ ֆոն Յորքի և Վիլհելմ Դիլբայի գաղափարներին: Դայդեգերյան նոտեցումը որակապես գերազանցել է իր նախորդների պատկերացումները շնորհիվ այն բանի, որ պատմության խնդիրը հաստատել է անհատական ներկայության նախասկզբնական պատմականության ամուր հիմքի վրա: Զաջորդ բնական քայլը պետք է լիներ պատմական հետազոտության իսկական առարկան՝ ժողովրդի ներ-կայությունը նվաճվածի լույսի ներքո վերահնաստավորելը: Առանց այդ հարցադրման մինչ այդ արվածը կմնար անհակասական, ինքնապարփակ, բայց և անավարտ «ամբողջություն»:

Ես հակված եմ ենթադրելու, որ սկզբնական ձեռնարկում ժողովրդի ներ-կայությանը յուրահատուկ կամքի գործառույթ է վերապահված եղել՝ հիմնավորելու համար նախատեսված անցումը անհատական ներ-կայությունից դեպի գոյությունն ընդհանրապես:

<sup>176</sup> «Պատմականությանը նվիրված եղրափակիչ գլուխները կարող են միայն որպես արհետականորեն ավելացված ընկալվել: Կարծու թե մի հապշտապ փորձ արված լինի, աղոյն ավարտվածին ևս մեկ՝ պատմության կոլեկտիվ ծերերն նվիրված բնագավառ ավելացնել, որ բացարձակապես չի համապատասխանում նախասկզբնական նախագծին» (S. Žižek, *Die Tücken des Subjekts*, Suhrkamp, Ffm., 2001, S. 35):

<sup>177</sup> Այդ մասին տե՛ս H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, էջ 242:

Մյուս ենթադրությունս այն է, որ հայդեգերյան ձեռնարկի ծախողումը որոշ կապի մեջ է նրա՝ մահվան հասկացության յուրահատկության հետ: Վարկածին հիմքն այն իրողությունն է, որ Հայդեգերը իր ողջ ստեղծագործության ընթացքում գոյության իմաստը, որպես կանոն, մեկնել է՝ չգոյության համատեքստից ելնելով: Եթե Գոյությունն և Ժամանակում մարդկային ներկայության գաղափարը կազմավորվել է անհատական մահվան անշրջանցելիության փաստի փիլիսոփայական իմաստավորումից ելնելով, ապա Մետաֆիզիկայի ներածության մեջ գոյությունը որպես այդպիսին ըմբռնված է ոչինչի հետ այն առնչելու միջոցով<sup>178</sup>: Ուրեմն իմաստ ունի հարց տալ, թե ինչո՞ւ մտածողը տրամաբանական ավարտին չի հասցել, գոնե որպես հնարավորություն, կոլեկտիվ ներկայության բացարձակ ժխտնան գաղափարը: Ինչո՞ւ է Գոյությունն և Ժամանակում բացակայում կոլեկտիվ մահվան հասկացությունը:

Գիտենք, որ մահվան պերսոնալիստական հեղացքը, որը Հայդեգերն իր հիմնարար երկում զարգացրել է զարմանալի խորությամբ և մանրակրկիտությամբ, կրկնակի ծագում ունի: Այս սերում է Կիրկեգորից և Դիլբայից: Ներկայության բացության էքզիստենցիալ լայրմուտիվը, իհարկե, կիրկեգորյան ժառանգությանն է պատկանում: Մահը՝ որպես կյանքի ամբողջականության անհրաժեշտ պայման, դիլբայան գաղափար է: Կենսագրության ամբողջականացումն այստեղ կապված է կյանքի մասը նրա ամբողջից հասկանալու հերմենևտիկական պահանջի հետ: Այս երկու մոտեցումների փոխառնչվածությունը կասկածից վեր է: Գոյությունն և Ժամանակում զարգացված մահվան բներևութարանության կուր կառույցում տեսանելի ճեղքեր չկան: Դրանք ի հայտ են գալիս միայն ժողովորի ներկայությանը նվիրված հատվածներում, ուր Հայդեգերը մի անհրականանալի փորձ է կատարում՝ ժողովորի կոլեկտիվ ներկայության էքզիստենցիալ ամբողջությունը հիմնավորել միջնորդավորված ծևով՝ կոլեկտիվի առանձին անդամների անհատական մահվան ամխուսափելիության միջոցով:

<sup>178</sup> «Միայն երբ ես հասկանում եմ ոչինչը կամ ահը, ես ունեմ հնարավորություն հասկանալու գոյությունը: Գոյությունն անհասկանալի է, եթե անհասկանալի է ոչինչը» («Davoser Disputation zwischen Ernst Cassirer und Martin Heidegger», in: M. Heidegger, *Kant und das Problem der Metaphysik*, S. 283-284): Դնմտ. նաև՝ «Այն, որ գոյության մասին հարցը կարող էր դրվել՝ ոչինչի մասին հարցից ելնելով, ենթադրում էր մոտածողություն ոչինչի մասից՝ խնդիր, որում ծախողվել էր մետաֆիզիկան», տես ս. H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, էջ 245:

Խճողումն իրեն զգացնել է տալիս «պատմականությանը» նվիրված բաժնի հենց սկզբում: Դրան նախորդող ողջ շարադրանքից հայտնի էր, որ մահվան դեմ ի բաց դրված անհատական ներկայությունը իսկական է, իսկ «անդեմ բոլորի» կոլեկտիվ գոյակերպը՝ անհսկական: Այժմ ընթերցողին կոլեկտիվ գոյության երկու կերպերի մրցակցություն է առաջարկվում՝ «բոլորինը»՝ անհսկական, և ժողովրդինը՝ իսկական: Ստոք ֆիգուրը, որով Յայդեգերը պերսոնալիստորեն ըմբռնված ներկայությունն ընդգրկում է ժողովրդական կոլեկտիվի մեջ, ավելի քան հետևողական է: Նրա ելակետը անհատական ներկայության «աշխարհ արկանված լինելն» է: Մարդը միշտ գտնվում է շատ որոշակի մի աշխարհում և հարաբերվում է ուրիշների հետ: Դրանով է պայմանավորվում նրա պատմական՝ «ավանդված» փաստականությունը: Ներկայությունը հանձն է առնում իր ժառանգությունը<sup>179</sup>: Նրանց, ովքեր «միայն-իրենց»՝ անհատական ընտրությունը ընդհանուր պատմական եղելությունից ելնելով են կատարում, Յայդեգերն անվանում է սերունդ: Վերջինս բնորոշվում է Դիլթայի սահմանմանը հղում կատարելու միջոցով<sup>180</sup> և ըմբռնվում է որպես՝

Անհատների սերտ շրջան, որոնք իրենց վրա ազդեցություն ունեցող դարաշրջանում առաջ եկած միևնույն մեծ հանգամանքներից և փոփոխություններից իրենց կախվածության շնորհիվ, չնայած մյուս առկա գործնների տարբերությամբ, միավորված են մեկ համասեռ ամբողջ մեջ<sup>181</sup>:

Այստեղ արդեն սկսում է երևան գալ Կիրկեգորի և Դիլթայի դիրքերի անհամատեղելիությունը. չէ՞ որ առաջինը ելնում է անհատի և Աստօն միջև անմիջական կապի պարադոքսալ հնարավորությունից, իսկ երկրորդը հակված է շեշտել պատմական աշխարհի հիմքում ընկած, մշտապես ընդլայնվող և ճյուղավորվող հոգևոր փոխկապակցությունները, այսինքն՝ կենտրոնանում է միջնորդավորված կապերի վրա: Յարցն այն մասին, թե «ինչպես է հնարավոր անհատական ներկայության միայն իր, այսինքն՝ եղակի և անկրկնելի որոշումները բերել

<sup>179</sup> Տե՛ս M. Heidegger, *Sein und Zeit*, էջ 383:

<sup>180</sup> Նույն տեղում, էջ 385:

<sup>181</sup> W. Dilthey, “Über das Studium der Geschichte der Wissenschaften vom Menschen, der Gesellschaft und dem Staat”, in: Wilhelm Diltheys Gesammelte Schriften, B. 5, Göttingen, 1985, S. 37.

հանգեցնել սերնդի համասեր ամբողջությանը», մնում է անպատճախան, Յայդեգերին պարտադրելով այն հանդիսավոր մարգարեական խոսելակերպը, որին ծանոթ ենք նրա ուշ գործերից:

*Ընորիիվ իրենց միևնույն աշխարհում համատեղ գոյության և որոշակի հնարավորությունների հանդեպ բացության՝ ծակատագրերն արդեն նախապես ուղղորդված են:*

Բայց եթե ծակատագրակերպ ներ-կայությունը՝ որպես աշխարհում գոյություն, էապես արտակայում է Ուրիշի հետ համագո, նրա եղելությունը համատեղ եղելություն է և բնորոշվում է որպես բախտ...<sup>182</sup>:

Ժողովորի բախտի հասկացությունը ներմուծելով<sup>183</sup>, Յայդեգերը ցանկանում է կոլեկտիվ (որոշ իմաստով՝ անմահ) ներկայությանը հաղորդել այն նույն էքզիստենցիալ իսկականությունը, որն անհատական ներ-կայությանը հատուկ է եղել ի սկզբանե՝ նրա՝ դեպի մահը շարժման անխուսափելիության շնորհիվ: Արդյունքում, կոլեկտիվ մակարդակի վրա փոխատեղում է կատարվում՝ բախտը գրավում է մահվան տեղը և ստանձնում նրա տոտալացնող գործառույթը:

Յարցն այն է, սակայն, արդյո՞ք հնարավոր է բախտին այնպիսի մի պարտադրողական ուժ վերագրել, որ համեմատելի լիներ մահվան անխուսափելիության հետ: Արդյո՞ք գոյություն ունեն այնպիսի իրական մեխանիզմներ, որ ի վիճակի լինեն «միայն իր» ուղղությամբ շարժվող ներկայությունները հավաքել-փնջել մեկ կուռ միասնականության մեջ: Ինչպես կարող է անհատական՝ այս-ինքը գոյությունը կարծ միացում առաջանել կոլեկտիվ ներ-կայության բախտի հետ:

Ի սկզբանե պարզ է, որ ակնկալվող մերձեցումը բուն ժողովրդական ակունքներին չէր կարող իրականացվել զուտ ինտելեկտուալ մշակութաբանական-հասարակագիտական աշխատանքի միջոցով՝ ոչ չետափիզիկայի պատճափիլիսոփայական կազմաքանդման ծևով, որի բազմաթիվ օրինակներ գտնում ենք Յայդեգերի երկրորդ շրջանի

<sup>182</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, S. 384.

<sup>183</sup> «Քախս» բառը (Geschick) Յայդեգերն օգտագործում է ժողովրդի եղելությունը նշանակելու համար, այն դեպքում, եթե անհատական ներ-կայության համատեքսում գերադասում է խոսել «ծակատագրի» մասին (Schicksal): Մրանց իմաստային տարբերության մասին տե՛ս H. Ruin, “Ein geheimnisvolles Schicksal – Heidegger und das griechische Erbe”, in: *Heidegger und die Griechen*, ed. by M. Steinmann, Klostermann, Ffm., 2007, էջ 29:

ստեղծագործություններում, ո՞չ էլ այն բանասիրական-փիլիսոփայական վերլուծության ոգով, որ Յայդեգերն իրականացրել է *Սետաֆիզիկայի ներածության մեջ*<sup>184</sup>:

Մտածողի խոսքը սեփական գոյութունն ինքնուրույն ձեռնարկելու այնպիսի էքզիստենցիալ գործողության մասին է, որով ժողովրդի բախսն ընտրվում է որպես սեփական ճակատագիր:

Այստեղ տեղին է հիշեցնել, որ «բախս» ասելով Յայդեգերը նկատի չունի մարդու ենթարկեցումը կույր անհրաժեշտությանը՝ «ֆատումին»: Խոսքը «ճակատագրականի իրական և ազատ իմաստի»<sup>185</sup> մասին է, ահոելի և սահմանադիր նախասկզբնական եղելության, որին տրվում է մահվան հանդեպ ազատորեն բացված ներ-կայությունը<sup>186</sup>:

Եղելությանը «տրված» լինելը, որը միևնույն ժամանակ ստիպողականություն և հոժարականություն է ենթադրում, Յայդեգերը նշանակում է «überliefert <sein>» բառով, որը «համձնված», նույնիսկ «մատակարարված» լինելու իմաստների հետ մեկտեղ խաղի մեջ է նտցնում «ավանդությունը» (Überlieferung), որին «ավանդված» է ներ-կայությունը: Ներ-կայությունը հանձն է առնում պատմական ավանդությունը որպես այնպիսի ճակատագրական հնարավլորություն, որը միևնույն ժամանակ և «ժառանգված» է, և «ընտրված»<sup>187</sup>:

Սրանք են այն միջոցները, որոնց օգնությամբ Յայդեգերը ձգտում է միավորել անհատական և կոլեկտիվ ներ-կայությունները, վերառելով անհատական ազատության և ժողովրդի միասնության միջև առաջ եկող ակնհայտ հակասությունը: Որքանո՞վ համոզիչ է այդ լուծումը:

Որ պարտադրված ընտրությունը կարող է նաև ազատ լինել, մեզ հայտնի է աստվածաբանությունից: Այդ ավանդույթին է պատկանել մարդու մեջ ներդրված «աստվածային կայծի» մասին թեզը, որի օգնությամբ

<sup>184</sup> Ըլայերմախերին կամ Դիլբային բնորոշ այդ ուղղով շատ հետմորդներ են ընթացել՝ Յ.-Գ. Գադամերից մինչև ժ. Դերիհա: Բայց նրանք բոլորովին այլ խնդիրներ են ունեցել: Այդ մասին տես ս. H. G. Gadamer, մեջքերված աշխ., էջ 245:

<sup>185</sup> Յննտ. H. Ruin, նշ. աշխ., նոյն տեղում:

<sup>186</sup> Տես M. Heidegger, *Sein und Zeit*, էջ 384:

<sup>187</sup> Սլավյո Ժիմելը նշում է, որ «կրկնության միջոցով իրականացվող հայդեգերյան վճիռը» ոչ թե «ազատ ընտրություն» է բարս ընդունված իմաստով, այլ «հոժարական ընդունման», որում «ազատ ընտրությունը և ողորմածությունը» բաշխված են «խստիվ համարժեքությամբ». S. Žižek, Op. cit., S. 27, 28. Նոյն թեման բանաստեղծորեն արտահայտված է Ովլեկի «Սփամենի կոչումը» երկում, ուր մարգարեն բնութագրված է որպես նեկը, որ «կարդաց, կարողացաց, հնազանդվեց և իրականացրեց» (R. M. Rilke, *Werke*, B. 1-2, Insel, Ffm., 1984, S. 394):

միջնադարյան կրոնական մտածողությունը փորձում էր հաղթահարել մարդկային կամքի ազատության և Տիրոջն անվերապահորեն ենթարկվելու հիմնարար պահանջների միջև եղած հակասությունը:

Նույն հարացույցի ծիրում շարժվելով, Սավոյ Ժիժեկը նշել է, որ հայդեգերյան այն մոտեցումը, որի համաձայն «ներկայությունն ընտրում է իր հերոսին»<sup>188</sup>, «աներկբայորեն կիրկեգորյան» է.

*Խևական քրիստոնեական համայնքը հիմնվում է այն փաստի վրա,*  
որ նրա անդամներից յուրաքանչյուրը պետք է հոժարակամ կրկնի իր հերոսի՝ Քրիստոսի ավանդած կենսակերպը<sup>189</sup>:

Այդ դիտողությունը կարևոր է այն առումով, որ Կոլեկտիվ ներկայության ամբողջականության հիմքը տեսնում է ոչ թե անհատին վերացական ակզբունքի ենթարկեցնելու, այլ «անհատ - անհատ» հարաբերության մեջ: Այդպիսին կին, ինչպես հիշում ենք, Արքահամի և Յեհովայի անձնականացված «ես-դու» հարաբերությունները «Ահ ու դող»-ում, այդպիսին է նաև Ժիժեկի նկատի ունեցած *Imitatio Christi*-ն:

Օդինակին հետևելու հանգամանքը շեշտել է նաև Ռ. Զաֆրանակին, հիշեցնելով, որ Յայդեգերի մոտ «ներկայությունը (նաև կոլեկտիվը) նորմերի, սահմանադրությունների կամ հիմնարկների միջոցով չէ, որ գտնում է իր բուն ինքնությունը, այլ ապրված օրինակի՝ նրանով, որ ներկայությունը գտնում է իր հերոսին»<sup>190</sup>:

Բայց խնդիրն այն է, որ Գոյություն և ժամանակի գրության տարիներին ձև ստացող իրականության համատեքստում օրինակելի, «ապրված» հերոսը ոչ թե Յիսուս Քրիստոսն էր, այլ Աղոլֆ Յիտլերը<sup>191</sup>: 1933-ի նոյեմբերին Ֆրայբրուրգի համալսարանի ռեկտորի պաշտոնը զբաղեցնող Յայդեգերը բուհի ուսանողական թերթում գրել է. «Ուսումնա-

<sup>188</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, S. 385.

<sup>189</sup> S. Žižek, *Op. cit.*, S. 28.

<sup>190</sup> R. Safranski, *Ein Meister aus Deutschland*, S. 203-204.

<sup>191</sup> Եթևնականների սկզբին Յայդեգերն այնքան տարված է եղել քաղաքական ասպարեզում հայտնված նոր առաջնորդով, որ 1933-ի մայիսին Կառլ Յասպերսին ուղղված նամակում բացականչել է. «Կրթությունը բոլորովին կարևոր չէ.... դուք միայն նայեք նրա հրաշք ծեռքերին» (մեջբերվում է ըստ՝ R. Safranski, Աշկ., էջ 274): Կարելի է ենթադրել, որ «հրաշք ծեռքերի» առաջ քերած հիացմները սկզում է ժամանակին տարածվող պլակատներին. դրա վառ օրինակը է Յիտլերի հետորական տաղանդները պրոպագանիդ ֆոտոշարքը (1927), որի հմաստային կիզակետն իսկապես կազմում են տարբեր դիրքորում պատերված ֆյուլերի շարժում ծեռքերը, տե՛ս «Geoepoche. Das Magazin für Geschichte», № 57, 2012, էջ 32-33:

կան դրույթներն ու “գաղափարները” չեն, որ պետք է լինեն ձեր գոյության կանոնները: Առաջնորդն ինքը է այսօրվա և զալիքի միակ գերմանական իրականությունը և նրա օրենքը»<sup>192</sup>:

Գիտենք, որ 1966-ին «Ծպիգելին» տված իր հոչակավոր հարցագրույցում Յայդեգերը շվարած խոստովանել է. «Այսօր ես այդպես չեմ ասի»: Սակայն հայդեգերյան խոսքի գուտ փիլիսոփայական դրդապատճառը հասկանալու առունուկ առավել կարևոր է Հ-Պ. Յեմակելին հղված նամակում տրված նրա բացատրությունը.

*Առաջնորդը ոչ թե առաջնորդող է, այլ առաջնորդվող (Führer ist kein Führer, sondern ein Geführter)*՝ նրան առաջնորդում են բախում և պատմության օրենքը<sup>193</sup>:

Եթե ժողովրդի բախտը և պատմության օրենքը մարմնավորվում են մեկ կոնկրետ անձնավորության՝ առաջնորդի մեջ, ապա վերջինս ինքնին ներկայանում է որպես արտօնյալ «նմուշ-գոյ», որում «գոյությունը» երևակվում է կատարյալ հստակությամբ: Յերոսին ընտրելու շնորհիվ ներկայության ծակատագիրը և գոյության բախուղ միահյուսվում են և այլևս անբաժանելի են դառնում<sup>194</sup>:

Ակնհայտ է, որ կոլեկտիվ ներկայությունը «կրավորական վճռի» վրա հիմնելու արդյունքում գոյություն և ժամանակում ծավալված ներկայության անալիտիկայի պաթուս արմատապես կերպափոխվում է: Մասնավորապես որակագրվում է մարդու պատմական «արկանվածության» և նրա «ձեռնարկի» միջև գոյություն ունեցող ծակատագրական լարումը: Այս մասով ժիմեկն իրավացի է:

Մյուս կողմից, սակայն, չի կարելի չընդունել, որ այդ շրջադարձը օտար չէ տրակտատի ներքին տրամաբանությանը՝ ներկայության անալիտիկան ի սկզբանե պարունակել է դրա հնարավորությունը: Ժան-Պոլ Սարտրը, որի գոյությունը և ոչինչը կարդալուց հետո է միայն Յայդեգերն ընդունել, որ ինքը «Վերջապես հասկացվել է»<sup>195</sup>, այսպես է ընորոշել հայդեգերյան «ներկայությունը».

<sup>192</sup> Մեքերվում է ըստ՝ R. Safranski, Եզ. աշխ., էջ 274:

<sup>193</sup> Նույն տեղում:

<sup>194</sup> Տե՛ս H. Ruin, Եզկ. աշխ., էջ 30:

<sup>195</sup> 1945 թվի հոկտեմբերի 5-ին Յայդեգերը գրել է. «Սարտրի վրա ազդեցությունը վծոռուց է՝ այս պահից ի վեր գոյություն և ժամանակը հասկացված է», M. Heidegger, *Kant und das Problem der Metaphysik*, S. 251:

Եմպիրիկ պատկերը, որ լավագույնս կխորհրդանշեր հայդեգերյան իմաստուիցիան, ոչ թե պայքարն է, այլ թիմը: ...Կողը կողքի խաղացողմերի խուզ համակեցությունը թիմի հետ, այն գոյությունը, որը զգալի է թիակների ռիթմում կամ դեկին նստածի կանոնավոր շարժումներում, և որը մարմնավիրում է ...հորիզոնին երևակվող այն նպատակը, որ պետք է նվաճվի միասին<sup>196</sup>:

Պայքարի բացակայության մասին խոսքն այդ համատեքստում չպետք է շփոթեցնի: Սարտրը նկատու ունի, որ «Ես»-ի և «Ուրիշ»-ի համագոյությունը (Mitsein) Գոյություն և Ժամանակում «զուգահեռական» հարաբերություն է՝ ներկայությունները միմյանց չեն կազմավորում փոխադարձ պայքարի, բախման արդյունքում (ինչպես դա, օրինակ, տեղի է ունենում հեգելյան Ոգու բներևութարանության մեջ), այլ պարզապես ներկա են միմյանց «աշխարհներում» որպես դրանց կազմորոշ տարրեր՝<sup>197</sup>: Քանի որ «Ես»-ի և «Ուր»-ի փոխադարձ անտարերությունը կազմորոշ է ներկայության համար ընդհանրապես, սարտրյան բնորոշումը, որը վերաբերում է «բոլորին», կիրառելի է նաև «ժողովրդի բախսի» նկատմամբ:

Հայդեգերը, իհարկե, խոսում է պայքարի մասին, բայց նրա «պայքարը» այլ համատեքստում է առաջ զալիս: Նա բացատրում է, որ ճակատագիրը միայն նրան է ընդունում, ով իր ծերնարկը նրա ուղղությամբ է արկանում: ճակատագրին կարելի է հանձնվել, բայց ոչ ցանկանալ կամ փնտրել այն: Վերջինս փնտրողին չէ, որ ներկայանում է, այլ նրան, ով պատրաստակամ է տառապելու և դիմանալու, և ողջ պատասխանատվությամբ ընդհանաց է գնում սեփական ճակատագրին: Տառապանքն ու դիմանալն են, որ պայքար են դառնում, բայց սա արդեն կոլեկտիվի պայքարն է: Այս համոզմանը էլ Հայդեգերն արձանագրում է.

Հաղորդման շնորհիվ և պայքարի մեջ է բախսի գոյությունն ազատ ալրծակվում<sup>198</sup>:

<sup>196</sup> J.-P. Sartre, *Das Sein und das Nichts. Versuch einer phänomenologischen Ontologie*, Rowohlt, Reinbek bei Hamburg, 1997, S. 447.

<sup>197</sup> Նույն տեղում, էջ 448-452:

<sup>198</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, S. 384.

## Ֆիլստեհի և Շմիտի միջն

Կարելի է, իհարկե, ենթադրել, որ «հաղորդումն» ու «պայքարը» Քայդեգերն ասպարեզ է բերել որպես միջնորդ օղակներ՝ որևէ կերպ մեղմելու համար «ողջ ազգին» վերաբերող համասեր ավանդության և «միշտ-միայն-ին» մահվան, ուրեմն՝ հարատևման և ընդհատման գործառույթների միջն առկա զույգային հակադրության դժվար տանելի լարվածությունը։ Բայց մեզ հետաքրքրող խնդրի՝ ներ-կայությունների միաձուլումն ապահովող մեխանիզմի տեսակետից նախ և առաջ կարևոր է, որ պայքարի այս վկայակոչումը, ակնհայտ դիցաբանական կոննոտացիաներից բացի, աղերսներ ունի նույն ժամանակին վերաբերող մտային մի կառույցի հետ, որտեղ այդ հասկացությունը քննարկվել է «քաղաքականի» համատեքստում։ *Պայքարը*՝ այս անգամ որպես ածական, կենտրոնական տեղ է գրավում Երրորդ ռայխի «քաղաքանակագրական» կարող Շմիտի հետևյալ սահմանման մեջ։

Թշնամին ոչինչ այլ բան չէ, քան մարդկանց (առնվազն հարաբերականորեն, այսինքն՝ իր իրական հնարավորությունների չափով) պայքարող ամբողջություն, որ կանգնած է մեկ այլ նույնամման հանրության դեմ<sup>199</sup>։

«Պայքարող» բառը Շմիտն այստեղ պատահական չի ընդգծել։ Այդ միակ շեշտադրութամբ բնորոշվում է «թշնամու» գաղափարը, որն իր հերթին վճռական դեր ունի Շմիտի տեսության կենտրոնական հասկացության՝ «քաղաքականի» սահմանման համար։ «Թշնամու» և «քարեկամի» արմատական հակադրությունը, ըստ իրավաբանի, դրված է «քաղաքականի» հիմքում նույն պարտադրողականությամբ, ինչպես «քարու» և «չարի» տարբերակումը՝ բարոյականության, իսկ «գեղեցիկինն» ու «տգեղինը»՝ գեղագիտության<sup>200</sup>։ Ընդ որում՝ թշնամու հասկացությունը պատկանում է իրական և ոչ թե փոխարերական իմաստով ըմբռնված պայքարի ոլորտին։

<sup>199</sup> C. Schmitt, *Der Begriff des Politischen: Text von 1932 mit einem Vorwort und drei Corollarien*, Duncker & Humblot, Berlin, 1991, S. 29.

<sup>200</sup> C. Schmitt, *Der Begriff des Politischen*, S. 27.

Թշնամու, բարեկամի և պայքարի հասկացություններն իրական իմաստ են ստանում հատկապն շնորհիվ այն բամի, որ կապվում են և կապված են մնում ֆիզիկական սպանության իրական հնարավորության հետ<sup>201</sup>:

«Ժողովրդի բախսի» մակարերումը «պայքարից» ի հայտ է բերում նաև հայդեգերյան ձևակերպման քաղաքական ակունքը: Երեսնական-ների սկզբին Գերմանիայում թափ հավաքող ազգայնական շարժմանը տպավորված փիլիսոփան հավակնություն է ունեցել քաղաքական ընթացքների վրա հոգևոր ազդեցություն ունենալ և նույնիսկ բարձր գիտության դիրքերից դրանք ուղղողութել<sup>202</sup>, բայց, այնուամենայնիվ, չի ցանկացել թողնել զուտ փիլիսոփայականի անաղարտ բարձունքը: Դրա համար էլ «քաղաքական» բառը հաճախ մնում է չարտասանված՝ նույնիսկ այնտեղ, ուր այն անփոխարինելի էր թվում:

Այդ երկակի մտայնությամբ էլ Հայդեգերը ստանձնել է Ֆրայբուրգի համալսարանի ռեկտորի պաշտոնը՝ մի դիրք, որ նացիզմի ամբողջատիրական գաղափարախոսության տարածման պայմաններում չէր կարող քաղաքական չլինել (որ մենք նաև խորհրդային ժամանակներից ենք իիշում), և այնուամենայնիվ, ձևական առումով, քաղաքական չէր: Երևի «ազգայինը» պետք է լիներ այն դաշտը, ուր քաղաքականը և ոչ քաղաքականը անհուսալի հորեն միաձուլված են, և պատահական չէր, որ ռեկտորի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ Հայդեգերի արտասանած ճառը նվիրված է եղել ազգային կրթության խնդրին՝ «գերմանական համալսարանի ինքնահաստատմանը»<sup>203</sup>:

Աստիճանական միջնորդավորման հնարջ տեսանելի է նաև այդ ճառում, ուր նորանշանակ ռեկտորն ակադեմիական ազատության «անկապ» լիմենուն հակադրում է «կապվածությունը և ծառայությունը»՝ որպես իրական ազատության բաղադրիչներ: Հանուն ազգի հանձն առաջ և անհատին ազգի հետ «կապող ծառայությունը» այն միջնորդ օղակն է, որով Հայդեգերն ի մի է բերում ուսանողին առաջարկվող եռամիասնությունը՝ աշխատամքը, զինվորական պաշտպանությունը և գիտությունը<sup>204</sup>:

<sup>201</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>202</sup> Հետագայում Յասպերսը կասի. «Ուզում էր առաջնորդել առաջնորդին» (den Führer führen):

<sup>203</sup> M. Heidegger, *Die Selbstbehauptung der deutschen Universität*, Breisgau, 1934.

<sup>204</sup> Բնանարդ Մարտինը շափազանցված է համարում նշալ երեք «ծառայությունների» սկզբունքի տարածումը միանշանակորեն Հայդեգերին վերագրելը, նշելով, որ այդ եռա-

Դայդեգերի հետպատերազմական դատողություններն այն մասին՝ արդյո՞ք նշյալ կապող ծառայությունների առաջնայնության սանդղակը դրանց իր ճարի ընթացքում թվարկման հերթականությանը պետք է ուղղվեր՝ 1) աշխատանքային ծառայություն, 2) գինվորական ծառայություն, 3) գիտության ծառայություն, թե՞ պետք է արտածվեր ելույթի անբողջական համատեքստից, որը, Դայդեգերի պնդմամբ, միանշանակ վկայում է գիտության ծառայությամբ իր տված գերակայության մասին, քիչ բան են փոխում: Անկախ փիլիսոփայի մտադրություններից՝ ակնհայտ է, որ իրական առաջնայնությունն այն ծառայությանն էր պատկանելու, որը ծեռքի տակ իրական կապող մեխանիզմներ է ունեցել: Եվ դա պետք է նախ և առաջ գինվորական ծառայությունը լիներ՝ որպես միակը, որն իր բնույթի բերումով անմիջական մուտք ունի քաղաքական պարտադրանքի գործիքները: Մանավանդ որ հասարակական ոլորտների իրական սուբյեկտիվացիան, որտեղ ծառայության նասին խոսելն ընդհանրապես իմաստ ունի, ամենայն բացությամբ արձանագրել է միևնույն Կարլ Շմիտը, Ակատելով, որ «կրոնական քաղաքականությունը», «դպրոցական քաղաքականությունը», «հանայնքային քաղաքականությունը», «սոցիալական քաղաքականությունը» և բոլոր նման «քաղաքականությունները» ոչինչ այլ բան չեն, քան երկորոշական հասկացություններ, որոնց հիմքում ընկած է «քաղաքականը» որպես այդպիսին<sup>205</sup>:

Քանի որ քաղաքական հանրությունը բնութագրվում է մարդկանց ֆիզիկական կյանքի նկատմամբ իշխանությամբ<sup>206</sup>, պետք է որ պարզ լինի, որ հոգևոր կապող ուժի հեռանկարն այդ մրցակցության մեջ դժվար նշնարելի է, եթե ընդհանրապես գոյություն ունի: Այսպես՝ հավատացյալների որևէ հանայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ, որոնք ծակատագրի կողմից ընտրված լինելու քվազիկրոնական զգացողություն ունեն, կարող են հիմքարական ստանձնել Քրիստոսին նմանակելու ճանապարհը, բայց նրանք պարտադրված չեն լինի դա անել հանրային շահի անունից: Շմիտն այդ հանգանակքը պարզաբանում է հետևյալ դիտողությամբ.

միասնությունը հաճախ է հիշատակվել այն ժամանակվա ակադեմիական ճառերում, առանց ուղղակիորեն Դայդեգերի անվան հետ կապվելու: Տե՛ս B. Martin, “Heidegger und die Reform der deutschen Universität 1933”, in: *Martin Heidegger: ein Philosoph und die Politik*, Freiburger Universitätsblätter, 92, 1986, էջ 52:

<sup>205</sup> Տե՛ս C. Schmitt, *Der Begriff des Politischen*, էջ 30:

<sup>206</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 48:

Որևէ կրոնական համայնք, որևէ եկեղեցի կարող է իր անդամներից պահանջել հանուն հավաստի մեռմել և մարտիրոսանալ, բայց միայն իրենց իսկ հոգու փրկության ոչ կղերական համրության համար՝ որպես իշխանություն ունեցող այսկողմնային կառույցի<sup>207</sup>:

Դեմոց դրանով էլ տարբերվում է իրեն ազատորեն ձեռնարկող ներկայությունը «համազգեստի միջոցով ճանաչելի» պայքարող զինվորից, որի համար «բարեկամի և թշնամու տարբերակումը... այլս քաղաքական պրոբլեմ չէ»<sup>208</sup>, քանի որ ընտրության մենաշնորհն այլս ոչ թե իրենն է, այլ պետությանը<sup>209</sup>:

Այստեղից պարզ է դառնում, թե ներկայության համար իրականում ինչ պետք է նշանակեր պայքարող համրության կողմից ընտրված լինելը: Ծմիտյան պատերազմը, որպես կոլեկտիվ մահվան միշտ ներկա հնարավորություն, հավակնում է այն տեղին, որը Յայդեգերը, թերևս ոչ շատ հաջող, փորձում էր բաշխել երկու տեղապահների՝ անհատական մահվան և ժողովրդի բախսուի միջև: Ժողովրդի մշտական առնչվածությունը պատերազմի մահացու վտանգին անխուսափելի է ըստ սահմանման, քանի որ առանց դրա նա կվորցներ քաղաքական միավոր լինելու իր որակը:

Ծեշտադրությունների այս փոփոխության շնորհիվ Ծմիտը հայդերյան «իհմնարար գոյարանության» ներունակ հնարավորություններն իրականացրել է այնպիսի մի ձևով, որը Յայդեգերի համար նույնքան անընդունելի պետք է լիներ, որքան հուսեռը ֆենոմենոլոգիայի՝ իր կողմից իրականացրած փոփակերպումը անընդունելի էր Յուսեռի համար: Մի տարբերությամբ, որ Ծմիտի դեպքում խոսքը ոչ թե տեսությունների անմիջական ժառանգականության մասին էր, այլ հետպատերազմյան Գերմանիայում տիրող ընդհանուր մթնոլորտի, որին հատուկ էին հետաքրքրությունը մահվան նկատմամբ և մահվան պաշտամունքը<sup>210</sup>:

<sup>207</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>208</sup> Նույն տեղում, էջ 34:

<sup>209</sup> Տես և նույն տեղում, էջ 10:

<sup>210</sup> Այդ մասին տես ս. H. U. Gumbrecht, “Tod im Kontext Heideggers Umgang mit einer Faszination der 1920er Jahre”, in: D. Thomä (Hrsg.), *Heidegger-Handbuch. Leben – Werk – Wirkung*, J. B. Metzler, Stuttgart – Weimar, 2003, էջ 98-103, ինչպես նաև՝ U. Brunotte, “Mythos Langemarck”, in: “Frankfurter Rundschau”, 11.11.04: Խնդրի պատմական կտրվածքի վերաբերյալ տես ս. M. Jeissmann, *Das Vaterland der Feinde*:

Նման ռազմահայրենասիրական տրամադրություններ պետք է որ ունեցած լիներ Յոհան Գոտլիբ Ֆիխտեն 1813-ին՝ ծշմարիտ պատերազմի գաղափարը ծևափորելիս: Յականապոլեոնյան պայքարի բովում ինաստավորված և Բեռլինի համալսարանի մի դասախոսության մեջ ներկայացված ֆիխտեյան այս հղացքին ես անդրադառնում եմ քննարկվող նյութի որոշ առանձնահատկություններ ճշտելու համար:

Տիրակալների միջև տեղի ունեցող բախումներին Ֆիխտեն հակառակ է ժողովրդի կողմից վարվող ծշմարիտ պատերազմը: Յանուն ընդհանուր ազատության ընթացող այդ պատերազմում «ամեն մի անհատ, առանց տեղապահության, չէ՞ որ յուրաքանչյուրն ինքն իր համար է գործում, կենաց և մահու պայքար է մղում»<sup>211</sup>: Այդ պայքարը բոլոր ուժերի գերազում լարում է պահանջում՝ «առանց կյանքը կամ սեփականությունը խնայելու, առանց ապագա խաղաղության վրա հույս դնելու»<sup>212</sup>:

Իշխող հարստություններին Ֆիխտեն դիտարկում է որպես «հասարակության կամքի ենթադրյալ բազմամիշներ» և ընդունում է կենաց և մահվան պատերազմում հրամաններ արձակելու նրանց իրավունքը<sup>213</sup>: Բայց, քանի որ ազատությունն անքածանելի է, որոշումը պատերազմի ավարտի մասին չպետք է վստահվի իշխող վերնախավին: Չէ՞ որ դա ոչ թե նրա, այլ յուրաքանչյուրի խնդիրն է: Ֆիխտեն չի բացառում, որ պետությունը կարող է չարաշահել պատերազմական իրադրությունը, և առանձին ուշադրությանը է անդրադառնում այդ հնարավորությանը.

Բայց որտեղ ազատության և ինքնուրույնության մասին խոսվել է ամերկրայորեն, և հետո բացահայտ հրաժարում է տեղի ունեցել, և դրանք սուսկ անզատության միջոցի են վերածվել և շնորհագրկվել,... այդտեղ սպասելու բան չի մնում այլևս: Նման պետությունը գտնվում է կարծրացածության վիճակում և ինքն է իր վրա դրոշմել ոչ պիտանիության կմիջը: Ազմիվը փրկում է իր անմահ կյանքը, խույս տալով նրանից<sup>214</sup>:

Studien zum nationalen Feindbegriff und Selbstverständnis in Deutschland und Frankreich 1792-1918, Klett-Cotta, Stuttgart, 1992, էջ 95-102:

<sup>211</sup> J. G. Fichte, “Über den Begriff des wahren Krieges”, in: derselbe, Ruf zur Tat, Verlag der Nation, Leipzig, 1956, S. 363.

<sup>212</sup> Նույն տեղում, էջ 364:

<sup>213</sup> Տե՛ս և նույն տեղում:

<sup>214</sup> Նույն տեղում, էջ 365:

Չեշտ է տեսնել, որ Ֆիխտեն, Քայդեգերի նման, ելակետ է ընդունում անհատի՝ վճիռ ընդունելու կամքը: Բայց նկատելի է նաև, որ նրա դասախոսության քաղաքական շեշտադրությունն ակնհայտ աղերսներ է առաջացնում Կարլ Շմիտի հղացքի հետ: Թե՛ մեկից, թե՛ մյուսից Ֆիխտեն տարբերվում է նրանով, որ նա բացորդ հարցադրում է անում պետության և անհատի միջև հնարավոր հակասության մասին և հետևողականորեն զարգացնում է այդ միտքը: Քայդեգերը նման դեպքում անհատական վճոր և ժողովրդի բախտի այդքան ցանկալի ներդաշնակությունը չխարթարելու համար երևի բավարարվեր «իրական ներ-կայության» և «անտարբեր բոլորի» ստանդարտ հակադրությամբ: Շմիտն, իր հերթին, պետք է որ առիթն օգտագործեր, հերթական անգամ փաստելու, որ քաղաքական հանրության վճիռ կայացնելու մենիշխամության համար առանձին անհատի կամքը որևէ կազմորոշ նշանակություն ունենալ չի կարող<sup>215</sup>: Երկուսն էլ կմնային այն կարծիքին, որ գոյություն չունեն ռացիոնալ չափանիշներ, որոնցով կարելի լիներ գնահատել «ծշմարիտ անհատական ճակատագրի» և «կոլեկտիվ բախտի» փոխադարձ իրավացիությունը դրանց արմատական բախման պարագայում:

Ֆիխտեն, դրան հակառակ, այդ չափանիշն ունեցել է՝ դա պետության բոլոր քաղաքացիների անհատական ազատությունն էր<sup>216</sup>: Երկու ժամանակակիցներից ոչ մեկը պետության և անհատի վեճի խնդիրն այս չափով չափել չէր կարող և չէր էլ ցանկանում: Գոյությանն ընդառաջ բացված «ներ-կայության» նկատմամբ անհատական ազատությունը որպես չափանիշ կիրառելը Քայդեգերը պետք է համարել անթույլատրելի, դրա տակ տեսնելով այն «տրանսցենդենտալ սուրբեկտիվիզմը», որի հաղթահարումն իր կարևորագույն նպատակն էր համարում: Իսկ Շմիտի «պետությունը» կրավարարվեր պարզ արձանագրությամբ, որ «իրական պայքարի իրավիճակում մարդ իրական թշնամու դեմ է կրվում՝ ոչ հանուն ինչ-որ տեսլականների, ծրագրերի կամ նորմերի»<sup>217</sup>:

<sup>215</sup> «Եթե որևէ քաղաքացի հայտարարում է, որ ինքն անձնապես թշնամիներ չունի,- ասում է Շմիտը,- ապա դրանով նա «ամենաշատը ցանկանում ասել, որ իրեն դուրս է դնում այն քաղաքական հանրությունից, որին պատկանում է իր ‘ներկա գոյության’ բերումն, և ցանկանում է ապրել նաևնավոր մարդու կյանքով»: Նույն տեղում, էջ 52:

<sup>216</sup> Կայսրությունն «պետք է ելի՛ ծնավորված անհատական, անձնական ազատությունց՝ ոչ հակառակը»: J. G. Fichte, *Op. cit.*, S. 366.

<sup>217</sup> C. Schmitt, *Der Begriff des Politischen*, S. 49.

Կոնցեպտուալ առումով հակասությունը մնաց չհաղթահարված: Դիրքերը ճշտվեցին գործնական կողմնորոշումների միջոցով: Իրավաբանը հավատարիմ մնաց պետությանը: Փիլիսոփայի համար, այնուամենայնիվ, Ֆիխտեի խոսքը պահպանեց իր ուժը.

*Ազնիվը փրկում է իր անմահ կյանքը՝ խույս տալով նման պետությունից:*

Ֆրայբուրգի համալսարանի ռեկտորի պաշտոնին նշանակվելուց միքանի ամիս հետո Յայդեգերը հրաժարական տվեց: Նա փախավ դեպի «գոյություն»: Կոլեկտիվ մահվան քաղաքական երանգավորում ունեցող խնդիրը փոխարինվեց զուտ փիլիսոփայական հոչակավոր հարցով. «Ինչո՞ւ կա գոյը, և ոչ՝ ավելի շուտ, ոչինչը»<sup>218</sup>:

Բոլորը չեն, որ նման թաքստոցի հնարավորություն են ունեցել: Ոմանք արժանացել են նացիստական պետության ողորմաժությամբ: Որովհետև «ազատ ընտրությունն» ու «ողորմածությունն» իրական պատմության մեջ միայն քաղաքական բռնության պայմաններում են համընկանում:

Իրենց եզակիության մեջ անկրկնելի անհատական ներ-կայությունները ճկող, ձևախեղող և մեկ միասնական կապուկի մեջ փնջող այդ մեխանիզմների քաղաքական-իրավական կազմորոշ սկզբունքը տոտուալ մորիլիզացումն է<sup>219</sup>:

Յայդեգերը հնարավորություն ստացավ համոզվելու, որ կոլեկտիվի մահը նույնքան անխուսափելի դարձնել, որքան անհատի մահն է անխուսափելի, կարելի է միայն հասարակության տոտալիտար կառուցվածքի պայմաններում:

## *Ինչո՞ւ չապաշխարեց Յայդեգերը*

Յայդեգերի՝ նացիոնալ-սոցիալիզմի հետ առնչությունների մասին հարյուրավոր գրքեր են գրվել: Յետազոտողների, ինչպես նաև շահագրգիռ ժամանակակիցների ուշադրության կենտրոնում ոչ միայն

<sup>218</sup> M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, 1966, S. 1.

<sup>219</sup> Այդ նաևին մանրամասն տես՝ ս. Ա. Սոկանյան, «Ուսումի միաբանությունը, կամ կոլեկտիվ ներկայության պարադրսները», «Ուորիկն», թիվ 2 (10), 2006, էջ 45-46:

հանգանաքներն են, որոնք պայմանավորել են Հայդեգերի գայթակ-ղությունն այդ չարաբաստիկ քաղաքական շարժումով, այլև առավել անբացատրելի թվացող հարցն այն մասին, թե ինչու հետպատերազմ-յան տարիներին մտածողն այդպես էլ միանշանակ և բացորդ կերպով չսահմանազատվեց նացիոնալ-սոցիալիզմից, խոստովանելով իր սխալները: Ինչո՞ւ չապաշխարեց Հայդեգերը:

Մենք չենք անդրադառնա դատախազի կեցվածք ընդունած առան-ձին հեղինակներին, որոնք անհողողող ինքնավստահությամբ մեղա-դրանք են ներկայացրել մտածողին<sup>220</sup>: Բայց ահա նրա երկարամյա գործնկեր և բարեկամ Կարլ Յասպերսի խոսքը, որը Հանա Վրենտիին գրած նամակում Հայդեգերին անվանում է «անճաքուր հոգի, որը չի զգում սեփական անմարդությունը և, մշտական որամից խոսյա տալու փոխարեն անմտորեն շարունակում է ապրել կեղտի մեջ»: «Այս, ինչ Դուք անմարդություն եք անվանում,- պատախանել է Հայդեգերի հետ մտերմության հուշերով կապված Վրենտիը,- ես “բնավորություն չունե-նալ” (Charakterlosigkeit) կանվանեի, բայց այն բառացի իմաստով, որ նա ընդհանրապես ո՛չ մի բնավորություն չունի, վստահաբար նաև՝ ա-ռանձնապես վատրը»<sup>221</sup>:

Որոշակիությունից խուսափելու, սուր անկյունները չեզոքացնելու Հայդեգերի հակումը վրդովեցրել է նաև Կարլ Շմիտին, որը պատերազ-մի ավարտից հետո շատ ավելի կոշտ ճնշումների էր արժանացել նա-ցիստների հետ բացահայտ համագործակցության պատճառով.

*Տեղա-նք*<sup>222</sup>: Նա խուսափում է որևէ տեղի անուն տալուց: Նա չի ա-սում Հոռոմ և չի ասում Մոլոկա, նա չի ասում Ժնև և չի ասում Պրահա, նաև չի ասում Լեյբ Սարբես: Իսկ ես երեխայի նման անուններ եմ տա-լիս և դրանով դառնում ծիսական սպանության կանխորոշված զոհի<sup>223</sup>:

Բայց եթե խնդիրը իսկապես զգուշավոր անտարբերությունն էր, ա-պա ինչպես է «որևէ բնավորությունից գուրկ» Հայդեգերը համարձակ-

<sup>220</sup> Այդ ոճով գրված ամենաաղմկահրույց գիրքը պատկանում է չիլիացի փիլիսոփա, Հայդեգերի նախկին աշակերտ Վիկտոր Ֆարիասին, տե՛ս V. Farias, *Heidegger and Na-zism*, Temple University Press, 1989:

<sup>221</sup> Մեջբեկում է ըստ՝ R. Safranski, Աշկ. աշխ., էջ 365:

<sup>222</sup> Ակատի ունի Հայդեգերի համան օգտագործած «Ortschaft» բառը:

<sup>223</sup> Մեջբեկում է ըստ՝ R. Mehring, *Heidegger und Carl Schmitt. Verschärfer und Neutra-lisierer des Nationalsozialismus*, in: D. Thomä (Hrsg.) Heidegger-Handbuch, էջ 343:

Վել քաղաքական առումով մաքրամոլ 1953-ին առաջին անգամ հրատարակվող դասախոսության տեքստում պահպանել 1933 թվականի իր ծևակերպումը նացիոնալ-սոցիալիստական շարժման «Անդրին իսկության և մեծության» մասին.

Այս, իմ այսօր ամենուրեք առաջարկվում է որպես նացիոնալ-սոցիալիզմի փիլիսոփայություն, բայց դույզմ-իսկ կապ չունի այդ շարժման մերժին իսկության և մեծության (այսինքն՝ մոլորակայնորեն որոշարկված տեխնիկայի և նորժամանակա մարդու հանդիպման) հետ, ծկնորսություն է անում «արժեքների» և «ամբողջությունների» պղտոր ջրերում<sup>224</sup>:

Կարծում եմ՝ Արենդտի ինտուիցիան այլ տեղ է առաջնորդում: Ինչպես իր հետազոտությունների վրա գերկենտրոնացած գիտնականը շրջապատի կողմից «ցրված» է հորժործվում, այդպես էլ Յայդեգերն անտարբեր է առօրյա բարոյական գնահատականների նկատմամբ, քանի որ հաճառ հետևողականությամբ զրադվում է այն «նախակզբնական» խնդիրներով, որոնք (ինչպես իրեն թվում է) կանխորոշում են մարդկային բարերը և դրանց հետադարձ «արժեքումը»: Իզուր չէ, որ ընթացիկ՝ նացիզմի պաշտոնական գաղափարախոսության կարգավիճակ ստանձնած փիլիսոփայությանն ուղղված նրա մեղադրանքը «արժեքների պղտոր ջրերում ծկնորսություն անելն է»:

Ուրեմն, իրավացի է Ռ. Զաֆրանսկին, նշելով, որ Յայդեգերի մոտ «բարոյական ռեֆլեքսիայի պակասը ոչ միայն անձը բնորոշող փաստ է, այլև փիլիսոփայական պրոբլեմ»<sup>225</sup>: Այդ պրոբլեմն ինաստավիրելու համար պետք է դիտարկել աղերսները, որ երևակվում են ժամանակի հոգևոր իրադրությանը Յայդեգերի տված գնահատականի և նրա փիլիսոփայական հոգաքի միջև: Ընթերցողը կների ծավալուն մեջբերումների այս շարքը՝ վերաշարադրումը կամ կրճատումը աղճատում են դասական խոսքը.

Այս Եվրոպան, որը, անբուժելիորեն կուրացած, անընդհատ ցատկի մեջ է, իմքն իրեն դաշտունահարելով, այսօր սեղմկած է մի մեծ արցա-

<sup>224</sup> M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, S. 152.

<sup>225</sup> Տե՛ս R. Safranski, նշվ. աշխ., էջ 365: Այլ բան է, որ այդ դեպում էլ անձնական դիրքորոշումը բարոյապես խնդրահարուց է մնում՝ որևէ «ծշմարիտ» տեսություն չի կարող երկրորդական դարձնել կոնկրետ նարդկանց տառապամբը՝ այսուղեղ և հիմա:

նում. մի կողմից՝ Ռուսաստանի, մյուսից՝ Ամերիկայի միջև։ Ռուսաստանը և Ամերիկան, մետաֆիզիկորեն դիտարկված, միևնույն բանն են՝ շղթայագերծ տեխնիկայի և նորմալ<sup>226</sup> մարդկանց հիմնագուրկ կազմակերպման միևնույն անմիտքար վազքը։ Երբ երկրագնդի ամենահետին անկյունը տեխնիկապես նվաճված և տնտեսապես շահագործված սպառված է, երբ ցանկացած իրադարձություն ցանկացած տեղում ցանկացած ժամանակ ցանկացած արագությամբ հասանելի է, երբ Ֆրանսիայում թագավորի վրա կատարած նահափործը և Տոկիոյում կայացող սիմֆոնիկ համերգը կարելի է «վերապրել» միաժամանակ, երբ ժամանակն այլևս միայն արագություն է, ակնթարթ և միաժամանակություն, և ժամանակը որպես պատմություն բոլոր ժողովուրդների կյանքից չքացել է, երբ բռնցքանարտիկը հորցործվում է ազգի մեջ մարդ, երբ զանգվածային հավաքների միջինների հասնող թվերը գլխապույտ հաղթանակ են, այդժամ, ողջ այդ զառանցանքի վրայով ուրուի ննան սահում է հարցը՝ «հանուն ինչի՞» - «ո՞ր» - «հաջո՞րդն ինչ է»...

Երկրի հոգնոր անկումն այնքան հեռու է գնացել, որ ժողովուրդները կարող են կորցնել վերջին հոգնոր ուժը, որ հնարավորություն կտար գոնե տեսնելու և որպես այդպիսին գնահատելու («գոյության» ծակատագրին առնչված) անկումը<sup>227</sup>։ Այս պարզ արձանագրությունը ոչ մի կապ չունի մշակութային վատատեսության հետ, իհարկե՝ նաև լավատեսության. քանզի աշխարհի խավարումը, աստվածների փախուստը, երկրի քայլայումը, մարդու զանգվածայնացումը, ատելությամբ լեցուն կասկածանքն ամեն ստեղծագործականի և ազատի նկատմամբ ամբողջ երկրի վրա այնպիսի չափերի են հասել, որ վատատեսության և լավատեսության պես մանկամիտ կատեգորիաները վաղուց արդեն ծիծաղելի են դարձել<sup>228</sup>.

Ինչո՞ւ են այս կրուտ խոսքերը տարբերվում դարի առաջին տասնամյակներին լայնորեն տարածված «կուլտուրապեսիմիզմից», այն մշակութային վատատեսությունից, որը Յայդեգերն անթաքույց արհամարդանքով մանկամիտ է անվանում։ Նախ և առաջ նրանով, որ նրա սոցիա-

<sup>226</sup> Ինա՝ շարքային, միջակ։

<sup>227</sup> Յննտ. Գոյություն և ժամանակի առաջարանի դրույթը՝ «Սենք ոչ միայն չգիտենք ինչ է գոյք, այլև չփորություն չենք ապրում այդ կապակցությամբ»։ Յննտ. M. Heidegger, *Sein und Zeit*, էջ 1:

<sup>228</sup> M. Heidegger, *Einführung in die Metaphysik*, S. 29.

լական և մշակութային գնահատականները միայն արտաքին դիտարկումների արդյունք չեն: Դրանք ելնում են խորքային պատճառներից, որոնք, ըստ մտածողի, բացահայտված են իր փիլիսոփայական հետազոտություններում: Խնդրի երկու՝ սոցիալ-մշակութային և փիլիսոփայական կողմերի կապը վերհանող տրամաբանությունը հետևյալն է:

Դանաշխարհային պատճության արդիական փուլում ի հայտ եկած ահագնացող քայլքայումը որևէ մեկի չարամտության արդյունքը չէ: Անկման պատճառը աշխարհի նկատմամբ մետաֆիզիկական վերաբերմունքն է, որը հանգեցնել է «գոյության մոռացությանը»: Մետաֆիզիկային հատուկ սուբյեկտիվիզմը պայմանավորում է մարդու և բնության այն հակադրությունը, որում վերջինս հանգեցվում է «գոյերի» համրագումարի: Արդյունքում մարդկային զանգվածները միտվում են բացառապես դեպի «գոյավորը» (գոյերը)` առանց նկատելու և իմաստավորելու «գոյության իսկությունը»:

«Մետաֆիզիկան» ռացիոնալիստական Արևմուտքի ճակատագիրն է: Նրա գագաթնակետն արդիականությունն է՝ դարաշրջան, որտեղ տեխնիկայի զարգացումը ձեռք է բերում մոլորակային չափելիություն, իսկ մարդու հասնում է մոլորակային տիրապետության:

Տեխնիկական առաջընթացով պայմանավորված սրբնթաց վազքի առաջանարտիկմերն են Միացյալ Նահանգները և բոլշևիկյան Ռուսաստանը, որտեղ իշխում են միջակություններից կազմված զանգվածները: Այս երկուսը «մետաֆիզիկական» առօնով նույնն են: Սա նշանակում է, որ կոնունիստական զաղափարների վրա հիմնված բոլշևիկյան կայսրության հակադրությունն արևմտյան կապիտալիզմի առաջատարին նակերեսային ֆեռոննեն է: Շատ ավելի կարևոր է նմանությունը՝ սպառողական վերաբերմունքն աշխարհի նկատմամբ: Այն, ըստ մտածողի, ի սկզբանե առկա է բոլշևիզմի զաղափարական հիմք հանդիսացող նարբայան մատերիալիզմում: Վերջինիս նկատմամբ իր վերաբերմունքը Հայդեգերն ավելի ուշ կարտահայտի հետևյալ՝ հռչակավոր դարձած տողերում, կոչ անելով «ազատվել մատերիալիզմի մասին միամիտ պատկերացումներից և նրա էժանագին հերքումներից».

Մատերիալիզմի էությունն այն պնդման մեջ չէ, որ ամեն ինչ մատերիա է (Stoff), այլ շատ ավելի այն մետաֆիզիկական դրույթի, համաձայն որի՝ ողջ գոյավորը ներկայանում է որպես աշխատանքի նյութ (Material): Աշխատանքի նորելորպական-մետաֆիզիկական էությունը

նախնական ծևով մտածված է Քեգելի “Ոգու բներսութաբանության” մեջ՝ որպես ոչնչով չսահմանափակված արտադրության իմքնակազմակերպվող ընթացք, այսինքն՝ իրականի առարկայացում սուբյեկտիվության փորձառությամբ բնորոշվող մարդու միջոցով։ Սատերիալիզմի էությունը թաքնված է տեխնիկայի էության մեջ, որի մասին շատ գրպել է, բայց քիչ մտածվել<sup>229</sup>։

Սրանից ելնելով՝ Քայդեգերը բնորոշել է արդիականությունը որպես մոլորակային տեխնիկայի և նորժամանակյա մարդու համովիպում։ Այստեղից է, որ ելք է որոնում երկու տեխնիցիստական գերտերությունների արցանում հայտնված Եվրոպան։

Հասկանալի է, որ հայդեգերյան լուծումը պետք է փիլիսոփայական լիներ։ Նա համոզված է, որ արդիականության հաղթահարումը պետք է իրականացվի որպես մետաֆիզիկայի հաղթահարում։ Դա հնարավոր է, քանի որ մետաֆիզիկայի գարգացումն իր մեջ հասունացնում է իր իսկ հաղթահարման սաղմը։ Բանն այն է, որ մետաֆիզիկան, կենտրոնացած լինելով բացառապես գոյավորի վրա, ցանկանում է այն իմաստավորել իր անբողջության մեջ։ Դա ուսմունք է «ողջ գոյավորի» (բոլոր գոյերի) մասին որպես այդպիսին։ Բայց «ողջ գոյավորը» մտածելը հնարավոր է միայն նրա սահմաններից մտովի դուրս գալու դեպքում։ Այստեղից՝ միտքը «ոչնչի» մասին, որով պայմանավորված է մետաֆիզիկայի հիմնական հարցը՝ «Ինչո՞ւ կա գոյը և ոչ՝ ավելի շուտ, ոչինչը»։ «Ոչինչը մտածելը» ապահովում է այն «լուսանցքը», որը բացում է «գուտ գոյականի» պրագմատիկական «հոն» աշխարհը և բացահայտում է մարդուն որպես «արտակայող», այսինքն՝ վերջավոր և պատմական էակ։ Սրանով սկզբնավորվում է մտածողությունը «գոյության» մասին։

Փիլիսոփայության տեսակետից նորովի դնել «գոյության հարցը» նշանակում է հաղթահարել մետաֆիզիկան։ Քաղաքական և սոցիալական առումով այդ հաղթահարումը նշանավորում է ելքը արդիականության՝ «մոդեռնի» սահմաններից։

Այդ ելքը (Ausbruch), ըստ Քայդեգերի, կոչված է իրականացնելու գերմանիան՝ որպես ամենամեծ ճնշման տակ գտնվող («հարևանաշատ») «մեծութեղի ժողովուրդ» (Volk der Mitte), նաև որպես «մետաֆի-

<sup>229</sup> M. Heidegger, “Brief über den Humanismus”, in: GA, B. 9, *Wegmarken*, Klostermann, Ffm., 1976, S. 171.

զիկական ազգ», որը դեռ չի սպառել իր ոգու կորովը և ի վիճակի է՝ մահվան դեմ հանդիման, ստանձնելու իր, և դրանով իսկ՝ ողջ Արևոնտքի ծակատագիրը: Այսպես՝ Յայդեգերի մտքում հարևանների դեմ տոտալ մորիլիզացման շնորհիվ անխուսափելի դարձած մահվան հեռանկարը նույնանում է մետաֆիզիկայի «ոչինչ»-ի հետ, մեկ մահացու հանգույցի մեջ քարկապելով քաղաքականը և փիլիսոփայականը:

Արդիականության ծուղակից ժողովուրդներին դուրս առաջնորդելու համաշխարհային-պատմական միսիան Յայդեգերը վերապահում է նացիոնալ-սոցիալիզմին:

Յազիվ թե կարիք կա խոսելու այն մասին, թե ինչու էր Յայդեգերի քաղաքական-փիլիսոփայական մեռելածին նախագիծը դատապարտված տապալման և վարկաբեկման: Վերը մենք բավական մանրամասնությամբ ցույց ենք տվել, թե ինչ է իրականում իրենից ներկայացնում «ժողովորդի բախտը»:

Եթե երեսուններեքին Յայդեգերը հույս ուներ, որ նացիոնալ-սոցիալիզմը ելք է առաջարկում արդիականության (նոդեռնի) արցանից, ապա շատ շուտով նա համոզվում է, որ այդ շարժումն ինքնին ոչ այլ ինչ է, քան իր նկատի ունեցած ինաստով մոդեռնի կատարյալ և հետևողական արտահայտություն:

Աշխարհի պատկերի ժամանակը խտացման մեջ Յայդեգերն արդեն խոսում է արդիականության՝ բոլոր իրերն անսահմանափակ բռնության ենթարկելու երեք ծների մասին՝ հաշվարկման, պլանավորման և բուժման<sup>230</sup>: Սրանք համապատասխանաբար վերաբերում են ամերիկանիզմին, կոմունիզմին և նացիոնալ-սոցիալիզմին: «Գյորալ հեռանկարում սա կատարյալ ամիմաստության դարաշրջան է»<sup>231</sup>:

Այս գնահատականները տեսնել են տալիս՝ ինչու Յայդեգերը, այնուամենայնիվ, չի խոսել իր սխալների մասին այնպիսի որոշակիությամբ, որը նրանից ակնկալում էին Գերմանիայուն և ողջ աշխարհում: Պատերազմից հետո ծնավորված հանրային դիմուլուսը կառուցված էր հաղթողների և պարտվողների գույգային հակադրության վրա: Վճռականորեն դատապարտելով նացիոնալ-սոցիալիզմը, Յայդեգերն անուղղակի հավանություն էր տալու հաղթանակած կողմի գաղափարախոսությանը՝ «ամերիկանիզմին», որը նրա համար շարունակում էր նույն-

<sup>230</sup> Տե՛ս M. Heidegger, “Zeit des Weltbildes”, in: *Holzwege*, Klostermann, Ffm., 1994, էջ 92:

<sup>231</sup> Տե՛ս R. Safranski, նշվ. աշխ., էջ 345:

քան անընդունելի մնալ, որքան եղել էր այն տարիներին, երբ նա ցնորական հույսեր էր կապում «ազգային սոցիալիզմ» հակամետաֆիզիկական ներուժի հետ:

Նաև վաթունակամներին («Շպիգել»-ին տված հարցազրույցում) Յայդեգերը չի խուսափել նշելուց, որ վստահ չէ՝ արդյո՞ք ժողովրդավարությունն է այն քաղաքական համակարգը, որ համապատասխանում է տեխնիկայի դարաշրջանին<sup>232</sup>: Ոչ մի իհնք չկա ենթադրելու, որ Յայդեգերը երբևէ վերանայել է անհատական ներ-կայության, ժողովրդի և առաջնորդի (հազվագյուտ ընտրյալների) փոխհարաբերության նասին այն պատկերացումը, որն այնքան տպավորիչ բանաձևել էր դեռևս երեսնակամներին.

Միայն ներ-կայությունից ելնելով է կարելի ըմբռնել ժողովրդի հուրյունը և նաև հասկանալ, որ ժողովուրդը երբեք չի կարող լինել նպատակ (Ziel und Zweck), և որ նման կարծիքը միայն “ազատական” “ես”-գաղափարի՝ “ժողովրդական”, և “լյանքի պահպանման” պատկերացման՝ տնտեսական, ընդլայնումն է:

Ժողովրդի հուրյունը նրա “ծայնմ” է: Եվ այդ ծայնը չի խոսում հավաքական, նախնական-քննական, կես-կիրք և ամենաշատ միջոցով: Քանզի այդ հաճախ հիշատակվող վկան արդեն խեղված է կենծ կրությամբ և վաղուց չի առաջնորդվում գոյին ուղղված նախասկզբնական աղերսներով: Ժողովրդի ծայնը խոսում է հազվագյուտ և քչերի մեջ, և արդյո՞ք դեռ հնարավոր է այն հնչյունի բերել<sup>233</sup>:

Քանի որ նոր քաղաքական լուծումների հեռանկար Յայդեգերը չի տեսնում, նրա խոսքը գնալով ավելի և ավելի մշուշապատ է դառնում.

Երկար է համաշխարհային գիշերվա խղճուկ ժամանակը... Կեսգիշերին այդ ժամանակն ամենախեղճն է: Այդժամ այդ չնչին ժամանակը

<sup>232</sup> St. „Nur noch ein Gott kann uns retten“. Spiegel-Gespräch mit Martin Heidegger am 23 September 1966, in: “Der Spiegel”, 30 Jg. № 23, 31. Mai 1976: Բնագիրը ծեռքի տակ չունենալու պատճառով, մեջբերում եմ ըստ՝ “Беседа сотрудников журнала ‘Шпигель’ Р. Аугштайна и Г. Вольфа с Мартином Хайдеггером. 23 сентября 1966 года”, *Философия Мартина Хайдеггера и современность*, с. 242:

<sup>233</sup> M. Heidegger, *Beiträge zur Philosophie (Vom Ereignis)*, GA, B. 56, Klostermann, Ffm., 2003, S. 319.

Առյօնիսկ ի վիճակի չէ զգալ իր ոչնչությունը... Եվ գուցե հենց հիմա է համաշխարհային գիշերը հասնում իր կեսգիշերին...<sup>234</sup>:

Մոտալուտ տեղաշարժեր չակնկալելով, Յայդեգերը խոսում է այն մասին, որ իր կողմից գուտ ինտուիտիվ փորձարկվող նոր մտածողությունը հնարավոր է սկսի «աշխատել» երեք հարյուր տարի հետո<sup>235</sup>: Եվ քանի որ «համաշխարհային գիշերի» խավարի մեջ «ոչ միայն Սրբությունն է՝ որպես Աստվածայինին ուղղված պարզ հետք կորստյան մատնվում, այլև այդ հետքի թողած հետքերն էլ համարյա ջնջված են»<sup>236</sup>, մտածողին մնացող միակ հնարավորությունը «լեզվի մեջ անկատելի ակոսներ քաշելն» է<sup>237</sup>:

<sup>234</sup> M. Heidegger, “Wozu Dichter?”, in: ders., *Holzwege*, Klostermann, Ffm., 1994, S. 270.

<sup>235</sup> Беседа сотрудников журнала “Шпигель”..., Философия Мартина Хайдеггера и современность, с. 245.

<sup>236</sup> M. Heidegger, “Wozu Dichter?”, ders., *Holzwege*, S. 272.

<sup>237</sup> M. Heidegger, “Brief über den Humanismus”, in: GA, B. 9, S. 364.

## ԵՎ ԶԿԱ ՎԵՐՁԸ...

### «հիրա-դարձությունից»

*Մարդը գոյի տերը չէ: Մարդը գոյության հովիվն է:*

Մ. Հայդեգեր

Հայդեգեր II-ի ոճի արմատական փոփոխությունը, նրա հեռացումը գոյություն և ժամանակի բներևութաբանական դիսկուլուսից որոշ հետազոտողների դրդել է կասկածի տակ դնել մտածողի ստեղծագործության երկրորդ փուլի փիլիսոփայական արժեքը, սահմանափակվելով վաղ շրջանով, երբ նա «դեռ չեր սառել-մնացել ամեն մի փաստարկման համեստ առավելության իր կեցվածքով և չեր իջել ծիսորեն բեմականացված միտք-բանաստեղծության մակարդակի»<sup>238</sup>:

Սոտեցումը որքան հասկանալի է, նույնքան էլ՝ անարդար: Ոչ միայն այն պատճառով, որ հայդեգերյան մտքի երկրորդ շրջանին են պատկանում այնպիսի վերլուծական գոհարներ, որպիսիք են, ասենք, Աշխարհի պատկերի ժամանակը կամ Նիցշեին նվիրված դասախոսությունների շարքը: Առավել կարողն այն է, որ նոյնիսկ դիցաբանականացված ոճով գրված գործերի ասելիքը միանգանայն ընկալելի է բոլոր նրանց համար, ովքեր պատրաստ են ականջալուր լինել դրանցում երևակվող «միտք-բանաստեղծությանը»:

Հայդեգերի փիլիսոփայական զարգացման երկրորդ փուլի վերլուծությունը սույն երկասիրության խնդիրը չէ: Ստորև ես կրավարավեն մի քանի սիսեմատիկ որույրներով՝ ընդիանուր պատկերի հարաբերական լրիվությունն ապահովելու համար:

Մտածողի ապրած «շրջադարձից» (Kehre) հետո նրա մտքի հիմնական ուղղությունը չի փոխվում: Հայդեգերը մնում է «գոյության մտածող», որի նպատակն է տեխնիցիստական դարի «մետաֆիզիկայի» հաղթահարումը գոյության հարցի վերարձարձմանը: Այլ բան է, որ այս նոր հանգրվանում Հայդեգերն այլևս հրաժարվում է «գոյությունը» այն հասկացող «արտոնյալ գոյի» հիման վրա մտածելու բներևութաբանական մոտեցումից և հետամուտ է լինում գոյությանը «որպես այդպիսին»: Ներկայության «անդրանցման» ժամանակային կառուցվածքի

<sup>238</sup> X. Брункхорст, “Эгоцентризм в эпоху картины мира. Хайдеггер, Вебер и Пиаже”, в кн.: *Философия Мартина Хайдеггера и современность*, с. 81.

նկարագրությունը փոխարինվում է «գոյապատճական» հետազոտությամբ:

Ուշ շրջամի Յայդեգերի համար կարևոր այս եզրը չպետք է թյուրիմացություն առաջացնի: Խոսքը գոյության պատմության մասին չէ՝ գոյությունը ինքնին պատմություն ունենալ չի կարող: Յայդեգերը նկատի ունի գոյության՝ մարդու առջև «բացվելու» և «ծածկվելու» պատմությունը:

Այստեղ երևան է գալիս երկու փուլերի միջև եղած սկզբունքային տարրերությունը: Եթե հիմնարար գոյաբանության փուլում ներկայությունը կանգնած էր այս կամ այն հնարավորությունը հանձն առնելու կամ չառնելու ազատ ընտրության առջև, ապա գոյապատճական շրջանում խոսքը ներկայության՝ գոյության կողմից «ընտրվելու» նասին է: Ընդ այդ՝ «գոյության իմաստը» փոխարինվում է «գոյության իսկությամբ», իսկ «գոյության մոռացության» (*Seinsvergessenheit*) փոխարեն Յայդեգերը II-ը խոսում է մարդու՝ «գոյությունից լրված լինելու» նասին (*Seinsverlassenheit*):

Բայց ժառանգականությունը նույնպես առկա է: Դժվար չէ տեսնել, որ երկրորդ փուլը նոր որակ է հաղորդել ծակատագրից ընտրված լինելու (*Կրավվրական ընտրության*) այն օպակափարին, որը Յայդեգերը սկսել էր մշակել Գոյություն և Ժամանակի վերջին հատվածներում:

Թեև ներկայության և գոյության այս նոր կոնստելացիայում «առաջնայնությունը» տրվում է գոյությանը, ուշ Յայդեգերի նոտեցումը ֆատալիստական չէ: Գոյության «ի հայտ գալու» և «ծածկվելու» փուլերը միայն ծևավորում են գոյաբանական պայմանները, որոնցում գոյում է ներկայությունը, բայց չեն սահմանափակում նրա ազատությունը գոյի վերաբերյալ ծեռնարկ իրականացնելիս: Երևի, կարելի կլիներ ասել, որ այս կամ այն պատճական դարաշրջանում գոյության ծածկյալ կամ բաց լինելը պայմանավորում է ներկայության արկանվածությունը *hic et nunc*, եթե տեսյակ չլինեինք, որ Յայդեգերը կմերժեր «պայմանավորելու» գաղափարը, իշշեցնելով, որ պատճառահետևանքային կապերը գործում են գոյերի միջև և չեն վերաբերում գոյությանը:

Մյուս կողմից, աղերսները երկուստեր են: Որքան մարդ՝ իր իսկական բնույթի դրսնորման համար, ունի գոյության կարիքը, նույնքան էլ գոյությունը՝ երևան գալու համար, կարիք ունի մարդու: Այս իմաստով է, որ մարդը գոյության հովհով է<sup>239</sup>: Խոսքն այստեղ ոչ թե գոյության

<sup>239</sup> M. Heidegger, “Brief über den Humanismus”, in: GA, B. 9, 1976, S. 342.

վրա «ազդելու» կամ «տիրություն անելու» մասին է, այլ այն «հսկելու»՝ այն գվարը «արքունության», որի մասին այնքան մանրամասն խոսել ենք ներ-կայության իսկական և ոչ իսկական գոյության համատեքստում:

Յայդեգերյան փիլիսոփայության երկու շրջանների միջև կապը հաստատող հաջորդ պահը փիլիսոփայական ավանդության կազմագերծումն է, որը ինչպես հիշում ենք, պետք է կազմեր Գոյություն և ժամանակի երկրորդ մասը: Ուշ Յայդեգերի մոտ գոյության պատմությունը դրսնորվում է որպես փիլիսոփայության պատմություն: Վերջինիս փուլերն ել, սրան համապատասխան, որոշվում են նրանով, թե ինչպես է գոյությունը ծածկվում և քողազերծվում մարդու առջև:

Սարդու՝ «գոյության իսկության» հետ հարաբերվելու առունով Յայդեգերը երկու «սկիզբ» է առանձնացնում: Առաջինը կապված է հիմն հույների հետ: Այն ծայր է առնում գոյության բացությունից, որով բնութագրվում է մինչսուրատյան փիլիսոփայությունը, և անցում կատարում դեպի հասուն մետաֆիզիկան (Պլատոն, Արիստոտել): Մետաֆիզիկայի դարաշրջանը տևում է մինչև նոր ժամանակներ և իր կատարյալ դրսնորումը գտնում եւլուպական մողեանում:

Մետաֆիզիկայի փուլում մարդու և գոյության հարաբերությունը կառուցված է փոխադարձ հակադրվածության՝ պլանավորման և հաշվարկի վրա: Սարդու և գոյության դեմ հանդիման դրված լինելը Յայդեգերն անվանում է «առ-դրություն» (Ge-Stell)<sup>240</sup>:

Սակայն «առ-դրությամբ» բնութագրվող դասավորությունը գոյապատմության «նախ-արարն» է միայն (Vorspiel): Այն պետք է փոխարինվի նոր մտածողությամբ, որն ի տարբերություն «վերջին հիմնավորումներ» փնտրող մետաֆիզիկայի, «անհատակ» մտածողություն է (ab-gründig):

Այդ անցումը արմատապես նոր սկիզբ է ենթադրում և պետք է իրականանա որպես «ցատկ» (Sprung):

Մյուս կողմից, գոյության նկատմամբ հարաբերության երկու փուլերը մնում են փոխադերսված: Յայդեգերյան «այլ սկիզբը» չի հակադրվում առաջինին, բայց նաև վերադարձ չէ նրան. այն ծագում է պատմական ավանդության վերահմաստավորումից: Վերջինիս շնորհիվ տեխ-

<sup>240</sup> Յայդեգերի ստեղծած այս նեոլոգիզմի հիմնավորումը տե՛ս M. Heidegger, “Der Satz der Identität”, in: ders., *Identität und Differenz*, Neske, Stuttgart, 1996,էջ 23:

նիկայի գերիշխանությամբ բնութագրվող «առ-դրությանը» գալիս է փոխարինելու այլ սկիզբ ավետող «իրա-դարձությունը» (Er-eignis)<sup>241</sup>:

Դայդեգերի ուշ փիլիստիկայության մեջ առանցքային դեր խաղացող այս եզրը բազմաբովանդակ է, և նրա հայերեն թարգմանությունը՝ հայացումը, իմաստային բացորշում է պահանջում<sup>242</sup>:

Առօրյա գերմաներենում «Ereignis»-ը նշանակում է «իրադարձություն»: Դայդեգերը հիշեցնում է, որ նախկինում այդ բառը տառադարձվելիս է եղել որպես «Eräugnis», ի ցույց դնելով իմքում ընկած «Ausge»-ն (աչքը) և հիշեցնելով, որ իրադարձությունն այն է, ինչ ակն-առու է, աչքով տեսանելի, ի վերջո՝ ակն-հայտ:

«Ereignis»-ում պարունակվող մյուս կարևոր իմաստը «յուրացում»-ն է, որն առաջ է գալիս «eigen» (սեփական) և «er(e)igene» (յուրացնել, սեփական դարձնել) բառերի հետ զուգորդվելու շնորհիվ: Այստեղից՝ «Eigentum» (սեփականություն), «eigentlches» (իսկական, բուն իրենը, «բուն ինքը») որպես ածական, ռուսերեն՝ «поплинхыый») և նույնիսկ՝ «eigentlich» (այսինքն՝ սոցտեղություն): Ուրեմն, «յուրացնելը» միայն արտաքին իմաստով չէ, որ հասկացվում է, այլ որպես սեփական բովանդակության հարստացում, որպես «այս՝ ինքն», որի մասին վկայում է «sich eingen machen» (փոխառնել, սեփական բնության մասը դարձնել) արտահայտությունը: Ավելորդ չէ նշել, որ անգլալեզու փիլիստիկայական ավանդությունը հայդեգերյան եզրը բարգմանվում է «owning», շեշտադրելով «յուրացման» հանգամանքը:

Առաջարկված «իրա-դարձություն»-ը համարյա անկորուստ փոխանցում է բնօրինակի կրկնակի իմաստը: Մի կողմից, դա այն է, ինչ հրականանում է, որտեղից՝ «իրա-դարձություն» (հիշելով, որ իրադարձության խորհուրդը կատարվելն իմքն է), մյուսից՝ այն նշանակում է յուրացում, որտեղից՝ «յուրա-դարձություն» կամ «իրա-դարձություն»: Գործող ուղագրության «յու»-ի փոխարինումը դասական «հիւ»-ով թույլ է տալիս չկորցնել առաջին նշանակությունը և պահպանել բարի ընդունված արտասանությունը՝ «իրադարձություն»:

Դայդեգերի մերձավոր աշակերտ, նրա երկերի բազմամյա խմբագիր Վ.-Ֆ. ֆոն Շերմանը այսպես է բացատրում հայդեգերյան եզրի փիլիստիկայական իմաստը:

<sup>241</sup> Տե՛ս նոյս տեղում, էջ 25:

<sup>242</sup> Այդ բացորշումն առաջին մոտեցմամբ տողերիս հեղինակն իրականացրել է Գյորեի ֆառավաժի վերջերզի համատեքստում՝ «Դավերժ իզականը որպես հղացք և փորձառություն» էսեում:

Իւրա-դարձությունը բար է, որ նշանակում է գոյության իսկության և մեր-կայության գոյապատմական փոխպատկաննելությունը: Իւրա-դարձությունը նշանակում է ինչպես յուրացնել, այնպես էլ յուրացված լինել<sup>243</sup>:

Ծնորհիվ այդ փոխադարձ յուրացման իրադարձությամ՝ տեխնիցիստական աշխարհի տիրապետությունը դուրս է մղվում. մարդը և գոյությունը միմյանց հասանելի են դառնում իրենց եռթյան մեջ, կորցնելով իրենց այն բնութագրերը, որ ձեռք էին բերել մետաֆիզիկայի դարաշրջանում<sup>244</sup>:

Նոր մոտեցումը նոր միջոցներ է պահանջում: Եթե նախկինում փիլիսոփայությունը Հայդեգերի հանար հանդես էր գալիս որպես «խատիվ գիտություն» (իհարկե, բարիս յուրահատուկ՝ «հուսեռյան» իմաստով), ապա այժմ նա հրաժարվում է ոչ միայն «գիտականությունից», այլև «փիլիսոփայությունից», վերջինս փոխարինելով լեզվականության մեջ արմատավորված «մտածողությամբ»<sup>245</sup>:

Անշուշտ, դա չի նշանակում, որ նախորդ փուլի փիլիսոփայական մտածողությունը «լեզվական» չէր: Մենք գիտենք, որ լեզուն կենտրոնական դեր է ունեցել մտածողի ստեղծագործության բոլոր փուլերում և հիշում ենք գերմաներենի իմաստատեղծ դերը Գոյություն և Ժամանակի տեխնիկական եզրաբանության կերտման գործում: Սակայն նոր փուլում գերիշխող է դառնում բանաստեղծական-դիցաբանական կոնուտացիաներով հագեցած լեզվականությունը, որի կիրառության դաշտն էլ առավելապես լեզվական-գրական է: Տեսնել տալու համար, թե ինչպիսի տեղ է գրավում Հայդեգերի ուշ ստեղծագործության մեջ առանձին բանաստեղծների՝ Յոլդերլինի, Ոիլկեի, Թրակլի գործերի մեկնաբանությունը, բավական է հիշատակել Յոլդերլինի երկու հիմնե-

<sup>243</sup> F.-W. v. Herrmann, “‘Beiträge zur Philosophie’ als hermeneutischer Schlüsselez zum Spätwerk Heideggers”, in: *Heidegger – neu gelesen* (Hrsg. v. Marcus Happel), Würzburg: Königshausen und Neumann, 1997, S. 81. Անհրաժեշտ է նշել, որ գոյության բողոքված լինելը, նրա բացակայությունը, որպանով որ դա էլ մարդու աշխարհին վերաբերելու որոշակի ծև է ենթադրում, նոյնպես «հրա-դարձություն» է: Իւրադարձությունը, այսպիսով, այն է, ինչ տեղի է ունենում երկու դարաշրջանների հանդիպման վայրում: Բացակայությունը իրադարձություն է (Entzug ist Ereignis) ասում է Հայդեգերը (M. Heidegger, “Was heißt Denken?”, in: GA, B. 7, *Vorträge und Aufsätze*, Klostermann, Ffm., 2000, S. 129):

<sup>244</sup> Տե՛ս և F.-W. v. Herrmann, “‘Beiträge zur Philosophie’ als hermeneutischer Schlüsselez zum Spätwerk Heideggers”, in: *Heidegger – neu gelesen*, էջ 26:

<sup>245</sup> Տե՛ս և M. Heidegger, “Was heißt Denken?”, in: GA, B. 7, էջ 127-144:

րին («Գերմանիա» և «Չոենոս») նվիրված դասախոսությունների շարքը, որն զբաղեցնում է մտածողի երկերի լիակատար ժողովածուի երեքհարյուր էջանց հատորն ամբողջությամբ<sup>246</sup>:

Դայդեգերի ուշ շրջանի փիլիսոփայության ակունքներում ընկած է մի եզակի աշխատություն՝ *Փիլիսոփայական ներդրումներ*. իրա-դարձությունից՝ *Beiträge zur Philosophie (Vom Ereignis)*, որն ինքը մտածողը, համարել է իր երկրորդ հիմնական գրքը (*Hauptwerk*): Գիրքը ստեղծվել է 1936-38-ին, բայց հրատարակվել է ավելի քան հիսուն տարի հետո՝ 1989 թվականին, մտածողի հայրութամյակի կապակցությամբ<sup>247</sup>: Ուշացման պատճառը եղել է Դայդեգերի պահանջը՝ երեսնական-քառասնական թվականների երկերը հրատարակել միայն այն բանից հետո, երբ լույս ընծայված կլինեն վաղ շրջանի դասախոսությունների տեքստերը: Մտածողը հույս է ունեցել, որ դրա շնորհիվ այդ զարմանալի, ծածկագրային ծնակերպումներով հագեցած գլուխգործոցն ավելի հասկանալի կլինի ընթերցողին:

Գիրքն անսպոռ է ամեն ինչով՝ երկմաս վերնագիրը ներառյալ: Առաջին նախադասությունը՝ «Փիլիսոփայական ներդրումներ», ցուցադրաբար չեղոք է, այն դեպքում, երբ («քչերի», «հազվագյուտների» համար նախատեսված) երկրորդի թարգմանության դժվարությունը ոչ միայն բուն «իրա-դարձության» բովանդակության հետ է կապված (այդ մասին վերը բավկանաչափ խոսվել է), այլև դրան նախորդող «vom» մասնիկի, որի բնական թարգմանությունը պետք է լիներ «իրադարձության մասին»: Բայց չէ՝ որ ասված է<sup>248</sup>: Դայդեգերը երբեք չի մտածել «ինչ-որ բանի մասին», նա միշտ մտածել է «ինչ-որ բանը»: Եվ երբ հիշում ենք նաև Դայդեգերի՝ Կարլ Յասերսին ուղղված կշտամբանը՝ «Պետք է փիլիսոփայել ոչ թե սահմանային իրադրության մա-

<sup>246</sup> M. Heidegger, “Hölderlins Hymnen ‘Germanien’ und ‘Der Rhein’”, in: GA, B. 39, Ffm.: Klostermann, 1980. Դայդեգերի՝ այդ մտայնությամբ գրված հովանաներից մի քանիսը հասանելի են հայերեն՝ շնորհիվ Դակոր Մովսեսի թարգմանությունների, տես Ս. Դայդեգեր, «Հյուղերինը և բանաստեղծության եռթյունը», նույնի «Ծագես տոնութերին», երկուսն էլ՝ Ֆր. Դյուդերին, Բանաստեղծություններ, թարգմ. Դ. Սովուսի, Նարիի, Եր., 2002, ինչպես նաև՝ Ս. Դայդեգեր, «Եպուն», նույնի «Խոսքը բանաստեղծության մեջ», երկուսն էլ՝ Գ. Թրավը, Բանաստեղծություններ, թարգմ. Դ. Սովուսի, ի.կ.կ., Եր., 2007:

<sup>247</sup> M. Heidegger, “Beiträge zur Philosophie (vom Ereignis)”, in: GA, B. 65, Klostermann, Ffm., 2003.

<sup>248</sup> Յանա Արենդտն է այդ մասին ասում Դայդեգերի ուրսունամյակին նվիրված իր դասախոսության մեջ, տես և Hannah Arendt - Erinnerung an Martin Heidegger (Audio) <http://www.youtube.com/watch?v=a8O6zvAGR-c>

սին, այլ սահմանային իրադրությունից», վերջնականապես համոզվում ենք, որ Հայդեգերը ոչ թե «իրա-դարձության մասին» է խոսում, այլ «իրա-դարձությունից», նրա «ներսից», քանի որ վերջինս միշտ մտածողինն է, և ընթերցողի համար էլ իրա-դարձությունը հասկանալու միակ միջոցը այն սեփականացնելն է:

Փիլիսոփայական մերդումները չի պատկանում այն գրքերի թվին, որոնք կարդում են հետևողական լարումով՝ առաջին էջից մինչև վերջինը: Բազմաթիվ «կարը կարին» (figurativēßig) կցած հատվածներից բաղկացած այդ գիրքը, ավելի շուտ, յուրահատուկ մի Աստվածաշունչ է: Անշուշտ, ոչ սրբազն ծագման և դրանով պայմանավորված անդրդվելի հեղինակության իմաստով (անկախ նրանից, թե ինչ կասեր այդ մասին Հայդեգերը), այլ որովհետև այն կարելի է բացել ցանկացած էջի վրա, կարդալ ցանկացած տեղից և ստանալ կենսական մղումներ, որոնք աշխատում են ամենատարբեր տեսական և գործնական համատեքստերում:

Դա չի նշանակում, որ հայդեգերյան գլուխգործոց գուրք է ներքին տրամաբանությունից: Այն յոթ բաժինները, որոնցից գիրքը կազմված է, միանգամայն հետևողական շարունակում են միմյանց, ավարտին հասցելով անբողջական կառույցը: Բայց արտաքին առանցքից կարևոր են գրքի ներքին ճյուղավորումները, որոնցում երևակվում են «Ծմակի կածանների» (Holzwege) «ընդհատվող արահետները»<sup>249</sup>:

Գրքի մյուս առանձնահատկությունն այն է, որ բուն տեքստը բազմաթիվ տողատակ հղումների միջոցով ներառում է Հայդեգերի տարբեր տարիներին գրած աշխատությունների գգալի մասը, ներկայանալով որպես հսկայական «պոլիտեքստ», որպես յուրատեսակ «Աղերսների գիրք» (անգլիացիք կամեի՝ «Book of Reference»): Այդ աղերսները վերաբերում են ինչպես գրվածին, այնպես էլ գրվելիքին: Եվ եթե ապագայի գործերի նկատմամբ Ներդրումների կապը հնարավոր է դիտարկել հղացքի և նրա հետագա ծավալման համատեքստում, ապա առաջին շրջանի գործերի հետ նրա հարաբերությունն ավելի բարդ է: Այս տեղ նորից տեղին է աստվածաշնչամ գուգորդությունը՝ «Մի՛ համա-

<sup>249</sup> «Ծմակն անտարի իին ամումն է: Ծմակում ուղիմեր կամ, որոնք մեծամասամբ խոտածածկ են և անսպասելի ընդհատում են այնուղ, որ դեռ անցմող չի եղել: Դրանք կոչվում են ծնամիկ կածամներ: Յուրաքամյուրը վագում է առանձին, բայց միմույն անտարում: Զաճախ թվում է, որ մենքը մյուսին նման է: Բայց դա միայն թվում է: Փայտահատը և ամուպապակի գիտեն ուղիմները: Նրանք գիտեն՝ ինչ է նշանակում կածանով գնալը»: Տե՛ս M. Heidegger, Holzwege, բնարան:

րիք եթէ եկի լուծանել զալրենս կամ զմարգարտս. ո՞չ եկի լուծանել՝ այլ լուռվ»<sup>250</sup>. Ինչպես նոր կտակարանը պատվիրաններին և մարզադեների խոսքերին արվող անընդհատ հղումներով մշտապես վերամեկնաբանում և վերահիմաստավորում է Յինը, այդպես էլ Յայդեգերը անընդհատ նոր կոնտեքստի մեջ է դնում իր ճախիկին զարդարները՝ վստահ, որ ողջ Յայդեգերը II-ը արդեն իսկ առկա է եղել Յայդեգեր I-ում:

Այդպիսին է Յայդեգերի երկրորդ «գլխավոր գիրքը՝ այն տարօրինակ «հիպերտեքստը», որի իրա-դարձության մեջ Յայդեգերն ընկղմված մնաց մինչ կյանքի ավարտը: Գոյության իսկության ի բաց դրված մտածողությունն այլևս փիլիսոփայինը չէր: «ճակատագրից ընտրված» մտածողը խոստովանում է որդուն:

Ինձանում մտածվում է: Դրա դեմ ես ոչինչ անել չեմ կարող<sup>251</sup>:

### Յայդեգերը որպես հնարավորություն

Յայդեգերի ազդեցության պատմությունը Յայդեգերի ազդեցության պատմությունը չէ:

Դոնենիկ Կեգի

1975 թվականից հրատարակվող *Մարտին Յայդեգերի երկերի լիակատար ժողովածուն* հարյուր երկու հատոր է ունենալու<sup>252</sup>. Դրանց զգալի մասը տարբեր տարիներին կարդացված դասախոսությունների տեքստերն են: Սա ոչ պատահականություն է, ոչ էլ անփութություն՝ կապված նախապատրաստական գրառումներին ժամանակին գրքի ծև չտալու և տպագրության չհանձնելու հետ: Կենդանի խոսքը, լսարանի հետ անմիջական շիման ընթացքում համատեղ մտածելը Յայդեգերի «մտածելու գործի» (die Sache des Denkens) կարևորագույն մասն են կազմել: Յայդեգերի խնդիրը երբեք այն չի եղել, որ ընթերցողը հասկանա այն, ինչ ինքն է հասկացել. նրա խնդիրը խոսակցին հասկանալ սովորեցնելն էր:

Սա նկատի ունենալով՝ դժվար է չհամաձայնել այն մտքի հետ, որ «Յայդեգերի մտածողությունը» ուսումնասիրության միակ առարկա

<sup>250</sup> Աւետարան ըստ Մատթեոսի, գլ. Ե, 17:

<sup>251</sup> Es denkt in mir. Ich kann mich nicht dagegen wehren. Մեջքը կում է ըստ՝ R. Safranski, նշվ. աշխ., էջ 366:

<sup>252</sup> Յուրաքանչյուր տարի լույս է տեսմում երկու հատոր:

դարձնելն ինքնին վատթարագույն դոգմատիզմ է հենց հայդեգերյան իմաստով՝<sup>253</sup>:

Խվապես, որքան էլ խորագնին և ուսանելի են մտածողի աշակերտների և անմիջական հետևորդների փորձերը ամենայն պատասխանատվությամբ վերլուծելու, ներկայացնելու, հասանելի դարձնելու ։ Յայդեգերի կյանքի գործը և նրա չանցնող արժեքը, մեր հայացքը նախ և առաջ ուղղված է դեպի մտավոր այն կառույցները, որոնք առաջ են եկել հայդեգերյան մտքից կենարար ազդակներ ստանալու, այն յուրովի շարունակելու, նրա հետ վիճելու, բախվելու կամ ընդհանրապես ժխտելու ինտենկուուալ ծիգերի արդյունքում։

Յայդեգերի միտքն ինքնին իմտենցիոնալ է։ Այն հետազոտողին թույլ չի տալիս կենտրոնանալ զուտ նրա և նրա գրած տեքստերի վրա, այլ իրեն հարցում անողին դուրս է շարտում դեպի աշխարհ՝ դեպի իրերն իմքնին։ Գուցե դա է նկատի ունեցել Դոմենիկ Կեգին, պարադրսալ ձևով նկատելով. «Յայդեգերի ազդեցությամ պատմությունը Յայդեգերի ազդեցությամ պատմությունը չէ»։

Արմատական հանգամանք, որը թույլ է տալիս դիտարկելու Յայդեգերի փիլիսոփայությունը որպես ասպազյան ուղղված հնարավորություն։

Այդ հնարավորությունը ամենատարբեր միջոցներով և եղանակներով է հանձն առնել – Յայդեգերի ուսմունքի այս կամ այն միտումը, գիծը շարունակելով՝ ինչպես Յանս-Գեորգ Գաղամերը, Յայդեգերի հետ կառուցողական վեճի մեջ մտնելով՝ ինչպես Ժան-Պոլ Սարտրը, նրա դեմ կատաղի կրիվ մղելով՝ ինչպես Թեոդոր Աղորնոն<sup>254</sup>, նրա զուգահեռ գոյությանն առանձնապես ուշադրություն շրարձնելով՝ ինչպես Լյուդվիգ Վիտգենշտայնը, որը, այնուամնենայիվ, մի առիթով նկատել է. «Ինձ համար լիովին մտածելի է այն, ինչ նկատի ունի Յայդեգերը “գոյություն” և “ահ” ասելով»<sup>255</sup>, հայդեգերյան մոդելն աչքի առաջ՝ սովորական լեզվի գոյաբանություն ստեղծելով՝ ինչպես Զիլբերտ Ռայլը, որն իրեն բնորոշել է որպես «մեկը, որ Յայդեգեր է կարդացել», ճշմար-

<sup>253</sup> Տե՛ս Բ. Կուրենոյ, “Сами вещи”, Мартина Хайдеггера”, Исследования по феноменологии и философской герменевтике, ЕГУ, Минск, 2001, էջ 41:

<sup>254</sup> Տարիմերի հեռվից առավել տեսանելի է «փիլիսոփայական հաղորդակցությունից խոսափող» երկու մտածողների շատ հարցադրումների ներքին նմանությունը, տե՛ս ս. H. Mörchen, Adorno und Heidegger: Untersuchung einer philosophischen Kommunikationsverweigerung, Klett-Cotta, Stuttgart, 1981:

<sup>255</sup> U. Tietz, “Heidegger und Ludwig Wittgenstein. Diesseits des Pragmatismus – jenseits des Pragmatismus”, in: D. Thomä (Hrsg.) Heidegger-Handbuch, S. 545.

տուրքան գոյաբանական ըմբռնումը (գոյուրքան իսկուրքունը) անալի-տիկ փիլիսոփայուրքան միջոցներով կազմաքանդելով՝ ինչպես արել է նախկին աշակերտը՝ Եռնստ Տուգենդհատը:

Դայդեգերյան մտածողության դաշվածքը կրում են նրա «մետաֆի-զիկայի կազմագերծումը» «կազմաքանդման» մեթոդի վերածած և «գո-յաբանական տարբերությունից» դեպի «différence» ճանապարհ ան-ցած ժակ Դերիդան, «մեր-կայության» և «իրա-դարձության» հղացքնե-րից «*homo sacer*»-ի և «մեսիական ժամանակի» կոնցեպտները մակա-բերած Զորջո Ազամբենը:

Նույնիսկ արհեստական ինտելեկտի մշակողները, որոնք, թվում է, պետք է հեռու լինեին մտածողի մտային կառույցներով ոգևորվելուց, փորձել են արաջնորդվել Դայդեգերի «աշխարհում-լինելու» ոգով կա-ռուցված մողելներով<sup>256</sup>, իսկ ոռւս պահպանողականները Դայդեգերի մեջ տեսել են դեռևս ստեղծվելիք ոռւսական փիլիսոփայության հնա-րավորությունը<sup>257</sup>.


Այսօր էլ, ավելի քան երրոք, մտածողի անհանգստացնող ներկա-յությամբ պայմանավորված փիլիսոփայական դիսկուրսը նոր ճյուղա-վորումներ և համատեքստեր է առաջ բերում:

Դայդեգերի «մտքի գործը» շարունակվում է: Եվ չկա վերջը...

<sup>256</sup> Տե՛ս T. Vinograd, “Heidegger and the Design of Computer Systems”, in: *Technology and the Politics of Knowledge* (ed. by A. Feenberg and A. Hannay), Bloomington and Indianapolis: Indiana University Press, 1995, ինչպես նաև՝ K. Leidmair, *Künstliche Intelligenz und Heidegger. Über den Zwiespalt von Natur und Geist*, Wilhelm Fink, München, 1999:

<sup>257</sup> Այս՝ ըստ Էնթրյան խնդրահարուց ինտելեկտուալ կառույցում առավել ուշագրավ են Երկու հանգամանք՝ հայդեգերյան «մետաֆիզիկայի կազմագերծման» փոխարինումը «արքեմոդերմ» կազմագերծմամբ» և «ոռւսական դազայի անալիտիկան»: Տե՛ս <http://www.platonizm.ru/content/dugin-martin-haydegger-vozmozhnost-russkoy-filosofii>:





# ԱՐԱ Գ

Դանս-Գեորգ  
ԳԱՂԱՄԵՐ

1900 - 2002

## ԱՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Իհարկե, կարելի է բուլություն տեսնել նրանում, որ ժամանակակից փիլիսոփայությունը դասավան ավանդության մեկնությանն ու վերամշակմանը ծեռնամուխ է լինում սեփական անկարողության այդպիսի խոստովանությամբ։ Բայց հաստատ է, որ փիլիսոփայական մորի համար շատ ավելի մեծ բուլություն է, եթե մտածողը խուսափում է նման փորձության եմքարկվելուց և գերադասում է նախարություն անել՝ միայն սեփական ուժեղին ապավիմելով<sup>1</sup>:

Յ.-Գ. Գաղամեր

### Ավանդության հասկացման թեման

Գոյություն և ժամանակում Հայդեգերն ասում է. «Ներ-կայությունը կարող է ավանդությունը հայտնաբերել, պահպանել և հետևել նրան բացորոշ ձևով։ Ավանդության հայտնաբերումը և բացորոշումն այն բանի, թե ինչ է այն «հաղորդում» և ինչպէս է հաղորդում, կարող է վերցվել որպես ինքնուրույն խնդիր»<sup>2</sup>:

Այս խնդիրի նշակումը հանձն է առել Հանս-Գեորգ Գաղամերը, որի ջանքերով հերմենուստիկան վերածվել է փիլիսոփայության ունիվերսալ տեսանկյունի՝ կապված մարդկային իմացության և արակտիկայի բոլոր բնագավառներում ավանդության լեզվական հասկացման և բանական յուրացման հետ:

Նախորդների թվում Գաղամերը հիշատակել է Հեգելին և Կիրկեգորին, Դիլբային և Յուսեռլին, նաև շատ ուրիշների<sup>3</sup>. Սակայն անկաված

<sup>1</sup> “...den Narren auf eigene Faust zu spielen”, H.-G. Gadamer, *Wahreit und Methode*, J.C.B. Mohr (Paul Siebeck), Tübingen, 1972, S. XXVIII.

<sup>2</sup> M. Heidegger, *Sein und Zeit*, Niemeyer, Tübingen, 1993, S. 21.

<sup>3</sup> Վաղ Գաղամերի կրած փիլիսոփայական ազդեցությունների մասին տե՛ս Jean Grondin, “Gadamer vor Heidegger”, in: “Internationale Zeitschrift für Philosophie”, 1996, S. 197-226.

է, որ նրա փիլիսոփայական զարգացման վրա վճռական ազդեցություն է ունեցել ծանոթությունը Մարտին Յայրեգերի հետ, որին Գաղամերն աշակերտել է 1923-1928 թվականներին<sup>4</sup>: Վերջինիս շնորհիվ նա հեռացել է համակարգաստեղծ իդեալիզմի՝ նախ և առաջ մարբուրգյան նորկանոտականության դիրքերից, խորանալով հունական փիլիսոփայության աշխարհը, Պլատոնի և Արիստոտելի փիլիսոփայության մեջ փնտորելով աշխարհի նախասկզբնական փորձառության կենդանի տրոփյունը: Եթե հայրեգերյան միտքը դարձել է Գաղամերի ինքնուրույն զարգացումը բեղմնավորող հիմնական ազդակը, ապա հոյսները և Յեգելը մշտապես ներկա են եղել նրա ստեղծագործության մեջ՝ որպես ուղենիշ և նախապատկեր:

### Գաղամեր-մարդու «հասկացող» ճակատագիրը

Յարյուր երկու տարի ապրած Յ.-Գ. Գաղամերը, ըստ երևույթին, մեզ հայտնի ամենաերկարակյաց փիլիսոփան է: Նրա կյանքի իրողություններին են պատկանում երկու համաշխարհային պատերազմ, հեղափոխություններ, սոցիալական համակարգերի ծևալորումներ և փլուզումներ: Նա էլ Յայրեգերի նման նացիոնալ-սոցիալիզմի տիրապետության տարիներն անցկացրել է հայրենիքում, ստիպված է եղել գնալ «կոմպրոմիսների» (հասկանալի է, որ ամբողջատիրական ռեժիմի պայմաններում դասախոսական աշխատանքով զբաղվողի համար, իսկ Գաղամերը չի դադարել դասախոսել, այսպես կոչված «ներքին էմիգրացիան» լրիվ լինել չեր կարող), բայց, այնուամենայնիվ, կարողացել է պահպանել իր բարի անունը, չի անդամակցել նացիստական կուսակցությանը, չի հրաժարվել նախկին կապերից (մասնավորապես որպես հրեա՝ ակադեմիական կյանքից մեկուսացված Յուսեռլի հետ), թեև միևնույն ժամանակ գեկուցումներ է կարդացել Ֆլորենցիայում և Փարիզում, անուղղակիորեն լեզիտիմացնելով նացիների ռեժիմը: Պատերազմի ավարտը խորհրդային օկուպացիոն գոտում դիմավորելով, Գաղամերը ստանձնել է Լայցիգի համալսարանի ռեկտորությունը (1946-47), այս անգամ ստիպված լինելով կոմպրոմիսներ փնտորել խորհրդային իշխա-

<sup>4</sup> Գաղամերը խոստվանել է, որ 1924-ին, Յայրեգերի հիմնելեկտուալ առավելության զգացողությունից ճնշված, խնդիր է ունեցել սեփական մտքի համար ավելի ամուր հող ծերեն, քան այն, որին կանգնած էր «այդ հզոր մտածողություն»: Տե՛ս H.-G. Gadamer, *Vernunft im Zeitalter der Wissenschaft: Aufsätze*, Suhrkamp, Ffm., 1976, էջ 159 և հաջ.:

նությունների հետ: 1947-ին տեղափոխվել է Մայնի Ֆրանկֆուրտ, իսկ 1949-ին ստանձնել է Մարքուրգի համալսարանի փիլիսոփայության ամբիոնի ղեկավարի պարտականությունները, այդ դիրքում փոխարինելով Կարլ Յասպերսին: Իր երկար կյանքի ընթացքում Գաղամերն անբասիր հեղինակություն է վայելել ողջ աշխարում: 1968-ին բոշակի անցնելուց հետո էլ չի դադարեցրել իր մասնակցությունը գիտական կյանքին: Մինչև 1989 թվականը որպես հրավիրյալ պրոֆեսոր դասավանդել է ԱՄՆ համալսարաններում: Մշտապես շրջապատված է եղել աշակերտներով և հետևողմերով<sup>5</sup>: Վերջին տարիներն անց է կացրել Յայ-դելբերգում, որտեղ և թաղված է:

## «ԽԱԿՈՒԹՅՈՒՆ և ՄԵԹՈԴ»

Գաղամերի փիլիսոփայական հղացքը ծևավորող սկզբունքային հակառակությունը բյուրեղացած է նրա հիմնական երկի՝ ԽԱԿՈՒԹՅՈՒՆ և ՄԵԹՈԴի վերնագրում<sup>6</sup>: Առաջին բառը հղում է ծշմարտության՝ որպես «բացության» ընթանանը, որը ծագում է հայդեգերյան «ալեթեյայից»<sup>7</sup>: Խոսքն այստեղ մտքի և իրականության «ծիշտ համապատասխանության» մասին չէ, այլ երևույթի՝ որպես «բուն ինքը» ի բաց դրված լինելու, «անթաքույց երևակվելու», «խսկապես այդպիսին լինելու»<sup>8</sup>: Այս որակներն ունեցող «ծշմարտությունը» առավել բնական է թարգմանել որպես «հսկություն»<sup>9</sup>:

Մեթոդ ասելով Գաղամերը նկատի ունի բնական գիտություններին հատուկ ընթացակարգերը, որոնց հիմքում ընկած է գիտական գիտելիքի ապացուցման՝ վերիփիկացման հնարավորությունը: Բայց միայն բնա-

<sup>5</sup> Գաղամերի աշակերտներից է եղել նաև հայ նշանավոր փիլիսոփա Կարպիս Գորյանը (Garbis Kortian, 1938, Քեսար - 2009, Փարիզ), որի հիմնական աշխատությունը՝ *Մետաքննադասությունը* (G. Kortian, *Metacritique*, Minuit, Paris, 1979) թարգմանված է մի քանի լեզուների:

<sup>6</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, 1960.

<sup>7</sup> Յննտ. M. Heidegger, *Sein und Zeit*, 44, մասնավորապես՝ էջ 219:

<sup>8</sup> Յննտ. սույն երկասիրության Յայդեգերի հատվածի «Ի՞նչ է բներևութաբանությունը» դրվագը, էջ 146-152, 157-162:

<sup>9</sup> Այստեղ են հետևում եմ Գաղամերի փիլիսոփայությանը նվիրված հայերեն առաջին և առաջյան միակ մենագրության հեղինակ Ռ. Քոչարյանի առաջարկած թարգմանությանը, տե՛ս Ռ. Քոչարյան, 7.-9. Գաղամերի փիլիսոփայական հերմենուսիկան, ԳԱԹ, Եր., 2006, էջ 28, ծանոթագրություն 16a:

գիտական մեթոդը չէ, գտնում է Գաղամերը, որ բացահայտում է ճշմարտությունը<sup>10</sup>:

«Խսկությունը» և «մեթոդը» ճշմարտության հասմելու տարրեր ճանապարհներ են ուրպագծում: Եթե մենք ուսումնասիրում ենք մշակութային տեքստերը, մենք գիտելիք ենք ստանում ոչ միայն այդ տեքստերի մասին, այլ դրանց միջոցով ձեռք ենք բերում ճշմարտություն և փորձառություն, այսինքն՝ փոխվում ենք: Փիլիսոփայի խնդիրը հասկացման երևույթի և նրա միջոցով ստացված փորձառության քննությունն է: Այդ նպատակին էլ նվիրված է Գաղամերի գլուխգործոցը:

Դետագրությունն իրականացվել է երեք մակարդակներով.

ա. որպես էսետիկական գիտակցության քննադատություն՝ նկատի ունենալով, որ արվեստի փորձը այն՝ բոլորին ծանոթ, նախառեֆլեկտիվ բջիջն է՝ «նմուշ գոյը», որում երևակվում է հասկացումը որպես այդպիսին,

բ. որպես պատմական գիտակցության քննադատություն՝ այս փուլում քննարկվում է հումանիտար գիտությունների մեթոդաբանական հնքնառեֆլեքսիան,

գ. հերմենևտիկայի՝ որպես ունիվերսալ փիլիսոփայական հղացքի ներկայացում:

Զհետևելով Խսկություն և մեթոդի բարդ կառույցի բոլոր կերմաններին և ելաչներին՝ մենք կանորադառնանք առանձին իմաստային հանգույցներին, որոնք առավել ցայտուն են բացահայտում Գաղամերի մտքի ներքին տրամաբանությունը:

## Կորության գաղափարը

«Կորության» հասկացությունը Գաղամերի համար ելակետային է: Նա ուշադրություն է հրավիրում բարի բազմիմաստությանը՝ գերմաներեն Bildung-ը, բացի կրությունից, նշանակում է ծնավորում, կառուցում, այնպես որ նրա սկզբնական իմաստը կարող է վերաբերել նաև բնական ընթացքներին, օրինակ՝ լեռնաշղթաների կազմավորմանը տեկտոնիկ շարժերից: Ժամանակակից մտածողությունն այն կապում է մշակույթի հետ:

<sup>10</sup> Տեղին եմ համարում փիլիսոփա Վլի Պոլոսյանի պատմածը Գաղամերի հետ՝ գիտաժողովում կայացած թուղթիկ հանդիպման մասին: Պոլոսյանի հարցին՝ Արդյո՞ք քեր գրի վերնագրով նկատի ունեք «իսկություն և ոչ թե մեթոդ», Գաղամերը պատասխանել է՝ նկատի ունեմ «իսկություն և ոչ միայն մեթոդ»:

Գիտենք, որ լատիներենից ծագող «կուլտուրա»-ի հիմքում ընկած է օլո-ն նույնպես նշանակում է «մշակել»: Դայերենում արմատավորված «մշակութ» եզրը թեև անմիջականորեն նմանակում է «կուլտուրա»-ն, այնուամենայնիվ, չի ծածկում ողջ հմատային դաշտը. այսպես՝ «կուլտուրական մարդ» արտահայտությունը չի կարելի փոխանցել որպես «մշակութային մարդ», այստեղ ստիպված ենք խոսել «կիրք մարդու» մասին: Տարամիտումը պատահական չէ՝ հայերենի «կրթել»-ն էլ մշակել է նշանակում, բայց ի տարբերություն «մշակութ»-ի, որն իր -ույր վերօքավորության շնորհիվ ավելի կապվում է «մշակման» արդեն կայացած արդյունքների հետ, «կրթությունը» նկատի ունի ոչ միայն առաջ եկած կազմավորումը, այլև կազմավորման ընթացքը որպես այդպիսին<sup>11</sup>:

Գաղամերի համար կրթության ընթացական բնույթը սկզբունքային է: Նա շեշտում է, որ կրթությունը նախ և առաջ լինելություն է, որ միավորում է արդյունքը և ընթացքը: Այդ ընթացքում սովորեցրածը տարբերվում է գիտելիքը պարզապես «տեղ հասցնելու» համար օգտագործվող օժանդակ միջոցից: Որպես կրթություն յուրացրածը պահպանում է իր բոլոր տարրերը: Դետևաբար, կրթությունը չի կարող ունենալ նպատակ՝ այն ինքն իր նպատակն է: «Կրթության» այս հղացքն ավանդաբար իրագործվել է Եվրոպական համալսարանական համակարգում Վիլհելմ Շումբուդտի և ուրիշների ջանքերով: Դասական համալսարանական կրթությունը դիտարկվել է որպես ունիվերսալ հումանիտար արժեք:

Կրթության ըմբռնման խնդրում Գաղամերը հետևում է Հեգելին, հիշեցնելով, որ ըստ Վերջինիս կրթության ֆորմալ էռթյունը հիմնվում է համընդիանուրի վրա: Կրթվողի վերելքը դեպի համընդիանուրը չի սահմանափակվում տեսական դրույթների յուրացմանը: Այն վերաբերում է նաև պրակտիկ ոլորտին՝ ով տրվում է մասնավոր հանգանաքներին, կրթված չէ, օրինակ, ի վիճակի չէ սանձելու իր կույր և անհամաշափ զայրույթը<sup>12</sup>:

<sup>11</sup> Այս առումով «կրթություն» եզրը հաջողությամբ կարող է օգտագործվել շպենգլերյան հղացքի համար կենտրոնական «կուլտուրա - գիվիլզացիա» զոյգը արտահայտելու համար՝ «կրթություն - քաղաքականություն», վերջինիս տակ նկատի ունենալով «համաշխարհյան քաղաքի» արդեն կայացած, ներքին մղում կորցրած և միայն տարածական էրսպանիայի ունակ մշակությը:

<sup>12</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 9-10.

«Պրակտիկ կրթության» գաղափարը ենթադրում է հաշտեցում ինքը թեզ հետ՝ կրթության ընթացքում «ինքը թեզ ճանաչում ես ուրիշի մեջ»<sup>13</sup>:

## Փորձի հասկացությունը

Նույն կերպ վերահմաստավորվում է նաև փորձի հասկացությունը: Գիտենք, որ բնագիտության հիմքը կազմող գիտափորձի կարևորագույն գործառությը վերարտադրելիությունն է՝ յուրաքանչյուր փորձ նշանակալից է այնքանով, որքանով կրկնելի է: Բայց դա չի կարող լրիվ ձևով վերաբերել «փորձ ծեռք թերելու» գաղափարին բառիս ընդհանուր իմաստով, գտնում է Գաղամերը: Չե՞ որ ողջ կյանքի ընթացքում մարդ գիտակցում է իր փորձը՝ դառնում է «փորձառու», բայց այդ փորձը որպես այդպիսին կրկնելի չէ:

Փորձի այս խորքային մեկնաբանության ակունքը նորից Յեգելն է՝ նրա *Ոգու բներկութարաբանությունը*, որից ժամանակին ստեղծագործական մղումներ է ստացել Յայդեգերը: Վերջինս շեշտում էր, հիշեցնում է Գաղամերը, որ Յեգելը «մտածում է դիալեկտիկութեան՝ փորձի եռթյունից ելնելով»<sup>14</sup>:

Յեգելը նկատի է ունեցել այն փորձը, որը գիտակցությունը կրում է իր մեջ: Փորձի դիալեկտիկան ամբողջանում է ոչ թե ինչ-որ ավարտական գիտելիքում, այլ փորձի հանդեպ բաց լինելու մեջ, որն առաջ է գալիս հենց փորձի շնորհիկ<sup>15</sup>: Փորձը ծեռք չի բերվում խրատի միջոցով, ոչ ոք չի կարող ազատված լինել փորձ ծեռք բերելու անհրաժեշտությունից:

Որևէ բամ ընդունելու համար մարդ պետք է մասնակցած լինի այդ գործին: Աշխատանքի եռթյունն ըստ Յեգելի այն է, որ ստեղծվում է առարկա, ոչ այն, որ առարկան օգտագործվում-սպառվում է: Աշխատանքը սանձկած տենչանքն է: Առարկան ստեղծելիս աշխատող գիտակցությունը սեփական գոյության անմիջականությունից բարձրանում է ոեպի համընդիամուրը, այսինքն՝ ծնավորելով առարկան, գիտակցու-

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>14</sup> Յայդեգերը, հիշեցնելով, որ Յեգելի գլուխգործոցի նախնական վերնագիրն էր «Գիտություն ոգու փորձառության մասին», պայզարանն է. «Բներկութարաբանությունն այստեղ ոգու ներկայության մասն է: Ոգին բներկութարաբանության սուբյեկտն է, ոչ օբյեկտը»: Տե՛ս և M. Heidegger, “Hegel’s Begriff der Erfahrung”, in: ders., *Holzwege*, էջ 201:

<sup>15</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 338.

թյունը կրթում է ինքն իրեն: Դրանում է դրսնորվում մարդու պատմական էությունը<sup>16</sup>:

Փորձ ծեռօք բերող գիտակցությունը շրջադարձ է կատարում ուրիշի մեջ, ճանաչելով ինքն իրեն: Ուրիշի միջոցով ինքնածանաշնան կատարյալ օրինակ է հունական ողբերգությունը: Էսքիլեսի գործերին հետևելով, մենք սարսափ և խղճահարություն ենք ապրում, նրա հերոսների հետ անցնելով տառապանքի ճանապարհը: Փորձը տառապանք է՝ դրա համար էլ ողբերգությունը ուսուցանող է: Յայտնի է, սակայն, որ ողբերգությունը ելնում է ճակատագրի անհմանալիությունից: Ողբերգական փորձն, այսպիսով, մարդկային վերջավորության փորձ է: Փորձված մարդը գիտե իր սահմանները<sup>17</sup>:

### **Նախապաշարումը որպես նախահասկացում**

Փորձի նկատմամբ իր մոտեցումը իհմնավորելու համար Գաղամերն անդրադառնում է հերմենուստիկական շրջանի հայդեգերյան նկարագրությանը<sup>18</sup>: Յայդեգերն արձանագրել է, որ հասկացման ընթացքում երևակվող «շրջանը» չպետք է գնահատվի որպես բացասական, «քեև հանդուրժելի» հանգամանք: Յերմենուստիկական շրջանում ակունքին հասնող իմացության պոզիտիվ հնարավորություն է թաքնված: Դա նշանակում է, որ ավանդության մեկնությունը չպետք է առաջնորդվի պատահական, հանկարծակի «պայծառացումներով», այլ ելնի «գործի եռթյունից», այսինքն՝ խնդրի մասին նախնական այն պատկերացումից, որ իհմնավորվում է «փաստերով»: Մշակույթի բնագավառում «փաստ» ասելով, Գաղամերը նկատի ունի իմաստավորված տեքստերը: Մեկնաբանողը, նշում է նտածողը, սկզբից ձեռնարկում է տեքստի իմաստի նախնական նախագիծը և միայն դրա իհման վրա առաջ է շարժվում:

Յերմենուստիկական շրջանը նկարագրում է ավանդության և մեկնողի շարժման փոխադարձ խաղը: Մենք ինքներս ենք երևան բերում այդ շրջանը, քանի որ հասկանալով մասնակցում ենք ավանդության իրագործմանը, դրանով պայմանավորելով նրա հետագա ընթացքը: Յաս-

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 339:

<sup>18</sup> Յմնտ. M. Heidegger, *Sein und Zeit*, § 63, ինչպես նաև՝ H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, էջ 250-256:

կացման շրջանը «մեթոդական» չէ, այն նկարագրում է հասկացման կառուցվածքի գոյարանական կողմը<sup>19</sup>:

Ուրեմն, խնդիրն այն չէ, որ մենք սահմանազատվենք պատմական ավանդությունից: Պահանջվում է հակառակը. պետք է աշխատել հեռացնել այն ամենը, ինչը կարող է խանգարել մեզ ավանդությունը հասկանալ «գործի եռթյան» դիրքերից: Անցանկալին այստեղ ոչ թե նախապաշարմունքների առկայությունն է, այլ այն իշխանությունը, որ նրանք ծեռք են բերում մեզ Վրա, եթե ծանաչված չեն:

Գաղամները հիշեցնում են, որ «նախապաշարմունք» արտահայտությունը միայն լուսավորականության շնորհիվ է բացասական երանգավորում ծեռք բերել: Իրականում գերմաներեն «Vorurteil» բառը նշանակում է «նախա-դատողություն», այսինքն՝ այն, ինչ առկա է «դատողությունից» (Urteil) առաջ: Այսպիսով՝ նախապաշարմունքը (այսուհետև մենք կարող ենք այն «նախապաշարում» անվանել) այն «նախապես պաշարվածն» է, որն ինքնին վերցրած չի նշանակում, որ դատողությունն անպայման բացասական է լինելու: Դա կանխադրույթ է, որի բացասական կամ դրական լինելը այլ գործոններից է կախված:

Ամհատի ինքնազիտակցությունը միայն լույսի կարճատև փայլատակում է պատմական կյանքի փակ շղթայում: Դա է պատճառը, որ «առանձին մարդու նախապաշարումները (Vorurteile) ավելի մեծ չափով են կազմում նրա գոյության պատմական իրականությունը, քան նրա դատողությունները (Urteile)»<sup>20</sup>:

## ԴԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախապաշարումի երևույթը սերտորեն կապված է «հեղինակության» հետ, քանի որ նախապաշարումները որպես կամոն առնչվում են անցյալում առաջ եկած կարծիքներին և գնահատականներին: Բայց հեղինակության հետ հաշվի նստելը, ինքնին վերցրած, նույնպես բացասական բան չէ, գտնում է Գաղամները: Չե՞ որ այն ոչ թե եմթարկում և սեփական բանականությունից հրաժարվել է նշանակում, այլ գիտակցումն է այն հանգամանքի, որ հեղինակավոր անձնավորությունը գերազանցում է մյուսներին իր խելքով և դատողությունների սրությամբ: Դա է պատճառը, որ հեղինակությունը չի կարելի պարտադրել, այն

<sup>19</sup> Տե՛ս H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, էջ 277:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 261:

հնարավոր է միայն նվաճել: Մենք ելնում ենք նրանից, որ հեղինակավոր կարծիքը պետք է լինի սկզբունքորեն հասկամալի և կարող է հիմք ծառայել մեր մտքի հետագա ծավալման համար: Այդպիսով հեղինակության հասկացությունը կապվում է նախապաշտման տեսության հետ:

Ավանդության և բանականության միջև բացարձակ հակադրություն չկա: Դրա համար էլ պատմական հերմենուստիկան պետք է վերաբի ավանդության և պատմական գիտության, պատմության և նրա մասին գիտելիքի միջև գոյություն ունեցող վերացական հակադրությունը:

### **Պատմական գիտակցությունը և պատմաներգործական գիտակցությունը**

Հերմենուստիկական փորձը գործ ունի ավանդության հետ: Ավանդությունը միայն փորձ չէ, այլ նաև լեզու, որը խոսում է մեզ հետ որպես որոշակի «դու»: Բայց Գաղամերի հիմնական նպատակը «ես»-ի և «դու»-ի միջև առաջ եկող հաղորդակցական հարաբերության բացորոշումը չէ: Նա գերադասում է ավանդությունը դիտարկել որպես «իմաստակիր բովանդակություն», որն անմիջականորեն կապված չէ առանձին կրողների հետ: Այսպիսով՝ հերմենուստիկի իրական գործընկերն ավանդությունն իմքն է:

Այդ հանգամանքը նկատի չի առնում եվրոպական դասական պատմագործության ինքնառեփլեքսիայի արդյունքում ծևավորված պատմական գիտակցությունը, որն ավանդությանը մոտենում է այն պատմության համապատասխան կետում «տեղակայելու» և նրա «պատմական իմաստը» երևան հանելու մտադրությամբ: «Պատմականությունը» (Historismus) պետք է հաշիվ տա իրեն, որ այն անմիջականությունը, որով նա գործառում է ավանդությունը, կեղծ է: Իր օբյեկտիվացման մեթոդի շնորհիվ նա կարողանում է խուսափել անցյալի հետ արդիականացնող ախսպերծանությամ<sup>21</sup> կամայականությունից, բայց մոռանում է իր միջնորդավորված լինելու նասին:

Հետազոտողը պետք է ոչ միայն հասկանա, որ ինքը չի կարող անցատել ավանդության «նախասկզբնական» իմաստը դրա հետագա ներգործությունների արդյունքում առաջացած իմաստային դաշտից,

<sup>21</sup> “aktualisierende Anbiderungen mit der Vergangenheit”, H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 285.

այլև ընդունի, որ ինքն էլ իր հերթին գտնվում է այդ ներգործությունների ազդեցության տակ և չունի «բացարձակ դիտակետ», որից հնարավոր լիներ գնահատել այս կամ այն երևույթը՝ «իր պատմականության մեջ վերցրած»:

Գիտակցությունը, որը ելնում է ավանդության և նրա ներգործությունների պատմության անքակտելի միասնության սկզբունքից և հաշվի է առնում դրա կումույսափակ ազդեցությունը սեփական հասունացման ընթացքի վրա, Գաղամերն անվանում է պատմաներգործական գիտակցություն (wirkungsgeschichtliches Bewusstsein):

### Դորիգոնի գաղափարը: Դորիգոնների միաձուլումը

Պատմաներգործական գիտակցությունը միշտ աճում է որոշակի հրավիժակից: Այն կապված է պատմական կանխատրվածության հետ, որը Հեգելը սուլքանաց էր անվանում: Հեգելին հղելով, Գաղամերը հիշեցնում է այն պատմամշակութային փոխկապակցությունների մասին, որոնցում ընկրնված է հետազոտողը, և ի ցույց է դնում իր ներքին առնչությունը դիլքային հոլացքի հետ: Մյուս կողմից, գիտակցության հրավիժակային բնույթի շեշտադրությունը ակտուալացնում է Հայդեգերի ներկայությունը:

Անեմ վերջավոր ներկայություն իր սահմաններն ունի, ասում է Գաղամերը: Իրավիճակը ներկայացնում է որոշակի տեսակետ, որը սահմանափակում է տեսողության հնարավորությունները:

Տեսողության փոխարերության ներմուծմամբ Գաղամերը մեզ մոտեցնում է հորիզոնի գաղափարին: Վերջինս այն տեսադաշտն է, որն ընդգրկում է ամենը, ինչը հնարավոր է տեսնել որոշակի կետից: Այդ հասկացությունը կոչված է արտահայտելու մտածողության կապածությունն իր վերջավոր որոշակիությամբ և, միևնույն ժամանակ, տեսակետի աստիճանական ընդլայնման օրենքը<sup>22</sup>: Հերմենևտիկական հետազոտությունը պահանջում է ճիշտ հորիզոնի ընտրություն:

<sup>22</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 286. Դժվար չէ տեսնել, որ «հորիզոնի» հասկացությունը, որի հուսեռյան ակունքները կասկած չեն հարուցում, որոշակիորեն սերում է «տրամացնենաւու իմացությամ» կամոյան հոլացքից և որպես վերջինիս դիմամիկական կերպափոխություն՝ իրագործուն է դրա երկու հիմնական գործառությունը՝ պահովում է ինչպես պատմական իմացության, այնպես էլ այդ իմացության առարկաների գոյության հնարավորությունը: Պատահական չէ, որ Գաղամերին սրտա-

Նեղ իմաստով «պատմականորեն» հասկացված տեքստը զրկվում է ճշմարտության որևէ հավակնությունից, քանի որ մենք այն տեղադրում ենք մեր հորիզոնի մեջ: Ստացվում է, որ ճշմարտությունն ունենք մենք, ոչ տեքստը: Այստեղ իրեն զգացնել է տալիս լուսավորականության իմացական ռորդիմզումադամ:

Պատմաներգործական գիտակցությունը, դրան հակառակ, բաց է փորձի առջև: Այն անդրադառնում է ավանդության «ազդեցությունների պատմությանը», և ինքն էլ ներգրավված է նրանում: Մենք պետք է ել-մենք նրանից, որ ավանդությունը մեզ ասելու քան ունի:

Ուրեմն, անհրաժեշտ է հորիզոնների համատեղում: Դա չի նշանակում «ուրիշի կաշվի մեջ մտնել», ինչպես կարծում էր նախկին՝ «օռնանտիկական» հերմենստիկան, այլ ենթադրում է նոր՝ ավելի բարձր աստիճանի ընդհանրության նվաճում: Դրանով հաղթահարվում է ինչպես մեր, այնպես էլ ուրիշի մասնավոր լինելը<sup>23</sup>:

Դասկացումը միշտ հորիզոնների միաժողովան ընթացք է: Դարց է առաջանում՝ ինչո՞ւ ենք խսում հորիզոնների միաձուլման և ոչ թե մեկ ընդհանուր հորիզոնի մասին: Բանն այն է, որ ամեն մի հանդիպում ավանդության հետ իր վրա կրում է տեքստի և արդիականության միջև ծագող լարվածության կնիքը: Եերմենստիկայի խնդիրն է այդ լարվածությունը չքողարկել միամիշտ ննանակման միջոցով, այլ բացորշել և ի ցույց դնել այն:

## Ավանդության լեզվականությունը

Լեզուն այն ունիվերսալ միջավայրն է, որում իրականացվում է հասկացումը: Այդ իրականացման եղանակը մեկնությունն է: Լեզուն և հասկացումը կապված են կրկնակի կապով: Ոչ միայն պատմական ավանդությունն է լեզվական, այլև ինքը հասկացումը էապես արմատավորված է լեզվի մեջ: Ավանդությունը փոխադրելով մեր սեփական լեզվի, մենք այն հարաբերության մեջ ենք դուռը այն բոլոր ըմբռնումների և իմաստների ոլորտի հետ, որոնցում ինքներս շարժվում ենք<sup>24</sup>:

մոտ է նաև սպեկուլատիվի զարաֆարը, որին Յեզելը համգել է կամտյան տրամացենդենտալիզմի հաղթահարման արդյունքում (տե՛ս ստորև):

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 373:

Պատմականորեն մտածել՝ նշանակում է սեփական մտածողության մեջ իրականացնել անցյալ դարաշրջանների հասկացությունների այն բոլոր կերպափոխությունները, որոնք դրանք ապրել են ժամանակի ընթացքում: Հասկանալ տեքստը՝ նշանակում է կիրառել այն սեփական իրադրության նկատմամբ: Մեկնությունը ոչ թե միջոց է, որի օգնությամբ իրականացվում է հասկացումը, այլ հասկացման ենթակա նյութի անմիջական բաղկացուցիչը:

Չնայած մենք զգում ենք, որ մեր որոշ իմտությաներ չեն արտահայտվում լեզվի միջոցով, հասկացման լեզվականությունը սկզբունքուն արգելակող սահմաններ գոյություն չունեն: Լեզվական արձանագրությունն անվերջ է:

Լեզուն «բանականության լեզուն է»<sup>25</sup>: Այս թեզը հակասության մեջ չէ տարբեր լեզուների գոյության էմպիրիկ փաստի հետ:

## Լեզուն և աշխարհը

Չումբողութը համարում էր, որ ամեն մի լեզու աշխարհայացք է (Weltansicht): Բայց նրա մոտեցումը վերացական է, քանի որ նա լեզուն հանգեցնում է ծկին: Իրականում լեզուն և՛ ծկ է, և՛ բովանդակություն: Քերմենստիկական փորձի շրջանակներում լեզվական ծնն անջատելի չէ նրա միջոցով մեզ հասած բովանդակությունից:

Լեզուն աշխարհում ապրող մարդու անհրաժեշտ «այտույթերից մեկը» չէ միայն, այլ «նրա վրա է հիմնված և նրա միջոցով է ներկայանում այն, որ մարդն ընդհանրապես աշխարհ ունի»<sup>26</sup>: Ո՞չ լեզուն և ո՞չ էլ աշխարհը չկան առանձին-առանձին: Աշխարհն այնքանով է աշխարհ, որ լեզվական արտահայտություն է ստանում, իսկ լեզվի գոյության իմաստն էլ այն է, որ այն արտահայտում է աշխարհը:

Այդ համատեքստում կարելի է խոսել լեզվի ինտենցիոնալության մասին: Վերջինիս դրսորումն այն է, որ լեզուն մեզ դուրս է մղում աշխարհ: Այն հանդես է գալիս որպես աշխարհ ունեցող մարդու հորիզոն և նրան տալիս է մշտապես առաջ շարժվելու, նոր փորձառություն ծևավորելու հնարավորություն: Դորիգոնների միաձուլմանը համապատասխանում է լեզուների համատեղելիությունը:

<sup>25</sup> Լեզվի «օրեկտիվացնող» մեկնաբանության ակունքներում կանգնած են Քեգելը և Ջայդենը:

<sup>26</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 419.

Աշխարհի ունենալ նշանակում է աշխարհին որոշակի կերպով հարաբերվել (sich zur Welt verhalten)<sup>27</sup>, իսկ դրա համար ազատության որոշակի աստիճան է պահանջվում, որը մարդուն տարանջատում է իր անմիջական շրջակայից: Ուրեմն, աշխարհը (*Welt*) պետք է սկզբունքորեն տարբերել շրջակա միջավայրից (*Umwelt*), որը հատուկ է նաև կենդանիներին<sup>28</sup>: Այդքանով լեզուն ազատություն է:

## Իրագործումը

Լեզվի և աշխարհի փոխառնչության դիալեկտիկան Գաղամերն արտահայտել է «իրագործման» կատեգորիայի միջոցով: Դիալեկտիկան հույների համար ոչ թե մտքի շարժում է եղել, իշխեցնում է մտածողը, այլ բուն գործի՝ մտքով ընթացք: Նեզելը գիտակցաբար հետևել է այս դրույթին:

Ներմենստիկական փորձը միայն զրոյաց չէ. նրանում ինչ-որ բան է տեղի ունենում՝ իրագործվում (*geschieht*). այդ իրագործումը (*Geschehen*) նշանակում է, որ մեկնողը ինքը չէ, որ գտնում է իր առարկան, այլ ականջալուր է լինում ավանդույթին, որը «գտնում է» նրան: Այստեղ կարելի է խոսել մեկնողի՝ տեքստին «պատկանելության» մասին՝ «Zugehörigkeit», որի իրականացման ձևը ավանդույթը լսելն է՝ «Hören»: Ընդ որում՝ ավանդույթունը դիմում է մեզ անկախ նրանից՝ արդյոք մենք ցանկանում ենք ականջ դնել նրան: Ավանդության ծշմարտությունը մեզ է հասնում անմիջականորեն՝ ինչպես գեղեցիկի զգացողությունը: Արդիականության և ավանդության միջև իրականացվող լեզվական հաղորդակցությունը «իրագործում» է, որը ամեն մի հասկացման մեջ գնում է իր ճանապարհով<sup>29</sup>:

Ներմենստիկական փորձի այս կառուցվածքը, որը արմատական հակասության մեջ է գիտական փորձի հասկացության հետ, հիմնված է լեզվին հատուկ իրագործման բնույթի վրա: Ծիշտ կլիմեր ասել, որ ոչ

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Աշխարհի և շրջակա միջավայրի այս հակադրության մեջ անմիջականորեն տեսանելի է գոյության և գոյի հայդեգերյան դիխոտոմիան: Լեզվական գոյությունը, այսպիսով, հանապատասխանում է արտակայությամբ և ապահովում է գոյարանական հասկացման հնարավորությունը: Գաղամերի մոտ էլ այդ մոտեցումը «արթունություն» է պահանջում, բայց տպակորություն է ստեղծվում, որ այստեղ, ի տարբերություն ուսուցչի հղացքի, պրոֆենության հնարավորության պայմանների հարցը դրաված չէ բացորոշ կերպով:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 439:

թե մենք ենք խոսում որոշակի լեզվով, այլ լեզուն է «խոսում մեզանվով»:

Յայդեգերյան ոճով կատարած այս արձանագրությունը բացորոշ հղում է այն մերժին կապին, որով գաղամերյան «իրագործումը» (Geschehen) կապված է ուշ Յայդեգերի փիլիսոփայության կենտրոնական հասկացության՝ «իրադարձության» (Ereignis) հետ<sup>30</sup>: Երկուսն էլ արմատավորված են գոյի և լոգոսի նախասկզբնական միասնության այն զգացողության մեջ, որ հատուկ է եղել հունական մտքին: Մրանց ընդհանուր արմատը Յեգելի դիալեկտիկան է:

### Դիալեկտիկականը և սպեկուլատիվը

Ով ցանկանում է հասկանալ հույներին, ասում է Գաղամերը, պետք է աշակերտության գնա Յեգելիմ<sup>31</sup>: Վերջինիս փիլիսոփայությունը սնող ակունքը հիմ հունական միտքն է եղել: Անրավարարվածությունն իր համար ժամանակակից գիտական մեթոդով ստիպել է Յեգելին դիմել հույներին: Նրանցից նա սովորել է, որ խկական մեթոդը բուն գործի իրագործումն է<sup>32</sup>: Խնդիրը գործն իր սեփական հետևողականության (Konsequenz) մեջ «մեկնելը» է: Սա է, որ մենք հույներից ի վեր անվանում ենք դիալեկտիկա:

Դասկանալի է, սակայն, որ հեգելյան սպեկուլատիվ դիալեկտիկան հույների պատկերացումների շրջանակներում չի տեղավորվում: Յեգելը գիտակցարար Վերարտադրել է մտածողության և գոյության այն սուտալ միջնորդավորումը, որ մի ժամանակ եղել է հունական մտքի բնական նիշավայրը:

Գաղամերի հղացքի տրամաբանությունը հասկանալու համար և իր իսկ խորհրդին հետևելով, անդրադառնանք այն կերպափոխությանը,

<sup>30</sup> Յննտ. անալիտիկ փիլիսոփայության մեջ համարյա նոյն տարիներին արմատավորված «պերֆորմատիվ ասույթների» նկատմամբ հետաքրքրության հետ, տե՛ս L. Wittgenstein, *Philosophical Investigations*, Basil Blackwell, Oxford, 1958; J. L. Austin, *How to Do Things with Words*, Oxford University Press, London, 1962; J. R. Searle, *Speech Acts*, U.P., Cambridge, 1969:

<sup>31</sup> Եվս մեկ հայդեգերյան կոնստելացիա, որի կապակցությամբ արժե հիշատակել, որ Յայդեգերի «Յեգելը և հույները» դասպահությունն առաջին անգամ հրատարակվել է Գալաների վարժումայակին նվիրված հասորում (*Die Gegenwart der Griechen in der Geschichtete der Philosophie*, Tübingen, 1960, S. 43-57) և միայն հետո ընդգրկվել «Wegmarken» ժողովածուի մեջ:

<sup>32</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 440.

որ դիալեկտիկայի հասկացությունն ապրել է կանտյան տրանսցենդենտալիզմի քննադատական վերաբիմաստավորման ընթացքում: Այդ ընթացքի դասական շարադրանքը մենք գտնում ենք Յեգելի *Sրամարանության գիտության* հոչակավոր առաջարանում:

Կանտյան տրանսցենդենտալիզմի հիմքում ընկած դրույթը իմացության բովանդակության և ծփի տարանջատվածությունն է: Դրանով միմյանց են հակադրվում նաև ծշմարտությունը և հավաստիությունը: Ենթադրվում է, որ օբյեկտն ինքնին ավարտուն է, պատրաստի և իր իրական լինելու համար նտածողության կարիքը չունի, իսկ նտածողությունն էլ ինչ-որ պակասավոր մի բան է, որ դեռ պետք է լրացվի իր նյութին համապատասխանության գալու միջոցով: Ենթադրվում է նաև, որ նտածողությունը, ընկալելով և ծևավորելով նյութը, ինքն իր սահմաններից դուրս չի գալիս՝ նյութի ընկալման և ծևակերպման ընթացքը վերաբերում է միմյանց գիտակցությանը: Արարկան, այսպիսով, մնում է նտածողությունից դուրս՝ որպես վերջինիս համար օտար «ինքնին իր»: Ենթադրվում է նաև, որ միայն օգայական ընկալումն է բանականությանը բովանդակություն տալիս, առանց վերջինիս այն միայն քիմիներ է ծնում: Այս տպավորության պատճառը անդրադարձ նտրի մեջ ծևավորված տարբերակող սահմանումների բախումն է, որն իր հակասականության շնորհիվ ընկալվում է որպես խճողում: Յարց է առաջանում, թե այդ սահմանումներն ինչպես պետք է հարաբերվեն դրանց հանդեպ օտար «ինքնին իրին»:

Իրականում, ասում է Յեգելը, գիտակցության շարժման մեջ հաղթահարվում է առարկայի և իր մեջ հավաստի միջև եղած խզվածությունը: Մտքի այդ շարժումը նկարագրված է Ոգու բներկութարամության մեջ, որում այդպիսով վերառվել է գիտակցության և դրա առարկայի հակադրությունը: Սրանից էլ բխում է մեթոդի հեգելյան ընթրոնումը, ըստ որի՝ մերժող բովանդակության իմքնաշարժման մերժին ծփի գիտակցումն է: Ակնհայտ է, որ սրանով հաղթահարվում է հետազոտվող բովանդակության և հետազոտության մեթոդի հակասությունը, որի շնորհիվ իմացության բովանդակությունն ու ծևը համընկնում են:

Գիտական առաջընթացն ապահովելու համար անհրաժեշտ է հասկանալ, ասում է Յեգելը, որ որևէ գաղափարի, հասկացության ժխտումը զրոյի չի հանգեցնում, որոշակի ժխտումը որոշակի բովանդակություն ունի: Արդյունքում ծևավորված ավելի հարուստ հասկացություն է, քանի որ հարստացել է իր նախկին բովանդակության բացասամբ,

այն ավելին է, որովհետև միննույն ժամանակ հանդես է գալիս և՝ որպես նախկին հասկացությունը, և՝ դրա ԺՎՈՒՄԸ:

Այդ բացասականի շնորհիվ է, որ հասկացությունն առաջ է շարժվում՝ դրա մեջ պարունակվող բացասականը հանդես է գալիս որպես բուն դիալեկտիկականը։ Արդեն Կանտը, չնայած իր տրանսցենդենտալ սուբյեկտիվզմին, կարողացել էր ցույց տալ, որ հակասականությունը մարդկանց կամայականության դրսնորումը չէ, այլ բանականության անհրաժեշտ գործունեությունը։

Բանականության հակասականությունը, դրական տեսանկյունից ընթանված, այլ բան չէ, քան ամեն մի բնական և հոգևոր կենսականության շարժիչ ուժը։ Այս այդ դրական իմաստով վերցված դիալեկտիկականը, այսինքն՝ հակադրությունների ընթանումն իրենց միասմության մեջ կամ դրականի ընթանումը բացասականի մեջ, Յեգելն անվանում է սպեկուլատիվ<sup>33</sup>։

### «ԱՆԴՐԱԴՐՃՈՒՄԸ» և գեղեցիկը

Փոխ առնելով հեգելյան տերմինարամությունը, Գաղամերն ազդարարում է, որ սպեկուլատիվն այն ընդհանուրն է, որ միավորում է Յեգելի մետաֆիզիկական և իր հերմենևտիկական դիալեկտիկան։ «Սպեկուլատիվը» Գաղամերը հասկանում է որպես փոխադարձ անդրադրճման հարաբերություն։ Այդ ընթանման ակունքը միջնադարյան է և կապված է լատիներեն *հայելի*՝ «specus»՝ բառի և դրանում պարունակվող անդրադրճման հասկացության հետ։ Մինյանց մեջ արտացոլվել նշանակում է մշտական փոխել տեղերը, ասում է Գաղամերը։ Այստեղ տեղի է ունենում կրկնապատկում, որի հիմքում ընկած գոյությունը մեկն է։ Միտքը սպեկուլատիվ է, եթե նրանում արտահայտված հատկությունը չի միանում սուբյեկտին որպես պարզ պրեդիկատ, այլ դիտվում է անդրադրճման հարաբերության մեջ՝ երկու կողմերը արտացոլում են մինյանց։ Խնդիրն այստեղ այն է, որ այն ներքին խոչընդոտը, որին բախվում է մտածողությունը, ներկայացվի ամենայն պարզորշությամբ։ Սրանով կպայմանավորվի անցումը հաջորդ փուլին։

<sup>33</sup> Յեգելին վերաբերող հատվածը շարադրվում է ըստ՝ Գ. Վ. Փ. Գեգել, *Наука логики*, տ. 1, Մայսլ, Մ., 1970, ս. 95-113։

Երբ մենք ասում ենք, որ լեզուն սպեկուլատիվ է, դա նշանակում է, որ լեզվի մեջ մշտական փոխհարաբերության և փոխարտացոլման մեջ են փոխրվող իմաստը և խոսքի հնարավորությունները: Խոսքով ասված վերջավորի և չարտահայտված-ենթադրվածի անվերջության միջև առաջ եկող լարվածությունն է, որ հնարավոր է դարձնում հասկացումը:

Լեզվական հասկացման բնույթի պարզաբանման համար օգտակար է դիմել «գեղեցիկի մետաֆիզիկային»: Վերջինիս լուսաբանող գործառույթը արտահայտվում է երկու կետում: Նախ, ցույց է տրվում, որ հասկացման գոյության ծնը, ինչպես և արվեստի ստեղծագործությունը, իրագործման բնույթը ունի: Երկրորդ, արձանագրվում է, որ փոխանցված իմաստի ընթանան կերպը, գեղեցիկի ընթանան հանգույն, անմիջականության ծն ունի և դրա շնորհիկ պատկանում է անմիջական ծշմարտության հարացույցին:

Դերմենստիլկական հասկացման մերձեցումը գեղեցիկի հասկացմանը առավել ակնհայտ է դարձնում նրա հակադրվածությունը փորձնական մեթոդին: Գաղամերի վերջնական եզրակացությունն այն է, որ հսկություն և մեթոդի մեջ իրականացված հետազոտությունը սահման է դնում «մեթոդին», բայց ոչ գիտությանը:

### Դերմենստիլկայի ունիվերսալ հավակնությունները

Գոյությունը, որ կարող է հասկացվել, լեզուն է:

Յ.-Գ. Գաղամեր

Քանի որ լեզուն, ըստ Գաղամերի, մի միջավայր է, որում երևան է գալիս «ես»-ի և աշխարհի փոխապատկանելիությունը, այն ներկայանում է որպես ունիվերսալ գոյարանական կառուցվածք՝ հիմնարար կազմությունն այն ամենի, ինչին կարող է ուղղված լինել հասկացումը<sup>34</sup>: Այստեղից՝ Գաղամերի հրչակավոր դրույթը. «Գոյությունը, որ կարող է հասկացվել, լեզուն է»<sup>35</sup>:

Զևսակերպումն ակնհայտորեն աղերսված է ուշ Յայդեգերի «լեզուն գոյության տունն է» արտահայտությամբ<sup>36</sup>, այն տարբերությամբ, որ

<sup>34</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 450.

<sup>35</sup> “Sein, das verstanden werden kann, ist Sprache.”, նոյն տեղում:

<sup>36</sup> Գաղամերի «ավանդության» և ուշ Յայդեգերի «գոյության» հղացքների միջև եղան նմանության մասին խոսում է Դ. Է. Լինգեն, տես ս. H.-G. Gadamer, *Philosophical Hermeneutics*, Berkley – L. A., London, 1977, էջ LV (հրատարակչի առաջարանը):

այստեղ հայդեգերյան *Seyn*-ը գրկում է խորհրդավորության շղարշից և նրա հասկացման խնդիրը միանգամայն աշխարհիկ ծնակերպում է ստանում:

Նմանատիպ կերպափոխության է ենթարկվում հայդեգերյան «գոյաբանական տարբերությունը»՝ գոյության և գոյերի (գոյավորի) տարբերակման սկզբունքը<sup>37</sup>: Գաղամերի հղացքում հասկացվածի գոյութենական կազմությունը որոշակվում է որպես լեզու, իսկ գոյերը հասանելի են դառնում որպես մեկնարանություն<sup>38</sup>:

Դասկանալի է, իհարկե, որ այն, ինչ «լեզվի է գալիս», ինքնին նույնական չէ խոսքի հետ, բայց դա ինչ-որ «անլեզու նախնական տրվածություն» էլ չէ՝ այն իր որոշակիությունը ստանում է խոսքի մեջ: Մյուս կողմից, լեզուն, որով «խոսում են իրերը», չի պատկանում ինչ-որ անվերջ բանականության: Դա մեր վերջավոր-պատմական էության կողմից ընկալվող լեզուն է:

Գոյությունը լեզվի հետ նույնացնելու իհմքը ինքնաներկայացումն<sup>39</sup>: Այս որակը, ինչպես տեսել ենք, առավել ցայտուն կերպով երևան է գալիս «արվեստի» և «պատմության» ընկալումներում: *Ինքնաներկայացնելու* (*Sich-darstellen*) և *հասկացվելու* (*Verstandenwerden*) փոխադարձ անցման մեջ են՝ արվեստի գործը միասնական է իր ներգործությունների պատմության հետ, իսկ պատմականորեն ավանդվածը՝ այն ներկայի հետ, որում այն հասկացվում է:

Գոյության սպեկուլատիվ կազմությունը, որն ընկած է հերմենուսիկայի իհմքում, նույնքան ունիկերսալ է, որքան բանականությունը և լեզուն: Դրա համար է, որ հերմենուսիկան փիլիսոփայության ունիկերսալ տեսամկյունն է և ոչ թե «ոգու մասին գիտությունների» մեթոդաբանական իհմքը: Սրանում է Գաղամերը տեսնում իր մերձավորությունն անտիկ դիալեկտիկային, որը հանդիս է եկել ոչ թե որպես «սուրբեկտի մեթոդական ակտիվություն», այլ որպես «բուն գործի իրագործում» (*Tun der Sache selbst*), որին «ենթարկվում է» մտածողությունը<sup>40</sup>:

<sup>37</sup> Տե՛ս M. Heidegger, *Identität und Differenz*, Neske, Stuttgart, 1996, էջ 53-67:

<sup>38</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 450.

<sup>39</sup> «Գոյությունը ինքնաներկայացումն է», - ասում է Գաղամերը, նույն տեղում, էջ 461:

<sup>40</sup> ...das das Denken „erleidet“, նոյն տեղում, էջ 450: «Erleiden»-ի բարզմանության համար կարելի է օգտագործել նաև «կրել» բառը («որը կրում է» մտածողությունը), քանի որ այն իմաստային աղեքսներ ունի «կրթերի» հետ՝ այս, ինչին տառապամբով ենթարկվում են (հմնտ. Թրիստոսի կրթերի հետ):

## «Դադորդակցական համրության ապրիորին»

1959-ին գիրքն ավարտելիս Գաղամերը երկյուղ է ունեցել, որ դասական-հումանիտար մտածելակերպի իր ամփոփումն ուշացած է. դուրսն արդեն իշխում էր անգլո-սաքսոնական վերլուծական փիլիսոփայությունը, հասարակական գիտություններում գնալով մեծ տեղ էր ստանում հաշվարկային և այլ տեխնիջիստական մեթոդների կիրառությունը<sup>41</sup>: Կարելի էր, իհարկե, հուսալ, որ հսկություն և մեթոդի հայտնվելը կարծիքների բախում կառաջացնի սցիենտիստական մոտեցման կողմնակիցների հետ: Սակայն հակադիր հարացույցներին պատկանող մտածողները սովորաբար բանավիճելու եռանդ չեն ցուցաբերում: Միմյանց գաղափարների քննադատական յուրացումն առավել սպասելի է այն հեղինակներից, որոնք սերում են ընդհանուր ակունքից, թեև հետո՝ նույնանման խնդիրների լուծումները որոնելիս, տարբեր ճանապարհներ են գերադասում:

Նման մտածողներից է Կարլ-Օտտոն Ապելը (ծնվ. 1922), որի հայացքը Դայդեգերով ոգևորվածության կարծատն փուլից հետո ուղղվել է դեպի անալիտիկ փիլիսոփայության հարացույցը, ուշադրության կենտրոնում ունենալով Զ. Ս. Պիրսի և Լ. Վիտգենշտայնի նշանաբանական պրագմատիզմը:

Դերմենատիկական բներևութաբանության հիմնական ծառայությունն Ապելը տեսել է նրանում, որ այն, արմատական ռեֆլեքսիայի ենթարկելով հասկացման ֆենօմենը, հայտնաբերել է այնպիսի «քվագիտրանսցենտնոտալ» կառուցվածքներ, որոնք մտածելի չեն կարտեզիական-կանույան ակունքներից սերող սուրբեկտ-օբյեկտ հարաբերության սիեմատիզմի շրջանակներում: Այդ կառուցվածներից է, մասնավորապես, Դայդեգերի հայտնագործած հասկացման էքզիստենցիալ նախակառուցվածքը<sup>42</sup>: Դրա շնորհիվ նոր հերմենուստիկան ցույց է տվել, որ «հասկացումը»՝ որպես մարդու աշխարհում-լինելու յուրահատուկ կերպ, նախորդում է փորձնական տվյալների կազմավորմանը և կանխորշում է ինացության տեսության հարցադրումները<sup>43</sup>:

<sup>41</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. 513.

<sup>42</sup> Տե՛ս K.-O. Apel, *Transformation der Philosophie*, B. 1. Sprachanalytik, Semiotik, Hermeneutik, Suhrkamp, Ffm., 1973, էջ 24:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 26:

Ծնորհիվ բներևութաբանական հերմենևտիկայի նվաճումների՝ «հասկանալ-բացատրել» երկնութրանքը (Erklären : Verstehen – Kontroverse) փաստորեն վերառվում է, և հասկացումն արմատավորվում է որպես ամեն մի իմացության անքակտելի բաղկացուցիչ։ Եթե մենևնատիկայի առավելությունը տրամաբանական ենապիրիզմի մկանմանք այն է, որ նա, ի տարբերություն վերջինիս, խոսելով նշանի և նշանակության մասին, չի անտեսում պիրսյան եռամկյունու երրորդ կողմը՝ նշանը մեկնող սուբյեկտիմ<sup>44</sup>։ Այն հաշվի է առնում, որ մարդու աշխարհն ի սկզբանե լեզվականորեն բաց է, և որ նշանային հաղորդակցման կանոնները չեն կարող ստեղծվել և կիրառվել գուտ ծևական, կոնվենցիոնալ կերպով։ Դրանք արդեն իսկ առկա են մարդկային գոյության նախառեժլեկտիվ մակարդակում, որից պետք է քաղվեն և իմաստավորվեն։

Գաղամերը զարգացրել է այդ մոտեցումը, այն կիրառելով ոգու մասին գիտությունների ինքնառեֆլեքսիան իրականացնելու համար։ Նա կասկածի տակ է դրել հասկացման մասին տարածված պատկերացումը՝ որպես ուրիշի մեջ տեղի ունեցող հոգեբանական ընթացքների հետադարձ վերապրում, վերջինս դիմակագերծելով որպես նախասկզբնական հերմենևստիկական խնդրի – ուրիշի հետ առարկայական աշխարհի ընդիհանուր հասկացման հասնելու պրոբլեմի – վերացական ծևակեռության<sup>45</sup>:

Սակայն նույնիսկ այդ կերպ ըմբռնված հերմենատիկային Ապելը հակված չէ ունիվերսալ կարգավիճակ վերագրել։ Այնտեղ, ուր բներևութաբանական հերմենատիկայի ռահվիրաները վկայակոչում են «գոյությունը» կամ «ավանդությունը», Ապելը գերադասում է խոսել «հաղորդակցական հանրության ապրիորի»-ի մասին։ Ավանդությանը ականջալուր լինող մեկնաբանին փոխարինում է *հիշեալական հաղորդակցական համրության* անդամը, որի՝ մյուս անդամների հետ վարվող փաստարկված բանավեճն իր լեզիտիմացումն է ստանում բոլոր հաղորդակցական-փաստարկային միջոցներն իր մեջ պարփակող ունիվերսալ համակարգից։

<sup>44</sup> Ասվածը չի Վերաբերում Լեզվաբանական փիլիսոփայության երկրորդ փուլին՝ սպորական լեզվի վերլուծության փիլիսոփայության Օքսֆորդյան դպրոցին, որի ակնհայտ մեջքցում հերմենուվակային նաևնագանձնությունը բացառում են երկուսին հավասարապես հասուն տրադիցիոնալիզմով, հնան՝ նաևնավորապես՝ Պ. Պ. Գայդենկո, *Прорыв в трансцендентному*, Ռեспублика, Մ., 1997, էջ 427:

<sup>45</sup> K.-O. Apel, *Transformation der Philosophie*, B. 1, Sprachanalytik, Semiotik, Hermeneutik, Suhrkamp, Ffm., 1973.S. 27.

Ինչո՞ւ է «փաստարկային հանրությունը» բնորոշվում որպես «ապրիորի»: Որովհետև այն սկզբունքորեն կախյալ է առօրյա լեզվից, իսկ վերջինս թեև «վերաստեղծելի է» (rekonstruierbar), բայց «անդրանցանելի չէ» (nicht hintergehbar)<sup>46</sup>: Այսինքն՝ պրագմատիկական տեսակետից այդ հանրությունն առաջնային է բոլոր առանձին հասկացական ակտերի նկատմամբ և պայմանավորում է վերջիններիս յուրահատկությունը:

Իր տրանսցենդենտալ ապրիորիի բնույթի շնորհիվ իդեալական հաղորդակցական հանրության հասկացությունը կոչված է հիմնավորելու ենապիրիկ իմացության ունիվերսալ հավակնությունները նույն կերպ, ինչպես ժամանակին այն հիմնավորել է Կանտի տրանսցենդենտալ սուբյեկտի հասկացությունը: Մրանց արմատական տարրերությունն այն է, որ Ապելի ներմուծած հանրությունը համասեռ չէ, այլ հանդես է գալիս որպես բազմաթիվ հաղորդակցվող սուբյեկտների ինտերակցիաների արդյունք:

Դասական տրանսցենդենտալ սուբյեկտի փոխարինումը «իդեալական հաղորդակցական հանրության»<sup>47</sup> Ապելը որակում է որպես «փիլիսոփայության կերպափոխություն»: Լեզվավելութական փիլիսոփայության առաջին փուլում իշխող «օնտո-սեմանտիկան» այդպիսով տրանսֆորմացվում է «տրանսցենդենտալ պրագմատիկայի»<sup>48</sup>:

## Դերմենստիկան և «քննադատական դպրոցը»

Յ.-Գ. Գաղամերի մյուս՝ առավել հայտնի ընդուհմախոսը Յուլգեն Շաբերմասն է, որի հետ վարսունականներին ընթացած բանավեճը հերթական անգամ ակտուալացրեց երկու նշանավոր փիլիսոփայական ուղղությունների՝ բներևութաբանական հերմենևտիկայի և ֆրանկ-Փուրտյան քննադատական դպրոցի հակասությունները<sup>49</sup>, միևնույն

<sup>46</sup> Նոյն տեղում, էջ 76:

<sup>47</sup> Տե՛ս Կ.-Օ. Apel, *Die Erklären: Verstehen – Kontroverse in transzentalpragmatischer Sicht*, Suhrkamp, Ffm., 1979, էջ 328:

<sup>48</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 331:

<sup>49</sup> Այդ հակասությունների առաջին նշանակալից դրաստրումը Թեոդոր Ադորնոյի՝ Սարտին Շայեցերին ուղղված բննադատությունն է, որին, սակայն, վերջինս չի պատասխանել, տե՛ս և H. Mörchen, *Adorno und Heidegger: Untersuchung einer philosophischen Kommunikationsverweigerung*, Klett-Cotta, Stuttgart, 1981.

ժամանակ ի ցույց դնելով պաշտպանվող տեսակետների փոխլրացնող բնույթը:

Յուրգեն Շաբերնասի ստորև շարադրվող քննադատական դիտողությունները միտված են գաղամերյան հղացքում հերմենատիկական հասկացման գոյաբանականացման, հերմենատիկայի ունիվերսալության հավակնության, «հեղինակության» դերի գերազահատման, լեզվի գաղափարախոսական դերի և բանականության քննադատական գործառույթի անտեսման դեմ<sup>50</sup>:

Քննադատական դպրոցի երրորդ սերնդին պատկանող Շաբերնասը նախ արձանագրում է դիրքերի սկզբունքային տարրերությունը. «հերմենատիկայի գոյաբանական ինքնագիտակցությունը» իրականացված է «հայդեգերյան ոգով»: Սրա ապացույցը Գաղամերի ինքնագնահատականն է, ըստ որի՝ խնդիրն «այս չէ, թե ինչ ենք մենք անում, ոչ էլ այն, ինչ ենք մենք պարտավոր անել, այլ այն, թե ինչ է մեզ հետ տեղի ունենում, մեր պարտավոր լինելուց և գործելուց բացի»<sup>51</sup>: Բայց «իսկության» և «մեթոդի» հակադրությունը չպետք է հիմք դառնա հերմենատիկական փորձառության և մեթոդական իմացության վերացական հակադրության համար: Նաև հերմենատիկական փորձառությունը պետք է իր դրսնորումը գտնի մեթոդաբանական գործառույթներում, այլ կերպ այն պարզապես կիրառելի չի լինի:

Նման համադրություն տեղի չի ունենում, քանի որ հսկություն և մերոդի հեղինակը թերագնահատում է ռեֆլեքսիայի ուժը: Եթե հերմենատիկական նախըմբռնումը անխուսափելի է, դա դեռ չի նշանակում, որ գոյություն ունեն լեզիտիմ նախապաշարումներ: Ռացիոնալիզմի գաղամերյան ըմբռնումը հնացած է: Նա ելնում է տասնութերորդ դարում իշխող ըմբռնման դեմ, համոզված լինելով, որ իսկական հեղինակությունը (*Autorität*) ավտորիհտար ծևով (*autoritär*) գործելու կարիք չունի: Գաղամերը նկատի ունի կրթության այնպիսի ընթացք, որում փոխանցվածը (*Überlieferung*) ներկայացվում է անհատական ուսումնական գործընթացի ծևով և յուրացվում է որպես ավանդություն (*Tradition*). դաստիարակի անձն այստեղ լեզիտիմացնում է նախապաշարնումքները, որոնք սովորողի սեփականությունն են դարձվում հեղինակության միջոցով, այսինքն՝ պոտենցիալ պատժամիջոցների սպառ-

<sup>50</sup> Շաբերնասի դիտողությունները շարադրվում են ըստ՝ J. Habermas, “Zu Gadamers ‘Wahrheit und Methode’”, in: *Hermeneutik und Ideologiekritik*, Ffm., 1971, էջ 45–56:

<sup>51</sup> H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, S. XVI.

նալիքի և պարզների հեռանկարի ներքո: Նա ենթադրում է, որ չափահաս դարձած ուսանողը, գիտակցելով նախապաշարումների կանխակառույցը, ի վիճակի կլինի անազատ ծնով պարտադրված անհատական հեղինակությունը վերածել ավանդության փոխառնչությունների վրա հիմնված առարկայական հեղինակության: Որքան էլ ասվի, որ ծանաչնան ակտը միջնորդավորված է ռեֆլեքսիայով, միևնույն է, Գաղամերի հեղացրում ավանդությն է մնում այն միակ հիմքը, որից ելնելով՝ նախապաշարումները վավեր են մնում: Այնինչ իրականությունն այն է, արծանագրում է Յաբերմասը, որ հեղինակությունը և իմացությունը չեն գուգամիտվում:

Ժամանակին Վիտգենշտայնը լեզվի վերլուծությունը ենթարկեցրել է նախ տրամացենթենտալ, ապա սոցիոլեզվարամական ռեֆլեքսիային: Գաղամերն իրականացնում է ռեֆլեքսիայի երրորդ աստիճանը՝ պատմականը, որում մեկնարանողը և նրա առարկան ըմբռնվում են որպես միևնույն փոխկապակցության նոմենտներ: Այս օբյեկտիվ փոխկապակցվածությունը ներկայանում է որպես ավանդություն կամ ներգործությունների պատմություն: Ընթացքը պատմական է համարվում, քանի որ փոխանցվածի անընդհատությունն ապահովվում է շարունակական թարգմանության, բնականորեն ածի ալգորիթմով շարժվող բանասիրության միջոցներով: Լեզվական վերլուծության հերմենստիկական ինքնառեֆլեքսիան հաղթահարում է տրամացենթենտալ ըմբռնումը, որը Վիտգենշտայնը պահպանել էր նոյնիսկ լեզվական քերականությունների բազմազանությունն ընդունելուց հետո: Լեզուն որպես ավանդություն ընդգրկում է բոլոր որոշակի քերականությունները և ստեղծում է տրամացենթենտալ կանոնների էմպիրիկ բազմազանության միասնություն:

Սույնով լեզուն Գաղամերի հեղացրում ներկայացվում է բացարձակ ոգու նակարակով և բացարձակ նշանակություն է ստանում, բայց նրա բացարձակությունը պատահական՝ կոնտինգենտ բնույթ ունի: Յերմենստիկական գիտակցությունը ստիպված է ելնել իրագործումից, որն ինքնին իրացիոնալ է, քանի որ ռացիոնալության պայմանները փոփոխվում են, կախված ժամանակից և տեղից, դարաշրջանից և մշակույթից:

Յերմենստիկական իրավացի է, երբ լեզուն դիտարկում է որպես մետահիմնարկություն, որից կախված են բոլոր հասարակական հիմնարկությունները, որքանով որ սոցիալական գործողությունն ինքնին կազ-

մավորվում է առօրյա հաղորդակցության ընթացքում: Բայց այդ մետա-իմնարկությունը՝ լեզուն որպես ավանդություն, իր հերթին ակնհայտութեն կախված է հասարակական ընթացքներից: Չի կարելի մոռանալ, որ լեզուն հանդես է գալիս նաև որպես տիրապետության և հասարակական իշխանության միջոց: Այն ծառայում է կազմակերպված բռնության հարաբերությունների լեզիտիմացմանը: Այս իմաստով լեզուն գաղափարախոսական է: Երբ հերմենատիկական փորձառությունը բախվում է նշանային փոխառնչությունների կախվածությանը փաստական սոցիալական հարաբերություններից, այն ստիպված է կերպափոխվել գաղափարախոսության քննադատության:

Ի տարրերություն Յայլեգերի, որն այդպես էլ չներգրավվեց Ադոր-նոյի հետ բանավեճի մեջ, Գաղամները Յարերմասի քննադատության նյութը այնքան կարևոր է համարել, որ պատասխանը ներառել է իր հոչակավոր գրքի հետագա բոլոր հրատարակություններում<sup>52</sup>:

Նրա ընդհանուր գմահատականն այն է, որ բանավեճի ընթացքում օգտագործվել են ամենավերջին, համարյա չվերահսկվող կանխադրույթները. «Մի կողմից, Յարերմասը և շատ ուրիշներ, որ հետևում են լուսավորականության հին կարգախոսներին՝ մտածողության և ռեֆլեքսիայի միջոցով փոխարինել հնացած նախապաշարնունքները, չեղյալ դարձնել հասարակական արտոնությունները, այսինքն՝ հավատում էին “պարտադրանքից ազատ երկխոսության”»: ...ին կողմից, դրան հակառակ առկա էր խորը կասկածն ընդդեմ... բանականության անիրատես գերազնահատման՝ մարդկային տրամադրության հոլովական մոտիվացիաների համեմատությամբ»<sup>53</sup>:

Այն, որ Յարերմասը հօետորականությանը պարտադրող բնույթ է վերագրում և այն մի կողմ է դնում հօգուտ պարտադրանքից զուրկ ռացիոնալ գրույցի, Գաղամները «սարսափելի անիրական» է համարում: Դրանով ոչ միայն թերագնահատվում է ճարտասանական մանիպուլացիայի և բանականության ինքնուրույն իրավունքի նսեմացման վտանգը, այլև ճարտասանության միջոցով համաձայնության գալու հնարավորությունը, որի վրա է հիմնված հասարակական կյանքը<sup>54</sup>:

<sup>52</sup> Տե՛ս H.-G. Gadamer, *Wahrheit und Methode*, Nachwort:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 529:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 531:

## Նորից «կրթության» մասին

Կրթություն՝ գերմանական ուսուցիչա:

Մ. Նաուման

Գաղամերի հղացքի վերլուծությունը մենք սկսեցինք՝ ելակետ ունենալով կրթության հղացքը, և այժմ՝ ճանապարհի ավարտին, հնարավորություն ունենք համոզվելու, որ կրթության հարցերում, ինչպես բյուրեղի հիստերում, իսկապես բեկվում են մտածողին անհանգստացնող հիմնական խնդրի՝ իսկության և մեթոդի բազմապիսի փոխառնչությունները:

Այս առումով Յարեմասի հետ բանավեճից զատ, հատկանշական է Միխայել Նաումանի ծրագրային հոդվածը, գրված գերմանական համալսարանական համակարգը ամերիկյանի նկատմամբ մրցունակ դարձնելու խնդրի շուրջը ԳԴՀ-ում ծավալված քննարկման առիթով<sup>55</sup>: Յոդվածի վերնագիրն իսկ՝ «կրթություն՝ գերմանական ուսուցիչա», անմիջականորեն հակադրված է Գաղամերի հղացքին: Բայց, որքան էլ տարօրինակ է, վերջինիս անունը տեքստում ոչ մի անգամ չի հիշատակվել: Փոխարենը Նաումանը հղել է *Մայստեր Էկհարտին*, ակնարկելով կրթության հասկացության «կասկածելի» ծագումը միջնադարյան միստիցիզմից: Որպես կրթական ուսուուղիքի արդիական նախասկիզբ՝ Նաումանը սպասելիորեն մատնանշել է Շիլլերի *Նամակներ մարդու էսթետիկական դաստիարակության մասին* աշխատությունը (1795), հիշեցնելով, որ գաղափարը զարգացում է ստացել Վինկելմանի, Գյորեի, Շիլլերի, Յումբուրտի, Ֆիխտեի, Շելիմզի և Յեգելի ջանքերով: Վկիհելմ Յումբուրտը պահանջել է «մարդկանց կրթել» և ոչ թե «արտաքին նպատակների համար դաստիարակել», իսկ հասարակական կրթության հնարավորությունների ստեղծումը համարել է պետության գերազույն նպատակը:

Այդ ավանդույթի ծիրում լուսավորական իմաստով ընթանված «դաստիարակությունը» (Erziehung) դիտվել է որպես նպատակաւող-ված մանկավարժական գործընթաց, իսկ «կրթությունը» (Bildung)` որպես բոլոր դաստիարակչական ընթացքների համարել է պետության գերազույն նպատակը:

<sup>55</sup> M. Naumann, *Bildung – eine deutsche Utopie*, in: “Die Zeit”, № 50, 2003. Միխայել Նաումանը ԳՖՀ վարչապետ Գերիարդ Շրյոների օրոք գրադեցրել է մշակույթի գծով դաշնային պատասխանատուի պաշտոնը. կրթության մասին բանավեճը սկիզբ է առել դաշնային վարչապետի վերը հիշատակված նախաձեռնության կապակցությամբ:

պետք է ծառայեր առավել բարձր նպատակի՝ միջին խավի ազատագրմանը: Փաստորեն, ազգային զանգվածների կրթության գործընթացը (Bildung) Գերմանիայում առաջ է ընթացել «ազգի ծևափորմանը» (Nationsbildung) գուգահեռություն ամերիկացիների «երջանկության ձգտման» (pursuit of happiness), որի վրա ԱՄՆ հիմնադիր հայրերը կառուցել են իրենց պետականաստեղծ վարդապետությունը, գերմանացիք զարգացրել են մեկ այլ սկզբունք՝ «ձգտում առ կրթություն» (pursuit of Bildung):

Ինչո՞ւ է առաջինը գերադասելի և երկրորդը՝ խոտելի: Գերմանական կրթական տեսլականի պատմությանը հատուկ է եղել կամքն առ ազգային գերազանցություն, պնդում է Նաումանը: «Բացարձակ գիտելիքին» ուղղված կամքը պայմանավորել է գերմանացիների «առանձնահատուկ ճանապարհը» (Sonderweg) դեպի արդիականություն: Նույնիսկ «մշակույթի» և «քաղաքակրթության» շպենգլերյան դիխոտոմիան<sup>56</sup> Նաումանը բացատրում է գերմանացիների՝ հարևաններից առավելապես տարբերվելու ձգտումով. քաղաքակրթությունը համարվել է օտար՝ չափից դուրս արդիական, այն դեպքում, եթե իրավ գերմանականը կրթությունն ու մշակույթն էին:

Բայց կրթության միջոցով ձեռնարկված ազատագրությունը, փաստորեն, ստվերել է ազգի ծևափորման քաղաքական բաղադրիչը. այդ նույն ժամանակ քաղաքական ռեստավրացիան անլացնում էր ժողովրդավարական զարգացման հոլյուսը: Ոչ Ֆրանսիայի, ոչ Ամերիկայի հեղափոխականներն այն կարծիքին չեն եղել, որ քաղաքական ազատությունը կարող է էսթետիկական դաստիարակության արդյունք լինել: Նրանց ուշադրությունն ավելի գործնական բաների էր ուղղված՝ իշխանության վերահսկողություն, օրենքի առջև հավասարություն, մասնավոր սեփականության իրավունք, կարծիքների ազատություն և հանդուրժողականություն: Այնինչ Գերմանիայում հոլյուս են փայփայել, որ ազատությունը կարող է լինել սրտի, գիտելիքի կամ գեղագիտական ընկալունակության ազատություն:

«Բանաստեղծների և մտածողների» ժողովրդի մասին պատկերացումը ենթադրում է տարբերություն և հոգևոր գերազանցություն Եվրոպայի մյուս ժողովուրդների նկատմամբ: Դիրքորոշում, որը միտված է ազգային պետության ծևափորումն իրականացնելու Անգլիայի, Ֆրան-

<sup>56</sup> Ղմնտ. սույն գլուխ «Կրթության գաղափարը» հատվածը, մասնավորապես՝ էջ 265:

սիայի, ԱՄՆ-ի զարգացման հիմքում ընկած տեխնիկական-գիտական արդիականացումից տարբեր՝ լեզվական-մշակութային եղանակով։ Նույնիսկ Թ. Ադրբեյջի սոցիալական քննադատությունը, ուղղված ամերիկյան «մշակութային արդյունաբերության» համահարթող էլության դեմ, Նաումանը երանգավորված է համարում նույն մտայնությամբ։

Թեև կրթության՝ տասմիններող դարի էսթետիկական տեսլականը պատմության գիրկն է անցել, պահպանվել է համալսարանական կրթությանը չափազանց բարձր պատասխանատվության տակ դնելու հակումը, գտնում է Նաումանը։ Կրթության մասին այսօրվա բանավեճը, ըստ էլության, նույն երկընտրանքից է ելնում – փրկել աշխա՞րհը, թե՞, այնուամենայնիվ, իոդ տանել առանձին մարդու երջանկության մասին – խնդիր, որ մյուս ազգերը կապում են քաղաքականի հետ։

Որ մշակույթի դաշնային պատասխանատուի քննադատությունը ուղղակիորեն դիպչում է նաև գաղամերյան հղացքի պահպանողական միտումներին, անվիճելի է։ Մանավանդ, եթե նկատի ունենանք վերջինիս աղերսները Յայդեգերի ռեկտորական ծառում զարգացված գաղափարներին<sup>57</sup>։ Իհարկե, Գաղամերի կրթության հղացքը և Յայդեգերի «Գերմանական համալսարանի ինքնահաստատումը» միանգամայն տարբեր քաղաքական հետևանքներ են ունեցել։ Բայց ո՞վ կիամարձակվի միանշանակությամբ պնդել, որ աշակերտի տեսության մեջ նշանակալից տեղ զբաղեցնող «հեղինակության» գաղափարն անմասն է ուսուցչի պաշտպանած «առաջնորդի սկզբունքի» (Führerprinzip) ազդեցությունից։

Այս՝ մշակութայինի շուրջ կառուցվող կրթական համակարգի հետադիմական տարրերի մերժման առումով Մ. Նաումանը, անշուշտ, ավելի մոտ է Յ. Դարերմասին։ Սակայն նույնը դժվար է պնդել մեկ այլ կարևոր հարցի դեպքում։ Դա քաղաքականի կարգավիճակն է, որը Նաումանի ընտրած ռազմավարության համատեքստում մնացել է չպարզաբանված։

Մ. Նաումանի քննադատությունից առաջ եկող անբավարարության գգացողությունը կապված չէ նրա փաստարկների արմատական ժխտողականության հետ։ Յակառակը։ Նրա դիրքորոշման թուլությունը արմատականության պակասն է՝ մինչև վերջ չգնալը և սեփական դրույթներից բխող ծայրագույն եզրակացություններից խուսափելը։

<sup>57</sup> Տե՛ս սույն աշխատության «Մարտին Յայդեգեր» բաժնի երրորդ հատվածը՝ «Աքցանում», էջ 226-248։

Չետևաբար, խնդրի պարզաբանման համար իմաստ ունի դիմել մեկ այլ հայտնի տեքստի, որում տրամարանական ավարտին են հասցված հումանիտար կրթության և տեխնիջիստական մեթոդի հղացքների հակադրությունից բխող եզրակացությունները։ Դա թույլ կտա, որպեսզի ընտրությունը – եթե պատճական գարգացման արդի փուլում դեռ հնարավոր է խոսել ընտրության մասին – իրականացվի երկու բնեօններում սպասող վտանգների լիակատար գիտակցմամբ։

Խոսքը ժան-Ֆրանսուա Լիոտարի *Չետարդիականության իրավիժակի*<sup>58</sup>, մասին է, որը նաումանը նույնպես չի հիշատակել, թեև նրա դրույթներից ակնհայտորեն ազդեցիկ է։ Յատկանշական է ասկայն, որ դրանով հանդերձ նրա վերլուծության մեջ չի բացորոշվել Լիոտարի հոչակավոր տրակտատի իմաստային առանցքը՝ լեզիտիմացման հարցը<sup>59</sup>։

Լեզիտիմացման խնդրի անտեսման արդյունքում նաումանը միևնույն կծիկի մեջ հանգուցել է երկու որակապես տարբեր երկուուր։ Մեկը կրթության սերտ առնչությունն է ժողովորի՝ որպես կրթության կրողի հետ (այստեղից՝ գերմանացիների գերակայության հավակնությունների հետ կապված մոտիվը), մյուսը՝ «աշխարհը փրկող» կրթության և «առանձին մարդու երջանկությունն ապահովող» քաղաքական նորմերի հակադրությունն է։

Ի՞նչ լույս է սփոռում այդ խճողված հարցերի վրա Լիոտարի լեզիտիմացման հղացքը։

Գիտելիքի լեզիտիմացումը, ըստ Լիոտարի, գործընթաց է, որում գիտական դիմուլուրը մեկնարանող «օրենսդիրը» իրավունք է ստանում որոշելու այն պայմանները (ծշմարտության չափանիշները, ստուգման եղանակները և այլն), որոնց կիրառության դեպքում որոշակի ասույթ դիտարկվում է որպես տվյալ գիտական դիմուլուսի մաս և կարող է հաշվի առնվել գիտական հանրության կողմից<sup>60</sup>։

Գիտելիքը չի սահմանափակվում զուտ իմացական գործառույթներով, այն ներգրավում է բազմաթիվ այլ ունակություններ (կոնվենտները): Բացի ծշմարտության չափանիշից՝ գիտելիքը գնահատվում է նաև գործնական (նաևնագիտական կարողությունների), ինչպես նաև արդարության,

<sup>58</sup> J.-F. Lyotard, *La condition postmoderne*, Les Editions de Minuit, Paris, 1979. Մեջբերումներն ըստ՝ Ժ. -Փ. Լիոտար, *Состояние постмодерна*, Алетейя, СПб, 1998:

<sup>59</sup> *Չետարդիականության իրավիժակը* գրվել է 1976-ին, նաումանի հոդվածը՝ 2003-ին։ Յասկանալի է, որ նաումանը քաջ ծանոթ էր Լիոտարի երկին, քայլ այն օգտագործել է այնքանով, որքանով դա համապատասխանել է իր կրթական-քաղաքական ծրագրին։

<sup>60</sup> Ժ. -Փ. Լիոտար, *Состояние постмодерна*, с. 7.

բարու, գեղեցկության և այլ նման չափանիշների տեսակետից<sup>61</sup>: Այստեղից բխում է գիտելիքի ամենակարևոր հատկանիշներից մեկը՝ այն հաճես է գալիս որպես սուբյեկտի մեջ մարմնավորված միասնական ծև, որը բաղկացած է նրան կերպավորող տարրեր ունակություններից<sup>62</sup>:

Մյուս էական հանգամանքն այն է, որ այդ կերպ օմբռնված գիտելիքը մոտ է ավանդությանը, այսինքն՝ մշակույթին առավել լայն առումով, քանի որ Վերջինս իր մեջ կրում է Վերը թվարկված արժեքային գնահատականների չափանիշները: Տվյալ ժողովրդի մշակույթը, փաստորեն, ծևավորում է այն հաճածայնության դաշտը, որը բույլ է տալիս տարրերել նրանց, ով գիտի, նրանցից, ով զգիտի՝ օտարակամից կամ երեխայից: Սա այն է, ինչ ընդունված է եղել անվանել կրթություն (Bildung), և այն, ինչ Յեգելն անվանել է «Volksgeist» (ժողովրդի ոփի):<sup>63</sup>

Ավանդական գիտելիքի ծևավորման և արտահայտման ամենահարմար միջոցը պատմողական ծևն է՝ նարատիվը: Այն պատմում է հերոսների հաջողությունների և անհաջողությունների մասին, լեզիտիմություն է պարգևում հասարակական իիմնարկություններին (որ առասպելների իիմնական գործառույթն է), ի ցույց է դնում այն չափանիշները, որոնցից եւնելով՝ տվյալ հասարակությունը գնահատում է իմացական ունակությունները, իր ոչ մասնագիտացված իմեւու շնորհիվ ընդգրկում է տարրեր լեզվական խաղեր, ի ցույց է դնում գիտելիքի փոխանցման պրագմատիկական տեսանկյունները և այլը<sup>64</sup>: Նարատիվները, այսպիսով, որոշում են, թե ինչ է կարելի ասել և ամել տվյալ մշակույթի շրջանակներում, և քանի որ իրենք ել նույն մշակույթի մասն են, դրանով իրենք էլ լեզիտիմ են:

Երբ պատմողական ծևն օգտագործվում է գիտելիքի լեզիտիմացման խնդիրը լուծելու համար, բնական հայց է առաջանում պատմության հերոսի մասին: Ո՞վ է այն սուբյեկտը, որն իրավունք ունի սահմանելու նորմը: Կա լեզիտիմ հաճածայնություն, ասում է Լիոտարը, որ այդ հերոսը ժողովուրդ է: Ընդ որում՝ «ժողովուրդը» նկատի է առնվում բարիս լայն իմաստով՝ դա կարող է լինել «ազգը» կամ նույնիսկ «մարդկությունը»<sup>65</sup>:

Այս թեզի հետ անխուսափելիորեն կապված է առաջընթացի գաղափարը՝ շարժման ընթացքում ոչ միայն գիտելիք է կուտակվում, այլև ինքը ժողովուրդը որպես հասարակական-քաղաքական սուբյեկտ զարգացում է ապրում:

Յեգելն իր *Փիլիսոփայական գիտությունների համրագիտարանում* (1817-1827) փորձել է իրականացնել գիտելիքի տոտալացման նախագի-

<sup>61</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 52:

<sup>62</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 53:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 54: Ավելացնենք, որ ժամանակակից պատկերացումների տեսակետից այդ երևույթը մոտ է հաբերճասայան «կենսաշխարհին»:

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 55:

<sup>65</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 77:

Ծը, որի սաղմերը՝ որպես «համակարգի» գաղափար, գտնում ենք Ֆիխստեի և Շելինգի մոտ: Ենթադրվել է, որ գոյություն ունի ոգու ունիվերսալ «պատմություն», ոգին «կյանք» է, կյանքի նաև պատկերացում կարող է ծեռք բերվել նրա համակարգված իմացության ընթացքում՝ ենայիրիկ գիտությունների միջոցով: Գերմանական իդեալիզմի հանրագիտարանը այդ «կյանք-սուբյեկտի» պատմության շարադրանքն է:

Այս, ինչ առաջ է գալիս նման շարադրի ներկայացման արդյունքում, մետապատմություն է, քանի որ չի նույնանում կոնկրետ ժողովրդի կամ առանձին գիտնականների և գիտական դպրոցների կուտակած գիտելիքի հետ, այլ ներումակ նպաստակ է իրականացնում: Դրանում երևան է գալիս սպեկուլատիվ գիտելիքի անուղղակի բնույթը՝ հարաբերական ասույթները ներդրված են սուբյեկտի մետապատմության մեջ, որն ապահովում է դրանց լեզիտիմությունը: Ըստ այդմ առանձին ասույթները վերցվում են որպես ավտոմիմներ (իրենք իրենց անուններ) և դրվում են շարժման մեջ, որում սերում են միմյանց<sup>66</sup>: Սպեկուլատիվ դիսկուրսը նկատի ունի, որ գիտելիքն արժանի է իր կարգավիճակին, եթե այն վերառվում է սեփական շարքերից և մեջքերվում է երկորդ կարգի դիսկուրսի շրջանակներում:

Քննելով լեզիտիմացնող պատմությունների տարրեր տիպերը, Լիոտարը հասուլ կանգ է առել գիտության, ազգության և պետության կապի վրա կառուցված մետապատմության վրա, որին նշանակալից դեր է հատկացվել Բեռլինի համալսարանի հիմնադրման ժամանակ (1807-1810): Դրա կայացմանը մասնակցել են Ֆիխստեի, Շլայերնախների և Վիլհելմ Շումբոլդտի կրթական նախագծերը: Զևսպորված հղացքի համաձայն՝ գիտելիքի սուբստանցը սպեկուլատիվ ոգին է, որը մարմնավորված է ոչ թե պետության, այլ փիլիսոփայական համակարգի մեջ: Ոգու՝ որպես մետասուբյեկտի կեցության վայրը սպեկուլատիվ համալսարանն է՝ դրական գիտությունները, և ժողովուրդը միայն դրա հում ծնենք են<sup>67</sup>.

«Դպրոցները գործառական են, համալսարանը՝ սպեկուլատիվ, այսինքն՝ փիլիսոփայական», - ասում է Շլայերնախները<sup>68</sup>:

Փիխստիմացնունը կոչված է միավորելու գիտելիքի տարրեր ճյուղերն ու ուղղությունները: Գիտելիքը որպես «ոգու կյանք» իր լեզիտիմացումը կրում է իր մեջ, նա է, որ կարող է ասել, թե ինչ է պետությունը և ինչ է հա-

<sup>66</sup> Տե՛ս նոյն տեղում, էջ 87: Դամենատենք երկու նախադասություն՝ «Լուսինն ելավ», և ««Լուսինն ելավ»» ասույթը դենուտատիվ ասույթ է: Կարելի է ասել, որ երկրորդ նախադասության «Լուսինն ելավ» հատվածը առաջինի ավտոմիմն է, տե՛ս նոյն տեղում:

<sup>67</sup> Նույնիսկ Յայդեգերի բազմից քննադասված ռեկտորական ճառում, որը Լիոտարը դիտում է որպես գիտելիքի լեզիտիմացնան անհաջող փորձ, եւսկեսք ժողովուրդը չէ: Սպեկուլատիվ գիտությունն այստեղ դառնում է «գոյության հարցում»՝ այդիսույն վերաբերելով «գերմանական ժողովրդի ճակատագրի»:

<sup>68</sup> Նոյն տեղում, էջ 84: Դանց տույն աշխատության Շլայերնախներին նվիրված բաժնում արծարծված «կաճառ» հասկացության հետ:

սարակությունը: Ազգային պետությունն ի վիճակի է արտահայտել ժողովրդի երևումը միայն սպեկուլատիվ գիտելիքի միջոցով:

Այսպիսով տեսնում ենք, որ եվրոպական համալսարանի ավանդույթում «ժողովուրդը» չի հանգեցվում «ազգ-պետությանը», այլ շատ ավելի լայն ընդգրկում ունի՝ մինչև «մարդկություն» և «բացարձակ ողբի»<sup>69</sup>: Դա Նաումանը, իհարկե, հաշվի է առնում: Կրթության նրա գնահատականը որպես «գերմանական ուսուցիչա» վերաբերում է ոչ այնքան «մշակութակիր ազգի» մյութոսին (թեև՝ նաև), որքան մշակութային հղացքի վերացականությանը: Այստեղից՝ «կրթականի» և «քաղաքականի» նրա հակադրությունը:

Լիոտարի լեզվով արտահայտած՝ դա պետք է նշանակեր, որ կրթությունը մետապատմություն է, քաղաքականը՝ ոչ: Եվ իսկապես, կրթությամ «վերացական» գաղափարը երջանկության «կոնկրետիկայով» փոխարինելով, Նաումանը, փաստորեն, վերաբերում է «մետապատմություների» սկզբունքը, լույսայն հանգեցնելով երջանկությունը անհատի որոշակի պահանջնունքների բավարարմանը: Երջանկության ապահովումը նրա մոտ կապված չէ անձնավորությանը կրթելով ծևափոխելու պրոցեսի հետ:

Ի՞նչ եզրակացություններ են բխում այս տարրերակումից:

Կրթության հեռահար նպատակը, որը Նաումանն անվանում է «մարդկությունը փրկելու» հավակնություն, ոչինչ այլ բան չէ, քան դրսւրումն այն իհմնարար համոզմունքի, որ գիտելիքի ծեռքբերումն անբաժանելի է հանրային բանականության, իմշաբես նաև առանձին անձնավորությամ կազմավորումից: Ավանդական հավաքութային համակարգում դա կոչվում է «զարգացում»: Լիոտարի համակարգում այն կարելի կլիմեր անվանել «զարգացման մետապատմություն»:

<sup>69</sup> Նույնիսկ Շլայերմախերից անհամենատ արմատական Ֆիխտեի մոտ, որը շարժմել է «ժողովրդավարության զարափարներով կերպավորված գերմանական հայրենասիրության» և «ֆիանսիականորեն շեշտադրված աշխարհաքաղաքացիության» միջև (F. Böttger, “Johann Gotlieb Fichte”, in: J. G. Fichte, *Ruf zur Tat*, Verlag der Nation, Berlin, 1956, S. 8). Կրթության իրական սուբյեկտը ոչ թե ժողովուրդն է, այլ մարդկությունը, որի կյանքը նա դիմարկել է որպես ոգու կյանք: Սանավանը, որ կրյալմերի դասի բուն խնդիրը Ֆիխտեի հանդա «մարդկային ցեղի իրական առաջնորդացի գերազույն վերահսկողություն» է եղել, իսկ մարդուս արժանապատվության ատահօք կազմող անքակտելի հատկությունը՝ «կատարելագործման հնարավորությունը», J. G. Fichte, “Aus der ‘Vorlesungen über die Bestimmung der Gelehrten’”, in: ders., *Ruf zur Tat*, t. 146, 147:

Արդյո՞ք սկզբունքորեն հրաժարվելով մետապատմությունների կիրառությունից՝ հրաժարվում ենք նաև զարգացման սկզբունքից, և արդյո՞ք դա նշանակում է, որ քաղաքականը զարգացում չի ենթադրում: Նաումանի հղացքից դա անմիջականորեն չի բխում: Ի վերջո, կարելի է փաստել, որ անհատի երջանկությունն ապահովող բնական պահանջնունքների թվին է պատկանում նաև ազատությունը, որը նվաճվում է քաղաքական միջոցներով և հնարավորություն է տալիս ազատ ընտրության հիման վրա շարժվել ցանկացած ուղղությամբ:

Այստեղ նորից երկընտրանքի առօս ենք կանգնում: Կամ ստիպված ենք վերստանձնել «մեծ պատմությունների» հղացքը՝ քաղաքական դաստիարակության միջոցով հնարավոր դարձած ազատության մասին թեզը դիտարկելով որպես «ազատության մետապատմության» դրսնորում: Կամ պետք է արձանագրենք, որ քաղաքականի կապը ազատության հետ մետապատմություն չէ, այլ կոնկրետ գիտելիքի մակարդակով նվաճված կոնստելացիա: Վիրոժն ահա ցույց է տալիս, որ այսինչ քաղաքական կանոնների կիրառությունը հանգեցնում է մարդկանց հոգնոր և նյութական կարիքների հնարավորինս լրիվ բավարարման և ապահովում է անհատի երջանկությունը:

Երկու դեպքում էլ խնդիր ենք ունենում: Առաջինում պետք է ցույց տալ, թե ինչու քաղաքական դաստիարակությունը «կրթություն» չէ, եթե այն իրականացվում է ի հավելումն այն «կոնկրետ» առարկաների՝ քիմիայի, գենետիկայի կամ սոցիոլոգիայի, որոնք կոչված են ուսանողից համապատասխան մասնագետ պատրաստել: Մանավանդ, եթե պատմության հերոսը՝ ժողովուրդը, դիտարկվում է որպես քաղաքական սուբյեկտ:

Երկրորդում անհրաժեշտ է հիմնավորել քաղաքական կանոնների և առանձին մարդկանց երջանկության միջև կապի անհրաժեշտ – պատճառահետևանքային – բնույթը (քանի որ խոսքը ոչ թե մետապատմության, այլ կոնկրետ գիտելիքի մասին է), ինչպես նաև պատասխանել այն հարցին, թե արդյո՞ք «քաղաքական դաստիարակությունը»՝ որպես ուսումնական ընթացքի առանցք, ենթադրում է դաստիարակվող սուբյեկտի «գարգացում», և եթե այդ, արդյո՞ք այդ գարգացումը վերջինիս համար «ինքնին արժեք է»:

Դրական պատասխանը (բացասականը գործնականում անպաշտպանելի կլիմեր) թույլ է տալիս ենթադրել, որ իշխանությունների ժո-

ղովրդավարական վերահսկողությամբ ուղղված քաղաքական կանոնները կարող են ներգրավվել (և գիտենք, որ հաջողությամբ ներգրավվում են) ընդհանուր կրթական համակարգի մեջ:

Ի՞նչն է այդ դեպքում հիմք տալիս կասկածի տակ դնելու «կրթության որպես զարգացման» մետադիսկուրսի ռելականությունը:

Լիոտարի շնորհիվ տեղյակ ենք, որ կրթության կասկածահարույց դաշնալու պատճառը նրա՝ ժողովոյի հետ ունեցած «վարկաթեկիչ» փոխանչությունները չեն, ոչ էլ իրաժարումը քաղաքական բաղկացուցիչից: Արժանահավատության կորուստն ընդհանրապես պայմանավորված չէ մետանարատիվներում ներկայացվող «հերոս-սուրբեկտների» բնույթով կամ դրանց հետապնդած նպատակներով:

Դրա իրական պատճառը գիտելիքը լեզիտիմացնող մետապատճությունների կարգավիճակի փոփոխությունն է: Յիմքում ընկած է գիտակցումն այն բանի, որ հետարդի աշխարհում ծավալվող հարաբերությունների բազմազանությունը, որին արտահայտվում է ամենատարեր «լեզվական խաղերի» միջոցով, այլևս անհնար է միավորել մեկ սպեկուլատիվ մետալեզվի մեջ, որը լեզիտիմացնող դեր կստանձներ գիտելիքի առանձին ուղղությունների կամ բնագավառների նկատմամբ<sup>70</sup>: Այդ ընդհանուր հակասապեկուլատիվ դիրքորոշման տեսակետից բոլոր «մետա-նպատակները», կրթություն կոչվեն դրանք, թե երջանկություն, հավասարապես անհամոզիչ են:

Քանի որ տարածեա «լեզվական խաղերը» հնարավոր չէ ընդգրկել մեկ դիսկուրսի մեջ, լեզիտիմացնան խնդիրը չի կարելի լուծել ։ Յարերմասի առաջարկած «ումելիվերապ կոնսենսուլսի» ճանապարհով, գտնում է Լիոտարը<sup>71</sup>: Մյուս կողմից փաստարկային երկխոսություն ներկայացնող դիսկուրսը վերջին խոշընդոտն է, որին հանդիպում է Լումանի «կայուն համակարգը»<sup>72</sup>:

<sup>70</sup> Դրա գործնական հետևանքն այն է, որ հին ֆակուլտետները տարբաժանվում են ամեն տեսակ հնատիտուտների և հիմնադրամների: Կենտրոնանալով սպեկուլատիվ պատճության վրա և պատասխանատվություն չկրելով առանձին բնագավառներում տարվող գիտական հետազոտությունների համար համայստանները բավարարվում են հաստատուն համարվող գիտելիքների փոխանցմամբ, պատրաստելով ոչ թե գիտնականներ, այլ դասախոսներ: Տե՛ս և Ժ.-Փ. Լիոտար, *Состояние постмодерна*, էջ 96:

<sup>71</sup> Խոսքն այստեղ այն մասին է, որ մարդկությունը կարողանա գտնել այնպիսի «հնարեր», որոնք բոլոր լեզվական խաղերում: Այս կապակցությամբ Լիոտարը հղում է կատարում Կարպիս Գորյանի *Մետարնադասությանը*, որիւմ մանրանասն վերլուծվել է հարերմասյան մտքի այդ տեսանկյունը:

<sup>72</sup> Յարեմասի «Փրամեֆերուան» և Լումանի «Քիեւեֆերյամ» դպրոցների միջև տառմայնակներ տևող սկզբունքային բանավեճի մասին կարելի է պատկերացում կազմել հետևյալ հրատարակությունից՝ J. Habermas / N. Luhmann, *Theorie der Gesellschaft oder Sozialtechnologie – Was leistet die Systemforschung?*, Suhrkamp, Ffm., 1971:

Տեղիտիմացնող պատմության նկատմամբ հավասի կորսույան արդյունքում առաջացած պարապը սկսում է լցվել համակարգի ստուալաց-նող հավակնություններ ունեցող գաղափարախոտությամբ<sup>73</sup>:

Սոցիալական համակարգի վերջնական նպատակը, ըստ Լումանի, արդյունավետությունն է, ուրեմն գիտելիքն է գնահատվում է արդյունավետության չափանիշներով: Այսուհետև ապացույցների ներկայացումը գիտական հաղորդման վերաբերյալ հավանություն ստանալու համար անհրաժեշտ միջոցների մի մասն է միայն: Մյուսը արդյունավետությունն է<sup>74</sup>:

Գիտելիքը դադարում է ինքնանապատճեն լինելուց և գնահատվում է շուկայական արժեքով: Գիտելիքի շրջապատույտն ապագայում իրականացվելու է նոյն ուղիներով, որոնցով իրականացվում է դրամական միջոցների շարժը<sup>75</sup>: Գիտելիքների փոխանցումն այլև կոչված չէ ծնավորելու ընտրախավ, որն ազգը առաջնորդելու է դեպի ազատություն: Յին սկզբունքը, ըստ որի՝ գիտելիքի ձեռքբերումն անբաժանելի է բանականության կազմավորումից (Bildung) և նույնիսկ անձնավորությունից, այլև չի գործում<sup>76</sup>: Այսուհետև նպատակն է համակարգին մատակարարել գործիչներ, որոնք ի վիճակի են պրակտիկ դիրքերում իրականացնել համակարգի պահանջները:

Միայն լեգիտիմացման «մեծ պատմությունների» հեռանկարում է, որ դասավանդման որոշակի մասը մերենաների միջոցով իրականացնելը անընդունելի է թվում: Բայց արդիականությունն այլև չի հավատում մեծ պատմություններին: Նոր հարացույցի շրջանակներում հարցը, որ բացորոշ կամ ոչ բացորոշ տալիս է պետական ուսուցում անցնող ուսանողը, «արդյո՞ք սա ճիշտ է»-ն չէ, այլ «ինչի՞ն սա ծառայում», կամ «արդյո՞ք սա կարելի է վաճառել», որ ի վերջո՞ վերահսկվում է «արդյո՞ք սա արդյունավետ է» հարցի միջոցով:

«Դամակարգի ստուալացնող հավակնության» վկայակոչումը շատքան է պարզաբանում: Նախ, դա ցույց է տալիս, որ «կրթության» այլընտրանքը բոլորովին էլ նաումանի իմաստով հասկացված «դաստիարակությունը» չէ՝ կապված այնպիսի ժողովրդավարական նորմների հետ, որպիսիք են վերահսկողությունն իշխանության նկատմամբ, կարծիքների ազատությունը, հանդուրժողականությունը և այլն: Դրանք չեն

<sup>73</sup> Տե՛ս Ժ.-Փ. Լուտար, *Состояние постмодерна*, էջ 96:

<sup>74</sup> Արդի պետության ինքնիշխանությունը որոշվում է ոչ միայն լեգիտիմ բռնության կիրառության (Մ. Վերեր) կամ արտակարգ վիճակ հայտարարելու մենաշնորհով (Կ. Ծնիւր), նշում է լիուտար, այլև իր տրամադրության տակ եղած տեխնիկական միջոցների արդյունավետության չափը որոշելու իրավունքով: Նոյն տեղում, էջ 36:

<sup>75</sup> Նոյն տեղում, էջ 22:

<sup>76</sup> Նոյն տեղում, էջ 18:

Էլ կարող հաշվի առնվել, քանի որ, ըստ Նիկլաս Լունդանի հասարակական համակարգերի տեսության, որի վրա ակնհայտորեն հենվում է Լիտուարը, համակարգի միակ նպատակը կայունությունն է և բարդության նվազեցումը: Այդ գործառույթները համակարգն իրականացնում է ինքնարբակ ռեժիմով (auto poiesis) հետևելով մի տրամաբանության, որը որևէ կապ չունի մարդու նպատակների հետ<sup>77</sup>: Մանավանդ, որ վերջինս համակարգի մաս չի կազմում՝ հանդես գալով որպես նրա շրջակա միջավայրը: Լունդանյան սոցիալական համակարգը վերահսկելի չէ, քանի որ չունի «կենտրոն», իսկ այնպիսի դասական հիմնարկները, որպիսիք են քաղաքական իշխանությունը կամ «կենսաշխարհը», որին Հարերմասը կարևոր կարգավորիչ դեր էր վերագրում, միայն «ենթահամակարգեր» են, որոնք ավելացնում են հասարակական անբողջն ընթացքի մեջ դնող գործոնների բազմազանությունը, բայց ի վիճակի չեն այն ուղղորդելու որոշակի ուղղությամբ:

Այլ բան է, որ լունդանյան մոդելի ընդունմամբ էլ մետապատմությունները չեն վերանում, այլ կերպափոխսպում են: Առաջ եկած նոր մետանարատիվը պատճում է ոչ թե «կյանքի», այլ «համակարգի» մասին, միևնույն ժամանակ ժխտելով իր «պատմողական» բնույթը<sup>78</sup>: Եվ թվում է, թե իրավունք ունի. չէ՞ որ բացառապես ինքնապահպանմամբ գրադարձ համակարգը, ըստ էության, «պատմական» չէ, քանի որ ինքնապահպանումից բացի, հեռահար նպատակներ չի հետապնդում, այսինքն՝ փոփոխսպում է, ոչ թե զարգանում:

Մարդ կարող է հեգեցան համաշխարհային ոգու խորամանկությունը տեսնել այն բանում, որ գերմանական իդեալիզմում ծևավորված Փիլիսոփայական Շամակարգի դիալեկտիկական ընթացքն իր հետնորդն է գտնել հետարդիականության Սոցիալական Շամակարգի անտարբեր շարժում: Բայց ոչինչ նոր չէ լուսնի տակ: Ժամանակին Ադրբենն, արձանագրելով, որ սպառողական հարաբերությունների ահազնացող զարգացման պայմաններում մարդկային կյանքը, կորցնելով ինքնավարությունն ու սեփական բովանդակությունը, փոշիացել-ցրվել

<sup>77</sup> Տե՛ս N. Luhmann, *Die Gesellschaft der Gesellschaft*, B. 1, Suhrkamp, Ffm., 1999, S. 171-189:

<sup>78</sup> «Շամակարգը ծգտում է առօրյա դիսկուրսը վերածել յուրահատուկ մետադիմուրսի-, ասում է Լիտուարը,- առօրյա ասույթները ինքնամեծքերման և տարբեր պրամատիկական դրույթների մեջքերման հակում են ցուցաբերում. դրանք անուղղակիրեն հարաբերվում են իրենց առնչվող ակտուալ հաղորդման հետ»: Տե՛ս Ժ.-Փ. Լիոտար, Եզվ. աշխ., էջ 148-149:

Է՛ հանգելով գուտ մասնավոր նշանակություն ունեցող «անհատական պահանջնունքների» ոլորտի, դառնությամբ եզրակացրել է.

Կյանքին ուղղված հայացքը վերածվել է գաղափարախոսության, ո-րը ստում է, որ կյանք այլևս չկա<sup>79</sup>:

Դիտարկելով Հարերմասի՝ դիսկուրսի միջոցով հանրային համաձայնության հասնելու սկզբունքը՝ որպես «համակարգի» տարածման միակ խոչընդոտ, Լիոտարը փաստորեն ցույց է տվել, որ Գաղամերի և Հարերմասի հղացքների հակադրությունը վավեր է միայն որոշակի նեղ շրջանակներուն: Արմատական հարցադրման պարագայում, երբ հարցականի տակ է դրվում գիտելիքը լեզիտիմացնող մետապատճմությունների սկզբունքը որպես այդպիսին (ինչ կերպարանքով էլ հանդես գալիս լինեն դրանք՝ որպես դեկարտյան «կողդիտո», հեզելյան «սուրստանց», Գաղամերի «ավանդության մեկնություն», Ապելի «հաղորդակցական հանրության մշտապես տրամաֆորմացվող ապրիորի», թե Հարերմասի «լավագույն փաստարկի պարտադրողականության վրա հիմնված կոնսենսուս»), Գաղամերը և Հարերմասը հայտնվում են բարիկադների միևնույն կողմում, ինչպես արդեն իսկ նույն կողմում են նրանց ուսուցիչները՝ Հայդեգերը և Ադորնոն<sup>80</sup>:

Չիրաժարվելով իրենց միջև գոյություն ունեցող սկզբունքային հակասությունների պարզաբանումից՝ նրանք ստիպված են հաշվի առնել նոր՝ հետարդիական դարաշրջանի մարտահրավերները:

Ֆառուտյան «կրթության վեպը»<sup>81</sup>, հայացքը մշուշոտ հեռուն, նոր հեռանկար է որոնում, սրափ գիտակցելով, որ «հաղթանակ չկա՝ միայն հաղթահարում»<sup>82</sup>: Բայց, չէ՞ որ հենց դա էլ նրա բուն եռթյունն է:


<sup>79</sup> “Der Blick aufs Leben ist übergangen in die Ideologie, die darüber betrügt, daß es keines mehr gibt.” – Th. W. Adorno, *Minima Moralia. Reflexionen aus dem beschädigten Leben*, Suhrkamp, Ffm., S. 7.

<sup>80</sup> «Հակադրությունները, որ մի ժամանակ անկամքթելի էին համարվում, այժմ սղվել սեղմվել են գրեթե վերածվելով ներտնական նրբին տարերությունների» (U. Tietz, *Ontologie und Dialektik. Heidegger und Adorno über das Sein, das Nichtidentische, die Synthesis und die Kopula*, Wien, 2003, S. 11): ժամանակակից հետազոտողի Հայդեգեր - Ադորն հականարսությանը տրված այս գնահատականը կիրառելի է նաև Գաղամեր - Հարերմաս հարաբերության նկատմամբ:

<sup>81</sup> Bildungsroman – ուժվարտյան «cogito»-ի պատճմության համեմատությունը «կրթության վեպի» հետ պատկանում է Լիոտարին, տես ս հիշ. աշխ., էջ 75:

<sup>82</sup> Wer spricht von Siegen? Überstehn ist alles. - Ոիլկի այս տողերի թարգմանությունը Հակոբ Մովսեսինն է:





# ԱՐՄԵՆ Ե

ԺԵՐԻԴԱՆ

1930 - 2004

## «ՐԱՎԵՐԺ ՀԵՏԱԶԳՈՒՄԸ»

### ՀԵՏԱՐԴԻԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ոերե Եղեազարն ասել է. «Եթե բոլոր ծովերը լցված լինեն քամաքով, բոլոր հովիտմերում գրչափողեր աճեն, երկիմքն ու երկիդը նման լինեն մագաղաքի և բոլոր մարդիկ գրչութամբ գրաղվեն, դրամբ չին կարողանա սպառել իմ յուրացրած Թորան՝ Թորան կնվազեր նույնքան, որքան նվազում է ծովը, որի մեջ գրչածայր են թաթախում»<sup>1</sup>:

*Différence` «գոյաբանական տարբերության» լեզվաբանական կերպա-փոխությունը*

Անցյալ դարի Երկրորդ կեսում տեղի ունեցած «լեզվաբանական շրջադարձը», որ սկիզբ է առել «անհատական լեզվի» անհնարինության մասին վիտքենշտայնյան դրույթից, իմանովին կերպափոխել է արդի փիլիսոփայության հարացույցը, առաջ բերելով փոփոխություններ, որ հավասարապես նկատելի են բոլոր փիլիսոփայական ուղղություններում:

Այդ միտումի արտացոլումն է նաև ժակ Դերիդայի փիլիսոփայության իմանական թեօք, որն արծանագրում է մտածողության մեջ «զուտ իդեալականը» առանց լեզվական նիշոցների ընկալելու և գործառելու սկզբունքային անհնարինությունը, բացառելով «իմաստի անմիջական հայեցողության» վրա հենված բոլոր տեսությունների հավակնությունները:

Գաղափարն իր ցայտուն արտահայտությունն է գտել Էրմունդ Շունեռլի բներսութաբանական հղացքի քննադատությանը նվիրված Զայն

<sup>1</sup> Ենանուել Լևինասի՝ հին երրայական տեքստից քաղաք այս մեջքերումը Դերիդան կրկնօրինակել է իր Թերազանքանըթյունում: Դայ ընթերցողին այն պետք է հիշեցնի Նարեկացու համապատասխան տողերը (Մատեան, Բան թ, Ա), բայց կարևոր է, որ միջնադարի համար սովորական այս համեմատությունը տվյալ համատեքստում կապված է զրի անսպառելիության հետ:

և բներևույթում, զարգացման ենթարկվել Գիր և տարրերություն և քերականարանություն հիմնարար երկերում<sup>2</sup> և, որպես Դերիդայի ստեղծագործության լայտմուտիվներից մեկը, այս կամ այն ծևով առկա է եղել նրա ողջ հետագա ստեղծագործության մեջ:

Հուսեռյան բներևութարանությունը սեփական հետազոտության համար ելակետ դարձնելը որոշակի զուգահեռականություն է ստեղծում Դերիդայի և Յայդեգերի միջև՝ հանգամանք, որը ֆրանսիացի մտածողը, չնայած Յայդեգերի հետ իր մշտական (բացորոշ կամ ծածկյալ) վեճ ու կռվին, երբեք կասկածի տակ չի դրել, համարելով, որ ինքն էլ, Յայդեգերի հանգույն, աշխատում է վերառել արևմտյան մետաֆիզիկան՝ այն տարրերությամբ, որ անում է դա այլ միջոցներով, և որ այդ ճանապարհին ավելի հեռու է գնացել, քան գերմանացի դասականը:

Հուսեռյի հետ իր բանավեճը Դերիդան սկսում է նրանից, որ մատնացույց է անում բներևութարանության «սկզբունքների սկզբունքի»՝ «նախասկզբնական հայեցողության» թեզի մետաֆիզիկական բնույթը: Խոսքը «իմաստի»՝ հայեցողության մեջ տրված «կենդանի մերկայության» մասին է<sup>3</sup> կամ «տրանսցենդենտալ կյանքի ինքնաներկայության», որը Դերիդան համարում է «իդեալականության ծայրագույն ծև»<sup>4</sup>: Այս առումով Հուսեռյի «լոգոցենտրիկ»՝ բանականակենտրոն<sup>5</sup> ուսմունքը հանդես է գալիս որպես իդեալիստական մետաֆիզիկայի դասական նմուշ:

Թե ինչպես է Յայդեգերը փորձել հաղթահարել Հուսեռյի իդեալիզմը, տեսյակ ենք սույն երկասիրության համապատասխան բաժնից<sup>6</sup>: Անմիջական մերկայությունը, որը նրա հղացքում փոխանցվել է Dasein-ին («Ներ-կայությանը»), վերահմաստավորվել է որպես «արքունություն», իսկ գիտակցության (իդեալականի) և տարածաժամանակային իրականության հակադրությունը մի կողմ է դրվել, փոխարինվելով

<sup>2</sup> Նշված գործերը հրապարակվել են մինչնույն՝ 1967 թվին՝ *La Voix et le phénomène*, 1967, Presses universitaires de France; *L'Écriture et la différence*, 1967, Seuil; De la grammaticalologie, 1967, Les Éditions de Minuit.

<sup>3</sup> Այս և հետագա հղումները ըստ՝ J. Derrida, *Die Stimme und Phänomen*, Suhrkamp, Ffm., 2003, էջ 11:

<sup>4</sup> Տե՛ս մոյս տեղում, էջ 13:

<sup>5</sup> Չեմ գրում «տրանսցենդենտրոն», քանի որ խոսքն այստեղ ոչ թե մտածողության կամնմերի՝ լոգիկայի մասին է, այլ՝ «լոգոսի», հայերեն՝ «Բանի» կամ «բանականության»:

<sup>6</sup> Տե՛ս՝ Յայդեգերի բաժնի «Անձնավորությունը որպես ինտենցիոնալ գոյ» հատվածը, էջ 162-164:

«գոյություն» – «Ներ-կայություն» գույգով: Գոյության հանգամանքը, ըստ Յայդեգերի, սկզբունքորեն տարրերվում է ողջ գոյավորից: Փիլիսոփայի խնդիրը դա գիտակցելու է և գոյության իմաստին հետամուտ լինելը: Մետաֆիզիկան Յայդեգերը բնորոշել է որպես մտածելակերպ (նաև՝ կենսակերպ), որում մոռացության է տրվել «գոյի» և «գոյության» գոյարանական տարրերությունը:

Դերիդան գնահատում է Յայդեգերի արմատական քայլը, նկատի ու նենալով, որ նրա հղացրում «գոյությանը»՝ ի հակադրություն այնպիսի մետաֆիզիկակական էությունների, ինչպիսիք են «կյանքը» կամ «ոգին», ամնիջական ներկայություն չի վերագրվում: Սակայն նա գտնում է, որ նույնիսկ դուրս գալով մետաֆիզիկայի սահմաններից, Յայդեգերը չի կարողացել լիովին ազատվել մետաֆիզիկայից, քանի որ առաջնություն է տվել «գոյությանը» առանձին գոյերի նկատմանը<sup>7</sup> և շարունակել է կենտրոնացած մնալ «գոյության իմաստի», հետևաբար՝ հերմենևտիկայի վրա<sup>8</sup>: Քերականարանության մեջ Դերիդան արձանագրել է.

**Ծշմարտության բոլոր մետաֆիզիկական բնորոշումները, նույնիսկ նրանք, որոնց մասին Յայդեգերը հիշեցնում է, դուրս գալով օմբո-թեոլոգիայի սահմաններից, ...անբաժանելի են լոգոսի ատյանից<sup>9</sup>:**

Մետաֆիզիկայի վերջնական հաղթահարման հնարավորությունը Դերիդան կապում է դրա բովանդակության նշանաբանական վերահիմաստավորման հետ:

Կասկածի տակ է դրվում մետաֆիզիկայի հիմնարար պատկերացումն այն մասին, որ խոսքն առաջնային է գրի համեմատ: Զայն և թներևույթում Դերիդան ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Յուսեռլը, որը գիտակցության հայեցող ուսումնասիրության սկզբունքորեն նոր, հեղափոխական մեթոդներ է մշակել, բացորոշ չի արծարծել այն լեզվական միջոցների հարցը, որոնց միջոցով արտահայտվում է հայվող իդեալական բովանդակությունը: Արդյունքն այն է, որ ավանդական մետաֆիզիկայի լեզուն առանց արմատական ընդհա-

<sup>7</sup> Տե՛ս H. Kerber, *Zum Begriff der Differenz bei Hegel, Derrida und Deleuze*. Առցանց <http://web.fu-berlin.de/postmoderne-psych/colloquium/kerber.htm>

<sup>8</sup> Տե՛ս H. Kimmerle, *Philosophie der Differenz*, Königshausen & Neumann, Würzburg, 2000, էջ 150:

<sup>9</sup> J. Derrida, *Grammatologie*, Suhrkamp, Ffm., 1983, S. 24.

տումների և հակասությունների համատեղվել է բներսութաբանության լեզվի հետ<sup>10</sup>: Եթե Յուտերը, այնուամենայիշվ, կանտյան տրանսցենդենտալիզմի ոգով հարց է դրել «քերականականի գուտ տրամաբանական իմաստի» մասին, նա առավելությունը տվել է կենդանի խոսքի<sup>11</sup>: Այսինքն՝ կյանքի մետաֆիզիկան ենթադրում է, որ «կենդանի ներկայության» հոգևորությունը հնարավոր է արտահայտել մարդկային շնչի հոգևորության՝ *phone*-ի միջոցով<sup>12</sup>: Այդպիսով՝ «հնչյունակենտրոնությունը»՝ ֆոնցենտրիզմը, ներկայանում է որպես լոգոցենտրիզմի բնական հետևանք:

Իրականում կյանքի անմիջական տրվածությունը պատրանք է: Կենդանի խոսքը որպես որոշակի բովանդակություն արտահայտելու միջոց առավելություն չունի գրավոր տեքստի նկատմամբ: Դերիդան մերժում է խոսելու՝ լեզվական համակարգի նկատմամբ առաջնայնության մասին ավանդական պատկերացումը՝ առաջին տեղում դնելով գիրը: Գրին, ըստ մտածողի, հատուկ է ռացիոնալության նոր որակ, որը «այլև չի սերում լոգոսից: Ավելի շուտ նա սկսում է կազմագերծումից ...բոլոր այն նշանակությունների, որոնք ծագում են լոգոսի ակունքից»<sup>13</sup>:

Վերանայվում է նաև նշանի՝ նշանակվողը փոխարինելու (խորիդանշելու) գործառույթը: Դերիդան նատնանշում է, որ նշանային համակարգերում ծագող իմաստները միանշանակ կապված չեն որոշակի «կրող-նշանների» հետ<sup>14</sup>, այլ առաջանում են համակարգը ծևավորող նիշերի (marque) միջև եղած տարրերություններից:

Ինքնին վերցրած, այդ թեզը սկզբունքային նորություն չէ, այլ հանդես է գալիս որպես Ֆերիդինանդ դը Սոյսուրի լեզվաբանական տեսության հետագա զարգացում: Նորությունն այն հիմնարար դերն է, որը

<sup>10</sup> Տե՛ս J. Derrida, *Die Stimme und Phänomen*, էջ 15:

<sup>11</sup> Յուտերը համարել է, որ «իդեալական առարկաները» պետք է արտահայտվեն այնպիսի մեղիումի միջոցով, որը միաժամանակ ընդգրկում է ինչպես օրյեկտի մերկայությունը, այնպես էլ այն նկատի ունեցող տրամսցեմութենալ գիտակցության իմբռամերկայությունը: Դա հնարավոր չէ իրականացնել որևէ «ներաշխարհային», էմպիկի միջնորդի միջոցով: Տրամսցեմութալ բներսութաբանականությունը կարող է արտահայտել միայն ձայնը, որն ընկալում է ինքն իրեն և հետք չի բողոքում արտաքին աշխարհու: Տե՛ս J. Derrida, *Die Stimme und Phänomen*, էջ 106 և հաջ; հմտ.՝ H. K. Kimmerle, *Derrida zu Einführung*, SOAK im Junius Verlag, Hamburg, 2000, էջ 24:

<sup>12</sup> Տե՛ս J. Derrida, *Die Stimme und Phänomen*, էջ 18:

<sup>13</sup> J. Derrida, *Grammatologie*, S. 23.

<sup>14</sup> Ինչպես հիշում ենք, այդպիսի տեսակետ պաշտպանողների թվում էր Յայդեգերը, որը նշանի հիմնական գործառույթը համարում էր «հղումը», տե՛ս Յայդեգերի բաժնի «Ներկայությունն աշխարհում» հատվածը, էջ 206:

Դերիդան վերագրում է «տարբերությանը», օգտվելով այն նշանակող «différence» բառի բազմանշանակությունից: Վկայակոչելով դրա հիմքում ընկած «différer» բայի երկու իմաստները՝ «տարբերել» և «հետաձգել», Դերիդան գործածության մեջ է դնում մի նոր եզր՝ «ու»-ի փոխարեն «ա»-ով գրվող «différance»-ը, որն օգնում է ի ցույց դնել վերը նշված երկու՝ «տարածական» և «ժամանակային» իմաստների փոխառկայությանը<sup>15</sup>:

*Տարածական* առումով բառը նեկարանվում է որպես «տարբերություն» և վերաբերվում է լեզվական համակարգը կազմող նշերի դիրքային տարբերություններին:

*Ժամանակային* առումով «différance»-ը ներկայանում է որպես «հետաձգում»: Եթե նշանակվող առարկան առկա չէ, բացատրում է Դերիդան, մենք նշաններ ենք օգտագործում: Դրանց շրջանառությունը հետաձգում է այն պահը, եթե մենք կարող էինք հանդիպել առարկային: Նշանները, փաստորեն, այլ բան չեն, քան «հետաձգված ներկայություն»<sup>16</sup>:

Դա նշանակում է, որ լեզվական համատեքստի մեջ ընկալվող իմաստների անվերջ հարափոխը «հավերժորեն հետաձգում է» տեքստի «զուտ իմաստի» հետ անմիջական հանդիպումը: Դրանով իսկ բացառվում է որևէ կապակցված լեզվական ամբողջության կենտրոնական՝ արտոնյալ, իմաստային կորիգի մասին հաղողադրյան հնարավորությունը:

Դժվար չէ համոզվել, որ «différance»-ի ժամանակային և տարածական մեկնաբանությունների տարբերակումը, փաստորեն, նշանաբանական մակարդակով վերարտադրում է հայեթգերյան «գոյաբանական տարբերության» կառուցվածքը: Ինչպես «գոյությունը» նկատի ունի բոլոր գոյերին վերաբերող գոյության հանգամանքը, բայց ուղղակի իմաստով «գոյություն չունի» ինքնին, այնպես էլ «différance»-ը նկատի ունի, որ բոլոր իմաստները ներկայանում են տարբերությունների մշտական հերթափոխի միջոցով, բայց ինքը որևէ կոնկրետ տարբերակիչ հատկանիշ չի ներկայացնում, միայն արձանագրելով տարբերու-

<sup>15</sup> Այն, որ բանավոր խոսքում երկու միակերպ արտասանվող բառերը զանազանելու համար անհրաժեշտ է հիշատակել գրելածնը, Դերիդան դիտում է որպես ևս մեկ փաստարկ հօգուտ զրի առաջնությամ խորի մկանմամբ:

<sup>16</sup> Sie u. J. Derrida, “Die différance”, in: *Postmoderne und Dekonstruktion. Texte französischer Philosophen der Gegenwart* (հsgb. v. P. Engelmann), Reclam, Stuttgart, 1990, էջ 85:

թյունից տարբերություն շարժվելու սկզբունքային հնարավորությունը, նաև՝ անխուսափելիությունը<sup>17</sup>:

Տեմպորալացված տարբերությունը, որն այլևս մտածելի չէ որպես առկայի հորիզոն, նշում է Դերիդան, սերտ կապի մեջ է տեմպորալացման՝ որպես գոյության հարցի տրամացենդենտալ հորիզոնի հետ, որի մասին Հայդեգերը Գոյություն և ժամանակում ասել է, որ այն պետք է ազատագրվի առկայի կամ «հիմա»-ի ավանդական և մետաֆիզիկական տիրապետությունից<sup>18</sup>:

Մյուս կողմից Դերիդան վստահ է, որ «différance»-ը որոշակի առավելություն ունի «գոյության» նկատմամբ.

Քանի որ գոյությունը միշտ միայն «իմաստ» է ունեցել, միշտ մտածել կամ խոսվել է որպես գոյավորի մեջ ծածկյալ, *différance*-ը որոշակի և խիստ առանձնահատուկ կերպով «մախսական է» գոյաբանական տարբերությունից կամ գոյության ծշմարտությունից<sup>19</sup>:

«Différance»-ը, ըստ Դերիդայի, այլ բան չէ, քան «հետքերի խաղ», ընդ որում՝ այնպիսի հետքերի, որոնք այլևս չեն պատկանում գոյության հորիզոնին: Իր խաղի միջոցով «différance»-ը կրում և ժողովում է գոյության իմաստը, բայց ինքը, ի տարբերություն գոյության, զուրկ է որևէ իմաստից<sup>20</sup>:

Եթե Հայդեգերը խոսում է գոյության և գոյավորի տարբերության մոռացության մասին, նա նշում է, որ այդ տարբերության հետքն իսկ անհետացել է: Դերիդայի «տարբերության» հանգամանքն այլ է:

Քանի որ հետքը ներկայություն չէ, այլ ներկայության սիմուլակիր, որը տարրալուծվում է, հետաձգվում է, վերահղվում է, ըստ Էության տեղի չի ունենում, ջնջվելը պատկանում է նրա կառուցվածքին<sup>21</sup>:

<sup>17</sup> Ուշագրավ է, որ Հայդեգերն էլ գոյաբանական տարբերությունը նշանակելու համար օգտագործել է միևնույն հնչյունների խաղը՝ գոյական մակարդակը նշանակելով «e»-ով՝ existentiell, իսկ գոյաբանականը՝ «a»-ով՝ existential:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 86-87:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 104:

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 107:

Այսինքն՝ հետքի ջնջվելը նույնպես հետք է<sup>22</sup>, իսկ դա իր հերթին նշանակում է, որ «différance»-ն անշրջանցելի է:

Կարևոր է արձանագրել, որ հրաժարումն ամբողջականությունից Ղերիդան չի ընկալել որպես կորուստ և այդ մասին արտահայտվել է միանշանակությամբ.

Դատվածի մասին միտքը՝ Նովալիսից մինչ նրա ժամանակակից ձևերը, դեռևս տոգորված է տոտալության համեմատ կարոտով: Այն, ինչ ես ամփանում եմ տարրերություն, դիսեմինացում, բաժանելիություն, բայտ էության հատվածական չէ: Դա ուրիշի, տարարնույթի նկատմամբ հարաբերության տարրակութում է՝ առանց հույսի, առանց տոտալացման ցանկությամբ<sup>23</sup>.

### **Սեռական տարրերություն, գոյարանական տարրերություն**

Նվաճված հղացքի տեսանկյունից Ղերիդան դիտարկել է նաև հայդեգերյան գույքի մյուս բաղկացուցիչը՝ «Dasein»-ը կամ «ներ-կայությունը»: Քննադատության թիրախն այստեղ էլ հայդեգերյան էքզիստենցիալի «համասեռ» բնույթն է, որն այս անգամ գնահատվում է նրա «սեռագրեկության» տեսակետից: Հարցը, որ Ղերիդային անհանգստացնում է, հետևյալն է. ինչո՞ւ Հայդեգերի փիլիսոփայական տեքստերում «սեռական տարրերությունը» չի դիտարկվել նույն մակարդակի վրա, ինչ «գոյարանական տարրերությունը», ինչո՞ւ գոյության իմաստի մասին հարցի համեմատ այն անտեսվել է այն աստիճան, որ կարծես խոսքը «ինչ-որ մի» տարրերության, փաստացիորեն արձանագրված գոյական պրեդիկատի մասին լիներ<sup>24</sup>: Ինչո՞ւ «մարդկային իրականությունը» (réalité humaine, ինչպես ֆրանսիացիք թարգմանել են «Dasein»-ը), որի «աշխարհում-լինելը» էքզիստենցիալ անալիտիկայի շրջանակներում նկարագրվել է այնպիսի եզրերի միջոցով, ինչպիսիք են «համագոյությունն ուրիշի հետ» կամ «հոգածությունը», որում կերպ չի առնչվել ցանկության և սեռականության հետ<sup>25</sup>: Չէ՞ որ «ներ-կայություն

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Մեջերվում է ըստ՝ K. Mai, M. Wetzel, “Derrida, Jacques”, in: B. Lutz (Hrsg.) *Metzler Philosophenlexikon*, Metzler, Stuttgart – Weimar, 2003, էջ 166:

<sup>24</sup> Տե՛ս J. Derrida, “Geschlecht. Sexuelle Differenz, ontologische Differenz”, in: ders., *Geschlecht (Heidegger)*, Passagen-Verl., Wien, 1988, էջ 11:

<sup>25</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 15:

նը» էապես մարմնական է, իսկ մարմնականությունը անքակտելի է սեռականությունից:

Որ հարցադրումն ինքնին լեզիտիմ է, գիտենք առնվազն մերկայության անալիտիկայի սարտրյան մեկնաբանությունից, որում երկու ազատությունների լարված փոխներգործումները մտածելի չեն առանց սեռականության միջնորդ ատաղձի<sup>26</sup>: Սակայն Դերիդայի հարցն այլ ուղղությամբ է տանում: Խնդիրը նորից դրվում է «différence»-ի երկու ըմբռնումների զանազանման տեսանկյունից: Դայդեգերյան «Dasein»-ի չեզորությունը<sup>27</sup>, ըստ Դերիդայի, չի խոսում երկու սեռերի առկայության փաստն անտեսելու մասին, դա ավելի շուտ լրիվության դրսւուրում է, որում ի սկզբանե պարունակվում է սեռական տարբերակվածության հնարավորությունը: Եթե որևէ բան այստեղ պատահական է մնում, դա իգականի և արականի դրւալ սինենան է, որն արտացոլում է մարդկային սեռականության փաստացին, բայց սկզբունքորեն չի բացառում սեռական տարբերակվածության այլ հնարավորություններ՝ հիմք տալով խոսելու սեռականության «ցրման» մասին<sup>28</sup>:

«Սեռական տարբերության» և «ցրման» գաղափարները անսպասելի կիրառություն են գտնում ծշմարտության մասին դիսկուրսում: «Նիշշեի ոճերին» նվիրված իր եսեում<sup>29</sup> Դերիդան վկայակոչում է վերջինիս ասույթը, որում «ծշմարտության ոչ ծշմարիտ լինելը» մերկայացվում է որպես կանացիություն: Այսինքն՝ ծշմարտությունը նույնքան անորսալի է, որքան կինը: Բայց կնոջ «անորսալիությունը», ըստ Նիշշեի, «խորության» նշան չէ.

Կմոջը խորմ են համարում – իմշու՝ - որովհետև երբեք չեմ հասնում նրա հատակին: Կինը նույնիսկ տափակ էլ չէ<sup>30</sup>:

Նշանայինն այս ասույթում «հատակի» հիշատակումն է: Դրամարդելով կնոջը համարել «նույնիսկ մակերեսային» («տափակ»՝ «flach»),

<sup>26</sup> Տե՛ս J.-P. Sartre, *Das Sein und das Nichts. Versuch einer phänomenologischen Ontologie*, Rowohlt, Reinbek bei Hamburg, 1997, էջ 633-719:

<sup>27</sup> Dasein-ը նաև քերականորեն չեզոք սեռին է պատկանում՝ *das Dasein*:

<sup>28</sup> Տե՛ս J. Derrida, “Geschlecht. Sexuelle Differenz, ontologische Differenz”, in: ders., *Geschlecht (Heidegger)*, էջ 43:

<sup>29</sup> Տե՛ս Ժ. Դերրիդա, “Шпоры. Стили Ницше”, в журн.: “Философские науки”, № 2, 1991:

<sup>30</sup> “Man hält das Weib für tief – warum? weil man nie bei ihm auf den Grund kommt. Das Weib ist noch nicht einmal flach”, նույն տեղում, էջ 133:

Նիցշեն, իսկ նրան հետևելով նաև Դերիդան, փաստորեն, արձանագրում են, որ կոնց պարագայում «խորը-մակերեսային» իմաստային գույզն ընդհանրապես կիրառելի չէ: Կոնց «հատակին» (Դերիդայի մեջքերած գերմաներեն տեքստում՝ «Grund», բառացի՝ «հիմք») հնարավոր չէ հասնել, որովհետև իգական ռազմավարությունը «հիմքի» կարոիք չունի: Այս կառուցված է հեռանկարների անվերջ փոխատեղան վրա, և նրա նպատակը ոչ թե ծշմարտության բացահայտումն է, այլ ենթարկվելով միջոցով տիրապետության հասնելը<sup>31</sup>: Այս ճանապարհով կինը քայլայում է ամեն մի ամրագրված առարկայական բովանդակություն, ի չիր դարձնելով արական տիրապետության հավակնությունը: Ընդ որում՝ կանացի գործելակերպը ոչ միայն տղանարդուն է զրկում ամուր հողից՝ դարձնում ան-հիմք, այլև իրեն՝ կմոջը:

«Հիմքի» հետ կապված այս խորիդածություններին նորից խառնվում է հայդեգերյան մոտիվը, կապված վերջինին՝ այդ հասկացության նկատմամբ ունեցած ամրիվալենտ վերաբերմունքի հետ<sup>32</sup>: Մի կողմից, Դայդեգերը կարսոր նշանակություն է տվել «հիմք»-ին, նրա եռթյունը կապելով «գոյաբանական տարրերության» հետ և վերջավոր մարդու «տրանսցենդենտ» բնույթի մեջ տեսել «ազատություն առ հիմք»<sup>33</sup>, մյուսից՝ ուշ գործերում, հենց ներ-կայության ազատության հանգամանքից և իր հակամետաֆիզիկական հանոգնունքներից ելնելով, սեփական մտածողությունը բնորոշել է որպես հիմք չունեցող՝ «ան-դունդ» մտածողություն<sup>34</sup>: Իր ուշ

<sup>31</sup> Այս կապակցությամբ Դերիդան վկայակոչում է Նիցշեի բառախաղը. «Նրամբ «ձևանում են», նույնին եղու տրվում են» (*sie "sich geben", selbst noch, wenn sie – sich geben"*): Տե՛ս և նոյն տեղում, էջ 129:

<sup>32</sup> Տե՛ս և, օրինակ, T. Wyrwicb, “Sein als Grund und Ab-Grund zugleich. Heideggers Ansatz zur Gründung einer positiven Ereignis-Philosophie”, in: XXII. Deutscher Kongress für Philosophie, 11.-15. September 2011, München, առցանց: [http://epub.ub.uni-muenchen.de/12583/1/Th\\_Wyrwicb-Sein\\_als\\_Grund\\_und\\_Ab-Grund\\_zugleich.pdf](http://epub.ub.uni-muenchen.de/12583/1/Th_Wyrwicb-Sein_als_Grund_und_Ab-Grund_zugleich.pdf):

<sup>33</sup> Տե՛ս և M. Heidegger, “Vom Wesen des Grundes”, in: GA, B, 9, Wegmarken, Klostermann, Ffm., 1976, էջ 123-176:

<sup>34</sup> Նման եղք առաջակերլով նկատի են ունեցել, որ հայերենում «հիմք» բառից կազմված ժխտական ածական՝ «ան-հիմք», անհարկի գորակցություններ է առաջանալու բոլորովին այլ իմաստային երանգ ունեցող «անհիմն» կամ «հիմնազուրկ» բառերի հետ, իսկ գոյականը՝ «հիմք չունեցող», ընդհանրապես չի արտահայտվում մեկ բառով, այնինչ Դայդեգերի օգտագործած «Ab-grund» և «ab-geündig» արտահայտությունները անհամենատ ուժեղ հորգական ազդեցություն են գործում: Սակայն խնդիրը հեշտությամբ լուծվում է, եթե նկատի ենք ունենում, որ գերմաներեն «Abgrund»-ի ուղիղ բարգնաներուն հայերեն «անդւնդ»-ն է, որը բայ Անդաշան, կազմված է «ան» բացասականով «դունդ» («հատակ») բայից և լիովին համընկնում է մի շարք լեզուների նոյսինաստ բառերի, այդ թվում՝ ուղևերն «ծըչ-ձհա»-ի հետ: (Տե՛ս և Յ. Աճառեան, Դայդեգեր Արմատական Բառարան, Երևան, 1926, հ. 1, էջ 190): Սրա ածականը («անդնդային»-ից կամ նման բաներից խուսափելու համար) կարող է լինել գծիկով

գլուխգործոցում, *Փիլիսոփայության ներդրումներում Յայդեգերն «անդունդը»* սահմանել է որպես «հիմքի <դրւնդի> նախասկզբնական էում» (ursprüngliche Wesung des Grundes)<sup>35</sup>: Անդունդը նախորդում է հիմքին, որպես վերջինիս «բացա-կայում» (Ausbleiben), սակայն հիմքի ծածկյալ լինելը «հրաժարում» չէ: Այն բացության է բերում հիմքը այնպիսի մի դատարկության մեջ, որում տեղի է ունենում նախասկզբնական «լուսարացը» (Lichtung): «Ան-դրւնդը որպես հիմքի բացա-կայում... բացության առաջին լուսանցքն է որպես «դատարկություն»»<sup>36</sup>:

Դերիդայի հղացքում հայդեգերյան «ան-դրւնդ»-ը՝ որպես հիմքին նախորդող նախասկզբնական բացություն, կերպափոխվում է կնոջը հատուկ խուսափուկ ռազմավարության, որի «հաղթանակը» տղամարդու նկատմամբ արտահայտվում է նրանում, որ կոշտ ուղղորդված արականության խորհրդանիշ «ֆալլոցներիզմ» նույնանում է «ֆալլոգոցներիզմ»ի հետ, որը կապվում է արականության կյանձնան, հետևաբար՝ ցրման (դիսեմինացման) և համատարած տարբերակումների՝ «différence»-ի տիրապետության հետ<sup>37</sup>: «Յաղթանակ»-ը այստեղ չակերտների մեջ է վերցված, քանի որ Դերիդայի նկատի ունեցածն իրականում երկու սկզբունքների բախումը չէ, այլ տարբերությունների անորսալի խաղը, որի ընթացքում արականը ներառնվում է իգականի անվերջ բազմազանության մեջ:

«Եթե ոճը տղամարդ լիներ, ապա կիմը կլիմեր գիրը», - ենթադրում է Դերիդան<sup>38</sup>: Սակայն Նիցշեի մասին էսանում խոսքը ոչ թե ոճի, այլ ոճերի մասին է: Դրանց բազմապատկումը քայլայում է կնոջ և տղամարդու հակադրությունը, քանի որ բազմապատկումը ինքնին իգական է: Խնդիրն իր մանրամասներով ուսումնասիրած Յ. Քիմերլեն այստեղ գուգահեռ է տեսնում Լյուս Իրիգարեյի այն գաղափարի հետ, որ իգականությունը մեկ առանձին սեռ չէ, որ հակադրված է արականին որպես *իր-ուրիշը*, այլ «սեռ է, որ մեկը չէ», հետևաբար պետք է մտածվի

«ան-դրւնդ»-ը, և այդ դեպքում «ան-դրւնդ մտածողությունը» յիշվին կարտահայտեր Յայդեգերի «հիմք չունեցող մտածողության» որբան սրափ, նույնքան էլ արկածախնդիր՝ «անդրւնդի վրայով շարժվող» բնույթը:

<sup>35</sup> M. Heidegger, *Beiträge zur Philosophie (vom Ereignis)*, GA, B. 65, Klostermann, Ffm., 2003, S. 379.

<sup>36</sup> Սույն տեղում, էջ 380:

<sup>37</sup> Տես և Ժ. Դերրida, “Шпоры. Стили Ницше”, в журн.: “Философские науки”, № 2, էջ 137-138, ինչպես նաև՝ H. Kimmerle, *Derrida zu Einführung*, էջ 62-63:

<sup>38</sup> Տես և Ժ. Դերրida, “Шпоры. Стили Ницше”, էջ 125:

որպես բազմազանություն: Դրանով հակադրությունը սեռերի միջև վերավում է<sup>39</sup>:

Ասվածը բավական է համոզվելու համար, որ Դերիդայի հղացքի սահմաններում «սեռական տարրերությունը» խկապես չի կարող դիտվել որպես պատահական «ինչ-որ» տարրերություն կամ գնահատվել զուտ ֆեմինիստական հետաքրքրությունների տեսակետից<sup>40</sup>: Այն վճռականորեն հատում է սեռերի ֆիզիոլոգիական կամ հոգեբանական հատկանիշների հետ կապված սահմանը և, փաստորեն, նույնանում է փիլիսոփայական մեթոդի հետ: Փոխ առնելով Դերիդայի մետաֆորիկան՝ կարելի կլիներ ասել, որ նրա զարգացրած «différance»-ի հղացքը եապես իգական է: Եվ գուցե պատահական չէ կազմաքանդան վարաբետի ցանկությունը՝ կարողանալ գրել Նիցշեի կամ, որ նույն է՝ կնոջ նման:

Այսպիսին է ժակ Դերիդայի՝ լոգոցենտրիզմի և ֆոնոցենտրիզմի դեմ պայքարում ծևավորված «տարրերության» հղացքը, որի բազմաթիվ ածանցյալներից է նաև նրա հանրահայտ «կազմաքանդան» մեթոդը<sup>41</sup>: Սույն դրվագում ներկայացվածից երևում է, որ զուտ տեսական թվացող մտային կառույցների այդ ցանցը չի մնացել ակադեմիական փիլիսոփայության շրջանակներում և առաջ է բերել հետևողություններ, որոնք անմիջականորեն առնչվում են հետարդիական աշխարհի հասարակական և քաղաքական զարգացումներին:

Ստորև քննության կառնվեն այդ առնչություններից մի քանիսը:

### Դավերժ հետաձգումը և «պատմության կամեցումը»

«Դավերժ հետաձգման» զաղափարը՝ որքան էլ ժամանակակից, հիմք է տվել վերլուծողներին արձանագրելու Դերիդայի մերձավորու-

<sup>39</sup> Տե՛ս H. Kimmerle, *Derrida zu Einführung*, էջ 64: Եթե այստեղ կարելի է հաղթանակի մասին խոսել, ապա Նիցշեին «կազմաքանդելու» իմաստով – վերջինիս՝ կանաց դեմ ուղղված ասույթների վերլուծության միջոցով Դերիդան հիմնավորում է նիցշեական «քազմապատիկ ոժի» իզականությունը:

<sup>40</sup> Թեև բնական է, որ այդ հղացքը հաճախ է դիտարկվում նաև ֆեմինիստական փիլիսոփայության տեսակետից: E. Mortensen, *Touching Thought: Ontology and Sexual Difference*, Lexington Books, 2003, p. 73-84.

<sup>41</sup> Ստորև մենք խոսենու ենք դրա մասին: Առայժմ սահմանափակվենք նկատելով, որ «մեթոդ» բառն այս համատեքսուում պետք է ընալին վերապահումով՝ Դերիդան, որը դեմ է եղել որևէ համակարգված զնթացակարգի, առիթը բաց չի բողել հիշեցնելու, որ կազմաքանդումը մեթոդ չէ:

թյունը երրայական «Կաբալայի» հոգևոր ավանդույթին: Խոսքն այստեղ երրայական Սուրբ գրքի կորիզը կազմող Ղնգամատյանի՝ Թորայի՝ դարերի ընթացքում առաջացած գրավոր և բանավոր մեկնաբանությունների և վերամեկնաբանությունների շղթայի մասին է, որն իր մշտապես նորոգվող ամբողջության մեջ մարմնավորում է իրենքների ազգային և հոգևոր ինքնությունը: Սուրբ գրքի մեկնությունը չի կարող ավարտին հասցել՝ այն անսպառ է նույնքան, որքան Աստված ինքը:

Ղետարդիականության ակնառու ջատագովի առնչությունն այդ իհնավորց ավանդությանը տպավորիչ ձևով հավաստվում է Ղերիդայի՝ Էմանուել Լեվինասից փոխ առաջ հայտնի արտահայտությամբ.

*Թորամ Աստծուց ավելի սիրելը նշանակում է պաշտպանություն Սրբազնի հետ անմիջական կոնտակտի խելագարությունից<sup>42</sup>:*

Դժվար չէ նկատել, որ Սուրբ գրքի մեկնությունն Աստվածայինի հետ անմիջական հանդիպումից գերադասող այս դրույթն անմիջական կապի մեջ է երրայական հոգևոր ավանդությի մեկ այլ հայտնի բաղկացուցիչ՝ պատկերամարտության պահանջի հետ:

Նույն համատեքստին է վերաբերում նաև Ղերիդայի միտքը մարդկային պատմությանը հատուկ երկու իհմնարար միտումները մարմնավորող նշանային ֆիգուրների՝ Ողիսակի և Ագասթերի՝ թափառական հրեայի մասին: Առաջինը նշանավորում է մարդու մշտական զգությունը՝ վերադառնալ տուն, այսինքն՝ գտնել «զուտ» և վերջնական իմաստը, երկրորդը կապվում է անվերադարձ թափառման, ոչ միայն երբեք տուն չերադառնալու, այլ նաև տուն չունենալու դիցույթի հետ:

Ղերիդայի ստեղծագործության աղերսները երրայական-րաբիական ավանդությանը հիմք են տպել տեղակայելու նրան միևնույն շարքում Վալտեր Բենյամինի և Գերսոն Շոլեմի հետ՝ նտածողներ, որոնց երկերում, ըստ Յուրգեն Շարերնասի գնահատականի, միավորված են միստիկան և լուսավորականությունը<sup>43</sup>:

<sup>42</sup> Ж. Деррида, “Насилие и метафизика. Очерк мысли Эммануэля Левинаса”, его же, *Письмо и различие*, Акад. проект, М., 2000, с. 157.

<sup>43</sup> J. Habermas, *Der philosophische Diskurs der Moderne*, Suhrkamp, Ffm., 1988, S. 218. Ավելորդ չէ նշել, որ ինքը՝ Ղերիդան, ժխտել է իր մերձավորությունը երրայական միստիկայի ավանդույթին: 1972-ի հարցազրոյցներից մեկում նա նկատել է. «Ոչինչ ավելի թիզ չէ հարաբերված երրայական միստիկային, քան հետք կամ difference-ը նուանվու» (մեջբերվում է ըստ՝ K. Mai, M. Wetzel, “Derrida, Jacques”, in: B. Lutz (Hrsg.) *Metzler Philosophenlexikon*, Metzler, Stuttgart – Weimar, 2003,էջ 168):

Այս հարևանությունն առավել ուշադիր է դարձնում գուգորդություն-ների նկատմամբ և նկատել է տալիս, թե ինչպես է Դերիդայի «հավերժ հետաձգումը»՝ «différence a l'infini»-ն, կամրջվում Շոլեմի կողմից օգտագործվող նույնանուն հասկացության հետ: Նմանությունն աչքի է զարնում հատկապես երկու հեղինակների տեքստերի օտարալեզու տարբերակները համեմատելիս: Դերիդայի «différence a l'infini» եզրի գերմաներեն բարգմանությունը բառացիորեն համընկնում է Շոլեմի երկերում օգտագործվող «ewiger Aufschub» արտահայտության հետ:

Իհարկե, ելակետային մշակութային և սոցիալական համատեքստերը տարբեր են: Յրեական կրոնական և ազգային ավանդույթի անխոնց հետազոտող և նվիրյալ Գերսոն Շոլեմը<sup>44</sup> «հավերժական հետաձգման» վերաբերյալ իր թեզը զարգացրել է անցյալ դարի քսանական թվականներին՝ կապելով այն իրեականության մեջ տարածված «մեսիականության» գաղափարի հետ: «Հավերժ հետաձգումը», որն ըստ Շոլեմի, սկիզբ է առել դեռևս Երուսաղեմի տաճարի ավերման բիբլիական ժամանակներից, կազմորոշ դեր ունի իրեականության կյանքում: Ազգային պետականությունը կորցրած և աշխարհով մեկ ցրված այդ ժողովուրդն իր փրկությունը տեսնում է ապագա փրկչի՝ մեսիայի գալստյան մեջ: Բայց գալիք փրկչին անընդհատ սպասելով, իրեա ժողովուրդը «հավերժորեն հետաձգել» է իր «իսկական գոյությունը» և դուրս մնացել պատմությունից, այսինքն՝ այսրելով փոխարինել է գուտ գոյատևելով<sup>45</sup>:

Դեշտ է համոզվել, որ ինչպես Շոլեմը, այնպես էլ Դերիդան արձանագրում են հոգևորի հետ անմիջական կոնտակտի անհնարինությունը: Առաջին դեպքում միշտ բացակա է մեսիան՝ գալիք փրկիչը, երկրորդում անհասանելի է «նուեման»՝ իր վավերականությունը լեզվական նշաններից դուրս հավաստող մաքուր իմաստը: Սրանում է երկու մտածողների նմանությունը: Բայց տարբերությունը նույնքան ակնհայտ է:

Գերսոն Շոլեմը զգուշացնում է՝ փրկչին հավերժորեն սպասելով կոնսերվացնում է ազգը, այն դարձնում է բովանդակագործ, «ոչ-պատմա-

<sup>44</sup> 1919-ին երիտասարդ Շոլեմը գրել է մորը. «Ի՞չ կդառնա Գերիարդ Շոլեմը: Ուրեմն: Նախ նա կդառնա Գերսոն Շոլեմ: Է՞՞ի: Յետո կդառնա փիլիսոփայության դոկտոր (հուսանք): Յետո կդառնա իրեական փիլիսոփա: Յետո՝ իրեշտակ յոթերորդ երկմբում»: P. Maser, *Scholem, Gershom G. (d.i. Gerhard)*, in: *Metzler Philosophenlexikon*, S. 651.

<sup>45</sup> G. Scholem, *Über einige Begriffe des Judentums*, Ffm., 1980, S. 166. Տես ս նաև F. Niewöhner, *Scholems Sabbatei Zwi – Mystik und Moderne*, Hessische Handelsvertriebung, Wiesbaden, 1992, էջ 12.

կան»<sup>46</sup>: Յետևաբար, մեսիանիզմը չի կարող քաղաքական նախագիծ լինել: Յրեական մեսիականությանը Շոլեմը հակադրել է իրական իրեական պետության կառուցման սիոնիստական մոդելը, բացորոշ խոսելով այս մեծ վտանգի մասին, որ կարող է առաջ գալ մեսիանիզմի կրոնական և սիոնիզմի քաղաքական հղացքների գործնական նույնացումից:

Ժակ Դերիդան, դրան հակառակ, համարում է, որ «մշտական հետաձգումը», այսինքն՝ անվերջանալի ընթացքը տարբերությունից տարբերություն, հետարդիական մարդու գոյության միակ հնարավոր կերպն է:

Արձանագրենք, որ սա՝ էլ մեսիանիզմի դեմ պայքարելու ձև է: Յետարդիական հասարակությունը նորանոր մարգարենություններով զարմացնելու փորձերը Դերիդան անպատճե է համարում: Իր «Ապոկալիպսիս չկա՝ գոնե այժմ» հայտնի խտացման մեջ<sup>47</sup> մտածողը վճռականորեն հանդես է գալիս բոլոր նրանց դեմ, ովքեր անպատճախանատու ծնով խոսում են հայտնության անունից, անտեսել տալով փաստական կյանքի նշանակերպ, լեզվականորեն արձանագրված բազմազանությունը:

Բայց խնդիրը, միևնույն է, մնում է առկախված: Մեսիանիզմի դեմ պայքարն ինքնին բավարար չէ պատմություն վերադառնալու համար, եթե այդ ծնով նվաճված «պատմականությունը» համատեղվում է *հավերժ հետաձգման* հարթաշավի հետ: Յնարավո՞ր է արդյոք պատմական լինել, եթե վճռական դիրքորոշման հանձնառությունը մշտապես հետաձգվում է:

Խնդիրը խորությամբ արծարծելու համար անհրաժեշտ է անդրադառնալ Դերիդայի օգտագործած մեկ այլ հասկացության՝ «ապոկալիպսիս» եզրի բազմանշանակ բովանդակությանը: Այդ բառի երկու հիմնական ինաստեղը փիլիսոփան բացորոշում է իր վերը հիշատակված աշխատության մեջ:

Ապոկալիպսիսն այստեղ նախ բնորոշվում է որպես *հայտնություն*, պայմանատես բացահայտում, որին հավակնել կարող է միայն նա, ով հասու է անմիջական գիտելիքին: Բացի այդ, արձանագրվում է, որ ա-

<sup>46</sup> Հավերժ հետաձգման հյուկական տարբերակի մասին ես խոսել եմ իմ «Homo Trickster»-ում («Ուուրիկն», թիվ 2 (7), 2004), մատնաշելով պատմությունից դուրս մնալու այն վտանգը, որ առաջ է գալիս «ապրելը» «գոյատևման կովով» փոխարինելու դեպքում:

<sup>47</sup> J. Derrida, *Apokalypse*, Graz; Wien: Böhlau: Passagen, 1985.

պոկալիպտիկ հայտնությունը գիտելիք է «Վերջի» մասին, այսինքն պնդում, որ կենսականորեն կարևոր ինչ-որ բան շուտով հասնելու է իր ավարտին: Միայն այս երկու տեսանկյունների միաձուլումն է հանգեցնում մարզարեական տագնապ հնչեցնելու՝ աշարժիզմի այն յուրահատուկ ձևին, որ կարող է բնութագրվել որպես արդիականության մեսիականություն:

Բայց արդյո՞ք այդ երկու տեսակետներն իսկապես այդպես անհուսալիորեն միաձուլված են: Արդյո՞ք ճիշտ պիտի լիներ Մ. Ֆուկոյի կամ Ն. Լուինանի կարգի հեղինակավոր գիտնականների սրափ և ռացիոնալ կշռադատված վերլուծությունները, որ այս կամ այն հասարակական ֆենոմենի վերջն են կանխատեսում, որպես մեր ժամանակի ալարմիզմ և մեսիականություն ախտորոշել: Ի՞նչո՞ւ մարդ իրավունք չունի իրազեկելու որոշակի հասարակական հարացույցների կերպավոխման և սպասվող վերջի մասին, եթե նրա հետազոտությունները դրա համար բավականաչափ հիմքեր են տալիս: Ի՞նչ է նշանակում վերջի մասին խոսող խոսքի վրա դրված այս արգելքը: Եվ վերջապես.

Ի՞նչ տեսք պետք է ունենա մի աշխարհ, որում ոչ մի բան ավարտվելու իրավունք չունի:

Դենց այս հարցադրումն է, որ Դերիդան անպատասխան է թողնում: Կազմաքանդման վարպետը, որ ապոկալիպտիկ դիսկուրսի ապամոռականացումն իր նպատակն էր հայտարարել, հարց է տալիս անդրվելիորեն.

...Ի՞նչի՞ են ծգուում և ի՞նչ նպատակով բոլոր նրանք, որ այս կամ այն բանի՝ մարդու կամ սուբյեկտի գիտակցության կամ պատմության, Արևմուտքի կամ գրականության վերջն են ավետում: ...Ի՞նչ են անում նրանք: ...Որ ո՞ւմ զայթակղեն կամ ո՞ւմ իրենց ենթարկեն, ահարեկեն կամ ուրախացնեմ<sup>48</sup>:

Այս համար հարցումը, որն ավելի հարցաքննություն է հիշեցնում, իր բնույթով ոչ այնքան փիլիսոփայական է, որքան քաղաքական: Այն նման է ոստիկանական մի գեկույցի, որի հեղինակը հասարակական կարգը խախտող «քաղաքական անկոռեկտության» դեպք է հայտնա-

<sup>48</sup> J. Derrida, “Von einem neuerdings erhobenen apokalptischen Ton in der Philosophie”, in: ders., *Apokalypse*, S. 60.

բերել և տագնապի զանգ է հնչեցնում, պահանջելով զսպել խառնակիչ-ներին: Որ խոսքն այստեղ հենց կարգի պաշտպանության մասին է, հավաստում է ինքը՝ Դերիդան, իր հետևյալ գնահատականով.

Դեմք միայն իր սոռնի շնորհիվ... այն (ապոկալիպտիկ դիսկուրսը - Ա. Ռ.) ի վիճակի է խարխլել իշխող դաշինքը կամ իշխող համաձայնությունը, քանի որ խճում է սահմանումները: Դա մարտահրավեր է հաստատված կարգի նկատմամբ...<sup>49</sup>:

Կեցվածքը ծանոթ է. մի կողմից այն հիշեցնում է աջ հեգելականների դիրքորոշումը «բանականի և իրական» մասին հայտնի բանավեճում, մյուսից՝ աղերսվում թեոդոր Աղործոյի դառն իրոնիայով արձանագրված ծևակերպմանը. «Չեզ դուր չի՞ գալիս մեր աշխարհը: Փնտրեք ձեզ համար մեկ ուրիշը»: Այն զարմանալի էլ չէր լինի, եթե մեկ այլ հեղինակի պատկանելիս լիներ: Բայց ինչո՞ւ հենց Դերիդան: Ինչո՞ւ գերքնադատական այս մտածողը, որ միշտ հայտնի է եղել ամեն մի կայուն օրենքի, սկզբունքի դեմ իր կասկածամտությամբ և փորձել է խուսափել դրանց պարտադրողականությունից այն աստիճան, որ բանականությունը՝ լոգոսը որպես այդպիսին, բռնության, եթե ոչ բռնարարության սիմվոլ է համարել, իսկ «լոգոցենտրիզմը» «ֆալլոցենտրիզմ» է հորդորել, անսպասելիորեն պահպանողական կեցվածք է ընդունում, պաշտպանելով «հաստատված կարգը» նրան «անհարկիորեն» կասկածի տակ դնողներից:

Միակ բացատրությունն այն է, որ Դերիդայի այդ՝ փաստորեն քաղաքականացված դիրքորոշումը անմիջականորեն բխում է նրա տեսական հղացքի տրամաբանությունից: Իսկապես, եթե աշխարհում ոչ մի էական բան չի ավարտվում, ուրեմն նրանում ոչ մի էական բան նաև տեղի չի ունենում: Նրանում պատմությունը կասեցված է: Այն ապրում է «հավերժ ներկայում», ուր «ոչինչ չի կարող վերջնական ծևով կատարվել և ավարտին հասցվել»:

Այս արձանագրությունը մեզ վերադարձնում է Գերսոն Շոլեմի դրած պրոբլեմին: «Անվերջ հետաձգելով» «մարդու», «սուրյեկտի», «գիտակցության», «Արևմուտքի» կամ «գրականության» վերջը – իսկ մենք հասկանում ենք, որ խոսքն այստեղ այդ ֆենոմենների պատմականո-

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 76:

թեն որոշակի ըմբռնումների ավարտի մասին է – մենք պետք է ազնվություն ունենանք ազդարարելու «պատմության ավարտը»՝ մի արարողություն, որն ի դեպ, մեզ վաղուց հայտնի է իր դասական՝ հեգել-մարքսյան տարբերակով (կոմունիզմը՝ որպես մարդկության «նախապատմության» ավարտ) և մոտ քանի տարի առաջ նորից իրականացվել է Ֆրենսիս Ֆուկույանայի *End of History*ում՝ որպես լիբերալ հարաբերությունների հավերժությունն արձանագրող ուսուայիա:

Պատահական չէ, որ «պատմություն» բառը Դերիդան հաճախ չակերտների մեջ է դնում<sup>50</sup>: Կա իհարկե չի նշանակում, որ պատմությունն իսկապես ավարտված է: Բայց կարող է նշանակել, որ «հավերժ հետաձգման» հետարդիական աշխարհում մարդը ձեռքից բաց է բողնում պատմության կերտման ստեղծագործական գործառությը, որն աստիճանաբար դառնում է անանձնական հարաբերությունների համակարգի սեփականությունը:

### **Կազմաքանդման «ընտրելը և ընտրված լիմելը»**

Վերև արդեն նշել ենք, որ հավերժ հետաձգման նույն միտումի դրսևորումն է Դերիդայի՝ կազմաքանդման՝ ղեկոնստրուկցիայի հոչակավոր հնարջ: Նրա ծագումնաբանությունը հայտնի է. ակունքում գտնում ենք Մարտին Յայդեգերի մետաֆիզիկայի ղեստրուկցիան, որով «հիմնարար գոյաբանության» հեղինակը ցանկանում էր օգուչորեն կազմագերծել արևմտյան մետաֆիզիկայի դարավոր կառույցը՝ նրա հիմքերին հասնելու և «մոռացված գոյությունը» վերագտնելու նպատակով: Յայդեգերի այդ ծերնարկումն ուղղված է եղել մտածելու և ապրելու բուն՝ «իսկական» վիճակի նվաճմանը, որը նա հակադրում էր արդիականության «անիսկական», այսինքն՝ գործիքային, ինստրումենտալ-տեխնիցիստական գոյակերպին:

Յայդեգերյան մոտեցումը, այդպիսով, ենթադրում էր որոշակի վերադարձ՝ ո՛չ պահպանողական ավանդապաշտության իմաստով, այլ որպես անցյալի «ենելության» ստեղծագործական վերարձարձում՝ հանուն ապագա ծեռնարկի: Ահա այս առումով է, որ գերմանացու նախագիծը գտնվում է տուն Վերադարձող Ողիսևսի խորհրդանշանի ներքո, իսկ նրա հեղինակի հնքնանույնացումը էապես հունական է:

<sup>50</sup> Տե՛ս J. Derrida, “Die différance”, in: *Postmoderne und Dekonstruktion*, էջ 89:

Սակայն Դերիդայի «հավերժ հետաձգումը» բացառել էր տում վերադառնալու հնարավորությունը: Նրան ավելի մոտ է «քափառական իրեայի» դիցույթը, որում խսպառ բացակայում է ոչ միայն ապագա ծեռնարկի, այլև ընդհանրապես որևէ որոշարկված նշակետի գաղափարը: Պատահական չէ, որ այս կամ այն փիլիսոփայական ավանդույթի տեքստի «կազմաքանդումը» Դերիդան իրականացնում է այն նույն լեզվով, որով շարադրված է ինքը՝ ավանդույթը:

Կազմաքանդումն, ըստ մտածողի,

...մշտապես մերգրված է նույն այն լեզվի տարրի մեջ, որն այն կասկածի տակ է դնում, նա պարփակված է այդ տարրում, նրանում է հասկացվում և, մշտապես, որպես այդպիսին է հասկացվում: ...Դրա համար էլ ես երբեք կազմաքանդման մոտիվը չեմ կապել «ախտորոշման», «հետո»-ի կամ «պրոս»-ի, «մահկան»՝ փիլիսոփայության լիմի, մետաֆիզիկայի, թե այլ բաների, «ավարտի» կամ «հաղթահարման» (համապատասխանաբար՝ «հետղարձի») և վերջապես «վերջի» մոտիվների հետ: Իմ որևէ տեքստում այդպիսի լեքսիկայի որևէ հետք գտնել հնարավոր չէ<sup>51</sup>:

Մոտեցումն ակնհայտորեն հիշեցնում է սոկրատյան «մայնտիկան»՝ այն իրոնիկ «մանկաբարձական» դատողությունների շղթան, որով մեծ աթենացին շփորության մեջ էր գցում իր զրուցակիցներին: Բայց նի կարևոր հանգանաք պետք է հաշվի առնվի: Որքան էլ իրոնիկ, Սոկրատը դիրք ունի, որն աներկայորեն հաստատվում է նրա էքզիստենցիալ դրոշմանը՝ նա բույն է խճում, այսինքն՝ ընտրում է նաև, միանշանակորեն հաստատելով իր համոզմունքները: Այս առումով Սոկրատի կեցվածքը էթիկական է:

Դերիդայի հրաժարումը «որոշակի լեքսիկայից» այլ հիմքեր ունի. դա էլ հստակ գիտակցված դիրքորոշում է, որը, սակայն, միտված է քոլոր հնարավոր դիրքորոշումների հարաբերականացմանը: Նման մոտեցումը էապես էսթետիկական է: Որպես յուրահատուկ կենսակերպ՝ այն լավ հայտնի է և նկարագրվել է Սյորեն Կիրկեգորի «կենսափուլերի տեսության» մեջ:

Դանիացի աստվածաբանը տարբերել է երեք հիմնական կենսափուլ՝ էսթետիկականը, էթիկականը և կրոնականը: Ի տարբերություն

<sup>51</sup> J. Derrida, *Die Schurken*, Suhrkamp, Ffm., 2003, S. 202-203.

սկզբունքների վրա հենվող էթիկական կենսակերպի՝ էսթետիկականը կապված է կյանքի անմիջականության հետ: Վերջինս իր հերթին կարող է նախվ՝ միամիտ, և գիտակցված դրսևորումներ ունենալ: Նահվ էսթետիզմը, ըստ Կիրկեգորիի, հեշտությամբ հաղթահարվում է էթիկական դիրքորոշմամբ՝ բավական է, որպեսզի անմիջական կյանքով ապրողը տեղեկանա բարոյական օրենքի գոյության անհրաժեշտության մասին, այսինքն՝ թրափի իր միամտությունը: Բայց եթե էսթետիզմը գիտակցված է, այն «դիվային» որակներ է ծեռք բերում, քանի որ սկզբունքն անտեսվում է ոչ թե անտեղյակության, այլ «չչար կանքի» պատճառով: Իրոնիկ գգուշավորության տարածություն պահելով անեն բանի նկատմամբ, էսթետիկը հրաժարվում է տարրեր հնարավորությունների միջև վերջնական ընտրություն կատարելուց: «Ընտրություն չկատարելու» այդ պարադոքսալ վճռականությունը արգելակում է նրա մուտքը էթիկականի ոլորտը:

Էսթետիկի համար ամեն մի ակնրարթ գոյություն ունի առանձին, նրա ընկալումը ժամանակից դուրս է, այդ պատճառով էլ նրան բնորոշ չէ «կայանալու», «հետևողականության» որակը<sup>52</sup>: Եվ եթե կազմաքանրաման մերոդն էլ, ինչպես ենթադրեցինք, էսթետիկական է, ապա նրա անվերջությունը կուտակող, կումուլատիվ չէ<sup>53</sup>. այն պարզապես հետաքրքրասեր է:

Կիրկեգորից սովորել ենք, որ էսթետիկը, ցանկացած կենսական դիրքավորում վերածելով դատարկ՝ «իմիջիայլոց» հետաքրքրասիրության (լատիներենի «inter-esse»-ն հենց հայերեն «ի-միջի-այլոց»-ն է), կարող է նաև էթիկական դիրքորոշում ընդունելու պատրաստակամություն ցուցաբերել, որքանով որ վերջինս նրան էսթետիկական խաղի նոր հնարավորություններ է ընձեռում: Դրանով նա ավելի է նպաստում էթիկական դիրքորոշման թուլացմանը և վերջնական քայլայմանը: Դրա հետևանքով այն կորցնում է իր սուրստանցիոնալ կարգավիճակը և այլևս հանդես չի գալիս որպես ինքնիշխան կենսափուլ: Այն վերածվում է չեղոք սահմանային մի տիրույթի՝ կոնֆինիումի, որի գործառույթը էսթետիկականի և կրոնականի՝ բացառության վրա հիմնված ոլորտները միմյանց կապելն է:

<sup>52</sup> T. W. Adorno, “Die Konstruktion des Ästhetischen”, in: ders., *Gesammelten Schriften*, B. 2, 1979, S. 146.

<sup>53</sup> Նկատի ունենամք, որ «կուտակումը» ոչ միայն նվաճումներին, այլև կորուստներին է վերաբերում, քանի որ բացասական փորձառությունը նույնպես արդյունք է:

Կիրկեգորը գտնում էր, որ այդպիսի էսթետիզմը կարող է հաղթահարվել միայն էքֆիստենցիալ հավասի միջոցով, երբ նարդ իր մեջ համարձակություն է գտնում վճռական քայլ անել դեպի աստված՝ քայլ, որ ռացիոնալ հիմնավորելի չէ և արտաքին դիտորդին անհեթեթ է թվում: Աղորնոն այդ կապակցությամբ հիշեցրել է, որ էսթետիկական դիրքորոշումը Կիրկեգորի մոտ միայն էքֆիկական կենսակերպի տեսակետից է որպես «Վճռ-չկայացնել» ընկալվում. կրոնականի սահմաններում վճիռն այնուամենայնիվ կայացվում է՝ երբ թոփշքային անցում է կատարվում դեպի հավատը:

Երբ էսթետիկական կենսափուլը փոխարինվում է կրոնականով, այն, միևնույն է, պահպանում է իր էական ատրիբուտներից մեկը՝ ընդհանուր սկզբունքի տեսակետից չմեկնարամվող իրավիճակների եզակիությունը: Եթե էսթետիկի համար միակ օրենսդիրը և ինքնիշխանը իր սեփական «են»-ի ինքնարուխ մղումն է, ապա հավատացյալի համար՝ աստվածային կամքը, որը սակայն անհմանալի է, հետևաբար անկանխատեսելի և իրացիոնալ:

Որոշ իմաստով ծիշտ կլիներ ասել, որ էսթետիկի իրոնիկ կամայականությունը փոխարինվում է իրոնիկ Աստծո կամայականությամբ, որին սուրբեկտը հոժարակամ հանձնում է իր ազատությունը: Ակնհայտ է, որ երկու դեպքերն էլ ենթարկվում են միևնույն տրամաբանությանը՝ դրանցում ոչ թե բացառությունն է որպես օրենքի մասնավոր դեպք հանդես գալիս, այլ օրենքը՝ բացառության:

Իհարկե, Դերիդան, ի տարբերություն բողոքական Կիրկեգորի, չի նախատեսում անցում կատարել դեպի կրոնականը: Բայց նրա բռնած ճանապարհը զարմանալի լիորեն նման է թվում: Իր ուշ աշխատանքներից մեկում նա անսպասելիորեն խոսում է «մեսիականությունից գուրկ մեսիակամի անհորիզոն սպասման» մասին: Այդ գալիք անհմանալի վիճակը նա պատկերացնում է որպես «ազատություն՝ առանց ինքնիշխանության, բազմօրինություն՝ առանց ստրկության, մի խոսքով՝ կրապորական վճռի պես մի բան»<sup>54</sup>:

Այս «կրոնազորկ հավատի» գաղափարը նման է և նման չէ կիրկեգորյան հարացուցին: Աստվածաբանի համար խնդիրը սպասելը չի եղել, այլ վճռել կարողանալը: Կազմաքանդման վարպետն, ի տարբերություն դրան, նորից և նորից հետաձգում է վճռական քայլը: Կարելի է ենթադրել, որ հավերժորեն խուսափելով սեփական կեցվածքը որո-

<sup>54</sup> J. Derrida, *Die Schurken*, S. 207.

շարկող վճռից, նա հետաձգում է նաև վերջինիս հետ կապված պատասխանատվությունը: Բայց խնդիրն այն է, որ վճիռն իրականում հետաձգված չէ: Այն ավելի շուտ հանձնված է մեկ այլ վճռորոշ ատյանի, որին հեղինակը պատրաստ է ենթարկվել իր «կրավորական սպանան» արդյունքում: Այս մոտիվը պատահական չէ Դերիդայի համար. նրա ակունքներում կանգնած է դեռևս Գրի և տարբերության մեջ մեջբերված երրայական աֆորիզմը.

*Ոերե իլրեն ասել է՝ ի՞նչ տարբերություն ընտրելու և ընտրված լինելու միջև, եթե մեզ ոչինչ չի մնում՝ ընտրությանը ենթարկվելուց բացի<sup>55</sup>:*

Եվ եթե տարբերությունից տարբերություն շարժվող և սեփական վճիրն անվերջ հետաձգող էսթետիկը, որն առնվազն ավանդական իմաստով հավատացյալ չէ, պատրաստ է արտաքին մի ասյամի ենթարկվել, ապա բնական հարց է ծագում վերջինիս ո՞վ կամ ի՞նչ լինելու նախին:

Դետարդիականության մեկ այլ աստղ՝ Միշել Ֆուկոն, այս կապակցությամբ մեր ուշադրությունը կիրավիրեր «համակարգի» երևույթի վրա՝ հիշեցնելով, որ

*որոշ առումով մարդիկ վերադառնում են 17-րդ դարի տեսակետին, այն տարբերությամբ, որ ոչ թե մարդն է գալիս փոխարինելու Աստծուն, այլ իմշ-որ անանուն մտածողություն, անսուբյեկտ գիտելիք, անդեմ տեսություն...<sup>56</sup>*

Որպես առաջին մոտեցում այն հարցին, թե ի՞նչ է, այնուամենայնիվ, ընկած հիշյալ «անանուն մտածողության» կամ «անսուբյեկտ գիտելիք» համակարգի հիմքում, օգտակար է արձանագրել, որ տարբերությունների այն մշտական փոխարկումը, որն անկասկած կազմորոշ է Դերիդայի մտքի համար, ներքին կապի մեջ է արդի հասարակության հիմնական և սահմանադիր գործառույթներից մեկի՝ փոխանակման գործողության հետ, որը նախ և առաջ տնտեսական կատեգորիա է:

<sup>55</sup> Ж. Деррида, “Эдмон Жабе и вопрос книги”, его же, *Письмо и различие*, с. 106.

<sup>56</sup> Մ. Ֆուկո, «Զրոյց Մաղլեն Շապասի հետ», «Ութիկոն», թիվ 1 (8), 2005, էջ 21:

Որպես այդպիսին՝ այն երևան է գալիս զարգացման փուլերի մասին մեկ այլ՝ այս անգամ Կարլ Շմիտի պատկերացման մեջ: Եթե դա նիշացի աստվածաբանի կենսափուլերի հղացքը անցում էր Ենթադրում էսթետիկականից երիկականին, իսկ դրանից՝ կրոնականին, ապա գերմանացի իրավաբանը, որը «երեք փուլերի օրենքի» հայտնագործումը կապում է Զանգատիստա Վիկոյի և Օգյուստ Կոնստի անունների հետ, խոսում է այն կարևոր դերի մասին, որ ունեցել է էսթետիկականը 18-րդ դարի բարոյամետուրյունից՝ մորալիզմից, 19-րդ դարի տնտեսամետուրյանը՝ էկոնոմիզմին, անցնելու ժամանակ:

Շրջաված հերթականությունը՝ «Էսթետիկական – երիկական – կրոնական» Կիերկեգորի մոտ, «բարոյական – էսթետիկական – տնտեսական»՝ Շմիտի, իրականում ոչինչ չի փոխում: Երկու դեպքերում էլ էսթետիկականի շնորհիվ նախապատրաստվում է անցումը Վերջին փուլին: Աստվածաբանը սեղմում-նեղացնում է բարոյականը, որպեսզի էսթետիկականը դիալեկտիկորեն փոխակերպվի կրոնականի, իսկ իրավաբանը ներմուծում է էսթետիկականը որպես ուղեկից-միջնորդ՝ բարոյականի և տնտեսականի հիմնարար բնագավառների միջև եղած անդունող կամքելու և առաջնից երկորորին կատարված անցումը բացատրելի դարձնելու համար: Կարլ Շմիտի կարծիքով՝ «բոլոր հոգևոր ոլորտների էսթետիկացումը» հասարակությանը մղում է «նրբացված էսթետիկական սպառնան և վայելքի», որն էլ իր հերթին «ամենավստահ ճանապարհն է դեպի հոգևոր կյանքի համընդհանուր տնտեսականացում»: Այսինքն՝ էսթետիկականն է, ըստ Շմիտի, որ քայլայում է բարոյականը և փոխարինում այն տնտեսականով:

Կասկած չկա, որ այս իրողությունն առավել ցայտուն է երևում հենց հետարդիականության դարաշրջանում: Ընթերցողը, որ մեր «համընդհանուր տնտեսականացված» երկրի պայմաններում ցանկանա էլ, չի կարողանա խուսափել այս կամ այն ապրանքը (կոկա-կոլան, ասենք, կամ «Սիվա» ավտոմեքենան<sup>57)</sup> վայելելու, ըմբուշնելու, բախտի բերմամբ շահելու, դրա կապակցությամբ հածելի անակնկալի գալու, մի խոսքով՝ ամենատարբեր և անսպասելի ծներով սպառելու և այդ սպառումից գերագույն հածույք ստանալու, իր գլխին թափվող հորդորենե-

<sup>57</sup> Ժամանակի կոլորիտը չկորցնելու համար ես պահպանում եմ 2006-ին հրատարակված հոդվածում բերված օրինակը՝ ընթերցողը կարող է փոխարենը տեղադրել մեքենաների ավելի ակտուալ մակնիներ:

րից (չասելու համար՝ հարձակողական պահանջներից), կիամաձայնի երկի, որ էսթետիկական կեցվածքն իր միշտ եզակի և պատահական անմիջականությամբ իսկապես անքակտելիորեն կապված է «Էկոնոմիզմի» դարաշրջանի հետ: Երկուսի հիմքում էլ ընկած են անմիջականությունների փոխփոխարինելիությունը և նրանց անվերջ փոխանակման հնարավորությունը:

Այդ հանգամանքը հիմք է տալիս եզրակացնելու, որ գերազույն ատյանը, որին Դերիդան իր էսթետիկական անմիջականությամբ ապավիմում է, ազատ ապրանքային փոխանակման սկզբունքի վրա հենված հետարդիական հասարակությունն է:

Պատրանք է՝ իբր հավերժորեն հետաձգելով «զուտ իմաստի» հետ իր հանդիպումը, Դերիդան ընտրություն չի կատարել: Իրականում նա ընտրել է գոյություն ունեցող համակարգը, բայց նաև ցանկացել առավելագույնս օգտագործել դրա ընծեռած ազատության աստիճանները: Եվ այնուամենայնիվ մտածողի մշտական նորարարության հավակնող ընթացքը դատապարտված է եղել պտտվելու ծեռնասուն անակնկալ-ների տարածքում: Որևէ տեսակետի կամ լեզվի գերակայությունը չճանաչող «կազմաքանդումը» անսպասելիորեն ներկայացել է որպես գոյություն ունեցող կարգի ջատագովություն:

«Ալարմիզմի» դեմ հանդես եկած փիլիսոփայությունն իրականում վերածվում է որոշակի ուղղվածությունից զուրկ «ակտիվիզմի»: Եթե ոչ մի էական բան աշխարհում չի փոխվելու, ապա բոլոր մնացյալ թափառումները՝ տարբերությունից տարբերություն, որ Դերիդան որպես իրական շարժ էր դիտարկում, ոչինչ այլ բան չեն, քան *իրուստեղծագործական* հռետորականություն, որն իրոնիկ անվտանգության դիստանց է ապահովել իր համար և մշտական շրջապտույտ է տալիս արգելոցային տարածքում:

Հետարդիական գլորալացված տնտեսության և զանգվածային լրատվության հասարակությունում մարդու ինքնուրույն ընտրություն կատարելու գործառությը միտում ունի փոխարինվելու վերանհատական համակարգային հարաբերությունների պարտադրանքով: Նրանցում ջնջվում է «ընտրելու» և «ընտրված լինելու» միջև եղած տարբերությունը, ի ցույց դնելով վաղուց արդեն վերահսկողությունից դուրս եկած և այլևս սատօքէսի-ի սկզբունքով գոյատևող հասարակական համակարգի «ընտրությանը» ենթարկվելու հեռանկարը:

## 7.4. «Անհորիզոն սպասման» հեռանկարը

Վերջ ներկայացված հատվածներից երկուսի հրապարակումից ութ տարի անց<sup>58</sup>, անդրադառնալով «կրավորական սպասման» ավելի քան մոտք խնդրին, նաև վերահստատելով հասարակական հաճակարգից ծնվող վերանհատական պարտադրանքի մասին ժամանակին արված եզրակացությունը, տողերիս հեղինակը, այնուամենայնիվ, պահանջ է զգում դուրս գալ իր՝ գուցե չափազանց ոփորիստական հարցադրման շրջանակներից և հարցին նոտենալու զուտ փիլիսոփայական տեսակետից՝ որդեգրելով այն մելամաղուտ հեռանկարը, որը հատուկ է ժակ Դերիդայի ուշ գրություններին:

Որպիեսուն, որքան էլ Դերիդայի հղացքն օբյեկտիվորեն իր կախվածությունն է ցույց տալիս համակարգի ինքնարաբ շարժից, սուբյեկտիվորեն՝ որպես ստեղծագործ անհատ, փիլիսոփան, իհարկե, գիտակցում է դա և ելք է փնտրում համատարած տնտեսական փոխանակումներից հյուսված ցանցի արգելոցից:

Տեսանկյունի նման փոփոխությունը նորից տանում է դեպի Հայդեգեր. «կազմաքանդման» հեղինակի գաղափարական կախվածությունը թողնառութերզցի իմաստումից շատ ավելի խորն է, քան կարող էնքն կարծել նրա շահագրգիռ ընթերցողներս, և քան խոստովանում է ինքը՝ Դերիդան<sup>59</sup>:

Դերիդայի մտածողության մեջ տեղի ունեցած փոփոխության ազդակներից մեկը Հայդեգերի 1962-ին ներկայացված «ժամանակ և գոյություն» գեկուցումն է: Գոյություն և ժամանակի չգրված երրորդ մասը լրացնելու հավակնություն ունեցող այս տեքստում Հայդեգերը, հերթական անգամ անդրադառնալով «գոյ - գոյություն» զույգի տարբերակման խնդրին, հիշեցրել է, որ «գոյը կա» արտահայտությունը (das

<sup>58</sup> «Հավերժ հետաձգումը և „պատմության կասեցումը”» ու «Կազմաքանդման „ընտրելը և ընտրված լինելը”», տես ս. Ա. Ոսկանյան, «Ժակ Դերիդայի “հավերժ հետաձգումը” հետարիհական իրողությունների համատեքստում», «Գիտական աշխատություններ: Հասարակական գիտություններ», պր. 4., Լինզպա (ԵՊԱՀ), Եր., 2006, էջ 5-17:

<sup>59</sup> Այդ մասին է վկայում այն կրքոտ եռանդը, որով Դերիդան փորձում է հիմնավորել, որ իր արածն անպայմանորեն տարբերվում է Հայդեգերի արածից (տես ս. օրինակ, J. Derrida, *Die Schurken*, էջ 202): Իհարկե, տարբերվում է, բայց հենց դրանք էլ ներկայանում է որպես հայդեգերյան նորու «օյնուափերում»: Միմույն ժամանակ պարզ է, որ ասվածը իհնիք չի տալիս ընդունելու Ֆերիի և Ռենոյի արտառող բանաձևը՝ «Դերիդա=Հայդեգեր+Դերիդայի ոճ» (մեջթերվում է ըստ H. Kimmerle, *Derrida zu Einführung*, SOAK im Junius Verlag, Hamburg, 2000, էջ 114):

Seiende ist) լեզվական առումով կիրառելի չէ գոյության նկատմամբ: Այսպես՝ չի կարելի ասել «գոյությունը կա» (Sein ist), փոխարենը ասվում է՝ «գոյությունը տրվում է» (es gibt Sein)<sup>60</sup>: Մրանով գոյությանը վերագրվում է ի հայտ զալու կամ նույնիսկ նվիրաբերվելու լրացուցիչ երանգ: Տպագորությունն ուժեղանում է նրանով, որ նույն «es gibt»-ի «գեծեն»-ից սերում է «Gabe»-ն, որը նշանակում է «ընծա»: Այսինքն՝ հայեցերյան դիմուրսում գոյությունն ընծայվում է, այն հանդես է գալիս որպես ընծա<sup>61</sup>:

Մյուս աղյուրը, որից Դերիդան օգտվում է «ընծայի» երևույթի կազմաքանդումն իրականացնելիս, Մարտել Մոսի՝ նվիրատվության պրակտիկաներին նվիրված դասական աշխատությունն է<sup>62</sup>:

«Ընծան» հատուկ նշանակություն է ձեռք բերում Դերիդայի համար, քանի որ այն արմատավես հակադիր է արդիականության սոցիալական համակարգին հատուկ տնտեսական փոխանակումների տրամաբանությանը՝ «զուտ ընծան» պատասխան նվիրաբերություն չի պահանջում:

Ընծան չպետք է շրջանառության մեջ դրվի, այն չպետք է փոխանակվի, ոչ մի դեպքում չպետք է մերօրավի փոխանակման ընթացքի նորից ելակետին վերադարձող ողակածն շրջապույտի մեջ: Եթե տնտեսության համար շրջանի ֆիզուրն էական է, ընծան պետք է մնա ապատմտեսակամ<sup>63</sup>:

Դասկանալի է, իհարկե, որ իրականում ընծայման պրակտիկաները շատ ավելի խճողված են և ոչ միանշանակ: Ընծաները, միայն արտաքնապես պահպանելով «եզակի մարդու համար նախատեսված եզակի նվեր» լինելու թվացողությունը, իրականում դուրս չեն տնտեսական շրջապույտից, նույնիսկ եթե վերանանք «ընծայման» այնպիսի արտառող ձևերից, որպիսիք են, մի կողմից, կաշառքը, մյուսից՝ ցուցա-

<sup>60</sup> Գերմաներնում «es gibt»-ը, որ բառացիորեն նշանակում է «այն տախս է» (es gibt չեղող սեղ է ցույց տալիս), ավանդաբար օգտագործվում է առկայությունը նշանակելու համար (es gibt zwei Knaben im Zimmer՝ սենյակում երկու տղաներ): Ոչ մի լրացուցիչ իմաստ չի առաջարկվում: Դայեցերը գիտակարար ակտուալացնել է արտահայտության լեզվական ծևը, որպեսզի ցույց տա, որ «գոյությանը», ի տարրերություն գոյերի, չպետք է պարզ ներկայություն վերագրել:

<sup>61</sup> Յնն. H. Kümmerle, *Philosophie der Differenz*, Königshausen & Neumann, Würzburg, 2000, էջ 156:

<sup>62</sup> M. Mauss, *Essai sur le don*, Paris, 1950.

<sup>63</sup> J. Derrida, *Falschgeld. Zeit geben*, Wilhelm Fink, München, 1993, S. 17.

դրական նվերները, որոնք կոչված են բարձրացնելու ընծայողի հանրային վարկը: Ընծայման պրակտիկայում առանձնահատուկ տեղ է գրավում այսպես կոչված «փոտլաշ»-ը, որը տարածված է որոշ մելանեզիական, ինչպես նաև ամերիկյան հյուսիսի ցեղերի մոտ: Խոսքն այստեղ նվերին ավելի մեծ նվերով պատասխանելու ծեսի մասին է, որի ծավալում հանգեցնում է միջցեղային կատաղի մրցակցության, իսկ երեմն՝ ամբողջ ցեղերի սնամկացման և կործանմամ<sup>64</sup>:

Ընծայի երևոյթի այդ երկիմաստությունը նկատի ունենալով<sup>65</sup>, Դերիդան եզրակացնում է, որ զուտ, այսինքն՝ անհատույց ընծան, առնվազն տնտեսական փոխանակման պայմաններում, սկզբունքորեն անհնարին է:

Ընծայի, ինչպես նաև հյուրասիրության կամ ներումի, հնարավորությունը - եթե այդպիսին ենթադրելի է - կապված է դրանց ան-պայմանության՝ գործնական հանգամանքներով և ծնական կարգով չպայմանավորված լինելու հետ<sup>66</sup>.

Նույնը վերաբերում է արդարությամբ, որն ան-պայման է՝ անհատավայ<sup>67</sup>, որովհետև ռացիոնալ ճանապարհով չի մակարերվում զուտ իրավական դրույթների անթերի իրագործություն: Դա «արդարություն է առանց իրավունքի»<sup>68</sup>, որը ենթադրում է ընծայում՝ առանց փոխանակման և շրջանառության:

Քանի որ իրավի արդար վճռօք անվերջ հիմնավորումներ է պահանջում, անսահման արդարության գաղափարը, ըստ Էության, կազմաքանդելի չէ: Ավելին՝ կազմաքանդումն ինքնին ոչ այլ ինչ է, քան արդարության ընթացքը: Վերջինս կարող է ընդհատվել միայն անհատական դրույթամբ, որն ըստ Էության արտաքին ազդեցություններով չպայմանավորված «ցատկ» է:

<sup>64</sup> Երևոյթի դասական նկարագրությունը պատկանում է Մարտել Սոսին (նշվ. աշխ.), տես նաև G. Gebauer, Ch. Wulf, *Spiel – Ritual – Geste. Mimetisches Handeln der sozialen Welt*, Rowohlt, Reinbek bei Hamburg, 1993, էջ 165–171:

<sup>65</sup> Բավական է հիշել «ցի՛մ»-ի երկու նշանակությունները՝ «նվեր» և «թույն»:

<sup>66</sup> Դետազուտողներն այս կապակցության խոսում են (H. Kimmerle, *Philosophie der Differenz*, էջ 157) Դերիդայի՝ ժողովագործ Բատայից կրած ազդեցության մասին՝ նկատի ունենալով վերջինիս՝ փոխանակման «սահմանափակ» և շռայլման (մսխման) «համընդհանուր» էլունիմիաների տարբերակումը: Բատայի նկատմամբ Դերիդայի վերաբերյալ տես ս. Ж. Дerrida, «От экономии ограниченной к экономии всеобщей. Гегельянство без утайки», его же, *Письмо о различии*, էջ 400–444:

<sup>67</sup> Վերը ներմուծած եզրն օգտագործելով՝ «ան-դրույթ»:

<sup>68</sup> J. Derrida, *Gesetzkraft. Das „mystische Grund der Autorität“*, Suhrkamp, Ffm., 1996, S. 104.

Արդարության՝ արտաքին հանգամանքներով, այդ թվում նաև ժողովրդավարական քվեարկությամբ, պայմանավորված չլինելու թեզի կապակցությամբ Դայնց Թիմերլեն նկատել է, որ Դերիդան այստեղ վտանգավոր ծնով մոտենում է «դեցիզիոնիզմին»<sup>69</sup>. Նկատի ունենալով Կարլ Շմիտի թեզը օրենքի կասեցման և ինքնիշխանի միահեծան որոշումների մասին<sup>70</sup>:

Սակայն Դերիդան հաջողությամբ շրջանցում է այդ վտանգը: Նույն տրամաբանությամբ, որով տնտեսական փոխանակման հարաբերություններին հակադրվել էր ընծան, մտածողը հիմա էլ «քշճամու» հասկացությամբ, որով Շմիտի մոտ կազմորոշվում է քաղաքականի ոլորտը, հակադրում է «ընկերոջ» հղացքը՝ որպես քաղաքականության այլընտրանքային մողելի ատաղձ<sup>71</sup>: Այս կապակցությամբ Դերիդան վկայակոչում է Արիստոտելին, որն ընկերությունը օրենքից և քաղաքականությունից բարձր է դասել, քանի որ Նիկոմակի էթիկաում ասել է՝ Եթե մարդիկ ընկերներ են, նրանք արդարության կարիքը չունեն: Բայց, եթե ընկերությունը արդարությունից բարձր է, այն ինքնին արդար է, դա արդարություն է արդարությունից առաջ<sup>72</sup>:

Կարելի է ենթադրել, նշում է Դերիդան, որ արդարությունը երկու չափելիություն ունի՝ չգրված և արձանագրված (կողիֆիկացված): Մրան համապատասխան՝ ընկերությունը՝ այդ թվում նաև քաղաքական ընկերությունը, կարող է լինել բարոյական և իրավական: Իր համար գրավիչը նախ և առաջ առաջինն է, քանի որ այն ներկայանում է որպես «անպայման»:

Փորձելով բացորոշել ընկերության կառուցվածքը, Դերիդան հատուկ ուշադրություն է դարձնում «հավասարության» հարաբերության վրա: Այս առումով ընկերության համատեքստում «եղբայրը» ավելի կարևոր է, քան «հայրը» («հայր – որդի»-ն ասիմետրիկ հարաբերություն է. քավական է հիշել Ֆրոյդի «եղբայրների դաշինքը» ընդդեմ հոր):

<sup>69</sup> Տե՛ս H. Kimmerle, *Philosophie der Differenz*, էջ 159:

<sup>70</sup> Դժվար չէ տեսնել, որ այսպես ընթանված արդարության հղացքն աղերսներ ունի Նիցշեի «տերերի բարոյականությանը», որքանով որ Վերջինս չի կասպիւմ առաքինի կյանքի համար տրվող փոխհատուցման հետ (տնտեսական փոխանակման սկզբունք), այլ հասկացվում է որպես ողորմած տիրոջ ըմծա: Այստեղ մանավանդ հիշատակելի է Նիցշեական «գերմանոն» Դայների կարևորած ընորոշումը՝ «Կեսար Շիտուսի հոգով», տե՛ս M. Heidegger, *Was heißt Denken?*, Reklam, Stuttgart, 1992, էջ 51:

<sup>71</sup> J. Derrida, “Politics of friendship”, American Imago, Johns Hopkins University Press, 2004, p. 355. Սեցրեղվում է ըստ <http://www.istud.it/newsletter/san/derrida.pdf>

<sup>72</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 383:

Նույն չափանիշի տեսակետից գնահատելով կնոջը, Դերիդան հենվում է Նիցշեի այն մտքի վրա, որ կինը դեռևս ունակ չէ ընկերության, այլ գիտի միայն սերը և ընկերության մեջ էլ՝ իր զուտ սիրային փորձառության պատճառով կամ բռնակալ է, կամ ստրուկ<sup>73</sup>: Ասվածը, իհարկե, չի նշանակում, որ տղամարդիկ առավելություն ունեն ընկերության հարցում։ Նույն Նիցշեի կարծիքով՝ սրանց շրջանում էլ գերակայում է «ախապերությունը» (Kameradschaft), ոչ՝ իսկական ընկերությունը (Freundschaft)<sup>74</sup>:

Իսկական ընկերությունը նոտ է ժողովրդավարությանը<sup>75</sup>: Բայց, ինչպես չկան ընկերներ, որոնք կիամապատասխանեին ընկերության իսկական հասկացությանը<sup>76</sup>, այնպես էլ ժողովրդավարությունը միշտ «հետաձգված է», միշտ «օգալիք է», այն կապված է ընկերության այնպիսի ընթանան հետ, որը դուրս է զուտ եղայրական՝ հոմո-ֆրատերնալ և ֆալլոգոցենտրիկ միենաներից: Խոսքն այն մասին է, որպեսզի պատրաստ լինենք հավասարության փորձառությանը, արդարությանը, որը տարածվում է օրենքի ոլորտից այն կողմէ<sup>77</sup>:

Ինչպէ՞ս կարող է այն իրականություն դառնալ: Որպես «պատասխանատու մտածողների» համագործակցություն, ինչպես Դերիդան ենթադրում է Մարքսի մասին իր էսեում<sup>78</sup>: Չասկանալի է, որ նման հեռանկարը՝ գուցե և ցանկալի, նույնքան ուտոպիական է, որքան Պլատոնի գաղափարը պետությունը կառավարող փիլիսոփաների մասին: Դերիդան այդքան միամիտ չէ հույսը դրա հետ կապելու համար: Նա հիմքեր չունի «ավելի լավ ապագա» սպասելու, առավելագույնը, որ հնարավոր է գտնում, «ոչ կրոնական մեսիանիզմի» մասին խոսելն է:

Խորիրահանշական է, որ 1967-ին Յուսեռլի քննադատությամբ աղմկահարույց համբավ ձեռք բերած մտածողը, մահվանից մեկ-երկու տա-

<sup>73</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 384:

<sup>74</sup> Նույն տեղում: Վաստահ չեմ, որ հայերեն հնարավորություն է տալիս տարբերակելու այս երկու հասկացությունը՝ «ընկեր - բարեկամ»-ը դա չի արտահայտում կամ ոչ լրիվ է արտահայտում: Ուստանան այդ կապակցությամբ կառաջարկեն «որոյթելու - տօսարակ» զույգը: Այսօրվա Դայաստանի քաղաքային մշակույթում շրջանառվում է «ախապերություն - ընկերություն» տարբերակումն, ընդ որում քաղձորը «ընկերություն» է՝ որպես հոգեպես մոտիկ մարդկանց դաշնությունը, այն դեպքում, եթե «նորայրներին չեն ընտրում»:

<sup>75</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 385: Դերիդայի տեքստն ավարտվում է «Օ, ին ժողովրդավար ընկերներ» բացականչությամբ:

<sup>76</sup> Որպես «Ընկերության քաղաքականության» բնարան՝ Դերիդան ընտրել է Արիստոտելին վերագրվող ասույթը՝ «Օ՝ ընկերներ իմ, ընկերներ չկամ»:

<sup>77</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 388:

<sup>78</sup> J. Derrida, *Spectres de Marx: L'État de la dette, le travail du deuil et la nouvelle Internationale*, Galilée, Paris, 1993.

րի առաջ՝ 2002-ին, նորից անդրադարնում է բներևութաբանության ռահվիրայի գաղափարներին<sup>79</sup>: Այս անգամ, սակայն – սպասելիորեն – քննության նյութը «Եվրոպական գիտությունների ճգնաժամ»-ն էր<sup>80</sup>, իսկ հարցադրման տոնայնությունը՝ փոխված: Եթե առաջին դեպքում նպատակը բանականի «կենդանի ներկայության» գաղափարի կազմաքանությունը էր, ապա այժմ Դերիդան անհանգստացած է «բանականության պատիվը փրկելու» խնդրով<sup>81</sup>:

Այդ կապակցությամբ հնչեցված իրոնիկ հարցերը՝ «Բանականության պատիվն արդյո՞ք բանականություն է» կամ՝ «Պատիվը բանակա՞ն է, թե՞ ռացիոնալ»<sup>82</sup>, ինչպես նաև յուրահատուկ հարցադրումը «բանականության շահի» մասին<sup>83</sup>, մի անգամ ևս հավաստում են, որ Դերիդային նոտահոգործ բանականության տեխնիցիստական ծևախեղումն է, որը հանգեցնում է նեղ իմաստով ռացիոնալության, հաշվարկելիության գերակայությանը բանականության մյուս բոլոր դրսնորումների նկատմամբ<sup>84</sup>:

Լուծումը նա փնտրում է պրակտիկ բանականությանն առնչվող նպատակաբանության՝ թելեղոգիայի իմաստային շրջանակի շուրջը (ոչ ներսում), հարց դնելով գալիք «հրադարձության» մասին՝ այս մասին, թե «ի՞նչ է տեղի ունենալու բանականության միջոցով և բանականության հետո»<sup>85</sup>:

«Հրադարձությանը» (մեր վերն ընդունած գրությամբ՝ «հիւրա-դարձությանը») ապավիճելը արդեն իսկ նշան է այն բանի, որ Դերիդան այստեղ էլ ոչ այնքան Հուսենոլի, որքան Հայդեգերի ծիրում է: Կոնստելացիան հետևյալն է: Հայդեգերի հղացքում արդիականությունը (մո-

<sup>79</sup> Խոսքը 2002 թվի օգոստոսին Նիսում տեղի ունեցած Փիլիսոփայական համաժողովում ներկայացված «Գալիք լուսավորության՝ “աշխարհը”» (քացառություն, հաշվարկ և հմբնիշխանություն)» գեկուցման մասին է: Տե՛ս J. Derrida, “Die ‘Welt’ des kommenden Aufklärung (Ausnahme, Kalkül und Souveränität)”, *Die Schurken*, Suhrkamp, Ffm., 2003:

<sup>80</sup> E. Husserl, *Die Krisis der europäischen Wissenschaften und die transzendentale Phänomenologie. Eine Einführung in die phänomenologische Philosophie. Husserliana*, B. 6, Martinus Nijhoff, Den Haag, 1954.

<sup>81</sup> Տե՛ս J. Derrida, *Die Schurken*, էջ 160:

<sup>82</sup> Նույն տեղում, էջ 162:

<sup>83</sup> Նույն տեղում:

<sup>84</sup> Այս կապակցությամբ Դերիդան հիշեցնում է, որ Հուսենոլը սկզբունքային տարրերությունը է որեւ «խստության» և «ջզգության» միջև (նոյն տեղում, էջ 179), իսկ մեկ այլ տեղ խոսում է ռացիոնալի (rationnel) և բանականի (raisonnable) միջև եղած փիլորութարբերության մասին (նոյն տեղում, էջ 215):

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 182:

դեռնք՝ որպես պատկերացնող-հաշվարկող կենսակերպի մարմնավորում, կապվում է գոյության բացակայության դարաշրջանի հետ: Եվ եթե Գոյությունը և ժամանակի հեղինակն այդ բացակայությունը մեկնաբանում էր որպես «գոյության մոռացություն», ապա ուշ Հայդեգերը – մենք դա հիշում ենք<sup>86</sup> – դրա տակ մկատի ունի «գոյության կողմից լրված լինելը»: Այս տարբերությունը սկզբունքային է: Գոյամոռացության հաղթահարումը կարող է, գոնեւ՝ *cum grano salis*, համարվել մարդու ազատ կամքի գործը, բայց «ծածկյալ գոյության» վերստին ի հայտ գալը՝ նրա «երևակվելը», բնականաբար, կախված չէ մարդուց: Դրա համար էլ հայդեգերյան «գոյապատմությունը» (*Seinsgeschichte*) ո՞չ գոյության և ո՞չ էլ մարդու, այլ գոյության՝ մարդու առջև «բացվելու» և «ծածկվելու» պատմությունն է: Միակ բանը, որ մնում է մարդուն (*Dasein*-ին), նրա բաց լինելը է՝ «գոյության (վերա)դարձը» ապրելու և հանձն առնելու պատրաստակամությունը: Ենց սա էլ հայդեգերյան մտքի հմայքը լիովին չքրթափած Ղերիդան անվանում է «անհորիզոն սպասում» կամ «կրավորական ընտրություն»:

Որքանո՞վ է երկու մտածողների այս գուգամիտումը համատեղելի «համակարգի կողմից ընտրված լինելու» և «պատմության կասեցման» գաղափարների հետ, որոնց միջոցով վերը բնորոշել ենք Ղերիդայի մոտեցումից բխող հասարակական-քաղաքական հետևանքները: Արյո՞ք «պատմության ավարտի» մասին թեզը և Հայդեգերի «գոյապատմական» հղացքը չեն բացառում միմյանց:

Եթշտ է համոզվել, որ այդ երկու մոտեցումներն իրարամերժ չեն: Համակարգի *autopoiesis*-ը և մարդկային պատմության՝ որանով պայմանավորված «ավարտը» արդիականության բնորոշչներն են: Երբ Ղերիդան սկսում է խոսել «փրկիչ չակնկալող մեսիանիզմի անհորիզոն սպասման» մասին, նա ելք է փնտրում մոդեռնի շրջանակից, ակնկալելով մարդկային պատմության մի նոր, որակապես այլ փուլ, որն անմիջականորեն չի բխում և չի մակաբերվում նախկինից (չէ՞ որ նոր բանականությունը «թրիչք» է պահանջում):

Հայդեգերն այդ կապակցությամբ խոսելու էր գոյության վերադարձի, նրա «անքաքույց դառնալու» մասին: Ղերիդան, սրան հակառակ, նորից և նորից շեշտում է իր մոտեցման «ոչ թելեղողիական» բնույթը: Թեև Հայդեգերին հայտնի չէ, թե որտեղի՞ց կամ ինչպե՞ս է ժամանելու

<sup>86</sup> Ղմնտ. Հայդեգերի բաժնի «Խրա-դարձությունից» հատվածի հետ, էջ 257-258:

գոյությունը, նա գոնե գիտե իր սպասածն ինչ է: Այնինչ Դերիդայի սպասումն ընդհանրապես զուրկ է որևէ հորիզոնից: «Իրադարձությունը», որն իսկապես արժանի է այդ անվանը, գտնում է Դերիդան, պետք է ոչ միայն հատի անցնի նպատակաբանական իդեալիզմի սահմանները, այլև լինի անկանխատեսելի:

*Իրադարձությունը պետք է իր մասին հայտարարի անկանխատեսելիորեն, առանց նախազգուշացման... առանց սպասման հորիզոնի, առանց թելուի, առանց նպատակաբանական ձևավորման, ծկի կամ նախաձևության (ohne Formation, Form oder Präformation):<sup>87</sup>*

Որ Դերիդան Հայդեգերի լեզուն կիրառել չէր կարող և դրա կարիքն էլ չուներ, հասկանում ենք՝ գոյության գործառույթը նրա հղացքում հանձնված է «différance»-ին, որը, լրիվ համապատասխան «գոյաբանական տարբերության» սկզբունքին, վերաբերում է ոչ թե այս կամ այն փաստացի տարբերությանը, այլ տարբերության հնարավորությանը որպես այդպիսին:

Տարբերությունների շարժն անվերջ է, և եթե տունդարձի ճանապարհը բռնած Ոդիսակի որոնումների ուղղությունն առնվազն կռահելի է, ապա ո՞վ կարող է կանխագուշակել, թե ուր կիասնի թափառական Ազգասթերը: Եվ ինչո՞ւ է պետք բացառել, որ այդ անսահման շարժման ընթացքում հնարավոր է դրւս գալ Համակարգի *autopoiesis*-ի շրջանակներից և հասնել մեկ այլ, գուցե ավելի «արդար» վիճակի: Չէ՞ որ այստեղ, ի տարբերություն հայդեգերյան «գոյության վերադարձի», որևէ միստիկական բան չկա: Մանավանդ, որ նճան մտածողությունը հարազատ է հետարդիականությանը: Վկամ՝ Դերիդայի հայրենակից Միշել Ուելբեկի Կղզու հնարավորությունը վեպը, որում գրութեսկային գրականության միջոցներով ի ցույց է դրվում ամենաարտառոց վիճակների հանգելու հնարավորությունը<sup>88</sup>:

Թերահավատ ընթերցողի հարցին, թե, այնուամենայնիվ, հ՞նչ (գոնե թեական) հիմքեր ունի Դերիդան, ենթադրելու, որ «այլ վիճակը»

<sup>87</sup> Նույն տեղում, էջ 192:

<sup>88</sup> M. Houellebecq. *La Possibilité d'une île*, Fayard, 2005. Ոռւսերեն թարգմանությունը կարելի է գտնել առցանց, հետևյալ հասցեն՝ [http://lib.aldebaran.ru/author/yuelbek\\_mishel/yuelbek\\_mishel\\_vozmozhnost\\_ostrova/u\\_yuelbek\\_mishel\\_vozmozhnost\\_ostrova\\_0.html](http://lib.aldebaran.ru/author/yuelbek_mishel/yuelbek_mishel_vozmozhnost_ostrova/u_yuelbek_mishel_vozmozhnost_ostrova_0.html)

սկզբունքորեն նվաճելի է, և կամ որտե՞ղ է պետք այն փնտրել, վերջինս նորից և նորից կիիշեցներ, որ իրա-դարձությամ<sup>89</sup> դաշտում երաշխիքներ և առավել ևս՝ նպատակադրումներ չեն լինում. դրա համար էլ նա հրաժարվում է որևէ «քելոսից» և գերադասում է խոսել ոչ կրոնական հավատի մասին:

Նա կավելացներ նաև, որ այդպես մտածելն ու խոսելը չի հակասում բանականությանը, այլ հակառակը՝ հանդես է գալիս որպես «քանականությունը պահպանելու մեկ այլ միջոց»<sup>90</sup>: Բայց դա արդեն այլ բանականություն է, որի շրջանակներում չի կարելի խոսել «պատասխանատվության» կամ «Վճռի» մասին՝ առանց նկատի ունենալու «թրիչքի» անխուսափելիությունը<sup>91</sup>: Գաղափարների այս շարքն ամփոփող արդյունքը վերն արդեն հիշատակված ուսուցիան է «փոկիչ չակնկալող մեսիանիզմի անհորիզոն սպասման..., ինքնիշխանություն չունեցող ազատության..., ոչ իր օրենքն առանց ստրկանալու ընդունելու» վերաբերյալ:

Այս յուրակերպ սպասումն է (չասելու համար՝ հավատը), որ միավորում է Դերիդային և Յայդեգերին, որոնցից յուրաքանչյուրը շարժվում է նոր մտածողության սեփական տարբերակին ընդառաջ՝ պատրաստ նրան, որ գուցե «պահանջվի երեք հարյուր տարի, որպեսզի այն սկսի աշխատել»<sup>92</sup>:

<sup>89</sup> Ասվածք մկատի ունենալով, իմաստ ունի «իր անվանն արժանի իրադարձությունը», հայդեերյան նոուշին համապատասխան, տառադարձել որպես «իրա-դարձություն»:

<sup>90</sup> Նույն տեղում, էջ 208:

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 194: Այսպես, օրինակ, արդար վճիռը հնարավոր չէ հաշվարկող բանականության միջոցով մակարենել իրավական դրույթների անբողջությունից: Նույն տեղում, էջ 201:

<sup>92</sup> Զննէ. «Беседа сотрудников журнала “Шпигель” Р. Аугштайна и Г. Вольфа с Мартином Хайдеггером 23 сентября 1966 года», в кн.: *Философия Мартина Хайдеггера и современность*, էջ 245:

## ՎԵՐՁԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ Դասկացման անխուսափելիությունը

Բանն այն չէ, որ նստենք և սպասենք, թե ինչ միտք է ծագելու ինչ-որ մեկի գիշում 300 տարի հետո, այլ այն, մերկա դարի հազիվ մտածված կարևորագույն դիմագծերից ելնելով փորձենք, առանց հավակնելու մարգարեւթյան, մտովի կանխատեսել ապագան: Ստուգողությունն անգործունեւթյուն չէ: այն իմքնին արդեն գործողություն է, որ երկխոսության մեջ է աշխարհի ծակատագրի հետ:

Մ. Հայդեգեր

Երբմենստիկական մտքի պատմությանը նվիրված այս դրվագներուն փորձեցինք ներկայացնել «հասկացման» բներևույթի իմաստավորման իհմնական փուլերը: Ուղին հարթ չէր՝ երբեմն գերծանրաբեռնված (հեղինակը գիտակցում է դա) մասնագիտական խորին եզրերով, բացորոշումներով և տարանջատումներով: Որպես վերջաբան ծևակորվող այս տողերը չեն նախատեսում նոր անդրադարձ արդեն ասվածին: Երկասիրության առանցքային ուղղությունների հակիրճ՝ «վերջաբանային» ամփոփումը գործնականուն անհնար է, նաև անհմաստ՝ ճանապարհը, որ անցել ենք, ներկայանում է որպես կրթություն գաղամերյան իմաստով՝ նրանուն միավորված են ընթացքը և արդյունքը: Գործի եռությունը «սեղմագրող» բանաձևումներն այստեղ շատ բան ավելացնել չեն կարող:

Բայց ահա մի քանի խոսք՝ այս՝ զուտ ակադեմիական թվացող փիլիսոփայական ուղղության սոցիալական և քաղաքական աղերսների և հետևությունների մասին:

Փիլիսոփայական հերմենստիկայի պատմության դրվագները քայլ առ քայլ անցնելով, տեսանք, թե ինչպես է նրա իհմնադիր հայրերի՝

Ֆրիդրիխ Շլայերնախերի և Վիլհելմ Դիլբայի ինքնավստահ և փոքր-ինչ միամիտ լավատեսությունը՝ կապված ոչ միայն ինացարանական և մեթոդաբանական ճվաճումների, այլև այն համոզմունքի հետ, որ իրենց մշակած հղացքը եկել է փառահեղորեն միավորելու և վերջնականապես լրացնելու «եվրոպական մարդկության հոգևոր աշխարհի» համապարփակ պատկերը, հետագա զարգացման ընթացքում, գնալով, փոխակերպվում է խորունկ մտահոգության: «Զուտ փիլիսոփայական» վերլուծությունների հետ մեկտեղ ի բաց են դրվում արդիական հասարակության ներքին օրինաչափություններից բխող նեգատիվ միտունները՝ մարդկային հարաբերությունների համատարած տնտեսականացումը, բանականության հանգեցումը տեխնիցիստական «ratio»-ի, այն բոլոր ախտանշանները, որոնք անհանգստություն են առաջացնում մողեռնի ծակատագրի համար: Դա նկատելի է ոչ միայն հերմենաստիկական փիլիսոփայության գագարնային ֆիգուրների՝ Մարտին Շայդեգերի կամ Շանս-Գերոգ Գաղամների ինտելեկտուալ կառույցներում, այլև հերմենաստիկայի դեմ «սատանայի փաստաբանի» դերը ստանձնած ժակ Դերիդայի երկերում, որի հետարդիական էպատաժը, ինչպես տեսանք, կրում է նույն մտահոգության կմիջը և շատ շուտով փոխարինվում է ելքի փնտրութով:

Արևմուտքի փիլիսոփայության ծիրում իրականացվող այս ինքնառեֆեքտիկան, արևմտյան հասարակության այս անողոք ինքնաքննադատությունը, մեզ՝ սեփական հասարակության մեջ նույնանան խնդիրների հետ բախվող և դրանց աղբյուրը մեզնից դուրս փնտրել գերադասողներիս համար կարևոր է նաև, որպեսզի հասկանանք, որ զարգացած արդիականության հասարակությունները՝ իրենց «քաղաքական կոռեկտությամբ» հանդերձ, մեզնից պակաս չեն գիտակցում ստեղծված իրավիճակի բարդությունը և առավել հետևողական են նրա ահազնացող հետևանքների վերլուծության գործում:

Դա առնվազն նշանակում է, որ քսանմեկերորդ դարում ապրողներիս առջև ծառացած բարդագույն խնդիրների լուծման համար չպետք է փորձել կանգնեցնել ժամանակը կամ առավել ևս՝ շոշել այն, «ոգեգորուկ Արևմուտքին» հակադրելով ավանդական հասարակությունների «քարձը հոգևոր», իրականում՝ միամիտ պատկերացումները, կամ պարզունակ ինքնագործամբ ենթադրել, որ հետարդիական մարդկության մարտահրավերներին հնարավոր է դիմակայել նոր կայսերա-

պաշտությամբ, իսկ հետարդիական ամենաթողության մթնոլորտը հաղթահարել մինչարդիական «արժեհամակարգի» երեսպաշտ պարտադրանքով: Եվ, որ առավել տարօրինակ է, անբնական փորձեր կատարել բացատրելու Եվրոպացիներին «Եվրոպայի իսկական էռթյունը»:

Մանավանդ որ գիտենք՝ «նախա-մոդեռնը» մեծ հաջողությամբ փոխ է առնում ինչպես մոդեռնի ստեղծած բյուրոկրատական մեքենայի լծակները, այնպես էլ հետմոդեռնի մշակած զանգվածային ներգործության միջոցների գինանոցը՝ անսահմանորեն տարածելով իր «նախա-բանական» պատկերացումները, ցինիկ ծայրահեղության հասցնելով մերկապարանոց փողատիրության ամենավատքար կողմերը, անապատացմելով<sup>1</sup> իրեն ենթակա սոցիալական տարածքները, վերածելով դրանք կաֆեյան ֆանտասմագորիկ և աճայի լանդշաֆտների:

Ինչո՞ւ է սա ասվում: Որպեսզի գիտակցենք, որ խնդիրն ընդհանուր է ողջ մարդկության համար: Դա բանականության արժանապատվության վերականգնումն է, նրա փրկությունը՝ ինչպես արդիականության բացասական միտումները «ոոռ թևս սլեռ»-ի հասցրած հետմոդեռնից, այնպես էլ սեփական հիմքերի բանական իմաստավորման փուլը թևակոհել չկարողացած (նաև դրա ցանկությունը չունեցող) նախամոդեռնից:

Նոր մտածողությունը չի կարող անմիջականորեն մակարերվել ոչ մեկից, ոչ էլ մյուսից: Այստեղ հակացման նոր որակ է պահանջվում: Եվրոպական հերմենստիկական մտքի հայերեն վերապատճենված և «հայ բանականության» ծիրում իմաստավորված պատմությունը, որը, արդեն իսկ դրա շնորհիվ, նաև մեր մտքի փորձառությունն է, որոշակի ազդակներ է տալիս այդ որոնումներին:

Ընթերցողը, անշուշտ, նկատել է, որ սույն երկասիրության կառուցվածքում Յայդեգերի հղացքը կենտրոնական՝ հավաքող, իմաստավորող և նոր ճառագայթումներ հնարավոր դարձնող կիզակետի դեր է կատարում: Բացատրությունն այն է, որ Յայդեգերի շնորհիվ հասկանալը դադարել է դիտարկվել բացառապես որպես մարդուս իմացական կարողություններից մեկը կամ որպես հումանիտար իմացությունն ապա-

<sup>1</sup> Մեկնարանելով Նիցշեի խոսքը՝ «Անապատն ածում է: Վայ ճրամ, ով իր մեջ անապատ է կրում», Յայդեգերը հիշեցնում է, որ «անապատացումն ավելին է, քան ոչնչացումը», քանի որ «ոչնչացումը վերացնում է միայն մինչ այժմ աճածն ու կառուցվածը, քայլ անապատացումը արգելակում է ապագա աճը և անհնարին դարձնում որևէ կառուցում» (M. Heidegger, *Was heißt Denken?*, Reklam, Stuttgart, 1992, S. 18):

հովող շատ կարևոր ընթացակարգ կամ մեթոդ, այլ իմաստավորվել է որպես մարդու կազմորոշ բնորոշում: Դրանով Հայդեգերը Արիստոտելի, Կանտի, Ֆենելի, Մարքսի և այլոց կողքին տվել է մարդկային բնությանը վերաբերող սեփական՝ պարզ և պարտավորեցնող պատասխան՝ մարդը հասկացող էակ է:

Եթե դա այդպես է - իսկ դա, առնվազն Հայդեգերի նկատի ունեցած համատեքստում, անշուշտ այդպես է - ապա ճիշտ է նաև այն համոզմունքը, որ քանի մարդը կա աշխարհում, հասկացման ձգտումն անխուսափելի է: Պահում, որը սակայն չի նշանակում, որ հասկացումն ինքն իրեն է տեղի ունենում: Այդ մասին, հիշում ենք, գգուշացրել է դեռևս Շլայերմախերը: Հայդեգերյան հավելումն այն է, որ հասկացման ջանքը ոչ միայն մտածելուն և խոսելուն է վերաբերում, այլ, նախ և առաջ, աշխարհում լինելուն: Այստեղից եզրակացություն՝ աշխարհում լինելն էլ ինքն իրեն տեղի չի ունենում: Բայց պարադոքսն այն է, որ աշխարհում լինելու Հայդեգերի պահանջած կերպը՝ արթում լինելը, բոլորովին էլ չի ենթադրում, որ մարդ պետք է Հայդեգերի կամ սույն գրության մեջ ներկայացրած այլ հեղինակների անմիջական հետնորդը դառնա:

Հերմենևստիկայի խնդիրը միայն այն չէ, որ ընթերցողը հասկանա այն, ինչ ինքը՝ հեղինակն է հասկացել – նրա խնդիրը խոսակցին հասկանալ սովորեցնելն է: Այս առումով է, որ հերմենևստիկական աշխատանքը՝ որպես մտածողություն և կենսակերպ, հանդես է գալիս որպես սոկրատյան աշխատանքի անմիջական շարունակություն – երկուսն էլ ի բաց են դնում հասկացման անխուսափելիությունը:

06.10.2014

Երևան





**ԲԱՌԱՐԱԾ**  
**ՀԻՇԱՏԱԿՎՈՂ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱԿԱԸ ԵԶՐԵՐԻ<sup>1</sup>**

**Ալեթեյա (ալիթեյա)** - հունարեն՝ «ան-քաքույց», «ակն-հայտ»: Ան-քաքույց լինելը, ըստ Արիստոտելի, գոյավորի բնորոշումն է: // Հայդեգերն այդ եզրի միջոցով ցանկացել է հասկանալի դարձնել իսկության բներևութաբանական ըմբռնումը, որը սկզբունքորեն տարբերվում է ծննդրտության՝ որպես մտքի և իրականության համապատասխանության ավանդական հղացքից: Նա համարել է, որ այն, ինչ բներևութաբանության մեջ իրականանում է որպես բներևության ինքն-իրեն-հիայտ-թերելը, ի սկզբանե մտածվել է հույների կողմից որպես Ալիթեյա, այսինքն՝ **աշխարհում** հանդիպող գոյավորի անքաքույցություն, ինքնարացահայտում, նրա ինքն-իրեն-ցույց-տալը: // Յետագայում «ալեթեյան» հարաբերության մեջ է որպես ներկայության հետ, դիտարկվելով որպես վերջինիս գոյակերպը՝ ներկայությունը, ինքն իրեն ի բաց դնելով, նպաստում է գոյավորի բացահայտմանը:

**Անդունդ, ան-դունդ (Abgrund, ab-gründig)** - Հայդեգերը շրջադարձից հետո իր մտածողությունը բնորոշել է որպես հիմք չումեցող՝ «ան-դունդ» մտածողություն, սրանով ընդգծելով դրա որքան սրափ, նույնքան էլ արկածախնդիր՝ «անդունդի վրայով շարժվող» բնույթը: // Եզրն առաջարկվել է, նկատի ունենալով, որ գերմաներեն «Abgrund»-ի ուղիղ թարգմանությունը հայերեն «անդունդ»-ն է, որը, ըստ Աճառյանի, կազմված է «ան» բացասականով «դունդ» («հատակ») բառից և լիովին համընկնում է մի շաբթ լեզուների նույնինաստ բառերի, այդ թվում՝ ռուսերեն «ճեզ-ճառ»-ի հետ: Անդունդը նախորդում է հիմքին՝ որպես

---

<sup>1</sup> Սուզ տառատեսակով նշված եզրերին բառարանում նվիրված են առանձին հոդվածներ:

Վերջինիս «բացա-կայում» (Ausbleieben): Այն բացության է բերում հիմքը այնպիսի դատարկության մեջ, որում երևակվում է նախասկզբնական «լուսանցքը» (Lichtung): // Դերիդայի փիլիսոփայության մեջ անդունդը («անհիմք»-ը) իգականության բնորոշումն է:

**Անկում (Verfallen)** - ներ-կայության հեռացումն է իր իսկական, արթուն գոյակերպից, նրա ընկղոնվելը բոլորի մեջ: Ունի նաև «փշանալու», «քայլայվելու», «այլասերվելու» իմաստ, բայց չպետք է հասկացվի կրոնական՝ «մեղքի մեջ ընկղոնվելու» առօւնով, քանի որ խոսքը ինչ-որ մաքուր, կատարյալ վիճակից դուրս ընկնելու մասին չէ: Անկումը ներկայության արտակայական բնորոշումն է և չի կարող մեկնաբանվել գոյական նակարդակով՝ որպես «լավ» կամ «վատ»:

**Անձնավորություն (Person)** - ինքն իր սահմաններից դուրս եկող, ինտենցիոնալ, պատմական գոյ, ներ-կայության բնորոշումներից մեկն է:

**Աշխարհ (Welt)** - գոյաբանական տեսակետից աշխարհը ոչ թե առկա գոյերի բնորոշումն է, այլ ներ-կայությանը հատուկ գծերից մեկը: Մրանից ելնելով՝ Քայդեգերը ներ-կայության գոյությունն անվանում է «աշխարհական», իսկ ոչ ներկայական գոյերի գոյությունը՝ «աշխարհամեջ»: «Աշխարհը» չպետք է նույնացվի «բնության» հետ: Վերջինս հնարավոր աշխարհամեջ գոյավորի գոյության սահմանային ծևան է: // Ըստ Գաղամերի՝ «աշխարհ ունենալ» նշանակում է աշխարհին որոշակի կերպով հարաբերվել: Դրա համար պահանջվում է ազատության որոշակի աստիճան, որը մարդուն տարանջատում է իր անմիջական շրջակայից: Աշխարհը պետք է սկզբունքորեն տարբերել շրջակա միջավայրից (Umwelt), որը հատուկ է նաև կենդանիներին:

**Աշխարհում-լինել (In-der-Welt-sein)** - եզրը նշանակում է մարդու և աշխարհի նախնական միասնությունը, որի համեմատ առանձին վերցրած «մարդը» և «աշխարհը» ուշ վերացարկումներ են:

**Ապրիորի (a priori)** - «այն, ինչ նախորդում է»: Կանտի մոտ մարդկային բանականությանը հատուկ, փորձից անկախ իմացական ծներ են, որոնց միջոցով կարգավորվում է օգայություններում տրված բազ-

մազանությունը: // **Բներևսութարանական** մեկնաբանության մեջ ապրիորին չի սահմանափակվում սուբյեկտիվի ոլորտով: Դանաձայն Շայդեգերի՝ ինչպես իրական, այնպես էլ իդեալական առարկաներում ինչ-որ բան կա, որ կառուցվածքային առումով գոյություն ունի ապրիորի՝ նախորդում է մնացյալին: Ապրիորին գոյությունը ինքն է. այն ո՞չ իմանենտ է, ո՞չ տրամացենիթենտ: Դա սուբյեկտիվն ու օբյեկտիվը միավորող ունի վերսալիա է: Ապրիորին պարտադիր հիմնավորված է որևէ գոյի մեջ, որում ինքն-իրեն-ցույց է-տալիս:

**«Ապրում – արտահայտություն – հասկացում» (Erleben – Ausdruck – Verstehen)** - այս երեք հասկացություններից բաղկացած շղթան առանցքային է Դիլբայի **հերմենուստիկայի** համար: Ներքին կյանքի նկարագրության վրա հենվող հումանիտար հետազոտությունը չի կարող իրականացվել անմիջապես ապրումի պահին: Նույնիսկ **ինքնակենսագրությունը** շարադրելու համար պետք է «նորից ապրել» (վերապրել, nacherleben) անցյալում տեղի ունեցածը: Ինչպես վերապրողին, այնպես էլ օտարին հասու դառնալու (ակտուալանալու) համար ապրումը պետք է ամրագրված լինի որոշակի լեզվական **արտահայտության** մեջ: Վերջինիս հասկացումը մեկ այլ սուբյեկտի կողմից ամբողջացնում է իմացության ընթացքը:

**Ապրումներ (Erlebnisse)** - կենսական ընթացքի այն փոքրագույն տարրերն են, որոնք ինքնուրույն նշանակություն ունեն մեզ համար և դրա շնորհիկ առանձին միավորներ են կազմում:

**Առ-դրություն (Gestell)** - **Մետաֆիզիկայի** փուլում մարդու և գոյության հարաբերությունը կառուցված է փոխադարձ հակադրվածության՝ պլանավորման և հաշվարկի վրա: Մարդու և գոյության դեմ հանդիման դրված լինելը Շայդեգերն անվանում է առ-դրություն:

**Արթուրություն (Wachheit)** - գոյակերպ, որն ընկղմված չէ բոլորին հատուկ միջինության մեջ և բաց է գոյության առջև: Իրենով պայմանավորում է **ներ-կայության՝** ավանդության հետ հարաբերվելու իսկական կերպը: Արթուր ծնուվ հասկանալ ավանդությունը նշանակում է կազմագերծել այն: // Եզրը քրիստոնեական ծագում ունի, կապված է սրա-

փության, նաև հսկելու զաղափարների հետ: Տե՛ս՝ հայերեն «զվարք», որը նույնպես արտահայտում է «արթուն հսկման» իմաստը (հնմտ. «Զվարքնոց»):

**Արկանվածություն (Geworfenheit)** - Վերջավոր ներ-կայությունը, ըստ Յայդեգերի, արկանված է աշխարհ, այսինքն՝ միշտ գտնվում է կոնկրետ պատճական պայմաններում և, հանձն առնելով այս կամ այն հնարավորությունը, ձեռնարկ է իրականացնում՝ այստեղ և հիմա:

**Արվեստաբնույթ (Kunstmäßigkeit)** - Հերմենատիկան գործ ունի երկու անվերջությունների՝ անսպառելի լեզվի և անսպառելի մտածողության հետ: Այն թեև ենթարկվում է բացորոշվող կանոնների, սակայն չի կարող մեխանիկացվել, քանի որ կանոնների հետ մեկտեղ տրված չեն դրամց կիրառության կանոնները: Այդ պատճառով է, որ մեկնությունը արվեստաբնույթ գործունեություն է և նեկանողից պահանջում է մնջահմտություն: Սակայն հասկացման արդյունքը չպետք է արվեստի երկ լինի՝ հերմենատիկան ոչ թե արվեստ է, այլ արվեստաբնույթ ուսմունք:

**Արվեստաբնույթ ուսմունք (Kunstlehre)** - Ծլայերմախերը գտել է, որ ընդհանուրը կարող է իրականանալ երկու ծևով՝ մտածողության՝ որպես բոլորին պատկանող ընդհանրական բովանդակություն, և խոսքի՝ որպես մեկ անհատականությունից դուրս եկող և մեկ ուրիշի սեփականությունը դարձող իրական շարժում: Վերջինիս համապատասխանող իմացական բնագավառները կառուցված են արվեստի սկզբունքներին համապատասխան և կոչվում են արվեստաբնույթ. «ինչպես բնագիտությունից պետք է բխեն բոլոր գիտությունները, նույն ծևով էլ եթիկայից՝ բոլոր արվեստաբնույթ ուսմունքները»:

**Արտակայական (existenziel)** - ներ-կայության այն բնորոշումներն են, որոնք կապված են նրա նախավերդուժական՝ գոյական կազմության հետ:

**Արտակայութենական (existenzial)** - մակարդակ, որում իրականացվում է ներ-կայության վերլուծական, գոյաբանական նկարագրությունը:

**Արտակայություն (Existenz)** - Ներկայությանը հատուկ գոյակերպ, որը բնորոշվում է դեպի դուրս ուղղողությամբ լինելու, սեփական սահմանները մշտապես հատելու, «իմքն իրենից այն կողմ անցնելու» միտումով: Գիտակցության մակարդակով դրսևորվում է որպես **ինտենցիոնալություն:** // Առաջարկված թարգմանությունը ելնում է Հայդեգերի այն ցուցումից, որ «Existenz»-ը փիլիսոփայական առումով չի կարելի հասկանալ որպես «գոյություն». քանի որ եզրը վերաբերվում է իմքն իրենից դուրս գտնվող գոյին, ավելի ճիշտ է խոսել նրա «չգոյության» (Hinausstehen), քան գոյության մասին:

**Ավանդություն (Tradition, Überlieferung)** - ավանդության միջոցով փոխանցվում է **եղելությունը:** Ներկայությունը հանձն է առնում պատմական ավանդությունը որպես այնպիսի ճակատագրական հնարավորություն, որը միևնույն ժամանակ և ժառանգված է, և՝ ընտրված: Այդ կրկնակի՝ «հանձնված լինելու» և «հանձն առնելու» հարաբերվածությունն ավանդությանը (Überlieferung), Հայդեգերը նշանակել է «überliefert <seien>» բառով, որը «ավանդված»-ից բացի նաև «հանձնված» է նշանակում: Ներկայության և ավանդության փոխուրացումը իրա-դարձության բնույթ է ձեռք բերում:

**Բարոյական ուժեր (sittliche Mächte)** - գերմանական պատմական դպրոցի հիմնադիր L. ֆոն Ռամկեն ցույց է տվել, որ պատմության իմաստը ոչ թե պատմական գործիքների նպատակներով և նախասիրություններով է որոշվում, այլ պատմական գործողություններով, որոնք իրականացնում են միջավայրի հետ փոխազդեցության մեջ գտնվող պատմական ուժերը: Վերջիններս կանխաձևված են դիմակայող իրականությամբ և չեն կարող դիտարկվել որպես ինքնարավ սուրյեկտուներ: Յ. Գ. Դրոյգենի մոտ պատմության մեջ գործող ուժերը կապվել են **համայնական բարքերի** հետ (գերմաներենում «Sitte»-ն ոչ այնքան անհատական էրոսին է վերաբերվում, որքան համայնական բարքերին) և կոչվել են **բարոյական ուժեր:**

**Բացատրող գիտություններ (erklärende Wissenschaften)** - ելնում են միանշանակ որոշված տարրերի սահմանափակ քանակությունից (ամբողջության մասերից), փորձելով դրանց միավորել պատճառա-

հետևանքային կապերով շաղկապված ամբողջի մեջ: Այդ նպատակով առաջադրում են վարկածներ, որոնք հետագայում հաստատվում կամ հերքվում են: Ցուրաքանչյուր բացատրող գիտության հիմքում վարկածների համակցություն է ընկած: Տե՛ս հասկացող գիտություններ:

**«Բացատրություն – հասկացում» այլընտրանքը (Erklären: Verstehen – Kontroverse)** - ծնակերպում, որի ներքո Կ.-Օ. Ապելը քննել է աշխարհի տեսական յուրացման ուղղված պատճառական-վերլուծական ratio-ի և մարդկային գործունեության հասկանալիության ուղղված նպատակ-միջոցի ռացիոնալության հակադրության պատճության երեք փուլերը: Ապելն այն կարծիքն է հայտնել, որ հայդեգեր-գաղամերյան հերմենուստիկան հիմքեր է ստեղծել այդ հակադրության հաղբահարման համար, քանի որ ցույց է տվել, որ բնագիտության փորձի կատեգորիալ յուրացումը մտածելի չէ առանց մարդու կենսական-գործնական աշխարհում-լինելու և վերջինիս լեզվական հասկացման նկատմամբ իրականացվող ռեֆլեքսիայի:

**Բնական դիրքորոշում (natürliche Einstellung)** - Հուսեռլի մոտ կենսաբանորեն տրված կյանքի (ζώον) մեկնաբանությունն է հոգեբանական կամ ռացիոնալիստական իմաստով՝ որպես «բանական կենդանու» (animal rationale) գործունեություն: Փիլիսոփայությունը պետք է «փակազծի» բնական դիրքորոշումը և կենտրոնանա գիտակցության բներևույթների հոսքի հայեցողության վրա: // Հայդեգերը, սրան հակառակ, բնական դիրքորոշումը դարձուել է փիլիսոփայական հետազոտության ելակետ, բայց դրա տակ այլ բան է հասկացել: Animal rationale-ի գաղափարը, ըստ նրա, ոչ թե բնական, այլ բնագիտական դիրքորոշման արդյունք է. այն մարդուն վերածում է նատուրալիստական հոգեբանության առարկայի, որը կառուցավորվում և բացատրվում է համընդհանուր օբյեկտիվ օրենքների տեսակետից: Բնական (ամեն մի տեսաբանումից առաջ գոյություն ունեցող) դիրքորոշումն, ըստ Հայդեգերի, արտակայող մարդու ներ-կայությունն է աշխարհում:

**Բներևույթ (Phänomen)** - «ինքն-իրեն-իր-մեջ-ցույց-տվողը»: Ի տարբերություն Կանտի, որի ուսմունքում «ֆենոմենը» (երևույթը) հարաբերված է «նոումենին» (էությանը), հուսեռլ-հայդեգերյան բներևութաբա-

**նության մեջ «երևույթի» հետևում որևէ «էություն» թաքնված չէ:** «Ֆենոմենը» ճանաչվում է կատեգորիալ հայեցողության միջոցով՝ որպես «բուն-ինքը»: Դրա համար էլ թարգմանված է բներևույթ՝ «բուն երևույթ»:

**Բներևութաբանություն (Phänomenologie) -** Յեգելի մոտ «գիտություն է մտածողության փորձառության մասին»: // Յուսեռլի համակարգում ուղղված է գիտակցության բներևույթների հայեցող նկարագրությանը: // Յայդեգերի համար բներևութաբանության նպատակը ներկայության՝ որպես արտակայող գոյի, հասկացող գոյակերպի նկարագրությունն է, որի շնորհիվ այն համընկնում է գոյաբանության և հերմենևտիկայի հետ:

**Բնության մասին գիտություններ (Naturwissenschaften) -** Դիլբայի համակարգում նույն են, ինչ բացատրող գիտությունները: Տվյալ բնորոշման յուրահատկությունն այն է, որ գիտությունների այդ խումբը բնորոշվում է ըստ դրանց առարկայի և ոչ մեթոդի, որ հատուկ էր նորկանատականության բարենյան դպրոցի նույնանման բաժանման համար: Տե՛ս նոմոտետիկ գիտություններ:

**Բոլորը (Man) -** նշանավորում է ներկայության անհսկական գոյությունը անդեմ «ուրիշների» շրջապատում: Այդ արհեստական եզրը Յայդեգերը ստեղծել է, ծևափոխելով քերականական երրորդ դեմք արտահայտող «man» մասնիկը, որը գերմաներենում օգտագործվում է, երբ գործողություն կատարողի անձն անորոշ է մնում (man sagt՝ ասում են, man denkt՝ կարծում են): Մեծատարի ներմուծումը հնարավոր է դարձնում բառացի ընթերցումը՝ «Ման»-ը ասում է, «Ման»-ը կարծում է: Եվ քանի որ կրկնակի ո-ով գրված Manող մարդ է նշանակում, անդեմության արտահայտությունը կատարյալ է դառնում՝ բոլորը ասում են, բոլորը կարծում են: Բոլորի շրջանակում հաղորդակցման հիմնական ծնը «ասեկուեն» է (Gerede):

**Գոյ, կամ գոյավոր (Seiendes) -** բառացի՝ «գոյող»: Այս եզրով Յայդեգերը նշանակել է գոյություն ունեցողի ողջ թագմազանությունը: Տե՛ս գոյություն:

**Գոյարանական (ontologisch)** - ներկայացնում է **գոյության** իմաստին վերաբերող տեսական հարցադրումների մակարդակը: Տե՛ս **գոյական**:

**Գոյարանական տարրերություն (ontologische Differenz)** - տարրերություն գոյության և գոյի միջև: Դայդեգերի փիլիսոփայության առանցքային դրույթներից է: Այդ տարրերության անտեսումը բնորոշված է որպես **գոյության մոռացություն**: Դրա արդյունքը արդիականությանը հատուկ սպառողական վերաբերմունքն է աշխարհի նկատմամբ: // Ավանդական փիլիսոփայությունը և աստվածաբանությունը գոյի և գոյության այդպիսի խիստ բաժանում չեն ճանաչում: Նաև հայերենում **գոյը** նշանակում է միաժամանակ և՝ **գոյություն ունեցող**՝ «որ գոյ իրօք, գոյակ, է, որ էն», և՝ **Աստված**՝ «ամենայն ինչ նովայ գոյացեալ», և՝ **սուրստանց**՝ «գոյ, մանավանդ՝ գոյք», իր մեջ միավորելով «տό όν»-ը և «όνσία»-ն, «εν»-ը և «*substantia*»-ն: Այս եզրերի տարրերակումը հաշվի առնող հայերեն թարգմանությունը ելնում է նրանից, որ **գոյը** գոյություն ունեցողն է, իսկ **գոյության** «-ություն» վերջավորությունը ցույց է տալիս նրա գոյարանական տարրերությունը բոլոր գոյավորներից: «Գոյություն – գոյ» հասկացութային գույզը թույլ է տալիս պահպանել հայդեգերյան «*Sein – Seiendes*» երկանդամ կոնստրուկտի նույնարձատ կառուցվածքը և իրական բովանդակությունը: Այս նաև համապատասխանում է «օնսίա» – «տό όν» գույզին հունարենում:

**Գոյարանություն (Ontologie)** - ուսմունք գոյության մասին: Դայդեգերի փիլիսոփայության առաջին փուլում մշակված հիմնարար գոյարանությունը հանդես է գալիս որպես **ներ-կայության** արտակայութենական անալիտիկա և որպես այդպիսին համընկնում է բներևութարանության և հերմենևտիկայի հետ:

**Գոյական (ontisch)** - վերաբերվում է **գոյերին** կամ **գոյավորին**: Դատուկ դեպք է **ներ-կայությունը**, որն ի տարրերություն բոլոր մյուս գոյերի, ոչ թե կա **գոյորեն**, այլ կա՝ **գոյությունը հասկանալով**: Շնորհիվ իր գոյահասկացման՝ **ներ-կայությունը** հանդես է գալիս որպես գոյ, որի գոյական առանձնահատկությունը գոյարանորեն լինելն է: Ներ-կայու-

թյան այդ երկակի կարգավիճակը Յայդեգերը բնորոշել է որպես ճախագոյարանական:

**Գոյության մոռացություն (Seinsvergessenheit)** - հատուկ է մետաֆիզիկայի դարաշրջանին, երբ գոյության հանգամանքն անտեսվում է և աշխարհը ընթանվում է որպես զուտ գոյերի ամբողջություն: Ծրջադարձից հետո «գոյության մոռացության» փոխարեն Յայդեգերը խոսում է մարդու՝ «գոյությունից լքված լինելու» մասին (Seinsverlassenheit):

**Գոյություն (Sein)** - բոլոր գոյերին հատուկ գոյության հանգամանքն է, որը չի նույնանում առանձին գոյավորների հետ, բայց նաև չի գտնվում դրանց հետ սեղի և տեսակի հարաբերության մեջ: Գոյությունը չի կարող դիտվել որպես «ողջ գոյություն ունեցողի հիմք» ինչպես քրիստոնեական Աստծո, այնպես էլ փիլիսոփայական «սուբստանցի» իմաստով: Յայդեգերի փիլիսոփայական զարգացման առաջին շրջանում գոյությունն իմաստավորվել է՝ **Աեր-կայության**՝ որպես նախնական գոյահասկացմանը օժտված **նմուշ-գոյի** վերլուծական նկարագրությունից ելմելով: Ծրջադարձից հետո փորձ է արվել գոյությունը մտածել իրա-դարձության համատեքստում:

**Գործիք (Zeug)** - գոյ, որը հանդես է զալիս որպես որևէ բան անելու միջոց՝ սարք կամ հարմարանք: **Գոյություն և ժամանակում կոչված** է շեշտել գոյավորին վերաբերելու գործնական կերպի առաջնայնությունը տեսականի նկատմամբ:

**Եղելություն (Gewesene)** - ժամանակի երեք մոդուսներից մեկն է: Յայդեգերը կարևոր է համարել տեսմել տալ, որ խոսքն այստեղ մեռյալ, անցած գնացած «անցյալի» մասին չէ (Vergangenheit), այլ Աերկան իրենով պայմանավորող իրողության, որին հոժարակամ տրվում է **Աեր-կայությունը**:

**Ընթացք դեպի մահը (Vorlaufen zum Tode)** - **Աեր-կայությունն** իր ծննդյան օրից մոտենում է մահվանը: Բայց մահն արտաքին պատճեց չէ, որին հասմելով ընդհատվում է կյանքը: Դա Աեր-կայության նշտապես առկա անշրջանցելի հնարավորությունն է: Մահվան անշրջանցե-

լիության գիտակցումը (ներ-կայող մարդու գոյությունն ի մահ) կոչված է ոչ թե սարսափներ ծնելու, այլ հնարավորություն տալու ընկալել կյանքն իր ամբողջականության մեջ և դրանով իսկ հնարավոր դարձնել գոյության էքզիստենցիալ (արտակայող) հասկացումը:

**Ընծած (le don)** - Ընծածի գաղափարի միջոցով Դերիդան փորձել է հակակշռել արդիականությանը բնորոշ տնտեսական փոխանակումների տրամաբանությունը՝ «զուտ ընծան» անշահախնդիր է և պատասխան նվիրաբերություն չի պահանջում:

**Ընկերություն (l'amitié)** - «թշնամու» հասկացությանը, որով Կ. Շմիտի նոտ կազմորոշվում է քաղաքականի ոլորտը, Դերիդան հակադրել է «ընկերոց» հեղացը՝ որպես քաղաքականության այլընտրանքային մոդելի ատաղձ: Վկայակոչելով Արիստոտելի միտքն այն մասին, որ ընկերությունն արդարության կարիք չունի, նա եզրակացրել է, որ ընկերությունն ինքնին արդար է՝ դա արդարություն է արդարությունից առաջ:

**Ժամանակայնության էքստազները (Ekstasen der Zeitlichkeit)** - ժամանակայնության հիմնարար բնորոշումը «ինքն իրենից դուրս»-ն է: Մրան համապատասխան՝ ժամանակայնության երեք մոդուլները՝ եղելությունը, ներկան և ապագան, կոչվում են էքստազներ (արտակայումներ): Վերջիններս հանդես չեն գալիս առանձին-առանձին, հաջորդելով միմյանց: Ապագան ավելի ուշ չէ, քան եղելությունը, և սա ավելի շուտ չէ, քան ներկան: Բայց դրանք նաև չեն գումարվում՝ «ամբողջացնելով ժամանակը»: Յուրաքանչյուր էքստազում ժամանակայնությունը ժամանում է ամբողջությամբ՝ որպես «եղած-ներկայող ապագա»:

**Ժամանակայնություն (Zeitlichkeit)** - հնարավոր է դարձնում արտակայության, փաստականության և անկումի միասնությունը և դրանով կազմավորում է հոգսի կառուցվածքի ամբողջականությունը:

**Ժամանակայնությունը ժամանում է (die Zeitlichkeit zeitigt sich)** - ժամանակը գոյ չէ, ինտևաբար հիմք չկա խոսելու նրա գոյության մասին: Փոխարենը Յայդեգերն օգտագործել է zeitigen բառը, որն առօրյայում նշանակում է «հասունացնել» (օրինակ՝ գինին պետք է հասու-

նանա, և դրա համար ժամանակ է պետք): Այդպիսով՝ «die Zeitlichkeit zeitigt sich» արտահայտությունը կնշանակի՝ «ժամանակայնությունը հասունանում է»: Մյուս կողմից, «zeitigen»-ի մեջ ընկալելի է նաև բառացի «ժամանակել» իմաստը: Այդ երկուսը հնարավոր է միավորել հայերեն «ժամանակայնությունը ժամանում է» արտահայտության մեջ:

**Ժամանակը որպես տրամսցենդենտալ հորիզոն (Zeit als transzendentaler Horizont)** - ժամանակը Հայդեգերի նախագծում տրամսցենդենտալ է այն իմաստով, որ հնարավոր է դարձնում գոյության մեր փորձառությունը և, միևնույն ժամանակ, կազմում է վերջինիս բովանդակությունը: Բայց քանի որ ժամանակը ընթացք է, նրա տրամսցենդենտալությունը ներկայանում է ոչ թե որպես ապրիորի բառիս ընդունված (ստատիկ) իմաստով, այլ որպես հորիզոն, որում քայլ առ քայլ ի բաց է դրվում գոյությունը: Ժամանակի տրամսցենդենտալ հորիզոնում հավասարապես ճանաչելի են ինչպես «փորձառությանը ձև տալու» կանույան, այնպես էլ «սեփական սահմաններից դուրս գալու» հայդեգերյան գործառույթները:

**Ժողովրդի բախտը (Geschick des Volkes)** - եզրն օգտագործվում է ժողովրդի եղելությունը նշանակելու համար (անհատական ներ-կայության համատեքստում Հայդեգերը գերադասում է խոսել «ճակատագրի» մասին - Schicksal): «Բախտը», ըստ մտածողի, չի ենթադրում մարդու ենթարկեցումը կույր անհրաժեշտությանը՝ «ֆատումին»: Խոսքը «ճակատագրականի իրական և ազատ իմաստի» մասին է, ահռելի և սահմանադիր նախասկզբնական եղելության, որին տրվում է մահվան հանդեպ ազատորեն բացված ներ-կայությունը:

**Իդիոգրաֆիկ գիտություններ (idiographische Wissenschaften)** - գիտություններ, որոնց նպատակը ոչ թե օրենքների բացահայտումն է, այլ առանձին անկրկնելի իրադարձությունների նկարագրությունը: Փաստական նկարագրությունների անհրաժեշտությունը և համընդհանրությունը ապահովվում են դրանց «գոյություն չունեցող», բայց «նշանակալից» նորմերի՝ արժեքների հետ հարաբերելու միջոցով: Նորկանուականության բաղնյան դպրոցին պատկանող այս եզրը գուգահեռական է Դիլբայի ոգու մասին գիտություններին, այն տարբե-

րությամբ, որ դիտումիան հենվում է ոչ թէ իմացության առարկայի, այլ մեթոդի վրա:

**Ինտենցիոնալություն (Intentionalität)** - Եզրը ծագում է լատիներեն *intention* բառից, որը նշանակում է միտվածություն և կարող է թարգմանվել որպես «ուղղողվածություն դեպի...»: // Հուսեռյան բներևութաբանության մեջ ինտենցիոնալությունը գիտակցության կարևորագույն հատկությունն է: Ամեն մի գիտակցություն դեպի դուրս է ուղղված: Բայց ինտենցիոնալությունը հոգեկան ապրումների հարաբերությունը չէ արտաքին իրերին, այլ այդ ապրումների գոյության ձևը: // Դայդեգերյան բներևութաբանության շրջանակներում այն արտահայտում է մարդու բնական դիրքորոշումը: Գիտակցության ինտենցիոնալությունը, որի մասին խսուում էր Հուսեռյանը, միայն մասնավոր դրսուրումն է մարդու աշխարհում լինելու յուրահատուկ կերպի՝ արտակայության, որի շնորհիվ գիտակցությունը, իմանենու լինելով հանդերձ, այնուամենայիվ միավորված է աշխարհի հետ: Այդպես ըմբռնված մարդն արդեն ոչ թէ առարկա է, այլ անձնավորություն, որի հիմնարար բնորոշումը պատմականությունն է:

**Ինքնակենսագրություն (Autobiografie)** - Դիլբայի մոտ պատմական իմացության հիմնական ծներից է: Հնարավորություն է տալիս պատմական իրադարձությունները հասկանալ դրանց վերապրած և այդ մասին գրավոր տեղեկություններ թողած նշանակալից մարդկանց ներքին աշխարհը ներթափանցելու միջոցով: Տե՛ս փոխադրում: // Ինքնակենսագրությունը միշտ անկրկնելի է, քանի որ մարդկային կյանքի շարժիչ զապանակը դիպվածն է. «Ինքնակենսագրությունը կյանքի մեկնությունն է՝ դիպվածի, ճակատագրի և բնավորության հետ նրա խորհրդավոր առնչություններով հանդերձ քննված»: // Ներմեննատիկական շրջանի պահանջի համաձայն՝ ինքնակենսագրությունը կառուցվում է որպես մասի և ամբողջի զարկերակում: Դա նշանակում է, որ «մարդ պետք է սպասի կյանքի ընթացքի ավարտին և միայն մահվան ժամին կարող է հայացքով ընդգրկել այն ամբողջը, որից ելնելով՝ մասերի հարաբերությունները վերջնականորեն արձանագրելի են դառնում»: Իրականում, սակայն, կյանքի ավարտով կենսագրության մեկնությունը չի վերջանում. պատմությունը և պատմամշակութային ա-

վանդույթը շարունակում են ապրել հեղինակից հետո: Ամբողջականության շրջանակներն ընդլայնվում են, և հասկացման խնդիրն անվերջ է դառնում:

**Իսկական և անիսկական գոյություն (eigentliches und uneigentliches Dasein)** - ներկայությամ՝ «իր բնույթին համապատասխանող» գոյությունը նշանակելու համար Յայդեգերն օգտագործել է «eigentliches» բառը, որ հայերեն կարող է թարգմանվել որպես «բուն ինքը», «իրեն պատկանողը» կամ բառացիորեն «այս՝ ինքն»՝, որոնցից սակայն համապատասխան ածական չի արտածվում: Առաջարկված եզրը՝ **իսկական, գերադասելի** է այնքանով, որ կապվում է **իսկության** հետ: Իսկական գոյությունը «ի նքն է»: // Ներկայության իսկական գոյությունը արտակայությունն է: Անիսկական գոյությունը հատուկ է բոլորին:

**Իսկություն (Wahrheit)** - եզրը հղում է ծշմարտության՝ որպես «քառության» ընբօնմանը, որը ծագում է հայդեգերյան **ալեթեյայից**: Խոսքն այստեղ մտքի և իրականության «ճիշտ համապատասխանության» մասին չէ, այլ երևույթի՝ որպես «բուն ինքը» ի բաց դրված լինելու, «անթաքույց երևակվելու», «իսկապես այդպիսին լինելու»: Գաղամերի հեղացրում «իսկությունը» հակադրվում է բնագիտական **մեթոդին**, որի նպատակն է պատճառահետևանքային կապերի նկարագրության միջոցով արձանագրվող ծշմարտությունը:

**Իրագործում (Geschehen)** - ցույց է տալիս տեքստի և այն մեկնողի փոխադերսվածությունը, մեկնողը ինքը չի ընտրում իր առարկան, այլ ականջ է դնում **ավանդությանը**, որը «գտնում է» նրան: Սրանով ի հայտ է գալիս մեկնողի «պատկանելությունը» (Zugehörigkeit) տեքստին, որի դրսեւորումը ավանդությանը ականջալուր լինելուն է (Hören): Գաղամերի այս եզրն անմիջականորեն աղերսված է հայդեգերյան **իրա-դարձությանը**:

**Իրա-դարձություն (Ereignis)** - ուշ Յայդեգերի փիլիսոփայության կենտրոնական եզրն է, որը կոչված է նշանակելու մարդու և գոյության փոխադարձ յուրացման իրադարձությունը: Ծնորհիվ դրան՝ տեխնիցիստական աշխարհի տիրապետությունը դուրս է մղվում. մարդը և գոյու-

թյունը միմյանց հասանելի են դառնում իրենց էության մեջ, կորցնելով այն բնութագրերը, որ ծեռք էին բերել մետաֆիզիկայի դարաշրջանում: Տես առ-դրություն: // Յայերեն եզրը համարյա անկորուստ փոխանցում է բնօրինակի կրկնակի իմաստը: Մի կողմից, դա այն է, ինչ իրականանում է, որտեղից՝ «իրա-դարձություն», մյուսից, այն նշանակում է յուրացում, որտեղից՝ «յուրա-դարձություն»: Գործող ուղղագրության «յու»-ի փոխարինումը դասական «իւ»-ով թույլ է տալիս չկորցնել առաջին նշանակությունը և պահպանել բարի ընդունված արտասանությունը՝ «իրադարձություն»:

**Լեզու (Sprache)** - ըստ Գաղամերի՝ այն միջավայրն է, որում երևան է զայիս ես-ի և **աշխարհի** փոխապատկանելությունը: Լեզուն ներկայանում է որպես ունիվերսալ **գոյաբանական** կառուցվածք՝ հիմնարար կազմություն այն ամենի, ինչին կարող է ուղղված լինել հասկացումը: Այստեղից՝ Գաղամերի հօչակավոր դրույթը. «Գոյությունը, որ կարող է հասկացվել, լեզուն է»:

**Կազմագերծում (Destruktion)** - Վերջավոր և պատճական անձնավորության ինքնահասկացումը, ըստ Յայդեգերի, կարող է իրականացվել միայն զարտուղի ճանապարհով՝ որպես ոչ թափանցիկ պատճական ավանդության անհատական յուրացում: **Արթուն** ձևով հասկանալ ավանդությունը նշանակում է քննադատել այն, բայց ոչ թե խսպառ ժխտելու, այլ ավանդության ակունքին հասնելու, այն ի բաց դնելու նպատակով: Այդ քննադատությունն իրականացվում է որպես կազմագերծում: Կազմագերծումը ոչնչացում չէ, դա գոյություն ունեցող կառույցի առանձին ոչ հարազատ հատվածների գգուշավոր հեռացումն է, որի շնորհիվ հնարավոր է դառնում բացահայտել նրա անաղարտ նախասկզբնական տեսքը:

**Կազմաքանդում (Deconstruktion)** - Դերիդայի համար կենտրոնական այս եզրը հայդեգերյան կազմագերծումից տարբերվում է նրանով, որ սկզբունքը բացառում է կազմաքանդվող տեքստին հատուկ «արտօնյալ իմաստի» գոյությունը, հետևաբար և դրան հասնելու հնարավորությունը: Կազմաքանդումը անվերջ շարժվում է տարբերությունից տարբերություն, իմաստից իմաստ. այն «մշտապես ներգրված է նույն այն լեզվի տարրի մեջ, որը կասկածի տակ է դնում, նա պար-

փակված է այդ տարրում, նրանում է հասկացվում և, մշտապես, որպես այդպիսին է հասկացվում»:

**Կատեգորիալ հայեցողություն (kategoriale Anschaufung)** - իմացություն, որի ընթացքում ամմիջականորեն ճանաչվում է կատեգորիալը (ընդհանուրը): Վերջինս չի կարող գոյություն ունենալ «մաքուր ձևով», այն անպայման իմանավորված է որևէ գոյի մեջ: Այսպես՝ դեղնությունը հասանելի է միայն առանձին դեղին առարկաների գոյության շնորհիվ: Բայց դեղինի մասին մեր պատկերացումը բազմաթիվ դեղին առարկաներից այդ հատկության վերացարկման և ընդհանրացման արդյունք չէ: Պարզապես դուք նայում եք դեղին աթոռին և նրանում «տեսնում եք» դեղնությունը:

**Կրթություն (Bildung)** - գերմաներեն եզրը նշանակում է ծևավորում, կազմավորում: Պարզ ուսուցումից տարբերվում է նրանով, որ չի սահմանափակվում տեղեկությունների տեխնիկական փոխանցմամբ, այլ սկզբունքային նշանակություն է տալիս գիտելիքի ստացման ընթացքում կրթվողի ծևավորմանը՝ նորա կողմից փորձի ձեռքբերմանը: Կրթությունը նախ և առաջ լինելություն է, որ միավորում է արդյունքը և ընթացքը: Այն ոչ միայն գիտելիքի ստացման միջոց է, այլև ինքնանպատակ:

**Հաղորդակցական հասարակության ապրիորի (a priori der Kommunikationsgesellschaft)** - հասարակության մեջ կուտակված հաղորդակցական միջոցների և եղանակների մշտապես լրացվող ամբողջությունն է, որը նախորդում է յուրաքանչյուր առանձին վերցրած հաղորդակցական գործողությանը և այդ իմաստով տրանսցենդենտալ է: Դրա կրողը «իդեալական հաղորդակցական հանրությունն» է: Դասական տրանսցենդենտալ սուբյեկտի փոխարինումը իդեալական հաղորդակցական հանրությամբ Կ.-Օ. Ապելը որակել է որպես «փիլիսոփայության կերպափոխություն»:

**Հասկացող գիտություններ (verstehende Wissenschaften)** - սրանց հիմքում ընկած է «հոգևոր կյանքի փոխապահությունը՝ որպես ի սկզբանե տրված միասնություն»: Եթե արտաքին աշխարհը հետազո-

## ՀԱՍԿԱՑՄԱՆ ԱԽՈՐԽԱՓԵԼԻՌԻԹՅՈՒՆ

տող բնագիտության համար միասնությունը ճպատակ է, ապա ներքին կյանքին ուղղված հումանիտար ոլորտի համար՝ անմիջականորեն վերապրվող ելակետ: Բնությունը մենք բացատրում ենք, հոգևոր կյանքը՝ հասկանում:

**Հասկացում (Verstehen)** - Ծլայերմախերի մոտ արտահայտում է մտածելու և խոսելու միասնությունը: // Դիլբայի համակարգում իմացական կարողություն է՝ հակադիր բացատրությանը: // Հայդեգերի մոտ ներկայության հիմնարար մոդուսներից է: Ի բաց է դնում ներկայության աշխարհում-լինելը՝ որպես սեփական հնարավորություններից ելնելով ձեռնարկ հրականացնելու կարողություն: Մրա շնորհիվ է, որ հասկացումը ընթանվում է որպես գոյակերպ, իսկ հասկացման մասին ուսմունքն իմաստավորվում է որպես գոյաբանություն: Տե՛ս ֆրոնեսիզ:

**Քերինակություն (Autorität)** - անձնավորություն, որի կարծիքը կշիռ ունի, քանի որ նա գերազանցում է մյուսներին խելքով և դատողությունների սրությամբ: Քերինակությունը չի կարելի պարտադրել, այն հնարավոր է միայն նվաճել: Քերինակության հետ հաշվի նատելը բացասական երևույթ չէ: Պայմանն այն է, որպեսզի հերինակավոր կարծիքը լինի սկզբունքորեն հասկանալի և կարողանա հիմք ծառայել մեր մտքի հետագա ծավալման համար: Տե՛ս նախապաշտումը:

**Քետածում (Différence)** - Դերիդայի հղացքում կապվում է տարբերության երկու ընթանումների երկրորդի հետ: Տեքստի մեկնարանության ժամանակ տեղի ունեցող անվերջ շարժումը տարբերությունից տարբերություն հավերժորեն հետածում է հանդիպումը տեքստի «քուն իմաստի» հետ:

**Քերմենատիկա (Hermeneutik)** - ամենաընդհանուր իմաստով՝ ուսմունք գրական հուշարձանների մեկնության արվեստի մասին: Ծլայերմախերի մոտ ստանում է ունիվերսալ դիսցիպլինի կարգավիճակ, Դիլբայի մոտ վերահմաստավորվում է հումանիտար գիտությունների ընդհանուր մեթոդի, Հայդեգերն այն վերածում է գոյաբանության:

**Ներմենստիկական շրջան (hermeneutischer Zirkel)** - հերմենստիկական մտածելակերպին բնորոշ ամենակայուն և տարածված փոխաբերություն-խորհրդանիշներից է: Դիմքում ընկած է ամբողջը մասերից, իսկ մասերն ամբողջից հասկանալու մեթոդաբանական պահանջը: Այդ պահանջի թվայալ հակասականությունը պայմանավորված է նրանով, որ հասկացման ժամանակ ամբողջի և մասի միջև տեղի ունեցող փոխգործունեությունը անընդհատ շարունակվում է՝ հարստացնելով իմացությունը: Նկատի ունենալով, որ այդ ընթացքում բներները զարգացնում են մինյանց, որոշ հերմենստիկներ գերադասում են խոսել «հերմենստիկական պարույրի» մասին:

**Ներմենստիկայի դրական բանաձև (positive Formel der Hermeneutik)** - Շլայերմախերի հերմենստիկայի հիմնարար դրույթներից է: Կոչվում է «դրական»՝ ի հակադրություն «բացասական սահմանման», որում շեշտը դրվում է ոչ թե հասկացման գործնական ընթացակարգերի, այլ «չհասկանալուց խուսափելու» վրա: Բանաձևում արձանագրված են հասկացվող խոսքին մոտենալու չորս հիմնական եղանակները, որոնցում խոսքը դիտվում է որպես՝ ա) լեզվի առկա վիճակի օգտագործման արդյունք, բ) լեզվի զարգացման նոր ելակետ, գ) ներքին զգացողության փաստ, դ) խոսողի նտքերի հետագա զարգացում:

**Նիմնարար գոյաբանություն (Fundamentalontologie)** - Ներկայության արտակայութենական անալիտիկայի բնորոշումն է: Ներկայության գոյահասկացումը միևնույն ժամանակ նաև աշխարհի և աշխարհում հասու ոչ ներկայակերպ գոյերի հասկացումն է: Դա նշանակում է, որ գոյի տարրերը ոլորտներին վերաբերող գոյաբանություններն ինքնին հիմնավորված են ներկայության գոյական կառուցվածքում և կարող են բիւզվել ներկայության արտակայութենական անալիտիկայից: Սրանով վերջինս ծեռք է բերում հիմնարար գոյաբանության կարգավիճակ:

**Ննջունակենտրոնություն (Փոնոցենտրիզմ, phonocentrisme)** - տեսակետ, ըստ որի՝ արտաքերվող հնչյուններից կազմված կենդանի խոսքն առաջնային է լեզվի՝ որպես գրավոր արձանագրված նշանային համակարգի նկատմամբ: Ըստ Դերիդայի՝ հնչյունակենտրոնությունը լոգոցենտրիզմի (բանականակենտրոնության) ծածկյալ դրսենորումն է:

**Չոգերանական մեկնաբանություն (psychologische Interpretation)** - քերականական մեկնաբանության հետ մեկտեղ տեքստի հասկացման երկու հիմնական մեթոդներից մեկն է: Նպատակ ունի հասկանալ խոսքը որպես հեղինակի մտածողության մեջ իրականացող իրողություն:

**Չոգս (Sorge) - ներկայության արտակայող, ինքն իրենից առաջ ընկնող գոյակերպի անվանումն է:** Կապված չէ որևէ կոնկրետ պրազմատիկական նպատակի նվաճման հետ: Պատմափիլիսոփայական առումով հոգսը ինտենցիոնալության հետագա վերահմաստավորման արդյունք է: Սակայն գոյաբանական տեսակետից հոգսը, որը պայմանավորում է **ներկայության հիմնարար կառուցվածքը**, առաջնային է ինտենցիոնալության նկատմամբ: Չոգսի բացորդշված սահմանումը Գոյություն և ժամանակում հետևյալն է. «**Ինքն-իրենից-արդեն-առաջ-ի-նել-(աշխարհում) որպես գոյություն-(աշխարհամեջ հանդիպակած գոյի)-մոտ»: Տե՛ս և ժամանակայինություն:**

**Հորիզոն (Horizont) - տեսադաշտ, որն ընդգրկում է ամենը, ինչ հնարավոր է տեսնել որոշակի կետից:** Այս փոխարերական եզրը կոչված է ցույց տալու գոյության մեր փորձառության մեջ առկա պոտենցիալ միտումներից ի հայտ եկող նոր ակտուալ հնարավորությունները, որոնցից իրենց հերթին նոր հողումներ են առաջ գալիս: Քանի որ ընթացքն անսպառ է, վերջնական վիճակն այստեղ անհասանելի է հորիզոնի նման: «Ամեն մի փորձառություն հղում է որոշակի տիպայնության, որում հնարավոր է նրա շարունակությունը»: Հորիզոնի հասկացությունը հանդես է գալիս որպես **տրանսցենդենտալ իմացության կանույան հղացքի դիմամիկական կերպափոխություն**:

**Զեռնարկ (Entwurf) - աշխարհ արկանված ներկայության գոյակերպը՝ իրեն հասու հնարավորություններից ընտրություն կատարելով, ապագային միտված ձեռնարկ իրականացնելու է:** Զեռնարկում ի հայտ է գալիս ներկայության գոյահասկացումը: // «Զեռն-արկ»-ը և արկանվածությունը եզրաբանորեն փոխվառակացված են՝ երկուսի հիմքում էլ ընկած է «նետելը», «արկանելը» (werfen):

**Զենիաս (Zuhändenes)** - նկատի ունի մարդուն շրջապատող առարկաների անմիջական հասանելիությունը, դրանց օգտագործելիությունը առօրյայում: Ցույց է տալիս ներկայությամ՝ աշխարհում-լինելու առաջնայնությունը աշխարհի տեսական ընկալման նկատմամբ:

**Մեթոդ (Methode)** - բնական գիտություններին հատուկ ընթացակարգերը, որոնց հիմքում ընկած է գիտական գիտելիքի ապացուցման՝ վերիֆիկացման հնարավորությունը: Գաղամերի հղացքում մեթոդի հմաստային հակարևոր իսկությունն է:

**Մեծահմտություն (Virtuosität)** - մեկնաբանության անհատական արվեստ, որը զարգանում է բանասերների փորձի հիման վրա և ուրիշներին է փոխանցվում մեծ վարպետների և նրանց գործերի հետ անհատական շփման միջոցով:

**Մեկնաբանող նշանային համակարգ (interpretierendes Zeichensystem)** - Խորհրդանշանները կազմակերպող ապարատը մեկնաբանող է, երբ համարվում է, որ անհատական իմաստը հնարավոր չէ հանգեցնել ընդհանուր բանականությանը: Դա իրաժարում չէ ընդհանուրից, այլ գիտակցումն այն իրողության, որ ընդհանուրն իրեն ցուցադրում է անկրկնելի անհատականության մեջ:

**Մեկնություն (Auslegung) կամ մեկնաբանություն (Interpretation)** - բառացիորեն՝ դուրս դնել, մեկնել, փռել: Տեքստի իմաստի բացորշումը նշանակող այս եզրերը Դիլքայն օգտագործում է որպես հոմանիշներ: // Ըստ Յայդեգերի՝ մեկնության միջոցով «հասկացումը հասկանալով յուրացնում է հասկացածը»: Այսինքն՝ մեկնության խնդիրը ոչ թե հասկացածն ի գիտություն ընդունելն է, այլ հասկացման մեջ ձեռնարկված հնարավորությունների հետագա մշակումը:

**Մետաֆիզիկա (Metaphysik)** - հունարեն եզրը՝ «τὰ μετὰ τὰ φυσικά», ցույց է տալիս, որ մետաֆիզիկան ֆիզիկայից դուրս է: Դա անցում է գոյավորի սահմանից այն կողմ, որը, ըստ Յայդեգերի, ընդհանրապես հատուկ է մարդկային բնությանը: Սակայն մետաֆիզիկայի սխալն այն է, որ գոյության մասին խոսելու նրա կերպը դուրս չի գալիս

գոյավորի շրջանակից: Նա հարց է դմում բոլոր գոյերի մասին որպես ամրողություն, բայց հենց դրանով մնում է գոյին կից և չի դիմում գոյությանը որպես գոյություն: Արևատաեւրոպական պատմության մետա-ֆիզիկական բնույթը դրսերվում է նրանում, որ մարդկային զանգվածները դատապարտվում են գոյավորին՝ առանց գիտակցելու և իմաստավորելու գոյի գոյության խսկությունը: **Տե՛ս առ-դրություն:** // Ծրջադարձից հետո Հայդեգերը եզրակացրել է, որ մետաֆիզիկան հաղթահարելու փորձերն անպտուր են՝ պետք է մետաֆիզիկան «քողնել իր բանին» և այլ մտածողություն որդեգրել:

**Մտածողություն (Denken)** - Եթե իր զարգացման առաջին շրջանում Հայդեգերը դիտում էր փիլիսոփայությունը որպես «խստիվ գիտություն» (բառիս «հուսեռլյան» իմաստով), ապա շրջադարձից հետո նա հրաժարվում է ոչ միայն «գիտականությունից», այլև «փիլիսոփայությունից»՝ Վերջինս փոխարինելով լեզվականության մեջ արմատավորված մտածողությամբ:

**Մտային փոխկապակցություններ (Denkzusammenhänge)** - շարադիր մտածողության հիմքում ընկած հոգևոր կապեր, որոնց հնարավոր չեն նկարագրել պատճառահետևանքային շղթաների միջոցով: Այդ բազմաչափ կառուցվածքների ուսումնասիրությունը նկարագրող և տրոհող հոգեբանության խնդիրն է:

**Նախապաշարմունք (Vorurteil)** - այս արտահայտությունը միայն լրացվորականության շանքերով է բացասական երանգավորում ծնող բերել, գտնում է Գաղամերը: Իրականում գերմաներեն «Vorurteil»-ը նշանակում է «նախա-դատողություն», այսինքն՝ այն, ինչ կա «դատողությունից» (Urteil) առաջ: Նախապաշարմունքը այն «նախապես պաշարվածն» է, որի բացասական կամ դրական լինելը կանխորոշված չէ, այլ կախված է ամենատարբեր գործոններից:

**Ներթափանցում (Sichhineinversetzen)** - բառացիորեն՝ «ինքն իրեն ներս տեղափոխել»: Ըստ Դիլբայի՝ կենսական դրսերումները ճշգրիտ հասկանալու համար անհրաժեշտ է նույնացում հեղինակի հետ, որը պահանջում է իրեն հեղինակի տեղը դնելու, ուրիշի կաշվի մեջ մտնելու, նրա հոգևոր աշխարհը «ներթափանցելու» կարողություն:

**Ներկայության արտակայութենական անալիտիկա (existenziale Analytik des Daseins)** - արտակայող ներկայության կառուցվածքային մոմենտների բներևութաբանական նկարագրությունն է: Տե՛ս՝ ս հիմնարար գոյաբանություն:

**Ներկայություն (Dasein)** - յուրահատուկ գոյ, որը մյուս բոլոր գոյերից տարբերվում է սեփական գոյությանը հաղորդված լինելու («գոյահասկացման») շնորհիվ: Վերջինս մարդկային գոյության հատկությունն է՝ այն ոչ թե պարզաբն կա, այլ կա՝ իր լինելը իր համար խնդիր ունենալով: «Մարդկային գոյության բանն ի՞նչ է» հարցի ծիշտ պատասխանը կլիներ. «Մարդկային գոյության բանը գոյությունն ինքն է»: // Գերմանաներեն եզրում, որ նշանակում է «առկայություն», «գոյություն» կամ «կյանք», գոյականը (Dasein) և բայց (da sein) փաստորեն հաճընկնում են: Դա թույլ է տալիս սուլքատանտիկի կարգավիճակով օգտագործված բառն ընկածել որպես բայի անկատար ծև և դրանով շեշտել մարդկային կենդանի գոյության ներքին դինամիզմը: Միևնույն ժամանակ «da sein» բայի «այստեղ լինել», «ներկա գտնվել», ինաստների շնորհիվ ներմուծվում է ինքն իրեն հարաբերված, աղթուն անձնավորության մասին պատկերացումը: Դննու. «առկա» և «ներկա» բառերի ինաստային տարբերությունը: // Առաջարկված հայերեն եզրում տարանջատող գծիկը շեշտում է գոյության (կայության) բաղադրիչը, պահպանելով ներքին սրահության՝ ներկա լինելու գործառույթը:

**Նկարագրող և տրոհող հոգեբանություն (beschreibende und zergliedernde Psychologie)** - ի տարբերություն ավանդական հոգեբանության, որի նպատակը հոգեկան կյանքի միանմանության վերհսկումն է, նկարագրող և տրոհող հոգեբանությունը զբաղվում է տարբերությունների ուսումնասիրությամբ: Ավանդական հոգեբանությունը սրանց հարաբերվում է այնպես, ինչպես ծառի բունը ճյուղերին: Նոր տիպի հոգեբանության անհրաժեշտությունը Դիլբայը հիմնավորում է նորանով, որ պատճառական կապերի նկարագրության համար օգտագործվող շարադիր, շղթայածն կազմավորումները ի վիճակի չեն նույնակերպուեն որսալ ներքին կյանքի բազմաչափ ճյուղավորումները:

**Նմուշ գոյ, կամ արտոնյալ գոյ (Muster Seiendes, privilegiertes Seiende)** - այնպիսի գոյ, որում երևակվում է փնտրվող հատկությունը:

Այսպես՝ «դեղնությունը» հնարավոր չէ տեսմել ցանկացած առարկայում: Դրա համար անհրաժեշտ է, որպեսզի առարկան դեղին լինի: Նույն կերպ, **գոյությունը** ծանաչելու համար անհրաժեշտ է այնպիսի նմուշ գոյ, որը հատուկ հարաբերության մեջ է գոյության հետ: Այդպիսի նմուշ գոյ է մարդը, որին ի սկզբանե հատուկ է գոյահասկացումը: Մարդու գոյական հատկությունն այն է, որ նա գոյություն ունի **գոյաբանորեն**, ասում է Հայդեգերը: Տե՛ս՝ սեր-կայություն:

**Նշանակություն (Bedeutung)** - Աերքին հոգեկան կապակցություն, որը ներկայացնում է կյանքի անբողջականության և նրա մասի հարաբերությունը: Նշանակությունների միջև եղած Աերքին կապերը կազմավորում են **ապրումը**: Դիլթայի հերմենուստիկայում ունի նույն գործառություն, որը նրա զարգացման «հոգեբանական» փուլում վերապահված էր «կառուցվածքին»:

**Նոմոտետիկ գիտություններ (nomothetische Wissenschaften)** - ընդհանուր օրինաչափություններ ուսումնասիրող, օրենք արձանագրող գիտություններ: Իրենց մեթոդով հակառի են **իոնոգրաֆիկ գիտություններին**:

**Ծրջադարձ (Kehre)** - նշանավորում է Հայդեգերի անցումը փիլիսոփայության երկրորդ շրջանին, որում **գոյությանը ներ-կայության անալիտիկայի** հիման վրա հետամուտ լինելու փորձն իր տեղն է զիջում «գոյությունը առանց գոյավորի» մտածելու խնդրին: Դրա համար անհրաժեշտ է մտածել գոյությունն առանց ուշադրություն դարձնելու **մետաֆիզիկային**, ասում է Հայդեգերը: Պետք է մի կողմ դնել այն հաղթահարելու փորձերը և թողմել մետաֆիզիկան ինքն իրեն:

**Ոգու մասին գիտություններ (Geisteswissenschaften)** - հումանիտար գիտություններն են, որոնց խնդիրը պատմական-հասարակական իրականության եզակի երևույթների վերհանումն է, նրանց նկարագրություններում նույնաձևության բացահայտումը և հետագա պատկերման նպատակների ու կանոնների ամրագրումը: Ոգու մասին գիտության հնարավորության պայմանն այն է, որ «*նա, ով ուսումնասիրում է պատմությունը, նույն ինքն է, որ պատմությունը կերտում է*»:

Պատմական փորձի կարգավորման սկզբունքը ոչ թե Փորմալ արժեքային հարաբերությունն է, այլ «ներքին պատմականությունը», որը հենց փորձին է պատկանում: Տե՛ս՝ բնության մասին գիտություններ:

**Ոճ (Stil)** - առանձին գրողներին կամ նշանակալից գրական ուղղություններին հատուկ անկրկնելի արտահայտչամիջոցների ամբողջություն: **Ոճի** ծնավորումը պայմանավորված է նրանով, որ ինքնարուխ ստեղծագործական ակտի ընթացքում հեղինակն իրականացնում է որոշակի լեզվական կերպափոխումներ, որի արդյունքում նյութը գործառելու նոր կանոններ են բյուրեղանում: Քանի դեռ կոնկրետ համատեքստում օգտագործված արտահայտչամիջոցները վերհանված և արձանագրված չեն, դրանք մնում են եզակի: Դետագայում դրանք նկարագրվում են և հարստացնում արդեն հայտնի լեզվական միջոցների շահեմարանը: // Ժակ Դերիդան ոճի որոշակիությունը (արականությունը) հակադրում է գրի ցրված բազմանշանակությանը (իգականությանը), իսկ դրանց համադրությունը տեսնում է ոճերի բազմապատկման մեջ:

**Ոչ ներկայակերպ գոյ (nicht daseinsmäßiges Seiende)** - այն բոլոր գոյերն են, որոնց հատուկ չէ նախասկզբնական գոյահասկացումը:

**Պատմական գիտակցություն (geschichtliches Bewusstsein)** - պատմական հետազոտության մեթոդ, որը, խուսափելով պատմական իրադարձությունների չիմնավորված արդիականացումից, փորձում է թափանցել անցյալի համատեքստերի մեջ և «ներկայացնել պատմությունն այնպես, ինչպես այն կա»: Գաղամերն այդ նպատակը համարում է անիրագործելի և հակադրում է դրան պատմաներգործական գիտակցությունը:

**Պատմականություն (Geschichtlichkeit)** - մարդու աշխարհում գոյության յուրահատուկ կերպն է, կապված նրա վիաստական այստեղ և հիմա գոյության, արտակայության, ինչպես նաև ազատ ընտրության հիման վրա ձեռնարկ իրականացնելու կարողության հետ: Սեփական հնարավորություններն ինքնուրույն օգտագործելու շնորհիվ մարդը պատմական է դաշնում: «Մարդը պատմական չէ, որովհետև պատմու-

թյուն կա,- ասում է Յայդեգերը,- այլ պատմություն կա, որովհետև մարդը պատմական է»:

**Պատմաներգործական գիտակցություն (wirkungsgeschichtliches Bewusstsein)** - գիտակցություն, որը ելնում է ավանդության և նրա մերգործությունների պատմության անքակտելի միասնությունից և հաշվի է առնում դրա կումուլյատիվ ազդեցությունը սեփական հասունացման ընթացքի վրա: Պատմաներգործական գիտակցությունը կապված է պատմական կանխատրվածության հետ, որը Յեգելը «սուբստանց» էր անվանում, գտնում է Գաղամերը:

**Սեռական տարբերություն (différence sexuelle)** - Դերիդայի փիլիսոփայության մեջ հանդիպող այս եզրը անուղղակի հարաբերության մեջ է Յայդեգերի գոյարանական տարբերության հետ: Ուշադրություն հրավիրելով հայդեգերյան ներկայության «սեռական չեզոքության» վրա, Դերիդան պնդում է, որ սեռական տարբերությունը նույնքան հիմնարար է, որքան գոյարանականը: Ընդ այդմ՝ ըստ մտածողի՝ կոչություրողիված արականությամ խորհրդանշից «Փալլոցենտրիզմ» հանդես է գալիս որպես «լոգոցենտրիզմ» կրկնակը, իսկ իզականությունը նույնանում է «Փալլոգոցենտրիզմ» հետ, որը կապվում է արականության կյանման, հետևարար՝ ցրման (դիսենինացման) և համատարած տարբերակումների՝ **différance**-ի տիրապետության հետ:

**Սերող (գեներատիվ) նշանային համակարգ (generatives Zeichensystem)** - Յանակարգը կիշվեր սերող, եթե այն պարունակեր սահմանափակ թվով կանոններ, որոնցից հնարավոր է մակարերել անսահման քանակությամբ նախադասություններ: Դա կնշանակեր, որ անհատականացված լեզվական տեքստը հանգեցվում է ընդհանուր սկզբունքներին: Այդպիսի սերող համակարգի մոդելավորման փորձ է Նոամ Չոնսկու «սերող քերականությունը»: Յերմենստիկան նման համակարգերի գոյությունը համարում է անհնարին:

**Սերունդ (Generation)** - «Անհատների սերտ շրջան, որոնք իրենց վրա ազդեցություն ունեցող դարաշրջանում առաջ եկած միևնույն մեծ համգամանքներից և փոփոխություններից իրենց կախվածության

շնորհիվ, չնայած մյուս առկա գործոնների տարբերությանը, միավորված են մեկ համասեռ ամքողջի մեջ»: Դիլբայի այս սահմանումը Յայ-դեգերը վկայակոչել է Գոյություն և ժամանակում:

**Սպեկուլատիվ (Spekulative)** - եզրը ծագում է լատիներեն «speculare» (հայելի) բառից և հղում է «անդրադարձման» («արտացոլման») հասկացությանը: Մինյանց մեջ արտացոլվելով, կողմերը շարունակարար փոխատեղվում են՝ տեղի է ունենում կրկնապատկում, որի հիմքում ընկած գոյությունը մեջն է: Միտքը սպեկուլատիվ է, եթե նրանում արտահայտված հատկությունը չի միանում սուբյեկտին որպես պարզ պրեդիկատ, այլ դիտվում է անդրադարձման հարաբերության մեջ՝ երկու կողմերը արտացոլում են միմյանց:

**Վավերականություն (նշանակալիցություն, Geltung)** - բաղենյան նորկանտականության համակարգում արժեքների բնորոշումն է: Վերջիններս, ի տարբերություն իրերի, գոյություն չունեն, բայց նշանակալից են որևէ մեկի, մարդկանց խնդիր կամ մի ողջ հանրության համար: Երբ ասում ենք՝ սոոմար, բարքը կամ օրենքը նշանակալից են (der Ticket, der Brauch, das Gesetz gelten), նկատի ունենք, որ դրանք գործում են, ուժի մեջ են, այսինքն՝ վավեր են:

**Վերջավորություն (Endlichkeit)** - ներ-կայության բնորոշումն է, որ սերտորեն կապված է փաստականության հետ: Ներ-կայությունն արկանված է աշխարհ՝ այստեղ և հիմա, և նրա անընդհատ ընթացքը դեպի մահը առաջ է բերում այն ներքին անհանգստությունը, որի շնորհիվ լսելի է դառնում գոյության կանչը: Վերջավորությունը նարդու «բերությունը» չէ, այլ նրա գոյության «ամճնախկական» արտակայական կերպը: // Վերջավոր ներ-կայությունը գուրկ է «բացարձակ դիտակետից», դրա համար էլ աշխարհին հարաբերվում է ոչ թե սերող, այլ մեկնարանող նշանային համակարգերի միջոցով:

**Տարբերություն (différence)** - եզրն արտացոլում է ժամանակակից լեզվաբանության համար հիմնարար այն իրողությունը, որ նշանային համակարգերում ծագող իմաստները միանշանակ կապված չեն որոշակի «կրող-նշանների» հետ, այլ առաջանում են համակարգը ծևավո-

րող նիշերի (marque) միջև եղած տարբերություններից: Դերիդայի բառօգտագործման յուրահատկությունն այն է, որ նա, վկայակոչելով «différent» բայի երկու իմաստները՝ «տարբերել» և «հետաձգել», գործածության մեջ է դրել նոր եզր՝ «e»-ի փոխարեն «a»-ով գրվող «différence»-ը, որն ի ցույց է դնում նշված երկու իմաստների փոխարկայծումը: Տարածական առումով «différence»-ը մեկնաբանվում է որպես «տարբերություն» և վերաբերում է լեզվական համակարգը կազմող նիշերի դիրքային տարբերություններին: Ժամանակային առումով այն ներկայանում է որպես **հետաձգում**:

**Տեխնիկական մեկնաբանություն (technische Interpretation)** - այս մեկնաբանության մեջ համադրված են հոգեբանականը և լեզվականը: Խոսքն այնպիսի դեպքերի մասին է, երբ հեղինակն անկրկնելի բովանդակություն հաղորդելու համար լեզվական միջոցների պակաս է զգում: Քերականությունն իր բոլոր նրբերանգմերով բավարար չի թվում ասելիքն արտահայտելու համար: Նման պարագաներում հեղինակը ստիպված է լինում ճկելով, զարգացնելով լեզուն, ստեղծել նոր արտահայտչամիջոցներ, որոնք թեև լեզվական են, բայց քերականական չեն: Դրա շնորհիվ ծևավորվում է գրողի անկրկնելի ոճը:

**Տրանսցենդենտը և տրանսցենդենտալը (Transzendenten und Transzendentales)** - Կանության գննադատական փիլիսոփայության համակարգում «տրանսցենդենտի» տակ հասկացվում է այնկողմնայինը՝ հնարավոր փորձի սահմանից անդին գտնվող առարկաները (աստված, հոգի, անվերջություն), որոնք ենթակա չեն տեսական ճանաչման: «Տրանսցենդենտալը» վերաբերում է բանականությանը հատուկ ապրիորի ձևերին, որոնք կազմակերպում են էմայիրիկ ճանաչողությունը: Տրանսցենդենտալ ապրիորին հնարավոր է դարձնում առարկաների մեր փորձառությունը և միևնույն ժամանակ ծևավորում է հնարավոր փորձառության առարկաները (այսպես՝ տարածության և ժամանակի ապրիորի ձևերը մի կողմից հնարավոր են դարձնում աշխարհի ընկալումը որպես տարածաժամանակային, մյուսից՝ առաջադրում են տարրածությունը և ժամանակը որպես փորձի առարկաներ): Տրանսցենդենտալը անդրանցումային չէ. այն սահմանային է, քանի որ թույլ չի տալիս իրենից այն կողմ անցնել: // Դայդեգերը, նկատի ունենալով լատի-

ներեն «transcendere»-ի ուղղակի իմաստը («անցնել»), մերժել է «տրանսցենդենտի» ավանդական օմքանումը, եզրակացնելով, որ տրանսցենդենտը ոչ թե այն տեղն է, ուր անցնում են, այլ ինք՝ անցնողը, այսինքն՝ **մեր-կայությունը**: Տրանսցենդենտությունը օբյեկտի փոխարեն սուբյեկտին վերագրելով, Յայդեգերը գիտակցաբար անտեսել է կանույան կրիտիզմի կենտրոնական և սկզբունքային բաժանումը «տրանսցենդենտի» (այնողմնայինի) և «տրանսցենդենտալի»: Սակայն վերջինիս՝ կանույ կողմից վերագրվող հատկությունները չեն կորել, այլ փոխակերպվել են: Յայդեգերի մոտ տրանսցենդենտալն այլևս **«a priori»**-ն չէ բառիս ընդունված՝ կատեգորիալ իմաստով. այն ներկայանում է որպես **հորիզոն**, որում քայլ առ քայլ ի բաց է դրվում գոյության ֆենոմենը: Տե՛ս նաև **Ժամանակը որպես տրանսցենդենտալ հորիզոն**:

**Փաստականություն (Faktizität)** - «մեր» «սեփական» **մեր-կայության** գոյակերպի անվանումն է: Այդ արտահայտությունը նշանակում է յուրաքանչյուր անգամ հենց այս **մեր-կայությունը**, որքանով որ նրա գոյակերպը որպես գոյություն «ներկա լինելն» է: Ներկա լինել որպես գոյություն նշանակում է երբեք և որևէ կերպ չլինել հայեցողության և հայեցողական բնորոշման առարկա, ոչ էլ դրանց կողմից պարզապես ի գիտություն ընդունվել կամ հաշվի առնվել, այլ **մեր-կայությունը «կա» ինքն իր համար՝ որպես իր «ամենասեփական» գոյության «ինչպեսը»:**

**Փոխադրում (Transposition)** - Ներքին փորձը միշտ հարաբերված է մարդկային մարմնի հետ. հենց դրա համար էլ «ներքին» է համարվում: Սակայն տարբեր մարդկանց հոգեկանի միանմանությունը հնարավորություն է տալիս փոխադրում կատարել՝ վերագրելով սեփական ներքին փորձը այլ անհատների մեջ և, դրանով իսկ, հիմք դնել մեկ միասնական հոգևոր աշխարհի ընդհանուր փոխկապակցության ծևավորման համար:

**Փորձ (փորձառություն, Erfahrung)** - այն փորձն է, որը ձեռք է բերվում որոշակի ճանապարհ անցնելու, ինչ-որ գործի մասնակցելու արդյունքում: Ի տարբերություն բնագիտության հիմքը կազմող գիտա-

փորձի (Experiment), որի կարևորագույն գործառույթը վերարտադրելիությունն է, կյանքի ընթացքում գիտակցվող փորձը, որը մարդուն դարձնում է «փորձառու» բառիս լայն իմաստով, կրկնելի չէ: Փորձի այս խորքային մեկնարանության ակունքը Ոգու բներևութարանությունն է, որը Դեգելը բնորոշել է որպես «գիտություն գիտակցության փորձի մասին»:

**Քերականական մեկնարանություն (grammatische Interpretation)** - հոգեբանական մեկնարանության հետ մեկտեղ տեքստի հասկացման երկու հիմնական մեթոդներից մեկն է: Նպատակ ունի հասկանալու խոսքը որպես լեզվից նաև բերված իրողություն:

**Ֆրոնեսիս (φρόνησις, phrónesis)** - «հասկացող գործողություն», գործնական խելոքություն: Ինացական կարողությունների արիստոտելյան դասակարգման հիմնական տարրերից է: Հակադրված է հմաստությամբ (σοφία, sophía), որը կապված է տեսական, փիլիսոփայական իմացության հետ: Հայդեգերյան փիլիսոփայության զարգացման համատեքստում շարժը ֆրոնեսիսից դեպի սոֆիա նախապատկերել է անցումը ներկայությունից դեպի գոյության փիլիսոփայական ըմբռնումը:

## ՄԵԶԲԵՐՎԱԾ ԵՎ ՔԻՇԱՏԱԿՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճարեան Յր., Ղայերէն Արմատական Բառարան, Եր. համալս. հրատ., Եր., հ. 1, 1926:
2. Դիլբայ Վ., «Հերմնենստիկայի ծագումը», «Ուուբիկոն», թիվ 1(8), Եր., 2005:
3. Ղայդեգեր Մ., «Ինչպես տոնօրեքին», Ֆր. Ղյոլդերլին, Բանաստեղծություններ, Նախրի, Եր., 2002:
4. Ղայդեգեր Մ., «Ղյոլդերլինը և բանաստեղծության էությունը», Ֆր. Ղյոլդերլին, Բանաստեղծություններ, Նախրի, Եր., 2002:
5. Ղայդեգեր Մ., «Լեզուն», Գ. Թրակլ, Բանաստեղծություններ, ի.կ.կ., Եր., 2007:
6. Ղայդեգեր Մ., «Խոսքը բանաստեղծության մեջ», Գ. Թրակլ, Բանաստեղծություններ, ի.կ.կ., Եր., 2007:
7. Կանտ Ի., Չուտ բանականության քննադատություն, Սարգիս Խաչենց. Փրիմինֆո, Եր., 2006:
8. Մարքս Կ., Էնգելս Ֆ., Գերմանական գաղափարախոսություն, Երևան, հ. 3, Ղայաստան, Եր., 1987:
9. Նոր բառզիրք հայկագեան լեզուի, հ. 1, Եր. համալս. հրատ., Եր., 1979:
10. Ոսկանյան Ա., ««Գոյության» և «Աներ-կայության» միջև. Մարտին Ղայդեգերի փիլիսոփայական հոդացքի ձևավորումը», «Գիտական աշխատություններ: Ղասարակական գիտություններ», պր. 5, Լինգվա (ԵՊԼՀ), Եր., 2007:
11. Ոսկանյան Ա., «Ուստի միաբանությունը, կամ կոլեկտիվ ներկայության պարադոքսները», «Ուուբիկոն», թիվ 2 (10), Եր., 2006:
12. Ոսկանյան Ա., «Լինել» հայերեն (Մարտին Ղայդեգերի Գոյություն և Ժամանակ աշխատության մի քանի կենտրոնական եզրերի հայերեն թարգմանության մասին), «ԵՊԼՀ Բանբեր, Մանկավարժություն և հասարակական գիտություններ», թիվ 2 (33), Եր., 2015:

13. Ոսկանյան Ա., «Վիլհելմ Դիլբայ. պատմական բանականության քննադատությունից դեպի հերմենևտիկա», «Գիտական աշխատություններ: Զասարակական գիտություններ», պր. 3, Լինգվա (ԵՊԼՀ), Եր., 2005:
14. Ոսկանյան Ա., «Վիլհելմ Դիլբայ», «Ուուրիկոն», թիվ 1(8), Եր., 2005:
15. Ոսկանյան Ա., «Ավանդության արդիականությունը. Զանս-Գեորգ Գաղամերի «ունիվերսալ հերմենևտիկայի» հղացքի ծանրակետորը», «ՎԵՍ. համահայկական հանդես», Զ (ԺԲ) տարի, թիվ 3 (47), հուլիս-սեպտեմբեր, Եր., 2014:
16. Ոսկանյան Ա., «Ժակ Դերիջայի “հավերժ հետաձգումը” հետարդիական իրողությունների համատեքստում», «Գիտական աշխատություններ: Զասարակական գիտություններ», պր. 4, Լինգվա (ԵՊԼՀ), Եր., 2006:
17. Ոսկանյան Ա., «Ինչո՞ւ չապաշխարեց Զայդեգերը», «ՎԵՄ. համահայկական հանդես», Զ (ԺԲ) տարի, թիվ 2 (46), ապրիլ-հունիս, Եր., 2014:
18. Ոսկանյան Ա., «Homo Trickster, կամ Էսթետիզմի ծուղակները», «Ուուրիկոն», թիվ 2 (7), Եր., 2004:
19. Քոչարյան Ռ., Դ.-Գ. Գաղամերի փիլիսոփայական հերմենևտիկան, ԳԱԹ, Եր., 2006:
20. Ֆուկու Մ., «Ձրույց Մարլեն Շապսալի հետ», «Ուուրիկոն», թիվ 1 (8), Եր., 2005:
21. Абрамян Л., *Кантона философия математики. Старые и новые споры*, Айастан, Еր., 1978.
22. Баумгартен А., «Эстетика», в кн.: *История эстетики. Памятники мировой эстетической мысли*, т. 2, Искусство, М., 1964.
23. ‘Беседа сотрудников журнала “Шпигель” Р. Аугштайна и Г. Вольфа с Мартином Хайдеггером 23 сентября 1966 года’, в кн.: *Философия Мартина Хайдеггера и современность*, Наука, М., 1991.
24. Брункхорст Х., ‘Эгоцентризм в эпоху картины мира. Хайдеггер, Вебер и Пиаже’, в кн.: *Философия Мартина Хайдеггера и современность*, Наука, М., 1991.

25. *Буржуазная философия кануна и начала империализма*, под ред. А. Богомолова и др., Высшая школа, М., 1977.
26. Виндельбанд В., “История и естествознание (Актовая речь 1894 г.)”, в: его же, *Прелюдии. Философские статьи и речи*, Изд. Д. Е. Жуковского, СПб., 1904.
27. Восканян А. В., “Практически-духовная природа философского знания и аргументация в философии”, в кн.: Брутян Г. А., Нарский И. С. (отв. ред.), *Философские проблемы аргументации*, Изд. АН Арм. ССР, Ер., 1986.
28. Вригт Г. Х. фон, *Логико-философские исследования*, Прогресс, М., 1986.
29. Габитова Р. М., “Универсальная герменевтика Фридриха Шлейермахера”, в кн.: *Герменевтика: история и современность*, Мысль, М., 1985.
30. Габитова Р. М., *Философия немецкого романтизма*, Наука, М., 1987.
31. Гайденко П. П., *Трагедия эстетизма*, Искусство, М., 1970.
32. Гайденко П. П., *Прорыв к трансцендентному*, Республика, М., 1997.
33. Гайденко П. П., *Философия Фихте и современность*, Мысль, М., 1975.
34. Гегель Г. В. Ф., *Лекции по истории философии*, кн. 3, Соч., т. XI, Соцэллитиздат, М.-Л., 1935.
35. Гегель Г. В. Ф., *Наука логики*, т. 1, Мысль, М., 1970.
36. Гегель Г. В. Ф., *Наука логики*, т. 2, Мысль, М., 1971.
37. “Говорят советские философы – участники конгресса (П. П. Гайденко)”, в журн.: “Вопросы философии”, № 2, М., 1989.
38. Гронден Ж., “Герменевтика фактичности как онтологическая деструкция и критика идеологии. К актуальности герменевтики Хайдеггера”, в кн.: *Исследования по феноменологии и философской герменевтике*, Минск, ЕГУ, 2001.
39. Гуссерль Э., “Кризис европейского человечества и философия”, в кн.: *Общество. Культура. Философия*, М., 1983.
40. Деррида Ж., “От экономии ограниченной к экономии всеобщей. Гегельянство без утайки”, его же, *Письмо и различие*, Акад. проект, М., 2000.

41. Деррида Ж., “Шпоры. Стили Ницше”, в журн.: “Философские науки”, № 2, М., 1991.
42. Деррида Ж., *Насилие и метафизика. Очерк мысли Эммануэля Левинаса*, его же, *Письмо и различие*, Акад. проект, М., 2000.
43. Деррида Ж., “Эдмон Жабе и вопрос книги”, его же, *Письмо и различие*, Акад. проект, М., 2000.
44. Дильтей В., “Типы мировоззрения и их обнаружение в метафизических системах”, в кн.: *Новые идеи в философии, Сб. I*, Образование, СПб., 1912.
45. Дугин А., *Мартин Хайдеггер и возможность русской философии*, в: <http://www.platonizm.ru/content/dugin-martin-haydegger-vozmozhnost-russkoy-filosofii>
46. Ионин Л. Г., *Понимающая социология*, Наука, М., 1979.
47. Кант И., “Антропология с pragматической точки зрения”, его же, *Соч.*, т. 6, Мысль, М., 1966.
48. Кант И., *Критика способности суждения*, его же, *Соч.*, т. 5, Мысль, М., 1966.
49. Клейст Г. ф., “О театре марионеток”, его же, *Избранное. Драмы, новеллы, статьи*, Худож. литература, М., 1977.
50. Куренной В., “‘Сами вещи’ Мартина Хайдеггера”, в кн.: *Исследования по феноменологии и философской герменевтике*, ЕГУ, Минск, 2001.
51. Кьеркегор С., “Понятие страха”, его же, *Страх и трепет*, Республика, М., 1993.
52. Лиотар Ж.-Ф., *Состояние постмодерна*, Алетейя, СПб., 1998.
53. Маркс К., Энгельс Ф., “Экономические рукописи 1857-1859 годов”, их же, *Соч.*, т. 46, ч. 1, ИПЛ, М., 1968.
54. Наторп П., “Кант и Марбургская школа”, в кн.: *Новые идеи в философии*, 5, Образование, СПб., 1913.
55. Одуев С. Ф., “Герменевтика и описательная психология в ‘философии жизни’ Вильгельма Дильтея”, в кн.: *Герменевтика: История и современность*, Мысль, М., 1985.
56. Поппер К., *Логика и рост научного знания*, Прогресс, М., 1983.

57. Ракитов А. И., “Опыт реконструкции концепции понимания Ф. Шлейермахера”, в кн.: *Историко-философский сборник – 88*, М., 1988.
58. Риккерт Г., *Науки о природе и науки о культуре*, Образование, СПб, 1911.
59. Риккерт Г., *Философия жизни*, Ника-Центр, К., 1998.
60. Спиноза Б., *Этика*, Гос. соц.-эконом. изд., М.-Л., 1933.
61. Уэльбек М., *Возможность острова*, Иностранка, М., 2006. [http://lib.aldebaran.ru/author/uyelbek\\_mishel/uyelbek\\_mishel\\_vozmozhnost\\_ostrova/uyelbek\\_mishel\\_vozmozhnost\\_ostrova\\_\\_0.html](http://lib.aldebaran.ru/author/uyelbek_mishel/uyelbek_mishel_vozmozhnost_ostrova/uyelbek_mishel_vozmozhnost_ostrova__0.html)
62. Франк С., “Личность и мировоззрение Фр. Шлейермахера”, в кн.: Ф. Д. Шлейермахер, *Речи о религии. Монологи*, Русская мысль, М., 1911.
63. Фейербах Л., “Предварительные тезисы к реформе философии (1842)”, его же, *Избранные философские произведения*, т. 1, Политиздат, М., 1955.
64. Фейербах Л., “К критике философии Гегеля”, его же, *Избранные философские произведения*, т. 1, Политиздат, М., 1955.
65. Фейербах Л., “О спиритуализме и материализме”, его же, *Избранные философские произведения*, т. 1, Политиздат, М., 1955.
66. Фихте И. Г., “Назначение человека”, СПб, 1906.
67. Хабермас Ю., “Понятие индивидуальности”, в журн.: “Вопросы философии”, № 2, М., 1989.
68. Хайдеггер М., *Пролегомены к истории понятия времени*, Водолей, Томск, 1998.
69. Херрманн Фр.-В. фон, «Бытие и время» и «Основные проблемы феноменологии», в кн.: *Философия Мартина Хайдеггера и современность*, Наука, М., 1991.
70. Шлегель Ф., *Философия языка и слова*, его же, *Эстетика. Философия. Критика*, т. 2, Искусство, М., 1983.
71. Шлегель Ф. – Шлегелю А. В. (28.11.1797), в кн.: Ф. Шлегель, *Эстетика. Философия. Критика*, т. 2, Искусство, М., 1983.

72. Шлегель Ф. Шлейермакеру Ф. (12.04.1802), в кн.: Ф. Шлегель, *Эстетика. Философия. Критика*, т. 2, Искусство, М., 1983.
73. Шлейермакер Ф., “Речи о религии к образованным людям, ее презирающим”, его же, *Речи о религии. Монологи*, Русская мысль, М., 1911.
74. Adorno Th. W., “Die Konstruktion des Ästhetischen”, in: ders., *Gesammelte Schriften*, B. 2, Suhrkamp, Ffm., 1979.
75. Adorno Th. W., *Minima Moralia. Reflexionen aus dem beschädigtem Leben*, Suhrkamp, Ffm., 1971.
76. Apel K.-O., *Die Erklären : Verstehen – Kontroverse in transzendentalphragmatischer Sicht*, Suhrkamp, Ffm., 1979.
77. Apel K.-O., *Transformation der Philosophie*, B. 1, Sprachanalytik, Semiotik, Hermeneutik, Suhrkamp, Ffm., 1973.
78. Apel K.-O., *Transformation der Philosophie*, B. 2, Das Apriori der Kommunikationsgemeinschaft, Suhrkamp, Ffm., 1973.
79. Apel K.-O., Von Kant zum Pirs: Die semiotische Transformation der Transzendentalen Logik, *Transformation der Philosophie*, B. 2, Suhrkamp, Ffm., 1973.
80. Arendt H., *Erinnerung an Martin Heidegger* (Audio), <http://www.youtube.com/watch?v=a8O6zvAGR-c>
81. Athenaeum. *Eine Zeitschrift von August Wilhelm Schlegel und Friedrich Schlegel, Auswahl* (hrsg. von G. Heinrich), Reklam, Leipzig, 1984.
82. Austin J. L., *How to Do Things with Words*, Oxford University Press, London, 1962.
83. Bart K., Die protestantische Theologie im 19. Jahrhundert. Zürich, 1960.
84. Biemel W., *Heidegger*, Rowohlt, Reinbek bei Hamburg, 1999.
85. Bönisch S., *Untersuchung zur “hermeneutischen” Linie im spätbürgerlichen philosophischen Denken unter besonderer Berücksichtigung des Verhältnisses von Erkennen und Handeln*, Akademie der Gesellschaftswissenschaften, Berlin, 1980.
86. Böttger F., “Johann Gotlieb Fichte”, in: J. G. Fichte, *Ruf zur Tat*, Verlag der Nation, Berlin, 1956.

87. Briefwechsel zwischen Wilhelm Dilthey und dem Grafen Paul Yorck von Wartenburg 1877-1897, a.d.S., Halle 1923.
88. Brunotte U., “Mythos Langemarck”, *Frankfurter Rundschau*, 11.11.04.
89. Chomsky N., *Syntactic Structures*, De Gruyter, The Hague, 1957.
90. “Davoser Disputation zwischen Ernst Cassirer und Martin Heidegger”, in: M. Heidegger, *Kant und das Problem der Metaphysik*, Klostermann, Ffm., 1998.
91. Derrida J., “Die ‘Welt’ des kommenden Aufklärung (Ausnahme, Kalkül und Souveränität)”, in: ders., *Die Schurken*, Suhrkamp, Ffm., 2003.
92. Derrida J., “Die différence”, in: P. Engelmann (Hsgb.), *Postmoderne und Dekonstruktion. Texte französischer Philosophen der Gegenwart*, Reclam, Stuttgart, 1990.
93. Derrida J., “Geschlecht. Sexuelle Differenz, ontologische Differenz”, in: ders., *Geschlecht (Heidegger)*, Passagen, Wien, 1988.
94. Derrida J., *Apokalypse*, Passagen, Graz; Wien: Böhlau, 1985.
95. Derrida J., *De la grammatologie*, Les Éditions de Minuit, Paris, 1967.
96. Derrida J., *Die Schurken*, Suhrkamp, Ffm., 2003.
97. Derrida J., *Die Stimme und Phänomen*, Suhrkamp, Ffm., 2003.
98. Derrida J., *Falschgeld. Zeit geben*, Wilhelm Fink, München, 1993.
99. Derrida J., *Gesetzkraft. Das “mystische Grund der Autorität”*, Suhrkamp, Ffm., 1996.
100. Derrida J., *Grammatologie*, Suhrkamp, Ffm., 1983.
101. Derrida J., *La voix et le phénomène. Introduction au problème du signe dans la phénoménologie de Husserl*, Presses universitaires de France, Paris, 1967.
102. Derrida J., *L'Écriture et la différence*, Seuil, Paris, 1967.
103. Derrida J., “Politics of friendship”, American Imago, Johns Hopkins University Press, 2004 (<http://www.istud.it/newsletter/san-derrida.pdf>).
104. Derrida J., *Spectres de Marx: L'État de la dette, le travail du deuil et la nouvelle Internationale*, Galilée, Paris, 1993.

105. Derrida J., “Von einem neuerdings erhobenen apokalyptischen Ton in der Philosophie”, in: ders., *Apokalypse*, Passagen, Graz; Wien: Böhlau, 1985.
106. Diemer A., *Elementarkurs Philosophie: Hermeneutik*, Düsseldorf, Econ, Wien, 1977.
107. Dilthey W., Einleitung in die Geisteswissenschaften. Versuch einer Grundlegung für das Studium der Gesellschaft und der Geschichte. Erster Band, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 1, Verlag von Teubner, Leipzig und Berlin, 1922.
108. Dilthey W., “Die Jugendgeschichte Hegels”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 4, Vandenhoeck & Ruprecht, Leipzig und Berlin, 1921.
109. Dilthey W., “Die drei Grundformen der Systeme in der ersten Hälfte des 19. Jahrhunderts”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 4, Vandenhoeck & Ruprecht, Leipzig und Berlin, 1921.
110. Dilthey W., “Die Entstehung der Hermeneutik”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 5, Verlag von Teubner, Leipzig und Berlin, 1924.
111. Dilthey W., “Die geistige Welt: Einleitung in die Philosophie des Lebens”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 5, Verlag von Teubner, Leipzig und Berlin, 1924.
112. Dilthey W., “Beiträge zum Studium der Individualität”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 5, Verlag von Teubner, Leipzig und Berlin, 1924.
113. Dilthey W., “Über das Studium der Geschichte der Wissenschaften vom Menschen, der Gesellschaft und dem Staat”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 5, Verlag von Teubner, Leipzig und Berlin, 1924.
114. Dilthey W., “Der Aufbau der geschichtlichen Welt in den Geisteswissenschaften”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 7, Verlag von Teubner, Leipzig und Berlin, 1927.
115. Dilthey W., “Die Typen der Weltanschauung und ihre Ausbildung in der metaphysischen Systemen”, in: *Wilhelm Diltheys Gesammelte Schriften*, B. 8, Vandenhoeck & Ruprecht, Leipzig und Berlin, 1931.

116. Hegel G. W. F., *Phänomenologie des Geistes*, Suhrkamp, Ffm., 1986.
117. Droysen J. G., *Grundriß der Historik*, Veit, Leipzig, 1868.
118. Linge D. E., “Introduction”, in: H.-G. Gadamer, *Philosophical Hermeneutics*, Berkley – L.A. – London, 1977.
119. Farias V., *Heidegger and Nazism*, Temple University Press, Philadelphia, 1989.
120. Fichte J. G., “Über den Begriff des wahrhaften Krieges”, in: ders., *Ruf zur Tat*, Verlag der Nation, Leipzig, 1956.
121. Fichte J. G., “Aus der ‘Vorlesungen über die Bestimmung der Gelehrten’”, in: ders., *Ruf zur Tat*, Verlag der Nation, Leipzig, 1956.
122. Figal G., *Martin Heidegger zur Einführung*, Junius, Hamburg, 2003.
123. Frank M., “Einleitung des Herausgebers”, in: Schleiermacher F. *Hermeneutik und Kritik* (hrsg. von M. Frank), Suhrkamp, Ffm., 1977.
124. Frank M., *Selbstgefühl*, Suhrkamp, Ffm., 2002.
125. Frank M., *Das individuelle Allgemeine*, Suhrkamp, Ffm., 1977.
126. G. Lukacs, *Der junge Hegel und die Probleme der kapitalistischen Gesellschaft*, Aufbau, Berlin und Weimar, 1986.
127. Gadamer H.-G., *Vernunft im Zeitalter der Wissenschaft: Aufsätze*, Suhrkamp, Ffm., 1976.
128. Gadamer H.-G., *Wahreit und Methode*, J.C.B. Mohr (Paul Siebeck), Tübingen, 1972.
129. Gebauer G., Wulf Ch., *Spiel – Ritual – Geste. Mimetisches Handeln der sozialen Welt*, Rowohlt, Reinbek bei Hamburg, 1993.
130. “Geoepoche. Das Magazin für Geschichte”, № 57, 2012.
131. Goethe J. W., *Faust*, Aufbau, Berlin und Weimar, 1983.
132. Grondin J., “Gadamer vor Heidegger”, in: “Internationale Zeitschrift für Philosophie”, 1996.
133. Gumbrecht H. U., “Tod im Kontext Heideggers Umgang mit einer Faszination der 1920er Jahre”, in: D. Thomä (Hrsg.), *Heidegger-Handbuch. Leben – Werk – Wirkung*, J. B. Metzler, Stuttgart – Weimar, 2003.

134. Günzel K., *Romantikerschicksale. Eine Porträtgalerie*, Verlag der Nation, Berlin, 1987.
135. Habermas J./ Luhmann N., *Theorie der Gesellschaft oder Sozialtechnologie – Was leistet die Systemforschung?*, Suhrkamp, Ffm., 1971.
136. Habermas J., *Der philosophische Diskurs der Moderne*, Suhrkamp, Ffm., 1988.
137. Habermas J., “Zu Gadamers ‘Wahrheit und Methode’”, in: *Theorie-Diskussion. Hermeneutik und Ideologiekritik. Mit Beiträgen v. K.-O. Apel, C. v. Bormann, R. Bubner, H.-G. Gadamer, H. J. Giegel, J. Habermas*, Suhrkamp, Ffm., 1971.
138. Habermas J., *Erkenntnis und Interesse*, Suhrkamp, Ffm., 1973.
139. Habermas J., “Individuierung durch Vergesellschaftung. Zu Georg Herbert Meads Theorie der Subjektivität”, in: ders., *Nachmetaphysisches Denken*, Suhrkamp, Ffm., 1988.
140. Habermas J., *Theorie des kommunikativen Handelns*, B. 1 & 2, Suhrkamp, Ffm., 1980.
141. Heidegger M., “Vom Wesen des Grundes”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 9, Wegmarken, Klostermann, Ffm., 1976.
142. Heidegger M., *Beiträge zur Philosophie (vom Ereignis)*, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 65, Klostermann, Ffm., 2003.
143. Heidegger M., “Der Satz der Identität”, in: ders., *Identität und Differenz*, Stuttgart: Neske, 1996.
144. Heidegger M., *Die Selbstbehauptung der deutschen Universität*, Breisgau, 1934.
145. Heidegger M., Einleitung zur “Was ist Metaphysik?”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 9, Wegmarken, Klostermann, Ffm., 1976.
146. Heidegger M., “Hegels Begriff der Erfahrung”, in: ders., *Holzwege*, Klostermann, Ffm., 1994.
147. Heidegger M., *Identität und Differenz*, Neske, Stuttgart, 1996.
148. Heidegger M., *Sein und Zeit*, Niemeyer, Tübingen, 1993.
149. Heidegger M., *Was heißt Denken?*, Reklam, Stuttgart, 1992.

150. Heidegger M., “Wozu Dichter?”, in: ders., *Holzwege*, Klostermann, Ffm., 1994.
151. Heidegger M., “Zeit des Weltbildes”, in: ders., *Holzwege*, Klostermann, Ffm., 1994.
152. Heidegger M., “Brief über den Humanismus”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 9, *Wegmarken*, Klostermann, Ffm., 1976.
153. Heidegger M., “Die Grundprobleme der Phänomenologie”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 24, Klostermann, Ffm., 1975.
154. Heidegger M., “Die onto-theo-logische Verfassung der Metaphysik”, in: ders., *Identität und Differenz*, Neske, Stuttgart, 1957.
155. Heidegger M., *Einführung in die Metaphysik*, Max Niemeyer Verlag, Tübingen, 1966.
156. Heidegger M., *Kant und das Problem der Metaphysik*, Klostermann, Ffm., 1998.
157. Heidegger M., “Mein Weg in die Phänomenologie”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 14, *Zur Sache des Denkens*, Klostermann, Ffm., 2007.
158. Heidegger M., “Phänomenologische Interpretation zu Aristoteles. Einführung in die hermeneutische Forschung”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 61, Klostermann, Ffm., 1985.
159. Heidegger M., “Phänomenologische Interpretationen zu Aristoteles (Anzeige der hermeneutischen Situation)”, in: *Dilthey-Jahrbuch für Philosophie und Geisteswissenschaften* (hg. von E. Rodi), B. 6, Göttingen, 1989.
160. Heidegger M., “Prolegomena zur Geschichte des Zeitbegriffes”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, II Abt., B. 20, Klostermann, Ffm., 1979:
161. Heidegger M., *Sein und Zeit*, Niemeyer, Tübingen, 1993.
162. Heidegger M., “Was heißt Denken?”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 7, *Vorträge und Aufsätze*, Klostermann, Ffm., 2000.
163. Heidegger M., “Hölderlins Hymnen ‘Germanien’ und ‘Der Rhein’”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 20, Klostermann, Ffm., 1979.

164. Heidegger M., “Was ist Metaphysik?”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 9, *Wegmarken*, Klostermann, Ffm., 1976.
165. Heidegger M., “Ontologie (Hermeneutik der Faktizität)”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 63, Klostermann, Ffm., 1988.
166. Heidegger M., “Zur Bestimmung der Philosophie”, in: *Martin Heideggers Gesamtausgabe*, B. 56/57, Klostermann, Ffm., 1987.
167. Herrmann F. W. v., “Beiträge zur Philosophie” als hermeneutischer Schlüssel zum Spätwerk Heideggers”, in: *Heidegger – neu gelesen* (Hrsg. v. Marcus Happel), Königshausen und Neumann, Würzburg, 1997.
168. Hesse H., *Demian*, Suhrkamp, Ffm., 1974.
169. Hoffman E. T. A., *Lebensansichten des Katers Murr nebst fragmentarischer Biographie des Kapellmeisters Johannes Kreisler in zufälligen Makulaturblättern*, Aufbau, Berlin und Weimar, 1985.
170. Houellebecq M., *La Possibilité d'une île*, Fayard, Paris, 2005.
171. Husserl E., *Die Krisis der europäischen Wissenschaften und die transzendentale Phänomenologie. Eine Einführung in die phänomenologische Philosophie*, in: *Husserliana*, B. 6, Martinus Nijhoff, Den Haag, 1954.
172. Husserl E., “Ideen zu einer reinen Phänomenologie (1913)”, in: *Husserl. Ausgew. und vorgestellt von U. Steiner*, Diederichs, München, 1997.
173. Husserl E., “Philosophie als strenge Wissenschaft”, in: *Logos*, B. 1 (1910/11), Neuauflage: Klostermann, Ffm., 1965.
174. *Husserl*, Ausgew und vorgestellt von U. Steiner, Diederichs, München, 1997.
175. Jeissmann M., *Das Vaterland der Feinde: Studien zum nationalen Feindbegriff und Selbstverständnis in Deutschland und Frankreich 1792-1918*, Klett-Cotta, Stuttgart, 1992.
176. Kant I., “Kritik der reinen Vernunft”, in: ders., *Kritik der reinen Vernunft. Kritik der praktischen Vernunft. Kritik der Urteilskraft*, Marix, Wiesbaden, 2004.

177. Kerber H., *Zum Begriff der Differenz bei Hegel, Derrida und Deleuze*, <http://web.fu-berlin.de/postmoderne-psych/colloquium/kerber.htm>
178. Kimmerle H., *Derrida zu Einführung*, SOAK im Junius Verlag, Hamburg, 2000.
179. Kimmerle H., *Philosophie der Differenz*, Königshausen & Neumann, Würzburg, 2000.
180. Kortian G., *Metacritique*, Minuit, Paris, 1979.
181. Lafont C., *Sprache und Welterschließung. Zur linguistischen Wende der Hermeneutik Heideggers*, Suhrkamp, Ffm., 1994.
182. Leidmair K., *Künstliche Intelligenz und Heidegger. Über den Zwiespalt von Natur und Geist*, Wilhelm Fink, München, 1999.
183. Luhmann N., *Die Gesellschaft der Gesellschaft*, B. 1, Suhrkamp, Ffm., 1999.
184. Lülfman Ch., *Schleiermacher, der Kirchenvater des 19. Jahrhunderts*, Tübingen, 1907.
185. Lyotard J.-F., *La condition postmoderne*, Les Editions de Minuit, Paris, 1979.
186. Mai K., Wetzel M., “Derrida, Jacques”, B. Lutz (Hrsg.), *Metzler Philosophenlexikon*, Metzler, Stuttgart – Weimar, 2003.
187. Marquardt M., “Einführung”, in: W. Dilthey, *Aufsätze zur Philosophie*, Union, Berlin (Verlag Werner Dausien, Hanau), 1986.
188. Martens E., Schnädelbach H. (Hg.), *Philosophie. Ein Grundkurs*, B. 2, Rowohlt, Reinbek bei Hamburg, 1998.
189. Martin B., “Heidegger und die Reform der deutschen Universität 1933”, in: *Martin Heidegger: ein Philosoph und die Politik*, Freiburger Universitätsblätter, 92, 1986.
190. Maser P., “Scholem, Gershom G. (d.i. Gerhard)”, in: *Metzler Philosophenlexikon*, Metzler, Stuttgart – Weimar, 2003.
191. Mauss M., *Essai sur le don*, Paris, 1950.
192. Mehring R., “Heidegger und Carl Smitt. Verschärfer und Neutralisierer des Nationalsozialismus”, in: D. Thomä (Hrsg.), *Heidegger-Handbuch, Leben – Werk – Wirkung*, Verl. J. B. Metzler, Stuttgart – Weimar, 2003.

193. Mörchen H., *Adorno und Heidegger: Untersuchung einer philosophischen Kommunikationsverweigerung*, Klett-Cotta, Stuttgart, 1981.
194. Mortensen E., *Touching Thought: Ontology and Sexual Difference*, Lexington Books, 2003.
195. Naumann M., *Bildung – eine deutsche Utopie*, in: "Die Zeit", № 50, 2003.
196. Nietzsche F., "Die fröhliche Wissenschaft", in: ders., *Werke in drei Bänden*, B. 2, Königlich, Köln, 1994.
197. Niewöhner F., *Scholems Sabbatei Zwi*, in: ders., *Mystik und Moderne*, Hessische Handelsvertretung, Wiesbaden, 1992.
198. Novalis, "Blutenataub", in: *Athenaeum. Eine Zeitschrift von August Wilhelm Schlegel und Friedrich Schlegel, Auswahl* (hrsg. von G. Heinrich), Reklam, Leipzig, 1984.
199. Nowak K., "Einleitung", in: Scheleiermaher F. D. E. *Teologische Schriften*, Union Verlag, Berlin, 1983.
200. "Nur noch ein Gott kann uns retten". Spiegel-Gespräch mit Martin Heidegger am 23 September 1966 , in: Der Spiegel, 30 Jg. N 23. 31. Mai 1976.
201. Pöggeler O., "Heideggers Begegnung mit Dilthey", in: *Dilthey-Jahrbuch*, № 4 (1986/87).
202. Rachold J., "Einleitung", in: Schleiermacher F., *Philosophische Schriften*, Union Verlag, Berlin, 1983.
203. Rilke R. M., *Werke*, B. 1-2, Insel, Ffm., 1984.
204. Ruin H., "Ein geheimnisvolles Schicksal – Heidegger und das griechische Erbe", in: *Heidegger und die Griechen*, ed. by M. Steinmann, Klostermann, Ffm., 2007.
205. Safranski R., *Ein Meister aus Deutschland. Heidegger und seine Zeit*, Carl Hanser Verlag, München, Wien, 1994.
206. Sartre J.-P., *Das Sein und das Nichts. Versuch einer phänomenologischer Ontologie*, Rowohlt, Reinbek bei Hamburg, 1997.
207. Sartre J.-P., *Un idée fondamentale de la phénoménologie de Husserl: L'intentionnalité*, 1936, in: "Situations I", Paris, 1947.
208. Schlegel F., "Ideen", in: *Athenaeum. Eine Zeitschrift von August Wilhelm Schlegel und Friedrich Schlegel, Auswahl* (hrsg. von G. Heinrich), Reklam, Leipzig, 1984.

209. Schleiermacher an Delbrück (02.01.1827), in: F. D. E. Schleiermacher, *Philosophische Schriften*, Union Verlag, Berlin, 1984.
210. Schleiermacher F., “Brouillon zur Ethik”, in: ders., *Philosophische Schriften*, Union Verlag, Berlin, 1984.
211. Schleiermacher F., “Monologen. Eine Neujahrausgabe”, in: ders., *Philosophische Schriften*, Union Verlag, Berlin, 1984.
212. Schleiermacher F., “Über den Unterschied zwischen Naturgesetz und Sittengesetz. Gelesen am 6. Januar 1825”, in: ders., *Philosophische Schriften*, Union Verlag, Berlin, 1984.
213. Schleiermacher F., “Über Fichtes Bestimmung des Menschen”, in: ders., *Athenaeum. Eine Zeitschrift von August Wilhelm Schlegel und Friedrich Schlegel, Auswahl* (hrsg. von G. Heinrich), Reklam, Leipzig, 1984.
214. Schleiermacher F., “Dialektik. Vorlesung von 1822: Über den allgemeinen Schematismus und die Sprache”, in: ders., *Hermeneutik und Kritik* (hrsg. von M. Frank), Suhrkamp, Ffm., 1977.
215. Schleiermacher F., *Philosophische Sittenlehre* (Hrsg. und erl. J. H. V. Kierschman), Berlin, 1870.
216. Schleiermacher F., *Hermeneutik und Kritik mit besonderer Beziehung auf das Neue Testament von Dr. Friedrich Schleiermacher. Aus Schleiermachers handschriftlichen Nachlasse und nachgeschriebenen Vorlesungen herausgeben von Dr. Friedrich Lücke*, bei W. Reiter, Berlin, 1838.
217. Schleiermacher F., *Hermeneutik und Kritik* (hrsg. von M. Frank), Suhrkamp, Ffm., 1977.
218. Schleiermacher F., *Hermeneutik* (nach d. Hss. neu hrsg. u eingel. von H. Kimmerle), C. Winter, Heidelberg, 1959.
219. Schmitt C., *Der Begriff des Politischen: Text von 1932 mit einem Vorwort und drei Corollarien*, Duncker & Humblot, Berlin, 1991.
220. Scholem G., *Über einige Begriffe des Judentums*, Suhrkamp, Ffm., 1980.
221. Searle J. R., *Speech Acts*, U. P., Cambridge, 1969.
222. Simmel G., *Philosophie des Geldes*, Duncker & Humblot, Berlin, 1900.

223. Stegmueller W., *Hauptstroemungen der Gegenwartsphilosophie*, Kröner, Stuttgart, 1969.
224. Thomä D. (Hrsg.), *Heidegger-Handbuch. Leben – Werk – Wirkung*, Metzler, Stuttgart-Weimar, 2003.
225. Tietz U., *Ontologie und Dialektik. Heidegger und Adorno über das Sein, das Nichtidentische, die Synthesis und die Kopula*, Passagen, Wien, 2003.
226. Tietz U., “Heidegger und Ludwig Wittgenstein. Diesseits des Pragmatismus - jenseits des Pragmatismus”, D. Thomä (Hrsg.), *Heidegger-Handbuch. Leben – Werk – Wirkung*, Verl. J. B. Metzler, Stuttgart – Weimar, 2003.
227. Tietz U., *Sprache und Verstehen in analytischer und hermeneutischer Sicht*, Akad. Verl., Berlin, 1995.
228. Vinograd T., “Heidegger and the Design of Computer Systems”, in: *Technology and the Politics of Knowledge* (ed. by A. Feenberg and A. Hannay), Indiana University Press, Bloomington and Indianapolis, 1995.
229. Voskanian A., “Warum Schleiermacher kein Romantiker ist”, in: *200 Jahre “Reden über die Religion”. Akten des Internationalen Kongresses der Schleiermacher-Gesellschaft, Halle, 14.-17. März 1999*, Walter de Gruyter, Berlin – New York, 2000.
230. Voskanian A., “Der Begriff der Individualität bei S. Kierkegaard und F. Schleiermacher im Lichte der geistigen Situation der Postmoderne”, in: *Schleiermacher und Kierkegaard. Subjektivität und Wahrheit. Akten des Schleiermacher-Kierkegaard Kongresses in Kopenhagen, Oktober 2003*, Walter de Gruyter, Berlin - New York, 2006.
231. Voskanian A., “Paradoxien des kollektiven Daseins. Zur Phänomenologie des armenischen Geistes”, in: *Wissen um Werte. Perspektiven der Religion. – Strukturen der Wirklichkeit. Schriftenreihe der DUA und der Akademie St. Paul*, B. 3, Via Verbis Verlag, 2007.
232. Wahrig. *Deutsches Wörterbuch*, Bertelsmann, 1997.
233. Wittgenstein L., *Philosophical Investigations*, Basil Blackwell, Oxford, 1958.

234. Wittgenstein L., *Tractatus logico-philosophicus*, Suhrkamp, Ffm., 1998.
235. Wyrwich T., “Sein als Grund und Ab-Grund zugleich. Heideggers Ansatz zur Gründung einer positiven Ereignis-Philosophie”, in: *XXII. Deutscher Kongress für Philosophie, 11.-15. September 2011*, München, [http://epub.ub.unimuenchen.de/12583/1/Th.\\_-Wyrwich-Sein\\_als\\_Grund\\_und\\_Ab-Grund\\_zugleich.pdf](http://epub.ub.unimuenchen.de/12583/1/Th._-Wyrwich-Sein_als_Grund_und_Ab-Grund_zugleich.pdf).
236. Žižek S., *Die Tücken des Subjekts*, Suhrkamp, Ffm., 2001.



**Ամփոփում**



*Ашот Восканян*  
**Неизбежность понимания**

В монографии исследуются основные этапы развития философской герменевтики, представленные концепциями Фридриха Шлейермакера, Вильгельма Дильтея, Мартина Хайдеггера и Ганса-Георга Гадамера. Шлейермакер разработал концепцию универсальной герменевтики, Дильтей переосмыслил ее в качестве всеохватывающего метода гуманитарного познания, Хайдеггер титаническим усилием мысли радикально трансформировал, онтологизировал понятие понимания, превратив герменевтику в учение о бытии, а Гадамер, с приложением классического гуманиста, эксплицировал теоретические аспекты герменевтического усвоения традиции. Жак Деррида - единственный из представленных авторов, не принадлежащий герменевтической парадигме. Но формирование его философии труднопредставимо без внутренней связи с феноменологией Гуссерля-Хайдеггера, а его знаменитая “деконструкция” напрямую восходит к хайдеггеровской “деструкции” и выступает в качестве одного из альтернативных вариантов развертывания последней.

Развитие философских представлений Шлейермакера в монографии осмыслено в качестве трех трансформаций кантовского трансцендентализма. Первая связана со снятием индивидуальных эмоций (*Gefühl und Gemüt*) в максимально широком понятии чувственного созерцания (*Anschauung*), находящего эстетическое выражение. Дальнейшие дифференциация и опосредование этой способности приводят к второй трансформации трансцендентального субъекта, который выступает в качестве системы неповторимых индивидов, взаимодействие которых реализуется в единстве мышления и речи и описывается в терминах “этического кон-

стрирования”. Третий этап обусловлен переходом Шлейермакера “от критики разума к критике смысла (М. Франк). Эта последняя трансформация кантовского трансцендентализма связана со специфической способностью понимания и может быть описана посредством *герменевтических* процедур. Анализ герменевтических взглядов Шлейермакера осуществлен на основе развернутого комментария к его Компендиумному изложению 1819 года, что дает наглядное представление об уникальном стиле мышления этого автора.

Исходным пунктом анализа концепции Дильтея явилась его дихотомия “наук о природе” (*Naturwissenschaften*) и “наук о духе” (*Geisteswissenschaften*). Детальное рассмотрение его разногласий с баденской школой неокантианства, предложившей аналогичное и все же существенно отличное деление наук на “естественные” и “исторические”, позволяет убедиться в обоснованности дильтейевского тезиса об ограниченности “ценостного подхода”. В центре внимания автора был вопрос о взаимоотношении двух этапов философского развития Дильтея, его переход от психологической модели понимания к герменевтике. Раздел, посвященный Дильтею, дополнен переводом его классической статьи “Происхождение герменевтики” на армянский язык.

Центральное место в монографии занимает раздел, посвященный Мартину Хайдеггеру (более трети всего объема исследования). Особое внимание удалено логике формирования концепции “Бытия и времени”, в частности, переплетению мотивов, восходящих к Гуссерлю и Киркегору, переосмыслению идей Дильтея и графа Йорка фон Вартенбург об историчности, что в конечном итоге было выражено в хайдеггеровском тезисе о сопряженности онтологии, феноменологии и герменевтики с фактичностью “присутствия” (*Dasein*) и – в силу этого – их сущностном совпадении. Развернутое представление структуры трактата “Бытие и время” сопровождено философским и филологическим анализом вариантов перевода на армянский язык хайдеггеровских терминов, выражающих те или иные аспекты категории “бытия”, таких как “*Sein*”, “*Dasein*”, “*Existenz*” и др. Описана предпринятая Хайдеггером специфическая трансформация классических представ-

лений о *трансцендентном* и *трансцендентальном*, приведшая к их частичному совпадению. Рассмотрены возможные причины, побудившие Хайдеггера оставить трактат незаконченным. В частности, проанализировано противоречие, возникающее между “при-существием”, традиционно соотнесенным с личностным бытием, и “народом”, введенным в последней написанной части трактата и призванным, как считает автор, служить медиатором для перехода к “бытию как таковому” (*Sein*). На основе сравнительного анализа отдельных аспектов хайдеггеровской модели с базовыми понятиями “политического экзистенциализма” Карла Шмита показано, что важное для Хайдеггера понятие “судьба народа” (*Geschick des Volkes*) эксплицируется через внутренне противоречивое представление о “коллективной смерти”, *неизбежность* которой связана с применением политических механизмов физического насилия.

Рамочными для детального изложения герменевтической концепции Гадамера являются идеи “опыта как пройденного пути” (*Erfahrung*) и “образования” (*Bildung*), рассмотренные в контексте современных представлений об “университете”. Предпринятый в связи с этим сравнительный анализ соответствующих идей Ж.-Ф. Лиотара и М. Науманна подводит читателя к проблематике постмодерна, делая естественным обращение к основоположениям философии Жака Деррида.

Осевыми для раздела, посвященного Деррида, являются двойной смысл понятия “различие” (*différance*) и связанная с ним идея “вечного откладывания” (*différance a l'infini*). Последняя в монографии рассмотрена в контексте либеральной утопии “конца истории”, в которой возможность свободного выбора заменяется *аутопоэсисом* луманновской Социальной Системы. Хотя концепция бесконечного движения от различия к различию по сути воспроизводит структуру экономического обмена и тем самым способствует апологетике универсальности и вечности рыночных отношений, сам Деррида пытается преодолеть эту опасность путем обращения к экстравагантным (на деле – утопическим) конструкциям “дружбы” и “дарения”.

Монография снабжена словарем использованных герменевтических терминов.

*Ashot Voskanian*  
**Unausweichlichkeit des Verstehens**

Die vorliegende Monografie untersucht die Entwicklungsetappen der philosophischen Hermeneutik, die durch Konzeptionen von Friedrich Schleiermacher, Wilhelm Dilthey, Martin Heidegger und Hans-Georg Gadamer vertreten werden. Schleiermacher hat die Konzeption der universellen Hermeneutik erarbeitet. Dilthey hat sie in eine allumfassende Methode der geisteswissenschaftlichen Erkenntnis umgedeutet. Heidegger hat seinerseits mit riesigem intellektuellen Kraftaufwand den Begriff des Verstehens radikal transformiert, indem er die Hermeneutik in eine Seinsontologie umwandelte. Und Gadamer hat schließlich, mit dem Eifer eines klassischen Humanisten, die theoretischen Aspekte der hermeneutischen Aneignung der Tradition expliziert. Jacques Derrida ist der einzige von den vorgestellten Autoren, der dem hermeneutischen Paradigma nicht angehört. Aber seine Ansichten sind ohne die innere Verbindung mit der Husserl-Heideggerschen Phänomenologie schwer vorstellbar, und seine berühmte *Dekonstruktion* geht direkt auf die Heideggersche *Destruktion* zurück und tritt als eine der alternativen Varianten der Entfaltung der letzteren auf.

Die philosophische Entwicklung Schleiermachers wird in der Monografie als die drei Transformationen des Kantschen Transzentalismus interpretiert. Die erste bezieht sich auf die sinnliche Anschauung im weiten Sinne des Wortes, die das individuelle Gefühl und Gemüt in sich aufhebt und sich *ästhetisch* ausdrücken lässt. Die weitere Differenzierung und Vermittlung des transzentalen Subjekts tritt als lebendiges Zusammenwirken des Denkens und Sprechens, also als ein gemeinschaftliches System kommunizierender Individuen auf, welches in der sozialen Institution der Akademie verkörpert wird und

durch *ethische Konstruierung* beschrieben werden kann. Die dritte Etappe ist durch den Übergang Schleiermachers “von der Vernunftkritik zur Sinnkritik” (M. Frank) bedingt und führt zum Verstehen als eigenständiges menschliches Vermögen, dessen Auffassung durch *hermeneutische* Prozeduren ermöglicht wird. Die Analyse der hermeneutischen Ansichten Schleiermachers wurde auf der Basis eines eingehenden Kommentars zu seiner Kompendiumsschrift aus dem Jahre 1819 durchgeführt, was den einzigartigen Stil dieses Autors veranschaulicht.

Die Auseinandersetzung mit der Diltheyschen Hermeneutik geht von seiner Dichotomie *Naturwissenschaften - Geisteswissenschaften* aus. Eine detaillierte Betrachtung der bekannten Diskussion zwischen Dilthey und dem Badischen Neokantianismus, welcher mit einer analogen und zugleich deutlich unterschiedlichen Aufgliederung der Wissenschaften auftrat, erlaubt es, sich von der Begründetheit der Diltheyschen These von der Beschränktheit des “Wertansatzes” zu überzeugen. Im Zentrum der Aufmerksamkeit des Autors steht die Frage nach der Wechselbeziehung zwischen den beiden Etappen der philosophischen Entwicklung Diltheys, sein Übergang vom psychologischen Modell des Verstehens zur Hermeneutik. Der Dilthey gewidmete Abschnitt ist weiterhin um eine Übersetzung seines klassischen Aufsatzes “Die Entstehung der Hermeneutik” ins Armenische ergänzt.

Der zentrale Abschnitt der Monografie (etwa ein Drittel des Gesamtumfangs der Untersuchung) ist Martin Heidegger gewidmet. Besondere Aufmerksamkeit wurde der Entstehungslogik seines philosophischen Konzepts der *Sein und Zeit* Periode geschenkt. Dazu gehören die Verbindung der Motive, die auf Husserl und Kierkegaard zurückgehen, wie auch die Aufarbeitung der Ideen Diltheys und des Grafen Yorck von Wartenburg über den Historismus. Diese werden in der Heideggerschen These von der Bezogenheit der Ontologie, Phänomenologie und Hermeneutik auf die Faktizität des Daseins ausgedrückt und führen zu Schlussfolgerung über die Wesenskoinzidenz dieser drei Bereiche. Die ausführliche Darlegung der Struktur von *Sein und Zeit* wird durch eine philosophische und philologische Analyse der Übersetzungsvarianten einiger Heideggerschen Termini (*Sein, Dasein, Existenz* u. a.) ins Armenische begleitet. Es wird aufgezeigt, wie die

von Heidegger unternommene, eigentümliche Transformation der klassischen Konzepte vom *Transzendenten* und vom *Transzendentalen* zu ihrer teilhaften Überschneidung führt. Es werden ferner die möglichen Gründe betrachtet, die Heidegger dazu veranlasst haben könnten, die Abhandlung unvollendet zu lassen. Unter anderem wurden die ambivalenten Verhältnisse zwischen dem *persönlichen Dasein* und dem „*kollektiven Volk*“ und entsprechend zwischen dem *individuellen Tod* und dem *Geschick des Volkes* thematisiert. Der Ansatz des letzteren wurde als Versuch interpretiert, dem kollektiven, in gewissem Sinne „unsterblichen“ Dasein die gleiche existenziale Eigentlichkeit zu verleihen, die das persönliche Dasein kraft seines unausweichlichen Vorlaufens zum Tode ursprünglich besitzt. Eine vergleichende Analyse des Heideggerschen Gedankenguts mit den Basisbegriffen des *politischen Existenzialismus* von Carl Schmitt hatte die innere Widersprüchlichkeit dieses Versuches offenbart.

Rahmenhaft für die detaillierte Darlegung der hermeneutischen Konzeption Gadamers sind die Konzepte von *Erfahrung* und *Bildung*, die im Kontext moderner Vorstellungen von der *Universität* betrachtet werden. Die in diesem Zusammenhang vorgenommene vergleichende Analyse entsprechender Ideen von J.-F. Lyotard und M. Naumann führt den Leser zur Problematik der Postmoderne, die eine Wendung zu den Ansichten von Jacques Derrida selbstverständlich macht.

Im Brennpunkt des Derridaabschnitts stehen die Ambivalenz des doppelsinnigen Wortes *différance* und die damit verbundene Idee des *ewigen Aufschubs*. Ein Vergleich mit dem ähnlichen Konzept G. Scholems erlaubte es, diese Idee im Kontext der liberalen Utopie „des Endes der Geschichte“ zu betrachten, in der die Möglichkeit der freien Wahl durch die *Autopoiesis* des sozialen Systems Luhmanns ersetzt wird. Obwohl die Idee des stetigen Streichens von Differenz zu Differenz in der Tat die Struktur „des wirtschaftlichen Tausches“ wieder gibt und dadurch zur Absolutisierung und Verewigung der Marktverhältnisse beiträgt, versucht Derrida selbst diese Gefahr durch die Wendung zu extravaganten (in der Tat: utopischen) Konstruktionen der *Freundschaft* und *Gabe* zu überwinden.

Abschliessend wurde die Monografie um einen Glossar der fachspezifischen Termini ergänzt.

*Ashot Voskanian*  
**The Inevitability of Understanding**

The monograph examines the main stages of development of philosophical hermeneutics, as represented by the concepts of Friedrich Schleiermacher, Wilhelm Dilthey, Martin Heidegger and Hans-Georg Gadamer. Schleiermacher developed the concept of universal hermeneutics. Dilthey redefined it as an inclusive method of humanitarian cognition. Heidegger, exerting enormous mental force, radically transformed and ontologized the concept of understanding and converted hermeneutics into a study of Being, while Gadamer, with the diligence of a classical humanist explicated the theoretical aspects of the hermeneutical acquisition of tradition. Jacques Derrida is the only author among the presented who does not belong to the hermeneutics' paradigm. However, it would be difficult to understand the formation of his philosophical conception without considering the inner connection with Husserlian and Heideggerian phenomenology while his famous "deconstruction" directly originates from Heidegger's "destruction" and acts as one of the alternative options of the latter's development.

The monograph views the development of Schleiermacher's philosophical conceptions as the three transformations of Kant's transcendental idealism. The first is related to the sublation of individual emotions (*Gefühl und Gemüt*) in the utmost capacity of sensual contemplation (*Anschauung*) that can be expressed *aesthetically*. Further differentiation of this faculty leads to the second transformation of the transcendental subject which manifests itself as a system of unique individuals, the interaction among which is carried out in the unity of thinking and speech, and is described as *ethical construction*. The third phase is in the result of Schleiermacher's transition "from a critique of reason to the critique of sense" (M. Frank). This last transfor

mation of Kant's transcendentalism is linked with the specific faculty of understanding and can be described through *hermeneutical* procedures. The analysis of Schleiermacher's hermeneutical views, based on the expanded commentary to his Compendium of 1819, clearly demonstrates the unique way of this author's thinking.

As a starting point to study Dilthey's concept of understanding has been taken his dichotomy of *Natural Sciences* (*Naturwissenschaften*) and *Humanities* (*Geisteswissenschaften*). A thorough analysis of his controversies with the Baden school of Neo-Kantianism – which offers a similar and yet considerably distinct classification of sciences into “natural” and “historical” – proves the validity of Dilthey's thesis on the limitedness of “value approach”. The author has focused on the interrelation between the two stages of Dilthey's philosophical development and his transition from the psychological model of understanding to hermeneutics. The chapter devoted to Dilthey has been complemented with the Armenian translation of his classical article “The Rise of Hermeneutics”.

The chapter devoted to Martin Heidegger is central to the monograph and takes up about one third of the study. Special attention has been paid to the logic of shaping the concept of “Being and Time”, and particularly to the interlacement of motives, going back to Husserl and Kierkegaard, and redefinition of the ideas of Dilthey and Count Paul Yorck von Wartenburg about *historicity*. The emerged constellation was in the long run demonstrated in Heidegger's thesis of conjugacy of ontology, phenomenology and hermeneutics with the factuality of “being there” (*Dasein*), and for that reason, in their essential coincidence. The expanded presentation of the structure of the treatise “Being and Time” is accompanied with philosophical and philological analyses of the variants of Armenian translations of Heidegger's terms that express various aspects of “Being”, such as “Sein”, “Dasein”, “Existenz” and others. Initiated by Heidegger, the specific transformation of classical ideas of the *transcendent* and the *transcendental* that has led to their partial coincidence has also been described. Certain possible reasons, for which Heidegger left the treatise incomplete, have been discussed. In particular, the author has analyzed the contra-

diction arising between “Dasein” which is traditionally associated with the personal being, and “people” that was introduced in the last written part of the treatise and was meant – as the author believes – to serve as an intermediary for transition from “being there” (Dasein) to the Being as such (Sein). It is shown – on the basis of a comparative analysis of selective aspects of Heidegger’s model and basic concepts of Carl Schmitt’s “political existentialism” – that the concept of “the fate of a people” (*Geschick des Volkes*), important for Heidegger, is explicated through the inner contradictory idea of “collective death”, the *inevitability* of which is linked with the utilization of political mechanisms of physical violence.

Ideas of *experience* (*Erfahrung*) and *education* (*Bildung*), considered in the context of contemporary views on “university” serve as a framework for a detailed narration of Gadamer’s hermeneutical conception. A comparative analysis of respective ideas of J.-F. Lyotard and M. Naumann, carried out in this context, brings the reader to the problems of the postmodernity, making it natural to refer to the basics of Jacques Derrida’s philosophy.

Central for the chapter devoted to Derrida is the double entendre of the concept “difference” (*différance*) and the interlinked idea “eternal deferral” (*différence à l’infini*). The latter is considered in the monograph in the context of the liberal utopia of “the end of history”, in which the possibility of free choice is replaced with the *autopoiesis* of Luhmann’s Social System. Although the concept of endless motion from differences to differences in essence reproduces the structure of economic exchange and by that facilitates the apologetics of the universality and eternity of market relations, Derrida himself attempts to overcome that danger through the use of extravagant (in reality, utopian) constructions of “friendship” and “donation”.

The monograph has been supplemented with a Glossary of hermeneutical terms.

ԱՇՈՏ ՈՍԿԱՆՅԱՆ. ՀԱՍԿԱՑՄԱՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ.

Դրվագներ փիլիսոփայական հերմեննատիկայի և կազմաքանդման  
պատմությունից (Շլյերմահեր, Դիլթեյ, Հայդեգեր, Գադամեր, Դերիդա)  
ԵՊՐ հրատարակչություն, Երևան, 2015

Լեզվական խմբագիր՝ Սիրանուշ Դվոյան  
Գեղարվեստական ձևավորումը՝ Մկրտիչ Մաթևոսյանի  
Համակարգչային էջադրումը՝ Կարինե Չալաբյանի  
Յրատ. սրբագրումը՝ Հասմիկ Ասլանյանի

Ashot Voskanian. The Inevitability of Understanding.  
Essays on the History of Philosophical Hermeneutics and Deconstruction  
(Schleiermacher, Dilthey, Heidegger, Gadamer, Derrida)  
Yerevan State University Press, Yerevan, 2015

Զափուր՝ 60x84<sup>1/16</sup>; Թուղթը՝ օֆսեթ:  
Ծավալը՝ 25 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 150:

---

ԵՊՐ հրատարակչություն

---

ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1